ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՎԱՐՔԸ

«Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեան.
Նախընթաց ճանապարհի Որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս.
Աղ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:
Բարձրելոյն անճառ խորոց տեսանող իմաստիւք հոգւոյն.
Ի յորովայնէ մաքրեալ տաճար Աստուծոյն եւ բնակարան Սուրբ Երրորդութեանն.
Աղ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:
Գաբրիէլ հրեշտակապետն առաքեալ առ Զաքարիաս.
Աւետարանել զհրաշալի ծնունդ քո սուրբ յամուլ ծերոյն Եղիսաբեթէ.
Աղ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց»:
(Շարակնոց)

Ըստ Քրիստոսի աստուածային բերանի անզուգական ու անսուտ գովեստի՝ կանանցից ծնուածներից մեծը եւ Իր Կարապետ ու Մկրտիչ սուրբ Յովհաննէսը Հայաստանեայց Եկեղեցու տօնացոյցի սուրբերի մէջ գեղեցիկ խորհրդով զբաղեցնում է առաջին տեղը, որովհետեւ նախ՝ ինչպէս որ տարուայ վերջում՝ նախքան մեր Փրկչի Ծնունդը եւ Յայտնութիւնը, տօնում ենք աստուածամերձ սուրբերի՝ որպէս տէրունական տնօրինութեան գլխաւոր վկաների աւագ տօները, այնպէս էլ նոյն խորհրդով Աստուածայայտնութեան ու Մկրտութեան տօնից ութ օր անց յիշատակում ենք սուրբ Կարապետի՝ Աստուծոյ Որդու Մկրտչի առաջին եւ մեծ տօնը, որն էլ հանդիսանում է մեր տօնացոյցի սկիզբը: Երկրորդ՝ նա է հանդիսանում հին եւ նոր սուրբերի բոլոր դասերի պարագլուխը, հայրենաւանդ ու մովսիսական օրէնքի լրումը եւ քրիստոսաւանդ շնորհագիր օրէնքների նախասկիզբը: Երրորդ, որն ամենամեծն է, համարւում է որպէս բոլոր սուրբերի առաքինութիւնների հանդէսն իր անձի մէջ ցոյց տուող անարատ հայելի, նախահաւատ նախահայր՝ ճանաչուած առաջին նահապետների հետ, տեսանողների դասում՝ աննման մարգարէ, առաքեալների դասում՝ նորօրինակ առաքեալ, վարդապետների դասում՝ գերագոյն Խօսքի քարոզ, անապատում իր խստակրօն մենակեցութեամբ՝ օրինակ ճգնաւորներին, վայելչութեան կերպով՝ զգաստութիւն կրօնաւորներին, պանծալի մարտիրոս՝ վկայելով Ճշմարտութիւնն իր արեամբ, հողանիւթ հրեշտակ՝ մարմնի մէջ անմարմին քաղաքավարութեամբ. մի խօսքով՝ բոլոր արդարների ու առաքինիների դասերի երկնաչու ընթացքի նախաշաւիղ առաջնորդ՝ զարդարուած սրբութեան հրաշագեղ վարքով, խոնարհութեամբ, աղքատութեամբ, աշխարհի հանդէպ մեռելութեամբ, լիակատար համբերութեամբ, Աստուծոյ եւ ընկերոջ հանդէպ կատարեալ սիրով, որը եւ պատուիրանների գլուխն է ու կատարելութիւնը:

Եւ նա մեծ խորհրդով առաջ ընթացաւ իբրեւ Աստուծոյ Բանի կարապետ, իբրեւ երկնաւոր Փեսայի ու Եկեղեցու փեսաւէր եւ բարեկամ, իբրեւ քահանայի որդի, իբրեւ ձեռնադրող ու մկրտիչ Աստուծոյ Որդու՝ մեր ճշմարիտ Քահանայապետի եւ շնորհաբուխ խորհուրդների Օրինադրի: Առանձնայատուկ է նրա անհամեմատելի մեծութեան պատիւն ու նրա փառաւորութեան պանծալի պսակը, ինքնատիպ է դեռեւս արգանդից սրբութիւնների Սրբութեան այցելութեամբ նրա սրբութիւնը: Նրա սքանչելի ծնունդը տօնելի եղաւ, որը չվիճակուեց ոչ ոքի, այլ միայն Տիրոջը, Տիրամօրն ու նրան: Եւ քանի որ տարուայ մէջ մեծ Մկրտչի այլեւայլ տօները տօնախմբւում են տարբեր օրերին, մենք եւս պէտք է համապատասխան տօնի

առիթով զուգահեռաբար ճառենք նրա մասին՝ դնելով այս մատեանի ներ ու տարուայ սկիզբը եւ խօսենք Կարապետի ծագման ու Քրիստոսի մկրտութեան մասին:

Արդ, երբ Արդարութեան Արեգակը՝ Լուսոյ Հօրից ճառագող անստուեր Լոյսը, պատրաստւում էր երկնքից երկիր ծագել, որպէսզի փարատէր մեղքերի խաւարը եւ լուսաւորէր աշխարհ եկող ողջ մարդկային ազգին, ի նշան Իր մօտալուտ Գալստեան՝ ընտրեց առաւօտեան արուսեակին՝ լուսատիպ ու անաղօտափայլ նախավառ Ճրագին՝ Յովհաննէս Կարապետին՝ ըստ առաւօտեան արուսեակ կոչուող լուսաբեր եթերային աստղի օրինակի, որը նախընթաց կերպով ծագելով՝ ազդարարում է արեգակի ծագման մասին եւ դառնում նրա կարապետն ու ելման նախանշանը: Եւ քանի որ մեծ էր այդ Խորհուրդը, նա երեւաց մեծամեծ նշաններով ու սքանչելի ծագումով եւ գործով հաւաստեց, որ ինքն է արքայից Արքայի Գալստեան մեծագոյն խորհրդի մարգարէն:

Եւ մինչ ողջ աշխարհը խարխափում էր անաստուածութեան եւ անձնապաշտութեան խաւարում՝ ինչպէս գիշերը, երբ ողջ տիեզերքն ընկղմուած էր հեթանոսութեան մէջ, ու Իսրայէլի աստուածածանօթ ժողովուրդը վայրաքարշ կերպով կապուած էր երկրին, Հրէաստանի արքայ Անթիպատրէսի որդի Հերովդէսի օրերին անակնկալ ժամանակին Լոյս ծագեց: Քիչ էին հանդիպում ճշմարիտ աստուածապաշտներ եւ Աստծուց երկիւղածներ: Եւ այդ քչից մեծ Կարապետին ծնողներ լինելու համար ընտրուեցին ժամանակի ընտրելագոյնները՝ սուրբ Զաքարիա քահանան՝ Աբիայի դասից, եւ նրա կինը՝ Եղիսաբէթը՝ Ահարոնի դուստրերից, որոնց յար եւ նման արժանաւոր գովեստն է անում աւետարանագիր Ղուկասը՝ ասելով. *«Եւ երկուսն էլ Աստուծոյ առաջ արդար էին ու անարատ կերպով ընթանում էին Տիրոջ բոլոր պատուիրանների եւ օրէնքների ճանապարհով» [Ղուկ. Ա 6]:*

Նրանցից ծնուեց կանանցից ծնուածներից մեծը, ծնուեց բնութեան օրէնքից վեր՝ ամուլ մօրից ու ալեւոր հօրից: Նրա ծննդեան աւետիսն անհաւատալի թուաց անգամ իր իսկ ծնողին: Համրացաւ նրա լեզուն, քանզի վարանեց հաւատալ Կանչողի ձայնի՝ դեռեւս հնուց կանխատեսուած նոր մարգարէի ծագելուն: Սակայն գործը պէտք է գլուխ գար՝ ըստ Աստուծոյ կողմից առաքուած Գաբրիէլի խօսքի, պէտք էր նրանց աստուածապարգեւ զաւակ լինէր՝ Յովհաննէս անուամբ, յուրախութիւն իր ծնողների եւ ի խնդութիւն շատերի: Պէտք է լինէր երկրորդ Եղիան՝ նրա նմանութեամբ, բայց առաւել, քան նա, քանզի Յովհաննէսը դեռեւս իր մօր որովայնում լցուած եղաւ Հոգով:

Եւ սա եւս նորահրաշ օրինակով եղաւ, քանզի Ինքն իսկ՝ Արդարութեան Արեգակը, բազմելով կուսական արգանդում՝ իբրեւ հրեղէն կառքին, ճեպով այցելեց Իր Կարապետին՝ նրան փութով ճանապարհ զցելու ու Իր արփիափայլ ծագման մասին աւետարանելու համար: Զաքարիայի տունը լցուեց լուսալիր խնդութեամբ, եւ նախքան Արեգակի ելքը Եղիսաբէթի տունն արեգակնափայլ ծագմամբ լուսազգեստ եղաւ. Աստուծոյ լեռը թեքուեց դէպի Յուդայի լեռնակողմը, իսկ աստուածավայելուչ տաճարը՝ դէպի քահանայական յարկը: Քանզի երբ աստուածութեան օթեւան ամենօրհնեալ Աստուածամայրը ցնծութեան ձայնով լուսասփիւռ ողջոյն ընծայեց, արուսեակի ծնողը Հոգով լցուած բարձրաձայն օրհնեց Օրհնեալին: Խայտաց մաքուր մանուկը Մաքրազարդողի առջեւ ու մօր որովայնից երկրպագեց Տիրամօր որովայնում յարկ գտած Իր Արարչին: Եւ մանկացած Աստուած Իր պարգեւների ողջ լիութիւնը առատ զեղմամբ հեղեց դեռեւս չծնուած, բայց Իր Սուրբ Հոգով լցուած մարգարէի վրայ: Աստուածամայրը երեք ամիս մնաց Եղիսաբէթի մօտ՝ աշխարհի սկզբից իր Ընտրեալի կամքի հաճութիւնն ունենալու համար:

Սակայն սքանչելի արուսեակը՝ Յովհաննէսը, չհանդուրժելով Տիրոջ անճառելի խոնարհութիւնը, խօսք դրեց իր մօր բերանում՝ նախքան իր ելնելը Արեգակին Իր տեղը դարձնել, քանզի գիտէր, որ ճրագն անկարող է Արեւի առաջ երեւալ, եւ առաւել անհանդուրժելի է իր ծննդեան ժամանակ Լուսոյ Մօրից սպասաւորութիւն ընդունել: Այդ պատճառով երբ մերձեցան նրա լոյս աշխարհի գալու օրերը, հոգելից Եղիսաբէթն իր ամենասրբուհի ազգակցին հարազատաբար ու խոնարհութեամբ ասաց. «Ո՛վ անարատ Կոյս, Մայր երկնաւո՛ր Թագաւորի, դու եկար այստեղ օրհնաբեր ողջոյնով եւ լիացրիր մեզ ամէն բարիքներով: Արդ, խաղաղութեամբ գնա՛ քո յարկը, ով տաճա՛րդ Աստուծոյ, քանզի Արքային վայել չէ սպասաւոր լինել ծառային, եւ ոչ էլ արքայուհուն՝ հոգ տանել աղախնու համար: Վերցրո՛ւ, տա՛ր Արդարութեան Արեգակին եւ թո՛յլ տուր, որ իմ ճրագը վառուի իր չափաւոր նշոյլներով, քանզի նրան կիզելով՝ կայրի քո որովայնի կիզիչ Հուրը: Եւ եթէ հրեղէնները չեն կարողանում տանել Նրա Լոյսը, ապա որքա՛ն առաւել անկարող է Այն տանել հողեղէնը»:

Ապա լուսածին Կոյսն Աստուածորդու հետ, Ում կրում էր իր արգանդում, դարձաւ Նազարէթի իր տունը: Իսկ Եղիսաբէթը, իբրեւ նորատեսիլ արուսեակի, լոյս ընծայեց իր երանելի մանկանը, աւետման որդուն եւ ողջ աշխարհի մեծամեծ բարիքների աւետաւոր մարգարէին: Նրան խնդակից էր իր ողջ ազգատոհմը: Մեծ ողորմութիւն արեց Տէրը՝ պտուղ պարգեւելով ամուլ արգանդից, ու գովելի ծնողներին ընծայեց ամենագովելի զաւակ, որի յարգը կատարուող դէպքերի բերումով օրէցօր մեծանում էր: Քանզի ութ օր անց՝ թլփատութեան պահին, երբ կամենում էին նրան Զաքարիա կոչել՝ ի յիշատակ հօր, ում ինն ամիս համր լինելու պատճառով կեանքից շուտով հեռացող էին տեսնում, Եղիսաբէթը Հոգու ազդմամբ ընդդիմանում էր եւ պնդում, թէ մանուկը Յովհաննէս պիտի կոչուի: Նոյնը հաստատում էր նաեւ Զաքարիան՝ տախտակի վրայ գրելով նրա անունը, որովհետեւ դեռեւս չէին արձակուել նրա լեզուի կապանքները:

Եւ ահա՝ դարձեալ սքանչելիք այդ պահին, որը խիստ զարմացրեց բոլորին. երկու ծնողներն էլ մի հոգով նոյն անունն էին սահմանում իրենց որդու համար: Եւ երբ Զաքարիան գրեց. «Դրա անունը Յովհաննէս է», ով պիտի լինէր անապատում Կանչողի ձայնը եւ Աստուծոյ Բանի քարոզիչը, նոյն պահին արձակուեց լեզուն, ու ասես թէ գրելուն զուգահեռ՝ ասաց. «Յովհաննէ՛ս է դրա անունը»: Այնուհետեւ սկսեց համարձակաձայն խօսքերով օրհնել Աստծուն այս բոլոր պատահածների համար, մարգարէական հոգով լցուած յայտնապէս քարոզել խորին Խորհուրդը եւ ասել, թէ հասել է հայրերին խոստացած մեծ Ուխտի կատարման ժամանակը՝ Բանի աշխարհ Գալուստը, եւ թէ Նրա առաջընթաց մարգարէն, անշուշտ, այս Յովհաննէսը պիտի լինի: Այդպէս էլ եղաւ. մանուկն աճեց ու զօրացաւ, իսկ ամենակալ Տէրն Իր Հոգով բնակւում էր նրա մէջ, եւ Իր Ձեռքը նրա վրայ էր:

Այս մեծամեծ սքանչելիքներից մեծ ահ ընկաւ բոլոր մերձաւորների ու հեռաւորների վրայ: Նրանք զարմացած ասում էին. «Արդեօք ինչ կը լինի այս մանուկը»: Հնչեց այդ ժամին նրա անունը, սակայն պահուած էր, եւ պիտի զար մի այլ ժամանակ, երբ աշխարհի բոլոր ծայրերում պիտի հնչէր անապատում Կանչողի ձայնը, որպէսզի մարդիկ պատրաստուէին ընդունել երկնքի ու երկրի Թագաւորի Գալուստը: Այդ պատճառով նա մանուկ հասակից միառժամանակ խորհրդաբար մեկուսացուեց անապատում, մինչեւ որ մօտենար աշխարհի Փրկչին տիեզերքին յայտնելու ժամանակը, ու լինէր Նրա Գալստեան աւետարանիչը: Եւ ինչպէս պատմում է նախնիների աւանդութիւնը, երբ Հերովդէսը կոտորում էր Բեթղեհէմի մանուկներին՝ նպատակ դնելով այդ թւում վերացնել տիեզերքի Փրկչին, կամեցաւ

նաեւ Յովհաննէսին սպանել, ուր էլ որ նրան գտնէր, որովհետեւ ողջ Հրէաստանով մէկ հռչակուել էր նրա սքանչելի ծննդեան համբաւը: Այնժամ Եղիսաբէթը, շտապ վերցնելով մանկանը, փախաւ դէպի լեռը: Տեսնելով իրեն հետապնդող թագաւորի մարդկանց՝ Եղիսաբէթն աղաղակեց Տիրոջը, եւ նոյն պահին պատռուեց վէմը՝ իր մէջ առնելով մօրն ու մանկանը: Վտանգն անցնելուց յետոյ Տիրոջ հրեշտակը նրանց դուրս բերեց վէմից, Եղիսաբէթին պատուիրեց գնալ իր տուն, իսկ մանկանը թողնել անապատում՝ ասելով. «Աստուծոյ հրամանով մենք կը սպասաւորենք այս մանկանը»:

Գալով Եղիսաբէթը վախճանուած գտաւ Զաքարիային, բայց աւելի ճիշտ՝ նահատակուած յանուն Ճշմարտութեան, քանզի ըստ շատերի հաւանելի կարծիքի՝ հերովդէսական հրեաները սպանել էին նրան տաճարում, որովհետեւ նա քարոզել էր ճշմարիտ Մեսիայի՝ Քրիստոսի Գալստեան մասին ու նաեւ թաքցրել իր որդուն: Իսկ մանուկ Յովհաննէսը մնաց անապատում՝ անտես մարդկանցից, եւ սպասաւորուեց հրեշտակների կողմից, մինչեւ կը լրանար իր երեսուն տարին:

Ապա Տիբերիոս կայսեր իշխանութեան տասնհինգերորդ տարում անապատում Աստուծոյ Խօսքը լսելի եղաւ Յովհաննէսին՝ գալ Յորդանան գետի կողմերն ու աշխարհին քարոզել ապաշխարութեան մկրտութիւն՝ մեղքերի թողութեան համար: Այնժամ սուրբ Կարապետն սկսեց այն ծառայութիւնը, որի համար ընտրուել էր. այն էր՝ լինել ամենակալ Տիրոջ աւետաւորն ու առաջընթաց պատգամաւորը՝ նորահրաշ կերպով ճանապարհ հարթելով Նրա առջեւ եւ լինել անապատում Կանչողի ձայնը: Պէտք է լինէր մարմնացեալ Բանի քարոզը ոչ թէ ճարտար խօսքերով, այլ Ճշմարտութեան նախանձախնդրութեամբ՝ ըստ Եղիայի, ոչ թէ երեւելի շուքով, այլ անշուք ու նուաստ կերպարանքով: Որպէս քրձազգեստ ճգնաւոր՝ ունէր ուղտի մազից հանդերձ եւ մէջքին՝ կաշուէ գօտի: Չափաւոր կերակուրն առանց պատրաստութեան էր, որն էր վայրի մեղրն ու մորեխը: Նա կամենում էր ապաշխարութեան քարոզչութիւնը խօսքից առաւել գործով հաստատել, որի մէջ արդէն թրծուել էր իր երեսնամեայ խստակրօն ճգնակեցութեամբ:

Ողջ ժողովուրդը զարմանում էր Կարապետի գործերի վրայ, քանզի տեսնում էր անապատում մեծացած մի մարդու, ով տկարացել էր պահքերից, իր ճգնասէր վարքով եւ խոնարհ ընթացքով այլագունուել տապից ու ցրտից: Ինչպէս մի երկնաւոր հրեշտակ, նա նոր հոգելից քարոզչութիւն էր անում, որին անծանօթ էին: Բայց երբ լսում էին նրա հոգեբուխ շուրթերից տարածուող ազդու խօսքերը, յօժարակամ ու փութով աշակերտում էին նրա վարդապետութեանը, խոստովանում իրենց մեղքերը, ուղղում իրենց վարքը եւ ապաշխարութեան կարգով նրա կողմից ջրով մկրտւում մեղքերի թողութեան համար, որը մեծ շինութիւն ու մխիթարութիւն էր բարեսէր մարդկանց համար: Ճշմարտութեան բոլոր ունկնդիրները նրան իրապէս ընդունում էին որպէս Աստուծոյ մարդու եւ մարգարէի, ով իրենց ցոյց է տալիս դէպի Աստուած տանող Ճանապարհը ու աւետարանում աշխարհին ակնկալուող փրկութիւնը, եւ մինչեւ անգամ շատերը կարծում էին, թէ Մեսիան հէնց ինքն է:

Իսկ երանելին, իրենից հեռու վանելով այդ փառաւոր անունը, յայտնաբար ու առանց վարանելու խոստովանում էր. «Ես չեմ Քրիստոսը, այլ ուղարկուած եմ Նրա առջեւից իբրեւ կարապետ եւ փեսաւէր: Ես արժանի չեմ անգամ ծառայաբար արձակելու Նրա կօշիկների կապերը: Ձեր մէջ կայ Մէկը, Ում դուք չէք ճանաչում: Դուք, որ կարօտ էք Լոյսի, տեսնում էք արուսեակին, բայց նրան արեգակ էք համարում: Պատրաստէ՛ք ձեր սրտերը, որպէսզի ձեր մէջ ծագի Նա Ինքը՝ Լոյսի Աղբիւրը, Արդարութեան Արեգակը: Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարութեան

համար, բայց Ով գալու է ինձնից յետոյ, Ով անսահման յաւիտենութեամբ առաջ է ինձնից, Ով Հօր անսկիզբ Ծնունդն է, եւ Ով մտաւ ժամանակի մէջ՝ մարմին առնելով սուրբ Կոյսից, Նա կը մկրտի ձեզ Սուրբ Հոգով ու Հրով: Նա Ինքն է տիեզերքի Լուսատուն, Նա Ինքն է աշխարհի մեղքերը Սրբողը, ինչպէս որ ինձ սրբեց դեռեւս արգանդից եւ լուսաւորեց: Նա սուրբերի Սրբութիւն է ու Լոյս Լոյսից, Կեանք Կեանքից եւ ամէնքի Կենդանարար, Թագաւոր թագաւորների ու Դատաւոր ողջերի եւ մեռեալների: Նա այժմ գառան հեզութեամբ գալիս է իբրեւ Հովիւ, որպէսզի ի մի ժողովի Աստուծոյ ցրուած ժողովրդին ու բարին պարգեւի բոլորին: Միւս անգամ պիտի գայ փառքով՝ զատելու ընտրեալներին մեղաւորներից եւ հատուցելու իւրաքանչիւրին՝ ըստ իր գործերի»:

Այսպիսի եւ առաւել, քան այսպիսի խօսքեր էր աւետարանում ժողովրդին Յովհաննէսը: Մխիթարում էր ու խրատում, յանդիմանում էր եւ դարմանում: Նա, իր աշակերտներին մատնացոյց անելով փրկութեան Առաջնորդին, ասաց. *«Ահաւասիկ Գառն Աստուծոյ, որ վերացնում է աշխարհի մեղքը» [Յովհ. Ա 29]*, ու մի խօսքի մէջ խորհրդաւոր կերպով բովանդակեց անճառ տնօրէնութեան ողջ Խորհուրդը:

Երբ Տէրը գալով կամեցաւ մկրտուել Իր ծառայի կողմից, մեծ Կարապետը սոսկալով սարսեց իր Տիրոջ խոնարհութիւնից, որի համար հրաժարուեց, յանձն չառաւ այդ մեծ գործը եւ ասաց. *«Ինձ պէտք է, որ Քեզնից մկրտուեմ, իսկ Դու ինձ մօ՞տ ես գալիս» [Մատթ. Գ 14]:* Բայց ըստ հնազանդութեան՝ հարկ էր, որ նա լսէր Փրկչին, Ով ասաց իրեն. *«Թո՛յլ տուր հիմա, որովհետեւ այսպէս վայել է, որ մենք կատարենք Աստուծոյ ամէն արդարութիւն [Մատթ. Գ 15]*, մկրտւում եմ, որ լուսաւորեմ աշխարհը, մկրտւում եմ, որ լուանամ Ադամի մեղքերը, մկրտւում եմ, որ բացեմ երկնքի դռները, մկրտւում եմ, որ Հօրը հաշտեցնեմ մարդկանց հետ, մկրտւում եմ, որ երկնքից Հօր Խօսքն իջեցնեմ, մկրտւում եմ, որ օդն ու ջուրը սրբեմ, մկրտւում եմ, որ ճշմարտութեան Հոգին յայտնեմ աշխարհին, մկրտւում եմ, որ աշխարհը մաքրեմ մեղքերից, մկրտւում եմ, որ վերստին զգեստաւորեմ մերկացած Ադամին, մկրտւում եմ, որ վերացնեմ մահը, մկրտւում եմ, որ աւերեմ դժոխքը, մկրտւում եմ, որ շէնացնեմ Արքայութիւնը, մկրտւում եմ, որ ջրով հանգցնեմ մարդկանց մեղքերի հուրը, մկրտւում եմ, որ հիմնարկեմ Եկեղեցին, մկրտւում եմ, որ կանգնեցնեմ սուրբ Սեղանը, մկրտւում եմ, որ հաստատեմ սուրբ Աւազանը, որով լուանամ մարդկանց մեղքերը եւ նրանց արժանացնեմ երկնքի Արքայութեանը»:

Եւ նա, որ մինչ այդ կարապետ էր, այժմ եղաւ նաեւ մկրտիչ Աստուծոյ Որդու: Ասես թէ ըստ կարգի Մելքիսեդեկի՝ քահանայական պաշտօն գործադրուեց ճշմարիտ Քահանայապետի վրայ, որի համար էլ նա կոչուեց նաեւ ձեռնադրող Աստուծոյ Որդու, եւ աւելին՝ մկրտութիւնից յետոյ տեսաւ Սուրբ Հոգու աղաւնակերպ էջքն Իր Էակցի վրայ:

Եւ արդ, ո՞ր խօսքերը կարող են պատմել նրա պատուական մեծութեան մասին, որ տրուեց մեծ Կարապետին այսպիսի խորհրդակատարութեամբ: Նա եղաւ ոչ միայն ամենակալ Տիրոջ պատգամաւորը, այլեւ Աստուծոյ Որդու ձեռնադրողն ու մկրտիչը: Մեր Տէրը եւս նոյն անուններով հռչակեց Իր Կարապետի անհամեմատելի մեծութիւնը, վեր դասեց նրան բոլոր ընտրեալների դասերից՝ ասելով. *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնուածների մէջ Յովհաննէս Մկրտչից աւելի մեծը չի եղել» [Մատթ. ԺԱ 11]:*

Այդ պատճառով Հայաստանեայց սուրբ Եկեղեցու բոլոր գլխաւոր մաղթանքներում Աստուածամօր անուանն առընթեր ըստ արժանւոյն յիշատակւում է սուրբ Կարապետի անունը՝ որպէս նրանից յետոյ տիեզերքի երկրորդ բարեխօսի:

Նա մեծ պատուով փառաւորւում է բոլոր եկեղեցիներում՝ տարէցտարի տօնախմբուելով մի քանի անգամ՝ ծնունդը, գլխատումը, նշխարների գիւտը, դրանց այլեւայլ տեղեր փոխադրումը եւ այլն: Ո՞ր քրիստոնեայ ազգն է, որ տօնախմբութեամբ չի պատւում մեծ Կարապետին: Ո՞ր քաղաքն է, ուր մեծ Մկրտչի անուամբ չի կառուցուել տաճար կամ խորան, ինչպէս նաեւ՝ հոյակերտ վանքեր: Եւ կամ ո՞վ է այն մեծ կամ փոքր հաւատաւորներից մէկը, ով օգնութեան կանչելով նրա անունը՝ չի ստացել հաւատով իր խնդրածը: Ուստի մենք եւս միանանք Եկեղեցու կողմից բարձրացուող նրան ուղղուած ըղձաձայն խնդրանքներին ու ասենք. «Փութա՛ մեզ վերից օգնութեան հասնել, սո՛ւրբ Յովհաննէս, առաքեալ եւ մարգարէ, Կարապետ եւ Մկրտիչ Աստուծոյ Որդու, բարեխօս եղիր մեր անձանց համար»:

Ս. Գրիգոր Տաթեւացի

Քարոզ Յովհաննէսի ծննդեան մասին՝ ըստ Ղուկաս աւետարանչի այն խօսքի, թէ՝ ***«Եւ դո՛ւ, ով մանուկ, Բարձրեալի մարգարէն պիտի կոչուես, որովհետեւ պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու նրա ճանապարհները»:*** *(Ղուկ. Ա 76)*

Եւ արդ, Քրիստոսի սուրբ Կարապետի եւ Մկրտչի մասին պէտք է խօսենք հինգ գլխաւոր դրոյթների շուրջ. նախ՝ աւետման մասին, երկրորդ՝ ծննդեան մասին, երրորդ՝ բնակութեան մասին, չորրորդ՝ զգեստների մասին, եւ հինգերորդ՝ կերակրի մասին:

Այժմ տեսնենք առաջին գլուխը:

Գիտենք, որ ինչպէս մեր Տէրը ծնուեց սուրբ Կոյսից հրեշտակի աւետիսով, այդպէս էլ Մկրտիչը եղաւ աւետման զաւակ: Եւ նոյն Գաբրիէլն էր, որ նրա հօրը՝ Զաքարիային աւետեց. «Քեզ որդի պիտի ծնուի»: Այստեղ երեւում են նրա չորս գերապատութիւնները. նախ՝ որ աւետման որդի էր, երկրորդ՝ աւետիսը տրուեց տաճարում՝ քաւութեան մեծ տօնի օրը, երրորդ՝ բազմամբոխ ժողովրդի մէջ, չորրորդ՝ համրացաւ հօր լեզուն:

Ինչպէս պատմում է Աւետարանը, քաւութեան մեծ տօնի օրը Զաքարիա քահանայապետը զգեստաւորուեց, մտաւ տաճար՝ խնկարկելու եւ խնկերի սեղանի աջ կողմում տեսաւ հրեշտակին, որից խիստ զարհուրեց ու մտածեց. «Եթէ սա անմարմին հրեշտակ է, ինչպէ՞ս է մարդու կերպարանքով երեւում, իսկ եթէ մարդ է, ապա ինչպէ՞ս տաճար մտաւ փակ դռներով», որովհետեւ այնտեղ մարդ չէր մտնում, այլ միայն քահանայապետը, այն էլ տարին մէկ անգամ: Հրեշտակն ասաց նրան. «Մի՛ երկնչիր, քանզի ես երեւացի քեզ ոչ թէ իմ կերպարանքով, այլ մարդու, որպէսզի չերկնչես: Ես եկայ ոչ թէ քեզ զարհուրելու, այլ Աստուծոյ պատգամը յայտնելու համար: Քո աղօթքը լսելի եղաւ. քո կինը՝ Եղիսաբէթը, քեզ համար մի որդի կը ծնի, եւ նրա անունը Յովհաննէս կը դնես»:

Այս խօսքերից առաւել խռովուեց Զաքարիան ու ասաց. «Նախ իմ աղօթքները որդի ունենալու համար չեն, այլ ժողովրդի փրկութեան համար, եւ ապա՝ երբ այստեղից դուրս գամ, ի՞նչ ասեմ ժողովրդին, թէ ինձ որդի՞ պիտի ծնուի: Նրանք կը քարկոծեն ինձ ու կՅասեն, թէ մեզ ի՞նչ շահ քո որդուց, մենք այստեղ ենք հաւաքուել, որ քեզ որդի՞ ծնուի»: Ապա հրեշտակը, մեկնելով խորհուրդը, ասաց. «Դու քաւութիւն ես խնդրում ժողովրդի համար, ես էլ քեզ նոյնն եմ ասում. քեզ որդի կը ծնուի, եւ շատերը կՅուրախանան նրա ծննդեամբ: Նա նախընթաց ու կարապետ կը լինի Փրկչի համար եւ կը պատրաստի Նրա ճանապարհը, որպէսզի գայ ու փրկի

ժողովրդին իր մեղքերից»: Այստեղ պէտք էր հաւատալ հրեշտակին, բայց Զաքարիան երկմտեց, տարակուսեց եւ ասաց. «Ես ինչպէ՞ս կ՚իմանամ, քանի որ ծեր եմ, Եղիսաբէթն էլ՝ ամուլ»:

Հրեշտակն ասաց. «Ինչպէ՞ս կ՚իմանաս, քահանայապե՛տ ու Օրէնքներ քննո՛ղ: Տե՛ս Իսահակին, ով աւետման որդի եղաւ Աբրահամին: Նա ծեր էր, իսկ կինը՝ ամուլ: Տե՛ս Սամուէլին, քանզի նրա մայրը դարձեալ ամուլ էր: Տե՛ս եւ Կոյս Մարիամին, ում դու պահեցիր տաճարում: Նրա մայրը՝ Աննան, եւս ամուլ էր, բայց Աստուած նրան զաւակ պարգեւեց: Ես Գաբրիէլն եմ, որ ուղարկուեցի խօսելու քեզ հետ, ես եմ, որ կանգնում եմ Աստուծոյ առաջ: Ու քանի որ չհաւատացիր, ահա դու համր կը լինես եւ չես խօսի մինչեւ մանկան անուանակոչութեան օրը»: Զաքարիան դուրս եկաւ ու չէր կարողանում խօսել: Սա նշանակում էր հին օրէնքի լռելը, որը Քրիստոսի նոր Օրէնքի գալով պէտք է դադարէր:

Այժմ երկրորդ գլխի՝ նրա ծննդեան մասին:

Իմանալի է, որ նրա ծնունդը հինգ տեսակի փառաւորութիւն ունէր: Նախ՝ ծնուեց ամուլ եւ չորացած արգանդից, իսկ կոյսին եւ ամուլին անհնար ծնել: Երկրորդ՝ մօր որովայնում սրբուեց սկզբնական մեղքերից, ինչպէս որ Աւետարանն է ասում. *«Մօր որովայնից սկսած Սուրբ Հոգով կը լցուի» [Ղուկ. Ա 15]:* Եւ գիտենք, որ երեք հոգի սրբուեցին իրենց մօր որովայնում՝ Երեմիան, Յովհաննէսն ու Աստուածածին Կոյսը: Սակայն նրանք սրբուեցին զանազանապէս. Երեմիայի վրայ հեղուեցին Սուրբ Հոգու շնորհները, Յովհաննէսը լցուեց Սուրբ Հոգով, իսկ Սուրբ Աստուածածինը լցուելուց առաւել՝ ստացաւ Սուրբ Հոգին, որպէսզի իր լիութիւնից հեղի ուրիշների մէջ: Երրորդ՝ իր մօր որովայնից երկրպագեց Քրիստոսին, քանզի երբ սուրբ Կոյսը ողջոյն տուեց Եղիսաբէթին, մանուկը խաղալով ցնծաց նրա որովայնում: Յովհաննէսն իր մօր որովայնում վեցամսեայ էր եւ Սուրբ Հոգուց իմացաւ, որ սուրբ Կոյսի արգանդում թագաւորների Թագաւորն է՝ Քրիստոս: Եւ քանի որ չէր կարող ձայնով յայտնել ու փառաւորել, որովայնում խայտալով երկրպագեց Նրան ու մօր ձայնով օրհնաբանեց՝ ասելով. *«Օրհնեա՛լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՛լ է քո որովայնի Պտուղը» [Ղուկ. Ա 42]:* Չորրորդ՝ երբ ծնուեց, արձակեց հօր լեզուն: Արգանդում մօր լեզուով օրհնեց Աստծուն, իսկ ծնուելիս՝ հօր լեզուով՝ ըստ Աւետարանի այն խօսքի, թէ *«Երբ եկան նրան թլփատելու, մի տախտակ ուզեց ու վրան գրեց. «Դրա անունը Յովհաննէս է», եւ իսկոյն նրա լեզուն բացուեց» [Ղուկ. Ա 63]:* Սա նշանակում էր, որ նա էր հին օրէնքի լռելու միջնորդն ու նորը խօսելու եւ քարոզելու սկիզբը: Հինգերորդ՝ երբ Հերովդէսը կոտորում էր Բեթղեհէմի մանուկներին, վէմը պատռուեց եւ իր մէջ առաւ մանկանն ու նրա մօրը, եւ նա փրկուեց կոտորածից: Ապա դուրս բերուեց ու բնակուեց անապատում:

Երրորդ՝ բնակութեան մասին:

Նա երեսուն տարի բնակուեց անապատում, ապա եկաւ Յորդանանի կողմերը՝ մկրտելու ջրով: Արդ, անապատում բնակուելը վեց նշանակութիւն ունի: Նախ՝ նշանակում է աշխարհը. ինչպէս որ նա ծնուելուց յետոյ մնաց անապատում, նոյնպէս էլ մենք առաջին Ադամից ծնուելուց յետոյ ելանք Դրախտից եւ եկանք անապատ աշխարհ՝ պանդխտութեան: Երկրորդ՝ անապատը ամայի է ամէն բարուց, եւ մենք էլ դատարկուեցինք բոլոր բարի գործերից՝ ըստ այն խօսքի. *«Բարութիւն անող չկայ, ոչ իսկ մէկ հոգի» [Սաղմ. ԺԳ 3]:* Երրորդ՝ անապատը մի դժուարին, փշոտ վայր է՝ լի բազում օձերով: Սա խորհրդանշում է մեր կեանքը՝ իր դժուարութիւններով, ուր բնակւում ենք բազում օձերի մէջ, ուր չար մարդիկ, սատանան եւ փշերը, որոնք մեղքերն են, խոցոտում են մեզ: Չորրորդ՝ նշանակում է, որ այն ժամանակ չկային

մարգարէներ, այսինքն՝ անապատ էր մարգարէներից, քանզի մարգարէութիւններն ու շնորհները հեռացել էին տաճարից: Հինգերորդ՝ նշանակում է, որ հրէաներն անպտուղ եւ թափուր էին բարի գործերից: Վեցերորդ՝ մնաց անապատում, որպէսզի չփառաւորուի մարդկանց կողմից, իսկ զգայարանները չփափկանան աշխարհի սիրով, այլ ապրեց անապատում՝ իբրեւ մարմնի մէջ հրեշտակ, իբրեւ անբիծ աղաւնի, իբրեւ անապատի տատրակ, ինչպէս Երգ Երգոցն է ասում. *«Տատրակի ձայնը լսուեց մեր երկրում» [Երգ. Բ 12]*, մնաց անապատում՝ որպէս սկիզբ եւ օրինակ մենակեացներին ու անապատականներին: Ասենք, որ թէպէտ Եղիան եւ Եղիսէէն եւս անապատում բնակուեցին, սակայն ոչ մանկութիւնից, իսկ սա բնակուեց մանուկ հասակից ու չգործեց որեւէ մեղք՝ ո՛չ մահացու, ո՛չ էլ ներելի: Այսպէս ճգնեց խստակեցութեամբ՝ ի նախատինք նրանց, ովքեր չեն գործում բարին, չեն աղօթում եւ պահք չեն պահում՝ ասելով, թէ «Չունենք մեղքեր, որ ապաշխարենք»: Իսկ սա, ի ծնէ մաքուր լինելով, բնակուեց անապատում ու ճգնեց իր կեանքի բոլոր օրերում:

Տեսնենք նաեւ չորրորդ գլուխը, որը զգեստների մասին է:

Աւետարանն ասում է. *«Յովհաննէսն ուղտի մազից զգեստ ունէր եւ կաշուէ գօտի՝ իր մէջքին» [Մատթ. Գ 4]*, եւ ուրիշ ոչ մի ծածկոյթ, ո՛չ անկողին, ո՛չ փափկութիւն, ո՛չ բնակութեան յարկ, այլ մերկ ու բոկոտն շրջում էր անապատում: Ուղտի մազից հանդերձը բազում նշանակութիւններ ունի: Նախ՝ նուաստ եւ անարգ հանդերձները նշանակում էին Միածին կոյս Որդու ծառայի կերպարանք առնելը, խաչով կորուսեալ ոչխարին սպասելը եւ յարութեան ժամանակ անմաքուր կենդանու մազի փոխակերպումը մաքրափայլ լուսակիզի: Երկրորդ՝ ուղտի մազը նշանակում էր կիսասուրբ եղող փարիսեցիների կեղծաւորութիւնը, քանզի նրանք ունէին կիսով չափ մաքրութիւն, այսինքն՝ ունէին հաւատ, բայց ո՛չ գործեր, որի պատճառով սուգ էր հագել նրանց կուրութեան համար: Երրորդ՝ հանդերձների անփութութիւնը նշանակում է մեզ նախկին ազնուականութեան հրաւիրելը, երբ կարիք չունէինք զգեստների ու հանդերձների: Չորրորդ՝ նշանակում էր աշխարհի մեղքերի համար սուգն ու ապաշխարութիւնը, որը քարոզում էր խօսքերով եւ ցոյց տալիս գործով, քանզի աւետարանում էր Աստուծոյ Արքայութիւնը՝ առանց հանդերձների ու առանց կերակրի: Իսկ գօտին Սուրբ Գրքում կրում են տասը դէպքում: Նախ՝ կրում են զինուորութեան դէպքում պատերազմի պատրաստուելու ժամանակ: Երկրորդ՝ ծառայութեան դէպքում՝ ըստ այն խօսքի. *«Գօտի կը կապի իր մէջքին եւ կ՚ուզենի նրանց սպասարկելու» [Ղուկ. ԺԲ 37]:* Երրորդ՝ գօտին կապում են համբերութեան համար, ինչպէս Յոբը: Չորրորդ՝ թագաւորելու ժամանակ, ինչպէս Դաւիթը, ով զօրանալով յաղթեց մսաբլուր Գողիաթին: Հինգերորդ՝ արիութեան ժամանակ՝ ըստ այն խօսքի, որ ասում էր Իսրայէլի վերաբերեալ. *«Գօտիները թող ձեր մէջքին լինեն» [Ելք. ԺԲ 11]:* Վեցերորդ՝ իշխանութեան դէպքում, ինչպէս քահանաներն ու իշխանները: Եօթերորդ՝ ճշմարտութիւնը պահելու համար՝ ըստ այն խօսքի. *«Գօտեպնդեցէ՛ք ձեր մէջքերը Աւետարանի Ճշմարտութեամբ» [Եփ. Զ 14]:* Ութերորդ՝ զգաստութեան դէպքում՝ ըստ այն խօսքի. *«Թող ձեր գօտիները մէջքներիդ պնդուած լինեն, իսկ ճրագներդ՝ վառուած: Եւ դուք նմանուեցէք այն ծառաներին, որոնք սպասում են իրենց տիրոջը, թէ երբ կը վերադառնայ հարսանիքից» [Ղուկ. ԺԲ 35–36]:* Իններորդ՝ ողջախոհութեան դէպքում՝ ըստ Գրիգոր Աստուածաբանի այս խօսքի՝ «Քաջագօտի ասորիները»: Տասներորդ՝ թագաւորութեան զօրութեան դէպքում՝ ըստ այն խօսքի. *«Զօրութիւն հագաւ Տէրն ու գօտեւորուեց» [Սաղմ. ՂԲ 1]:* Իսկ նրա գօտին, ունենալով այս ամէնը, ինչ որ

թուեցինք, առաւել եւս խորհրդանշում է կուսութիւնը, ողջախոհութիւնը եւ ամբողջովին սանձուած երկրաքարշ ցանկութիւնները: Գօտու՝ կաշուից լինելը նշանակում է անմեղութիւնը, նաեւ՝ Ադամի մեղանչելուց յետոյ մաշկեղէն հանդերձների խորհուրդն ունի: Նշանակում է նաեւ Եղիայի մաշկեղէն հանդերձը, որովհետեւ նա Եղիայի հոգով ու զօրութեամբ եկաւ:

Եւ հինգերորդ՝ կերակրի մասին: Ասում է՝ նրա կերակուրն էր մորեխը ու վայրի մեղրը: Արդ, մորեխն անարիւն եւ երկնաթռիչ կենդանի է: Սա նախ խորհրդանշում է նրա մաքուր վարքը, որն անխառն էր աշխարհի ցանկութիւններին, եւ մտքով միշտ երկնայինն էր խորհում, իսկ վայրի մեղրը նշանակում է Աստուծոյ Իմաստութիւնը, որը սուրբերի կերակուրն է, ինչպէս որ Դաւիթն է ասում. *«Որքա՜ն քաղցր են Քո խօսքերն իմ քիմքին, աւելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» [Սաղմ. ՃԺԸ 103]:* Դարձեալ՝ նրա կերակուրը խորհրդանշում է Աստուծոյ հին ու նոր պատուիրանները: Ինչպէս սուրբերից մէկն է ասում, մորեխը տկար հին օրէնքն էր, ինչպէս որ ինքը՝ մորեխն է տկար թռչունների մէջ, եւ յետոյ՝ մորեխը ուտելի չհամարուեց, ինչպէս հին օրէնքը՝ մեզ համար: Իսկ վայրի մեղրը նոր Օրէնքի քաղցրութիւնն է՝ ըստ այն խօսքի, որ ասաց. *«Իմ լուծը քաղցր է, իսկ Իմ բեռը՝ թեթեւ» [Մատթ. ԺԱ 30]:* Նաեւ՝ Աստուծոյ Բանը, որ ի վերուստ էր, քաղցրացրեց մեր դառնութիւնը: Դարձեալ՝ մորեխն ու վայրի մեղրը նշանակում են նրա՝ ամբողջովին խստակրօն ճգնութիւնն ու զարմանալի կեանքը: Քանզի եթէ հարցնես, թէ որտե՞ղ էր նրա բնակութեան վայրը, կ՚ասենք, որ անապատն էր, անկողինը գետնի քարերն էին, ընկերներն անապատի օձերն էին, զգեստն ուղտի մազից հանդերձն էր եւ կաշուէ գօտին, կերակուրը՝ մորեխն ու վայրի մեղրը: Եւ սրանցով նա ճգնութիւնների մէջ գերազանցեց բոլորին: Քանզի թէպէտ շատերը բնակուեցին անապատում, սակայն բնակութեան յարկ ունէին, ունէին չափաւոր կերակուր ու հանդերձ, ինչպէս Եղիան, Եղիսէէն եւ Քրիստոսից յետոյ շատ-շատերը: Իսկ սա մանուկ հասակից բնակուեց անապատում առանց ծածկոյթի ու կերակրի, եւ ինչ որ անցաւ կրակի վրայով, չկերաւ: Եւ ասենք, որ անգամ մեր Տէրը՝ Քրիստոս, այսպիսի նեղ ու դժուարին ճանապարհով չանցաւ, ինչպէս որ նա, քանզի Աւետարանն ասում է. *«Եկաւ Յովհաննէսը. ո՛չ ուտում էր, ո՛չ խմում: Եկաւ մարդու Որդին, ուտում է եւ խմում» [Մատթ. ԺԱ 18–19]:* Եթէ կամենար, Քրիստոս կարող էր առաւել խիստ կենցաղավարել, քան նա, ինչպէս երբ չկերաւ քառասուն օր ու գիշեր, բայց չկամեցաւ, որովհետեւ դա օգուտ չէր լինի մեղաւորներին, այլ՝ վնասակար: Սա կը հաստատենք օրինակով, ինչպէս գրուած է Ծննդոց գրքում. *«Յակոբն ասաց Եսաւին. «Երեխաներս փոքր են, եւ եթէ նրանց ստիպեմ, կը մեռնեն: Ուրեմն, ես ըստ իմ կարողութեան, ըստ իմ երեխաների զօրութեան կը շարժուեմ» [Ծնն. ԼԳ 14]:*

Այսպէս, Քրիստոս աշխարհ եկաւ մեղաւորներիս համար. եթէ ապրէր խիստ կենցաղավարութեամբ, ապա Նրա տկար մանուկները չէին կարողանայ հետեւել Իրեն, ու բոլորը յուսահատուելով կը մեռնէին: Այդ պատճառով, ինչպէս մի բարեգութ հայր՝ այս աշխարհում կենցաղավարեց միջին կերպով՝ չափաւոր հանդերձներով եւ կերակրով, որպէսզի մեղաւորները կարողանան հետեւել Իրեն: Իսկ Յովհաննէսի կեանքն այնպիսին չէր, ինչպիսին մարդկանցն է, այլ՝ ինչպէս մարմնի մէջ անմարմիններինն ու հրեշտակներինը: Եւ այսպէս, եկաւ ու ճանապարհ հարթեց Քրիստոսի համար, որպէսզի բոլորը պատրաստեն իրենց սրտերն ու հոգիները՝ ընդունելու Քրիստոսին: Այդ պատճառով ասաց. «Եւ դու, ո՛վ մանուկ, Բարձրեալի մարգարէն պիտի կոչուես, պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու Նրա ճանապարհները»: Եւ մենք էլ նրա բարեխօսութեան միջնորդութեամբ

պատրաստենք մեր հոգիները սրբութեամբ ու արդարութեամբ, որպէսզի մեր մէջ մուտք գործի եւ բնակուի Քրիստոս, Ով Իր Հօրը եւ Սուրբ Հոգուն կը բնակեցնի մեր մէջ եւ մեզ կը դարձնի Սուրբ Երրորդութեան օթեւան: Նրան փա՛ռք եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:

Յովհաննէսի քարոզչութիւնը չորս նպատակ ունէր:

Նախ՝ նա ապաշխարութիւն էր քարոզում առհասարակ բոլորին ու ասում. «Ապաշխարէ՛ք, որովհետեւ մօտեցել է երկնքի Արքայութիւնը»: Երկնքի Արքայութիւն ասելով՝ նկատի ունէր երկնքից խոնարհուած եւ իրենց մօտ եկած Քրիստոսին՝ ըստ այն խօսքի, թէ «Երկնքի Արքայութիւնը ձեր ներսում՝ ձեր մէջ է»: Այսպէս էր պատրաստում Տիրոջ ճանապարհը: Ինչպէս որ երբ գալիս է երկրաւոր թագաւորը, հարթում են ճանապարհները ու զարդարում քաղաքը, նոյնպէս եւ մենք պէտք է Երկնաւոր Թագաւորի ճանապարհը, որը մեր միտքն ու զգայարաններն են, ապաշխարութեամբ եւ խոստովանութեամբ մաքրենք մացառուտ մեղքերից եւ ապա զարդարենք մեր հոգիները պահքով, աղօթքով ու ողորմութեամբ, որպէսզի Քրիստոս գայ եւ մեր մէջ բնակութիւն հաստատի: Երկրորդ՝ իւրաքանչիւրին, ով գալիս էր մկրտութեան ու խոստովանում իր մեղքերը, խրատում էր եւ ասում. «Ոչ ոքի մի՛ նեղէք, ոչ ոքի մի՛ զրպարտէք, ձեր ռոճիկը թող ձեզ բաւարար լինի»: Նոյն կերպով, երբ մկրտութիւնից յետոյ դարձեալ մեղք ենք գործում ու խոստովանում ենք քահանային, նա արձակում է մեր մեղքերը եւ կանոն դնում՝ ասելով. «Ինչ որ գործել ես, այլեւս մի՛ արա եւ բարին գործիր»: Երրորդ՝ սաստկապէս յանդիմանում էր փարիսեցիներին ու ասում. «Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկութիւնից, որ գալու է»: Նոյն խօսքերը ե՛ւ Տէրն ասաց նրանց՝ չար եւ դառնացող ազգ կոչելով, ե՛ւ Դաւիթը, ե՛ւ Մովսէսը, թէ՝ «Նրանց որթը Սոդոմի այգուց էր»: Եւ իրապէս իժերի ծնունդներ էին, որովհետեւ երբ իժը յղացւում է, սատկում է նրա հայրը, իսկ ծնուելու ժամանակ՝ մայրը: Այսպէս էլ նրանք սպանեցին իրենց հայրերին, ովքեր իրենց քարոզող մարգարէներն էին, իսկ յետոյ՝ մօրը, որն Օրէնքն է: Եւ չորս տեսակ խօսքերով վախեցրեց նրանց. առաջին, թէ «Առանց գործերի դուք մերժւում էք Աբրահամի որդիութեանն արժանանալուց». երկրորդ, թէ «Ձեր փոխարէն Աբրահամի որդիներ կը լինեն կարծրացած հեթանոսները». երրորդ, թէ «Աստուծոյ Բանը կացնի պէս կը կտրի ձեզ ծառի արմատից ու այլեւս ծիլ չէք տայ». չորրորդ, թէ «Կÿառաքուէք դէպի յաւիտենական հուրը»: Այսպէս էլ մենք պէտք է անզեղջ չարերին, անդարձ մեղաւորներին, անհաւատներին եւ հերձուածողներին խիստ խօսքերով սաստենք ու յանդիմանենք: Եւ եթէ մեզ լսեն ու յետ դառնան, այնժամ պէտք է մօտենալ եւ մխիթարել, ինչպէս առաքեալն է ասում. *«Սաստի՛ր, յանդիմանի՛ր ու դարձեալ մխիթարի՛ր» [Բ Տիմ. Դ 2]:* Նա այդպէս էր անում, ապա քաղցրացնում էր նրանց եւ խոնարհութեամբ ասում, թէ՝ «Արժանի չէք արձակելու Նրա կօշիկների կապերը», այսինքն՝ ոչ միայն հաւասար չէք Նրան, այլեւ արժանի չէք դասուելու յետին սպասաւորների թւում, քանզի մտածում էր, թէ մարդեղութեան խորհուրդը, որը ծայրագոյն ու խոնարհագոյն խորհուրդ է, չեմ կարող մեկնել եւ հասկանալ, էլ չեմ ասում աստուածային խորհուրդը, որն անհասանելի է մարդկային մտքի համար ու անճառելի՝ լեզուի համար: Ասում է. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, սակայն Նա կը մկրտի Հրով եւ Հոգով»: Սա առաջին գլուխը Յովհաննէսի քարոզչութեան մասին:

Երկրորդ գլուխ՝ Յովհաննէսի մկրտութեան մասին:

Իմանալի է, որ կան մկրտութեան տասը եղանակներ:

Առաջին եղանակ - երբ արարչութեան ժամանակ ասում է. *«Աստուծոյ Հոգին շրջում էր ջրերի վրայ» [Ծննդ. Ա 2]*, կանխատեսում է մկրտութեան խորհուրդը, երբ Սուրբ Հոգին իջնում է աւազանի վրայ:

Երկրորդ - ողջ աշխարհի ջրհեղեղը, որը սրբեց մեղքերը, եւս մկրտութեան նշանակ է, որով սրբւում ենք մեր բոլոր մեղքերից:

Երրորդ - երբ Մովսեսը ճեղքեց ծովը եւ ժողովրդին անցկացրեց ամպի ու ծովի միջով, դարձեալ մկրտութիւն էր, որով ժողովուրդը սրբուեց եգիպտական մեղքերից, նոր լեզու տրուեց եւ անապատում կերակրուեց մանանայով, ինչպէս որ մեր մկրտութեան ժամանակ մեղքերի թողութիւն ենք ստանում, պէս-պէս շնորհներ ձեռք բերում եւ Քրիստոսի Մարմինն ու Արիւնը ճաշակում:

Չորրորդ - Մովսէսը մկրտութիւնն օրինադրեց քահանաներին, որ լուացուեն ջրով, որպէսզի չմեռնեն, իսկ Սողոմոնը պղնձից աւազան շինեց, որպէսզի նրա մէջ լուանան իրենց ձեռքերն ու ոտքերը:

Հինգերորդ - Յովհաննէսի մկրտութիւնն էր, ով եկաւ Յորդանանի կողմերը. նրա մօտ էին գալիս բոլոր մարդիկ, մկրտւում նրանից եւ խոստովանում իրենց մեղքերը:

Վեցերորդ - Քրիստոսի Մկրտութիւնն էր, երբ մկրտուեց ու մեզ հաստատեց Նորի մէջ՝ մկրտուել Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով:

Եօթերորդ - առաքեալների մկրտութիւնն էր, երբ Սուրբ Հոգին հրակերպ հողմով իջաւ Վերնատուն, մկրտեց նրանց եւ իջաւ նրանց վրայ:

Ութերորդ - արեամբ մկրտութիւնն է, ինչպէս վկաներինը, ովքեր մկրտուեցին իրենց արեամբ, սրբուեցին մեղքերից եւ եղան Քրիստոսին չարչարակից:

Իններորդ - ապաշխարութեամբ մկրտութիւնն է, երբ մեր արտասուքներով լուանում ենք մեղքերը, խոստովանութեամբ մեղքերի թողութիւն գտնում ու արդարանում:

Տասներորդ - վախճանի ժամանակ վերջին՝ հրով մկրտութիւնն է, երբ ամէն ինչ պիտի անցնի հրի միջով, ու սրբի ներելի մեղքերից:

Արդ, սրանք են մկրտութեան տասը եղանակները:

Սակայն ասենք, որ Քրիստոսի մկրտութիւնը չորս կերպով առաւել էր, քան Յովհաննէսի մկրտութիւնը, որովհետեւ

նախ - Քրիստոսի մկրտութիւնը թողութիւն էր տալիս մեղքերին՝ ըստ այն խօսքի. *«Զեզնից իւրաքանչիւրը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով մեղքերի թողութեան համար» [Գործք. Բ 38]:* Իսկ Յովհաննէսի մկրտութիւնը թողութիւն չէր տալիս մեղքերին, այլ միայն մեղքերի ապաշխարութիւն էր:

Երկրորդ - Քրիստոսի մկրտութիւնը պարգեւում էր Սուրբ Հոգին՝ ըստ այն խօսքի. *«Նա կը մկրտի ձեզ Սուրբ Հոգով» [Մատթ. Գ 11]*, իսկ Յովհաննէսի մկրտութիւնը չէր տալիս Հոգին, քանզի Հոգին նախքան խաչելութիւնը դեռեւս չէր իջել, որովհետեւ «Յիսուս դեռ չէր փառաւորուել»,- ասում է Աւետարանը:

Երրորդ - Քրիստոսի մկրտութիւնը մեզ Աստուծոյ որդիներ է դարձնում՝ ըստ Աւետարանի այն խօսքի, թէ *«Նրանք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից եւ ոչ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին» [Յովհ. Ա 13]*, իսկ Յովհաննէսի մկրտութիւնը մեզ Աստուծոյ որդիներ չէր դարձնում, որովհետեւ Սուրբ Հոգին չէր տալիս, քանզի առաքեալն ասում է. «Ստացանք որդեգրութեան Հոգին, Որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր»:

Չորրորդ - Քրիստոսի մկրտութիւնը բացում էր Արքայութեան դուռը՝ ըստ այն խօսքի, թէ՝ *«Եթէ մէկը ջրից ու Հոգուց չծնուի, չի՛ կարող Աստուծոյ Արքայութիւնը մտնել» [Յովհ. Գ 5]*, իսկ Յովհաննէսի մկրտութեամբ չէին մտնում Արքայութիւն,

որովհետեւ ինքը՝ Յովհաննէսը, եւ նաեւ իր կողմից մկրտուածները դժոխք իջան 4 Ահա ուրեմն պարզ է Յովհաննէսի մկրտութեան որպիսութիւնը, որն ասում է. *«Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարութեան համար» [Մատթ. Գ 11]:*

Երրորդ գլուխ՝ նրա շնորհների մասին:

Ասենք, որ զարմանալի են նրա շնորհները եւ առաւել, քան բոլոր սուրբերինը: Քանզի աւետման որդի էր՝ ծնուած ամուլ ծնողներից, սրբուած արգանդից, Քրիստոսին որովայնից երկրպագող, իր հօր լեզուի կապող ու արձակող, մանկութիւնից անապատում բնակուող եւ այլն, ինչպէս որ արդէն նախապէս ասացինք: Իսկ նրա առաւել շնորհները պէտք է տեսնել վեց եղանակով:

Նախ - մարմնաւոր ծննդեամբ նա առաջ էր Քրիստոսից, եւ նախ ինքը եկաւ մկրտելու ջրով ու քարոզելու: Եւ որքան նա քարոզում էր, Քրիստոս լուռ էր, իսկ երբ Յովհաննէսը բանտարկուեց, Քրիստոս սկսեց քարոզել:

Երկրորդ - ըստ մարմնի՝ ազգակից էր Քրիստոսին, հասակակից էր Նրան ու մերձաւոր: Այլ մարգարէները Նրա մասին ասում էին հեռուից եւ ցանկանում էին տեսնել, բայց չտեսան, իսկ նա տեսաւ Նրան ու վկայեց, թէ՝ *«Ահա՛ Գառն Աստուծոյ, որ վերացնում է աշխարհի մեղքը» [Յովհ. Ա 29]:*

Երրորդ - եղաւ հին օրէնքի աւարտը եւ Նորի սկիզբը, երկուսի միջնորդն ու կապը, քանզի բոլոր մարգարէութիւնները եղան մինչեւ Յովհաննէսը եւ ապա դադարեցին՝ ըստ այն խօսքի, թէ *«Յովհաննէս Մկրտչի օրերից մինչեւ այժմ երկնքի Արքայութիւնը բռնադատւում է, եւ հզօրներն են յափշտակում այն, քանի որ ամբողջ Օրէնքն ու մարգարէները մարգարէացան մինչեւ Յովհաննէսը» [Մատթ. ԺԱ 12–13]:* Սա է շնորհների նոր Օրէնքը, իսկ նա եղաւ մկրտութեան եւ Քրիստոսի քարոզութեան սկիզբը:

Չորրորդ - Մկրտչի խոնարհութիւնն էր, քանզի երբ նրան հարցրին, թէ դո՞ւ ես Քրիստոսը, ասաց՝ ես չեմ, հարցրին՝ Եղիա՞ն ես կամ էլ նրա համար Մովսէսի ասած մարգարէ՞ն, ասաց՝ ես չեմ, ես անապատում Կանչողի ձայնն եմ ու առաջ ընթացայ, որ տեղ պատրաստեմ: Իսկ Աստուծոյ Բանը եւ Բարբառը Քրիստոս է: Նա է Եկեղեցու՝ հոգեւոր հարսի երկնաւոր Փեսան, իսկ ես բարեկամն ու փեսաւէրն եմ: Նա պիտի աճի, իսկ ես՝ նուազեմ: Ես արժանի չեմ արձակելու Նրա կօշիկների կապերը, քանզի վերջին սպասաւորներից աւելի ցածր եմ: Այսպիսի խոնարհութեան շնորհներ ունէր նա իր մէջ: Եւ քանի որ ասաց. «Արժանի չեմ արձակելու կօշիկների կապերը», այդ պատճառով արժանացաւ ձեռքը մօտեցնելու Փրկչի Գլխին ու մկրտելու: Այսպիսի մեծ շնորհ է խոնարհութիւնը, որի համար Աւետարանն ասում է. «Ով խոնարհեցնում է իր անձը, պիտի բարձրացուի»:

Հինգերորդ - ամէնքի Սրբութիւնը մկրտուեց նրանից, ինչպէս որ վկայեց. «Տէ՛ր, ինձ պէտք է, որ Քեզնից մկրտուեմ, եւ Դու ինձ մո՞տ ես գալիս: Ո՞վ է տեսել, որ կաւը սրբի ջրին: Արդ, ես կաւ եմ, իսկ Դու՝ սրբարար Ջուր, եւ Դու ինձ մո՞տ ես գալիս սրբուելու: Ո՞վ է տեսել, որ խոտը մաքրի հրին, եւ Դու ինձ մո՞տ ես գալիս մաքրուելու: Ո՞վ է տեսել, որ ճրագը լոյս տայ արեգակին, եւ Դու ինձ մո՞տ ես գալիս լուսաւորուելու: Փոքրը օրհնութիւն է առնում մեծից: Դու Արարիչ ես, իսկ ես արարած, ես ինչպէ՞ս համարձակուեմ մկրտել Քեզ»: Նրան ասաց. *«Թո՛յլ տուր հիմա, որովհետեւ այսպէս վայել է, որ մենք կատարենք Աստուծոյ ամէն արդարութիւն» [Մատթ. Գ 15]:* Ով մեծ էր, խոնարհուեց, որ մեզ բարձրացնի: Տէրը ծառայ եղաւ, որ մեզ նախկին տէրութիւնը տայ: Իջաւ երկնքից, որ մեզ երկինք բարձրացնի: Աստուծոյ ու բարձրեալ Հօր Որդին եղաւ մարդու Որդի, որ մեզ Աստուծոյ որդիներ դարձնի: Այսպէս եւ Սրբութիւնը մկրտուեց, որպէսզի մեզ սրբի բոլոր մեղքերից:

Վեցերորդ - մարմնաւոր աչքով տեսաւ Երրորդութեան Անձերին. Որդուն՝ Յորդանան գետում, Հոգուն՝ աղաւնակերպ իջած, եւ Հօրը՝ բացուած երկնքում, Ով ի վերուստ վկայեց. *«Դա՛ է Իմ սիրելի Որդին, Դրա՛ն լսեցէք» [հմմտ. Մատթ. Գ 17]:*

Այս շնորհներով Յովհաննէսը գերազանց գտնուեց իրենից առաջ եղող բոլոր սուրբերից, քանզի Մովսէսը թէպէտ տեսաւ Աստծուն, սակայն թիկունքից, իսկ սա տեսաւ դէմ յանդիման ու չմեռաւ: Եղիան տեսաւ մեղմ օդի մէջ, սակայն մի Անձին, իսկ սա արժանացաւ տեսնելու Սուրբ Երրորդութեանը: Դաւիթը տեսաւ մտքի հիացմամբ, իսկ սա ե՛ւ մտքով, ե՛ւ զգայութեամբ: Սողոմոնը տեսաւ գիշերուայ մէջ՝ երազային տեսիլքով, իսկ սա՝ արթուն, իր աչքով տեսաւ Սուրբ Հոգուն, ականջներով լսեց Հօր Ձայնը եւ ձեռքերով շօշափեց Կենաց Բանին, ինչպէս Աւետարանիչն է ասում. *«Նա, Ով ի սկզբանէ էր, Ում մասին լսեցինք, Ում ականատես իսկ եղանք, եւ Ում մեր ձեռքերը շօշափեցին եւ Ով Հօր մօտ էր, յայտնուեց մեզ» [Ա Յովհ. Ա 1]:*

Չորրորդ՝ կոչումների մասին:

Գիտելի է, որ Սուրբ գիրքը նրան կոչում է տասը եղանակներով:

Առաջին - Հայր Աստուած Մաղաքիայի միջոցով նրան հրեշտակ է կոչում՝ ասելով. «Կ՚առաքեմ Իմ հրեշտակին», որովհետեւ, նախ՝ կուսութեամբ ու անապատում բնակուելով հրեշտակի վարք ունէր եւ նաեւ՝ Տէր Աստուծոյ պատգամն էր խօսում, որը հրեշտակի գործ է:

Երկրորդ - Եսային նրան կոչում է անապատում Կանչողի ձայն, որովհետեւ նախ ձայնն է ընթանում, իսկ խօսքը գալիս է նրա յետեւից, եւ ապա ձայնն անցնում է լսելիքի միջով, իսկ խօսքը մնում է սրտում: Այսպէս Յովհաննէսի մկրտութիւնն անցաւ, իսկ մեր Տիրոջ մկրտութիւնը մնաց Եկեղեցում:

Երրորդ - Գաբրիէլ հրեշտակապետը Զաքարիային պատուիրեց նրան Յովհաննէս կոչել: Մայրը եւս Հոգու ազդմամբ Յովհաննէս կոչեց նրան, իսկ Հայրը վերցրեց տախտակն ու գրեց. «Դրա անունը Յովհաննէս է»: Յովհաննէս նշանակում է «շնորհ», քանզի եղաւ նոր քարոզութեան շնորհների սկիզբը: Նաեւ Յովհաննէս նշանակում է «հնազանդութիւն», քանզի հնազանդ եղաւ Քրիստոսին, ինչպէս ասացինք վերեւում:

Չորրորդ - Տէրը նրան «մարգարէ» կոչեց, ինչպէս որ գրուած է. *«Ի՞նչ տեսնելու ելաք. մի մարգարէ՞. այո՛, ասում եմ ձեզ. առաւե՛լ, քան մի մարգարէ» [Մատթ. ԺԱ 9]*, որովհետեւ մօր որովայնից ճանաչեց Նրան, երկրպագեց եւ մօր լեզուով օրհնաբանեց: Եւ նաեւ ասաց. *«Ձեր մէջ կայ Մէկը, Որին դուք չէք ճանաչում, Նա՛ կը մկրտի ձեզ» [Յովհ. Ա 26]:*

Հինգերորդ - ինքն իրեն առաքեալ է կոչում՝ ասելով. *«Ով ինձ առաքեց ջրով մկրտելու» [Յովհ. Ա 33]:* Աւետարանն էլ ասում է. *«Կար մի մարդ՝ Աստծուց առաքուած» [Յովհ. Ա 6]*, որովհետեւ, նախ՝ սպասաւորեց Բանին եւ ապա՝ քարոզեց Նրա մասին, թէ՝ *«Իմ յետեւից գալիս է Մէկը, Ով ինձնից մեծ եղաւ, որովհետեւ ինձնից առաջ կար» [Յովհ. Ա 30]:*

Վեցերորդ - Մատթէոսը նրան Մկրտիչ է կոչում՝ ասելով. *«Այն օրերին գալիս է Յովհաննէս Մկրտիչը» [Մատթ. Գ 1]*, որովհետեւ, նախ՝ ժողովրդին մկրտում էր ջրով ապաշխարութեան համար եւ նաեւ մկրտեց Քրիստոսին, Ով ամէնքի Սրբութիւնն է:

Եօթերորդ - մկրտութեան եկողները նրան վարդապետ էին կոչում՝ ասելով. *«Վարդապե՛տ, մենք ի՞նչ անենք» [Ղուկ. Գ 12]*, քանզի, նախ՝ ուսուցանում էր ճշմարտութիւնը եւ ապա՝ սաստում ու յանդիմանում էր անաչառութեամբ, ինչպէս որ իժերի ծնունդներ կոչեց Հերովդէսին ու փարիսեցիներին:

Ութերորդ - կոչւում է քահանայ, որովհետեւ, նախ՝ ղեւտացիների ցեղից էր ու քահանայապետի որդի, եւ նաեւ՝ մկրտութիւնը քահանայի գործ է, իսկ նա իրագործեց նոր քահանայութիւն, այլ ո՛չ թէ հին, քանզի գրուած է՝ «Աստուծոյ Խօսքը լսելի եղաւ Յովհաննէսին անապատում, նրան շնորհեց քահանայութիւն եւ առաքեց մկրտութեան»:

Իններորդ - կոչւում է Կարապետ՝ որպէս Քրիստոսի Գալստեան նախընթաց ու աւետաւոր, քանզի, նախ՝ մարդկանց քարոզեց Քրիստոսի փրկագործութիւնը՝ ըստ այն խօսքի, թէ՝ *«Եւ դո՛ւ, ո՛վ մանուկ, Բարձրեալի մարգարէն պիտի կոչուես՝ պատրաստելու Նրա ճանապարհները» [Ղուկ. Ա 76]:* եւ ապա՝ կարապետ եղաւ դժոխքում եղող հոգիներին ու նրանց աւետարանեց Քրիստոսի Գալստեան մասին:

Տասներորդ - կոչւում է վկայ՝ ըստ այն խօսքի, թէ՝ *«Վկայեց եւ ասաց, թէ ե՛ս չեմ Քրիստոսը» [Յովհ. Ա 20]:* Եւ ասենք, որ նա վկայեց երկու կերպով. նախ՝ խոստովանեց լեզուով, ինչպէս որ ասում է. *«Խոստովանեց առանց վարանելու» [Յովհ. Ա 20],* եւ դարձեալ ասում է. *«Տեսայ ու վկայեցի, թէ սա՛ է Աստուծոյ Որդին» [Յովհ. Ա 34]:* Երկրորդ՝ վկայեց արեամբ, քանզի գլխատուեց Հերովդէսից եւ վկայ եղաւ Քրիստոսի չարչարանքներին ու մահուան:

Հինգերորդ՝ գովաբանութիւնների մասին:

Առաջին - Բազում են Յովհաննէսի համար ասուած նախնիների գովաբանութիւնները. Մաղաքիան նրան հրեշտակ կոչեց, Եսային՝ Կանչողի ձայն, եւ նմանապէս՝ միւսները: Երբ Յովհաննէսը բանտից իր աշակերտներին ուղարկեց Տիրոջ մօտ՝ հարցնելու, թէ *«Դո՞ւ ես, որ գալու էիր, թէ՞ ուրիշին սպասենք» [Մատթ. ԺԱ 3],* սա թերահաւատութեան նշան չէր, որովհետեւ դեռեւս մօր որովայնից երկրպագեց Քրիստոսին, մօր ձայնով Նրան Տէր դաւանեց, վկայեց, թէ *«Սա է Աստուծոյ Գառը»*, Յորդանանում լսեց Հօր Ձայնն ու տեսաւ աղաւնակերպ իջնող Հոգուն, այլ հարցրեց երեք պատճառով. նախ՝ նա կամեցաւ իր աշակերտներին ուղարկել Քրիստոսի մօտ, որպէսզի տեսնեն Նրա սքանչելիքներն ու հաւատան: Երկրորդ՝ հարցրեց ժողովրդի համար, որպէսզի միայն Նրան պաշտէին, որովհետեւ վախեցաւ, որ իր մահից յետոյ իրեն կը պաշտեն: Երրորդ՝ հարցրեց մեռեալների համար, քանզի ասաց. «Պատրաստւում եմ փոխուել նրանց մօտ, եւ ինչպէս որ կարապետ եղայ ողջերին, նոյնպէս էլ աւետիս պիտի տանեմ մեռեալներին: Դու շո՞ւտ ես գալու, թէ՞ յապաղելու ես»: Իսկ ժողովուրդը որպէսզի չընկնէր տարակուսանքի մէջ, Քրիստոս սկսեց փարատել նրանց կասկածներն ու ասաց. *«Ի՞նչ տեսնելու ելաք անապատում. հողմից շարժուող եղէ՞գ, թէ՞ թագաւորների պալատներում ապրող փափուկ զգեստներով զարդարուած մարդ: Նա այդպիսինը չէ» [հմմտ. Մատթ. ԺԱ 8–9]:* Եւ նրան սկսեց գովել երեք կերպով. նախ՝ ասաց, թէ մարգարէ է. *«Մարգարէ՞. այո՛, ասում եմ ձեզ. առաւե՛լ, քան մի մարգարէ» [Մատթ. ԺԱ 9]:* Եւ այս խօսքը չորս տեսակ գովասանք է պարունակում. առաջինը՝ մարգարէ է ու ճշմարտախօս, երկրորդը՝ մարգարէ է, որովհետեւ վկայեց Իմ մասին՝ ասելով. *«Ով գալիս է Ինձնից յետոյ, Ինձնից աւելի հզօր է» [Մատթ. Գ 11],* երրորդ՝ առաւել է, քան մարգարէն, որովհետեւ ականատես եղաւ, որի համար էլ խօսեց, չորրորդ՝ նաեւ մարգարէներին քարոզեց Քրիստոսի Գալստեան մասին: Սա՝ առաջին գովաբանութիւնը:

Երկրորդ - գովեց Յովհաննէսին եւ ճրագ կոչեց՝ ասելով. *«Յովհաննէսն է ճրագը, որ վառուած էր ու լոյս էր տալիս» [Յովհ. Ե 35]:* Եւ սա չորս պատճառով ասաց. նախ՝ ճրագը լուսաւորում է գիշերը, իսկ արեգակի ծագելուն պէս մարում է: Այսպէս էլ Յովհաննէսը. նախքան Քրիստոս լուսաւորում էր հրէաների խաւարած մտքերը, իսկ

երբ Քրիստոս սկսեց քարոզել, նա լռեց: Երկրորդ՝ ճրագը ուրիշից ունի լոյսը, այսպէս էլ Յովհաննէսը՝ Քրիստոսից: Երրորդ՝ ճրագն անընդհատ չի լուսաւորում, այլ շուտով մարում է. այդպէս էր Յովհաննէսի քարոզչութիւնը: Չորրորդ՝ մի ճրագից վառւում են շատերը. նոյնպէս եւ Յովհաննէսի քարոզչութիւնից լուսաւորուեցին ու ապաշխարեցին շատերը: Սա՝ Յովհաննէսի երկրորդ գովաբանութիւնը:

Երրորդ - գովեց նրան խօսքով եւ ասաց. *«Կանանցից ծնուածների մէջ Յովհաննէս Մկրտչից աւելի մեծը չի եղել» [Մատթ. ԺԱ 11]:* Սա ասաց՝ համեմատելով նախկին մարգարէների, հայրերի ու նահապետների հետ:

Իսկ Եկեղեցու վարդապետներն անթիւ մեծութիւններ են վերագրում նրան, որոնք բոլորը մասնաւորաբար վերցնելով՝ հաւաքուեց թուով քառասունը:

Նախ. Յովհաննէսն աւետման որդի է, ըստ որում՝ Գաբրիէլի աւետիսով:

Երկրորդ. աւետիսն ստացաւ տաճարում՝ քաւութեան մեծ տօնի օրը:

Երրորդ. ստացաւ բազմամբոխ ժողովրդի մէջ, որովհետեւ ողջ Իսրայէլի ժողովուրդը հաւաքուել էր քաւութեան տօնի համար:

Չորրորդ. աւետիս տալուց յետոյ հայրը համրացաւ:

Հինգերորդ. Յովհաննէս անունը դրուեց հրեշտակի կողմից, մայրը եւս նոյն անունով կոչեց, իսկ հայրը՝ Զաքարիան, տախտակի վրայ գրեց. «Դրա անունը Յովհաննէս է», որը նշանակում է «շնորհ» կամ «հնազանդութիւն», ինչպէս որ ասացինք:

Վեցերորդ. սրբուեց արգանդից, ինչպէս Երեմիան:

Եօթերորդ. մօր որովայնից երկրպագեց Քրիստոսին:

Ութերորդ. երբ նա ցնծաց, նրա մայրը եւս լցուեց Սուրբ Հոգով:

Իններորդ. ծննդեան ժամանակ արձակեց հօր լեզուն, որը մարգարէացաւ իր համար:

Տասներորդ. ամլածին եւ ծեր ծնողներից ծնուած զաւակ էր:

Տասնմէկերորդ. քահանայապետի որդի էր:

Տասներկուերորդ. պատռելով վէմն ու կնքելով՝ փրկուեց Հերովդէսի ձեռքից:

Տասներեքերորդ. բնակուեց անապատում:

Տասնչորսերորդ. առանց յարկի եւ ծածկոյթի էր:

Տասնհինգերորդ. շրջում էր առանց հանդերձների՝ մերկ եւ բոկոտն:

Տասնվեցերորդ. առանց կերակրի էր. ուտում էր միայն մորեխ եւ վայրի մեղր:

Տասնեօթերորդ. անդադար աղօթում էր Աստծուն:

Տասնութերորդ. անհանգիստ եւ տքնասէր էր:

Տասնիններորդ. կոչուեց Աստուծոյ հրեշտակ:

Քսաներորդ. կոչուեց Կանչողի ձայն:

Քսանմէկերորդ. խօսեց Հայր Աստուծոյ հետ. *«Նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա՛ ինձ ասաց. «Ում վրայ տեսնես, որ Հոգին իջնում եւ մնում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով» [Յովհ. Ա 33]:*

Քսաներկուերորդ. առաքուեց՝ մկրտելու ջրով՝ ապաշխարութեան համար:

Քսաներեքերորդ. ստացաւ մարգարէութեան գերագոյն Հոգի, քանզի առաւել յայտնապէս ու պարզ խօսեց Քրիստոսի Գալստեան մասին, քան միւս մարգարէները:

Քսանչորսերորդ. եղաւ Արդարութեան Արեգակի կարապետ:

Քսանհինգերորդ. ոչ թէ հեռաւոր, այլ մերձաւոր էր Քրիստոսին եւ եղաւ Նրա ականատեսը:

Քսանվեցերորդ. խօսակից եղաւ Քրիստոսին:

Քսանեօթերորդ. մկրտեց Քրիստոսին:

Քսանութերորդ. ինքն էլ մկրտուեց Քրիստոսի կողմից:

Քսանիններորդ. տեսաւ Երրորդութեան Անձերին:

Երեսուներորդ. տեսաւ բացուած երկինքը, որ փակ էր Ադամի յանցանքի պատճառով:

Երեսունմէկերորդ. վկայեց, թէ *«Սա՛ է Աստուծոյ Գառը»:*

Երեսուներկուերորդ. քարոզում էր Աստուծոյ Արքայութեան մօտենալու մասին ու հաստատում Քրիստոսի մէջ:

Երեսուներեքերորդ. կանխատեսեց Սուրբ Հոգու հրակերպ էջքը՝ Վերնատուն:

Երեսունչորսերորդ. վախեցնում էր անաչառ դատաստանով, թէ՝ «Կացինն ահա ծառերի արմատին է դրուած»:

Երեսունհինգերորդ. վկայում էր հրէաների արտաքսուելը Աբրահամի որդեգրութիւնից:

Երեսունվեցերորդ՝ յայտնեց հաւատի միջոցով հեթանոսների որդեգրութիւնն Աբրահամին:

Երեսունեօթերորդ. մարգարէների վերջն էր ու առաքեալների սկիզբը:

Երեսունութերորդ. քարոզեց եւ աւետարանեց նաեւ դժոխքում եղող հոգիներին:

Երեսունիններորդ. եղաւ առաջին մարտիրոսն ու վկան՝ հեղելով իր արիւնը ճշմարտութեան համար:

Քառասուներորդ (որն ամենագլխաւորն ու ամենամեծն է). գովուեց ամենաերանելի բերանից եւ վկայուեց, թէ՝ *«Կանանցից ծնուածներից Յովհաննէս Մկրտչից աւելի մեծը չի՛ եղել» [Մատթ. ԺԱ 11]:*

Մեր Տէր Յիսո՛ւս Քրիստոս, կանանցից ծնուածներից մեծի՝ Մկրտչի եւ Կարապետի մաղթանքներով ու խնդրանքներով ընդունի՛ր մեր աղաչանքները. ների՛ր մեր բոլոր յանցանքները եւ արժանացրու մեզ բաժնեկից լինել Քո սուրբերի երանաւէտ վիճակին: Քե՛զ Քո ամենակալ Հօր ու Ճշմարիտ Ամենասուրբ Հոգու հետ փա՛ռք եւ գոհաբանութի՛ւն անլռելի արտաձայնութեամբ այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ԱԲԻՍՈՂՈՄ ՍԱՐԿԱՒԱԳԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Որք հաղորդեցան չարչարանաց Քոց,
Քրիստո՛ւ, սուրբ հայրապետքն.
Եւ վերաբերեալ պայծառացան ընդ
անմարմին բազմութիւնսն.
Սոցին աղաչանօք խնայեա ի մեզ
Աստուած հարցն մերոց:
(Շարակնոց)

Վերջին մարտիրոս կոչուող սուրբ եւ առաքելաշնորհ մեծ հայրապետ Պետրոս Ալեքսանդրացին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի պատրիարքութեան Աթոռին նստեց Տիրոջ մօտ 300 թուականին: Նա Քրիստոսի ճշմարիտ հաւատի վարդապետ էր, յարատեւ քարոզում էր Աւետարանը, ծաղկած էր ուղղափառ հաւատով, պտղաբեր բարի գործերով ու պատկառելի ողջ ժողովրդի աչքին: Նա իր հովուական ծառայութիւնը երեք տարի վարեց անդորրի մէջ, որից յետոյ ողջ տիեզերքով մէկ քրիստոսամարտ Դիոկղետիանոս արքայի երեսից դառնութեան հուր բորբոքուեց: Նրա փեսայ Մաքսիմիանոս Երկրորդը՝ Արմէնտարիոս Կեսար կոչեցեալը, իր չարասէր մօր խրատով, ով քրիստոնեաներին սոսկալի ատող եւ մոլի կռապաշտ կին էր, դրդեց իր աներոջը՝ քրիստոնէական կրօնը հալածելու համար արքունի մի հրովարտակ տարածել բոլոր վայրերում: Ու Տիրոջ 303 թուականին, որը նահատակութիւնների սկիզբն էր, տարածքով մէկ մի խիստ հրաման ելաւ, ըստ որի՝ բոլոր քրիստոնեաները՝ մեծ թէ փոքր, պէտք է ընդունէին աստուածների պաշտամունքը, իսկ ով յանձն չառնէր, սրով եւ հրով, սովով ու աքսորներով մահուան դառը պատիժ կ'ընդունէր եւ մէջտեղից կը վերացուէր:

Այս պատուէրն առնելով՝ աշխարհակալ իշխաններն ու դատաւորներն սկսեցին տեղ-տեղ գործադրել անօրէն հրամանը: Եւ ո՞վ կարող էր թուել քաջ նահատակների՝ տղամարդկանց եւ կանանց, ծերերի եւ մանուկների, իշխանների ու քահանաների անհամար բազմութիւնը, ովքեր Քրիստոսի սիրոյ համար իրենց անձերը տեսակ-տեսակ դաժան տանջանքներով արիաբար մահուան մատնեցին: Նահատակւում էին թէ՛ մէկ-մէկ եւ թէ՛ խմբովին: Բայց, աւա՜ղ, նաեւ շատերն ուրացան Քրիստոսին ու դատապարտուեցին յաւիտենական կորստեան:

Այս հալածանքների հրդեհը, որն սկսուեց Դիոկղետիանոսի եւ նրա գահակից Մաքսիմիանոս Հերակլէսի օրօք, տարածուեց նաեւ միւս Մաքսիմիանոս Երկրորդի՝ Արմէնտարիոս Գաղերիոսի առանձին կայսրութեան մէջ, սակայն առաւել սաստկացաւ արեւելեան կողմերում՝ Մաքսիմինոսի՝ Դաժ կոչուող Մաքսիմիանոս Երրորդի մօտ: Սա նախկինի քեռորդին էր, ով Տիրոջ 305 թուականին կեսար դարձաւ: Նա տիրում էր Արեւելքին ու Եգիպտոսին, իսկ կարճ ժամանակ անց նա նաեւ կայսր կոչուեց:

Արդ, այս ժամանակներում Ալեքսանդրիայի սուրբ Պետրոս եպիսկոպոսապետը, Եգիպտոսում փայլելով իր պայծառ քարոզութեամբ, անդադար յորդորում էր հաւատացեալներին հաստատուն մնալ Քրիստոս Աստուծոյ ճշմարիտ հաւատքի մէջ եւ յօժարութեամբ մեռնել Տիրոջ անուան համար: Սակայն Եգիպտոսի Թեբայիդի սահմաններում գտնուող Լիկոպոլս քաղաքի Մելիտոս եպիսկոպոսը, չարից հրապուրուելով ու տանջանքներից զարհուրելով, ուրացաւ հաւատը, զոհեց կուռքերին եւ սրտի չարութիւնից հաւատացեալների շրջանում մեծամեծ անօրէնութիւններ ու չարիքներ գործեց: Բայց միաժամանակ իր եպիսկոպոսական աթոռը չկորցնելու համար նա առերես, անապաշխար դարձ էր ցոյց տալիս, իսկ սուրբ Պետրոս հայրապետը, չարի այդ գործակցին անզեղջ տեսնելով, ժողով գումարեց եւ նրան զրկեց քահանայական պատուից, որ թերեւս զղջայ ու ապաշխարի: Բայց նա, ամենեւին ուշադրութիւն չդարձնելով, արհամարհեց հայրապետին եւ չուզեց նրա ձեռքի տակ լինել, այլ կամեցաւ ինքնիշխան լինել: Ու որսալով շատերին՝ հերձուած գցեց հաւատացեալների մէջ, որտեղից սկիզբ առան նրա արբանեակները, որոնք կոչուեցին մելիտոսեաններ:

Սրան յարեց Արիոս Ալեքսանդրացին նախքան իր աղանդը տարածելը, երբ դեռեւս Եկեղեցում ծառայութեան մէջ էր, որի համար մերժուեց Պետրոս հայրապետի կողմից եւ արտաքսուեց Եկեղեցուց: Սակայն յետոյ «զղջալով»՝ հեշտութեամբ թողութիւն ստացաւ, քանզի ճարտար լեզու ունէր ու գրաւում էր բոլոր նրանց, ում հետ խօսում էր: Այդպէս նա կարողացաւ մինչեւ անգամ սարկաւագ ձեռնադրուել իր իսկ սուրբ հայրապետի կողմից: Կարողանալով որոշ մարդկանց տանել իր յետեւից՝ նա հեռացաւ Մելիտոսից, բայց յետոյ դարձեալ յարեց նրան՝ առաւել զօրացնելով չար հերձուածը: Այդ կրկնելու համար սուրբ Պետրոսը նզովելով արտաքսեց Արիոսին եւ բանադրեց: Իսկ Մելիտոսը, օրէցօր առաւել չարանալով Պետրոս հայրապետի դէմ, բոլորի՝ յատկապէս հեթանոսների մօտ ամբաստանում էր նրան, մինչեւ անգամ ամբաստանեց նաեւ Մաքսիմիանոսի մօտ՝ նրան ներկայացնելով որպէս ժողովրդի խռովեցուցիչ: Եւ քանի որ թագաւորների մօտ նրա մասին կարծիք կար, թէ նա է, որ Եգիպտոսում քրիստոնեաներին իրենց հաւատքի մէջ հաստատուն է պահում, անմիջապէս մարդիկ ուղարկեց՝ բռնելու նրան եւ իր գործակիցներին: Այնժամ հաւաքեցին եպիսկոպոսներից, քահանաներից ու Եկեղեցու ծառայողներից շատերին՝ մօտ վեց հարիւր վաթսուն հոգի, ովքեր զանազան տեղեր աքսորուելով ու տեսակ-տեսակ տանջանքների ենթարկուելով՝ նահատակուեցին: Իսկ սուրբ Պետրոսին չկարողացան բռնել, որովհետեւ ալեքսանդրացիների բազմահաւաք խումբը, միահամուռ ոտքի կանգնելով արքունի ծառայողների դէմ, քաջութեամբ դիմադրութիւն ցոյց տուեց: Այնժամ սուրբ հայրապետը՝ վախենալով, որ միգուցէ իր պատճառով ժողովրդի մէջ խռովութիւն ընկնի եւ կոտորած սկսուի, բարեպաշտ մարդկանց յորդորներով անաղմուկ հեռացաւ քաղաքից ու երկար ժամանակ հալածանքներ կրելով՝ շրջեց Պաղեստինի եւ Միջագետքի կողմերում:

Հալածանքների հուրը բռնել էր ողջ երկիրը, որի պատճառով նա ամենուր ծանր նեղութիւններ էր կրում: Սակայն սուրբ հայրապետը ուր էլ որ լինում էր, իւրայիններին եւ սուրբ հաւատի համար բանտարկուածներին միշտ քաջալերական յորդորներով լի նամակներ էր ուղարկում: Եւ այս ամէնում սուրբին ուղեկից եւ աջակից էր իր երանելի Աբիսողոմ սարկաւագը՝ առաջացած տարիքով ու Սուրբ Հոգով լցուած մի մարդ, ով, այդքան տարիներ սուրբ հայրապետի կողքին լինելով, նրա հետ կրում էր բոլոր հալածանքները: Երբ սուրբ Պետրոսը լսեց, որ իր գործակիցները նահատակուել են, եւ իր հօտը, զրկուած լինելով հովուից, վտանգի ու տագնապի մէջ է, Աբիսողոմի հետ վերադարձաւ Ալեքսանդրիայի իր Աթոռը եւ սկսեց մխիթարել, սրտապնդել ու ամրացնել բոլորին, համարձակ քարոզել Քրիստոս Աստծուն եւ աներկիւղ յանդիմանել հեթանոսների մոլորութիւնը:

Երբ Մաքսիմիանոսը տեղեկացաւ այս մասին, շտապ Ալեքսանդրիա ուղարկեց արքունի մի հազարապետ՝ երեւելի զօրականներով հանդերձ, որպէսզի բռնեն Պետրոս եպիսկոպոսապետին եւ մահուան մատնեն: Երբ զօրականները եկան, քաղաքում մեծ աղմուկ բարձրացաւ, ու ժողովուրդը սաստիկ խռովուեց: Նրանք միաբերան ասացին. «Աւելի լաւ է՝ նախ մենք բոլորս մեռնենք եւ ապա մեր հայրապետը»: Այս խօսքերից զօրականները վախեցան ձեռք բարձրացնել նրա վրայ, այլ բռնելով բանտ նետեցին:

Նոյն օրը անապատից այդ քաղաք էր իջել Աստուծոյ աշխարհաքարոզ այրը՝ մեծ հայր Անտոնը, որպէսզի այցելի Քրիստոսին վկայելու համար բանտարկուածներին, եւ նաեւ եթէ առիթ լինի, նահատակութեամբ չարչարակից լինի նրանց: Նա այցելեց բանտում գտնուող սուրբ Պետրոս հայրապետին, մինչեւ նրա վերջին օրը կարեկից եղաւ նրա վշտերին եւ քաջալերական ու աստուածիմաստ խօսքերով ուրախացրեց

նրան: Սուրբ հայրը միառժամանակ մնաց այնտեղ, ապա երանելի հայրապետի նահատակութիւնից յետոյ վերադարձաւ իր անապատը:

Իսկ նենգամիտ Արիոսը, ով բանադրուած էր սուրբ Պետրոս հայրապետի կողմից, մտածում էր բանադրանքի կապանքներից արձակուելու մի հնար գտնել, քանզի վախենում էր, որ եթէ նահատակեն սուրբին, ու ինքը մնայ առանց արձակման, մերժելի կը լինի բոլորի կողմից: Ուստի հայրապետի նահատակութիւնից մէկ օր առաջ բանտ ուղարկեց քահանաներ եւ պատուական նախարար այրեր, որպէսզի սրանց բարեխօսութեամբ սուրբն օրհնի իրեն ու արձակի կապանքից: Խոստանում էր նաեւ ամբողջովին հեռանալ Մելիտոսից, ապաշխարել եւ Եկեղեցու միջից վերացնել պառակտումը: Սակայն այդ նենգամիտն ակնկալում էր սուրբի մահից յետոյ հասնել նախ աւագութեան, իսկ յետոյ՝ հայրապետութեան: Արիոսի գլխաւոր բարեխօսներն էին հայրապետանոցի երէցներ Աքիւղասն ու Ալեքսանդրոսը: Իսկ սուրբ Պետրոսը, վերին յայտնութեամբ իմանալով, որ Արիոսն առաւել մեծամեծ չարիքներ է պատրաստւում անել Եկեղեցում, ամենեւին տեղի չտուեց նրանց խնդրանքներին: Բայց երբ շատ թախանձեցին, սուրբն իշխանաւորներին ճանապարհելուց յետոյ Աքիւղասին եւ Ալեքսանդրոսին առանձին ասաց. «Արիոսի համա՞ր էք դուք խնդրում: Արիոսը նզովուած է թէ՛ այս աշխարհում եւ թէ՛ հանդերձեալում ու հեռացուած Աստուծոյ Որդու փառքից: Իմ այս խօսքերի համար դուք ինձ անգութ եւ անխիղճ մի՛ համարէք, այլ լսէ՛ք ինձ, որպէսզի ճանաչէք Արիոսի գաղտնածածուկ հնարքները: Նա իր բոլոր չարիքների մէջ անյագաբար առաջ է գնում: Իսկ ես ոչ թէ իմ անձով եմ վճռել հեռացնել նրան սուրբ Եկեղեցուց, այլ՝ Տիրոջ պատուէրով, քանզի այս գիշեր իմ աղօթքից յետոյ ես թմրեցի ու մեծ հիացմունքով տեսայ մօտ տասներկու տարեկան, արեգակի պէս լուսազարդ դէմքով մի Մանկան: Նա սպիտակ պատմուճան էր հագել, որը պատռուած էր վերեւից ներքեւ, եւ իր մերկութիւնը ծածկելու համար այն երկու ձեռքերով ամուր պահել էր կրծքի մօտ: Տեսիլքից ես անզգայացայ, թմրեցի, ու լեզուս կպաւ քիմքիս: Երբ ինձ խօսելու զօրութիւն տրուեց, աղաղակեցի եւ ասացի. «Տէ՛ր, ո՞վ պատռեց Քո պատմուճանը»: Նա ինձ ասաց. «Արիո՛սը պատռեց: Իսկ դու զգո՛յշ եղիր, քանզի նա կամենում է բարեխօսներ ուղարկել քեզ մօտ: Մի՛ հաւատա նրան ու մի՛ ընդունիր նրան սուրբ Եկեղեցու հետ հաղորդութեան մէջ: Պատուիրի՛ր նաեւ Աքիւղասին եւ Ալեքսանդրոսին, ովքեր քեզանից յետոյ նստելու են քո Աթոռին, որ նրանք եւս չընդունեն նրան Եկեղեցուց ներս»: Եւ ըստ սոյն յայտնութեան՝ սուրբ հայրապետն իմացաւ նաեւ, որ իր Աթոռի արժանաւոր ժառանգորդներն այս Աքիւղասն ու Ալեքսանդրոսը պիտի լինեն: Ապա սկսեց զրուցել նրանց հետ եւ պատմել, թէ ինքը Քրիստոսի համար որքան հալածանքներ է կրել Պաղեստինում, Փիւնիկէում, Միջագետքում, Ասորիքում ու կղզիներում: Տեղեկացրեց նաեւ իր մօտալուտ նահատակութեան մասին, որը յայտնուել էր իրեն Տիրոջից եւ աստուածուսոյց խօսքերով զօրացնելով՝ ուղարկեց նրանց:

Իսկ արքունի զօրականները, բոլորին ցոյց տալով Մաքսիմիանոսի արձակած հրովարտակը, շտապում էին իրագործել նրա հրամանը՝ սպանել հայրապետին, որը չէր յաջողւում, որովհետեւ ժողովրդի զինուած խմբերն իրենց հայրապետի համար հաւաքուել էին բանտի մօտ ու պահպանում էին մուտքը: Նրանց հետ էին նաեւ շատ մենակեացներ, ովքեր սուրբ Անտոնի հետ իջել էին անապատից՝ խնամարկելու սուրբ հաւատքի համար բանտարկուածներին: Եւ մինչ զինուորները մտածում էին սրով հեռացնել ամբոխին ու դուրս բերել հայրապետին, սուրբն անհանգստացաւ, որ չլինի, թէ իր պատճառով մեծ կռիվ սկսուի քաղաքացիների եւ զինուորների միջեւ,

չլինի մահ ու կոտորած եւ չլինի, որ խափանուի իր մարտիրոսութիւնը: Ուստի Աբիսողոմ սարկաւագին գաղտնի ուղարկեց զօրավարների մօտ, որպէսզի աղաչի նրանց ձեռք չտալ ժողովրդին ու ասի. «Եթէ հայրապետին էք ուզում, գիշերը եկէք բանտի հարաւակողմը, քանդէք պատը, դուրս բերէք նրան եւ տարէք, ուր կը կամենաք»: Եւ այդպէս զինուորները գիշերը նրան հանեցին բանտից: Իսկ ժողովուրդը չիմացաւ էլ, թէ ինչ կատարուեց, որովհետեւ դռան մօտ քուն էին մտել եւ սաստիկ քամու ձայնից չլսեցին, թէ ինչպէս բանտի միւս կողմից քանդեցին պատը:

Ու երբ դուրս բերեցին երանելի հայրապետին, հինգ զինուորներ նրան տարան նահատակութեան վայրը, որը տեղի բնակիչները «Արջառների դաշտ» էին կոչում: Այստեղ էր եղել նաեւ սուրբ Մարկոս աւետարանչի նահատակութիւնը, եւ այդտեղ էին գտնուում նրա անուամբ կառուցուած վկայարանն ու Ալեքսանդրիայի հայրապետների գերեզմանները: Այնժամ սուրբ հայրապետը փոքր-ինչ ժամանակ խնդրեց զինուորներից եւ գնաց Մարկոս աւետարանչի տապանի մօտ: Հազաւ եպիսկոպոսական իր հանդերձները, փարուեց տապանին ու երկար աղօթեց իր հօտի, Եկեղեցու խաղաղութեան եւ առաջիկայ նահատակութեան հանդէսում իր յաջողութեան համար: Ողջունեց նաեւ իրենից առաջ եղող տապաններում ամփոփուած տասնհինգ հայրապետներին:

Երբ բացուեց առաւօտը, սուրբը տեսաւ, որ ահա գալիս են երկու անցորդներ՝ մի ծեր մարդ ու մի պառաւ կին, ովքեր իրենց հետ տանում էին չոր կաշիներ եւ կտաւներ: Սուրբ հայրապետը ձայն տուեց նրանց ու հարցրեց. «Քրիստոնեա՞յ էք»: Պատասխանեցին. «Աստուծոյ կամքով»: Նրանց հարցրեց. «Իսկ ո՞ւր էք գնում»: Պատասխանեցին. «Գնում ենք քաղաք՝ վաճառելու մեր գործերը»: Երբ մօտեցան, նրանք ճանաչեցին լոյսի պէս փայլող եպիսկոպոսապետին: Սուրբն ասաց նրանց. «Աստուա՛ծ ուղարկեց ձեզ, լուսո՛յ որդիներ, մնացէ՛ք ինձ մօտ»: Նրանք ասացին. «Ինչպէս որ կ՚ասես, տէ՛ր»: Ապա երանելին ձայն տուեց զինուորներին եւ ասաց. «Այլեւս մի՛ սպասէք, արդէն օրը բացուել է, կատարէ՛ք ձեր թագաւորի հրամանը»: Զինուորները նրան տարան սուրբ Մարկոսի վկայարանի հարաւային կողմը: Սուրբն այն ծերին ասաց. «Տարածի՛ր կաշիներդ ու կտաւներդ փռի՛ր գետնի վրայ»: Երբ տարածեցին, եկաւ կանգնեց դրանց վրայ, արեւելք նայելով՝ ծնրադրեց երեք անգամ, կնքեց իրեն սուրբ Խաչի նշանով, վրայից հանեց նափորտը մերկացրեց իր պատուական պարանոցը խոնարհեցնելոց Քրիստոսի առաջ եւ ասաց զինուորներին. «Այժմ կատարէ՛ք ձեզ հրամայուածը», ու ձեռքերը տարածելով՝ սկսեց աղօթել Աստծուն: Եւ ահա ձայն եկաւ երկնքից, որ ասում էր. «Պետրոսն է առաքեալների գլուխը եւ Պետրոսը՝ մարտիրոսներից վերջինը: Ե՛կ եւ հանգստացի՛ր քեզ համար պատրաստուած լուսոյ օթեւաններում»:

Իսկ զինուորները, պատկառելով սուրբի սքանչելի խոնարհութիւնից ու հրեշտակային կերպարանքից, չէին համարձակւում սպանել նրան: Նրա գլուխը կտրելու համար սկսեցին միմեանց դահեկաններ առաջարկել, եւ նրանցից մէկը սրի մի հարուածով կտրեց սուրբի գլուխը: Զինուորները, ժողովրդից վախենալով, պատուական մարմինը թողեցին այդ վայրում ու անմիջապէս փախան:

Եւ ահա հրաշք կատարուեց. գլխատուած մարմինը, որն ընկած էր գետնին, իբրեւ կենդանի՝ յենուեց ծնկների վրայ, ապա վեր բարձրանալով՝ ոտքի կանգնեց: Այս տեսնելով՝ ականատես ծերերը շտապ եկան քաղաք ու պատմեցին բոլորին: Լուրը հասաւ բանտի մուտքը պահպանող ժողովրդին: Մեծ բազմութեամբ շտապ եկան հասան նահատակութեան վայրը եւ մեծապէս ողբացին նրա համար. ոմանք

արտասուքներով համբուրում էին սուրբ գլուխը, ոմանք փարւում էին սուրբ մարմնին, ոմանք էլ պատուական արիւնն էին հաւաքում գետնից:

Սուրբի հանգստարանի տեղի համար ժողովրդի մէջ հակառակութիւն ծագեց. ոմանք ուզում էին նրան թաղել սուրբ Մարկոսի տապանի մօտակայքում՝ Ալեքսանդրիայի միւս հովիւների մօտ, իսկ միւսներն էլ ուզում էին թաղել նահատակների շիրիմների մօտ, որոնց տեղը ժամանակի մարտիրոսների համար ինքը՝ հայրապետն էր յատկացրել: Յաղթեց վերջին խորհուրդն ու խօսքը. սուրբին դրեցին նաւի մէջ եւ յետ վարելով դէպի Փառոն կղզի՝ եկան արեւմտեան կողմը: Սակայն սուրբ մարմինը նախ տարան եկեղեցի՝ իր հայրապետական Աթոռ, հագցրին իր եպիսկոպոսական հանդերձներն ու նստեցրին սուրբ Մարկոսի Աթոռին: Երանելի հայրապետն իր հայրապետութեան ողջ ընթացքում երբէք չնստեց իր Աթոռին, որովհետեւ այն միշտ փայլատակող Լոյսի մէջ էր տեսնում: Իսկ երբ կամենում էր քարոզել իր ժողովրդին, բարձրանում էր մի աստիճան եւ նստում Աթոռի պատուանդանի մօտ: Ժողովուրդը ստիպում էր նրան ու աղաղակում. «Նստի՛ր քո Աթոռին, ո՛վ սուրբդ Աստուծոյ», իսկ նա մի կերպ լռեցնում էր նրանց եւ չէր նստում: Սակայն ողջունարանում իր երէցներ Աքիւղասին, Ալեքսանդրոսին ու Եկեղեցու ժառանգաւորներին ասել էր, թէ երբ մօտենում եմ Աթոռին, տեսնում եմ լուսատեսակ Մէկին՝ նստած Աթոռի վրայ, եւ չեմ համարձակւում մօտենալ, այլ սարսափով դողում եմ ու զարհուրելով սասանւում, ինչպէս խռիւը՝ կրակից, բայց միաժամանակ խնդութեամբ եմ լցւում: Սակայն չգիտեմ՝ ի՞նչ ասեմ այս ժողովրդին, որ չգայթակղուեն: Նրանց համար նստում եմ պատուանդանի մօտ, ինչպէս որ տեսել էք, բայց դա էլ եմ յանդգնութիւն համարում: Այսուհետեւ երբ ժողովուրդը ստիպի ինձ, լռեցրէ՛ք նրանց, ու դուք էլ նրանց հետ այլեւս ինձ մի՛ նեղէք»:

Ժողովուրդը փափագում էր սուրբին տեսնել իր Աթոռի վրայ, բայց այդպէս էլ չտեսաւ: Այդ պատճառով վախճանից յետոյ նրա մարմինը, հատուած գլուխը պարանոցի հետ յարմարեցնելով, նստեցրին պատուական Աթոռին: Իսկ նա՝ որպէս թէ կենդանի, հրաշքով տարածեց իր շնորհաբաշխ աջը, խաչակնքեց ժողովրդին եւ ի լուր ամէնքի ասաց. «Տէրը ձեզ հետ լինի»:

Ապա քահանաները, իրենց ուսերի վրայ վերցնելով սուրբ մարմինը, օրհնութեան երգերով, խունկերով, մոմերով ու արմաւենու ոստերով տարան հանգստարան, որն ինքն էր կառուցել եւ պատելով տեսակ-տեսակ անուշ խունկերով՝ մեծ պատուով ամփոփեցին տապանի մէջ:

Սուրբից յետոյ, ըստ իր կանխասացութեան, Աթոռին նստեց նրա աւագերէց Աքիւղասը, իսկ Աքիւղասից յետոյ՝ Ալեքսանդրոսը: Աքիւղասի օրերին աղուէսաբարոյ Արիոսը, նենգօրէն սպրդելով, մուտք գործեց Եկեղեցի ու նրա կողմից քահանայ ձեռնադրուեց, իսկ Ալեքսանդրոսի օրերին, դուրս բերելով իր սրտում մթերուած ընդդէմ Աստուծոյ Բանի չար մոլորութիւնը, ըստ սուրբ Պետրոսի տեսիլքի՝ մեծ ճեղքուածք բացեց Եկեղեցում, որի համար Տիրոջ 325 թուականի Նիկիայի սուրբ ժողովի կողմից ընդունեց իր դատապարտութիւնը: Այդ ժողովում միւս սուրբ հայրապետների հետ միասին յաղթող եղաւ Ալեքսանդրիայի սուրբ Աթանաս սարկաւագը, ով էլ յետոյ, արիոսականների կողմից բազմատեսակ հալածանքներով հանդերձ, նստեց հայրապետական Աթոռին:

Սուրբ Պետրոս հայրապետի եւ մեծայաղթ վկայի նահատակութիւնը եղաւ Նիկիայի ժողովից տասնհինգ տարի առաջ՝ Տիրոջ 310 կամ 311 թուականին, իր հալածանքների իններորդ տարում՝ նոյեմբերի 25-ին: Նա հայրապետութեան Աթոռին նստեց տասներկու տարի, որոնցից երեք տարիներին իր լուսափայլ

վարդապետութեամբ Աթոռը պահեց խաղաղութեան մէջ, իսկ ինը տարիներն անցկացրեց Քրիստոսի համար հալածանքների մէջ՝ թէ՛ նստավայրում եւ թէ՛ դրսում, մինչեւ որ փառաւոր նահատակութեամբ աւարտեց իր կեանքն ու երկրայիններից երկինք փոխադրուեց:

Սուրբ հայրապետը Եկեղեցու շինութեան համար թողել է ոչ քիչ աշխատութիւններ, որոնք հասել են մինչեւ մեր օրերը: Դրանցից են ապաշխարողների համար իմաստալից տասնհինգ կանոնները, ինչպէս նաեւ Քրիստոսի աստուածութեան մասին թղթից հատուածը, Զատկի մասին ճառը, ալեքսանդրացիներին ուղղուած նամակը եւ այլն:

ՍՈՒՐԲ ՎԼԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Որք հաղորդեցան չարչարանաց Քոց Քրիստոս սուրբ հայրապետքն.
եւ վերաբերեալ պայծառացան ընդ անմարմին բազմութիւնսն.
սոցին աղաչանօք խնայեա՛ ի մեզ Աստուած հարցն մերոց:
(Շարակնոց)

Քրիստոսի սքանչելագործ վկայ սուրբ Վլասիոս հայրապետը ծնուել է Գ դարի վերջում Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում կամ էլ նրա սահմանամերձ շրջաններում: Ոմանք ասում են, թէ նրա ծնողները հեթանոսներ էին, ինքը յետագայում է հաւատացել Քրիստոսին ու ջերմեռանդ եղել աստուածպաշտութեան մէջ, իսկ շատերն էլ անորոշաբար ասում են, թէ նա մանկուց մեծացել է աստուածպաշտութեամբ: Ասում են նաեւ, թէ նախկինում նա մասնագիտութեամբ բժիշկ է եղել, իսկ յետոյ Աստուած նրան Քրիստոսի անուամբ հրաշագործ է դարձրել, ինչպէս սուրբ Ղուկասին, Կոզմային եւ Դամիանոսին:

Նա առաջադէմ գտնուեց իր առաքինի ու գովելի ընթացքով: Իր կեանքի բոլոր օրերն ապրեց ինչպէս երկնաքաղաքացի եւ Յորի նմանութեամբ եղաւ արդար այր, ճշմարիտ աստուածապաշտ ու հեռու բոլոր չար գործերից: Այդ պատճառով Սեբաստիայի եպիսկոպոսի մահից յետոյ Եկեղեցու միաբանութիւնը եւ ողջ ժողովուրդը, ճանաչելով նրա անբիծ վարքագիծն ու իմաստութիւնը, միաձայն հաւանութեամբ որոշեցին եպիսկոպոս ընտրել երանելի Վլասիոսին: Նա յանձն չառաւ եւ իրեն անարժան խոստովանեց այդ պատուին, սակայն տեսնելով բնակչութեան անտերունչ վիճակը ու բազմութեան պահանջը համարելով որպէս Աստուծոյ տնօրինութիւն՝ ակամայ հնազանդուեց եւ տեղի տուեց նրանց կամքին: Եւ այդպէս հաւաքուեցին բոլոր եպիսկոպոսները, քահանաներն ու Եկեղեցու ժառանգաւորները եւ նրան նստեցրին Սեբաստիա քաղաքի քահանայապետութեան Աթոռին:

Ապա տիրապէս սկսեց խօսքերով եւ գործով հնչեցնել Ճշմարտութիւնը, սուրբ Աւետարանի Կեանքի խօսքերով լուսաւորել բոլորին ու շատերին կռապաշտութեան

մոլորութիւնից դարձնել դէպի ճշմարիտ աստուածգիտութիւնը: Եւ ինչպէս որ նախքան եպիսկոպոսութիւնը զօրացնում էր Դիոկղետիանոսի կողմից հալածուող քաջ նահատակներին ու բոլորին յորդորում հաստատուն մնալ ճշմարիտ հաւատի մէջ, նոյնը եւ աւելին անում էր եպիսկոպոսութիւնից յետոյ: Ըստ աւանդութեան՝ երբ Եւստրաթէոսեան հինգ քաջ նահատակները Քրիստոսի անուան համար մատնուեցին բանտերի եւ կապանքների, ինքը՝ երանելի Վլասիոս սուրբ հայրապետը, սկսեց յաճախ այցելել նրանց, բաշխել Տիրոջ Մարմնի ու Արեան կենարար Խորհուրդը եւ քաջալերել ու յորդորել Արարչի սիրոյ համար աներկիւղ յարատեւել բոլոր նեղութիւնների մէջ: Այդ ժամանակ սուրբ Եւստրաթէոսը գրութեամբ նրան է յանձնում իր տան գործերի կտակը, որը կարելի է տեսնել հին նկարերում, ուր հինգ վկաների հետ սուրբ Եւստրաթէոսի կողքին պատկերուած է սուրբ Վլասիոսը, ով նրա ձեռքից վերցնում է կտակի թուղթը:

Թւում էր, թէ Կոստանդիանոսի թագաւորելու ժամանակ արդէն մարում էր հալածանքների հրդեհը, սակայն վերստին հուր բորբոքուեց անօրէն Լիկիանոսի երեսից, ով Կոստանդիանոսի քրոջորդին էր: Սա Տիրոջ 308 թուականին Արեւելքում կայսր դարձաւ: Մի այր էր՝ մոլորուած կռապաշտութեան մէջ, որի համար քրիստոնեաների դէմ սոսկալի հալածանքներ սկսեց: Եւ քանի որ լսել էր, թէ Սեբաստիայի կողմերում ծաղկում է աստուածպաշտութիւնը, իսկ Փոքր Հայքում ու Կապադովկիայում օրէցօր մեծ թիւ են կազմում հաւատացեալները, որոշեց այդ շրջաններից իսպառ վերացնել քրիստոնէութեան անունը: Այս անօրէն գործն իրականացնելու համար ընտրեց ազգութեամբ յոյն, չարիքներ գործելուց հիւծուած, անսանձ եւ յանդուգն Ագրիկողայոսին, ում դատաւոր ու իշխան կարգեց Սեբաստիայում եւ նրա մերձակայքում ու նրան օգնական տուեց ոմն Լիւսիաս անունով դիւակերպ մէկին՝ որպէս այդ տարածքի վերակացու եւ տեսուչ:

Երբ Սեբաստիայի հաւատացեալները լսեցին Ագրիկողայոսի՝ ահազդու սպառնալիքներով գալստեան մասին, նրանցից շատերը ցրուեցին, շատերն էլ թաքնուեցին անյայտ վայրերում: Նրանց հետ երանելի Վլասիոս եպիսկոպոսը եւս հաւատացեալների ստիպելով որոշեց միառժամանակ ծածկուած մնալ: Եւ յիշելով աւետարանական «քաղաքից քաղաք հալածուած լինել» խօսքը եւ յատկապէս ունենալով Փրկչի՝ Եփրայիմի անապատ խոյս տալու օրինակը՝ ելաւ Սեբաստիայից ու գնաց բնակուելու Արգիասէս լեռան վրայ գտնուող մի այրում, ուր չէր երեւում որեւէ մարդու հետք, այլ տարածքում շրջում էին միայն գազաններ եւ անասուններ: Այնտեղ առանձնութեան մէջ սկսեց հանդարտել ու խստակրօնութեամբ տրուել աղօթքների, յարատեւ պահեցողութեան եւ տքնութիւնների: Վայրի անասունները, ընտելանալով նրան, հաւաքւում էին նրա մօտ ու ասես թէ օրհնութիւն խնդրում Աստուծոյ ծառայից, իսկ սուրբը, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնում էր նրանց: Երբ նրանցից մէկը տկարանում էր, գալիս էր սուրբի մօտ եւ ինչպէս բանական մէկը՝ նշանացի հասկացնելով ցոյց էր տալիս իր ցաւող տեղն ու չէր հեռանում այդտեղից, մինչեւ չէր շարժում երանելու գութը՝ իրեն ողորմութիւն անելու համար: Սուրբն էլ իր ձեռքը դնում էր նրա վրայ եւ Քրիստոսի անուամբ առողջացնում նրան:

Այդ օրերին Ագրիկողայոսի սպասաւորներից ոմանք դուրս եկան որսի: Այս ու այն կողմ շրջելով՝ նրանցից մի քանիսը հասան այն լեռանը, ուր թաքնուած էր Վլասիոսը, եւ տեսնելով նրա այրի առջեւ հաւաքուած վայրի գազաններին՝ ընկան նրանց յետեւից: Երբ որսորդների ահից կենդանիները ցրուեցին, նրանք տեսան սուրբ եպիսկոպոսին աղօթելիս: Քաղաք դառնալուն պէս այս մասին տեղեկացրին դատաւորին, ով հրաման տուեց, որ իբր որս անելու նպատակով որսորդների հետ

որոնողներ գնան դէպի լեռներն ու ամայի վայրերը եւ որտեղ թաքնուած քրիստոնեաներ գտնեն, բերեն իր մօտ:

Որոնողները եկան ու գտան Վլասիոսին աղօթելիս: Նրան ասացին. «Պատրաստուի՛ր գալ մեզ հետ, դատաւորը կանչում է քեզ»: Սուրբն ուրախանալով, զուարթ սրտով եւ հեզութեամբ պատասխանեց. «Հիմա, որդեակնե՛ր, անյապաղ գնանք միասին, քանզի այս գիշեր Տէրը երեք անգամ երեւաց ինձ ու ասաց. «Վե՛ր կաց եւ պատարագ մատուցիր Ինձ՝ ըստ քո քահանայապետութեան կարգի»:

Նրանք ճանապարհ ընկան ու երբ տեղ-տեղ հանգստանում էին, երանելի հայրապետը հոգելից վարդապետութեամբ խօսում էր հեթանոսնե՝ թէ՛ մեծերի եւ թէ՛ փոքրերի հետ: Նա լուսաւորեց շատերի միտքը, ցոյց տուեց ճշմարիտ աստուածպաշտութեան ճանապարհն ու տեսակ-տեսակ հրաշագործութիւններով հաստատեց նրանց հաւատի մէջ: Այդպէս նրա համբաւը տարածուեց բոլոր այն վայրերում, որտեղով անցնում էր: Աւաններից եւ գիւղերից նրա մօտ էին բերում շատ հիւանդներ ու ցաւագարներ, իսկ նա, ձեռքը դնելով նրանց վրայ, առողջացած արձակում էր իրենց տները: Ոչ միայն մարդկանց, այլեւ անասուններին էր բժշկում, որից յոյժ զարմանում էին դատաւորի սպասաւորները եւ սկսում ակնածել նրանից:

Մի կին մինուճար որդի ունէր: Պատահեց, որ այդ մանուկը ձուկ ուտելիս կուլ տուեց փուշը, որը, կանգ առնելով շնչափողում, խեղդեց երեխային, ու նա չէր կարողանում խօսել: Իսկ մանկան մայրը, լսած լինելով սուրբի մասին, գիրկն առաւ որդուն եւ շտապեց գտնել Աստուծոյ մարդուն: Մօտեցաւ նրան, մանկանը դրեց նրա ոտքերի առջեւ, աղաղակեց արտասուքներով ու ասաց. «Ողորմի՛ր իմ որդուն, Յիսուս Քրիստոսի ծառա՛յ, քանզի նա իմ մինուճար զաւակն է»: Այնժամ սուրբն իր ձեռքը դրեց մանկան շնչափողին, աչքերը երկինք բարձրացրեց եւ ասաց. «Տէ՛ր, Դու, որ Բժիշկ ես նրանց համար, ովքեր ճշմարտապէս կանչում են Քեզ, լսի՛ր Քո ծառայի աղաչանքները ու Քո անտեսանելի զօրութեամբ այս երեխայից հեռացրու վնասակար փուշը: Եւ սրանից յետոյ եթէ որեւէ մէկի հետ նման բան լինի ու յիշատակի Քո ծառայի անունը, յանուն Քո մեծ անուան փառքի՝ բժշկութիւն պարգեւիր նրան»: Երբ վերջացրեց աղօթքը, սուրբն առողջացած մանկանը յանձնեց մօրը:

Երբ մտաւ մի այլ գիւղ, որն ըստ ոմանց կոչում են Նիկոպոլիս, սուրբ Վլասին մօտեցաւ մի աղքատ եւ այրի կին, ով ոչինչ չունէր, բացի մի փոքր խոզից, որին պահ առաջ յափշտակել էր գայլը: Նա արտասուքներով աղաչում էր եպիսկոպոսին՝ փրկել անասունին գայլի երախից, իսկ սուրբը ժպտալով ասաց նրան. «Մի՛ տրտմիր, ո՛վ կին, քո անասունը քեզ կը հասնի», ու այս ասելով՝ սաստեց գազանին, որը չէր երեւում աչքի առաջ: Երբ կինը շրջուեց, տեսաւ, որ գայլն իրեն ընդառաջ է գալիս՝ անվնաս բերելով իր անասունին, որին թողեց կնոջ մօտ եւ հեռացաւ իր տեղը:

Արդ, երբ սուրբ Վլասիոսը մտաւ Սեբաստիա, Ագրիկողայոսը հրամայեց բանտարկել նրան ու յաջորդ օրն ատեան նստելով՝ հրամայեց իր առջեւ բերել եպիսկոպոսին: Դատաւորը նախ սկսեց մեղմօրէն խօսել նրա հետ եւ ասել. «Տեսնում եմ քեզ ողջ ու առողջ, աստուածների բարեկամ Վլա՛սիոս, ուրա՛խ եղիր»: Երանելին պատասխանեց. «Ուրա՛խ եղիր եւ դու, հզ՛օր դատաւոր, սակայն դու նրանց աստուածներ մի՛ կոչիր, որովհետեւ նրանք դեւեր են եւ ո՛չ աստուածներ, որոնք իրենց պաշտօնեաներով հանդերձ պիտի մատնուեն յաւիտենական հրին»: Դատաւորը, բարկանալով նրա համարձակ խօսքերից, հրամայեց դալար ճիպոտներով հարուածել նրան, որպէսզի սթափուի իր անմտութիւնից ու սովորի անարգելու փոխարէն մեծարել աստուածներին: Երկար ժամեր բաւական

գանահարուելուց յետոյ սուրբն առաւել համարձակ ասաց բռնաւորին. «Ո՛վ լիրբ եւ անպատկառ կուռքերի պաշտօնեայ, եթէ կարծում ես, թէ տանջանքների մատնելով կարող ես ինձ յետ դարձնել ճշմարիտ Աստծուն դաւանելուց, չես կարող, որովհետեւ ես հաւատում եմ Յիսուս Քրիստոսին, կենդանի Աստուծոյ Որդուն, Ով ինձ զօրութիւն է տալիս»: Այնժամ դատաւորը հրամայեց նրան բանտ նետել:

Երեք օր անց, երբ դատաւորը դարձեալ ատեան նստեց, իր առջեւ բերել տուեց Աստուծոյ սուրբին եւ ասաց. «Վլասիէ՛, եթէ չզոհես աստուածներին, կը կորչե՛ս չարաչար մահուամբ»: Վլասիոսը պատասխանեց. «Թող կորչե՛ն քո աստուածները, որոնք չեն արարել երկինքն ու երկիրը, իսկ մահը, որով ինձ սպառնում ես, ինձ առիթ կը լինի մտնել յաւիտենական Կեանք»: Բռնաւորը, տեսնելով նրա անսասան հաւատը, հրամայեց երանելուն կախել փայտից եւ երկաթէ քերիչներով անխնայ քերել նրա մարմինը: Գետի պէս սկսեցին հոսել նրա արեան վտակները ու ներկել գետինը, սակայն նա իր տանջանքերի մէջ նոյն խօսքերն էր կրկնում եւ ասում դատաւորին. «Դու հարուածներ ես հասցնում ինձ, սակայն ինձ հետ է իմ Զօրացուցիչը՝ Քրիստոս: Ես յուսալով սպասում եմ անանց Բարիքներին, որոնք Նա պատրաստել է Իր սիրելիների համար»:

Դատաւորը հրամայեց իջեցնել նրան փայտից ու տանել բանտ: Եւ մինչ տանում էին սուրբին, ով ոտքից մինչեւ գլուխ շաղախուած էր արեամբ, Աստծուց երկիւղած եօթ կանայք գնում էին նրա յետեւից ու իրենց օծում սուրբից հեղուած արեամբ: Այս տեսնելով՝ դահիճները նրանց բերեցին դատաւորի առջեւ եւ ասացին. «Ո՛վ դատաւոր, ահա սրանք եւս քրիստոնեաներ են», ու պատմեցին, ինչ որ նրանք արել էին: Դատաւորն ասաց նրանց. «Հնազանդուէ՛ք աստուածներին եւ նրանց զոհեր մատուցէ՛ք»: Կանայք խաբէութեամբ ասացին. «Եթէ կամենում ես, որ զոհենք քո աստուածներին, հրամայիր նրանց բերել ծովափ, որպէսզի այնտեղ լուանալով մեր երեսները՝ պատրաստ լինենք կատարելու քո հրամանը»: Յոյժ ուրախացաւ բռնաւորը ու կարծեց, թէ նրանք կը խոստանան կատարել իր կամքը: Իսկ կանայք, վերցնելով գարշելի կուռքերին, նետեցին ծովը:

Երբ այս լուրը հասաւ բռնաւորին, նա այնքան բարկացաւ, որ սրտմտութիւնից փոխեց երեսի գոյնը: Կրճտացրեց իր ատամները եւ մեղքը զցելով զինուորների վրայ՝ ասաց. «Ինչո՞ւ նրանց թոյլ տուեցիք աստուածներին ծովը նետել»: Զինուորները պատասխանեցին. «Ինչպէս որ քեզ հետ խօսեցին նենգութեամբ, նոյն պատրանքներով մեզ մոլորեցրին, քանզի մինչ կարծում էինք, թէ նրանք մօտենում են, որ սիրով երկրպագեն, սակայն վերցնելով կուռքերին՝ խորտակեցին ծովում»:

Երանելի կանանց բերեցին բարկացած դատաւորի առջեւ, եւ երբ սաստիկ նախատուեցին իրենց արարքի համար, նրանք ասացին. «Այն աստուածը, որը պահպանութեան համար գտնւում է զօրականների հսկողութեան տակ, նա աստուած չէ, քանզի Աստուած անվնասելի է ու անչարչարելի: Իսկ նրանք, որոնց դուք աստուածներ էք կոչում, մարդկանց ձեռքի գործեր են՝ քանդակուած փայտից, ոսկուց, քարից, պղնձից, զուրկ մտքից ու զօրութիւնից եւ նման նրանց, ովքեր արարեցին իրենց: Եւ արդ, տեսէ՛ք ձեր աստուածների անզօրութիւնը, արդեօք կարո՞ղ են նրանք ելնել ծովի խորքերից»:

Դատաւորը մոլեգնելով հրամայեց կապար հալեցնել ու լցնել մեծ կաթսայի մէջ: Կաթսայի մի կողմում հրամայեց դնել սուսեր, երկաթէ ճանկեր եւ տանջանքի այլ գործիքներ, իսկ միւս կողմում՝ փափուկ կտաւներ, կանացի զարդեր, ոսկեղէն ու արծաթեղէն: Ապա ասաց կանանց. «Ձեզ համար ընտրէ՛ք այս երկուսից մէկը. կա՛մ երկրպագէք աստուածներին եւ փրկէք ձեր անձերը՝ այսպիսի փափուկ կտաւներով

ու զարդեղէնով, կա՛մ էլ այժմ պիտի այրուէք՝ նախապէս ընդունելով ձեզ համար պատրաստուած այս տանջանքներով խոշտանգումները»: Սուրբ կանայք ընտրեցին տանջանքները, նրանցից մէկն էլ թքեց զարդեղէնի վրայ, իսկ կտաւները գցեց հնոցի հրի մէջ: Սրա երկու երեխաները եկել էին իրենց մօր յետեւից եւ տեսնելով տանջանքներով նահատակութեան պատրաստուող իրենց մօրը՝ սկսեցին աղաչել ու ասել նրան. «Մեզ էլ վերցրու քեզ հետ եւ մի՛ թող, որ կորչենք այստեղ: Եւ ինչպէս որ սնեցիր եւ յազեցրիր մեզ քո քաղցր կաթով, այժմ էլ յազեցրու մեզ Աստուծոյ Արքայութեամբ»:

Այս լսելով՝ դատաւորը, սաստիկ բարկացաւ եւ հրամայեց տղաներին հեռացնել մօրից: Հրամայեց նրանց բանտ տանել, ուր գտնւում էր Վլասիոսը, իսկ դահիճներին հրամայեց կանանց շտապ կախաղան հանել ու քերել մարմինները: Եւ հրաշք եղաւ. նրանց մարմինները դարձան ձիւնից առաւել սպիտակ ու նրանցից սաստիկ լոյս փայլատակեց, որը կուրացրեց նրանց նայող զինուորների աչքերը: Անգամ նրանց արիւնն էր երեւում սպիտակ կաթի նման: Այնժամ երկնքից մի հրեշտակ իջաւ, բժշկեց նրանց բոլոր վէրքերը եւ ասաց. «Մի՛ երկնչէք, քանզի երբ բարի մշակն սկսում է հնձել, ոչ թէ սկզբից է առնում վարձքը, այլ երբ կատարում է իր գործը՝ ըստ տիրոջ կամքի, ով իրեն կանչեց հունձ անելու: Այնժամ լի օրհնութեամբ ստանում է իր ամբողջ վարձքը եւ ուրախութեամբ գնում իր տուն: Այսպէս եւ դուք, որ սկսեցիք քաջութեամբ, համբերէ՛ք մինչեւ մրցութեան վերջը, որպէսզի ամէնքի Փրկչից ընդունէք յաւիտենական Կեանքը»:

Ապա դատաւորը հրամայեց երանելի կանանց գցել բորբոքուած հնոցի մէջ, սակայն մտնելուն պէս անմիջապէս հուրը մարեց, եւ նրանք անվնաս դուրս եկան հնոցից: Այս բանից յիմարացած դատաւորն ասաց. «Թողէ՛ք ձեր այդ կախարդութիւնը եւ մօտեցէ՛ք զոհելու աստուածներին»: Իսկ սուրբ կանայք միաբան ասացին. «Փա՛ռք Քեզ, ո՛վ մեր Թագաւոր՝ Յիսո՛ւս Քրիստոս, որ հրաւիրեցիր մեզ գալ Քո Արքայութեան ճանապարհով»: Ապա դառնալով դատաւորին՝ ասացին. «Շտապի՛ր կատարել, ինչ որ մտադիր ես, քանզի մենք երկնքի Արքայութեան հրաւէրն ունենք»: Այնժամ բռնաւորը զայրանալով հրամայեց սրով վերջ տալ նրանց:

Դահիճները նրանց տարան նահատակութեան վայրը: Սուրբերը խնդրեցին նրանց թոյլ տալ փոքր-ինչ աղօթել: Ապա ծունկի իջան ու ասացին. «Ո՞վ է նման մեր Տէր Աստծուն, Ով դուրս բերեց մեզ խաւարից եւ կանչեց Իր փառքի լոյսի մէջ: Աղաչում ենք Քեզ, ո՛վ Աստուա՛ծ, համադասիր մեզ Քո առաջին վկայ սուրբ Թեկղիի հետ ու ընդունի՛ր Քո սուրբ քահանայապետի եւ վկայի՝ Վլասի աղօթքները, ով առաջնորդեց մեզ դէպի այս նահատակութիւնը»: Ու դարձեալ տարածելով իրենց ձեռքերը՝ աչքերը երկինք բարձրացրին եւ ասացին. «Փա՛ռք Քեզ, ո՛վ մեր Քրիստոս Աստուած, որ մեզ արժանացրիր կանգնել զոհասեղանին՝ իբրեւ մորթուելու տարուող ոչխարներ: Եւ արդ, Քո սուրբ Սեղանի վրայ ընդունիր մեր հոգիները՝ իբրեւ պատարագ»: Եւ դեռ խօսքը չաւարտած՝ դահիճները սրով կտրեցին երանելիների գլուխները, ովքեր յօժարակամ մատնեցին իրենց անձերը Քրիստոսի սիրոյ եւ ունեցած յոյսի համար:

Իսկ դատաւորն օրուայ երրորդ ժամին նստեց ատեան ու հրամայեց բանտից Վլասին իր առջեւ բերել: Երբ Վլասը կանգնեց ատեանի առջեւ, դատաւորն սկսեց խօսել նրա հետ եւ ասել. «Վլասիէ՛, այժմ կը զոհե՞ս կուռքերին»: Սուրբը պատասխանեց. «Ո՞վ է այն մարդը, ով Աստծուն որպէս ճշմարիտ Արարիչ ճանաչելուց յետոյ, կ՚երկրպագի անշունչ կուռքերին: Դու, որ խարխափում ես խաւարում, երկրպագում ես քարերին ու փայտին, իսկ ես՝ երկնքի եւ երկրի Արարչին: Եւ այս էլ

իմացիր, ես չեմ վախենում քո սպառնալիքներից, տանջի՛ր ինձ, ինչպէս կամենում ես, որովհետեւ դու միայն մարմինս կարող ես տանջել, իսկ հոգուս վրայ իշխանութիւն ունի միայն Արարիչը»: Դատաւորն ասաց. «Ա՛յ թշուառական, եթէ քեզ գցեմ ծովի խորքերը, քեզ ինչպէ՞ս կը փրկի Նա, Ում դու երկրպագում եւ պաշտում ես»: Հայհոյիչի այս արհամարհական խօսքերից սուրբ եպիսկոպոսը, վառուելով աստուածային նախանձախնդրութեամբ, պատասխանեց խստագոյն խօսքերով ու ասաց. «Ո՛վ անմիտ, եթէ դու կարծում ես, թէ երկրպագելով գարշելի կուռքերին՝ կարող ես փրկուել, ապա վա՛յ քեզ, երի՛ցս թշուառական եւ արիւնարբու գազան, դու յաւիտենական հուրն ես ժառանգելու: Իսկ այժմ ջրերի վրայ ես քեզ ցոյց կը տամ իմ Տիրոջ զօրութիւնը, Ում պաշտում եմ»: Այնժամ իշխանը հրամայեց նրա պարանոցից քար կապել ու ընկղմել ծովի մէջ (որը Սեբաստիայի լիճն է): Նա, առաջ գնալով, Խաչի նշանով կնքեց ջուրը, եւ ահա այն փոխեց իր լոյծ բնութիւնը, կարծրացաւ, եւ սուրբը քայլեց ծովի՝ ինչպէս ցամաքի վրայով: Ապա դառնալով դահիճներին եւ հեթանոսների բազմութեանը՝ ասաց. «Եթէ դուք աստուածներ ունէք, ապա եկէք այստեղ ու ցոյց տուէք նրանց զօրութիւնը»: Այս խօսքերի վրայ նրանք համարձակ մտան ծովը, սակայն վաթսունութ մարդ ընկղմուեց ծովի խորքերում: Այնժամ Աստուծոյ հրեշտակն իջաւ սուրբի մօտ եւ ասաց. «Ուրա՛խ եղիր, Աստուծո՛յ քահանայապետ, ելի՛ր այս երկրից, ե՛կ եւ ընդունի՛ր Աստծուց քեզ համար պատրաստուած պսակը»: Սուրբը, քայլելով ծովի վրայով, դուրս եկաւ ցամաք, եւ ողջ ժողովուրդը տեսաւ, որ լոյս էր ճառագում նրա երեսից, ու սքանչելի տեսք ունէր: Բայց բռնաւոր Ագրիկողայոսը, սուրբի բոլոր գործերը կախարդութիւն համարելով, ասաց նրան. «Ինչո՞ւ ես այդքան յամառում: Մեռնելն աստուածներին զոհաբերելուց լա՞ւ ես համարում»: Սուրբն ասաց. «Իմացի՛ր, ո՛վ դատաւոր, որ ես Սուրբ Աստուծոյ ծառան եմ եւ գարշելի կուռքերին չեմ զոհի»: Դատաւորը բարկացաւ ու անմիջապէս գլխատման այսպիսի մահավճիռ արձակեց. «Վլասիոսը, ով արհամարհեց ինքնակալ թագաւորի հրամանը եւ անարգեց աստուածներին, մահապարտ է: Հրամայում եմ սրով կտրել նրա գլուխը եւ այս վճիռը տարածել նաեւ այն երկու մանուկների վրայ, ովքեր մոլորուեցին՝ հետեւելով նրա մոգութեանը»:

Նրանց տարան նահատակութեան վայրը: Մինչ դահիճը պատրաստում էր իր սուրը, սուրբ հայրապետն սկսեց աղօթել՝ ասելով. «Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր Աստուած իմ, Դու փրկեցիր ինձ կռապաշտութիւնից ու բերեցիր խաւարից դէպի լոյս, անգիտութիւնից դէպի ճշմարիտ գիտութեան: Զօրութիւնների Տէր, որ նստում ես քերովբէների վրայ եւ բացում երկնքի սահանքները, որ ձգեցիր Քո աղեղը ամպերի մէջ, պարտութեան մատնեցիր սատանային ու ոչնչացրիր վիշապի զօրութիւնը, լսի՛ր ծառայիդ աղաչանքները եւ օգնութեան հասիր Քո հաւատացեալների հոգու ու մարմնի բոլոր կարիքներին: Եւ եթէ մէկը պատահմամբ կուլ տայ փուշ կամ ոսկոր կամ նման ինչ-որ նեղութեան հանդիպի, ու եթէ Քո աստուածութեան առջեւ կանչեն իմ անունը, կատարի՛ր նրանց իւրաքանչիւր խնդրանքը»:

Աղօթելուց յետոյ երկնքից ամպ իջաւ եւ ծածկեց նրան: Ամպի միջից Փրկիչը խօսեց նրա հետ ու ասաց. «Իմ քա՛ջ նահատակ, կը կատարե՛մ քո բոլոր խնդրանքները եւ աւելին կ՚անեմ: Յանուն Ինձ քո բարի նահատակութեան՝ կ՚օրհնեմ բոլոր նրանց տները, ովքեր կը կատարեն քո յիշատակը, ու նրանց շտեմարանները բարիքներով կը լցնեմ: Իսկ դու ե՛կ եւ հանգստացի՛ր անճառելի փառքի մէջ, որ քեզ համար պատրաստեցիր քո ճգնութիւններով»: Այս ասելով՝ Փրկիչը երկինք վերացաւ:

Իսկ դահիճները քաղաքից դուրս՝ պարիսպների մօտ, գլխատեցին սուրբ Վլասիոսին ու երկու մանուկներին: Եւ մի բարեպաշտ կին, ում անունը Եղիսեա էր,

վերցրեց նրանց նշխարներն ու ամփոփեց նրանց նահատակութեան վայրում: Այդ տեղը նշանաւոր դարձաւ՝ սուրբ Վլասի բարեխօսութեամբ կատարուած բազում հրաշքների եւ բժշկութիւնների պատճառով: Նրա նահատակութիւնը եղաւ Լիկիանոսի թագաւորութեան օրօք՝ Տիրոջ 315 թուականի փետրուարի 10-ին կամ 11-ին:

Սուրբի անունը փառաւորուեց ողջ աշխարհի բոլոր քրիստոնէական եկեղեցիներում: Բոլոր տեղերում նրա անուամբ կառուցուեցին շատ եկեղեցիներ՝ նախ Սեբաստիայում, ապա Ասիայի այլ քաղաքներում:

ՀԱՅՐԵՐԻ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ԱՆՏՕՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՐՔԸ

Որ գերազանցեալ գտար առաւել քան
զբնութիւն մարդկան երանելիդ ի հարս սուրբ Անտօն.
առ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:
Որ անճաշակ լինելով զբազմաժամանակեայ
աւուրքք յօժարութեամբ բարձեր զկարիս մարմնոյ.
առ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:
Անմոռաց յիշմամբ առաջի Քրիստոսի
օգնական լեր տօնողացս զյիշատակս քո.
զի եւ զմերս ընկալցի զօրհնաբանութիւն:
(Շարակնոց)

Անապատականների նախահայր եւ մեր սուրբ հայր Անտօնը՝ մենակեացների երանաշնորհ առաջնորդն ու ճգնաւորների պարագլուխը, անապատի զարդը եւ կրօնաւորութեան հայելին, ազգութեամբ ղպտի էր, երեւելի ազգից, հարուստ եւ բարեպաշտ ծնողների զաւակ: Ծնուել է Տիրոջ 250 թուականին՝ Եգիպտոսի սահմաններում գտնուող Հերակլիտէս նահանգի Հերակլիա փոքր քաղաքի մօտ գտնուող Կոմա աւանում:

Մանկուց Անտօնն առանձնասէր էր եւ աղօթասէր, տնակեաց ու պաճուճանքներ չսիրող: Նա խուսանաւում էր մանկական զուարճութիւններից եւ իր աստուածասէր ծնողների հետ մշտապէս եկեղեցի յաճախում: Ունէր հեզ բնաւորութիւն եւ ամէն բանում հնազանդ էր իր ծնողներին: Որպէս տան ժառանգ՝ հոգս չէր պատճառում նրանց՝ ոչ սննդի եւ ոչ էլ լաւ հանդերձների համար: Ուսում չէր ստացել, բայց մեծ փափագով ունկնդրում էր Սուրբ Գրքի ընթերցուածքները, որոնցից ստացած օգուտներն ուշիմութեամբ եւ առաքինասէր ջանասիրութեամբ ամբարում էր իր հոգում:

Երբ վախճանուեցին ծնողները, նա տասնութ տարեկան էր: Փոքր քրոջ հետ մնաց մենակ եւ դարձաւ ողջ տան ու քրոջ հոգաբարձուն: Մի անգամ՝ ծնողների մահից վեց ամիս անց, երբ, ըստ իր սովորութեան, եկեղեցի էր գնում, խորհում էր սուրբ

առաքեալների մասին, թէ ինչպէս նրանք, թողնելով ամէն ինչ, գնացին Քրիստոսի յետեւից: Խորհում էր նաեւ նրանց մասին, ովքեր, վաճառելով իրենց ունեցուածքը, դրամը տալիս էին առաքեալներին՝ աղքատներին բաշխելու համար, յուսալով մեծամեծ վարձք եւ երկնաւոր գանձեր ստանալ: Եւ մինչ այս մտորումների մէջ էր, եկեղեցում լսեց սուրբ Աւետարանի՝ օրուայ ընթերցուածքը, որն ասում էր. *«Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին ու երկնքում գանձեր կունենաս. եւ դու արի՛ Իմ յետեւից» [Մատթ. ԺԹ 21]:* Անտոնը, ընդունելով, որ այս խօսքերը հէնց իր համար էին, շտապ դուրս եկաւ տէրունական տնից ու սկսեց թօթափուել իր ողջ ունեցուածքից, որ ժառանգել էր ծնողներից: Ունէր երեք հարիւր բերրի հողատարածքներ, որոնք տուեց իր գիւղի կարիքաւորներին: Վաճառեց տան կարասին, զարդեղէնը եւ հաւաքելով շատ ոսկի ու արծաթ, փոքր-ինչ քրոջը թողնելով՝ մնացածը բաշխեց կարիքաւորներին: Իսկ երբ միւս անգամ մտաւ եկեղեցի եւ լսեց Աւետարանի այն խօսքը, թէ՝ *«Մի՛ հոգացէք վաղուայ համար»,* առանց յապաղելու մնացածը եւս բաշխեց աղքատներին, իսկ քրոջը յանձնեց վստահելի սուրբ կոյսերին, որպէսզի վաղ հասակից նրանցից սրբութիւն ու պարկեշտութիւն սովորի: Ապա իսպառ ազատուելով աշխարհի հոգսերից՝ իր համար աւանից դուրս բնակութեան մի վայր ընտրեց եւ սկսեց կրօնաւորական կարգով ու ժուժկալութեամբ ճնշել մարմինը եւ բարեպաշտութեամբ կրթել իր անձը:

Անտոնն աշխարհից ելաւ Տիրոջ 269 կամ 270 թուականին, երբ տասնինը կամ քսան տարեկան էր: Այդ ժամանակ Եգիպտոսի սահմաններում չկային վանքեր, ու մենակեացներից ոչ ոք չգիտէր հեռաւոր անապատների մասին, իսկ ով կամենում էր կրօնաւորել, առանձնանում էր իր գիւղից ոչ հեռու մի վայրում եւ ապրում ժուժկալութեամբ: Նրանցից մէկն էր խստակրօն մի ծեր, ով մանկութիւնից սկսած մենակեցութեամբ կրօնաւորում էր Կոմա աւանի մօտակայքում: Նրան տեսնելով՝ Անտոնը համակուեց բարի նախանձով ու ըստ նրա օրինակի՝ առանձնացաւ գիւղից փոքր-ինչ հեռու մի վայրում՝ յաճախակի այցելելով այդ ծերին եւ այդտեղ հանդարտող այլ եղբայրների:

Երբ լսում էր, որ մէկը ջանասիրութեամբ առաջադիմել է առաքինութիւնների մէջ, իբրեւ մի իմաստուն մեղու՝ գնում էր նրան փնտրելու ու չէր վերադառնում, մինչեւ չսովորէր նրա կենցաղավարութիւնը եւ չքաղէր նրա կատարելութեան ծաղիկներից: Այդպէս բոլորի քրիստոնէական բարեպաշտութիւններն իր մէջ ժողովելով՝ օրըստօրէ ծաղկում էր բարի գործերով: Առաջադիմելով՝ խոնարհաբար իր անձը բոլորից ցածր էր դասում, ամէնքի հետ վարւում էր սիրով եւ ուրախութեամբ, որի համար սիրելի էր բոլորին: Ոմանք նրան սիրում էին որպէս որդու, ոմանք՝ որպէս եղբօր եւ կոչում աստուածասէր կամ Աստուծոյ սիրելի:

Իսկ բարիատեաց բանսարկուն չհամբերեց նրա առաջադիմութեանը եւ սկիզբ դրեց նոր փորձութիւնների. նախ յիշեցնում էր քրոջը՝ գութ զցելով նրա հանդէպ, յիշեցնում էր ազգատոհմը, ունեցուածքը, փառքն ու հեշտ կեանքը, որոնք թողեց աշխարհում: Միաժամանակ յիշեցնում էր իր բռնած այս փշոտ ճանապարհը, առաքինութիւններ ձեռք բերելու դժուարութիւնը, մարմնի տկարութիւնը եւ ժամանակի երկարութիւնը: Սակայն այս բոլոր պատերազմներում թշնամին իրեն անզօր գտաւ Անտոնի առաջ ու պարտուեց նրա ամուր հաւատից եւ յարատեւ աղօթքներից: Բայց քանի որ նրա սովորութիւնն է յարձակուել սկսնակների վրայ, անդադար պատերազմներ էր յարուցում նրա դէմ. մտքի մէջ զցում էր աղտեղի խորհուրդներ, իսկ մարմնի մէջ՝ ցանկութեան մարմաջներ: Բայց Անտոնն աղօթքներով հանգցնում էր չարի այրող բոլոր նետերը, պահեցողութեամբ ճնշում

մարմինը եւ ամաչեցնում դեւին իր բոլոր հնարքների համար, քանզի Տէրն էր իր Օգնականն ու Առաջնորդը, Ով մարմնացաւ մեզ համար եւ մեզ զօրութիւն տուեց՝ մարմնով յաղթող լինելու անմարմին թշնամուն:

Սրանից յետոյ բանսարկուն տեսնելով, որ չի կարողանում յաղթել նրան, երեւաց գարշելի, սեւադէմ մանկան տեսքով: Նա ընկաւ Անտոնի ոտքերը, սկսեց գանգատուել մարդկային ձայնով ու ասել. «Շատերին եմ խաբել եւ երկրի վրայ կործանել, բայց այժմ քո ճգնութիւններից սաստիկ տկարացել եմ»: Անտոնը հարցրեց. «Ո՞վ ես դու, որ այսպիսի խօսքեր ես ասում»: Եւ նա ասաց. «Ես պոռնկութեան բարեկամն եմ ու կոչւում եմ պոռնկութեան ոգի: Շատ շատերին եմ յաղթել եւ տիղմի մէջ թաւալեցրել, ու ես եմ, որ շատ անգամներ տանջել եմ քեզ, բայց ամօթահար հալածուելով քո կողմից՝ փախստական դարձել»: Անտոնը օրհնութեամբ գոհութիւն մատուցեց Աստծուն, իսկ նրան արհամարհանքով ասաց. «Ուրեմն յոյժ անարգ ես դու եւ արհամարհելի, սեւադէմ, գարշելի, տկար ու մանկան պէս անզօր: Այսուհետեւ դու ինձ հոգս չես պատճառի, որովհետեւ ես տեսայ քեզ: Տէ՛րն է իմ Օգնականը»: Այս լսելով՝ չարն անմիջապէս հեռացաւ սուրբից եւ այլեւս չէր համարձակւում մօտենալ նրան: Սա Անտոնի առաջին մարտահանդէսն էր ընդդէմ բանսարկուի: Եւ քանի որ Անտոնը գրուածքներից գիտէր, որ բազում են խորամանկ թշնամու չարարուեստ հնարքները, առաւել շատ ջանում էր մտքի արթնութեան ու մարմինը ճնշելով հնազանդեցնելու համար:

Այնուհետեւ որոշեց փորձողի դէմ մրցասպարէզ դուրս գալ առաւել ծանր խստակեցութեամբ: Շատերն էին սքանչանում նրա ճգնութիւններով, քանզի գիշերներն անց էր կացնում անքուն, հսկման աղօթքներով: Նա ոչ թէ մէկ, այլ շատ անգամներ սկսում էր աղօթել երեկոյեան՝ թիկունքում թողնելով արեգակը [2], եւ առաւօտեան նոյն դիրքում աղօթքի մէջ լինելով՝ արեգակին տեսնում էր իր առջեւ ծագելիս: Ճաշակում էր օրը մէկ անգամ՝ մայրամուտին, պատահում էր՝ երկու կամ երեք օրը մէկ անգամ կամ էլ շաբաթուայ մէջ մէկ անգամ: Նրա կերակուրը միայն աղ ու հաց էր, իսկ ըմպելիքը՝ ջուր: Քնում էր արմաւենու տերեւներից հիւսուած խսրի, երբեմն էլ՝ մազեղէն քրձի վրայ, բայց առաւելապէս պառկում էր չոր գետնին՝ միշտ մտաբերելով առաքեալի այն խօսքը, թէ՝ *«Երբ տկարանում եմ, այնժամ զօրանում եմ Քրիստոսի զօրութեամբ» [Բ Կորնթ. ԺԲ 10]:* Եւ սքանչելին այն էր, որ նրա առաքինութիւնները սահման չունէին. նա օրէցօր առաջ էր ընթանում: Այլեւս չէր յիշում անցած ժամանակի տառապանքները, այլ միշտ մտքում պահելով առաքեալի այն խօսքը, թէ՝ *«Անցեալը մոռացած՝ ձգտում եմ առաջ» [Փիլ. Գ 13]*, ամէն օր ջանալով՝ սկիզբ էր դնում նորանոր առաքինութիւնների ձեռքբերմանը եւ աճում էր՝ առաջադիմելով տքնութիւնների մէջ:

Լցուած սոյն խորհրդով ու նախանձախնդիր լինելով մեծ Եղիայի եւ Յովհաննէս Մկրտչի առանձնութեան ընթացքին՝ դուրս եկաւ իր բնակավայրից ու գիւղից հեռու գտնուող մի քարանձաւ գտաւ: Իր ծանօթներից մէկին պատուիրեց օրեր անց իրեն հաց բերել, իսկ ինքը մտաւ դատարկ քարանձաւը: Եղբօրն իր վրայ փակել տուեց քարանձաւի դուռը եւ այնտեղ մնաց տասնհինգ տարի՝ անտանելի ճգնութիւններով ու տեսակ-տեսակ փորձութիւնների ենթարկուելով:

Բանսարկուն չարացած էր նրա վրայ՝ աշխարհից հեռանալու համար, որովհետեւ մտածում էր, որ նա օրինակ կը դառնայ շատերին՝ անապատում առանձնանալու համար: Այդ պատճառով մի գիշեր, դիւական զօրքերով հանդերձ, յարձակուեց նրա վրայ եւ սաստիկ ծեծի ենթարկելով՝ այնքան տանջեց սուրբին, որ նա մեռելի պէս լուռ

ու անկենդան գետնին ընկաւ: Իսկ յետոյ, երբ պատմում էր այդ մասին, ասում էր, թէ նրանց հարուածների համեմատ ոչինչ են մարդկանցից եկած բոլոր հարուածները:

Յաջորդ օրը, երբ եղբայրը եկաւ հաց բերելու ու բացեց քարանձաւի դուռը, նրան տեսաւ մեռելի պէս գետնին ընկած: Բարձրացրեց նրան եւ տարաւ գիւղի եկեղեցու գաւիթը: Այնժամ եկան նրա ազգականներն ու գիւղացիները եւ նստեցին նրա շուրջը՝ որպէս մեռելի: Կէսգիշերին Անտօնը, ուշքի գալով, տեսաւ բոլորին քնած, բացի իր ծանօթ եղբօրից, ում խնդրեց իրեն ծածկաբար իր տեղը տանել: Եղբայրը կատարեց Անտօնի կամքը, ու ինքը նախկինի պէս մնաց քարանձաւում՝ փակուած դռան յետեւում:

Նա դեւերից այնքան հարուածներ էր ստանում, որ չէր կարողանում ոտքի կանգնել, այլ աղօթում էր գետնին ընկած: Երբ վերջացնում էր աղօթքը, բարձրաձայն ասում էր. «Ով չա՛ր դեւեր, այստեղ եմ ես՝ Անտո՛նս: Ես չեմ փախչի ձեր հարուածներից, եւ իմացէ՛ք, որքան էլ տանջեք, ինձ ոչինչ չի բաժանի Քրիստոսի սիրուց»: Ապա սաղմոսում էր ու ասում. *«Թէ պատերազմ բարձրանայ իմ դէմ, իմ սիրտը չի երկնչի. թէ ճակատամարտ բարձրանայ իմ վրայ, սակայն այսուհանդերձ Տիրոջն եմ ապաւինել» [Սաղմ. ԻԶ 3]:* Իսկ չարասէր բանսարկուն, յոյժ նեղուելով Անտօնից, կանչեց իր համախոհներին եւ ասաց. «Մենք պոռնկութեան ոգով ու ծանր հարուածներով հանգիստ չտուեցինք սրան, բայց նա դարձեալ ըմբոստանում է մեր դէմ: Եկէք սրան այլ կերպ մօտենանք»: Եւ այդ գիշեր նրանք թնդիւնի այնքան սաստիկ ձայն արձակեցին, որ այդ տարածքը դղրդաց հիմքից, եւ ճեղքուեցին քարանձաւի չորս անկիւնները, որոնցով սկսեցին ներխուժել չար դեւերը՝ առիւծների, եզների, ինձերի, գայլերի, օձերի, կարիճների ու այլ թունաւոր սողունների կերպարանքներով: Նրանցից իւրաքանչիւրը, ըստ իր կենդանական բարքի, սոսկալի շաչիւններով եւ ոխերիմ ցասմամբ յարձակւում էր նրա վրայ ու կամենում ողջ-ողջ կուլ տալ: Իսկ Անտօնը, թէպէտ անտանելի տանջանքներ էր կրում, սակայն չէր վախենում եւ չէր վհատւում, թէեւ գետնին ընկած՝ հեծում էր մարմնի ցաւերից, սակայն կենդանի էր հոգով ու սթափ խորհուրդներով: Դեռ աւելին, ծաղրելով իր թշնամիներին՝ ասում էր. «Եթէ զօրութիւն լինէր ձեր մէջ, ապա ձեզանից մէկն էլ բաւական կը լինէր ինձ: Բայց քանի որ դուք ջլատուած էք Քրիստոսի զօրութեամբ, այդ պատճառով երեւում էք այլեւայլ կերպարանքներով եւ բազում հնարքներով՝ կամենալով ինձ սարսափի մատնել: Զազրելի գազանների կերպարանքներն ընդունելը դարձեալ ձեր տկարութեան նշանն է, քանզի եթէ իշխանութիւն ունէք Տիրոջից եւ եթէ կարող էք, եկէք ձեր կերպարանքով, ապա եթէ ոչ, ինչո՞ւ էք զուր խռովւում: Մեր պահապանը սուրբ Խաչն է, իսկ ամուր պարիսպը՝ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս»: Իսկ դեւերը, զայրանալով նրա վրայ, կրճտացնում էին իրենց ատամները եւ այլեւս չհամարձակուելով մօտենալ նրան՝ վեր ու վար էին լինում խռովայոյզ շփոթմամբ: Ապա Անտօնը վեր նայեց եւ տեսաւ, որ յանկարծ առաստաղը բացուեց, ու նրա միջով իր վրայ լոյսի ճառագայթ ծագեց, որից դեւերն աներեւոյթ եղան: Նոյն պահին դադարեցին մարմնի բոլոր ցաւերը, եւ փակուեցին քարանձաւի ճեղքերը:

Երբ Անտօնը հասկացաւ, որ սա Տիրոջ այցելութիւնն էր, լցուեց Հոգով, իսպառ թեթեւացաւ իր բոլոր ցաւերից եւ աղաղակեց. «Տէ՛ր Աստուած, ո՞ւր էիր, եւ ո՞ւր էր Քո այս յայտնութեան զօրութիւնը, որով բուժեցիր իմ ցաւերը, ո՞ւր էր Քո սրբութիւնից ծագած այս լոյսը, որ հալածեց խաւար դեւերին»: Ու երկնքից ձայն եկաւ՝ ասելով. «Ես այստեղ էի, Անտօնի՛, Ես միշտ մերձ եմ Ինձ յուսացողներին, սակայն Ես կամենում էի քո մարտահանդէսը տեսնել: Եւ արդ, քանի որ համբերեցիր, յաղթեցիր ու չյաղթուեցիր պատրանքներից, միշտ օգնական կը լինեմ քեզ եւ ողջ

երկրով մէկ քեզ անուանի կը դարձնեմ»: Երբ Անտոնը լսեց այս խօսքերը, ոտքի կանգնեց, սկսեց աղօթել ու այնքան լցուեց երկնային շնորհներով, որ նախկինից առաւել զօրութիւն ընդունեց իր մէջ: Այդ ժամանակ նա երեսունհինգ տարեկան էր:

Սրանից յետոյ Անտոնն առաւել լցուեց անապատի առանձնութեան մէջ Տիրոջն անզբաղ ծառայելու բաղձանքով, որի համար գնաց այն ծերի մօտ եւ նրան աղաչեց, որ միասին գնան դէպի անշէն վայրեր: Երբ վերջինս հրաժարուեց՝ պատճառ բերելով իր ծերութիւնը, մենակ ուղեւորուեց դէպի անապատ եւ աներկիւղ անցնելով անկոխ ճանապարհով՝ հասաւ մի բարձր լեռան: Իսկ դեւը, կարծելով, թէ կը կարողանայ խափանել նրա առջեւ դրուած իր խորհուրդը, ճանապարհին մի արծաթէ անօթ գցեց: Այս տեսնելով՝ Անտոնն իր մտքում ասաց. «Որտեղի՞ց այս անօթը այս անկոխ վայրերում: Այդ քո հնարքներն են, չա՛ր դեւ, ինձ խոչընդոտ մի՛ եղիր եւ չքուի՛ր արծաթիդ հետ միասին»: Եւ նոյն պահին ցնդեց անօթը, ինչպէս ծուխը հրի երեսից: Երբ մի փոքր էլ առաջ գնաց, տեսաւ զտուած ոսկուց մի ձուլակտոր ու խիստ զարմացաւ, որովհետեւ այն թուացեալ չէր, ինչպէս առաջին անօթը: Շտապ անցաւ նաեւ դրա կողքով ու փախաւ ինչպէս հրդեհից: Հասաւ լեռան ստորոտը, անցաւ գետը եւ էլի վեր բարձրանալով՝ գտաւ մի աւերակ յարկ՝ ամայացած բերդի մի քարայր, որը լի էր վայրի գազաններով ու զեռուններով: Սրանք, տեսնելով Անտոնին, իրենց տեղը զիջեցին նրան ու փախան:

Այնժամ երանելին քարերով փակեց մուտքը եւ իր հետ չափաւոր հաց ու ջուր վերցնելով, որն իրեն կը բաւարարէր մօտ վեց ամիս, փակուեց ներսում: Սա Տիրոջ 285 թուականին էր՝ Դիոկղետիանոսի ու Հերակլ Մաքսիմիանոսի կայսրութեան առաջին տարում: Սա էր Անտոնի առաջին անապատը, ուր առանձնացած ապրեց քսան տարի, որի ընթացքում ո՛չ ինքը քարայրից դուրս եկաւ եւ ո՛չ էլ որեւէ մէկին ներս ընդունեց, այլ միայն տարուայ մէջ երկու անգամ լռութեամբ ընդունում էր երդիկից իրեն տրուող հացը:

Մի անգամ նրա մօտ մարդիկ եկան ու մինչեւ լուսաբաց սպասեցին դռան առաջ, որ թերեւս տեսնէին նրան: Լսեցին ներսից եկող կռուի ձայներ, որոնք Անտոնին ասում էին. «Ինչո՞ւ ես բռնութեամբ տիրացել մեր բնակավայրին: Ի՞նչ կայ քո եւ անապատի միջեւ, հեռացի՛ր մեր սահմաններից, որովհետեւ քեզ համար անհնար է բնակուել այստեղ ու համբերել մեր հնարքներին», սակայն նա ընդդիմանում էր նրանց ու հակառակւում: Դրսում եղողները կարծեցին, թէ ինչ-որ մարդիկ սանդուղքով իջել են նրա մօտ եւ վիճաբանութեան մէջ մտել, բայց պատի ճեղքից ներս նայելով՝ տեսան, որ նրա մօտ ոչ ոք չկայ: Այնժամ հասկացան, որ դեւերն էին վիճում սուրբի հետ: Սրանից ոմանք ահաբեկուած ետ դարձան, ոմանք էլ վախից Անտոնին օգնութեան կանչեցին: Իսկ նա, մօտենալով դռանը, յորդորեց նրանց չերկնչել դեւերի արհաւիրքներից, այլ կնքել իրենց անձերը սուրբ Խաչի նշանով ու վերադառնալ: Ոմանք էլ, երբ գալիս էին նրա դռան մօտ, լսում էին յաղթութեան օրհներգեր եւ սաղմոսներ՝ ընդդէմ չարի բանակների. *«Թող ելնի Աստուած, Նրա բոլոր թշնամիները թող ցրուեն, ու Նրան ատողները փախչեն Իր առջեւից: Բոլոր ազգերը շրջապատեցին ինձ, բայց Տիրոջ անուամբ յաղթեցի նրանց» [Սաղմ. ԿԷ 2, ՃԺԷ 10]:*

Քսան տարի փակուած մնալուց յետոյ՝ Տիրոջ 306 թուականին, երբ սկսեց թագաւորել Մեծն Կոստանդիանոսը, բարեպաշտներից շատերը, լցուելով Անտոնի կրօնաւորական ընթացքի հանդէպ բարի նախանձով, դիմեցին նրան՝ մենակեցութեան կարգին աշակերտելու համար: Նրա մօտ եկան շատ ախտաժէտներ, որպէսզի նրա աղօթքներով բժշկութիւն գտնեն, սակայն նա դուրս չէր գալիս: Եւ երբ

շատ ստիպեցին ու չկարողացան համոզել, քանդեցին մուտքը, բռնութեամբ դուրս բերեցին նրան եւ տեսան երանելուն՝ հոգով ու մարմնով ամբողջովին զուարթ ու կայտառ: Այնժամ շատերին ազատեց չար այսերից եւ շատերին բժշկեց պէս-պէս ախտերից: Ապա բոլոր հաւաքուածներին սկսեց ուսուցանել աստուածիմաստ խօսքերով, մխիթարել, սփոփել եւ աստուածպաշտութեան մէջ ջանասիրութիւն բորբոքել: Յորդորուելով նրա խօսքերից՝ առաքինասէր անձինք մտադրւում էին իրենց յանձնել նրա առաջնորդութեանը ու կենաց ճանապարհին նրան ընտրել որպէս իրենց առաջնորդ, հայր եւ ուսուցիչ: Որոշ ժամանակ անց նրանք մեծ թիւ կազմեցին, թողեցին աշխարհն ու սկսեցին Անտօնի առաջնորդութեամբ կրօնաւորել: Այդ լեռան վրայ իրենց համար շինեցին ծածկեր, ուր ճգնելով սաղմոսներով, աղօթքներով եւ Սուրբ Գրքի ընթերցանութեամբ՝ ստանում էին Աստուծոյ օրհնութիւններն ու միասին աճում ճգնութիւնների եւ սրբութեան մէջ: Այդպէս անշէն անապատի անմարդաբնակ լեռը Քրիստոսի հրեշտակակրօն զինուորների բանակատեղի դարձաւ:

Արսէնոյիտա նահանգի Արսէնոյա քաղաքից ոմանք նրանց օրինակով նոյնպէս կամեցան աշխարհից հրաժարական կեանք վարել: Նրանք եկան Անտօնի մօտ ու աղաչեցին այցելել իրենց եւ իրենց եւս հաստատել նոյն բարեկրօն կարգի մէջ: Սուրբը յօժարակամ գնաց նրանց մօտ՝ աներկիւղ անցնելով գետի միջով, որը լի էր խեցէմորթ գազաններով ու կոկորդիլոսներով, եւ նրանց կանոններ տալուց ու աստուածիմաստ խրատներով հաստատելուց յետոյ վերադարձաւ իր տեղը: Իր կրօնաւորութեան ողջ ընթացքում խօսքով եւ իր վարքով անձանձրոյթ ուսուցանում էր բոլորին՝ հայր լինելով թէ՛ մեծերին եւ թէ՛ փոքրերին:

Ելնելով իր փորձառութիւնից՝ նրանց առջեւ մերկացնում էր փորձողի տեսակ-տեսակ խարդաւանքները եւ միաժամանակ ցոյց տալիս բոլոր բուժամիջոցները: Պատմում էր նաեւ իր երկար տարիների առանձնութեան ընթացքում դեւերի զանազան երեւումների մասին ու սովորեցնում էր զգուշանալ նրանցից: Խրատում էր լինել ջանասէր, անախտաբար ծառայել միայն Աստծուն, չխնդրել անձի համար ինչք, չակնկալել տեսնել ո՛չ տեսիլքներ, ո՛չ էլ հրաշագործութիւններ անել, այլ ուղիղ սրտով եւ զգուշութեամբ միշտ զգաստ ու արթուն լինել եւ առաւելապէս զուարթ լինել առաքինութեան բոլոր գործերում, հեռացնել խորհուրդների բոլոր ունայն յուզումները, մտքում անդադար ունենալ Աստուծոյ յիշողութիւնը, Նրա առջեւ միշտ առաքինութիւններ գործել եւ ապաւինել Նրա ամենախնամ հովանաւորութեանը:

Այդ ժամանակներում՝ մօտ 310 թուականին, Եգիպտոսում Մաքսիմիանոս կայսեր կողմից սաստկացան հալածանքները. շատերը նահատակուեցին Ալեքսանդրիայում, իսկ շատերն էլ բանտ նետուեցին, որոնց թւում էր նաեւ Ալեքսանդրիայի սուրբ Պետրոս հայրապետը: Այնժամ երանելի Անտօնն իր աւագ աշակերտներին ասաց. «Եկէք մենք էլ գնանք՝ տեսնելու մեր եղբայրների ցանկալի մարտահանդէսը, որպէսզի լինենք ոչ միայն նրանց ճգնութիւնների վկաները, այլեւ նրանց գործակիցներն ու նահատակակիցները»: Եւ ծարաւի լինելով վկայական մահուան՝ եկան Ալեքսանդրիա: Բայց քանի որ մատնուելու իրաւունք չկար, սպասում էին իրենց փափագը կատարուելու յարմար պահի, որի համար, երբ կապուածներին ատեան էին տանում, Անտօնը մօտենում էր նրանց, գօտեպնդում ու ասում. «Մի՛ երկնչէք անօրէնների ահից, այլ անվեհեր խոստովանէք Քրիստոսին եւ ուրախութեամբ եղէք Նրա վկաները, որովհետեւ այս առօրեայ տանջանքներին պիտի յաջորդի անանց Արքայութիւնը»: Այցելում էր բանտեր՝ տեսնելու եւ սպասաւորելու երանելիներին, իւրաքանչիւրին քաջալերում էր զօրաւոր խօսքերով

ու ամրացնում, որովհետեւ շնորհներ էին բխում սուրբի բերանից եւ զօտեպնդում քաջ նահատակներին: Երբ նրանց տանում էին նահատակութեան վայրը, Անտոնը գնում էր նրանց յետեւից եւ ականատես լինելով նրանց նահատակութեանը՝ լցւում էր մեծ ցնծութեամբ. ասես ինքն էր առնում վկայութեան յաղթանակը:

Իսկ կռապաշտները, զայրանալով Անտոնի ու նրա հետ եղողների այսպիսի համարձակութեան վրայ, բողոքեցին դատաւորին, ով մեծ սպառնալիքով հրաման տուեց, որ ոչ մի կրօնաւոր չերեւայ քաղաքում եւ չհամարձակուի մօտենալ ատեանին: Այնժամ մենակեացները թաքնուեցին, իսկ Անտոնը բնաւ չվախեցաւ, այլ վերցնելով իր պարեգօտը՝ լուաց, որպէսզի առաւել աչքի ընկնի եւ հետեւեալ օրը եկաւ կանգնեց ճանապարհի վրայ, որով պիտի անցնէր դատաւորը: Բայց երբ անցնելիս նրա վրայ ուշադրութիւն չդարձրին, երանելին տրտմեց, որովհետեւ չկատարուեց նահատակուելու իր փափագը: Եւ սա եղաւ Տիրոջ տնօրինութեամբ, որովհետեւ Աստուած չէր կամենում Անտոնի մարտիրոսութիւնը, որովհետեւ նա պէտք է մնար ողջ աշխարհի կրօնաւորական կարգի առաջնորդութեան համար:

Արդ, սուրբ Պետրոս հայրապետի նահատակութիւնից յետոյ, ում հետ երանելին մտերմաբար երկար խօսեց նրա վերջին օրը, երբ տեսաւ, որ իրեն չի յաջողւում հեղել իր արիւնը Քրիստոսի անուան համար, ու նաեւ քանի որ հալածանքների հեղեղը սկսել էր նուազել, դարձաւ իր մենարանը եւ ինքնակամ իր անձը մարտիրոսութեան մատնելով՝ պահեցողութեամբ ու անդադար տքնութիւններով խստացրեց իր ճգնութիւնները: Ներքուստ խարազանազգեստ էր, իսկ արտաքուստ՝ մաշկեղէն հանդերձներով: Եւ որչափ փախչում էր մարդկանցից, այնքան առաւել հոծ բազմութիւն էր գնում նրա մօտ՝ բժշկուելու, իսկ նա աղօթելով Քրիստոսի անուամբ՝ բժշկում էր բոլորին:

Սակայն ձանձրանալով բազմութիւնից՝ որոշեց գնալ աւելի հեռաւոր մի տեղ՝ այլազգիների մօտ, ուր ոչ ոք չէր ճանաչի իրեն: Վերցնելով չափաւոր հաց՝ եկաւ նստեց գետափին, որպէսզի մի նաւ գտնի ու գետի միւս ափն անցնի: Այնժամ երկնքից մի ձայն լսեց, որն ասում էր. «Անտոնիէ՛, ո՞ւր ես գնում եւ ինչի՞ համար»: Իսկ նա ասաց. «Այստեղ ինձ չեն թողնում հանդարտել, որի համար կամենում եմ վերին Թեբայիդ գնալ»: Ձայնն ասաց. «Եթէ Թեբայիդ գնաս, առաւել կը վիատուես, իսկ եթէ հանդարտութիւն ես փնտրում, գնա՛ Տաճկաստան եւ մտի՛ր խորը անապատ»:

Մինչ Անտոնը մտածում էր, թէ ո՞վ իրեն ցոյց կը տայ այդ ճանապարհը, տեսաւ իսմայէլացի վաճառականների, ովքեր Եգիպտոսից դէպի անապատ էին շարժւում: Մօտեցաւ նրանց ու խնդրեց, որ իրեն եւս տանեն անապատի խորքերը, եւ նրանք մարդասիրաբար վերցրին նրան: Երեք օր ու երեք գիշեր գնալուց յետոյ հասան մի յոյժ բարձր լեռան, որի մերձակայքում մի փոքր դաշտ կար: Այնտեղ կային մի քանի արմաւենիներ, իսկ լեռան ստորոտով քաղցրահամ ջուր էր հոսում: Անտոնը կանգ առաւ այդտեղ՝ իր համար ընտրելով այդ վայրը ու ընդունեց այն որպէս Աստծուց իրեն տրուած: Իսկ իսմայէլացիները, տեսնելով, որ նա կամենում է բնակուել լեռան ծերպերում, ամէն անգամ նրա մօտով անցնելիս բաւարարում էին նրա անհրաժեշտ կարիքները:

Սա Անտոնի երկրորդ անապատն էր, որը կոչուեց «Սուրբ Անտոնի լեռ»: Այնտեղ կային նաեւ երկու այլ լեռներ՝ մէկն աւելի խորքերում ու աւելի բարձր, ուր գտնւում էր սուրբի ճգնարանը, իսկ միւսը՝ երեւացող ու աւելի ցածր, որը կոչուեց Անտոնի կամ Անտոնի աշակերտների վանք ու կոչուեց նաեւ «Պիսպիռի անապատ», որտեղ հինգ, տասը կամ քսան օրը մէկ անգամ Անտոնն այցելում էր իր աշակերտներին եւ

այնտեղ հիւրեր ընդունում: Երբ մարդիկ իմացան նրա առանձնութեան տեղը, չդադարեցին գալ նրա մօտ ու նրան բերել անհրաժեշտ կարիքները, իսկ ծերը, որպէսզի նրանց նեղութիւն չպատճառի, խնդրեց եղբայրներին բրիչ եւ ցորեն բերել: Սկսեց հող մշակել, սերմանել եւ իր վաստակով ձեռք բերել իր սակաւ կերակուրը: Տնկեց նաեւ բանջարանոց՝ իր մօտ եկողներին մատուցելու համար: Երբ վայրի կենդանիներն արածում էին նրա բանջարները, սաստում էր նրանց Տիրոջ անունով, ու նրանք հեռանում էին: Իսկ դեւը, սրտմտելով սուրբի վրայ, անապատի բոլոր գազաններին եւ անասուններին հաւաքեց նրա մենարանում: Անտօնը, ճանաչելով չարի հնարքները, ասաց նրանց. «Եթէ Տէրն է հրամայել ձեզ, ապա յօշոտէ՛ք ինձ, իսկ եթէ դեւն է ձեզ ուղարկել, չքուէ՛ք, որովհետեւ ես Քրիստոսի ծառան եմ»: Ու նրանք, ցնցուելով սուրբի ահեղ հրամանից, խօսքը լսելուն պէս անմիջապէս աներեւոյթ եղան:

Սակայն դեւը նաեւ այլ շատ փորձութիւններ էր բերում եւ աչքին երեւացող զանազան տեսիլքներ ցոյց տալիս, բայց առաւել շատ յարձակւում էր գնդերով ու սոսկալի դղրդիւններով: Իսկ երանելին՝ որպէս քաջ նահատակ, Քրիստոսի անուամբ եւ ամենայաղթ Խաչի նշանով մենամարտում էր նրանց դէմ ու վանելով ցրում նրանց:

Առաջին անապատից Եգիպտոսի իր ծանօթների հետ ծերի մօտ եկան իր աշակերտները եւ բռնադատելով տարան նրան, որպէսզի մխիթարուեն՝ նրան տեսնելով ու նրա խօսքը լսելով: Ճանապարհին, երբ անցնում էին անջրդի վայրերով, ծարաւեցին: Սուրբն աղօթքներով ջուր բխեցրեց եւ հասնելով եղբայրներին՝ արբեցրեց նրանց: Գովեց առաքինի վարքի մէջ նրանց ջանասիրութիւնը ու յորդորեց առաւել առաջադիմել: Գնաց նաեւ տեսնելու իր քրոջը, ով կոյսերի վանքում վանամայր էր դարձել, եւ մի քանի օր մնաց այնտեղ: Ուրախացաւ հայր Անտօնն իր քրոջ ու նրա մօտ եղողների բարեկրօն վարքի եւ առաքինութիւնների համար ու մխիթարական խօսքերով զօրացնելով նրանց՝ շտապեց վերադառնալ իր անապատը:

Այնտեղ բժշկութեան համար նրա մօտ բերեցին մի պալատական դիւահարի, սակայն ծերը յանձն չառաւ բժշկել եւ ասաց նրան. «Դու չես կարող այստեղ բժշկուել, այլ գնա՛ Եգիպտոս, ու այնտեղ Քրիստոսի ողորմութիւնը շտապ քեզ կը հասնի»: Այս բանը Տիրոջից յայտնուեց սուրբին, եւ այդպէս էլ եղաւ: Նաեւ այլ բազում յայտնութիւններ էին լինում հայր Անտօնին, քանզի նա կատարեալ հոգետես էր դարձել: Նա տեսաւ սուրբ հայր Ամոնի հոգին, որը բնակւում էր Նիտրա լեռան վրայ: Իր անապատից այն հեռու էր գտնւում տասներեք օրուայ անցնելիք ճանապարհով: Տեսաւ հրեշտակների դասերով նրա երկինք ելնելը ու պատմեց իր աշակերտներին, իսկ յետոյ իմացան, որ Ամոնը երկինք էր փոխուել այդ նոյն օրը:

Մի օր, երբ մատուցում էր իններորդ ժամի աղօթքը, միտքը յափշտակուեց, եւ ասես լուսազգեստ մէկը նրան վեր բարձրացրեց: Նա տեսաւ խաւար, սեւադէմ մարդկանց, որոնք, ընդառաջ գալով, թոյլ չէին տալիս իրեն երկինք ելնել: Լուսազգեստ այրն ընդդիմանում էր նրանց, մարտնչում օդային դեւերի հետ ու ասում. «Ի՞նչ մեղք ունի այս արդար մարդը, որ կամենում էք արգելել նրան»: Իսկ նրանք պատրաստւում էին թուել մանկութեան օրերին նրա գործած մեղքերը: Եւ լուսազգեստ այրն ասաց նրանց. «Աշխարհից ելնելուց յետոյ Աստուած ներել է մանկութեան ժամանակ Անտօնի անգիտությամբ գործած մեղքերը, իսկ մենակեցութեան մէջ նա մեղք չի գործել»: Նրանք Անտօնի վրայ կրճտացրին իրենց ատամները, իսկ հրեշտակը Տիրոջ Խօսքով սաստեց նրանց: Այնժամ խաւարայիններն ամօթահար ցած ընկան, իսկ

Անտոնն անարգել երկինք բարձրացաւ: Երբ սթափուեց, ողբաց՝ շատ օրեր ոչինչ չուտելով եւ ասաց. «Աղօթէ՛ք, եղբայրնե՛ր, աղօթէ՛ք, որպէսզի կարողանանք անարգել անցնել օդային այսերի իշխանութեան միջով»:

Մէկ ուրիշ անգամ, երբ եղբայրները հարցնում էին հոգիների վիճակի մասին, նրան լսելի եղաւ մի ձայն, որն ասաց. «Անտոնիէ՛, դո՛ւրս արի ու տե՛ս»: Նոյն պահին ելաւ սենեակից եւ տեսաւ մի սեւադէմ, բարձրահասակ ու չար տեսքով այր, որի գլուխն օդում՝ երկնքի տակ էր: Տեսնում էր, որ բազում թեւաւոր մարդիկ թռչելով երկինք էին վերանում, բայց ահաւոր հսկան, տարածելով ձեռքերը, շատերին խփում, երկիր էր գցում եւ ուրախանում նրանց անկման համար, իսկ ովքեր վերասլաց թռչում ու անարգել երկինք էին մտնում, նրանց վրայ իր ատամներն էր կրճտացնում: Եւ այնտեղից ձայն եկաւ՝ ասելով. «Իմացի՛ր, ինչ որ տեսնում ես, Անտոնիէ՛»: Ու նրան բացուեցին խորհուրդները եւ նա հասկացաւ, որ թեւաւոր մարդիկ մարդկանց հոգիներն էին, բարձրահասակ, սեւադէմ մարդը՝ սատանան, որը մեղաւորների հոգիներն ընկղմում էր անդունդներում, իսկ վեր բարձրացողներն արդարներն էին, ովքեր անարգել երկինք էին մտնում:

Այսպիսի եւ այլ տեսիլքներ ու յայտնութիւններ էր պատմում պատեհ ժամին, երբ բռնադատւում էր եղբայրների կողմից: Քաջալերում էր նրանց հոգեխրատ խօսքերով եւ յորդորում հոգ տանել առաքինութիւնների համար: Նրան տեսնելու ու նրա խօսքը լսելու էին գալիս նաեւ եպիսկոպոսներ, քահանաներ եւ սարկաւագներ, իսկ նա խոնարհութեամբ հայցում էր նրանց օրհնութիւններն ու աղօթքները, ապա զօրացնելով նրանց՝ ճանապարհում: Պատահեց, որ նրա մօտ եկան նաեւ արիոսականներ՝ նենգօրէն նրա հետ խօսելու համար: Ծերը, անմիջապէս վրայ հասնելով, իր լեռան վրայից հալածեց անօրէն քրիստոսամարտների աղանդի մոլորութիւնը, սակայն նրանք, հասնելով Ալեքսանդրիա, տարածեցին, թէ Անտոնը համախոհ է մեզ:

Այս լսելով՝ Մեծն Աթանաս հայրապետը, ով մեծ բարեկամական զգացումներ ունէր սուրբի հանդէպ, լուր ուղարկեց նրան՝ գալ ու ամաչեցնել չար լեզուներին: Նոյնն էին խնդրում նաեւ այլ ուղղափառ եպիսկոպոսներ՝ գալ եւ օգնել իրենց: Այնժամ ծերը մօտ 330 թուականին փութապէս եկաւ Ալեքսանդրիա ու հրապարակաւ խօսելով բազմութեան առջեւ՝ սքանչելապէս քարոզեց Աստուծոյ Որդուն՝ որպէս ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստծուց, որպէս Հօր հարազատ Ծնունդ, Նրան համաբնակից եւ մշտնջենաւորակից: Իսկ Որդուն արարած ասողներին նզովեց եւ ապականիչ գայլեր անուանեց, քանզի ասաց. «Նրանք, ովքեր ծառայում են արարածներին եւ ոչ թէ Արարչին՝ յաւիտեանս օրհնեալ Աստծուն, ոչնչով չեն տարբերւում հեթանոսներից»:

Երանելու կողմից չար աղանդի յայտնապէս հերքումը ողջ ուղղափառ ժողովրդի համար մեծ ուրախութիւն եւ ճշմարտութեան ճանապարհի վրայ հաստատութիւն եղաւ, քանզի բոլորը երանելուն ընդունում էին որպէս Եկեղեցու սիւն: Եւ ոչ միայն հաւատացեալներն էին գնում ծերի մօտ՝ ստանալու նրա օրհնութիւնը, այլեւ քաղաքի հեթանոսները, ովքեր նրան Աստուծոյ այր էին համարում ու ջանում էին գոնէ նրա հանդերձներին դիպչել: Նրա մօտ էին բերում բազում հիւանդներ, ախտաժէտներ եւ դիւահարներ, ովքեր, մերձենալով նրա հանդերձներին, առողջանում էին: Ու սա տեսնելով՝ կռապաշտներից շատերն ընդունում էին սուրբ հաւատը: Մի օր, երբ բազմութունը նեղում էր ծերին, իսկ աշակերտները կամենում էին հեռացնել ամբոխին, ծերը ժպտալով ասաց. «Մի՞թէ այս բարեսէր մարդիկ աւելի շատ են, քան լեռան վրայ մեզ պաշարող դեւերի բանակը»:

Անապատ վերադառնալուց յետոյ մի անգամ նրա մօտ եկան հելլէնացի երկու հեթանոս աշխարհիկ իմաստուներ, ովքեր կարծում էին, թէ կարող են իրենց ճարտար խօսքերով յաղթել անուսում մարդուն: Բայց Աստուծոյ այրն իր աստուածուսոյց գիտութեամբ պապանձեցրեց նրանց այնպէս, որ նրանք ապշեցին սուրբի հանճարեղ մտքի վրայ: Միաժամանակ տեսնելով նշանները, որոնք սուրբը գործեց, ահով լցուած վերադարձան ու խոստովանեցին. «Տեսանք աւելին, քան որ լսել էինք»:

Մեծ Անտօնի սրբութեան համբաւը հասաւ հեռաւոր երկրներ ու նաեւ կայսեր դռանը: Ինքը՝ բարեպաշտ ինքնակալ Կոստանդիանոսը, եւ նրա որդիներ Կոստասն ու Կոստանդը յաճախ նամակ էին գրում նրան եւ խնդրում, որ մխիթարի իրենց պատասխան թղթով ու հնարաւորութեան դէպքում անձամբ գայ իրենց մօտ, բայց նա ամէն կերպ խոյս էր տալիս աշխարհի իշխանների հետ բարեկամութիւնից: Աշակերտները համոզում էին պատասխանել թագաւորական նամակներին, եւ սուրբը, խոնարհուելով նրանց խնդրանքներին, գրում էր հոգեշահ խրատների ու յորդորանքի խօսքեր, որոնք ստանալով՝ Կոստանդիանոսը եւ իր որդիներն ուրախանում էին ու իրենց պատիւ համարում կոչուել Անտօնի որդիներ:

Ցնծում էր երանելին, երբ բարեպաշտ Կոստանդիանոսի օրօք տեսնում էր աստուածպաշտութեան ծաղկումը: Սակայն Տէրը սուրբին տեսիլքով ցոյց տուեց, որ նրա որդիների օրօք պիտի զօրանան արիոսականները, ցոյց տուեց նաեւ այն չարիքները, որոնք պիտի լինէին Յուլիանոս Ուրացողի եւ Վաղէսի ժամանակներում: Նա տեսաւ, որ ջորիներ են մտնում եկեղեցու խորան, աքացի տալով վայր գցում սուրբ Սեղանը ու ցրում ամէն ինչ: Եւ ի վերուստ ձայն լսեց, որն ասաց. «Իմ Սեղանը պղծուելու է»: Ծերն այս տեսիլքը մեծ ողբով պատմեց իր աշակերտներին, բայց եւ միաժամանակ քաջալերեց նրանց՝ ասելով, թէ այդ օրերը երկար չեն տեւի, ու Եկեղեցին շուտով կը վերագտնի իր նախկին պայծառութիւնը:

Ոմն զօրավար, դատաւորների եւ այլ իշխանների հետ գալով Անտօնի արտաքին վանքը, լուր տուեց ծերին ու խնդրեց, որ իջնի լեռան վրայից եւ գայ իրենց մօտ: Նա եկաւ, որոշ խրատներ տուեց ու շտապեց վերադառնալ իր առանձնավայրը: Երբ նրանք ստիպեցին սուրբին քիչ եւս մնալ իրենց մօտ, Անտօնն ասաց. «Չեմ կարող աւելին մնալ, որովհետեւ ինչպէս որ ձկները, ցամաքում փոքր-ինչ մնալով, սատկում են, նոյնպէս եթէ մենակեացները երկար դեգերեն աշխարհիկների հետ, կը ձուլուեն նրանց եւ կը տկարանան հոգով: Այդ պատճառով ինչպէս որ ձուկն է շտապում ցամաքից ծով նետուել, այնպէս էլ մենք պէտք է շտապենք դէպի մեր լեռը, որպէսզի յապաղելով չմոռանանք, թէ ներսում ինչ ունենք»: Զարմացաւ զօրավարն այս խօսքերի վրայ ու ասաց. «Արդարեւ, դու Աստուծոյ ճշմարիտ ծառան ես, քանզի ինչպէ՞ս կարող է մարդ այսչափ իմաստութիւն ունենալ, եթէ Աստծուց սիրուած չլինի»:

Իսկ արիոսականների կուսակից մէկ այլ զօրավար, որի անունն էր Բաղակիոս, զգուշացուել էր սուրբ հայր Անտօնի կողմից, որ դադարի հալածել ուղղափառներին: Սակայն նա չսաստուելով, ըստ ծերի կանխասացութեան, չարաչար կերպով մահուան մատնուեց, որի համար շատերը զարմացան, իսկ բոլոր լսողներն ահաբեկուեցին: Մարդիկ պատկառում էին Աստուծոյ մարդու խօսքերից, սուրբի շահեկան խրատները նրանց իր մօտ էին բերում: Զինուորականներից եւ հարուստներից շատերը, թողնելով այս կեանքի ծանրութիւնը, նրա առաջնորդութեամբ մենակեացներ էին դառնում: Անտօնը հոգիների ու մարմինների Աստծուց տրուած ճարտար բժիշկ էր ոչ միայն եգիպտացիների, այլ

նաեւ ամբողջ աշխարհի համար, որովհետեւ նրա վաստակի պտուղները սփռուել էին ողջ աշխարհով մէկ, եւ ամէնքը հաղորդ էին նրա բարի գործերին:

Եւ երբ Անտոնը դարձաւ 90 տարեկան եւ հասաւ խոր ծերութեան, Պիսպիռեան վանքի աշակերտներն խնդրեցին նրան այլեւս չմնալ ներքին լեռան վրայ գտնուող իր ճգնարանում, այլ գալ իրենց մօտ, որպէսզի խնամք գտնի իր ծերութեան մէջ, մխիթարուի ու առաւելապէս մխիթարի իր զաւակներին: Բայց նա չկամեցաւ, այլ միայն ընտրեց երկու եղբայրների, որ մնան իր մօտ՝ լեռան վրայ, որոնց անուններն էին Ամաթաս եւ Մակարիոս: Եւ սրանք 15 տարի՝ սկսած 340 թուականից, նրա ծերութեան օրերին սպասաւորեցին սուրբին:

Այդ տարիների ընթացքում երանելի Անտոնը Տիրոջ յայտնութեամբ այցելեց թեբայեցի սուրբ Պօղոս Անապատականին, ում պատուական մարմինն ամփոփելուց յետոյ վերադարձաւ ու պատմեց իր երկու աշակերտներին: Նա իր հետ բերել էր Պօղոսի՝ արմաւենուց հիւսուած պարեգօտը, որը կրում էր միայն տօն օրերին:

Սրանից յետոյ մի քանի տարի անց Անտոնը, ըստ իր սովորութեան, եկաւ Պիսպիռի լեռը՝ այցելելու մենակեացներին: Նա նրանց յայտնեց վերին յայտնութեամբ իր երկինք փոխադրուելու մասին եւ ասաց. «Որդեակնե՛ր, սա իմ վերջին այցելութիւնն է ձեզ, որովհետեւ եկել է ժամանակը հրաժարուելու իմ մարմնից, որն ապրեց 105 տարի»: Այս լսելով՝ բոլորը լաց եղան ու գրկելով համբուրեցին ծերին, իսկ նա զուարթ էր եւ լի խնդութեամբ, որովհետև պատրաստւում էր օտար աշխարհից իր հայրենի Երկիրը գնալ: Տուեց իր վերջին յորդորները, պատուիրեց չձանձրանալ ճգնութիւններից, աշխարհի հանդէպ միշտ մեռած լինել, յիշել իր խրատները, ամբողջովին հեռու մնալ մելիտիանոսների ու արիոսականների չար հերձուածից, զգոյշ լինել վարդապետական հարցերում եւ Սուրբ Գրքի աստուածային պատուիրաններում, աչքի առաջ ունենալ սուրբերի վարքն ու նրանց գործերը եւ զօրանալ պատուիրանապահութեան մէջ:

Երբ եղբայրները նրան ստիպեցին մնալ իրենց մօտ, յանձն չառաւ բազում պատճառներով, բայց առաւել շատ, որպէսզի չպատուեն իր մարմինը եգիպտացիների օրէնքով՝ չթաղելով հողում, որովհետեւ միշտ յանդիմանում էր այդ սովորութիւնը: Եւ այսպէս երանելին հրաժեշտ տուեց եղբայրներին ու շտապ վերադարձաւ լեռան իր մենարանը: Սակայն քիչ օրեր անց նա հիւանդացաւ եւ կանչելով իրեն սպասաւորող երկու աշակերտներին՝ ասաց. «Ես փափագում եմ իմ հայրերի ճանապարհով շտապել դէպի երկնայինները: Իմ Տէրը կանչում է ինձ, իսկ դուք, ո՛վ իմ սիրելի զաւակներ, միշտ զգաստ եղէք եւ ձեր երկար տարիների վարձքը մի՛ կորցրէք, այլ ինչպէս որ սկիզբ էք դրել, ջանացէք պահել ձեր ընթացքը: Ամէն օր ապրէք ինչպէս աշխարհի հանդէպ մեռեալ՝ ձեզ միաբանելով նախ Տիրոջ, ապա Նրա սուրբերի հետ, որպէսզի ձեր մահից յետոյ յաւիտենական յարկերում ձեզ ընդունեն որպէս սիրելիներ ու ծանօթներ: Արդ, դուք սա խորհէք եւ սրա համար հոգացէք ու եթէ կամենում էք, յիշէ՛ք ինձ՝ որպէս ձեր հօր: Թոյլ չտաք իմ մարմինը Եգիպտոս տանել, այլ դուք կը թաղէք ծերիս եւ կամփոփեք հողի տակ: Նաեւ պատուիրում եմ ձեզ, որ ձեզանից բացի թող ոչ ոք չիմանայ իմ տեղը, որպէսզի ես մեռելների յարութեան ժամանակ Փրկչից անապականութիւն ստանամ: Բաժանե՛ք իմ հանդերձները. մազեղէն իմ պարեգօտն ու լերկ կաշին կը տաք Աթանաս եպիսկոպոսին, մազեղէն քուրձը՝ Սրապիոն եպիսկոպոսին, իսկ դուք կը վերցնէք իմ այծեայ հագուստները եւ Պօղոսի՝ արմաւենուց պատրաստած պարեգօտը: Եւ արդ, ո՛ղջ եղէք, որդեակնե՛ր, քանզի Անտոնը երկինք է փոխւում ու այլեւս ձեզ հետ չի լինի»:

Այս ասելով՝ ողջունեց նրանց համբոյրներով ու զուարթ երեսով եւ ուրախանալով իր մօտ եկած սուրբ հրեշտակների տեսութեամբ՝ իր սուրբ հոգին աւանդեց Աստծուն Տիրոջ 356 կամ 357 թուականի յունուարի 17-ին՝ 105 տարեկան հասակում՝ առանց ծերութեան նշանների, որովհետեւ ո՛չ տեսողութիւնն էր վատացել եւ ո՛չ էլ ատամներից մէկն էր թափուել: Լաւ տեսք ունէր, ապրելով այդ խստակրօն վարքով՝ մարմնի բոլոր անդամները պահուել էին առաւել առողջ, քան ունեն աշխարհի մէջ փափկակենցաղ մարդիկ: Նա, ով ճգնում էր ծածուկ, իբրեւ տիեզերքի լուսատու ճրագ՝ քարոզեց ամենուր: Կենդանութեան օրօք Արեւելքից մինչեւ Արեւմուտք հնչեց նրա անունը, եւ նրա սուրբ վարքի օրինակը կանոն եղաւ բոլոր մենակեացների համար:

Եւ ինչպէս պատուիրել էր սուրբը, երկու աշակերտները լեռան վրայ ամփոփեցին երանելու մարմինը, որը մօտ 170 տարի մարդկանցից ծածուկ մնաց: Ապա Յուստիանոս Մեծի թագաւորութեան առաջին տարիներին, ով աթոռին նստեց 527 թուականին, աստուածային յայտնութեամբ գտնուեցին նրա նշխարները, բերուեցին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաք ու զետեղուեցին Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում:

Անտօն Անապատականի (251-356թթ.) վարքը հեղինակել է Ալեքսանդրիայի սուրբ Աթանաս Ալեքսանդրացի հայրապետը, որը հայերէն թարգմանուել է հինգերորդ դարում:

ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԱՆՏՕՆԻ ԽՐԱՏՆԵՐԻՑ

1. Հայր Անտօնը եղբայրներին ընդունելութեան համար ասաց. «Պէտք է եկող եղբօրն ընդունել եւ խոնարհուել նրա առջեւ, քանզի գրուած է. «Տեսար քո եղբօրը, տեսար քո Տէր Աստծուն»: Վկայ ունենք Աբրահամին, ով ընդունեց ու երկրպագեց իր հիւրերին: Նոյնն արեց եւ վկայեց Ղովտը, երբ ընդունեց հրեշտակին»:

2. Մի եղբայր հարցրեց հայր Անտօնին. «Ինչպէ՞ս հաճելի լինեմ Աստծուն»: Ծերը պատասխանեց նրան ու ասաց. «Պահի՛ր այն, ինչ կը պատուիրեմ քեզ. ուր էլ գնաս, աչքերիդ առջեւ միայն Աստծուն ունեցիր: Ինչ էլ որ անես, թող վկայութիւն ունենաս Սուրբ Գրքից: Եւ որտեղ էլ որ նստես, արագ մի՛ շարժուիր կամ բնաւ մի շարժուիր: Այս երեքը պահիր ու կապրես»:

3. Հայր Պամբօն հարցրեց հայր Անտօնին. «Ի՞նչ անեմ, որ առաւել շահ ունենամ»: Ծերն ասաց. «Յոյսդ մի՛ դիր քո արդարութեան վրայ, մի՛ վերադարձիր անցած գործերիդ եւ զգուշապէս պահիր լեզուդ, որովայնդ ու կոկորդդ»:

4. Հայր Անտօնն ասաց. «Մեր նախկին հայրերը, ովքեր ելան անապատից, նախ բժշկեցին իրենց, եղան հոգեւոր հմուտ բժիշկներ, ապա բժշկեցին նաեւ այլոց: Իսկ մենք, աշխարհից ելնելով, նախքան մեզ բժշկելը ձեռնարկում ենք բժշկել ուրիշներին: Այդ ախտը հաստատւում է մեր մէջ, եւ վերջն աւելի չար է լինում, քան առաջ էր: Ու մեզ վրայ կատարւում է Տիրոջ այն խօսքը, թէ՝ «Բժի՛շկ, բժշկիր նախ քո անձը»:

5. Հայր Անտօնն ասաց. «Միշտ աչքերիդ առջեւ պահի՛ր երկիւղը եւ միշտ յիշի՛ր քո մահուան օրն ու կապրես: Ատե՛նք այս աշխարհը եւ այն ամէնը, ինչ կայ նրանում: Հրաժարուե՛նք մարմնի հանգստից ու նրա բոլոր ցանկութիւններից, որպէսզի կեանք գտնենք Աստուծոյ մօտ: Միշտ յիշենք, թէ ի՞նչ ուխտեցինք Աստծուն, որը պիտի պահանջուի մեզանից դատաստանի օրը: Քաղցե՛նք, ո՛վ եղբայրներ, եւ ծարաւե՛նք: Մերկանա՛նք, մրսե՛նք, տքնե՛նք, ողբա՛նք ու հառաչե՛նք սրտի խորքերից: Փորձե՛նք մեզ, թէ հաճո՞յ ենք Աստծուն: Արհամարհե՛նք մեր անձերը, որպէսզի շահենք մեր

հոգիները»:
6. Մի անգամ եղբայրները հայր Անտոնի մօտ Սկիտէ գնալու համար նստեցին մի նաւ եւ պատահեցին մի այլ ծերի, ում չէին ճանաչում: Նաւում սկսեցին խօսել սուրբ հայրերի խօսքերից, գրուածքներից ու նրանց գործերից, իսկ այդ ծերը լուռ էր մնում: Երբ ցամաք հասան, եղբայրները տեսան, որ նա եւս Անտոնի մօտ է գալիս: Երբ տեղ հասան, հայր Անտոնը եղբայրներին ասաց. «Եղբայրնե՛ր, ձեզ բարի ճանապարհորդակից գտաք այդ ծերին»: Իսկ ծերին ասաց. «Ո՛վ ծեր, դու էլ քեզ բարի ճանապարհորդակիցներ գտար այս եղբայրներին»: Ծերը պատասխանեց Անտոնին ու ասաց. «Բարի են, սակայն իրենց բերաններին դուռ չունեն, եւ ով կամենայ, կարող է հեշտութեամբ մտնել դրանց ախոռը ու արձակելով տանել նրանց աւանակները»: Ծերն այսպէս ասաց, որովհետեւ ինչ խօսք որ գալիս էր նրանց բերանները, ասում էին անզգուշաբար:
7. Մի անգամ մի քանի եղբայրներ գնացին հայր Անտոնի մօտ եւ ասացին. «Հա՛յր, մի խօսք ասա մեզ, որով ապրենք»: Ծերն ասաց. «Դուք ունէք Աւետարանը, այնտեղ ամէն ինչ բարւոք գրուած է, կատարէ՛ք նրա Խօսքերը ու կապրէք»: Եղբայրներն ասացին. «Հա՛յր, նաեւ քեզանից ենք կամենում խօսք լսել»: Այնժամ ծերն ասաց նրանց. «Աւետարանում գրուած է, թէ ով հարուածի քո մի երեսին, մօտեցրու նրան նաեւ միւսը: Արէ՛ք այդպէս եւ կապրէք»: Եղբայրներն ասացին. «Դա չենք կարող անել»: Ծերն ասաց. «Եթէ չէք կարող մօտեցնել միւսը, ապա համբերէք մի կողմի հարուածին»: Ասացին. «Դա էլ չենք կարող անել»: Ծերն ասաց. «Եթէ դա էլ չէք կարող, ապա մի՛ եղէք հարուածողներից»: Ասացին. «Դա էլ չենք կարող»: Այնժամ ծերն ասաց իր աշակերտներին. «Կերակուր պատրաստէք հիւանդ եղբայրների համար, քանզի եթէ սրանք չէք կարողանում անել, ես ի՞նչ ասեմ ձեզ»:
8. Հայր Անտոնի առջեւ գովեցին մի եղբօր, իսկ նա փորձեց նրան, որպէսզի տեսնի, թէ կարո՞ղ է համբերել արհամարհանքներին: Եւ տեսնելով, որ չունի համբերութիւն, ասաց նրան. «Դու նման ես մի գիւղի, որի արտաքին կողմը զարդարուած է, իսկ ներսից յափշտակուած ու գերուած է աւազակների կողմից»:
9. Հայր Եղիայի վանքում մի եղբայր ընկաւ փորձութեան մէջ եւ մեղքի պատճառով արտաքսուեց այնտեղից: Սա գնաց լեռը՝ հայր Անտոնի մօտ, ու ամէն ինչ պատմեց նրան: Մէկ տարի այդտեղ մնալուց յետոյ հայր Անտոնը նրան դարձեալ ուղարկեց այն վանքը, որտեղից եկել էր, սակայն նրան չընդունեցին: Դարձեալ վերադարձաւ հայր Անտոնի մօտ եւ ասաց, որ չկամեցան իրեն ընդունել: Հայր Անտոնը դարձեալ ուղարկեց նրան այնտեղ ու պատուիրեց նրանց ասել. «Ծովում ընկղմուած նաւը եւ կորցրած բեռները մեծ չարչարանքներով մի կերպ կարողացայ ափ դուրս բերել, իսկ դուք կամենում էք ցամաքում նորից կործանել սրան»: Երբ նրանք լսեցին հօր այս խօսքերը, սիրով ընդունեցին նրան:
10. Հայր Անտոնը մարգարէացաւ հայր Ամոնի համար ու ասաց. «Դու պէտք է յոյժ առաջադիմես Աստուծոյ երկիւղի մէջ»: Ապա նրան սենեակից դուրս բերելով՝ ցոյց տուեց մի մեծ քար եւ ասաց. «Անարգի՛ր այս վէմին, ապտակի՛ր ու խփի՛ր»: Եւ նա այդպէս արեց: Հայր Անտոնն ասաց նրան. «Ի՞նչ ասաց քեզ վէմը»: Նա պատասխանեց. «Ոչինչ»: Հայր Անտոնն ասաց. «Այդպէս էլ դու պէտք է պատրաստուես հասնել այդ չափին», որը եւ եղաւ, քանզի հայր Ամոնն այնպէս առաջադիմեց, որ իր մեծ անմեղութեան մէջ բոլորովին մոռացաւ չարութիւնը:
11. Մի անգամ մի քանի եղբայրներ գնացին հայր Անտոնի մօտ՝ տեսիլքների եւ ցնորքների մասին հարցնելու համար, որպէսզի իմանան, թէ դրանք հաւաստի՞ են, թէ՞ դեւերի կողմից են: Երբ եկան նրա մօտ, ծերը, կանխելով նրանց, ասաց. «Ինչպէ՞ս

ճանապարհին սատկեց Իլ ծերի աւանակը»: Իսկ նրանք ասացին. «Որտեղի՞ց իմացար, հա՛յր»: Հայր Անտոնն ասաց. «Դեւերն ինձ ցոյց տուեցին»: Եղբայրներն ասացին. «Մենք էլ եկանք քեզ մօտ այդ մասին հարցնելու, քանզի շատ անգամներ անուրջներ ենք տեսնում, որոնք երբեմն ճշմարիտ են լինում, երբեմն էլ՝ ոչ, ու վախենում ենք մոլորութեան մէջ ընկնել»: Իսկ ծերն աւանակի օրինակով հաւատացրեց նրանց, որ գիշերային բոլոր ցնորքները դեւերից են:

12. Մի անգամ մի որսորդ, անապատում տեսնելով հայր Անտոնին եղբայրների հետ կատակելիս, գայթակղուեց: Իսկ ծերը, իմանալով այդ մասին, կամեցաւ հաստատել նրան եւ ասաց. «Դի՛ր քո նետը աղեղիդ վրայ ու ձգի՛ր»: Որսորդն այդպէս արեց: Ծերն ասաց. «Դարձեալ ձգիր»: Դա էլ արեց: Ծերը երրորդ անգամ ասաց. «Ձգի՛ր չափից աւելի»: Որսորդն ասաց. «Եթէ չափից աւելի ձգեմ, աղեղը կը կոտրուի»: Ծերն ասաց նրան. «Եղբա՛յր, այսպէս է նաեւ Աստուծոյ գործը. եթէ չափից աւելի նեղենք եղբայրներին, կը սպառուեն նրանց ջանքերը: Ուրեմն պէտք է երբեմն զիջել նրանց»: Այս լսելով՝ որսորդը յոյժ շահեց եւ գնաց իր տուն:

13. Մի անգամ հայր Անտոնը, խորհելով Աստուծոյ դատաստանների մասին, ասաց. «Ինչո՞ւ ոմանք ապրում են քիչ օրեր եւ մեռնում, ոմանք ապրում են շատ օրեր ու ծերանում, կամ ինչո՞ւ որոշ անիրաւներ մեծահարուստ են, իսկ որոշ արդարներ՝ աղքատ»: Եւ ահա երկնքից ձայն եկաւ, որն ասաց. «Անտո՛ն, զգո՛յշ եղիր անձիդ համար, որովհետեւ այդ դատաստաններն Աստծունն են եւ ոչ քոնը, ու պէտք չէ քննել դրանք»:

14. Հայր Անտոնն ասաց հայր Պիմէնին. «Մեծ առաքինութիւն է, երբ մարդը միշտ թւում է իր յանցանքները, դրանք դնում Աստուծոյ առաջ եւ մինչեւ իր վերջին շունչը փորձութիւններ կրում, որովհետեւ չփորձուածներից ոչ ոք չի կարող մտնել Աստուծոյ Արքայութիւնը: Քանզի ես տեսայ երկրի վրայ սփռուած թշնամու բոլոր ցանցերն ու որոգայթները եւ հառաչելով ասացի. «Ո՞վ կարող է փրկուել սրանցից»: Ու երկնքից մի ձայն լսեցի, որն ասաց. “Միայն խոնարհութիւնը կարող է անցկացնել դրանց միջով եւ փրկել»:

15. Հայր Պիմէնն ասաց. «Այսպէս էր ասում հայր Անտոնը. «Մարդու մեծութիւնն այն է, որ նա իր յանցանքները միշտ դնի Աստուծոյ առջեւ եւ մինչեւ իր վերջին շունչը սպասի փորձութիւններին, քանզի ինչպէս որ ամէնքը հառաչանքով են մտնում այս աշխարհ, նոյնպէս հառաչանքով էլ պիտի ելնեն այստեղից: Անօգուտ են բոլոր առաքինութիւններն առանց սեփական անձին միշտ մեղադրելու առաքինութեան, որից ծնւում է կեցուցիչ խոնարհութիւնը»:

ԱՆՏՕՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ԽՐԱՏՆԵՐԻՑ

1. Արդար եղիր ոչ միայն մարդկանց առջեւ, այլ ինքդ հոգով եղիր իմաստուն, խոնարհ, բարեհոգի, համբերատար, ջերմեռանդ, մարդասէր:
2. Մի՛ թող Աստուծոյ կամքը՝ մարդկանց կամքը կատարելու համար:
3. Մի՛ խախտիր Աստուծոյ պատուիրանները յանուն ընկերասիրութեան:
4. Վանի՛ր քեզանից հպարտութիւնը, իսկ ընկերներիդ ու բոլոր մարդկանց համարիր քեզանից լաւը:
5. Մի՛ եղիր երեսպաշտ կամ կեղծաւոր, առաւել եւս՝ ստախօս:
6. Մի՛ հպարտացիր քո գործերով, ինչպիսին էլ որ դրանք լինեն:
7. Բարի գործերի մասին, որ կամենում ես անել, ոչ մէկին մի՛ պատմիր, այլ լռելյան արա՛:

8. Սիրի՛ր խոնարհութիւնը, եւ այն կը քաւի քո բոլոր մեղքերը:
9. Ընտելացրո՛ւ լեզուիդ ասելու՝ ների՛ր ինձ, եւ խոնարհութիւն կը գտնես:
10. Եթէ մէկն յանիրաւի կշտամբի քեզ, մի՛ բորբոքուիր:
11. Երբէք մի՛ վրդովուիր որեւէ մէկի վրայ, ների՛ր բոլորին:
12. Շուտ մի՛ բարկացիր եւ չարութիւն մի՛ պահիր քեզ զայրացնողի դէմ:
13. Իմաստուն եղի՛ր եւ քեզ վատաբանողների շուրթերը փակի՛ր քո լռութեամբ:
14. Եթէ ցանկանում ես հաճելի լինել Աստծուն, քո անձը յանձնի՛ր Տէր Յիսուս Քրիստոսին: Նա քեզ ազատութիւն կը տայ ու հովանի կը լինի քեզ:

ՍՈՒՐԲ ԹԷՈԴՈՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱՐՔԸ

Ո՛վ երանելի եւ բարեպաշտ Թէոդոս մեծ թագաւոր.
բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր թողուլ մեզ զմեղս մեր:
Որ երկրպագողդ ես Քրիստոսի եւ հիմնադիր սուրբ հաւատոյս.
բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր թողուլ մեզ զմեղս մեր:
Որ թագաւորաց ես ի յերկրի պարծանք եւ ի յերկինս պսակեալ.
բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր թողուլ մեզ զմեղս մեր:
(Շարակնոց)

Քրիստոսապսակ արքայ Թէոդոսը, որ մեր լեզուով նշանակում է Աստուածատուր, իբրեւ մի երկրորդ Կոստանդիանոս՝ իրապէս շնորհուած էր Աստծուց՝ եկեղեցիների շինութեան եւ ուղղափառութեան հաստատութեան համար: Ազգութեամբ իսպանացի էր՝ Իտալիկէս քաղաքից, ու որդին էր Թէոդոս Ոնորիոս անունով մի պատուական մարդու: Նա զինուորագրուած էր կայսեր մօտ եւ առաջադէմ էր ամէն բանում, որի համար Վաղէս ու Վաղենտիանոս կայսրերի օրօք հասաւ ստրատելատութեան, այսինքն՝ զօրավար ընտրուեց:

Տիրոջ օգնականութեամբ այլեւայլ տեղերում մեծամեծ քաջագործութիւններ էր անում, որովհետեւ բարեպաշտ եւ Աստծուց երկիւղած մի այր էր՝ արդարակորով ու զօրաւոր ուժով: Նա իր զօրավարութեան շրջանում թէպէտ երկու անգամ զօրքով ուղարկուեց ասպատակելու Հայոց աշխարհը՝ ընդդէմ կայսրերի դէմ ըմբոստացած Արշակ արքայի, սակայն խոնարհուելով մեր սուրբ Ներսէս Մեծ հայրապետի խնդրանքներին՝ մարդասիրութեամբ եւ խաղաղութեամբ դադարեցրեց բոլոր գործողութիւնները՝ առանց հեղելու որեւէ մէկի արիւնը: Իսկ երկրորդ անգամ, երբ հայերից պատանդներ էր տանում, յորդորեց Ներսէս Մեծին՝ Վաղէսի հետ հաշտուելու համար գալ Կոստանդնուպոլիս: Սակայն գործը վատ վերջաբան ունեցաւ, որովհետեւ Վաղէսը, լինելով արիոսական ու թշնամի հայերին, 378 թուականին աքսորել տուեց սուրբ հայրապետին:

Շատ չանցած՝ Վաղէսը մեռաւ դաժան մահով, եւ արեւմտեան ու արեւելեան բովանդակ կայսրութեանը տիրեց նրա եղբօր՝ Վաղենտիանոսի որդին՝ բարեպաշտ Գրատիանոսը՝ գահակից ունենալով իր փոքր եղբայր Վաղենտիանոսին: Սրանց օրօք քաջ զօրավար Թէոդոսն աւելի ու աւելի էր աչքի ընկնում իր

սխրագործութիւններով թէ՛ արքունիքում եւ թէ՛ պատերազմական գործողութիւններում, որի համար աւագանուց շատերը նախանձեցին նրա առաջադիմութեանը ու նրա դէմ լցուեցին չարութեամբ: Ուստի առաքինի զօրավարը որոշեց միաւոժամանակ հեռանալ իր երկիրը՝ Իսպանիա, որպէսզի իր պատճառով խռովութիւններ չառաջանան, եւ իր դէմ նենգութեամբ դաւեր չնիւթուեն:

Այդ օրերին զօրացել էին գոթացիներն ու հռոմէացիների այլ բարբարոս թշնամիները, ովքեր Թրակիայի կողմերում աւերածութիւններով, կոտորածով եւ գերութիւններով մեծամեծ վնասներ էին պատճառում: Չհանդուրժելով այս ամէնը՝ Գրատիանոսը որոշեց մեծ զօրքով յարձակուել նրանց վրայ, բայց չգտնելով ընտիր զօրագլուխ՝ հրամայեց. «Այստեղ բերէ՛ք քաջ Թէոդոսին, որովհետեւ միայն նա կարող է նուաճել թշնամիներին»: Ապա մեծ պատուով կանչել տուեց նրան ու նրա ձեռքը յանձնելով ընդհանուր սպարապետութեան ողջ իշխանութիւնը՝ ուղարկեց բարբարոսների դէմ: Թէոդոսը յարձակուելով կործանեց թշնամու ողջ զօրութիւնը եւ այնպիսի ահ ու սարսափ զցեց նրանց բանակի մէջ, որ նրանք սկսեցին միմեանց կոտորել: Եւ մեծ յաղթանակ շահելով՝ շտապեց նախքան բանակի գալը անձամբ ողջոյն տանել ինքնակալին ու յայտնել Տիրոջ օգնականութեամբ պատերազմի բարեյաջող աւարտի մասին: Իսկ նախանձ բանսարկուներն սկսեցին գրգռել թագաւորին եւ ասել. «Մի՞թէ Թէոդոսի այդ անակնկալ գալուստը ցոյց չի տալիս, որ նա փախել է թշնամիների առջեւից»: Իսկ Գրատիանոսը, թէպէտ ականջ չէր դնում չարախօսներին, սակայն երկմտում էր ու մտածում, թէ ինչպէ՞ս նա կարողացաւ այդպէս արագ յաղթանակ տանել: Այնժամ Թէոդոսն իր հաւատարիմ մարդկանց հետ մարտի դաշտ ուղարկեց այդ չարախօսներին, որպէսզի հաշուեն ընկած թշնամիներին եւ տեսնեն այն աւարը, որը ժողովել էր արքունի զօրքը:

Երբ նրանք գնացին, նոյն օրը Թէոդոս սպարապետը երազով մի տեսիլք տեսաւ. Անտիոքի երանելի Մելիտոս հայրապետը, ով դեռեւս ողջ էր, բայց ում չէր տեսել, իր վրայ արքունական քղամիդ զցեց ու գլխին կայսերական պսակ դրեց: Եւ երբ այն պատմեց իր ծանօթներին, նրանք միաբերան ասացին. «Աստուածային է այդ տեսիլքը, ու շուտով դու թագաւոր պիտի դառնաս»: Սակայն Թէոդոսը չէր ձգտում թագաւորութեան, որովհետեւ նա չէր փնտրում անցաւոր փառք եւ հարստութիւն:

Երբ վերադարձան մարտադաշտ ուղարկուած մարդիկ, յայտնեցին, որ հազարաւոր թշնամիներ են ընկել, ու Թէոդոսի ահն է պատել բոլոր բարբարոսներին, որի համար Գրատիանոսն անչափ ուրախ եղաւ: Ապա տեսնելով, որ ինքը միայնակ անկարող է վարել ամբողջ կայսրութեան լայնատարած իշխանութեան գործերը, արեւելեան սահմաններում թագաւոր կարգեց Թէոդոս սպարապետին եւ 379 թուականին Վաղէսի տեղը նրան կայսր հռչակեց:

Իսկ բարեպաշտ Թէոդոսը նախքան գործի անցնելը կամեցաւ Գրատիանոսի հաւանութեամբ վերադարձնել Վաղէսի կողմից աքսորուած բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, նրանց թւում նաեւ՝ Ներսէս Մեծին, ում, աքսորավայրից Կոստանդնուպոլսի թագաւորանիստ քաղաք բերելով, մեծապէս պատուի արժանացրեց: Նմանապէս Եկեղեցու բոլոր հովիւների հանդէպ սէր ու մեծ հպատակութիւն ցոյց տալով եւ նրանց որպէս Աստուծոյ փոխանորդներ ընդունելով՝ իր անձը համարում էր որպէս նրանց ծառան: Սակայն նա յոյժ նեղսրտում ու ցաւ էր ապրում ժամանակի բազմադիմի հերձուածողների, յատկապէս արիոսականների երեսից Եկեղեցու պառակտման համար եւ այն շտկելու ու բարեկարգելու հնարներ էր որոնում:

Ապա Թէոդոսն իր թագաւորութեան առաջին տարում՝ 380 թուականին, սկիւթացիների դէմ մեծ յաղթանակ տանելուց յետոյ, երբ գնում էր Կոստանդնուպոլիս, Մակեդոնիայի Թեսաղոնիկէ քաղաքի մօտ հիւանդացաւ: Իրեն վտանգուած տեսնելով՝ շտապ կանչել տուեց քաղաքի ուղղափառ Աքիւղաս եպիսկոպոսին, ով կապադովկեան Կեսարիայից էր, մի երեւելի այր եւ բարեկամ Մեծն Բարսեղին: Նրանից խնդրեց սուրբ մկրտութիւն, որը դեռեւս չէր ստացել՝ շատերի կողմից ժամանակի դժպատեհ սովորութեան պատճառով, ովքեր փրկութեան Դեղը թողնում էին վերջին օրուան: Երբ մկրտուեց, քիչ օրեր անց կատարելապէս ապաքինուեց ու իր ամբողջ տէրութեան մէջ տարածեց մի հրովարտակ, ըստ որի՝ բոլոր վայրերում պէտք է քարոզուէր միայն նիկիական հաւատքը, եւ ուղղափառ կոչուէին միայն նրանք, ովքեր դաւանում են այդ Հանգանակը, իսկ հրաժարուողները համարուէին հերձուածողներ:

Ապա վերադարձաւ իր թագաւորանիստ քաղաքը, ուր քաղաքից դուրս նրան ընդառաջ եկաւ ու մեծ փառքով ընդունեց սուրբ Գրիգոր Աստուածաբանը, ով նոր էր նստել Կոստանդնուպոլսի պատրիարքութեան Աթոռին: Աստուածասէր թագաւորը մեծապէս պատուեց սուրբ հայրապետին եւ նրա խորհրդով ձեռնարկեց քաղաքը մաքրել արիոսականներից: Դարձեալ հրաման արձակեց, ըստ որի՝ ովքեր կամենում են բնակուել թագաւորանիստ քաղաքում, պէտք է ընդունէին նիկիական դաւանանքը, ապա թէ ոչ՝ պէտք է հեռանային: Այնժամ շատերը հեռացան, նրանց թւում՝ նաեւ եպիսկոպոսներ, ովքեր քառասուն տարուց ի վեր Եկեղեցին պահում էին Արիոսի չար աղանդի մէջ, իսկ նրանց փոխարէն կարգուեցին ուղղափառ եպիսկոպոսներ: Եւ այս ամէնի համար Թէոդոս թագաւորն ու Գրիգոր Աստուածաբանը արիոսականներից մեծ նեղութիւններ կրեցին:

Սակայն քաղաքում դեռեւս կային շատ հոգեմարտներ, ովքեր Մակեդոնի համախոհներն էին, ինչպէս նաեւ եւնոմէականներ եւ Ապողինարի կուսակիցներ: Այդ պատճառով բարեպաշտ կայսրը որոշեց եպիսկոպոսական մեծ ժողով գումարել ու մոլորեալներին ճշմարտութեան ճանապարհին դարձնել: Նա կամեցաւ ժողովի միջոցով միանգամայն դադարեցնել թեմերի եւ աստիճանների համար հովիւների միջեւ եղած բոլոր տարաձայնութիւններն ու վէճերը եւ յատկապէս վճռել Կոստանդնուպոլսի Աթոռի հարցը, որի համար ոմանց կողմից Աստուածաբանի փոխարէն առաջադրուել էր Մաքսիմոս անունով անարժան մէկը:

Եւ այդպէս 381 թուականին Կոստանդնուպոլսում գումարուեց սուրբ ժողով: Մասնակցում էին 150 հայրապետներ, որոնց մէջ երեւելի էր Անտիոքի սուրբ Մելիտոս հայրապետը: Մինչ ժողովն սկսելը, թագաւորին ողջունելու համար եպիսկոպոսները հաւաքուեցին արքունի պալատում: Արքան պատուիրել էր, որ իրեն ոչ ոք չյայտնի, թէ նրանցից ով է Անտիոքի Մելիտոս անունով պատրիարքը, «քանզի,- ասում էր,- թերեւս ես ինքս ճանաչեմ», որովհետեւ չէր մոռանում նրան, ում նախքան թագաւորելը տեսել էր տեսիլքով: Երբ բոլորին աչքի անցկացրեց, իսկոյն ճանաչեց երանելի Մելիտոսին՝ ճիշտ նոյն այն տեսքով, ինչպէս որ տեսել էր: Անմիջապէս մօտեցաւ նրան, ընկաւ պարանոցով ու անյագ փափագմամբ համբուրեց նրա սուրբ աջը: Ապա պատմեց նրան, թէ ինչպէս է մինչ թագաւորելը նախապէս տեսել իրեն եւ թէ ինչպէս է պսակուել իր ձեռքով:

Ժողովն սկսուելուց շատ չանցած՝ հիւանդացաւ երանելի Մելիտոսը, ով արդէն ծերացել էր, ու փոխուեց առ Աստուած:

Արդ, այս ժողովում հաստատուեց նիկիական հաւատքը, եւ հերքուեց հոգեմարտ մակեդոնեանների մոլորութիւնը, Կոստանդնուպոլսի Աթոռից մերժուեց նաեւ

Մաքսիմոս Ալեքսանդրացին, ով շնական կոչուող իմաստասէրների աղանդի հետեւորդ էր: Բայց որոշ չար մարդկանց պատճառով Գրիգոր Աստուածաբանը հրաժարուեց այդ պատուից, ու Աթոռին պատրիարք կարգուեց Նեքտարիոս Կոստանդնուպոլսեցին: Ուրախ եղաւ Մեծն Թէոդոսը այդ կարեւոր ժողովի բարեյաջող աւարտի համար եւ հայրերից իւրաքանչիւրին պատուով արձակեց իր տեղը, այդ թւում նաեւ սուրբ Ներսէսին՝ Հայաստան:

Սրանից յետոյ բարեպաշտ արքան չէր դադարում առանձին ժողովների միջոցով հնարներ գտնել ուղղափառ Եկեղեցուց հեռացած եպիսկոպոսներին շահելու համար: Մէկ առ մէկ քննել էր տալիս իւրաքանչիւրի դաւանաբանական թղթերն ու ստէպ-ստէպ աղօթում Եկեղեցու բարեկարգութեան համար: Այս կերպով նա շատերին շահեց, իսկ յամառողներին հեռացրեց, որպէսզի Քրիստոսի հօտի մէջ գայլեր չգտնուեն: Նրանցից մէկն էր անօրէն Եւնոմէոս աղանդապետը, որին աքսորելով հեռացրեց սահմաններից, որտեղ էլ վախճանուեց, իսկ ուղղափառութեան ջատագովներին նա մեծապէս պատուում էր սիրով ու արժանաւոր կարգով մեծարում ճշմարիտ հաւատի խոստովանութեան համար նահատակուածներին: Այդ օրերին Անկիւրիայից (Անկարա) Կոստանդնուպոլիս փոխադրեց սուրբ Պօղոս Խոստովանողի մարմինը, ով աքսորուած էր եղել փոքր Հայքի Կոկիսոն քաղաք եւ Կոստանդ թագաւորի օրօք նահատակուել արիոսականների կողմից: Նա սուրբի մարմինն ընդունեց մեծաշուք պատուով ու զետեղեց վկայարանում, որը յետոյ կոչուեց նրա անունով:

383 թուականին Թէոդոս ինքնակալը, ըստ թագաւորական օրէնքի, իրեն զահակից դարձրեց իր աւագ որդուն՝ Արկադէոսին, որն այդ ժամանակ վեց տարեկան էր: Կամենալով նրան կրթել բարեպաշտութեամբ եւ իմաստութեամբ՝ որդու դաստիարակութեան համար Հռոմի Գրատիանոս արքային խնդրեց իր մօտ ուղարկել իմաստուն մէկին: Իսկ նա Դամասոս պապի ձեռքով ընտրեց ու ուղարկեց Հռոմի եկեղեցու Արսէնիոս սարկաւագին, ով նախկինում փառաւոր իշխան էր, բայց յետոյ եղաւ սքանչելի անապատական եւ կոչուեց հայր Արսէն: Թագաւորն իր որդուն յանձնեց նրան ու ասաց. «Այսուհետեւ ինձնից առաւել դու կը լինես սրա հայրը»:

Մի օր, երբ թագաւորը եկաւ՝ տեսնելու իր որդու դաստիարակութեան ընթացքը, տեսաւ, որ Արսէնը կանգնած էր, իսկ մանուկ Արկադէոսը, զարդարուած արքայական պսակով եւ շուքով բազմած, ուսուցչից դաս էր առնում: Զայրացաւ հայրն ու ասաց. «Ինչո՞ւ է աշակերտը նստած, իսկ ուսուցիչը՝ կանգնած»: Իսկ Արսէնը պատասխանեց. «Մի՛ նեղուիր, տէ՛ր իմ արքայ, որովհետեւ ինձ համար անհնար է նստած ուսուցանել ինքնակալի որդուն՝ իր հօր աթոռակցին»: Այնժամ թագաւորը, երկարելով ձեռքը, Արկադէոսի գլխից հանեց պսակը եւ նրան հրամայեց բաց գլխով կանգնել ուսուցչի առջեւ, իսկ Արսէնին հարկադրեց, որ նստի: «Քանզի,- ասաց,- իմ որդին ինքնակալութեան արժանի կը լինի այն ժամանակ, երբ գիտութեան հետ միաժամանակ կրթուի ու գերազանց լինի նաեւ աստուածպաշտութեան եւ քաղաքավարութեան մէջ»: Յետագայում սոյն օրինակով դաստիարակուեց նաեւ Թէոդոսի կրտսեր որդին՝ Ոնորիոսը, որն այդ ժամանակ նորածին մանուկ էր:

Ապա թագաւորական քաղաքում դարձեալ հակառակութիւններ ծագեցին ուղղափառների, արիոսականների եւ պէս-պէս հերձուածողների միջեւ: Որոշ սուտ եպիսկոպոսներ իրենց չար որոմները տարածելու համար դեգերում էին Բիւզանդիայի սահմանների շրջակայքում եւ կամենում կամաց-կամաց սողոսկել թագաւորանիստ քաղաք, այնտեղ ժողովներ գումարել ու բանավիճել ուղղափառների հետ: Մտածում էին կեղծապատիր հնարքներով համոզել արքային,

որ թոյլ տայ ունենան իրենց առանձին եկեղեցին եւ ապրեն խաղաղութեամբ: Իսկ բարեպաշտ Թէոդոսը թէպէտ չզիջեց նրանց, բայց նաեւ հնազանդութիւն ունենալով եկեղեցականների հանդէպ՝ չկամեցաւ բռնութիւն գործադրել նրանց վրայ կամ հալածել, այլ կամեցաւ սիրով վարուել նրանց հետ եւ առանձին ժողով գումարելով՝ խաղաղութեամբ լուծել բոլոր հարցերը:

Այս տեսնելով՝ ուղղափառ եպիսկոպոսներն ու սուրբ այրերը, վախենալով, որ արիոսականները դարձեալ կը զօրանան, յաճախակի գնում էին թագաւորի մօտ, որպէսզի նա յանկարծ չարափառներին արտօնութիւն չտայ: Մի օր նրանց հետ թագաւորի մօտ եկաւ Իկոնիայի սուրբ Ամփիլոքիոս եպիսկոպոսը՝ Բարսեղ Կեսարացու աշակերտը: Երբ բոլոր եպիսկոպոսները խոնարհուեցին արքայի եւ նրա մօտ բազմած գահակից արքայորդի Արկադէոսի առջեւ, Ամփիլոքիոսը պաշտօնապէս միայն արքային ողջունեց, իսկ նրա որդուն՝ ոչ: Դեռ աւելին՝ սկսեց կատակել, ծաղրել ու նեղացնել մանկանը: Այս վարմունքը խիստ ծանր թուաց Թէոդոսին եւ ասաց եպիսկոպոսին. «Հա՛յր սուրբ, օրհնի՛ր ու ողջունի՛ր նաեւ իմ թագադրուած որդուն»: Եպիսկոպոսը նրան ասաց. «Դու՝ որպէս թագաւոր, բաւական ես մեզ, իսկ դրան կը պատուենք արքայի ծառաների շարքում»:

Այս խօսքերից առաւել բարկանալով՝ Թէոդոսն իր մարդկանց նշանացի ակնարկեց եպիսկոպոսին հեռացնել իր առջեւից: Այնժամ Ամփիլոքիոսն ասաց. «Արդարացի է քո ցասումը, ո՛վ բարեպաշտ ինքնակալ: Սակայն իմացի՛ր, որ նոյն կերպով Երկնաւոր Հայրն է բարկանում, երբ տեսնում է Իր Միածին Որդուն՝ անարգուած չարափառների կողմից: Եւ եթէ դու, որ մահկանացու ես, չես հանդուրժում քո որդու անպատուութիւնն ու նրան ծառաներին հաւասարեցնելը, ապա անմահ Աստուած եւ ամենակալ Բարձրեալը ինչպէ՞ս կարող է հանդուրժել Իր Միածնին արարած կոչելը»:

Եպիսկոպոսի խօսքերից թագաւորը երկիւղեց ու խորապէս զղջաց: Թողութիւն խնդրեց նրանից եւ այնուհետեւ առաւել մեծ զգուշութիւն պահեց: Քաղաքից ու նրա սահմաններից հալածեց բոլոր արիոսականներին եւ նրանց համախոհներին ու խիստ հրաման արձակեց, որ որեւէ մէկը ժողովրդի մէջ չվիճաբանի աստուածութեան խորին խորհրդի շուրջ եւ պատճառ չդառնայ անգէտների կործանմանը:

Իսկ Թէոդոսի կինը՝ Արկադէոսի ու Ոնորիոսի մայրը եւ թագուհի Փլակիդէն, իր առաքինազարդ վարքով ու աղքատների եւ հիւանդների հանդէպ մարդասիրութեամբ բարի օրինակ էր իր ամուսնու համար: Շրջելով հիւանդանոցներով՝ անձամբ սպասաւորում էր ցաւագարներին ու հոգում նրանց կարիքները, իր ձեռքերով կերակրում եւ յագեցնում նրանց, ու այդպէս ծառայում էր իբրեւ մի աղախին: Եւ այսպիսի գովելի վարքով 385 թուականին իր հոգին աւանդեց Տիրոջը՝ սուգի մատնելով բարեպաշտ Թէոդոսին ու իր որդիներին:

Երեք տարի անց՝ 388 թուականին, Անտիոք քաղաքի բնակչութիւնն ըմբոստացաւ արքունիքի դէմ: Պատճառը հարկերի ծանրութիւնն էր, որ գանձւում էին յաճախադէպ պատերազմների ծախսերի համար: Քաղաքում մեծ աղմուկ եւ խռովութիւն բարձրացաւ, ու քիչ անկարգութիւններ չեղան յատկապէս խառնիճաղանջ ամբոխի կողմից: Նրանք թագաւորի հանդէպ ատելութիւնից տապալեցին Փլակիդէ թագուհու պղնձաձոյլ արձանը, որ կանգնեցուած էր մի երեւացող բարձր տեղում, եւ անարգանքներով քարշ տուեցին հրապարակների միջով: Երբ թագաւորն իմացաւ այս յանդգնութեան մասին, լցուեց անասելի բարկութեամբ ու սպառնաց սրի քաշել ողջ քաղաքը, յետ վերցրեց Անտիոք քաղաքին ընձեռած «քաղաքների մայր» կոչուող պատիւը եւ այն շնորհեց Լաւոդիկէ քաղաքին:

Սակայն Անտիոքի իշխանները, կամենալով հաճոյանալ թագաւորին, սպանեցին գլխաւոր ապստամբներին, սուսերամերկ յարձակուեցին քաղաքացիների վրայ եւ նրանցից շատերին կոտորեցին: Մինչ այս ամէնին տեղեակ լինելը, թագաւորն իր երկու երեւելի զօրապետերին՝ Եղիբիկոսին ու Կեսարիոսին, մեծ սպառնալիքներով ուղարկեց Անտիոք: Երբ նրանք քաղաք մտան, բոլոր բնակիչները խուճապահար տագնապեցին: Այդ ժամանակ քառասնորդական պահքի օրերն էին: Սքանչելի Յովհաննէս նորընծայ ընտրեալ քահանան, ով յետոյ Ոսկեբերան կոչուեց, ողջ օրը քարոզում էր Անտիոքի Եկեղեցում, յանդիմանում էր ժողովրդին գործած չարիքների համար եւ անդադար յորդորում էր աղօթել Աստծուն, որպէսզի մարի թագաւորի ու նրա ծառաների ցասումը: Նոյնն էր անում նաեւ քաղաքի Փլաբիանոս պատրիարքը, ով, իր անձը դնելով հօտի համար, գնաց Թէոդոս ինքնակալի մօտ՝ յուսալով հաշտեցնել նրան: Փլաբիանոսին գործակից եղան նաեւ անապատի մենակեացները, ովքեր, իջնելով քաղաք, աղաչում էին Թէոդոսի ծառաներին խնայել ժողովրդին:

Մենակեացների մէջ կար Ապողոն կամ Մակեդոն անունով մի սուրբ ծեր: Սա, ճանապարհին հանդիպելով Թէոդոսի երկու զօրապետերին, ովքեր գնում էին երիվարներին հեծած, բռնեց նրանցից մէկի հանդերձի քղանցքից եւ խնդրեց, որ ցած իջնի: Զօրապետերը խոժոռուեցին, բայց շուրջը գտնուողները նրանց ասացին. «Այս ծերունին Աստուծոյ մարդն է, լսէ՛ք նրան, թէ ինչ է ասում»: Այնժամ անմիջապէս իջան երիվարներից ու խոնարհուեցին սուրբ ծերունու առջեւ, իսկ նա զօրապետերին պատուիրեց բարեխօսել արքայի մօտ եւ մեղմել նրա ցասումը: Եւ նոյն բովանդակութեամբ նրանց հետ նամակ ուղարկեց թագաւորին, որում գրուած էր. «Իմացի՛ր, ո՛վ թագաւոր, որ մենք, հանապազ մեղանչելով, մեր մարմիններում անարգում ենք մեր հոգիներին, որ ունեն Աստուծոյ պատկերը, իսկ մեր պատուիրանազանցութեամբ անարգում ենք անձամբ Աստծուն, որի համար դու չես ցաւում եւ չես բարկանում: Թագուհու պղնձէ պատկերի՝ ասես թէ քո պատկերի անարգանքի համար լցուել ես սաստիկ բարկութեամբ ու սպանում ես Աստուծոյ պատկերն ունեցող մարդկանց: Իմացի՛ր, որ պղնձէ պատկերներ շատ կարող ես ստեղծել, բայց Աստուծոյ պատկերով մարդ՝ ո՛չ երբէք, եւ ոչ էլ կարող ես գլխից մի մազ սպիտակեցնել կամ սեւացնել»:

Թագաւորը, կարդալով նամակը ու միաժամանակ լսելով Փլաբիանոս հայրապետի աղերսները, պատկառեց նրանից եւ հանդարտուեց: Հաշտուեց քաղաքի հետ ու Փլաբիանոսին խաղաղութեամբ ճանապարհելուց յետոյ սուրհանդակներ ուղարկեց՝ ժողովրդին հաշտութիւն աւետելու համար: Մեծ ուրախութեամբ լցուեցին անտիոքացիները, եւ նրանց սուգը փոխուեց ուրախութեան, իսկ երանելի Յովհան Ոսկեբերանը մեծ գովասանական քարոզ կարդաց քրիստոսասէր թագաւորի մարդասիրութեան համար:

Սրանից յետոյ Թէոդոսը պատերազմ սկսեց բրիտանացիների Մաքսիմոս բռնաւորի դէմ, ով դաւադրութեամբ սպանել էր ինքնակալ Գրատիանոսին ու բռնութեամբ տիրել Արեւմուտքին: Զօրագնդով շտապ հասաւ արեւմտեան սահմանները եւ երկու-երեք անգամ յարձակուելով՝ հարուածեց նրա զօրքերին ու իսպառ ոչնչացրեց, իսկ Մաքսիմոսին բռնեցին եւ կապուած յանձնեցին Թէոդոսին: Այսպէս արքան հեշտութեամբ գլուխ բերեց կատարեալ յաղթանակ, որը նախապէս կանխատեսել էր սուրբ մենակեաց, իմաստուն Յովհաննէս Եգիպտացին:

Երբ Մաքսիմոսին կապուած բերեցին Թէոդոսի առջեւ, կայսրը, տեսնելով նրա ողորմելի վիճակը, գթաց նրան ու սկսեց մեղմօրէն խօսել նրա հետ: Այնժամ արքունի զինուորներն արքայի մօտից շտապ հեռացրին բռնաւորին եւ ջախջախեցին նրա

գլուխը, որպէսզի արքայից ներում չգտնէր: Ապա Թէոդոսը Վաղենտիանոս կայսեր հետ գնաց Հռոմ ու նրան հաստատեց իր եղբօր՝ Գրատիանոսի Աթոռին: Մեծ տօնակատարութիւնից յետոյ վերացրեց այդ քաղաքում հեթանոսութիւնից մնացած անկարգ սովորութիւնները եւ ապա խաղաղութեամբ վերադարձաւ Կոստանդնուպոլիս:

Այդ ժամանակներում՝ 390 թուականին, Թեսաղոնիկէ քաղաքում մեծ խռովութիւն ծագեց. տեղի քաղաքացիները սպանեցին լիւրիկեցիների զօրքի Բոտերիկոս իշխանին, իսկ զօրապետերից ոմանց քարկոծեցին: Երբ լուրը, չարախօսութիւններով հանդերձ, բանսարկու մարդկանց միջոցով հասաւ Թէոդոս ինքնակալին, նա, բարկութեամբ լցուած, զօրք ուղարկեց Թեսաղոնիկէի վրայ, որը, գազանաբար ու անխտիր կերպով յարձակուելով մեծերի եւ փոքրերի, տղամարդկանց ու կանանց, ծերերի եւ մանուկների, օտարականների ու տեղաբնակների, մեղաւորների եւ անմեղների վրայ, 7000 (ըստ ոմանց էլ՝ 15000) հոգի դիաթաւալ արեց քաղաքով մէկ, շատ-շատերին վիրաւորեց ու խեղանդամ դարձրեց: Եւ մեծ սուգ պատեց ամբողջ քաղաքին:

Այս արիւնալի դէպքերից ժամանակ անց, երբ թագաւորը, անցնելով Իտալիայի Միգուլէ (Միլան) քաղաքով, կամեցաւ ըստ իր սովորութեան եկեղեցի մտնել, այնժամ նրա առջեւ ելաւ քաղաքի եպիսկոպոս եւ քաջ հովիւ, Աստուծոյ այր Ամբրոսիոսը: Նա, բռնելով արքայի ծիրանուց, նրան կանգնեցրեց տաճարի մուտքի սրահում, արգելեց ոտք դնել Աստուծոյ տան շեմին ու ասաց. «Ո՞ւր ես գալիս, ա՛յր արիւնարբու: Չե՞ս ամաչում արդեօք, ինչպէ՞ս կարող ես արեամբ շաղախուած մտնել Տիրոջ տաճարը եւ ոտք դնել սուրբ եկեղեցու գաւիթ: Մի՞թէ մոռացար այն չարիքները, որոնք գործեցիր, կամ թէ արքունի փա՞ռքդ է կուրացրել հոգուդ աչքերը, որ չերկնչես արդարադատ Աստուծոյ վերին դատաստանից: Ի՞նչ աչքերով պիտի նայես Տիրոջ սուրբ խորանին, կամ ինչպէ՞ս կարող ես անմեղների արեամբ շաղախուած ձեռքերդ բարձրացնել աղօթելու ու պղծուած ձեռքերով ընդունել Տիրոջ պատուական Մարմինը: Ինչպէ՞ս պիտի բերանդ մօտեցնես Աստուծոյ Որդու Արեանը, երբ անգթութեամբ այդքան անմեղ արիւն հեղեցիր: Դարձի՛ր, շուտ յե՛տ դարձիր, եւ թող քեզ վրայ ընկնի այն կապանքը, որն Աստուած տալիս է իմ բերանով, մինչեւ Երկնաւոր Բժշկի ձեռքով կ՚ազատուիս հոգիդ թարախալից վէրքերից»: Սարսեց թագաւորը Աստուծոյ մարդու բերանից ելնող այս հրաբուխ խօսքերից, յոյժ ամօթահար յետ դարձաւ ու դառն արտասուքներով եւ հեծեծանքներով ասաց. «Ո՛վ սուրբ հայրապետ, հնազանդ եմ քո աստուածադիր հրամաններին, ինձ ապաշխարութեան ժամանակ տուր»: Զարմացան բոլոր ներկայ գտնուողները ու չիմացան, թէ ինչի վրայ առաւել հիանային՝ սուրբ հայրապետի աներկիւղ համարձակութե՞ն, թէ՞ աստուածասէր թագաւորի խոնարհ հպատակութեան:

Անցաւ ութ ամիս, եւ մօտեցաւ Քրիստոսի հրաշափառ Ծննդեան մեծ տօնի օրը: Հաւատացեալները հոծ բազմութեամբ գնում էին դէպի Աստուծոյ Եկեղեցին, իսկ Թէոդոս արքան, փակուած պալատի իր սենեակում, դառնապէս լաց էր լինում: Ներս մտաւ Ռուփինոս զօրապետը ու տեսնելով թագաւորին ողբալիս՝ հարցրեց. «Ինչո՞ւ ես լալիս, իմ տէ՛ր արքայ»: Թագաւորը, սրտի խորքերից հառաչելով, ասաց. «Ինչո՞ւ ես հարցնում դառնացած հոգուս, մի՞թէ անտեղեակ ես իմ անտանելի ցաւերին: Ահա իմ ծառաներն ու երկրի մուրացիկներն ազատ են ամէն տեղ, իսկ ես՝ թագաւորս, կապուած եմ երկնքում ու երկրի վրայ, քանզի քաջ գիտեմ տէրունական հրամանը, որն ասում է. «Ում կապէք երկրի վրայ, թող կապուած լինի երկնքում»: Այդ պատճառով երկնքի դռները փակուած եմ տեսնում իմ առջեւ, ինչպէս որ երկրի վրայ՝

Աստուծոյ տան դռները: Այսօր տեսնում եմ, որ ահա իւրաքանչիւր ոք Աստուծոյ տուն է մտնում, որ վայելի այսօրուայ տօնի երկնաւոր պարգեւները, եւ միայն ես եմ զրկուած»: Ռուփինոսն ասաց. «Արքա՛յ իմ, ես շտապ հայրապետի մօտ կը գնամ ու կ՚աղաչեմ նրան, որ արձակի քեզ: Չէ՞ որ արդէն քո ապաշխարութեան ութերորդ ամիսն է»: Թագաւորն ասաց. «Չե՛մ հաւատում, թէ նա կը լսի քեզ, կամ քեզանից պատկառելով՝ կ՚անտեսի իր Աստուծոյ Օրէնքը, մինչեւ չտեսնի, որ լրացել է ապաշխարութեան ժամանակը: Ամբրոսիոսը չի ակնածում երկրաւոր արքայի ծիրանուց, այլ նա Երկնաւոր Թագաւորի հաւատարիմ ծառան է»:

Սակայն Ռուփինոսը, վստահ լինելով, որ կը համոզի հայրապետին, շտապ գնաց նրա մօտ, իսկ թագաւորը ճանապարհ ընկաւ նրա յետեւից՝ յոյս ունենալով, որ թերեւս Ռուփինոսը կ՚օգնի իրեն:

Երբ եպիսկոպոսը տեսաւ Ռուփինոսին եւ իմացաւ նրա գալստեան պատճառը, ասաց. «Չարիքների յորդորիչնե՛ր ու անօրէնութեան խրատատունե՛ր, դուք, որ գլխովին կցորդ էք նրա մեղքերին, ո՞ւմ համար էք եկել բարեխօսելու»: Ռուփինոսը լալագին ընկաւ եպիսկոպոսի ոտքերն ու ասաց. «Ահա թագաւորը գալիս է քո ոտքը՝ բարեխօս ունենալով այս տօնի խորհուրդը»: Իսկ սքանչելի Ամբրոսիոսը, վառուելով աստուածային նախանձախնդրութեամբ, ասաց. «Ասե՛մ քեզ, Ռուփինոս, ոչ մի կերպ չեմ կարող յանձն առնել ընդունելու նրան Աստուծոյ տան յարկում: Նա պէտք է սպասի տաճարի գաւթում այնքան ժամանակ, մինչեւ որ նրա վրայ կը տեսնեմ կատարեալ ապաշխարողի նշանները: Իսկ եթէ նա, ինքնակալութիւնը բռնակալութեան փոխարկելով, կամենայ ինձ եւս սպանել, յօժարութեամբ պատրաստ եմ մահուան, բայց չապաշխարած արիւնարբուին եկեղեցուց ներս չե՛մ թողնի»:

Այնժամ Ռուփինոսը շտապ մարդիկ ուղարկեց արքային ընդառաջ, որպէսզի զուր չգայ այդտեղ, այլ վերադառնայ պալատ, որովհետեւ եպիսկոպոսը չի ընդունի իրեն: Երբ ճանապարհին Թէոդոսը լսեց այդ մասին, ասաց. «Այդպէս չի՛ լինի, ես ինքս կը գնամ իմ հովուի ու իմ հոգու տեսչի մօտ եւ անձամբ նրանից կ՚առնեմ իմ յանցանքների արժանի նախատինքը»:

Հասնելով եկեղեցի՝ թագաւորը ներս չմտաւ, այլ կանգնեց մուտքի մօտ ու աղաղակելով՝ իրեն կապանքներից արձակում խնդրեց: Իսկ սուրբ հայրապետը, որ նստել էր եկեղեցու բեմի առջեւ, լսելով թագաւորի ձայնը, դուրս եկաւ եւ ասաց նրան. «Չյանդգնե՛ս ու չհամարձակուե՛ս բռնութեամբ Աստուծոյ եկեղեցի մտնել եւ ոտքի տակ գցել Տիրոջ Օրէնքը»: Թագաւորն ասաց. «Ո՛չ, հա՛յր սուրբ, առանց քո կամքի ոչինչ չեմ անի, միայն արձակի՛ր ինձ իմ մեղքերի կապանքներից, աղաչում եմ քեզ, ու մի՛ փակիր տաճարի դուռն իմ առջեւ, որն Աստուած բաց է պահում բոլոր ապաշխարողների համար»: Ամբրոսիոսն ասաց. «Դու ինչպէ՞ս ապաշխարեցիր, որ քեզ թոյլ տամ եկեղեցի մտնել, կամ յոյժ խոցոտուած վէրքերիդ համար ի՞նչ բժշկութեան դեղ ընդունեցիր»: Թագաւորը պատասխանեց. «Հա՛յր սուրբ, դու պէտք է տաս դեղամիջոցները եւ դու պէտք է սպեղանիներ դնես իմ վէրքերին, իսկ ես հնազանդ կամքով կ՚ընդունեմ դրանք: Կատարել եմ այն ամէնը, ինչ որ պատուիրել ես անել ութ ամսուայ մէջ՝ պահք, աղօթք ու ողորմութիւն: Եւ այժմ էլ ինչ որ կը հրամայի սրբութիւնդ, ահաւասիկ քո առջեւ եմ»: Այնժամ սուրբ հայրապետն ասաց. «Բարկասիրտ ու խիստ ես յանցաւորների հանդէպ, դիւրագայթ՝ չարախօսների եւ զրպարտիչների խօսքերից, իսկ դատաստանի իրաւունքը պահում ես ցասման թելադրանքի ներքոյ, ուր վճռատու է լինում ոչ թէ բանականութիւնդ, այլ բարկութիւնդ: Արդ, այժմ քո ձեռքով գրի՛ր մի արքունի հրաման, ըստ որի՝ թող երեք

օրուայ մէջ քննութեան ենթարկուեն բոլոր զրպարտիչների չարախօսութիւնները, որոնք ասուել են քո առջեւ: Թող մահուան արժանի յանցաւորները պահուեն երեսունից քառասուն օր, մինչեւ որ ամէն ինչ բացայայտուի: Իսկ եթէ այդքան օրեր անց այլ համոզում ունենաս, թող քեզ ծանր չթուայ ունայնացնել նախկին հրամանդ կամ մահուան դատակնիքը, որ գրեցիր: Թող այս օրէնքը գործադրուի ու հաստատութեամբ պահուի քո իշխանութեան տակ գտնուող բոլոր դատաւորների եւ իշխանների կողմից»: Այս լսելով՝ Թէոդոս արքան խիստ զարմացաւ սուրբ եպիսկոպոսի իմաստուն խրատից ու անմիջապէս յօժարութեամբ գործադրեց նրա պատուէրը. գրել տուեց հրովարտակներ եւ իր ձեռքով հաստատելուց յետոյ ուղարկեց բոլոր դատաւորներին: Այնժամ եպիսկոպոսը թագաւորին արձակեց կապանքներից ու թոյլ տուեց եկեղեցի մտնել:

Արքան ահուդողով ներս մտաւ եկեղեցու գաւիթ եւ ընկնելով երեսի վրայ՝ տաճարի յատակը թրջեց յորդառատ արտասուքներով: Աղօթում էր երեսը գետնին հպած ու ասում. «Իմ անձը հողին մերձեցաւ, Տէ՛ր, ապրեցրո՛ւ ինձ ըստ Քո Խօսքի»: Այս ասելով՝ բախում էր կուրծքը եւ խփում իր գլխին, փետում էր մազերն ու Աստծուց թողութիւն խնդրում: Ժողովուրդը, այս տեսարանից զգացուած, նրա հետ ողբալով, դառնապէս լաց էր լինում:

Հասաւ ընծայաբերման ժամը, երբ հաւատացեալները, ըստ օրէնքի, պէտք է սուրբ Սեղանին մատուցէին իրենց ընծաները: Թէոդոս արքան եւս մօտեցաւ բեմին, մատուցեց իր ընծաներն ու կանգ առաւ դասի վանդակապատ հատուածի ներքնակողմում, ինչպէս որ օրէնք էր Կոստանդնուպոլսի թագադրուած թագաւորների համար: Այս անգամ եւս երանելի Ամբրոսիոսը դարձեալ նրան խոնարհեցնելու համար ասաց. «Ըստ կանոնների՝ սովորութիւն չկայ, որ թագաւորները նստեն վանդակի ներքնակողմում: Ինչո՞ւ ես այստեղ կանգնել»: Արքան ասաց. «Սպասում եմ, մինչեւ որ ընդունեմ աստուածային Խորհուրդը»: Հայրապետն իր սարկաւագի միջոցով թագաւորին հաղորդեց. «Ներքնակողմը միայն քահանաների համար է, իսկ ժողովրդի համար՝ լինի թագաւոր թէ ծառայ, այդ տեղն անմերձենալի է: Այդ պատճառով լաւ կը լինի, որ յետ գնալով՝ հաւասարուես ժողովրդին, քանի որ արքունական ծիրանիդ ցոյց է տալիս, որ դու արքայ ես եւ ոչ թէ քահանայ: Ու բացի դրանից՝ պէտք է, որ դու խոնարհաբար կանգնես ժողովրդից յետ, մինչեւ որ իսպառ սրբուես քո բոլոր արիւնոտ գործերից: Յիշի՛ր, թէ որքան մայրեր որդեկորոյս եղան, որքան հայրեր՝ անզաւակ, որքան եղբայրներ՝ առանց եղբօր եւ որքան քոյրեր՝ առանց հարազատների»:

Թէոդոսն այս խօսքերը եւս ընդունեց խոնարհութեամբ ու յօժարութեամբ կատարեց եպիսկոպոսի հրամանը, միայն սարկաւագի միջոցով նրան փոխանցեց, թէ՝ «Ոչ թէ յանդգնութեամբ համարձակուեցի կանգնել վանդակի ներքնակողմում, այլ ինչպէս որ գիտէի Կոստանդնուպոլսի օրէնքներից, կամեցայ այդպէս վարուել: Շնորհակալ եմ սուրբ հայրապետից այս խրատի համար եւս»: Ապա թագաւորը խոնարհամտութեամբ եւ զուարթ դէմքով դուրս եկաւ ու յօժարակամ կանգնեց ապաշխարողների շարքում: Ահա թէ առ Աստուած ինչպիսի հաւատ եւ երկիւղ ունէր թագաւորը ու ինչպիսի սէր եւ հնազանդութիւն՝ Նրա քահանաների հանդէպ:

Եւ բարեպաշտութեան այս կարգը, որ Մեծն Թէոդոսը սովորեց Մեծն Ամբրոսիոսից, անփոփոխ պահեց նաեւ իր թագաւորանիստ քաղաքում, քանզի երբ վերադարձաւ Կոստանդնուպոլիս, տօնախմբութեան օրը պէտք է եկեղեցուն ընծաներ մատուցէր: Նա իր ընծան դրեց Սեղանին ու անմիջապէս շտապեց վանդակից դուրս գալ, իսկ քաղաքի Նեքտարիոս պատրիարքը, չհասկանալով նրա

այդ վարմունքի պատճառը, ստիպում եւ խնդրում էր ինքնակալին, որպէսզի ներքնակողմում զբաղեցնի իր սովորական տեղը: Այնժամ երանելի Թէոդոսը հառաչելով ասաց. «Հազիւ եմ սովորել, թէ ինչ խտրութիւն կայ քահանայի ու արքայի միջեւ, որովհետեւ ուշ գտայ ճշմարտութեան իմ վարդապետին, ուստի ինչպէ՞ս անտեսեմ նրա խրատը: Եւ ես միայն նրան (Ամբրոսիոսին) տեսայ արժանի եպիսկոպոսական կոչման»:

Այնքան հոգեշահ եղաւ Թէոդոսի համար քաջ հովուի աստուածային նախանձախնդրութիւնը, որ նրանցից յետոյ եկող իմաստուններն առակով ասում էին. «Հեշտ կը գտնուէին թէոդոսներ, եթէ գտնուէին ամբրոսիոսներ», որը հակառակ իմաստով եւս կարելի է ճշմարիտ ընդունել, այսինքն եթէ աստուածասէր թագաւորները նման լինէին Թէոդոսին, հեշտութեամբ կը գտնուէին նաեւ Ամբրոսիոսին հետեւող քաջ հովիւներ:

Թէոդոսի օրօք Հռոմի կայսրերի մօտ օրէնք դարձաւ, որ թագաւորը պէտք է նստէր դասի վանդակից դուրս՝ քահանաների ու ժողովրդի միջեւ:

Բարեպաշտ Թէոդոս արքան եկեղեցու շինութեան համար ձեռնամուխ եղաւ բազմաթիւ բարեկարգութիւնների նախաձեռնմանը, ամենուր ծաղկեցրեց ճշմարիտ աստուածպաշտութիւնը, բնաջնջելով վերացրեց տեղ-տեղ գործող մեհեանների եւ հեթանոսական պաշտամունքների մնացուկները, քանզի Մեծն Կոստանդիանոսի օրօք որոշ կռատներ քանդուել էին, որոշներն էլ միայն փակուել, բայց պահպանուել էին դրանց արձանները: Սրանք բացել տուեց ուրացող Յուլիանոսը, իսկ նրանից յետոյ եկող կայսրերը դարձեալ փակեցին: Բայց անօրէն Վաղէսը հեթանոսների համար վերստին բացել տուեց, իսկ աստուածասէր Թէոդոսն իր թագաւորութիւնից իսպառ վերացրեց ու անհետացրեց հեթանոսական պաշտամունքը՝ իր բոլոր մնացուկներով հանդերձ:

Իսկ Արեւմուտքից Եւգինէոս անուամբ ոմն բռնաւոր, ով կայսրերից իշխանութիւն ստանալու նպատակով կռապաշտութիւնից առերես քրիստոնէութեան էր դարձել, ստամբակ մարդկանց իրեն օգնական դարձնելով՝ դաւադրութեամբ սպանեց մանկահասակ Վաղենտիանոս կայսրին: Նա շատ հեթանոս համախոհներ ունենալով՝ յոյժ զօրացաւ, նշանակեց հեթանոս զօրագլուխներ, ովքեր իրեն յայտնում էին իրենց չաստուածների գուշակութիւնները, ըստ որոնց՝ նա պիտի դառնար ողջ ինքնակալութեան տիրակալը: Այնժամ Մեծն Թէոդոսն աճապարեց արշաւել դէպի Արեւմուտք եւ, խորհուրդ հարցնելով մարգարէական շնորհ ունեցող մենակեաց Յովհաննէս Եգիպտացուց, իմացաւ, որ ոչ թէ հեշտութեամբ պիտի յաղթի, այլ մեծ ճիգերով եւ իր զօրքին վտանգի ենթարկելով: Սակայն նա, ապաւինելով Աստծուն, սպառազինուեց պատերազմի համար աւելի շատ պահեցողութեամբ ու աղօթքներով, քան թէ զօրքերով եւ զինամթերքներով, ու աներկիւղ առաջ շարժուեց:

Բիւզանդիայից եօթ մղոն անցնելով եւ հասնելով սուրբ Յովհաննէս Մկրտչի վկայարանին, որն ինքն էր կառուցել, աղօթեց եւ սուրբ Կարապետի բարեխօսութեամբ Տիրոջից առաջիկայ մարտում յաջողութիւն խնդրեց:

Երբ Թէոդոսը հասաւ Գաղղիայի սահմաններին, լուր ստացաւ, որ թշնամին անհամար բազմութեամբ պատրաստւում էր պատերազմել հեթանոսական օրէնքներով, ու իրենց առջեւից տանում էին Վահագնի, այսինքն Հերակլէսի արձանը: Թէոդոսն իր զօրքերով ճակատ կազմեց նրանց բանակի դէմ: Երբ սկսուեց պատերազմը, թագաւորը, համարձակ առաջ նետուելով, մեծ կոտորած արեց թշնամու զօրքում, թէպէտ իր զօրքից էլ շատերին կորցրեց եւ վտանգի ենթարկեց արքունի բանակը: Այդ պատճառով երեկոյեան արքայի զօրագլուխները խորհուրդ

տուեցին նահանջել, յետ քաշուել մի ապահով տեղ ու ձմեռել այնտեղ, մինչեւ որ նոր զօրք հաւաքեն: Սակայն Թէոդոսն ականջ չդրեց նրանց խօսքերին եւ ասաց. «Մեր առջեւից ամենայաղթ սուրբ Նշանն է ընթանում, իսկ մեր թշնամիներն իրենց առջեւից Հերակլէսի արձանն են բարձրացրած տանում: Ուրեմն ինչպէ՞ս կարող ենք ամօթահար անել Քրիստոսի ամենազօր Խաչին»:

Ապա իւրայիններին յորդորեց ողջ գիշեր աղօթել Աստծուն: Իսկ ինքը, մտնելով մի քարայր, ուր գտնւում էր սուրբ Յովհաննէս աւետարանչի ու Փիլիպպոս առաքեալի մատուռը, դէմքը հպելով գետնին, ողջ գիշեր օգնութեան համար ջերմագին աղօթքներով եւ արտասուքներով աղաղակեց Տիրոջը: Իսկ լուսաբացին, երբ փոքր-ինչ նիրհեց, անուրջի մէջ տեսաւ սպիտակ ձիեր հեծած երկու սպիտակազգեստ մարդկանց: Երբ հարցրեց, թէ նրանք ովքեր են, իմացաւ, որ Քրիստոսի Յովհաննէս ու Փիլիպպոս աշակերտներն էին: Նրանք թագաւորին ասացին. «Ահաւասիկ Տէրը մեզ ուղարկեց՝ քեզ օգնելու համար: Մի՛ զարհուրիր թշնամու բազմութիւնից եւ այլ օգնութեան մի՛ սպասիր, քանզի վաղը քո յաղթութեան օրն է»: Նոյն տեսիլքը տեսաւ նաեւ զինուորներից մէկը ու արթնանալով՝ պատմեց զօրագլուխներին, ովքեր, գալով արքայի մօտ, յայտնեցին այդ աւետաւոր յայտնութեան մասին: Թագաւորը յոյժ ուրախացաւ եւ ուրախացրեց նաեւ բոլորին՝ ասելով, որ նոյն յայտնութիւնը եղել է նաեւ իրեն: Այսպէս բոլորը՝ սրտապնդուած եւ կազմ-պատրաստ, սպասում էին արեւի ծագելուն, որպէսզի թագաւորի հետ սկսէին պատերազմը:

Իսկ բռնաւոր Եւգինէոսն անձամբ ճակատ չմտաւ, այլ մի բարձունքի վրայ կանգնած՝ յանդգնաբար սկսեց սպառնալիքներ թափել Թէոդոսի վրայ՝ ասելով. «Նա իր մա՛հն է կամենում, իր փոքրաթիւ զօրքով ինչպէ՞ս է համարձակւում մարտի մէջ մտնել մեր մեծաթիւ զօրքի հետ»: Իսկ իւրայիններին արիացնելով՝ ասում էր. «Յարձակուէ՛ք նրանց վրայ, ձերբակալէ՛ք թագաւորին ու կապուած իմ առջեւ բերէ՛ք»:

Սկսուեց պատերազմը: Երկուստէք յարձակուեցին միմեանց վրայ, եւ երկու կողմերում մեծ կոտորած եղաւ: Երբ արքունի զօրքը տկարացաւ, սկսեց թիկունք դարձնել ու շտապ փախուստի դիմել: Այս տեսնելով՝ քրիստոսասէր արքայ Թէոդոսն իջաւ երիվարից, բանակից փոքր-ինչ առաջ անցնելով՝ կանգնեց մի բարձր քարի վրայ, որից հնարաւոր կը լինէր երեւալ ողջ զօրքին, ցած դրեց զէնքը, ընկաւ երեսի վրայ, տարածեց իր անձը Տիրոջ առջեւ եւ աղօթեց. «Դո՛ւ, Տէ՛ր Ամենակալ, գիտես, որ Քո Որդու՝ Քրիստոսի անուամբ եմ մարտի մէջ մտել այս հեթանոսների մեծ բանակի հետ, որպէսզի վրէժխնդիր լինեմ արդարութեան համար: Արդ, եթէ առաջիկայ գործս անօրէն է, թող ձախողուի, իսկ եթէ Քո կամքով է, ապա կարկառի՛ր Քո ամենազօր Աջն ու օգնի՛ր ինձ, քանզի, Տէ՛ր, Քեզ եմ յուսացել եւ Քեզ ապաւինելով եմ եկել այս մարտին: Թող երբէք հեթանոսները չասեն, թէ ո՞ւր է նրանց Աստուածը»:

Այս խօսքերով թագաւորը սթափեցրեց ու գաղափարապէս սպառազինեց բոլորին՝ թէ՛ տարէցներին եւ թէ՛ երիտասարդներին: Տիրոջ այցելութեամբ զօրացաւ արքունի գնդի սիրտն ու ձեռքերը եւ նոր հոգի առնելով՝ յարձակուեց թշնամու վրայ: Զօրապետերի մէջ կար Բակուր անունով մէկը, ով լի էր հաւատով ու անպարտելի ուժով: Նա, քաջութեամբ մտնելով թշնամու բանակի մէջ, կոտորեց շատերին եւ շատ-շատերին էլ փախստական դարձրեց: Նոյնպէս եւ միւս զինուորները, զօրացած երկնային ուժերի կողմից, իրենց առջեւից հալածեցին թշնամիներին: Բայց որպէսզի բոլորն իմանային, որ այդ յաղթանակն ի վերուստ տրուեց, հրաշք կատարուեց. յանկարծակի սաստիկ հողմ փչեց թշնամու բանակի վրայ ու յետ դարձրեց նրանց արձակած նետերը, որոնք խոցոտեցին իրենց: Դրա հետ մէկտեղ արքունի բանակի

արձակած նետերը սաստիկ սլացմամբ տեղացրեց նրանց վրայ, ցած գցեց, ցիրուցան արեց նրանց զէնքերն ու վահանները եւ հողմափոշով կուրացրեց նրանց աչքերը: Այնպիսի մեծ կոտորած եղաւ բռնաւորի զօրքի մէջ, որ ամէնքն սկսեցին աղաղակել ինքնակալ Թէոդոսին, որ խնայի իրենց ու դադարեցնի անողորմ հարուածները: Եւ արքան գթաց նրանց՝ ասելով. «Միայն թէ ձեր բռնաւորին ողջ-ողջ իմ ձեռքը յանձնէք»:

Այնժամ նրանց զօրապետերը գնացին դէպի բլուրը, ուր նստած էր Եւգինէոսը: Սա կարծելով, թէ իրեն յաղթանակի աւետիս են բերում, ասաց. «Արդեօք կարողացա՞ք Թէոդոսին ողջ բռնել»: Նրանք ասացին. «Ոչ թէ Թէոդոսին պէտք է քո ոտքը բերենք, այլ քե՛զ պէտք է տանենք նրա մօտ, որովհետեւ երկնքի ու երկրի Տէրը մարտի ընթացքն այսպէս առաջնորդեց»: Այս ասելով՝ բռնեցին բռնաւորին եւ կապուած բերեցին թագաւորի մօտ: Այնժամ Եւգինէոսը լալագին ընկաւ Թէոդոսի ոտքերն ու աղաչեց, որ գոնէ խնայի իր կեանքը: Թագաւորն ասաց. «Յիշի՛ր այն անօրէնութիւնները, որոնք գործեցիր եւ որքան մեծամեծ չարիքների պատճառ եղար, որովհետեւ դու քո բոլոր գործերում քեզ առաջնորդ ընտրեցիր Հերակլէս կուռքին՝ կարծելով, թէ նրանով կը յաղթես կենդանարար սուրբ Խաչի նշանին»:

Իսկ բռնաւորը, իր անձն ամօթապարտ խոստովանելով ու յուսալով ինքնակալի ներողամտութեանը, պաղատագին ողորմութիւն էր խնդրում: Եւ մինչ խօսքը բերանում էր, արքունի զինուորները, վախենալով, թէ միգուցէ արքան կը խնայի նրան, չսպասեցին Թէոդոսի հրամանին ու նրա ոտքերի առջեւ խողխողեցին բռնաւորին: Եւ այդպէս, 393 թուականին արքունի զօրքը յաղթանակով ու մեծ աւարով վերադարձաւ պատերազմից:

Այնուհետեւ արքան մեծ փափագով գնաց Երուսաղէմ եւ երեկոյեան ժամին մտաւ սուրբ Յարութեան եկեղեցի, որպէսզի աղօթի Քրիստոսի գերեզմանի մօտ: Եւ երբ մթութեան մէջ թագաւորն իր երեք մարդկանց հետ մօտեցաւ գերեզմանին, նոյն պահին բոլոր խորանների մարած կանթեղներն անմիջապէս իրենք իրենց վառուեցին: Այս տեսնելով՝ բարեպաշտ կայսրը մեծ բերկրանքով ցնծաց իր հոգում եւ հասկացաւ, որ Աստուած Իր գթութեամբ թողութիւն է տուել իր մեղքերին:

Իսկ դրանից յետոյ երանելի Թէոդոսը, թէպէտ միահեծան կայսր եղաւ Արեւմուտքի ու Արեւելքի վրայ, սակայն պատերազմի մեծ դժուարութիւններից եւ ճանապարհի յոգնութիւններից լարուելով, ջրգողութեան ծանր հիւանդութիւն ստացաւ: Եկաւ Միգուլէ, ուր բերել տուեց նաեւ իր երկու որդիներին, որոնցից կրտսերին՝ Ոնորիոսին, կայսր կարգեց Արեւմուտքի վրայ, իսկ անդրանիկը մնաց իր տեղում՝ Արեւելքում: Նրանց տուեց իր վերջին պատուէրները, խրատեց նախանձախնդիր լինել ճշմարիտ աստուածպաշտութեան համար, հաստատուն մնալ ուղղափառ հաւատի մէջ, ապրել անպարսաւելի վարքով, ամենուր օգնական ունենալ Աստծուն, Ով մերձ է Իրենից երկիւղածներին, ու արդարութեամբ վարել թագաւորութեան բոլոր գործերը: Նոյնպէս եւ բարեպաշտութեան յորդորներ տուեց իր իշխաններին ու զօրագլուխներին: Պատգամեց առատօրէն բաշխել եւ ողորմութիւններ անել աղքատներին, ինչպէս որ ինքն էր անում իր բոլոր օրերում, ու ամէն բան կարգաւորեց՝ յօգուտ հաւատացեալների եւ ի պայծառութիւն սուրբ Եկեղեցու: Ապա հաղորդուելով Տիրոջ պատուական Մարմնին ու Արեանը՝ պատրաստուեց մահուան՝ անվախճան Կեանք փոխադրուելու ակնկալութեամբ: Եւ Ոնորիոսի կայսրութեան տօնախմբութեան նոյն օրը, երբ աստուածասէր թագաւորին թւում էր, թէ փոքր-ինչ թեթեւացել է իր հիւանդութիւնը, յանկարծակի նորոգուեցին

ցաւերը, ու վաթսուն տարեկան հասակում՝ 395 թուականին, տասնվեց տարի թագաւորելուց յետոյ աւանդեց իր հոգին Աստուծոյ ձեռքը:

Կոստանդիանոսից յետոյ չկար նրա նման մէկը Հռոմի կայսրերի մէջ, քանզի նա փայլում էր բարեպաշտութեամբ եւ առաքինութեամբ, հաստատուն էր ուղղափառութեան մէջ ու պարիսպ էր սուրբ Եկեղեցուն, հնազանդ էր առաջնորդներին եւ երկիւղած՝ ամէն բանում: Չխօսենք նրա արիութեան, քաջութեան ու թագաւորութեան գերազանց պաշտօնատարութեան մասին, որի մասին վկայում էին նաեւ օտարները՝ ասելով, թէ Թէոդոսը ոտքի կանգնեցրեց հռոմէական ինքնակալութիւնը, որը պաշարած թշնամիների երեսից մօտ էր կործանման, որովհետեւ Աստուած նրա հետ էր: Երանելի Թէոդոսն արքունական ծիրանու տակ ունէր իր ծածուկ, մարդկանցից անյայտ մարմնաւոր ճգնութիւնները: Ապրելով իբրեւ անցաւոր պանդուխտ՝ ամէն բանում ճնշում էր իրեն՝ ամէն օր մեռնելով աշխարհի համար: Քրիստոսասէր թագաւորն արքունական թագի վրայ միշտ կրում էր սուրբ Խաչի նշանը, իսկ պատերազմների ժամանակ այն կրում էր իր սաղաւարտի վրայ: Այս բարի սովորոյթը պահեցին նաեւ նրա որդիները եւ նրանցից յետոյ եկողները:

Մեծ Թէոդոսի վախճանի օրը, ինչպէս նաեւ նրան յաջորդող սգոյ քառասուն օրերին, երանելի Ամբրոսիոսը դամբանական ճառ կարդաց բարեպաշտ ինքնակալի համար՝ արժանաւոր կերպով դրուատելով նրա առաքինութիւնները: Իսկ նրա մարմինը Արկադէոսի ու Ոնորիոսի հրամանով մեծ շուքով տարան Կոստանդնուպոլիս եւ պատուով թաղեցին սուրբ առաքեալների տաճարում:

ԵՓԵՍՈՍԻ ԵՕԹ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՆՆՋՈՒՄՆ ՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Աչ Տեառն ի վերայ արբոց Իւրոց՝
եւ փառք Իւր հանգուցեալ է յոսկերս սոցա.
եւ հոգիք սոցա՝ դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս:
(Շարակնոց)

Սուրբ Եկեղեցու եօթնարփեայ ճրագները եւ համօրէն ննջեցեալների յարութեան հանդէպ հաւատի հաստատման համար անմահութեան քնով եօթ ննջողներն ապրում էին Հռոմի կռապաշտ կայսր Դեկոսի թագաւորութեան ժամանակաշրջանում, ով կայսրութեան աթոռին նստեց Տիրոջ 249 թուականին: Նրանք երիտասարդ ու ծաղկուն հասակում գտնուող երիտասարդներ էին՝ բարետես եւ վայելուչ: Ծագումով ասիական Եփեսոս քաղաքից էին, հեթանոս ու փառաւոր իշխանների որդիներ: Նրանց անուններն էին Աքիլլէոս, Դեմետրիոս, Դիոմեդէս, Եւգինէոս, Պրոբատիոս, Շամբատ եւ Կորիկոս (ըստ ոմանց՝ Կիւրակոս):

Այնպէս եղաւ, որ Դեկոս արքան որոշեց անցնել արեւելեան կողմերով ու շրջել իր տէրութեան սահմաններում գտնուող անուանի քաղաքներով: Եկաւ հասաւ մեծ

Եփեսոս քաղաքը, ուր բնակւում էին հեթանոսներ եւ ոչ քիչ քրիստոնեաներ: Եւ որքան ժամանակ կայսրը մնաց այնտեղ, միշտ նրա առջեւ էին քաղաքի աւագանու այդ եօթ պատանիները՝ իրենց հայրերի հետ: Նրանք զարդարուած էին զինուորական համազգեստներով եւ մէջքներին ունէին ոսկէ գօտի:

Մի օր այդ կռամոլ Դեկոս արքան ու քրիստոնեաների դաժան հալածիչը, ի պատիւ Արամազդի, Ապողոնի եւ Արտեմիսի ու իր սուտ չաստուածների, պաշտամունքի մեծ տօնախմբութիւն կազմակերպեց քաղաքի հրապարակում: Նրա հրամանով հաւաքուեցին մեծերն ու փոքրերը, որպէսզի զոհաբերութիւններ ու խունկեր մատուցեն ձեռակերտ անշունչ տարրերին եւ ուրախանան իրենց անմիտ պաշտամունքի մէջ: Այդ չար գործն ստիպեցին անել նաեւ քրիստոնեաներին, որոնցից վեհերոտներն ու երկչոտները զոհեցին կուռքերին, իսկ արիները եւ հաւատի մէջ հաստատուն եղողները մատնուեցին ծանր պատիժների ու պէս-պէս տանջանքների, շատերն էլ Քրիստոսի համար խնդութեամբ յանձն առան մահը:

Եօթ պատանիները, տեսնելով երանելի նահատակների համբերութիւնը, կարեկցում էին նրանց, քանզի հոգով յարում էին քրիստոնեաներին ու համախոհ էին նրանց կրօնաւորութեան եւ պարկեշտ կենցաղավարութեան ընթացքին: Դրա համար փութալով տիրապէս հասու լինել քրիստոնէական հաւատի ճշմարտութեանը՝ միաբան հաւատացին Քրիստոսին ու գաղտնաբար մկրտուեցին: Ապա փոխելով ծնողներից ստացած իրենց անունները՝ կոչուեցին Մաքսիմիանոս (կամ Մաքսիմիոս), Մարտիանոս (կամ Մարտինիոս), Ամղիքոս, Դիոնէսիոս, Կոստանդիանոս, Անտօնինոս եւ Յովհաննէս, ու սկսեցին յարատեւել պահեցողութեան եւ աղօթքների մէջ:

Մի օր, երբ հեթանոսները դարձեալ կատարում էին իրենց գարշելի կուռքերի տօնախմբութիւնը, նրանք, խոյս տալով ամբոխից, մտան եկեղեցի: Քուրձեր հագնելով, գլուխներին մոխիր ցանելով, Տիրոջ առջեւ արտասուքներ հեղելով ու գետնատարած՝ նրանք դարձ էին խնդրում բոլոր մոլորուածների համար: Այս լուրը հասաւ Դեկոսին, ով, յոյժ բարկանալով, հրամայեց բռնել նրանց: Ու նրանք՝ իբրեւ գայլերի ձեռքն ընկած գառներ, կապուած կանգնեցին թագաւորի առջեւ:

Թագաւորն սկսեց խօսել նրանց հետ մեծ սպառնալիքներով, պարտադրեց հեռանալ Քրիստոսից եւ զոհել կուռքերին, իսկ նրանք համարձակութեամբ միաբերան խոստովանեցին՝ ասելով. «Պատրա՛ստ ենք մինչեւ մահ լինել մեր Տիրոջ եւ մեր Քրիստոս Աստուծոյ վկաները, ու ոչ ոք չի՛ կարող մեզ հեռացնել Նրա սիրուց»: Դեկոսը խիստ բարկացաւ, սակայն փորձեց խօսել քաղցրութեամբ եւ մեծամեծ խոստումներ տալով, որպէսզի թերեւս համոզի, բայց ոչ մի կերպ չկարողացաւ նուաճել նրանց: Այնժամ հրամայեց արձակել նրանց գօտիները, զրկել զինուորական պատիւներից, հարուածել ծնօտներին ու որպէս ստահակների՝ գաւազաններով ծեծել: Ապա մի քանի օր ժամանակ տուեց եւ միառժամանակ արձակեց գնալ իրենց տները, որպէսզի իրենց ծնողների դրդմամբ թերեւս զղջան եւ մտափոխուեն, ու բացի այդ՝ թագաւորն ինքն էլ պատրաստւում էր կարեւոր գործով բացակայել քաղաքից:

Իսկ նրանք, դուրս գալով թագաւորի մօտից, որոշեցին մի թաքստոց գտնել եւ պատսպարուել այնտեղ, որպէսզի իրենց պատճառով ծնողները վտանգի չենթարկուեն: Մէկը միւսին ասում էր. «Եկէք հեռանանք այս քաղաքից, քանի դեռ չի ժամանել մեր հոգիների ոսոխը»: Ապա հաւաքելով ծնողներից ստացած ու զինուորութիւնից ունեցած ոսկին եւ արծաթը, փոքր-ինչ պահելով իրենց կարիքների համար՝ ամբողջը բաշխեցին տնանկներին: Ծածկաբար գնացին դէպի Ոքրոս

կոչուող մերձակայ լեռը (որը, ըստ ոմանց, քաղաքից հեռու էր երկու մղոնի չափով, իսկ ըստ ոմանց՝ այն Ողիմպիոսի լեռներից մէկն էր, որն այժմ կոչւում է Քեշիշ դաղ) ու մտնելով մի մեծ քարայր՝ հանգրուանեցին նրա ներքին խորշերում, ուր ապրելով խստակեցութեամբ՝ արտասուալից աղօթքներով խնդրում էին Աստծուն իրենց ցոյց տալ Կեանքի Ճանապարհը եւ իրենց պահպանել աւելի շատ հոգու, քան թէ մարմնի կորստից:

Այդպէս միաժամանակ ապրեցին այդտեղ: Ամէն օր հաց գնելու ու քրիստոնեաների հալածանքների եւ այլ դէպքերի մասին տեղեկութիւններ բերելու համար քաղաք էին ուղարկում իրենց ամենակրտսեր եղբօրը՝ արագոտն Ամղիքոսին, ով իմաստուն մէկն էր ու բոլոր գործերում՝ ժիր եւ ճարպիկ: Նա երթեւեկում էր զգուշութեամբ՝ ծպտուած աղքատ մուրացիկի կերպարանքով: Մի օր քաղաք գալով՝ Ամղիքոսը լսեց, որ Դեկոսը վերադարձել է, ու իր աչքերով տեսաւ, թէ ինչպէս են նրա հրամանով խստագոյն կերպով կապանքներով եւ բանտերով, սրով ու հրով տանջում քրիստոնեաներին: Ոմանց տեսաւ կախաղանի վրայ մորթազերծ արուած, ոմանց՝ գլխատուած եւ գլուխները քաղաքի դարպասների մօտ ցցի հանուած, լսեց նաեւ, որ արքունի պատուիրակները որոնում էին իրենց: Այնժամ Ամղիքոսն աճապարեց քիչ հաց գնել եւ գաղտնաբար փախաւ քաղաքից: Ճտապ գալով ընկերների մօտ՝ նա պատմեց իր բոլոր տեսածներն ու լսածները: Նրանք սկսեցին աղօթել, որպէսզի դադարեն հալածանքները, եւ Աստծուց գոհանալով՝ ճաշակեցին իրենց սակաւիկ հացը: Ապա ասացին Ամղիքոսին. «Վաղ առաւօտեան կը գնաս քաղաք ու կը տեղեկանաս բոլոր իրադարձութիւնների մասին: Մի քանի օրուայ բաւականացնող հաց կը գնես, որովհետեւ քաղցած մնացինք, եւ շտապ կը վերադառնաս»:

Այս ասելով՝ իրենց յանձնեցին Աստուծոյ ամենախնամ տնօրինութեանն ու քուն մտան: Մարմնաւոր քնով իրենց հոգիներն աւանդեցին Աստծուն եւ իբրեւ կենդանի ննջեցեալներ Ամենակալի խնամքով պահուեցին անվնաս ու անապական:

Իսկ թագաւորը, երկար օրեր նրանց որոնելով եւ չգտնելով, սկսեց նեղել նրանց ծնողներին, որ ցոյց տան իրենց որդիների թաքստոցները: Եւ քանի որ նրանք տեղեակ էին, որ իրենց որդիները թաքնուած են Ոքղոս լեռան այրում, յայտնեցին թագաւորին: Այնժամ Դեկոսը հրամայեց մեծամեծ քարերով փակել այրի մուտքը, որպէսզի նրանք ներսում սովամահ եւ շնչահեղձ լինեն: Այս գործի վերակացուները Թէոդորոս ու Ռուփինոս իշխաններն էին, ովքեր ծպտեալ քրիստոնեաներ էին: Նրանք փակեցին այրի մուտքը եւ մի ողորկ ու հարթ կապարի վրայ գրեցին եօթ պատանիների անունները, տարեթիւը եւ թէ ինչպէս Քրիստոսի համար հալածուելով՝ նրանք այստեղ սովալլուկ վախճանուեցին: Գրութիւնը դրեցին ներսում ու դրսից փակեցին՝ մտածելով, որ թերեւս կը գայ ժամանակ, որ երբ գտնուեն նրանց ոսկորները, թող յայտնի դառնայ, թէ ովքեր են: Այս անելով՝ վերադարձան թագաւորի մօտ, եւ այնուհետեւ նրանց մոռացութեան մատնեցին:

Անցան կռապաշտ կայսրերի ժամանակները, ու Մեծն Կոստանդիանոսից սկսած զօրացաւ քրիստոնեաների թագաւորութիւնը: Եւ թէպէտ յետոյ քրիստոնեաները դարձեալ փոքր-ինչ հալածանքներ կրեցին Յուլիանոս Ուրացողի ու արիոսական Վաղէսի կողմից, սակայն երբ եկաւ Մեծն Թէոդոս կայսրը, իսպառ նահանջեց հեթանոսութիւնը, ողջ երկրում տարածուեց քրիստոնէութիւնը, ու Եկեղեցում խաղաղութիւն տիրեց: Բայց հաւատացեալների մէջ կային տեսակ-տեսակ հերձուածողներ եւ աղանդաւորներ, որոնց արթուն հովիւները աստուածասէր

թագաւորի հետ ջանք չէին խնայում նրանց յայտնելու Ճշմարտութիւնն ու կանգնեցնելու ուղիղ ճանապարհին:

Այս ժամանակներում գլուխ բարձրացրին նաեւ չարաղանդ հերձուածողներ, ովքեր ոչ միայն աշխարհական եւ աննշան մարդկանցից էին, այլեւ քահանաներից ու անուանի մարդկանցից, որոնցից էին Պաղեստինի Թէոդորոս եւ Գայիոս եպիսկոպոսները: Նրանք ասում էին, թէ այս հողանիւթ մարմինը յարութիւն չի առնում, իսկ Թէոդոս արքան ու բոլոր բարեպաշտ անձինք յոյժ մտահոգւում եւ մեծ ցաւ էին ապրում սադուկեցիների այդ յետին մոլորութեան վրայ ու անհանգստանում էին, որ յանկարծ այն չծաւալուի ժողովրդի մէջ: Բայց մարդասէրն Աստուած ողորմեց ուղղափառ եկեղեցիներին եւ մի նորահրաշ սքանչելիքով բոլորին հաստատեց համընդհանուր յարութեան հաւատի մէջ: Նա Գալիոս անունով եփեսացի մի իշխանի մէջ միտք դրեց, որ այն այրի մօտ, ուր փակուած էին պատանիները, փարախ շինի իր ոչխարների ու հօտերի համար: Շինարարութեան համար իշխանի ծառաներն օգտագործեցին քարայրի մուտքը փակող քարերը, եւ բացի այդ՝ ժամանակի ընթացքում ճեղքուածքներ առաջացած լինելու պատճառով այրը բացուած տեղեր ունէր: Սակայն ծառաներն այդ օրը ներս չմտան, այլ երեկոյեան դարձան իրենց տները:

Հետեւեալ օրը՝ առաւօտեան, Աստուած իբրեւ խոր քնից յարութիւն տուեց եօթ սուրբ պատանիներին ու կենդանացրեց: Արթնանալով՝ նրանք կարծում էին, թէ ննջել էին նախորդ գիշեր եւ այդ առաւօտ արթնացել, քանզի անապական ու անեղծ էին մնացել անգամ նրանց հանդերձները եւ ամէն ինչ, սակայն դեռեւս սրտներում մնացել էր Դեկոսի ահն ու երկիւղը: Նախկինի պէս Ամղիքոսին շտապ ուղարկեցին քաղաք՝ բաւականաչափ հաց գնելու եւ միաժամանակ տեղեկանալու, թէ Դեկոս թագաւորը ինչ է խորհում իրենց մասին: Նրանք ասում էին՝ եթէ իրենց պահանջելու համար բռնութիւն գործադրեն իրենց ծնողների վրայ, ապա Քրիստոսի համար պատրաստ են մատնել իրենց անձերը, որպէսզի իրենց պատճառով նրանք չվտանգուեն:

Ամղիքոսը, դուրս գալով այրից ու տեսնելով, որ մուտքի մօտ քարերի մեծ-մեծ կոյտեր կան, վախեցաւ, որովհետեւ նրանք բնաւ չէին իմացել քարայրի՝ քարերով խցուելու եւ վերստին բացուելու մասին, քանզի ննջած են եղել աստուածառաք քնով: Սա հեթանոսների կողմից դաւ համարելով՝ նա փակեղով ծածկեց երեսը, որպէսզի կռապաշտներից ոչ ոք չճանաչի իրեն ու զգուշութեամբ ճանապարհ ընկաւ: Արդէն մօտեցել էր քաղաքին եւ անընդհատ շուրջն էր նայում՝ տեսնելու, թէ կա՞յ արդեօք արքունի սպասաւորներից մէկը: Չտեսնելով կասկածելի որեւէ մէկի՝ հասաւ քաղաքի դռանն ու տեսաւ, որ այնքան են այլափոխուած բոլոր կառոյցները, որ անգամ սկսեց երկմտել, թէ արդեօ՞ք դա Եփեսոս քաղաքն է: Ապա տեսնելով քաղաքի պարիսպների եւ դռների վրայ Քրիստոսի սուրբ Խաչի նշանը՝ երկրպագեց ահուդողով, համակուեց ուրախալից երկիւղով եւ յոյժ սքանչացաւ այն ամէնով, ինչ տեսաւ: Նա լսում էր ժամհարի ձայնը, տեսնում, որ մարդիկ խաչակնքում էին իրենց երեսներն ու ողջոյն տալիս միմեանց՝ ըստ քրիստոնէական օրէնքի, եւ տեսնում էր նաեւ շատ եկեղեցականների, ովքեր շրջում էին ազատ ու աներկիւղ: Պտտուելով քաղաքում՝ ամենուր տեսնում եւ լսում էր նոյն բանը, որից աւելի ու աւելի էր զարմանում եւ հոգով խռովւում, քանզի տեսածը երազ էր համարում ու չէր կարողանում ուշքի գալ եւ հաւատալ դէպքերի զարմանահրաշ փոփոխութիւններին: Ու հիանալով՝ ասում էր ինքն իրեն. «Երէկ հրապարակները լի էին անհաւատների բազմութեամբ, որոնք խոշտանգում էին քրիստոնեաներին, իսկ այսօր ազատօրէն

Քրիստոս է պաշտում, եւ անհաւատների հետքն էլ չի երեւում»: Եւ կանգնեցնելով մի մարդու՝ հարցրեց, թէ արդեօք այս քաղաքը Եփեսոն է: Անցորդն ասաց. «Այո՛, որդեա՛կ»: Իսկ Ամոիքոսը շուարել էր եւ վարանումների մէջ էր: Նա մտածում էր, որ միգուցէ սրանք հեթանոսների նոր հնարքներն են՝ թաքնուած քրիստոնեաներին որսալու համար, կամ էլ մտածում էր, որ երեւի Աստուած փոխել է արքայի սիրտը, ու նա արդէն թոյլ է տալիս, որ աներկիւղ պաշտուի քրիստոնէութիւնը: Սակայն ամենուր կատարուած բազմատեսակ փոփոխութիւնների պատճառով նա չէր կարողանում հաստատուել իր խորհուրդների մէջ:

Մարդն ասաց Ամոիքոսին. «Որտեղի՞ց ես եկել, որ չես ճանաչում մեր քաղաքը», իսկ նա ապշած՝ ոչինչ չկարողացաւ պատասխանել, այլ գնաց, իր դրամը տուեց հացավաճառին եւ հաց խնդրեց: Հացավաճառը, տեսնելով իրեն անծանօթ հին ու անսովոր դրամը, զարմացաւ: Այն ցոյց տուեց շուկայում գտնուող այլ մարդկանց, սակայն նրանք եւս չճանաչեցին: Ապա հարցրեց Ամոիքոսին. «Ո՛վ մարդ, որտեղի՞ց քեզ այս դրամը: Մի՞թէ դու հին գանձեր ես գտել»: Իսկ նա աւելի ու աւելի վարանելով իր խորհուրդներում եւ տագնապելով հեթանոսների ահից՝ սկսեց աղաչել ու ասել. «Ես շտապում եմ իմ գործին հասնել, խնդրում եմ՝ տո՛ւր ինձ այդքան դրամի հաց կամ էլ վերադարձրո՛ւ դրամս»: Բայց նրան ստիպում էին, որ ասի, թէ որտեղից իրեն այդ դրամը: Լուրն անմիջապէս տարածուեց ամբոխի մէջ, եւ նա շրջապատուեց մարդկանց բազմութեամբ:

Ամոիքոսին տարան քաղաքի Անտիպատրոս բդեշխի մօտ, ով սկսեց հարցաքննել նրան, իսկ նա չէր իմանում, թէ ինչ պատասխանի, քանզի զարհուրած էր ու խիստ զարմացած: Այնժամ նրա վրայից հեռացրին փակեղը եւ տարան քաղաքի Մարինոս եպիսկոպոսի մօտ: Այնտեղ եկաւ նաեւ բդեշխը՝ իր իւրայիններով, ու յայտարարեց, թէ այս մարդը վաղեմի գանձ է գտել: Երբ եպիսկոպոսը տեսաւ դրամը եւ կարդաց դրամի վրայ գրուած Դեկոսի անունը, Ամոիքոսին հարցրեց. «Որտեղի՞ց քեզ այս դրամը, որդեա՛կ, որտեղի՞ց այն գտար»: Ամոիքոսը հեզութեամբ պատասխանեց. «Ես չեմ գտել այս դրամը: Այն երէկ շրջանառւում էր ողջ քաղաքում, եւ ի վերջոյ ես ինքս այս քաղաքում եմ ծնուել ու մեծացել»: Սակայն տեսնելով, որ իրեն չեն հաւատում, եւ ոչ ոք չի ճանաչում իրեն, համարձակուեց յայտնել իր անձը, յայտնել հօր անունն ու նրա իշխանական պատիւը: Նա ասաց. «Ես Հռուփոս կոմսի որդին եմ, որը քաղաքի աւագանուց է եւ Դեկոս արքայի զօրապետերից մէկը»: Լսողներն սկսեցին ծիծաղել նրա՝ իբրեւ ցնորուածի վրայ, իսկ ոմանք էլ կարծեցին, թէ նա խաբէութիւններ է անում: Այնժամ բդեշխն սպառնաց նրան ու ասաց. «Եթէ չասես, թէ որտեղից քեզ այս դրամը, բազում տանջանքների կ՚ենթարկեմ քեզ»: Ամոիքոսն ասաց. «Աղաչում եմ ձեզ, տեա՛ք, լսէ՛ք ինձ եւ պատասխանէք իմ հարցերին. ասացէ՛ք, այս քաղաքը Եփեսո՞սն է, եւ Դեկոս թագաւորը քաղաքո՞ւմ է, թէ՞ ոչ»: Ասում էր ու դարձեալ իր շուրջն էր նայում՝ տեսնելու, թէ բազմութեան մէջ կը գտնի արդեօք իր ծանօթներից մէկին: Նրան ասացին. «Այս քաղաքը Եփեսոսն է, եւ Դեկոս անունով թագաւոր չունենք մեր երկրում, առաւել եւս այս քաղաքում, որտեղ ի դէմս քրիստոսասէր Թէոդոս արքայի՝ իշխան է նստում»: Ամոիքոսն ասաց. «Թերեւս ցնորուել եմ ու չգիտեմ, թէ ինչ ասեմ: Երէկ ես այս քաղաքում տեսայ Դեկոսին, իսկ քաղաքին տիրում էին նրա իշխաններն ու ծառաները»: Այնժամ եպիսկոպոսն ասաց. «Ո՛վ մարդ, դու կա՛մ յիմար ես, կա՛մ էլ ուզում ես մեզ խաբել: Ո՞ւր է Դեկոսը, ում մասին այդքան հարցնում ես: Նա եղել է վաղեմի կռապաշտ թագաւորներից մէկը»: Ամոիքոսը դարձեալ կրկնեց. «Դեկոսը երէկ քաղաքում էր եւ չարչարում էր քրիստոնեաներին: Մենք փախել ենք նրա երեսից, որովհետեւ քրիստոնեաներ ենք:

Եթէ ինձ չէք հաւատում, եկէ՛ք իմ յետեւից ու ձեզ ցոյց կը տամ իմ ընկերներին, ովքեր թաքնուած են Ողբոս լեռան թաքստոցում»: Այնժամ եպիսկոպոսը բդեշխին եւ հաւաքուած մարդկանց ասաց. «Ո՛վ եղբայրներ, խորհրդաւոր է այս ամէնը ու զարմանալի նշան ամբողջ աշխարհի համար»:

Ապա միաբան հետեւեցին Ամղիքոսին: Երբ հասան այրի դռանը, եպիսկոպոսը գտաւ կապարէ այն հարթ կտորը, որի վրայ գրուած էին նրանց անունները եւ տարեթիւը: Եպիսկոպոսը, այն ընթերցելով, ապշութեամբ ցոյց տուեց բոլորին, իսկ ներսում գտնուող երանելի պատանիները, լսելով ամբոխի ոտնաձայները, կարծեցին, թէ Դեկոսի սպասաւորները եկել են իրենց բռնելու: Բայց Ամղիքոսը շտապեց բոլորից առաջ ներս մտնել ու ընկերներին պատմել դէպքերի նորահրաշ փոփոխութիւնների մասին: Ուրախութեամբ քաջալերեց նրանց եւ ասաց. «Տէրը մեծ ողորմութիւն արեց մեզ ու ցոյց տուեց Իր հրաշագործ մեծութիւնը»: Ապա ներս մտան գլխաւոր անձինք եւ տեսան սուրբ պատանիներին՝ զուարթ ու լուսափայլ դէմքերով: Բոլորը խոնարհուելով ողջունեցին նրանց եւ համբուրեցին Քրիստոսի կենդանի նահատակներին: Այնժամ նրանք սկսեցին մէկ առ մէկ պատմել այն ամէնը, ինչ կատարուեց իրենց հետ, պատմեցին նաեւ իրենց օրերին կատարուած բոլոր դէպքերի մասին: Եպիսկոպոսն այդ հրաշքի մասին շտապ տեղեկացրեց Թէոդոս թագաւորին, ով լսելով լցուեց անպատում ուրախութեամբ ու շտապ ճանապարհ ընկաւ դէպի Եփեսոս: Եկաւ մեծ բազմութեամբ, քանզի ով լսում էր եօթ պատանիների զարմանահրաշ յարութեան մասին, միանում էր նրանց: Երբ արքան մօտեցաւ, սուրբերն ընդառաջ ելան նրան: Արքան, տեսնելով երանելի պատանիներին, ովքեր փայլում էին անճառելի գեղեցկութեամբ եւ ունէին հանդերձեալի կերպարանքը, յոյժ սքանչացաւ: Ապա իջնելով երիվարից՝ ողջունեց նրանց ու ընկնելով նրանց պարանոցով՝ համբուրեց ջերմ արտասուքներով:

Սրանից յետոյ երանելիները ներս մտան եւ նստեցին այն տեղում, ուր քուն էին մտել: Նրանք սկսեցին խօսել թագաւորի հետ ու ասել. «Թող խաղաղութեամբ ապրի քո թագաւորութիւնը, արքա՛յ: Իմացի՛ր, որ քո եւ բոլոր բարեպաշտների համար Աստուած մեզ յարութիւն տուեց իբրեւ մեռելներից, որպէսզի սրանով բոլորը ճանաչեն Արարչի զօրութիւնը ու իմանան, որ կայ հող դարձած մարդկային մարմինների յարութիւն: Քանզի նոյն Տէրն է, որ մեզ այսքան ժամանակ անց յարութիւն տուեց մահուան նմանուող այս քնից եւ պէտք է յարութիւն տայ գերեզմաններում բոլոր ննջածներին»: Այս ասելով՝ եպիսկոպոսից օրհնութիւն խնդրեցին ու խոնարհեցնելով իրենց գլուխներն Աստուծոյ առջեւ՝ Աստուծոյ հրեշտակների ձեռքն աւանդեցին իրենց հոգիները:

Բոլոր ներկաները մեծ հիացմունքով փառաւորեցին Աստծուն: Այնժամ թագաւորը հրամայեց վերցնել մի մեծ տապան, զարդարել տուեց ոսկով ու արծաթով, ուր եւ զետեղեցին Աստուծոյ եօթ երանելի սուրբերի մարմինները: Ու մինչ պատրաստում էին տապանը, այդ գիշեր թագաւորին երեւացին սուրբերը եւ ասացին. «Աստուած մեզ յարութիւն տուեց հողից եւ ոչ թէ ոսկուց կամ արծաթից: Ուստի ամփոփիր մեզ այն հողում, որտեղ յարութիւն առանք, որպէսզի Փրկչի միւս գալստեանը դարձեալ այդտեղից յարութիւն առնենք»: Յաջորդ օրը արքայի հրամանով փորեցին այդ տեղը, ուր եւ դրեցին սուրբերի մարմինները: Այդ տեղում եկեղեցի կառուցեցին, զարդարեցին ոսկեզօծ ապակիներով ու կատարեցին սուրբերի յիշատակի մեծահանդէս տօնը: Ապա թագաւորը, մեծապէս գոհանալով Աստծուց, ուրախութեամբ վերադարձաւ Կոստանդնուպոլիս: Եւ ովքեր լսում էին

սուրբերի այս պատմութիւնը, հաստատում էին յարութեան հանդէպ հաւատի մէջ, որն անպատմելի խնդութիւն էր ուղղափառների համար:

Ըստ ճշգրիտ ժամանակագրութեան՝ այս ամէնը տեղի ունեցաւ Տիրոջ 389 թուականին՝ Մեծն Թէոդոսի թագաւորութեան տասնմեկերորդ տարում, Դեկոսից 140 տարի անց, ինչպէս որ գրուած է մեր Յայսմաւուրքում: Այդ իսկ խորհրդով Եփեսոսի սուրբ մանուկների տօնը յիշատակւում է Թէոդոս թագաւորի հետ, բայց սրանից զատ՝ եօթ ննջողների տօնն առանձին յիշատակւում է նաեւ այլ տեղում. առաջինը՝ որպէս նրանց ննջման յիշատակ, իսկ երկրորդը՝ որպէս նրանց յարութեան յիշատակ:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ, ՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵՒ ՏԱՍՆՉՈՐՍ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ.
յաղթող սպառազէն եւ քաջ նահատակ. երագահաս սուրբդ Սարգիս՝ շնորհաց օթեւան.
բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:
Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ եւ մենամարտիկ.
սիրով Անմահին խաչեալ յաշխարհի.
երագահաս սուրբդ Սարգիս՝ խաչիւ պսակեալ.
բարեխօս լեր վասն անձանց մերոց:
Արեգական արդարութեան մեծ կարապետ՝ պայծառ արուսեակ.
ցոլացեալ յարեւմտից ի յելս արեւու.
երագահաս սուրբդ Սարգիս՝ անշէջ ճառագայթ.
բարեխօս լեր վասն անձանց մերոց:
(Շարակնոց)

Ծննդեան թիւը՝ անյայտ:
Նահատակութիւնը՝ 362 կամ 363 թ. Պարսկաստանի Դաղման քաղաքում:

Քրիստոսի քաջ զօրականը եւ անյաղթ վկան, գերագոյնը թագաւորներից եւ իշխաններից, աշխարհի իշխան սատանային գլխովին յաղթած սուրբ Սարգիսը, ով կոչւում էր նաեւ մար Սարգիս կամ տէր Սերգիոս, ազգութեամբ յոյն էր՝ Հայաստանին սահմանակից գամիրների երկրից՝ կապադովկիացիների Կեսարիայից եւ ապրել է Մեծն Կոստանդիանոսի ու Տրդատի ինքնակալութեան տարիներին:

Երբ ողջ հռոմէական տէրութեան մէջ տարածուեց քրիստոնէական հաւատի լոյսը, եւ համայն տիեզերքով մէկ պայծառացան եկեղեցիները, այս երանելի Սարգիսը,

լինելով զարմանալի բոլորին եւ յոյժ հռչակաւոր, իր բարեպաշտ հաւատով Կապադովկիայում ծագեց իբրեւ լուսապայծառ մի աստղ: «Քանզի,- ինչպէս հին վկայաբանն է ասում,- Սարգիսը լի էր շնորհներով եւ Աստուծոյ Հոգով: Ամէն բան, ինչ որ խնդրում էր, Աստուած նրան տալիս էր: Այս Սարգիսը քրիստոնեայ էր եւ ամբողջ սրտով ու ամբողջ զօրութեամբ սիրում էր Աստծուն: Նա լի էր Սուրբ Հոգով, սիրելի էր Աստծուն ու ամէն բան, ինչ որ անում էր, Աստուած դէպի բարին էր առաջնորդում»: Իսկ թէ նա ինչպիսի մէկն էր, գրում է. «Նա զօրական էր՝ սպառազինուած զինուորական կարգով, կարգուած մի ամբողջ զօրագլխի վրայ, իմաստուն եւ հանճարեղ, մերձ բոլոր դատաւորներին եւ իշխաններին»: Այսպիսի եւ առաւել քան այսպիսի խօսքերով է նրա մասին գրում նաեւ պանծալի վկայաբան Շնորհալին եւ ասում. «Նա Կապադովկիայում արքունական հրամանով թագաւորի զօրքում զինուորական աստիճան ունէր: Այլազգիների դէմ մղուող պատերազմներում իրեն համադաս զինուորակիցներից շատերից գերազանց գտնուեց այնքան, որ նրա քաջութեան համբաւը հասաւ թագաւորին»:

Այդ ամէնի համար ինքնակալ Կոստանդիանոսը Սարգսին մեծամեծ պատիւներով հանդերձ շնորհեց ստրատելատութեան կոչում, այսինքն՝ այդ կողմերում տեղաբաշխուած զօրքերի զօրավարութեան պաշտօն: Նրան պատուական դարձրեց այդ սահմաններում գտնուող իշխանների եւ դատաւորների մէջ ու այնքան մեծ իշխանութիւն տուեց, որ նրան պէտք է հպատակուէին բոլոր մերձակայ գաւառներն ու գաւառապետերը, թէ՛ քրիստոնեայ, թէ՛ հեթանոս, եւ բոլորը պէտք է հնազանդուէին նրա հրամաններին:

Իսկ Աստուծոյ սքանչելի այրը, հասնելով այսպիսի մեծ պատուի եւ իշխանութեան, այն բնաւ չէր օգտագործում իր շահի ու սնոտի փառքի համար, այլ այդ ամէնը ծառայեցնում էր ի նպաստ հոգեւորի եւ աստուածայինի: Շրջում էր իր իշխանութեան տակ գտնուող այդ նահանգների քաղաքներով եւ գիւղերով, մաքրում էր այդ տարածքները կռապաշտութիւնից, խափանում էր կուռքերին մատուցուող զոհաբերութիւնները, որոնք դեռեւս կատարւում էին բազմաթիւ տեղերում եւ բոլորի առջեւ բացում աստուածգիտութեան լոյս ճանապարհը, որը Հոգու իմաստութեամբ քարոզում էր անձամբ, քանզի մանկուց քաջատեղեակ էր Հին եւ Նոր Կտակարաններին: Եւ այդպէս, ոմանց խօսքով էր ձգում Աւետարանի ուռկանի մէջ, ոմանց էլ՝ օրինակ լինելով իր բարեպաշտութեամբ ու մարդասիրութեամբ, քանզի յաճախակի ողորմութիւններ էր անում եւ իր ունեցուածքից առատապէս բաշխում աղքատներին ու կարօտեալներին: Իր ունեցած իշխանութեամբ, սպառնալով կռապաշտներին վտարել երկրից, դարձնում էր նրանց մոլորութիւնից դէպի Ճշմարտութիւնը, իսկ նրանց, ովքեր սիրում էին անգիտութեան խաւարը եւ ատում աստուածպաշտութեան լոյսը, հեռացնում էր երկրից, որպէսզի նրանք գայթակղութիւն չլինէին քրիստոնեաների համար: Հիմնովին աւերում էր մեհեանները, կործանում բագինները եւ նրանց փոխարէն կանգնեցնում տէրունական սուրբ նշանը, կառուցում Աստուծոյ եկեղեցիներ եւ սուրբերի վկայարաններ: Մեծացնում էր քահանաների եւ Քրիստոսի սպասաւորների դասը, որի համար անասելի ուրախութիւն էր տիրում աստուածապաշտներին եւ մեծ սուգ՝ հեթանոսներին, ու հէնց իսկ՝ բանսարկուին: Իսկ ինքը՝ երանելին, մեծապէս ուրախ էր Քրիստոսի փառաւորման եւ սատանայի պարտութեան համար: Այդպէս երկար տարիներ ապրելով այս գովելի վարքով եւ Աստուծոյ պատուիրաններով, սրբութեամբ, արդարութեամբ ու առաքինութեամբ յոյժ երեւելի եղաւ: Օրըստօրէ պատուելի էր դառնում նաեւ արքունիքում եւ

պայծառանում փառքով, սակայն ամենակարեւորը, նա պարսպուած էր Աստուծոյ ամրաձածուկ Աջով եւ յաջողութիւն էր ունենում բոլոր բարի գործերում:

Իսկ բարիատեաց բանսարկուն, տեսնելով երանելի Սարգսի այս բարեպաշտ ընթացքը, չարանում էր նրա դէմ եւ ջանում զանազան փորձութիւններով հետ պահել նրան հոգեւոր առաջընթացից, սակայն չէր կարողանում, որովհետեւ դեռեւս կենդանի էին հաւատի սիւն Կոստանդիանոս կայսրը, եւ նրան յաջորդող որդիները՝ Կոստանդն ու Կոստասը: Սակայն նրանց ինքնակալութեանը յաջորդեց չար Յուլիանոսը, ով կոչւում էր Բառաւադիս կամ Աբօսդադիս, այսինքն՝ ուրացող, ուխտազանց եւ ապստամբող՝ ընդդէմ սուրբ հաւատի: Սա չար դեւի անօթ եղաւ եւ վերացրեց Եկեղեցու խաղաղութիւնը, քանզի մտադրուել էր բոլոր քրիստոնեաներին դարձնել կռապաշտութեան կամ էլ նրանց բոլորին վերացնել երկրի երեսից: Սրա համար մեծապէս ուրախ եղան մոլորուած հեթանոսները, եւ ուժ առնելով՝ հարձակուեցին քրիստոնեաների վրայ. աւար վերցրին, աւերեցին եկեղեցիները, հալածեցին Եկեղեցու սպասաւորներին, վերականգնեցին աւերուած մեհեանները եւ բոլորին ստիպեցին Ուրացողի հրամանով զոհել կուռքերին, որի համար շատ քրիստոնեաներ՝ եկեղեցականներ, զինուորներ եւ հասարակ ժողովրդից շատերը նահատակուեցին պէս-պէս տանջանքներով եւ շատերն էլ, թողնելով իրենց երկիրը, հեռացան իրենց հայրենի հողից:

Տեսնելով այս ամէնը՝ քաջ Սարգիսը մտատանջւում էր, անդադար որոնում էր Աստուծոյ կամքը եւ պաղատում էր Նրան յայտնել իր առաջիկայ ընթացքը: Եւ ահա Տէրը տեսիլքով յայտնուեց նրան եւ ասաց. «Ո՛վ Սարգիս, ժամն է, որ ելնես աշխարհից, հեռանաս քո ազգից ու երկրից, ինչպէս Աբրահամ նահապետը, եւ գնաս այն երկիրը, որ քեզ ցոյց կը տամ, քանզի այնտեղ դու պէտք է ընդունես մարտիրոսութեան պսակը»: Եւ մինչ երանելին խորհում էր տեսիլքի մասին, նոյն օրը լուր ստացաւ, որ Յուլիանոսը մեծ պատրաստութիւն է տեսնում՝ արշաւելու դէպի Արեւելք եւ պատերազմելու Պարսից արքայի դէմ՝ հաւատալով իր կուռքերի այն սուտ պատգամներին, թէ պիտի հզօրանայ, ինչպէս Ալեքսանդր Մակեդոնացին եւ նրա նմանութեամբ տիրի աշխարհի բոլոր թագաւորութիւններին:

Այնժամ բարեյաղթ Սարգիս զօրավարը հասկացաւ, որ հասել է այն ժամը, որը ցոյց տրուեց իրեն տեսիլքով: Եւ քանի որ անհնար էր, որ նա գործակից լինէր Յուլիանոսին կամ ականատես լինէր այն բոլոր չարիքներին, որ Յուլիանոսի արշաւանքներից պիտի լինէին յատկապէս Եկեղեցուն, պատրաստուեց դիմել դէպի սահմանակից քրիստոնեայ պետութիւն՝ Հայաստան: Թողեց Կապադովկիայում ունեցած իր հայրական ժառանգութիւնը, իսպառ հրաժարուեց իշխանական ճոխութիւնից, երեւելի փառքից, մեծաթիւ զօրքերի հրամանատարութիւնից եւ առօրեայ կեանքի բոլոր վայելչութիւններից: Ըստ մեծահարուստին ուղղուած տիրաձայն հրամանի՝ վաճառեց իր ունեցուածքը, բաշխեց կարօտեալներին, թեթեւացաւ բազմավրդով հոգսերի ծանրութիւնից եւ այդ ամէնի փոխարէն վերցնելով Քրիստոսի խաչը՝ գնաց իր Փրկչի հետեւից: Իրեն ճանապարհորդակից դարձրեց նաեւ մօրից որբացած իր որդուն, ով իր քաջութեամբ եւ առաքինութիւններով չզիջելով հօրը՝ գործով պիտի ընդունէր վկայական Մարտիրոս անունը: Նրանք երկուսով պաղատում էին Աստծուն իրենց առաջիկայ ընթացքի համար եւ աղօթում՝ ասելով. «Աստուա՛ծ ամէնքի եւ Տէ՛ր բոլոր եղականների, որ Քո նախախնամ ողորմութեամբ ստեղծեցիր բոլոր արարածներին եւ քաղցրութեամբ ես նայում ամէնքին: Դու գթառատ ես Քեզնից երկիւղածների հանդէպ, Քո ողորմութեամբ եղար նախկին արդարների հետ եւ փրկեցիր նրանց իւրաքանչիւր

փորձութիւններից: Մենք եւս, որ հալածւում ենք Քո անուան համար, ընկնում ենք Քո առջեւ եւ հայցում Քեզնից, ճանապարհորդակի՛ց եղիր մեզ այս ճանապարհին, որ պատրաստւում ենք գնալ, մինչեւ որ հասցնես մեզ Քո երկնաւոր Հօր օթեւանները»:

Ապա ճանապարհ ընկնելով՝ դիմեցին Հայոց աշխարհ՝ Տիրան արքայի մօտ, ով որդին էր Տրդատի, սա էլ՝ Խոսրովի: Տիրանը պատուասիրաբար ընդունեց քաջ Սարգսին եւ միառժամանակ նրան պահեց իր մօտ: Իսկ Յուլիանոս Ուրացողն անհամար զօրքով շարժուեց դէպի Պարսկաստան եւ նախ Անտիոք հասնելով՝ չարչարեց տեղի քրիստոնեաներին: Այդ չար լուրերը հասան ամենուր եւ տագնապեցրին բոլորին, որի համար շատերը փախստական դարձան եւ թաքնուեցին խոր ձորերում ու ժայռերի ծերպերում:

Այս լուրը տարածուեց նաեւ Հայոց աշխարհում, եւ ժողովուրդն այնքան խռովուեց անօրէնի երկիւղից, որ Տիրան արքան վարանեց իր մօտ պահել Սարգսին, քանզի մտածում էր, որ եթէ Յուլիանոսը նրա տեղն իմանալով պահանջի նրան, չտալու դէպքում խռովութիւն կը ծագի իրենց երկրների միջեւ: Այնժամ երանելի Սարգսին խորհուրդ տուեց խոյս տալ եւ գնալ Պարսից Շապուհ արքայի մօտ: Եւ սա հէնց այնպէս չեղաւ, այլ Աստուած Իր տնօրինութեամբ նրան տանում էր այնտեղ, որը ցոյց էր տուել տեսիլքով, եւ ուր պէտք է վկայութեամբ պսակուէր ի Քրիստոս: Ուստի Սարգիսը, ելնելով Հայոց աշխարհից, իր որդու հետ դիմեց Պարսկաստան, սակայն լսելով, որ Շապուհ արքան Տիզբոնից անցնում է Խորասան, որոշեց նրան ընդառաջ գնալ: Նրան տեսնելով՝ Շապուհը մեծապէս ուրախ եղաւ, որովհետեւ լսել էր նրա քաջագործութիւնների մասին: Նաեւ երբ Սարգիսն ասաց, որ ինքը հեռացել է Հռոմից Յուլիանոսի պատճառով, ընդունեց նրան մեծապատիւ փառքով եւ կարգեց նրան իր առաջին զօրագլուխների հետ, ապա տեսնելով նրա արիութիւնն ու հաւատարմութիւնը՝ նրա ձեռքը մեծաթիւ զօրք յանձնեց: Աստուած նրան յաջողութիւն էր տալիս այլազգիների դէմ մղած բոլոր պատերազմներում, որի համար սիրելի դարձաւ թագաւորին եւ նրա մեծամեծներին: Սակայն երանելին բոլոր յաղթանակները վերագրում էր ոչ թէ իր անձի քաջութեանը, այլ Աստուծոյ զօրութեանը:

Զինուորական ծառայութեան մէջ զբաղուածութեան հետ մէկտեղ նա երբէք չէր դադարում ըստ տեղի ու ժամանակի յարմարութեան Աստուծոյ առջեւ յարաժամ աղօթքներ ու ընծայաբերութիւններ անել: Եւ որպէսզի իր զինուորները զոհեր չմատուցէին կուռքերին, մորթել էր տալիս անասուններ եւ առատօրէն բաշխում աղքատներին ու կարօտեալներին: Այս մասին վկայաբան Շնորհալին գրում է. «Իր անձի սրբութեան համար ոչ միայն բանաւոր պատարագ էր մատուցում, այլեւ իր եւ նախնիների սովորութեամբ մորթելով անբան կենդանիներին՝ բաշխում էր աղքատներին ու կարօտեալներին: Նոյնն ուսուցանում էր անել բոլորին եւ յորդորում էր քաղցածներին կերակրելու համար մշտապէս զոհաբերել անասուններ՝ որպէս ընծայաբերութիւն Աստծուն»:

Այդ օրերին լուր հասաւ, թէ Յուլիանոսի զօրքից մի մեծ գունդ ասպատակելով աւերել է Տաճկաստանը, որը գտնւում էր Շապուհի տէրութեան ներքոյ եւ սահմանակից էր հռոմէացիների երկրին: Սահմանների պահպանութեան համար արքան սուրբ Սարգսին ուղարկեց Տաճկաստանի կողմերը, իսկ նրա որդուն պահեց իր մօտ: Սուրբն իր զօրագնդով հասաւ վերը նշեալ տեղը եւ այնտեղ երեք ամիս մնալով՝ ճակատ կազմեց Յուլիանոսի զօրքի դէմ ու պահպանեց երկիրը թշնամու ասպատակութիւնից: Այս տեղեկութիւնը թողել է վկայագիր Շնորհալին: Իսկ ըստ

մէկ այլ վկայաբանի՝ Տաճկաստանի թագաւորը կամ աւագ նախարարը, ապստամբելով պարսիկների դէմ, մեծ զօրագնդով եկել հասել էր նրանց սահմանին եւ պատրաստւում էր ներխուժելով գերել ու աւերել երկիրը, որի համար Սարգիսը զօրքով դուրս էր եկել նրա դէմ:

Արդ, յարձակումներ էին լինում թէ՛ հռոմէացիների, թէ՛ այլազգիների կողմից: Երբ սրանք լսեցին, որ քաջ Սարգիսը դուրս է եկել իրենց դէմ, մեծաթիւ զօրքով ճակատ կազմեցին ընդդէմ Սարգսի սակաւաթիւ զօրքի եւ կամեցան պատերազմել ըստ օրէնքի: Իսկ սուրբ Սարգսի զօրքը, տեսնելով լաւ սպառազինուած թշնամու անհամար բազմութիւնը, յոյժ զարհուրեց եւ ասաց. «Մենք կորստեան կը մատնուենք նրանց ձեռքով, քանզի անհնար է մեր սակաւաթիւ զօրքով պատերազմել ընդդէմ հազարաւոր թշնամիների»: Նրանցից ոմանք անգամ ասում էին. «Հեռացի՛ր այստեղից, Սարգի՛ս, եւ մեզ կորստեան մի՛ մատնիր քեզ հետ»:

Իսկ երանելին, տեսնելով թշնամու ահից երկիւղած իւրայիններին, պատեհ գտաւ նրանց յայտնել սուրբ հաւատի ճշմարտութիւնն ու զօրութիւնը եւ ցոյց տալ հեթանոսական մոլար պաշտամունքի ստութիւնն ու տկարութիւնը: Առաքինի այրը, հաստատուած լինելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ հաւատի եւ աստուածային սիրոյ մէջ, բացեց իր շնորհաբուխ բերանը եւ ասաց. «Եղբայրնե՛ր եւ զինուորակիցնե՛ր, եթէ ձեր ամբողջ սրտով հաւատաք երկնքի եւ երկրի Արարչին, ապա ձեր սրտերը երբէք չեն զարհուրի մեր թշնամու բազմութիւնից, այլ իմ ճշմարիտ Աստուծոյ օգնականութեամբ ձեզանից մէկը կը հալածի հազարին եւ երկուսը՝ կՅընկճի բիւրաւորներին: Արդ, եղբայրնե՛ր, հաւատացէ՛ք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը եւ մի՛ զարհուրէք: Հաւատացէ՛ք եւ աղօթէ՛ք մեր Տէր Աստծուն, եւ Նա կ'առաքի Իր հրեշտակին, որպէսզի հալածի մեր թշնամիներին: Եւ այս կ'ասեմ, եթէ հաւատաք ձեր ամբողջ սրտով, ես երաշխաւոր կը լինեմ Քրիստոսի առջեւ, որպէսզի ձեզնից ոչ ոք չընկնի, ձեր ահը պատի նրանց, եւ բոլորը փախչեն ձեր առջեւից: Ապա թէ ոչ՝ կրկնակի կորուստ կայ ձեր առջեւ՝ մարմնի եւ հոգու: Ձեր կողմից աստուածներ կոչուածները չեն կարող օգնել ձեզ, քանի որ զօրութիւն չունեն: Չեն կարող օգնել լուսատուները, որոնց դուք պաշտում էք, ո՛չ տարերքները, ո՛չ էլ ձեր կուռքերի պատկերները, որոնց պատւում էք, քանզի նրանք ականջներ ունեն, բայց չեն լսում, աչքեր ունեն եւ չեն տեսնում, ռունգեր ունեն, բայց չեն հոտոտում, ձեռքեր ունեն, բայց չեն շօշափում, ոտքեր ունեն, բայց գնալ չեն կարող եւ ոչ էլ շունչ կայ նրանց բերաններում: Եւ նրանց արարողներն ու նրանց յուսացողները նրանց նման են լինում»:

Այնժամ զօրքից նրան լսողները հարցրին. «Իսկ ո՞ւր է քո Աստուածը, մա՛ր Սարգիս: Եթէ մեր կուռքերն աստուածներ չեն, ապա մեզ ցո՛յց տուր քո ճշմարիտ Աստծուն, որպէսզի տեսնելով՝ հաւատանք Նրան»: Երանելին պատասխանեց. «Իմ Աստուածը բոլոր գոյութիւն ունեցողների Աստուածն է՝ երեւացողների ու աներեւոյթների, եւ բնակւում է անմատոյց լոյսի մէջ»: Այսպէս սկսելով՝ նրանց քարոզեց ճշմարիտ հաւատը, Ամենասուրբ Երրորդութեանը եւ մի Աստուածութեանը: Ըստ կարգի՝ պատմեց Արարչի սքանչելի գործերի մասին, թէ ինչպէս բարերարութեամբ ստեղծեց մարդուն Իր պատկերով, թէ ինչպէս է խնամարկում բոլոր արարածներին: Խօսեց նաեւ մարգարէութիւնների, Աստուծոյ Բանի փրկագործ մարդեղութեան, Նրա կենսաբեր տնօրէնութեան, հրաշագործութիւնների, խաչելութեան, թաղման, յարութեան, փառքով երկինք վերանալու եւ մարդկային ազգին ըստ գործերի դատելու համար նոյն մարմնով դարձեալ Գալստեան մասին: «Արդ, սա է ճշմարտութիւնը, որին եթէ հաւատաք ձեր

բոլոր սրտով եւ հեռանաք ձեր մոլար պաշտամունքներից, կ՚ընդունէք յաւիտենական կեանքը մարմնով եւ հոգով, իսկ երբ գայ Քրիստոս Իր աստուածութեան փառքով, չի տանջի ձեզ անհաւատների հետ անվախճան հրում»:

Այսպէս խօսեց երանելի Սարգիսն իր զօրքի առջեւ: Շնորհի իջաւ ամբողջ զօրքի մէջ, եւ բոլորը միաբերան աղաղակեցին. «Հաւատո՛ւմ ենք Սարգսի Աստծուն»: Այս աղաղակը լսելի եղաւ թշնամիներին, որից ահ ընկաւ նրանց մէջ: Սարգսի գունդը յարձակուեց նրանց վրայ եւ ջախջախեց նրանց բանակը. ոմանց կոտորեց, ոմանց էլ՝ փախուստի մատնեց:

Մինչ առաջ եկած թշնամու մեծաթիւ զօրքերը կամենում էին գունդ-գունդ յարձակուել Սարգսի պահպանութեան տակ գտնուող տարածքի վրայ, պատուեցին թանձր խաւարով, մոլորուեցին եւ այս ու այն կողմ ցրուելով՝ չէին կարողանում միմեանց գտնել: Իսկ եթէ հանդիպում էին, պատմում էին իրենց տեսած տեսիլքի մասին, որ անմարմին զօրքերը յայտնուել էին իրենց եւ ասել. «Մի՛ յանդգնէք պատերազմել Աստուծոյ ծառայ սուրբ Սարգսի դէմ, ապա թէ ոչ՝ ամէնքդ կը կորչէք»:

Տեսնելով եւ լսելով այս ամէնը՝ սուրբը փառք տուեց ամենազօր Աստծուն եւ բանակատեղիում հաւաքելով իւրայիններին՝ ասաց. «Տեսա՞ք Բարձրեալի բազկի զօրութիւնը: Մե՛ծ է Տէրը, եւ մե՛ծ է Նրա զօրութիւնը: Ո՞վ կարող է պատմել Նրա հրաշագործութիւնների մասին: Եկէ՛ք, եղբայրնե՛ր, փա՛ռք տանք մեր Քրիստոս Աստծուն, որ Իր ծառաներին ցոյց տուեց Իր ողորմութիւնը եւ զօրութիւնը»: Իսկ զօրքը, հաստատուելով ճշմարիտ հաւատի մէջ, աղաղակեց. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը եւ անբաւ է Նրա զօրութիւնը: Հաւատում ենք Ամենասուրբ Երրորդութեանը եւ մի Աստուածութեանը, որ քարոզեց Սարգիսը»: Այնժամ շատերը մկրտուեցին սուրբի հետ եղող քահանաների կողմից, եւ բոլորը երկրպագեցին Աստծուն:

Իսկ բանսարկու սատանան զօրքի միջից ոմանց, ովքեր յարում էին պարսկական մոլար կրօնին, դրդեց մատնել սուրբին: Եւ սրանք, գնալով Շապուհի մօտ, ասացին. «Ո՛վ արքայ, Սարգիսն ապստամբեց աստուածների եւ քո դէմ: Նա, քարոզելով Յիսուս Նազովրեցուն, ամբողջ զօրքին տարաւ իր մոլորութեան հետեւից եւ միաբանուեց հռոմէական զօրքի հետ»: Այս լսելով՝ թագաւորը յոյժ խռովուեց եւ խորհրդակցեց իր աւագանու հետ, թէ ինչպէս զօրքի մէջ աղմուկ եւ պառակտում չընկնի: Եւ ատեանի խորհրդով մեծամեծ պարգեւներ ուղարկեց Սարգսին՝ մի նամակով հանդերձ, որում գրուած էր. «Ո՛վ զօրավարներից պատուականդ Սարգիս, մեզ հասաւ քո բարի համբաւն առ այն, որ դու նուիրուած ես մեր թագաւորութեանը եւ յոյժ ուրախ եղանք, որի համար որպէս հաւատարիմ եւ իմաստուն ծառայի՝ առաւել դարձաւ մեր սէրը քո հանդէպ: Ընդունի՛ր մեր թագաւորութեան կողմից առաքուած քո մեծութեանն արժանի այս պարգեւները: Ո՛ղջ եղիր»:

Մի քանի օր անց թագաւորը երանելու մօտ ուղարկեց նաեւ նրա որդուն՝ Մարտիրոսին, ով գտնւում էր արքունիքում: Նրան հետ բերելու համար ուղարկեց նաեւ իր մի քանի պատուաւոր մարդկանց, որպէսզի նա առանց կասկածների գայ արքունիք: Եւ նրանց հետ դարձեալ մի նամակ ուղարկեց հետեւեալ բովանդակութեամբ. «Ո՛վ վեհագոյնդ մեր զօրավարներից՝ Սարգիս, մեզ է հասել քո կորովամիտ իմաստութեան համբաւը: Արդարեւ, իմաստասէրներին յատուկ քո տրամախոհութեամբ նուաճեցիր մեր թշնամիներին եւ շահեցիր երկրի խաղաղութիւնը: Արդ, որդուդ հետ շտապ այստեղ ժամանի՛ր, քանզի կարիք ունենք քո կատարեալ խոհեմութեանը եւ պէտք է խորհրդակցենք քեզ հետ հռոմէացիների կողմից սպասուող առաջիկայ պատերազմի մասին: Ո՛ղջ եղիր»:

Պատանի Մարտիրոսն իր ուղեկիցների հետ ճանապարհ ընկաւ եւ մօտեցաւ այն սահմաններին, ուր գտնւում էր իր հօր բանակը: Սակայն թշնամու զինուորները ճանապարհին ընդառաջ ելան, բռնեցին պատանուն ու նրա հետ եղողներին եւ տարան իրենց բանակը: Երբ այս վատ լուրը հասաւ սուրբին, մեծ տրտմութիւն պատեց նրան եւ իր զօրքին: Չյուսալով մարդկանց օգնականութեանը՝ նա ապաւինում էր Աստծուն եւ ընկնելով Տիրոջ առջեւ՝ արտասուալից պաղատանքներ մատուցում: Իր աղօթքի մէջ յիշատակում էր Տիրոջ գործած սքանչելիքները որ եղան Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ բոլոր նահապետների հետ: Նա աղօթում էր եւ ասում. «Տէ՛ր, ինչպէս որ լսում էիր նրանց աղօթքները, այժմ լսի՛ր նաեւ ինձ՝ մեղաւորիս: Ինչպէս որ Յակոբին շնորհեցիր տեսնել Յովսէփին, այնպէս էլ ինձ վերադարձրու որդուս, որպէսզի չգայթակղուի այս նորահաւատ ժողովուրդը, որը Քո ծառայի քարոզութեամբ հաւատաց Քեզ: Արժանացրո՛ւ սրանց տեսնել Քո ողորմութիւնն ինձ վրայ եւ յայտնի՛ր Քո սուրբ անուան փառքը»:

Երեք օր եւ երեք գիշեր խիստ պահեցողութեամբ չէր դադարում աղօթել եւ ասել. «Ահաւասիկ Քո ծառան պիտի չուտի եւ պիտի չխմի: Արդ, Տէ՛ր, ո՞ւր է իմ որդին: Ինչո՞ւ ինձ մատնեցիր իմ թշնամիների ձեռքը որպէս նախատինք, իսկ որդուս՝ նրանց մօտ գերութեան: Դու Ղազարոսի համար ասացիր Քո Հօրը, թէ այս անում եմ ժողովրդի համար, որ հաւատան Ինձ: Ինչո՞ւ իմ որդուն մատնեցիր թշնամիների ձեռքը, ինչո՞ւ ինձ նախատինք դարձրիր նրանց առջեւ եւ ինչո՞ւ Խաչի թշնամիները յոխորտալով ասեն. «Ահա Սարգիսը պաշտում էր Աստծուն, թող այժմ Նա իր որդուն իրեն յանձնի»: Սակայն ես ասում եմ. «Դո՛ւ ես իմ Աստուածը, եւ ոչ մի անհնար բան չկայ Քեզ համար: Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Դո՛ւ կարող ես փրկել իմ որդուն թշնամիների ձեռքից եւ նրան ինձ յանձնել»: Եւ շատերն էին գալիս՝ մխիթարելու Սարգսին:

Մեծ հաւատով երեք օր պաղատում էր Աստծուն այնպէս, ինչպէս որդին է խնդրում հօրից: Եւ ահա չորրորդ օրը՝ երրորդ ժամին տեսաւ, որ թշնամու բանակից մի հեծեալ եկաւ, ով իր հետ բերում էր մանկանն ու նրա հետ մի քանի հոգու: Նրանց կանգնեցրեց Սարգսի զօրքի առջեւ եւ ասաց. «Մեր բանակից եօթ հոգի այս մանկանը գերի բերեցին եւ հէնց նոյն օրը մեռան: Ցաւում եւ հարուածներ հասան մեր բանակին, մեր զօրքի մէջ այնքան սաստիկ խռովութիւն ընկաւ, որ շատերն սկսեցին միմեանց կոտորել: Մեր զօրավարը տեսիլք տեսաւ, որի համար հրամայեց իր զօրագլուխներին. “Մեզ վրայ հասած ցաւումն այս մանկան պատճառով է: Շտապ վերադարձրէ՛ք սրան, քանզի եթէ պատանուն իր հօրը չյանձնէք, մեր ամբողջ զօրքը կորստեան կը մատնուի”: Ահաւասիկ նրան ձեզ մօտ բերեցի, սակայն ես չգիտեմ, թէ նա ում որդին է. ցո՛յց տուէք ինձ նրա հօրը, եւ ես կը յանձնեմ նրան, որ թերեւս դադարի Աստուծոյ ցաւումը մեր բանակի վրայ»:

Երբ Սարգսի բանակը լսեց այս խօսքերը, աղաղակեց եւ փառաւորեց Աստծուն՝ ասելով. «Արդարեւ, մե՛ծ է Սարգսի Աստուածը, եւ չկա՛յ այլ աստուած, որ այսպիսի հրաշքներ գործի»: Իսկ երանելի Սարգիսը գոհանալով ասում էր. «Տիրոջ բոլոր ծառանե՛ր, այս տեղում օրհնեցէ՛ք Տիրոջը», եւ զօրքը ձայնակից եղաւ սուրբի սաղմոսերգութեանը: Ապա Սարգիսը՝ իր որդու ձեռքը բռնած, փառք տուեց Աստծուն եւ ասաց. «Գոհանում եմ Քեզանից, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ծածկեցիր ինձ իմաստուններից եւ գիտուններից ու յայտնեցիր մանուկներին եւ մեղաւորներին»: Ապա աղօթեց նաեւ թշնամու բանակի համար, որպէսզի դադարի Աստուծոյ ցաւումը նրանց վրայ: Երեք օր անց աւետաբեր եկաւ թշնամու բանակից եւ ասաց. «Արդարեւ, մե՛ծ է Սարգսի Աստուածը, քանզի նրա աղօթքներով

դադարեցին հարուածները մեր բանակի վրայ: Մենք հաւատում ենք Սարգսի Աստծուն»: Իսկ երանելին աղօթում էր. «Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որովհետեւ Դու յայտնուեցիր նրանց, ովքեր Քեզ չէին ճանաչում»:

Իր որդու՝ Մարտիրոսի ազատութեան օրը Սարգիսը ողջ բանակի հետ մեծ տօն արեց, եւ բոլորն ուրախացան ի Տէր՝ հոգեւոր եւ մարմնաւոր ուրախութեամբ: Այս հրաշքը, որ Տէրը ցոյց տուեց Իր ծառայ Սարգսին, տարածուեց ողջ երկրով: Լուրը շտապ հասաւ նաեւ պարսից արքունիք, որից իշխանները չարացան եւ ասացին. «Իսկ մենք կարծում էինք, թէ Սարգսին դաւադրութեամբ կորստեան կը մատնենք, բայց նա դեռեւս ողջ է: Նա մոլորեցրեց ամբողջ երկրին, եւ բոլորը հաւատացին նրա կախարդութեանը»:

Իսկ սուրբ Սարգիսը, երբ որդուց իմացաւ, որ թագաւորի հրամանով իրեն շտապ արքունիք են կանչում, հասկացաւ արքայի եւ նրա իշխանների չար մտադրութիւնը: Իր մօտ կանչեց ամբողջ զօրքին, որը հաւատաց Քրիստոսին, եւ ասաց. «Եղբայրնե՛ր, եկել է ընդունելի ժամը, որում պէտք է յայտնի դառնայ մեր հաւատի բարեպաշտութիւնը եւ մարդկանց առջեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին խոստովանելը, որպէսզի Նա էլ մեզ խոստովանի Իր Հօր եւ սուրբ հրեշտակների առջեւ»: Իսկ զօրքը միաբերան պատասխանեց. «Ապրենք, թէ մեռնենք՝ մենք քեզ հետ ենք, ո՛վ հայր պատուական»: Սուրբը նրանց ասաց. «Մենք մեր Տիրոջից հրաման ունենք չծածկել մեր հաւատի լոյսը, այլ դնել աշտանակի վրայ, քարոզել տանիքներից եւ չերկնչել նրանցից, ովքեր մարմինն են սպանում եւ ո՛չ հոգին: Բայց ես՝ անպիտանս, անհնազանդ գտնուեցի Տիրոջ հրամանին, քանզի ակնածելով մարդկանցից՝ մինչեւ այժմ արքայի եւ նրա աւագանու առջեւ անձիս մէջ ծածկուած եմ պահել իմ հաւատի լոյսը, ինչպէս ճրագը՝ գրուանի տակ: Սակայն այժմ, եղբայրնե՛ր, աղաչէ՛ք Տիրոջը, որ ինձ համարձակութիւն տայ աներկիւղ քարոզել Իր անունը թագաւորների ու իշխանների առջեւ եւ հաստատի իմ ոտքերը հաւատի ամուր վէմի վրայ, որպէսզի չսասանուեմ այն մարդկանցից, որոնց առջեւ պատրաստւում եմ կանգնել»:

Այնժամ զօրքը պատասխանեց սուրբին եւ ասաց. «Աղաչո՛ւմ ենք քեզ, տէ՛ր, լսի՛ր քո ծառաներին: Խորհուրդ ենք տալիս մեր տիրոջը չընդունել արքայի հրաւէրը եւ չգնալ բռնաւորի առջեւ: Իսկ եթէ դա կը շարժի նրա ցասումը, ապա մենք չենք վարանի ելնել նրա դէմ: Ամէնքս պատրաստ ենք մեռնել այն բոլոր պատերազմներում, որոնք պատրաստուած են քո դէմ, եւ ով կը մարտնչի մեր դէմ, կը յաղթենք նրան մեր Տիրոջ զօրութեամբ, Ում հաւատացինք»: Սուրբն ասաց. «Տէրը մեզ պատուիրում է զօրանալ ո՛չ թէ մարմնով եւ պատերազմական միջոցներով, այլ հոգով եւ նեղութիւնների մէջ համբերելով յաղթել մեր թշնամիներին: Արդ, խոչընդոտ մի՛ եղէք կենաց ճանապարհի առաջիկայ ընթացքիս, այլ աղաչէ՛ք Տիրոջը, որ արժանացնի ինձ մեռնել Իր սուրբ անուան համար: Թող Նրա Աջը ձեզ հովանի լինի եւ հաստատի ճշմարիտ հաւատի մէջ, որն ընդունեցիք Սուրբ Հոգու շնորհով: Եթէ սիրէք Նրան ձեր ամբողջ սրտով, Նա Ինքը փրկութիւն կը լինի ձեզ այս կեանքում եւ Իր բոլոր սուրբերի հետ կ'արժանացնի յաւիտենական կեանքին: Արդ, դուք մնացէ՛ք այստեղ եւ հաւատարմութեամբ կատարէ՛ք արքունի գործերը՝ ծառայելով իբրեւ Տիրոջը եւ ոչ թէ մարդկանց: Իսկ ես կընդունեմ այդ հրաւէրը, որովհետեւ գիտեմ, որ կանչւում եմ Տիրոջ կողմից»:

Այս ասելով՝ զօրացրեց նրանց հաւատի մէջ, եւ բաժանուեցին միմեանցից: Սուրբ զօրավար Սարգիսն իր որդու եւ մի քանի զօրականների հետ ճանապարհ ընկաւ եւ հասաւ արքունիք: Երբ Շապուհը տեսաւ նրան, շատ ուրախացաւ եւ, դառնալով իր

խորհրդակից աւագանու անդամներին, ասաց. «Ինձ թւում է, որ յանիրաւի են նրա մասին եղած ամբաստանութիւնները, եւ չարախօսները նախանձից են դրդուել եւ ո՛չ ճշմարտութիւնից»: Ապա դիմելով Սարգսին՝ ասաց. «Թող բարի լինի քո գալուստը, իմ հաւատարիմ եւ իմաստուն զօրապետ: Մեր հանդէպ ցուցաբերած քո անխոտոր հաւատի համար կամենում ենք քեզ արժանացնել մեծամեծ պարգեւների: Մեր թագաւորութիւնը որոշել է քեզ մեծ պատուի արժանացնել եւ քո խոհեմագոյն իմաստութեան համար ամբողջ զօրքի վրայ որպէս գլուխ կարգել»: Եւ նրան բազում պարգեւներ շնորհեց:

Սակայն սուրբ Սարգիսը չխաբուեց այդ խօսքերից եւ մեծամեծ պարգեւներից, այլ պատասխանեց նրան իմաստուն խօսքերով. «Գոհանում եմ իմ Աստծուց, Ով փրկեց ինձ իմ թշնամիների ձեռքից, որոնց ոչ թէ մեր իմաստութեամբ եւ զօրութեամբ յաղթեցինք, այլ ամենազօր Աստուծոյ կարողութեամբ: Նրանով են նաեւ ձեզ շնորհուած պարգեւները, եւ Նա է ձեզ իմաստութիւն տուել՝ ճանաչելու ճշմարիտը»: Այս ասելով՝ սուրբը հեռացաւ, իսկ թագաւորն իր մերձաւորներին ասաց. «Ճշմարտութեան մէջ կատարեալ եմ տեսնում այս մարդուն», իսկ չարախօսներն առաջ գալով՝ ասացին. «Քա՛ջ արքայ, նա ունի Նազովրեցու ուսմունքն ու աղանդը: Նա աստուած է կոչում ոչ թէ մեր աստուածներին, այլ Յիսուս Նազովրեցուն: Իսկ եթէ ձերդ թագաւորութիւնը չի հաւատում, ապա թող հարցնի հէնց իրեն եւ կը տեսնի մեր խօսքերի ճշմարտութիւնը»: Այս լսելով՝ թագաւորը յոյժ տրտմեց, քանզի չէր կամենում, որ նա քրիստոնեայ լինէր եւ ոչ էլ կամենում էր ձեռքից բաց թողնել այդպիսի քաջ ու հաւատարիմ մարդու: Նա անդադար խորհում էր իր սրտում, թէ ինչպէս իմանայ ճշմարտութիւնը:

Այդ օրերին պէտք է նշուէր իրենց աստուածների տօնը, եւ արքայից հրաման ելաւ, որ ժողովուրդը հաւաքուի կրակարանի ատրուշանում, ուր ըստ պարսկական օրէնքի՝ կրակ էին վառում: Այնտեղ կանգնեցուած էին տասներկու կուռքերը: Պատուական զօրապետերի շարքում Սարգիսը եւս իր որդու հետ հրաւիրուեց գալ եւ մասնակցել այդ տօնակատարութեանը: Եւ երանելին, իմանալով, որ հասել է Աստուծոյ համար պատերազմելու ժամը, աղօթեց՝ ասելով. «Տէ՛ր Աստուած, Քեզ յուսացողների Փրկի՛չ, որ խոստացար Քո ծառաներին եւ ասացիր, թէ երբ ձեզ տանեն դատաւորների առջեւ, մի՛ մտածէք, թէ ինչ պիտի պատասխանէք, քանզի Ես կը տամ ձեզ խօսք եւ իմաստութիւն, որին չեն կարող հակառակուել ձեր թշնամիները: Արդ, Տէ՛ր, երբ բացեմ բերանս, տո՛ւր ինձ խօսք իմ մրցասպարէզում, որին պատրաստւում եմ դուրս գալ: Զօրացրո՛ւ ինձ համբերել չարչարանքներին, որոնք գալու են ինձ վրայ Քո սուրբ անուան համար»:

Նոյն աղօթքն էր անում նաեւ երանելի Մարտիրոսը՝ ձայնակից լինելով իր հօրը, եւ նոյն հոգով սպառազինուած՝ պատրաստւում էր մտնել նահատակութեան հանդէս: Եւ երբ վերջացրեցին աղօթքը, ընդունեցին թագաւորի կանչը եւ գնացին կանգնելու նրա առջեւ: Թագաւորը, նրան տեսնելով, բարձր ձայնով ասաց. «Սարգի՛ս, ո՛վ պատուականդ իմ զօրապետերից, ե՛կ, մեզ հետ մտի՛ր տաճար եւ զոհ մատուցիր, ինչպէս հրամայում է մեր օրէնքը: Որպէս ճշմարիտ աստուածասէր՝ խունկ մատուցիր մեծամեծ աստուածներին, որպէսզի քո չարախօսները, ամօթահար լինելով, լռեն, իսկ դու առաւել պայծառանաս փառքով»: Պատասխանեց սուրբ Սարգիսը եւ ասաց. «Որպէս զոհ՝ ես իմ անձն ամբողջովին կը մատուցեմ ճշմարիտ Աստծուն եւ Նրա Որդուն՝ Յիսուս Քրիստոսին, Ով պատարագուեց իմ սիրոյ համար: Ես գիտե՛մ քո կուռքերին եւ կրակին աստուած չե՛մ կոչի: Ես պաշտում եմ կրակի ու արեգակի Արարչին եւ երկրպագութիւն եմ մատուցում Նրան, Ով արարեց երկինքն

ու երկիրը, իսկ նրանցում եղածները միայն արարածներ են: Նա՛ է կենդանի եւ յաւիտենական Թագաւորը, Ում, եթէ իմաստութիւն ունենայիր, դու եւս կ'երկրպագէիր եւ կը փառաւորէիր՝ Նրա ստեղծած տարրեղէն արարածների եւ մարդկանց ձեռագործ անշունչ պատկերների փոխարէն»:

Այս լսելով՝ արքան ասաց. «Ահա յայտնի դարձաւ քո մոլորութիւնը, ո՛վ յիմարութեամբ արբա՛ծդ եւ ինքնակամ քեզ զրկո՛ղդ բիւրաւոր բարիքներից: Այլեւս մի՛ խօսիր, ե՛կ եւ զոհի՛ր աստուածներին»: Իսկ երանելին չկարողացաւ համբերել, թքեց ամբարշտի վրայ եւ Սուրբ Հոգով զօրանալով՝ ասաց. «Ես չե՛մ վախենում քեզանից եւ քո կուռքերից: Իմացի՛ր, չե՛մ պաշտելու քո գարշելիներին, այլ միայն ճշմարիտ սուրբ Աստծուն, Ում ի զօրու չեն անարգել հայհոյիչների բերանները»: Այնժամ սրտմտելով՝ Շապուհը բարկութեամբ հրամայեց քարերով խփել նրա բերանին, կապել երկաթէ կապանքներով, քարշ տալ փողոցներով ու ճանապարհներով, մինչեւ կողերը մորթազերծ լինեն: Իսկ սուրբն իրեն քարշ տուողներն ասում էր. «Ցո՛յց տուէք ձեր կուռքերին, որպէսզի տեսնեմ նրանց զօրութիւնը, եւ ես ցոյց կը տամ իմ Աստուծոյ զօրութիւնը»: Այս լսելով՝ նրանք յոյժ ուրախացան եւ յայտնեցին արքային. «Հրամայի՛ր,- ասացին,- որ նա գայ եւ երկրպագի մեր աստուածներին»:

Թագաւորի հրամանով անմիջապէս եկան աւագանուց մի քանի հոգի եւ մի զօրապետ՝ զօրքով հանդերձ: Նրանք Սարգսին եւ Մարտիրոսին կանգնեցրին մեհեանում՝ տասներկու կուռքերի առջեւ: Այնժամ սուրբ Սարգիսն աղաղակեց իր սրտում. *«Օգնի՛ր ինձ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ինչպէս օգնում էիր ինձ պատերազմելիս»:* Ապա դառնալով կռապաշտներին՝ ասաց. «Սրա՞նք են ձեր տասներկու աստուածները. չորսը վիշապների բերաններ են, չորսը՝ դեւերի պատկերներ, չորսն էլ՝ եզների գլուխներ: Արդ, ես որի՞ն երկրպագեմ, կամ ո՞ւմ աղօթեմ»: Իշխաններն ու մոգերն ասացին նրան. «Մի՛ անարգիր անմահ կուռքերին՝ նրանցից մէկին օձ կոչելով, միւսին՝ դեւ»: Սուրբ Սարգիսն ասաց. «Արդարեւ, ասում եմ ձեզ, ձեր՝ մարդկանցդ ձեռքերի գործերը գարշելի են, քանզի նրանք ներսից կաւեղէն են, իսկ արտաքուստ՝ պղնձէ: Ես ինչպէս արդէն ասացի, ցո՛յց տուէք, որ ձեր կուռքերը կենդանի աստուածներ են, ապա թէ ոչ, ես ցոյց կը տամ իմ կենդանի Աստուծոյ զօրութիւնը, Ով Իր խաչով լուսաւորեց երկինքն ու երկիրը: Այժմ տեսնում եմ այն, ինչ արդէն գիտէի, քանզի դրանք, որ դեւերի պատկերներ են, ոչինչ չեն խօսում, որ վիշապների բերաններ են, ոչինչ չեն ուտում, իսկ եզների գլուխները ոչինչ չեն բարբառում»: Իսկ կռապաշտները միմեանց ասում էին. «Վա՛յ մեզ, քանզի սա անարգեց մեր աստուածներին, որի համար նրանք կը բարկանան մեզ վրայ»: Սուրբ Սարգիսը նրանց ասաց. «Չէ՞ք լսել, որ Սուրբ Գիրքն ասում է, թէ նրանց արարողները եւ նրանց պաշտողները նման պիտի լինեն նրանց»: Այնժամ քուրմերն ասացին. «Բա՛ւ է քեզ, շատ անարգեցիր մեզ եւ աստուածներին»: Սուրբ Սարգիսն ասաց. «Թո՛յլ տուէք ինձ մօտենալ նրանց»: Նրանք, կարծելով, թէ Սարգիսը կամենում է երկրպագել կուռքերին, արձակեցին նրան: Սարգիսն ամբողջ սրտով օգնութեան կանչեց Տիրոջը, կնքեց իրեն սուրբ Խաչի նշանով, հաստատեց իր սիրտը ճշմարտութեամբ, ապա իր ձեռքի եւ պարանոցի շղթաներն իրար միացնելով՝ հարուածեց կուռքերի ոտքերին: Եւ ահա ջարդուեցին, փշրուեցին, կործանուեցին եւ փոշիացան կուռքերը: Այնժամ երանելին ասաց. «Ո՛վ անմիտներ, ահա փշրուեցին ձեր պաշտամունքները»:

Այս ամէնը լսելով եւ տեսնելով՝ այնտեղ գտնուող մոգերն ու հեթանոսների բազմութիւնը, սուրբի հանդէպ լցուեցին անասելի բարկութեամբ, բռնեցին նրան,

սկսեցին մոլեգնած այս ու այն կողմ քարշ տալ ու աղաղակել՝ սպանէ՛ք դրան: Անօրէնների յանգուգն յարձակումներից գազանացած ամբոխի մէջ սպանուեց նրա երանելի որդին՝ Մարտիրոսը, եւ ինչպէս վկայաբան Շնորհալին է ասում, գործով ընդունեց իր վկայական անունն ու պսակակից եղաւ Քրիստոսի նախընթաց վկաներին:

Իսկ սուրբ Սարգիսն անվնաս պահուեց Աստուծոյ ձեռքով: Բոլորը, անգամ զինուորները, զարհուրելով դողում էին նրանից ու սպասում թագաւորի հրամանին: Այնտեղ պէտք էր տեսնել կռապաշտների սոսկումը, խուճապն ու կոծը. ոմանք պատռում էին իրենց հանդերձները, ուրիշները փետում իրենց գլխի մազերը եւ կոծելով գնում թագաւորի մօտ: Մեծ աղաղակ ու խառնաշփոթ ընկաւ նրանց մէջ: Նրանք վերցնում էին ջարդուած կուռքերի փշրանքները, ցոյց էին տալիս արքունիքի աւագանուն եւ ասում. «Վա՛յ մեզ, քանզի մեծ չարիք կը գայ մեր եւ մեր երկրի վրայ»: Իսկ իշխանները մեղադրում էին զօրականներին եւ ասում. «Ձեզ ուղարկեցինք նրան հսկելու համար: Ինչո՞ւ չբռնեցիք նրան, որ չկործանէր մեր աստուածներին»: Իսկ նրանք պատասխանեցին. «Ճշմարիտ ենք ասում, որ եթէ դուք էլ այնտեղ լինէիք, ապա չէիք կարողանայ բռնել նրան»: Եւ մինչ նրանք խօսում էին, ինքը՝ երանելի Սարգիսը, եկաւ նրանց հետեւից եւ կանգնեց ատեանի առջեւ: Նա ձեռքին ունէր իր շղթաները, որից ահաբեկուած իշխաններն ասում էին միմեանց. «Միգուցէ մեզ եւս կորստեան մատնի»: Ապա ասացին նրան. «Սարգի՛ս, ինչո՞ւ փշրեցիր մեր աստուածներին»: Այնժամ սուրբը, ցոյց տալով իր ձեռքի շղթաները, ասաց. «Սրանք փշրեցին ձեր կուռքերին, իսկ նրանք ինձ ոչինչ չկարողացան անել: Այժմ ես ձեր առջեւ եմ, ինչպէս գառը մորթողի առջեւ, արէ՛ք, ինչ կամենում էք»:

Հեթանոսների բազմութիւնը կամեցաւ տեղում սպանել նրան, սակայն թագաւորն արգելեց, քանզի բարկացած էր նրանց վրայ՝ առանց իր հրամանի նրա որդուն սպանելու համար: Ապա կանչեց Սարգսին եւ ասաց. «Անարգելով անարգեցիր մեր աստուածներին, բայց ես ներեցի քեզ: Այդքանից յետոյ ինչպէ՞ս համարձակուեցիր փշրել նրանց»: Սուրբը պատասխանեց. «Որովհետեւ Սուրբ Գիրքն ասում է. «Կը հովուես նրանց երկաթեայ գաւազանով եւ բրուտի անօթի պէս կը փշրես նրանց» », Թագաւորն ասաց. «Եթէ չես երկնչում, որ աստուածները կը կործանեն քեզ, ապա ստիպուած եմ քեզ կապել ոչ միայն շղթաներով, այլեւ զրկել կեանքից»: Սուրբն ասաց. «Ես իմ անմահ Տիրոջ համար, Ով ինձ անմահութիւն պիտի պարգեւի, ամէն ժամ պատրաստ եմ մահուան, իսկ քո կուռքերն ինձ ոչինչ չեն կարող անել: Ես ինչպէս նրանց կործանեցի շղթաներով, նոյնպէս էլ կարող էի ամբողջովին քանդել իմ կապանքները»: Այս ասելով՝ սուրբ Սարգիսը խոնարհեցրեց իր գլուխը եւ գցեց շղթաները ատեանի առջեւ՝ կարծես ասելով՝ ահա իմ պարանոցը սրի տակ եմ դնում:

Այնժամ թագաւորը հրամայեց նրան բանտ տանել: Զօրականները երկիւղով մօտեցան նրան, պարանոցին շղթաներ հագցրին, իսկ դահճապետին հրամայեցին բանտում տեսակ-տեսակ խոշտանգումներով տանջել Սարգսին: Երանելին գոհանում էր Աստծուց, որ արժանանում էր Նրա անուան համար կրել չարչարանքներ եւ կապանքներ, նաեւ՝ իր որդու համար, ով իր վկայական մահուամբ պսակուեց Քրիստոսից: Դահճապետը, կամենալով ահաբեկել Սարգսին, յայտնեց, որ արքան վճռել է մի քանի օր անց կորստեան մատնել իրեն եւ ամենուր հրովարտակներ է ուղարկել, որ բոլորը գան ու տեսնեն մահապարտ Սարգսին: Լսելով այդ հրամանը՝ սուրբը ցնծաց հոգով եւ սկսեց աղօթել՝ ասելով. *«Աստուա՛ծ Աբրահամի, Աստուա՛ծ Իսահակի, Աստուա՛ծ Յակոբի եւ Աստուա՛ծ մեր հայրերի, առաքեալների եւ մարգարէների, յիշի՛ր Քո ծառային եւ մի՛ անտեսիր նրան: Դո՛ւ՝*

Աստուած, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, արժանացրո՛ւ ինձ Քեզանից ընդունել անապական պսակը: Տէ՛ր Յիսուս Քրիստոս, խառնի՛ր ինձ Քո սուրբերի գնդին, ովքեր նահատակուեցին Քո սիրոյ համար: Կենդանարար Սո՛ւրբ Հոգի, մտցրո՛ւ ինձ անվախճան Կեանքի նաւահանգիստը, ուր փառաւորւում է Ամենասուրբ Երրորդութիւնը»:

Եւ մինչ աղօթում էր, երեւաց նրան բանսարկուն, եկաւ կանգնեց սուրբի առջեւ եւ ասաց. «Սարգի՛ս, ի՞նչ արեցի քեզ, որ փշրեցիր իմ հանգստարանը, կամ ինչո՞ւ աւերեցիր իմ զոհարանը: Արդ, զոջա՛, որպէսզի հանդարտուի թագաւորի սիրտը»: Սուրբը սաստեց նրան եւ ասաց. *«Հեռացի՛ր քո կորստեան ենթակայ գործակիցների հետ դէպի յաւիտենական կորուստը»:* Դեւը նրան ասաց. «Արդ, քանի որ դու արհամարհեցիր ինձ, ես կը գնամ եւ կը մտնեմ բռնաւորի սիրտը, ուտել կը տամ քո մարմինը, ըմպել կը տամ քո արիւնը եւ փշրել կը տամ քո ոսկորները, ինչպէս որ դու արեցիր իմ բագիններին»: Սուրբը նրան ասաց. *«Հեռացի՛ր Քրիստոսի անուամբ»:*

Սատանան գնաց, մտաւ բռնաւորի սիրտը, իսկ սա հրաման տուեց չարչարել սուրբին: Յաջորդ օրը դահիճներն սկսեցին տանջել ու քերել սուրբի մարմինը, իսկ նա զոհութեամբ սաղմոսում էր եւ ասում. *«Աստուա՛ծ, ինձ օգնութեան հասի՛ր, Տէ՛ր, փութա՛ ընկերակցել ինձ, Աստուա՛ծ եւ Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, տո՛ւր զօրութիւն իմ հոգուն եւ համբերութիւն իմ մարմնին, որպէսզի յաղթեմ սատանային ու չպարտուեմ նրա կողմից»:*

Ողջ օրուայ ընթացքում սաստկացրին սուրբի չարչարանքները, իսկ գիշերուայ մի պահին, երբ դադար էր առնում, եկաւ Տիրոջ հրեշտակը եւ ասաց. *«Զօրացի՛ր, Սարգի՛ս, քանզի ես քեզ հետ եմ: Ինչ որ խնդրեցիր, տուեցի, եւ ինչ որ այժմ խնդրես, կը տամ քեզ: Ե՛կ եւ վայելի՛ր քեզ համար պատրաստուած բարիքները»:* Աստուծոյ հրեշտակի այս խօսքերից զօրացաւ սուրբը, մարմինը դարձաւ երկաթի նման եւ արհամարհեց տանջանքներն ու կապանքները: Գոհութեամբ փառաւորեց Աստծուն եւ ասաց բանսարկուին. *«Ես իբրեւ հանդերձ զգեստաւորուեցի Քրիստոսով, եւ եթէ ինձ վրայ արձակես քո նետերը, չես կարող վիրաւորել Քրիստոսի նահատակիս: Քրիստոս Իր ձեռքով տնկեց ինձ որպէս մի ծառ, եւ որքան էլ դու փշրես իմ ոստերը, չե՛ս կարող ինձ արմատախիլ անել եւ չե՛ս կարող գողանալ իմ գանձերը, որովհետեւ Տէրն ինձ հետ է, եւ Նրա հրեշտակը զօրացնում է ինձ: Իմ անձն ու իմ սիրտն ուրախ է իմ կենդանի Աստուծով»:*

Իսկ բանսարկուն սկսեց նրան յիշեցնել իր կարծեցեալ զօրութիւնը՝ ասելով. «Ա՛յ թշուառական, ես իշխանութիւն ունեմ մեղմացնել բռնաւորի սիրտը եւ ազատել քո մարմինը տանջանքներից: Զո՛հ մատուցիր եւ պաշտի՛ր ինձ, ապա թէ ոչ՝ քեզ ցոյց կը տամ իմ զօրութիւնը: Յիշի՛ր, թէ ինչ արեցի քո նախահայր Ադամին, ինչպէս հեռացրի նրան կեանքի Դրախտից եւ փառքից: Գիտես, թէ ինչպէս վարուեցի Յոբի հետ, կոտորել տուեցի նաեւ մարգարէներին: Ե՛ս էի, որ առաքեալներին եւ վկաներին չարաչար սպանել տուեցի: Ես մտայ հրեաների սիրտն ու մոլորեցրի նրանց, որպէսզի չարչարեն Կոյսից Ծնուածին եւ խաչեն»: Սուրբ Սարգիսը պատասխանեց նրան. «Ինձ մի՛ յոգնեցրու, քո չարիքները քո գլխին դարձան, իսկ սուրբերը պսակուեցին եւ ժառանգեցին Արքայութիւնը: Կոյսից Ծնուածը, Ով նախքան յաւիտեանները Հօր մօտ էր, ջախջախեց քո գլուխը եւ Ադամին փրկեց դժոխքի բերանից: Խո՛ւլ, կո՛յր եւ յիմա՛ր, ինչպէ՞ս չես իմանում, թէ ո՞վ է Քրիստոս: Դու չէիր կարող Նրան խաչել, եթէ Նա Ինքը չկամենար: Նա՛ է փառքի ամենակալ Տէրը Հօր եւ Սուրբ Հոգու հետ: Հայրն ինքնին է, Որդին Հօր Ծնունդն է, իսկ Սուրբ Հոգին բխում է Հօրից: Երեք Անձեր են, մի աստուածութիւն եւ մի զօրութիւն: Արդ, ո՞վ կը համարձակուէր խաչել Աստուծոյ

Որդուն, եթէ Նա չկամենար: Նա սուրբ Կոյսից վերցրած Մարմինը մատնեց չարչարանքների եւ խաչելութեան, ապա իջաւ դժոխք՝ ազատելու Ադամի որդիներին: Քրիստոս խորտակեց դժոխքի դռները, ներս մտաւ եւ քաղցրութեամբ ողջոյն տուեց Ադամին ու նրա սերունդներին: Կապեց սատանային հրեղէն շղթաներով եւ արձակեց կապուած հոգիներին»: Սատանան ասաց. «Մա՛ր Սարգիս, կարծում էի, թէ դու կը դառնաս եւ կը պաշտես ինձ: Արդ, դու ընդդիմացար ինձ եւ ի՞նչ շահեցիր քո յամառութիւնից: Ե՛կ, ընդունի՛ր թագաւորի կամքը եւ երեւելի կը լինես երկրում: Մի՛ զրկուիր կեանքից սնոտի յոյսի պատճառով, ապա թէ ոչ՝ վաղը մեծ ամբոխ կ'արձակեմ քեզ վրայ, մարմինդ կը մատնեմ երկրի գազաններին եւ արիւնդ՝ երկնքի թռչուններին»: Սուրբ Սարգիսն ասաց. *«Լի՛ր, տկա՛ր եւ անա՛րգ, հեռացի՛ր եւ այլեւս չհամարձակուես մօտենալ ինձ, հակառակո՛ղ ճշմարտութեան եւ հա՛յր ստութեան: Քո խրատները ոչ թէ կեանք, այլ յաւիտենական մահ են պատճառում, իսկ քեզ լսողները քեզ հետ միասին միայն կորուստ են գտնում»:* Այնուհետեւ չարն իսպառ ամօթահար եղած հալածուեց նրանից: Այնժամ սուրբն սկսեց աղօթել. *«Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ Օգնականդ ես անօգնականների եւ մերձ ես Քեզնից երկիւղածներին: Հասի՛ր ինձ օգնութեան, ո՛վ զօրացուցիչ տկարների եւ անդորրութիւն նեղեալների, սպարապե՛տ պատերազմի եւ պարիսպ ընդդէմ մրրիկների: Լսի՛ր ինձ եւ ե՛կ ինձ օգնութեան, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս»:*

Եւ յանկարծ Տէրը երկնային զօրքով երեւաց նրան: Շուրջբոլորը լցուեց արեգակից առաւել գերապայծառ Լոյսով, եւ անմիջապէս արձակուեցին երանելու ձեռքերի ու ոտքերի կապանքները: Լոյսի միջից ձայն եկաւ, որն ասաց. «Քաջալերուի՛ր, Իմ բարի եւ հաւատարիմ ծառայ Սարգիս: Թող քո սիրտը չերկնչի մահկանացու մարմինդ սպանողներից, քանզի պիտի ելնես այս տրտմութեան վայրից եւ քո մարմնի հողանիւթ յարկից ու պիտի մտնես քո Տիրոջ լուսեղէն խորանների անվախճան ուրախութեան մէջ»:

Այդ փառաց Լոյսից հաւաքուեցին բանտապահները: Նրանք տեսան երանելուն՝ արձակուած կապանքներից եւ աղօթելիս, որից մեծ հիացմունքով սկսեցին փառաւորել ճշմարիտ Աստծուն, Ում քարոզում էր Սարգիսը: Ապա շտապ գնալով թագաւորի մօտ՝ պատմեցին այն հրաշքները, որ տեսան: Թագաւորը հրամայեց երանելուն իր առջեւ բերել: Եւ երբ բերեցին, Շապուհն ասաց նրան. «Ո՛վ անմիտ եւ անձիդ թշնամի՛, ի՞նչ շահեցիր մեր հրամաններին հակառակուելուց, բացի միայն անարգանքներից, չարչարանքներից եւ որդուդ մահից: Իմացի՛ր, որ եթէ շարունակես յամառել, դաժան մահուամբ կը զրկուես կեանքից, իսկ եթէ թողնես քո անմիտ խորհուրդները եւ դառնաս դէպի մեզ՝ յիշելով մեր նախկին սէրը, ապա քաղցրութեամբ կը ներենք քեզ, քո յանցանքները մեղք չենք համարի եւ կ'արժանացնենք գերագոյն փառքի ու պատուի: Արդ, այսօր ընդունի՛ր մեր հրամանները, եւ ապա կը գնաս Նազովրեցու հետեւից»: Թագաւորն այսպէս ասաց, քանզի չէր ցանկանում սուրբի մահը, եւ բացի այդ՝ հասել էր Յուլիանոս կայսեր գալստեան լուրը:

Երանելին պատասխանեց. «Դու չտեսար քո աստուածների ամօթահար եւ նախատուած լինելը, որովհետեւ դու եւս նրանց պէս խաւարի մէջ ես եւ առանց լոյսի: Ինչպէ՞ս չես ճանաչում նրանց տկարութիւնը՝ տեսնելով նրանց փոշու պէս մանրացած: Իսկ իմ պարծանքն ու յոյսը իմ Տէրն է՝ Յիսուս Քրիստոս: Նա ինչպէս ընդունեց իմ որդուն իր ճշմարիտ հաւատի համար, այնպէս էլ ինձ կ'ընդունի, քանզի ես եւս հաստատուած եմ նոյն հաւատի մէջ: Գոհանում եմ Նրանից ու փառաւորում Նրան, որ ընդունեց իմ որդուն եւ թոյլ չտուեց խաբուել քո մոլորութիւններով: Ասում

եմ, թող յայտնի լինի քեզ, որ եթէ թոյլ տաս ինձ ապրել, քո մահն իմ ձեռքով կը լինի, որովհետեւ ես չեմ հանդուրժի քո պիղծ բերանի հայհոյանքները՝ ուղղուած իմ ճշմարիտ Աստծուն»: Այս լսելով՝ թագաւորը լցուեց անասելի բարկութեամբ, հրամայեց հանել նրա զինուորական պատմուճանը եւ ասաց. «Սարգիսը, ով չհասկացաւ իր պատիւը, թող ընդունի անարգանքներով մահը»: Եւ հրամայեց նրան տանել քաղաքից դուրս ու սպանել:

Դահիճները նրան տանում էին դէպի իր նահատակութեան վայրը: Նրանց հետեւից գնում էր քրիստոնեաների եւ հեթանոսների մեծ բազմութիւն: Այնտեղ կար նաեւ կռապաշտների մեծ ամբոխ, որը ոխ էր պահել նրա դէմ իրենց կուռքերը կործանելու համար: Նրանք քաշքշում եւ դառնապէս տանջում էին սուրբին, ճանկերով քերում նրա մարմինը: Իսկ երանելին, արհամարհելով տանջանքները, ստէպ աղօթում էր. *«Հայր մեր, որ երկնքում ես ...»:* Ամբողջ ճանապարհին աղօթում էր Աստծուն, խնդրում Նրա պահպանողական Աջը եւ սքանչելի զօրութիւնը, որով բոլոր արդարներին ու աստուածպաշտներին փրկեց երեւելի եւ աներեւոյթ թշնամիների փորձութիւններից ու վտանգներից եւ մրցապայքարներում զօրացրեց առաքեալներին ու վկաներին: Հզօրի նոյն զօրութիւնն էր խնդրում իր անձի համար եւ ասում. *«Մի՛ մերժիր Քո ծառային, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, ամենակա՛լ, սո՛ւրբ, բարերա՛ր, քանզի մերձ ես Քեզնից երկիւղ կրողներին եւ յայտնւում ես Քեզ փնտրողներին»:*

Երբ հասան Սալք կոչուած տեղին, սուրբը կանգ առաւ, որովհետեւ նա այդտեղ պիտի ընդունէր իր վկայական մահը: Տարածեց իր ձեռքերը, սկսեց բարձրաձայն աղօթել եւ ասել. *«Յաւիտենական Աստուա՛ծ, որ արժանացրիր ինձ մեռնել Քո սուրբ անուան համար, լսի՛ր Քո ծառայի աղաչանքները եւ ընդունի՛ր ինձ նրանց հետ, ովքեր խաչի եւ մահուան չարչարանքներով ընթացան Քո ճանապարհով: Եւ եթե մանկուց մինչեւ հիմա չարի պատրանքով մեղանչել եմ Քո առջեւ թէ՛ կամաւոր, թէ՛ ակամայ, թէ՛ գիտութեամբ եւ թէ՛ անգիտութեամբ, իմ արեան հեղումով լուա՛ եւ մաքրի՛ր Քո ողորմութեամբ: Շնորհի՛ր նաեւ իմ անունը յիշատակող Քո բոլոր հաւատացեալներին մեղքերի թողութիւն, հոգու եւ մարմնի բոլոր վտանգներից փրկութիւն, ախտերից բժշկութիւն, դեւերին՝ հալածանք, հիւանդներին՝ բժշկութիւն, պատերազմներում յաղթութիւն, բանտերից եւ կապանքներից արձակում, ծառայութիւնից՝ ազատութիւն, խռովքից՝ խաղաղութիւն, նեղութիւնից՝ անդորր, ճանապարհներին՝ առաջնորդական պահպանութիւն, ծովից ալեկոծուածներին՝ հանդարտութիւն, երաշտի դէպքում՝ առատ անձրեւներ, կարկուտի եւ սառնաբեր օդի փոխարէն դադար, մորեխների եւ բոլոր զեռուների հալածում, որոնք մարդկանց մեղքերի պատճառով նրանց պատուհասելու համար առաջ են գալիս Քո բարկութիւնից: Իսկ ովքեր նուիրական ընծաներով եւ ողորմութիւններով կը կատարեն մեր յիշատակը, ընդունի՛ր այն որպէս անուշահոտութիւն եւ վարձատրի՛ր նրանց բիւրապատիկ բարիքներով թէ՛ այստեղ եւ թէ՛ հանդերձեալում: Եւ այժմ ընդունի՛ր իմ հոգին արդարների օթեւաններում յաւիտենական հանգստի մէջ: Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

Երբ աւարտեց աղօթքը, երկնքից հրեշտակ իջաւ՝ ձեռքին լուսապայծառ պսակ: Նա ասաց. «Զօրացի՛ր, Քրիստոսի քա՛ջ նահատակ, մի՛ երկնչիր մարմինդ սպանողներից, քանզի քո առջեւ բացուել է երկնքի Արքայութեան դուռը: Ինչ որ խնդրեցիր, քեզ տրուեց Աստծուց, եւ քո բարեխօսութիւնը խնդրող հաւատացեալների բոլոր խնդրանքները կը շնորհուեն նրանց»: Երբ մարդկանց բազմութիւնը տեսաւ լուսեպսակը ձեռքին պահած հրեշտակին, աղաղակեց՝ ասելով. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը, Նրանից բացի չկայ այլ Աստուած»: Իսկ

սուրբը, դառնալով զօրքի հաւատացեալներին, ասաց. «Լսէ՛ք ինձ բոլորդ, Քրիստոսին հաւատացողնե՛ր: Այստեղ գտնուելով՝ դուք պիտի տեսնէք իմ նահատակութիւնը: Թող չլինի, որ իմ մահն անյոյս տրտմութիւն պատճառի ձեզ, քանզի այս մահկանացու մարմինը հարկադրաբար է կրում նախահօր պարտքերը: Բայց ես ի Քրիստոս անվախճան յոյս ունեմ եւ Նրա երկրորդ Գալստեանը վերստին անմահ եւ անապական մարմին պիտի առնեմ: Ես ցնծում եմ եւ ուրախ եմ այժմ, քանզի Տէրը կատարեց իմ փափագը, որ ունէի մանկուց, այն էր՝ հաղորդ լինել Իր չարչարանքներին ու վկաների պսակներին: Ինչպէս որ Նա զօրացրեց ինձ մարմնաւոր թշնամիների դէմ պատերազմներում, այսօր կը զօրացնի նաեւ հոգիների թշնամու դէմ պատերազմողներին: Եւ արդ, աւարտելով կեանքիս ճանապարհը եւ հաստատուն պահելով հաւատս՝ ուրախութեամբ գնում եմ Քրիստոսի մօտ: Թող Աստուծոյ խաղաղութիւնը յաւիտեան ձեզ հետ լինի»:

Այս ասելով՝ ծնրադրեց դէմքով դէպի արեւելք եւ կնքեց իրեն սուրբ Խաչի նշանով: Ապա խոնարհեցրեց իր պարանոցը սրի առջեւ եւ ասաց. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ընդունի՛ր Քո ծառայի հոգին»: Այսպէս դահիճը սրով հատեց երանելու գլուխը: Նոյն պահին երկնային լոյս ծագեց, որից բոց ցոլաց ու այրեց հեթանոսներից ոմանց: Երկնքից լսելի եղաւ մի ձայն, որն ասաց. «Վայելչապէս ընդունեցիր քո մարտիրոսութիւնը, ո՛վ երանելի Սարգիս, ե՛կ եւ բոլոր սուրբերի հետ ժառանգի՛ր յաւիտենական հանգիստը»:

Իսկ մի քանի հաւատացեալ զինուորներ, ովքեր ներկայ էին նրա մարտիրոսութեանը, վերցրին երանելու մարմինը եւ պատեցին մաքուր կտաւներով: Այս մասին յայտնեցին թագաւորին, եւ նրա հրամանով դահիճները բռնեցին ու կոտորեցին նրանցից տասնչորս հոգու, ովքեր ազգութեամբ պարսիկներ էին: Հրամայեց նրանց մարմինները նետել գազանների առջեւ, որոնք չմօտեցան նրանց: Ապա մտածում էր հրով այրել տալ սուրբերի մարմինները, որովհետեւ շատ պարսիկներ կատարուած սքանչելիքների պատճառով հաւատում էին Քրիստոսին:

Եւ մինչ այս խորհուրդների մէջ էր, լուր հասցրին Յուլիանոսի գալստեան մասին, որից երկիւղելով մոռացաւ իր չար դիտաւորութիւնները, որ կամենում էր անել սուրբերին եւ զօրք հաւաքելով՝ պատրաստուեց պատերազմի: Իսկ քրիստոնեաները գիշերով եկան եւ, վերցնելով սուրբ Սարգսի եւ տասնչորս զինուորների մարմինները, տարան ու զգուշութեամբ պահեցին մի պատուական տեղում, ուր դրուած էր նաեւ սուրբ Մարտիրոսի մարմինը:

Սուրբ Սարգսի եւ նրա հետ եղողների նահատակութիւնը եղաւ Տիրոջ 362 թուականի վերջին, կամ 363-ի սկզբին, իսկ ըստ Յայսմաւուրքի՝ յունուարի 31-ին, ուր գրուած է, թէ սուրբ Սարգիսը նահատակուեց Դաղման քաղաքի մօտ գտնուող Մազընդարան կոչուած գեղեցկատես վայրում: Քրիստոնեաները, վերցնելով սուրբ Սարգսի մարմինը, պատուով տարան Համիան քաղաք: Իսկ յետոյ, Մեսրոպ մեծ վարդապետը գալով այդտեղ, վերցրեց սուրբ Սարգսի մարմինը, տարաւ Կարբի եւ մեծ պատուով ամփոփեց Ուշիում: Այդ տեղում կառուցեց մի հռչակաւոր վանք [illegible], որի աւերակները կան մինչ օրս:

Նա վերցրեց սուրբի ատամներից մէկը, տարաւ Վիրաց երկիր՝ Գագ [illegible], դաշտ, եւ զետեղեց խաչափայտի մէջ: Ապա օծեց խաչը եւ կանգնեցրեց մի բլրի գագաթին, որը մինչ օրս կոչւում է «Գագայ սուրբ Սարգիս»: Այդ տեղում կառուցուած վանքը յիշւում է ԺԳ դարի 30-ական թուականներին, երբ Վանական կոչուած մեծ վարդապետ Տաուշեցին [1181-1251 թթ.] գերութեան մէջ գտնուող իր եւ իր աշակերտների փրկութեան յոյսով ասել է. «Ես կը գնամ, կ՚ընկնեմ Սուրբ Նշանի ոտքը, որ սուրբ

Սարգսի անունով է, եւ նրա միջոցով Տիրոջից կը խնդրեմ բոլոր վանականների համար, որոնք գտնւում են անօրէնների ձեռքում, որպէսզի Աստուած զուցէ Իր գութով ազատի», որովհետեւ Գագում բոլոր նեղեալների, մանաւանդ գերիների համար մի հրաշագործ խաչ կար. ովքեր ապաւինում էին նրան ամբողջ սրտով, հէնց ինքը՝ սուրբ նահատակ Սարգիսը, բացում էր բանտերի ու արգելանոցների դռները, քանդում էր շղթաները ու մարմնաւոր տեսքով առաջնորդում իրենց տեղերը: Եւ եղաւ այնպէս, ինչպէս որ ասաց վարդապետը: Այդ հրաշքները տարածուած էին բոլոր ազգերի մէջ, եւ ասում էին, թէ այդ խաչը կանգնեցրել է մեր սուրբ Մեսրոպ վարդապետը:

Նոյն տեղեկութիւններն է տալիս նաեւ սուրբ Սարգսին ձօնուած պանծալի շարականը՝ գրուած Շնորհալու կողմից, ով շարադրեց բուն վկայաբանութիւնը: Այնտեղ յայտնաբանւում է, որ սուրբ Սարգիսը նշանաւոր էր հրաշագործ վկաների մէջ եւ արագահաս օգնական բոլոր նրանց, ովքեր ապաւինում են նրա բարեխօսութեանը:

Սուրբ Սարգսի, նրա որդի Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների տօնը Հայաստանեայց սուրբ Եկեղեցում միշտ նշւում է հնգօրեայ Առաջաւորաց պահքից անմիջապէս յետոյ՝ շաբաթ օրը: Այս Առաջաւորաց պահքն առընչութիւն չունի սուրբ Սարգսի հետ, որովհետեւ այն հայոց առաջին շաբաթապահքն է՝ կարգուած սուրբ Գրիգոր Լուսաւորչի կողմից, ով երբ ելաւ Վիրապից, ամէնքի համար հնգօրեայ ծոմապահք հաստատեց: Նոյն ինքը՝ Լուսաւորիչը, աւանդեց հայոց եկեղեցիներին, որ այդ պահքը պահեն ամէն տարի, որովհետեւ դրանով ազգովին բուժուեցին բոլորը, եւ որպէսզի չմոռացուի Աստուծոյ երախտիքը: Իսկ որ այս պահքն ասւում է նաեւ սուրբ Սարգսի անունով, նոյնանունութեան պատճառով թող ոչ ոք չգայթակղուի, որովհետեւ Սարգսի նահատակութեան օրը, որը եղաւ յունուարի 31-ին, Առաջաւորաց պահքի յաջորդ՝ շաբաթ օրն էր:

ՍՈՒՐԲ ԱՏՈՄԵԱՆ ՁՕՐԱՎԱՐՆԵՐԻ՝ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ԵՒ ՎԵՐՋԻՆՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, բարեխօսութեամբ սրբոց Ատոմեանց,
որք նահատակեցան ի ճակատամարտ
պատերազմի. յաղթող գտան ընդդէմ թշնամւոյն.
բարեխօսութեամբ սոցա, Քրիստո՛ս, խնայեա՛ ի մեզ:
Որք առին զպարգեւս զրահս հաւատոյ սրտից իւրեանց
եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փրկութեան զնշան Խաչին.
սուսեր ընդ մէջ ածեալ զճշմարիտ Սուրբ Հոգին.
բարեխօսութեամբ սոցա, Քրիստո՛ս, խնայեա՛ ի մեզ:
Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանդ Քում սրբոյ

եւ բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իւրեանց
ի տեղւոջ հեղման սուրբ արեան իւրեանց.
բարեխօսութեամբ սոցա, Քրիստո՛ւս, խնայեա՛ ի մեզ:
(Շարակնոց)

ԱՌԱՋԻՆ ԱՏՈՄԵԱՆ ՁՕՐԱՎԱՐՆԵՐ

Շուրջ 1000 հոգի, նահատակութիւնը՝ 449 թուականին:

Մինչ ողջ աշխարհում ծաղկում էր քրիստոնէական հաւատը, Պարսից Յազկերտ կրակապաշտ արքայի ժամանակներում մեծ հալածանքներ սկսուեցին արեւելեան ազգերի, յատկապէս հայոց ազգի վրայ: Պարսից աշխարհում ապրող քրիստոնեաների օգնութեամբ երկրում աճեցին հաւատացեալների թիւը, ովքեր սկսեցին յայտնապէս պաշտել սուրբ հաւատը, իսկ մոգպետներն ու մոգերը, իրենց խորհրդատու ունենալով բանսարկուին, հաւաքուեցին եւ միաբան մօտեցան թագաւորին՝ ասելով. «Թող յայտնի լինի քո տէրութեանը, որ մեր երկրից վերանում է մազդէական կրօնը եւ մեր նախնիների պաշտամունքը: Եւ այս ամէնի պատճառն այն է, որ բոլորը խոտորւում են դէպի քրիստոնէութիւնը: Արդ, եթէ չհրամայես սրով, հրով կամ խաչելութեամբ վերացնել այդ քրիստոնեայ կոչուածներին, յատկապէս Հայոց աշխարհից այստեղ եկած իշխաններին ու հասարակ ժողովրդին, ովքեր կրակապաշտութեան ու մոգութեան ամենամեծ թշնամիներն են, ապա չեն կարող զօրանալ մեր աստուածների պաշտամունքները»:

Այնժամ թագաւորը շտապ հրամայեց հրովարտակ տարածել իր տէրութեան բոլոր սահմաններում, ըստ որի՝ պէտք է ոչ ոք չհամարձակուէր իր անձը քրիստոնեայ կոչել, այլապէս կը դատապարտուէր մահուան՝ սրով, հրով կամ խաչելութեամբ: «Իսկ ովքեր կը կատարեն մեր հրամանը,- գրուած էր հրովարտակում,- կը պաշտեն կրակը եւ կ'ընդունեն մոգութիւնը, կ'արժանանան մեծ պատիւների եւ իշխանութեան»:

Այնուհետեւ մեծ հալածանքներ սկսուեցին քրիստոնեաների դէմ. խոշտանգում էին նրանց սարսափելի տանջանքներով եւ դաժանօրէն մահուան մատնում: Նրանցից քաջերը պսակւում էին՝ արհամարհելով տանջանքներն ու մահը, եւ ասում էին սուրբ Պօղոսի պէս. «Ո՞վ կը բաժանի մեզ Քրիստոսի սիրուց՝ տառապա՞նքը, թէ՞ անձկութիւնը, թէ՞ հալածանքը, թէ՞ սովը, թէ՞ մերկութիւնը, թէ՞ վտանգները, թէ՞ սուրը» [illegible], քանզի մահուամբ եւ չարչարանքներով պիտի ժառանգենք անանց ու անճառ բարիքները», իսկ տկարներից ոմանք, յաղթուելով մահուան երկիւղից, ոմանք էլ՝ անցաւոր կեանքի սիրուց, խոնարհուեցին թագաւորի կամքին՝ ի կորուստ իրենց անձանց:

Այդ շրջանում հայոց ազատագունդը Յազկերտի հրամանով երկու քաջ նախարարների՝ Ատոմ Գնունու եւ Մանաճիհր Ռշտունու զօրավարութեամբ պատերազմներ էր մղում: Նրանք համարձակ պաշտում էին քրիստոնէութիւնը, որի համար թագաւորը որոշեց նրանց իր մօտ կանչել եւ հրապուրել արեգակի ու կրակի պաշտամունքներով: Նա իր նախարարներից մէկի հետ խաղաղութեան եւ սիրոյ խօսքերով լի հրովարտակ ուղարկեց նրանց, ուր գրուած էր. «Աստուածներին հաւասար արքայից արքայ Յազկերտից. մեր տէրութեան կողմից ողջոյն ենք յղում մարզում գտնուող հայոց իշխաններին ու ծառաներին: Յիշեցինք ձեր վաստակը եւ քաջութիւնը մեր թշնամիների հանդէպ եւ կամենում ենք ձեզ մեծ պատուով ու ճոխութեամբ արձակել ձեր երկիրը, որ այդ տեսնելով՝ ձեր եղբայրներն առաւել փութան մեզ ծառայութեան: Շտա՛պ արքունիք հասէք»:

Երբ հայոց ազատագունդը լսեց թագաւորի հրամանը, տեղեկացաւ նամակին եւ նախարարի պատգամներին, տեսաւ չարի գաղտնաձիգ նետերը, որն անդադար մարտնչում է Աստուծոյ ծառաների դէմ: Սակայն ամենեւին ցոյց չտալով, որ հասկացել են թագաւորի դաւադիր մտադրութիւնը, ողջ սրտով Տիրոջն աղօթելով՝ ճանապարհ ընկան դէպի արքունիք:

Երբ հասան Հայոց եւ Պարսից աշխարհներ տանող ճամփաբաժանին, մի տեղ դադար առան, ուր Աստուծոյ տեսչութեամբ եւ շնորհով տէր Ատոմ Գնունին ու տէր Մանաճիհր Ռշտունին՝ իրենց իշխաններով հանդերձ, խորհուրդ արեցին եւ ասացին. «Մենք ճանաչում ենք մեր հաւատի թշնամի պիղծ ու անօրէն թագաւորին: Նա մեզ կանչում է միայն նրա համար, որ հեռացնի մեզ մեր սուրբ հաւատից եւ մոգութեան դարձնի: Նա կամենում է մեզ հնազանդեցնել իր չար խորհուրդներին, լոյսի փոխարէն մեզ խաւար դարձնել եւ անցաւոր պատիւներ խոստանալով՝ հեռացնել յաւիտենական բարիքներից, որոնք ճշմարիտն Աստուած խոստացաւ Իր ծառաներին սուրբ առաքեալների ու մարգարէների միջոցով: Արդ, թէպէտ մենք անարժան ենք, սակայն Տիրոջն ապաւինելով՝ արժանաւոր կը լինենք: Աստուած միայն մեր կամքի յօժարութիւնն է փնտռում, որպէսզի բոլորիս առատաձեռնի Իր պարգեւների անսպառ գանձերից»:

Ապա միաբան նախընտրեցին մեռնել մեր Տէր Յիսուս Քրիստոսի սուրբ անուան համար, քան թէ կարճ ժամանակ մեղքերի մէջ վայելել աշխարհը: Ուստի որոշեցին չընդունել արքայի հրաւէրը, այլ խոյս տալ դէպի իրենց երկիրը: Եւ թէպէտ քաջ գիտէին, որ պիտի բորբոքուէր թագաւորի ցասումը, սակայն, խրախուսուելով սուրբ Աւետարանի այն խօսքերից, թէ՝ «Մի՛ երկնչէք նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին չեն կարող սպանել» [2], չզարհուրեցին ժամանակաւոր մահից եւ ապաւինելով Սուրբ Երրորդութեան տնօրինութեանը՝ ուղղուեցին դէպի Հայոց աշխարհ:

Երբ թագաւորը տեղեկացաւ այս մասին, մի ստուար գունդ ուղարկեց նրանց հետեւից՝ հրամայելով բոլորին սրի քաշել, եթէ չկատարէին արքայի կամքը, որն էր՝ վերադառնալ եւ ընդունել իրենց պաշտամունքը: Իսկ սուրբ երանելիները, հասնելով Հայոց երկիր՝ Անձեւացեաց գաւառը [3], լեռներում իրենց համար մի յարմար վայր ընտրեցին: Այնտեղ քարանձաւներից մէկում մի հրեշտականման սուրբ ճգնաւոր էր ապրում: Գալով նրա մօտ, ծունկի իջան եւ խնդրեցին սուրբին աղօթել իրենց համար, ապա օրհնութիւն ստացան նրանից եւ պատմեցին կատարուած բոլոր դէպքերի ու ճանապարհի նեղութիւնների մասին:

Աստուծոյ սուրբ այրը, Սուրբ Հոգուց ներշնչուած, նրանց համար մարգարէացաւ վկայական մահուամբ երջանիկ նահատակութեան մասին եւ ասաց. «Երանելի՛ էք, քրիստոսասէ՛ր այրեր, քանզի շուտով պիտի տեսնէք Նրան, Ում տենչում էք: Ձեզ օգտակարը կը հոգայ Ինքը՝ Տէր Յիսուս Քրիստոս»: Դարձեալ օրհնութիւն ստանալով նրանից՝ մեծ ուրախութեամբ գիշերեցին նրա մօտ եւ ինչպէս հրեշտակների մի բանակ՝ սաղմոսելով օրհնեցին Աստծուն:

Եւ ահա գիշերուայ մէջ սուրբ Ատոմին մի սքանչելի տեսիլք երեւաց. լոյսը, կամարաձեւ փայլելով, խորան կազմեց ամբողջ գնդի վրայ, եւ լուսաւոր զգեստներով ու ահաւոր տեսքով մի այր պսակներ բաշխեց բոլորին՝ ասելով. «Քաջալերուէ՛ք, Քրիստոսի՛ զինուորներ»: Իսկ սուրբ Ատոմը, մեծ հիացմամբ տեսիլքից զարհուրած, անմիջապէս սթափուեց եւ սկսեց արտասուքներով բազում աղաչանքներ ու աղօթքներ մատուցել բարերար Աստծուն եւ ասել. «Տէ՛ր, Քեզ յայտնի են մեր սրտերի խորհուրդները: Դու գիտես, որ Քո սուրբ անուան համար վտանգի մատնեցինք մեր

անձերը եւ կամաւորապէս յանձն առանք մահը՝ անարգելով անօրէն թագաւորի հրամանը: Նա մոլորեցնում է մեզ սնոտի խօսքերով, հրաժարուել տալիս Քո բարիքներից եւ Քո ճշմարտութիւնից մոլորուածներին հրապուրում մառախլապատ մոխրապաշտութեամբ: Արդ, բարերար Տէ՛ր, վերակացո՛ւ եղիր մեզ Քո օգնականութեամբ, որպէսզի չպարծենայ թշնամին՝ ասելով, թէ՝ յաղթեցի Քո ծառաներին: Եւ թէպէտ մենք անարժան ենք, սակայն, Դո՛ւ, Տէ՛ր, միշտ ցոյց ես տալիս Քո ողորմութիւնները մեղաւորների հանդէպ, քանզի Դու չեկար կանչելու արդարներին, այլ մեղաւորներին՝ Քո մեղսաքաւիչ եւ կենդանարար Արեան հեղումով»:

Նա աղօթեց մինչեւ լուսաբաց, իսկ հետեւեալ օրը, երբ բոլորն արթնացան եւ կատարեցին առաւօտեան աղօթքի կարգը, սուրբ Ատոմը նրանց պատմեց գիշերուայ ուրախալից տեսիլքի մասին: Բոլորը լցուեցին անպատում խնդութեամբ, գոհացան Տիրոջից եւ ծնրադրելով բարերար Աստուծոյ առջեւ՝ միաբերան աղաղակեցին՝ ասելով. «Մեր Տէր եւ Աստուած Յիսուս Քրիստոս, եթէ արժանի ես համարում, որ մեռնենք Քո սուրբ անուան համար, ապա ինչպէս սպանդի տարուող ոչխարներ, պատրաստ ենք ամէն ժամ մեռնել ու չպարտուել անաստուածներից՝ մոխրապաշտ թագաւորից եւ նրա զօրքից»:

Իսկ պարսից զօրքն ընկաւ հայոց գնդի հետեւից, հասաւ Անձեւացեաց գաւառ եւ լրտեսների ու տեղի բնակիչներից մէկի տեղեկութեամբ անմիջապէս մեծ զօրքով մօտեցաւ այն լերանը, ուր գտնւում էին սուրբերը: Սակայն նախ պատգամաբերներ ուղարկեց նրանց մօտ՝ յայտնելու թագաւորի հրամանը, ըստ որի՝ պէտք է ընդառաջ գալով՝ ընդունէին մոգութիւնը եւ վերադառնային պատուով կամ էլ սրի քաշուէին:

Երբ իմացան, որ նրանք անտեսում են այդ հրամանը, գրոհեցին լերան վրայ, իսկ քաջ նահատակները, տեսնելով անօրէնների յարձակումը, սկսեցին ձայն տալ միմեանց եւ ասել զինուորական հրամանը՝ «Զի՛ կալէք» ¥այսինքն՝ ձի՛ հեծէք, որի համար յետագայում տեղի անունը «Զիակալի վանք» կոչուեց¤: Իւրաքանչիւրը հեծեց իր երիվարը, բոլորը հաւաքուեցին մի բլրի վրայ եւ անցան մարտական դիրքի: Բանակի կէսը, Մանաճիհր Ռշտունու գլխաւորութեամբ առաջ անցնելով, մտածում էր թիկունքից պաշարել թշնամիներին կամ մի այլ հնարք գտնել: Այնժամ Աստուած Իր նախախնամութեամբ այցելեց Իր սիրելիներին եւ յայտնապէս ցոյց տուեց, որ եկել է ժամը ցոյց տալու ոչ միայն մարմնի, այլեւ հոգու արիութիւնը, քանզի այն գիշերային տեսիլքը դարձեալ ակներեւ երեւաց բոլորին. նրանք տեսան պայծառ լոյս եւ անթառամ պսակներ:

Երանելիներն անմիջապէս իջան երիվարներից, ցած գցեցին իրենց զէնքերը, ցնծութեամբ առաջ եկան՝ զոհուելու եւ Քրիստոսի սուրբ անուան համար իրենց անձերը կամաւոր մահուան մատնելու: Սուրբ Ատոմը նախ իր սքանչելատես որդուն՝ Վարոսին առաջ մատուցեց, ապա ինքնանուէր յօժարութեամբ առաջ եկաւ իր ընկերների հետ: Նրանք իրենց պարանոցները յանձնեցին պարսկական սրին՝ ասելով. «Սիրեցինք Քեզ, Տէ՛ր, թող լսելի լինի մեր աղօթքի ձայնը եւ ընդունի՛ր մեր կամաւոր պատարագը՝ խառնելով մեզ Քո սուրբերի գնդին»: Նրանց սուրբ եւ վարդագոյն արիւնը ոռոգեց երկիրը, եւ այդպէս Ատոմի ողջ գունդն արժանացաւ նահատակութեան՝ իրենց հոգիները բարի խոստովանութեամբ աւանդելով Քրիստոսին եւ խառնուելով վերին զօրաց դասին:

Այդտեղ արքունի գնդից մի շնորհալի պարսիկ, ով եւս արժանացաւ տեսնելու այն տեսիլքը, որ երջանիկ վկաները տեսան իրենց նահատակութիւնից առաջ, բարձրաձայն աղաղակեց եւ ասաց. «Ես եւս քրիստոնեայ եմ»: Եւ նոյն պահին

նահատակուեց անօրէնների ձեռքով՝ մկրտուելով իր վկայական արեամբ եւ Աստուծոյ տեսչութեամբ կարգուեց սուրբերի գնդում: Իսկ երանելիների գնդից մէկը կոտորածի ժամին ճողոպրեց մի հովուի մօտ, հագաւ նրա հանդերձները, վերցրեց նրա ցուպն ու մախաղը եւ իր անձը փրկելու համար ընդունեց հովուի կերպարանք՝ փոխանակելով լուսեղէն պատմուճանն ու մշտնջենաւոր կեանքը ապականացու զգեստի եւ ժամանակաւոր կեանքի հետ (ինչպէս քառասուն մանուկներից նա, ով լքեց իր ընկերներին եւ վազեց բաղնիք, իսկ նրա տեղը լրացրեց բաղնէպանը, քանզի թոյլերն ու երկմիտները միշտ կորստեան են մատնւում): Իսկ հովիւը, յօժարութեամբ եւ բարի հաւատով դիմելով նահատակութեան վայրը, նրա փոխարէն ընդունեց մարտիրոսութեան վճիռը եւ երկնաւոր հարսնարանում հանդիսակից եւ պսակակից եղաւ սուրբ գնդին:

Երկու օր անց այն սուրբ ճգնաւորին գիշերուայ մէջ տեսիլք երեւաց. բոլոր վկաների վրայ հրաշալի եւ սքանչելի լոյս էր փայլում: Առաւօտեան այդ մասին նա մեծ հիացմունքով յայտնեց տեղի եպիսկոպոսին եւ նրա հրամանով քահանաների, իշխանների եւ ժողովրդի հետ շտապ այնտեղ գնաց: Սուրբերի նշխարները հաւաքեցին մաքուր կտաւների մէջ եւ ջահերով, խնկարկութեամբ, սաղմոսներով եւ հսկման աղօթքներով ամփոփեցին իրենց հանգստարաններում, որից յետոյ նրանց յիշատակը միշտ տօնախմբւում է մեծ ուրախութեամբ:

Արդ, այդ տեղում նահատակուողներն էին՝ սուրբ Ատոմ Գնունին իր որդու՝ Վարոսի հետ, Վարս Ոստանիկը, Ներսէհ Երուանդունին, Վարձաւոր Արծրունին եւ նրանց այլ բազմաթիւ սուրբ ընկերները, ովքեր նահատակուեցին նրանց հետ եւ ընդունեցին անապական պսակները: Նրանց անունները թէպէտ չգրուեցին գրքերում, սակայն գրուեցին յաւիտենական կեանքի Գրքում:

Իսկ սուրբ Մանաճիհր Ռշտունին, ով երանելի Ատոմի նիզակակիցն էր, իր ընկերներով առաջ անցնելով, արդէն հասել էր իր երկրի սահմաններին՝ Ռշտունեաց գաւառ: Նա սպասում էր դէպքերի աւարտին եւ իր անձն ու իւրայիններին պատրաստում Տիրոջ համար վկայական մահուան: Եւ ահա հասաւ պարսից անազորոյն զօրքը ու նախորդների օրինակով անխտիր կոտորեց բոլորին: Այդպէս երանելիները բարի խոստովանութեամբ նահատակուեցին «Ոչխարաց վանք» կոչուած տեղում: Հաւատացեալները պատուով հաւաքեցին նրանց նշխարները եւ ամփոփեցին բլրի վրայ գտնուող եկեղեցում: Այսպէս, պարսից Յազկերտ թագաւորի օրօք՝ 449 թուականին, վկայեցին ու պսակուեցին Ատոմեանց արի եւ քաջ նահատակները՝ իրենց զօրքով հանդերձ:

Առաջին սուրբ Ատոմեանները, զօրացած լինելով Հզօրի Աջով, արհամարհեցին իրենց կեանքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի սուրբ անուան համար, ամաչեցրին ամբարտաւան թագաւորին իր խորհրդակից սատանայի հետ եւ ընդունեցին յաղթութեան պսակը: Շատ հրաշքներ էին կատարւում բոլոր նրանց վրայ, ովքեր սուրբերի տապանների մօտ հաւատով դիմում էին նրանց բարեխօսութեանը:

ԵՐԿՐՈՐԴ ԱՏՈՄԵԱՆ ՁՕՐԱԿԱՆՆԵՐ

Նահատակութիւնը՝ 853 թ. Դուին քաղաքում

Բաղդատում հագարացիների իշխանութեան ժամանակաշրջանում եւ Յովհաննէս Ովայեցու կաթողիկոսութեան տարիներին (833855թթ.) Մաքսամայ Ջաֆիր ամիրապետը Բուղա անունով ոստիկանին ուղարկեց Հայոց աշխարհ: Եւ թէպէտ երկրում կային բազմաթիւ մեծամեծ նախարարազուն իշխաններ, սակայն առանց իշխանապետի իւրաքանչիւր մէկն ինքնագլուխ տիրում էր իր գաւառին:

Արդ, Բուղան, անհամար զօրքով գալով Հայաստան, աւերակ դարձրեց ողջ երկիրը եւ հինգ տարի հարուածներով ու գերութեամբ ոտնակոխ արեց բնակիչներին: Նա պատերազմող եւ առոյգ երիտասարդներից ընտրում էր վայելչատեսներին, որոնց պահում էր կապանքների մէջ՝ իրենց կրօնին դարձնելու համար, իսկ միւսներին՝ համընդհանուր սրի քաշում: Նա շատերին հեռացրեց սուրբ հաւատից, շատ շատերին՝ սրի քաշեց, եւ ասես այդ շրջանում Հայոց աշխարհը դարձաւ քաջ նահատակների կենդանի վկայարան:

Աւերելով նաեւ Տարօնն ու Վասպուրականը՝ Բուղան շարժուեց դէպի Արարատեան գաւառ՝ իր հետ տանելով ընտրեալ գերիների մի բազմութիւն, որը հաւաքել էր տեղից տեղ անցնելով: Միառժամանակ որոշեց դադար առնել Դուին քաղաքում՝ այնտեղ ձմեռելու, ուր ասպատակելու համար արձակեց իր զօրքին, որպէսզի գերեվարի ու կողոպտի շրջակայ վայրերը: Հրաման տուեց, որ բոլորին սրի քաշեն, բայց քաջերին ու գեղեցկատեսներին ողջ պահեն ու իր մօտ բերեն: Եւ ըստ հրամանի՝ գազանաբար յարձակուեցին ու սփռուեցին այս ու այն կողմ: Բռնեցին զինուորական կարգի մէջ գտնուող զինավարժ անձանց, պարանները վզին գցած քարշ տուեցին ոստիկանի մօտ, որոնց այդ անագորոյն այրը հրամայեց նախկին գերեալների հետ պահել մի տեղում՝ կրկին անգամ անձամբ ընտրութիւն անելու համար. ում անպիտան էր գտնում, առանձնացնում էր ու մատնում սրի, իսկ ում վայելչատես ու յաջողակ էր գտնում, արգելափակում էր բանտում:

Ապա երանելիներին իր առջեւ բերեց եւ սկսեց խօսել նրանց հետ նախ համոզիչ խօսքերով եւ ապա՝ սպառնալիքներով, որպէսզի նրանց ուրանալ տայ քրիստոնէութիւնը ու դարձնի իրենց կուռքերի պաշտամունքին: Սակայն նրանք, հաստատուն մնալով, լաւ համարեցին շուտափոյթ առ Աստուած գնալ, քան միառժամանակ վայելել աշխարհը եւ կորցնել իրենց հոգիները: Նրանք ասում էին. «Անհնար է մեզ փոխանակել լոյսը խաւարի հետ կամ երկնչել ժամանակաւոր մահից, քանզի այս ժամանակաւոր չարչարանքները արժանի չեն համեմատուելու հանդերձեալ փառքի հետ, որ պիտի ունենանք»: Այս անվեհեր պատասխանից բռնաւորն սկսեց մախանքներով չարութիւն նիւթել եւ չարանալով նրանց զուարթադէմ երեսներից՝ խոշտանգեց նրանց ծանր կապանքներով ու քաղցով, տանջող մեքենաներով եւ հարուածներով այնքան, որ ամբողջովին կեղեքուեցին նրանց մարմինները: Ապա ատեան նստեց եւ սկսեց կրկին փորձել նրանց՝ խոստումներ տալով, որպէսզի, թերեւս զարհուրելով դաժան կտտանքներից եւ սպառնալիքներից, ընդունեն իր կամքը: Սակայն նրանք համբերում էին արիաբար, արհամարհում նեղութիւնները, որ կրում էին եւ ուրախութեամբ յօժարում մահը, որովհետեւ հանապազ զօրանում էին այն կենդանի ջրից, որ բխում էր Քրիստոսի կողից եւ ցօղում իրենց վրայ հոգեւոր վտակներով: Ուստի ամենեւին տեղի չտուին բռնաւորի խօսքերին եւ քաջաբար մերժեցին նրա խոստումները:

Բուղան, տեսնելով, որ քաջ այրերի կողմից արհամարհուեց ինչպէս մի անպիտան մանուկ կամ ինչպէս զառամեալ մի ծեր, ով դատարկ խօսքեր է բարբաջում, եւ տեսնելով նաեւ, որ նրանք բոլորը հաստատուն են ու կամենում են մեռնել Քրիստոսի սուրբ անուան համար, կատաղած գազանի պէս բորբոքուեց անասելի բարկութեամբ. հրամայեց դուրս բերել նրանց բանտից եւ օրէցօր հրապարակաւ սպանել, որպէսզի միւսները թերեւս ուրանան իրենց հաւատը: Սակայն նրանք, խրախուսուած աստուածային յոյսով, գնում էին ոչ թէ բարուց դէպի չարը, այլ չարից դէպի բարին, գնում էին որպէս պարարտ գառներ՝ ինքնանուէր յօժարութեամբ եւ մեծ խնդութեամբ պատարագուելու կենդանի Աստծուն եւ ասում. «Քեզ համար ենք

մեռնում հանապազ, համարուեցինք որպէս մորթուելու ոչխար»: Այդպէս ուրախութեամբ շտապում էին ելնել մարմնից եւ մտնել առ Աստուած: Եւ այնպիսի փափագով ու կայտառութեամբ էին գնում դէպի իրենց նահատակութեան վայրը, որ ասես թէ այնտեղ իրենց հարսանեաց հանդէսն էր սպասում:

Դահիճները մերկացրին նրանց, իսկ նրանք էլ շտապեցին մերկանալ ապականացու մարմնի զգեստից, որպէսզի պատուեն իրենց սուրբ եւ վարդագոյն արեամբ՝ որպէս հարսնացեալների ծաղկեայ պատմուճան: Երկրպագելով Քրիստոսին՝ թագակապ ոսկեհուռ պսակների փոխարէն փրկչական Խաչի նշանն էին դրոշմում իրենց երեսներին ու մանեակների փոխարէն փայլատակող սուրն ընդունում իրենց պարանոցներին: Սակայն երանելիների գլխատման տեսարանները յոյժ քստմնելի եւ անտանելի էին տեսնողների համար, որովհետեւ անողորմ դահիճներն անվարժ էին գլխատում. սրով հարուածում էին նրանց գլուխներին ու պարանոցներին նրանց նման, ովքեր կտրում են անտառի փայտերը՝ կացնով այս ու այն կողմ հարուածելով: Այդպէս անխնայ անդամ առ անդամ յօշոտեցին նրանց: Իսկ երանելիներից Գէորգ Բուկացի անունով մի երիտասարդ, ժիր եւ առոյգ մէկը, սրի առջեւ կանգնած զուարթագին սպասում էր իր նահատակութեանը: Հեղգ եւ անպիտան դահիճն սկսեց հարուածել նրա պարանոցին՝ իբրեւ մի անզգայ քարեղէն կամ փայտեղէն իրի, սակայն սրի հարուածն անգամ հետք չթողեց նրա մարմնի վրայ: Նահատակը զարմանքով դարձաւ դահճի կողմը եւ կամեցաւ տեսնել, թէ ինչո՞ւ չկտրեց սուրը: Այնժամ դահճի ձեռքից խլեց շողշողացող սուրը, զննեց այն բոլոր կողմերից եւ ասաց. «Ո՛վ անարի ու անպիտան զինուոր, այս սուրը հատու է, իսկ իմ գլուխը՝ պատրաստ, ինչո՞ւ չես կարողանում կտրել: Եթէ չես հաւատում, ապա փորձով համոզուիր»: Եւ շեշտակի հարուածելով դահճի պարանոցին, անմիջապէս կտրեց նրա գլուխը: Թող ոչ ոք չգայթակղուի կատարուածի համար, քանզի անմտօրէն չվարուեց այս առաքինի նահատակը, այլ որպէսզի դահիճների դանդաղկոտութիւնից իր նահատակակիցները չփախչեն մահից եւ չթուլանան իրենց հաստատակամութիւնից: Եւ, արդարեւ, ինչպէս Թովմա Արծրունին է գրում, զարմանք տիրեց բոլորին եւ միաբան փառք տուին Աստծուն, Ով զօրացրեց Իր սուրբերին եւ ամաչեցրեց սատանային՝ իր գործակիցներով հանդերձ: Ապա դահիճները, նրան դաժան տանջանքների մատնելով, սպանեցին, իսկ միւսներին արագարագ գլխատեցին:

Արդ, մնացին միայն եօթ այրեր, ովքեր նշանաւոր էին իրենց հոգեւոր ու մարմնաւոր ձիրքերով. նրանցից գլխաւորն էր Ատոմ Անձեւացին՝ Աղբակ գաւառից, միւսներն էին՝ Մլեհ Վարաժնունին, Վասակ թերեւս Ակէացին, իսկ միւս չորսի անունները չեն յիշատակւում: Բռնաւորը նրան ու իր վեց ընկերներին իրենց սքանչելի եւ հրաշագեղ արտաքինի, նաեւ կորովի ու զինավարժ լինելու համար, բայց առաւել շատ իրենց ընկերներին քաջալերելու մէջ մեծ դէր ունենալու համար, առանձին պահեց: Չկամեցաւ նրանց խառնել միւսների հետ, ովքեր նահատակուեցին սրով, այլ մտածում էր, թէ ինչպէս նրանց հնազանդեցնի իր կամքին: Սկսեց խօսել սիրով եւ ողոքելով ջանում էր փոխել նրանց միտքը: Բազում պարգեւներ, ոսկեայ եւ արծաթեայ գանձեր էր սփռում նրանց առջեւ, խոստանում էր տալ գիւղեր, կալուածքներ եւ երեւելի ու փառաւոր դարձնել արքունիքում, սակայն երանելիներն ամենեւին չնայեցին նրա խոստումներին եւ ոչ մի կերպ յանձն չառան խաբուել աշխարհի սնոտի հարստութիւնից: Նրանք ասում էին. «Մեր կեանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ: Գիտե՛նք, որ աշխարհի կեանքն

ունայնութիւն է, դիւրամոռաց երազ եւ անցողիկ ստուեր, սակայն այն պարգեւներն ու անվախճան կեանքը, որ պատրաստել է Աստուած Իր սիրելիների համար, յաւիտենական են ու անսպառ: Ովքեր հեռացել են ճշմարտութիւնից, ուրացել սուրբ եւ անբիծ քրիստոնէական հաւատը, նրանց համար անսպառ են յաւիտենական եւ մշտնջենաւոր տանջանքները: Ուստի մի՛ հարցաքննիր մեզ, այլ արա՛, ինչ որ կամենում ես, քանզի մենք շտապում ենք տալ այս անցաւոր կեանքը եւ գնել անանց կեանքի անգին հարստութիւնները»: Այնժամ բռնաւորը, քաղցրութիւնը դառնութեան փոխարկելով, հրամայեց նրանց մատնել դաժան տանջանքների եւ կտտանքների, որոնք լեզուն չի կարող պատմել: Երանելիներն ուրախութեամբ էին տանում բոլոր տանջանքները, քանզի յոյսը, Քրիստոսի սէրը եւ վկայութեան ուրախութիւնը թեթեւացնում էին նրանց բեռների անտանելի ծանրութիւնը: Այնժամ բռնաւորը, տեսնելով սուրբերի հաստատակամութիւնը, հրամայեց նրանց բեւեռել փայտին:

Երանելիները խաչի վրայ, գոհանում էին Քրիստոսից անպատում պարգեւների համար, գոհանում, որ իրենց արժանացրեց խաչակից լինել Նրան եւ մեռնել Նրա անուան համար: Սուրբ Ատոմը զուարթօրէն խօսում էր իր խաչակից ընկերների հետ եւ ասում. «Եղբայրնե՛ր, մի՛ զարհուրէք ժամանակաւոր մահից, քանզի թէպէտ չարչարւում ենք Քրիստոսի համար, սակայն հաղորդութիւն ունենք կենդանի Աստուծոյ հետ»: Մինչ այդ սուրբ Ատոմն ուխտել էր սուրբ Գէորգի տօնի օրը մէկ նոխազ ընծայաբերել՝ որպէս աղքատներին կերակուր, սակայն նոյն օրը, լինելով կապանքների եւ տանջանքների մէջ, չէր կարող կատարել իր ուխտը, որի համար իր միտքն աչքերի փոխարէն երկինք բարձրացրեց ու ասաց. «Յիսո՛ւս Քրիստոս, իմ յո՛յս եւ ապաւէն, ուխտաւոր լինելով մեծ նահատակ Գէորգի տօնի այս օրը, կամենում էի նոխազ ընծայել ի պատիւ նրա եւ Քո սուրբ անուան փառքի համար: Եւ արդ, նոխազի փոխարէն ինձ եմ ընծայում Քեզ: Ընդունի՛ր իմ անձի ողջակիզումը եւ խառնի՛ր ինձ ու ինձ հետ եղողներին Քո սուրբ վկաների հետ, ովքեր սիրեցին Քո Գալստեան մեծ Օրը»:

Եւ այսպէս երկայնամտութեամբ համբերելով մեծ պատերազմին ու յաղթելով՝ աւանդեցին իրենց հոգիները ու Քրիստոսից ընդունեցին անեղծութեան պսակները:

Նրանց նահատակութիւնը տեղի ունեցաւ 853 թուականին: Նրանք աւելի քան հարիւր յիսուն այրեր էին՝ չհաշուած գաւառների ու քաղաքների այլ վկաներին:

Դուինի այս վկաները նախորդ Ատոմեաններից տարբերելու համար կոչւում են նոր կամ երկրորդ Ատոմեաններ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նրանց տօնը նշում է Բուն Բարեկենդանից երկու շաբաթ առաջ՝ երկուշաբթի օրը:

ՍՈՒՐԲ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ստուգութեամբ տեղեկացեալք հարցանելով զմարգարէն,
ով ելցէ ի լեառն Տեառն կամ ով կացցէ ի տեղւոջն սրբութեան:
Ահա տեսաք զՍուկաւէտ լեառն դիտակ եւ բնակարան վկայիցն
որոց առեալ զողորմութիւն յԱստուծոյ Փրկչէն իւրեանց:
Որք բարձին զիաչն իւրեանց՝ Խաչեցելոյն խաչակցեցան՝
դիմելով յօժարութեամբ առ սատակիչն՝ որպէս զգառինս ի մէջ գայլոց:
Նոյն եւ զինքն իսկ տեսանեմք Պրոբատիկէ աւազանին, յորս դնին
բազմութիւնք ախտաժէտաց՝ ակն ունելով վերստին ջուրցն յուզման:
Աստանօր նորոգեցաւ մեզ աւազանն Սելոմմայ՝
ի բառնալ զաչս սրտից՝ առ ի մերժել զախտս հոգւոց եւ մարմնոց:
(Շարակնոց)

Նահատակուել են 130 կամ 140 թուականին Բագրեւանդ գաւառի Ջրաբաշիս կամ Սուկաւէտ կոչուած լեռներում:

Սրանք փառաւոր, երեւելի այրեր էին՝ արքայազուններ, ալանաց , թագաւորի արքունիքում պալատականներ եւ զինուորական կարգի մէջ առաջիններ: Ազգական էին ալանների թագաւորի դստերը՝ Սաթէնիկին, ով Հայոց Արտաշէս արքայի՝ Սանատրուկի որդու կինն էր, եւ նրա հետ էլ Ալանաց երկրից Հայաստան էին եկել:

Եւ եղաւ, որ սուրբ Ոսկեանները, ովքեր լսել էին Թադէոս առաքեալի քարոզութիւնը եւ առանձնական կեանք էին վարում Հայոց աշխարհի Ծաղկանց լեռներից մէկի քարայրում, Աստուծոյ տեսչութեամբ եկան արքունիք՝ թագաւորին ու թագուհուն յայտնելու կեանքի Խօսքը: Իսկ Արտաշէս արքան, ով զբաղուած էր պատերազմական հոգսերով, կարեւոր չհամարեց նրանց խօսքը, որոշեց յետոյ՝ մի այլ ժամանակ լսել նրանց եւ զրկուեց կենարար վարդապետութեան լոյսից: Սակայն ոչինչ իզուր չանցաւ. այն պատուական այրերը՝ ալանների երկրից եկած Սաթէնիկի ազգականները, ովքեր մեծարուած էին թագաւորի ու թագուհու կողմից, յօժարութեամբ լսեցին Աւետարանի քարոզութիւնը եւ հաւատացին Քրիստոսին: Եւ այդպէս, աշակերտելով սուրբ Ոսկեաններին՝ գնացին նրանց հետեւից՝ առանձնանալու լեռներում: Նրանցից առաւել տեղեկանալով կեանքի ճանապարհի մասին՝ լուսաւորուեցին եւ մի ծաղկաւէտ ու ջրաբուխ վայրում՝ Եփրատ գետի ակունքի մօտ, մկրտուեցին նրանց կողմից: Նրանցից նշանաւորը, ում կոչում էին Բահադրաս կամ Բարուքադա, մկրտութիւնից յետոյ որպէս խաղաղական կեանք ստացած՝ կոչուեց Սուքիաս (Սուքիաս յունարէն կոչւում է Իսիւքիոս եւ թարգմանւում է «հանդարտ» կամ «լուռ»¤: Նրա միւս ընկերներին կոչեցին Ղուկիանոս, Պողոքտէս, Կոդրատոս, Իդիոքսիքիրոս կամ Անտիոք, Ուքիրոն, Մէմաս, Փոկաս, Սերգիոս, Դոմետիոս, Ադրանիոս կամ Անդրիանոս, Զոսիմէոս, Բիկտոր, Թաղկեսա կամ Թաղդէսա, Յորդանէս, Անաստաթրէոս, Թէոդիտոս կամ Թէոդոտիոս, Յակոբ եւ Թէոդոսիոս. ընդամէնը՝ տասնութ կամ տասնինը հոգի: Մկրտուելիս նրանցից իւրաքանչիւրը նոյն պահին դէմ յանդիման տեսնում էր Քրիստոսին՝ երեւալիս բլրի վրայ՝ այն աղբիւրի դիմաց, որն իրենց մկրտութեան

աւազանն էր: Ուստի ովքեր աւելի առաջ էին մկրտւում, խնդալից սրտով յորդորում եւ շտապեցնում էին իրենց ընկերներին՝ աւետիս տալով ու ասելով. «Ահա կնիքն ընդունելիս տեսնում ենք Քրիստոսին»: Այնուհետեւ կրօնաւորելով սուրբ Ոսկեանների վարդապետների մօտ՝ գոհանում էին Աստծուց անպատում պարգեւների համար, որ շնորհւում էին իրենց: Իսկ այն տեղում, ուր նրանց երեւում էր Քրիստոս, խաչ կանգնեցրին եւ կոչեցին «Աւետեաց Խաչ»:

Սրանից յետոյ, երբ Ոսկեանները եւ Սուքիասեաններն սկսեցին գնալգալ արքունիք եւ քարոզել Քրիստոսին, յայտնի եղաւ Սուքիասեանների դարձը առ Աստուած: Այդ պատճառով թագուհին սկսեց խէթ աչքով նայել նրանց, որովհետեւ նա երկնչում էր արքայից եւ արքայորդուց ու մտածում էր, թէ իրեն համախոհ կը կարծեն իր ազգականներին, որի համար արգելեց Ոսկեանների մուտքը արքունիք: Սուքիասեանները, իմանալով այս մասին եւ տեսնելով, որ իրենց ազգական Սաթէնիկն իրենց հետ չի վարւում այնպէս, ինչպէս նախկինում, սկսեցին խոյս տալ նրանից եւ արքունիքից: Յատկապէս վախենալով, որ միգուցէ վտանգաւոր փորձութիւններ գան ոչ միայն իրենց, այլեւ իրենց վարդապետների վրայ, հեռացան թագուհուց, գնացին իրենց վարդապետների՝ Ոսկեանների հետեւից եւ, կրօնաւորական կեանք վարելով, առանձնացան լեռներում:

Սակայն թագուհու կրտսեր որդիները՝ Վրոն եւ Վնոն, տեսնելով, որ իրենց մօր ազգականներն այլեւս չեն երեւում արքունիքում, թագուհուց իմացան պատճառը եւ նրանց դէմ գրգռեցին իրենց աւագ եղբօրը՝ Արտաւազդին, ով մի վայրենաբարոյ երիտասարդ էր: Տեղեկանալով, թէ որտեղ են գտնւում Բահադրասը՝ Սուքիասը, եւ նրա ընկերները, իրենց հետ վերցրին արքունի զօրականներ եւ ուղղուեցին դէպի նրանց բնակութեան վայրը: Երբ նրանց գտան, սկսեցին համոզել, որ վերադառնան արքունիք, սակայն տեսնելով, որ նրանք չեն կամենում, կանչեցին Ոսկեանների վարդապետներին եւ նրանց ստիպեցին յորդորել իրենց աշակերտներին՝ վերադառնալ թագուհու մօտ: Եւ նրանք ասացին. «Թող իրենք ընտրեն իրենց օգտակարը»: Այս խօսքերից բարկացաւ արքայորդին եւ հրամայեց խողխողել Ոսկեաններին, իսկ Սուքիասեաններին չվնասեց՝ իր մօրը ազգական լինելու պատճառով, եւ խնայեց նրանց:

Երբ երանելի աշակերտներն իմացան սուրբ վարդապետների կոտորածի մասին, մեծապէս սգացին եւ վերցնելով նրանց մարմինները՝ սուգով թաղեցին: Ապա տեսնելով, որ թագուհու ու նրա որդիների պատճառով հանգիստ չեն ունենալու, իսպառ հեռացան նրանցից եւ թաքնուեցին լեռներում՝ մօտ Ոսկեանների մենաստաններին: Ապրում էին նրանց կեանքով եւ օրըստօրէ առաջադիմում իրենց կարգի եւ հրեշտակային վարքի մէջ: Այդ փառաւոր ճգնակեաց այրերն այնքան խստացրին իրենց ճգնութիւնները, որ ծաղկաւէտ լեռների բոյսերով սնուելը մարմնի աւելորդ ցանկութիւն էր թւում: Ուստի շատ չանցած՝ երանելի Սուքիասն ասաց իր ընկերներին. «Եկէ՛ք չոր եւ ոչ թէ արգաւանդ վայրեր փնտռենք մեզ համար, քանզի այս առատ կանաչեղէնը պարարտացնում է մեր մարմինները եւ մարդուն դարձնում ձիերի ու ջորիների պէս, որոնք իմաստութիւն չունեն: Եւ լաւ է, որ տեղափոխուենք այստեղից, որպէսզի չգան թագուհու մօտից եւ չնեղեն մեզ՝ դառնալու մեր նախկին աշխարհական պատուին ու կեանքի ունայն հոգսերին»:

Եւ միաբան գնացին Բազուան, գիւղի Նպատ լերան դիմաց գտնուող Ջրաբաշխ լեռը: Բնակուեցին այդ լերան վրայ, որը յետոյ կոչուեց սուրբերից գլխաւորի՝ Սուքիասի անունով եւ վայրի ոչխարների պէս ճարակելով՝ հանդարտեցին բազում տարիներ: Մաշուեցին ու թափուեցին նրանց հանդերձները, մաշկը օդի խստութիւնից դարձաւ քարի մամուռի պէս, եւ երկնքի ցօղից մարմինները պատուեցին մազածածկոյթով, որը, գլխի մազերի եւ մօրուքների հետ խառնուած, ամբողջովին ծածկեց նրանց: Նրանք նմանուեցին վայրի քօշերի, որի համար էլ, ինչպէս ասում են, քօշեր կոչուեցին: Եւ այսպէս քառասունչորս տարի ապրեցին Սուկաս լերան վրայ՝ առանց հիւանդութիւնների ու պատահարների: Աստուծոյ տեսչութեամբ պահպանուած ապրեցին՝ խոտաճարակ լինելով, ապրեցին մարմնի մէջ որպէս անմարմիններ՝ յարատեւելով մշտամռունչ աղօթքներով եւ ճգնութիւններով:

Երբ Արտաշէս թագաւորից յետոյ Հայաստանում թագաւորեց Արտաւազդը, վերացաւ խաղաղութիւնը Հայոց աշխարհից, քանզի նա անպիտան այր էր եւ միայն երկու տարի թագաւորելով՝ վեր ու վար արեց տէրութեան բարեշինութեան իր հօր հաստատած կարգերը: Իսկ նրան յաջորդող իր Տիրան եղբայրը թէպէտ զգօն այր էր, սակայն անհոգ կեանք էր վարում՝ տրուելով որսորդութեանը եւ զուարճանքներին, որի համար էլ պարսից սէգ ու հզօր արքայ Պերոզը որոշեց յարձակուել Հայոց աշխարհի վրայ եւ հպատակեցնել իր տէրութեանը: Այդ նոյն օրերին Հռոմի կայսր Անտոնինոս Պիոսն արքայական թագ եւ ծիրանի ուղարկեց հայոց Տիրան արքային՝ վերջինիս հռոմէացիների հետ բարեկամութեան մէջ հաւատարիմ մնալու եւ հարկերը վճարելու համար: Այս հանգամանքներից պարտուած՝ Պերոզը որոշեց կորստեան մատնել Հայաստանը՝ ասելով. «Անցնելով կ՚ուաւերեմ նրանց երկիրն ու վրէժ կը լուծեմ՝ ըստ մեր հայրենի սովորութեան», որի համար անթիւ զօրք հաւաքեց, շտապեց հասնել հայոց սահմաններին եւ ասպատակելով ամայացրեց Հայաստանը:

Երկիրն ընկաւ ալեկոծումների ու տագնապի մէջ: Երանելի Սուքիասեաններն իրազեկ էին այս ամէնին եւ մտահոգ սպասում էին, թէ ինչպէս պէտք է պարսից թագաւորը վրէժ լուծի Հայոց աշխարհից, քանզի ցաւում էին Հայոց՝ իբրեւ սեփական երկրի համար: Ապա երանելի Կողրատոսն ասաց սուրբ Սուքիասին եւ նրա ընկերներին. «Եկէ՛ք աղօթենք, որ Աստուած խաղաղութիւն տայ այս երկրին, որովհետեւ մենք այս հողում ենք ապրում»: Եւ միաբան աղօթելով՝ ասացին. «Տէր Աստուա՛ծ, Քո մեծ ողորմութեամբ ողորմի՛ր Հայոց աշխարհին, քանզի թէպէտ այն լի է անօրէնութիւններով, սակայն Դու ես բոլորի Տէրն ու Արարիչը, Քեզնից է օգնականութիւնը եւ ողորմութիւնը: Հե՛տ դարձրու այս երկրից Քո սրտմտութեան սուրը, մարդասէ՛ր եւ անոխակա՛լ, քանզի Քոնն է զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Տէրը լսեց նրանց աղօթքը. պարսից արքային դարձրեց իր երկիրը, քանզի նրան հասաւ հռոմէացի կայսեր սպառնալիքը, ում ապաւինում էր Հայոց արքան, եւ նա չհամարձակուեց միաժամանակ պատերազմել հայերի ու հռոմէացիների դէմ: Այսպէս խաղաղութիւն տիրեց երկրին, որի համար ուրախ եղան սուրբերը եւ փառաւորեցին Աստծուն: Ապա որոշեցին իջնել լերան վրայից, որպէսզի երկրի մերձաւոր բնակիչներին տարածեն աստուածգիտութեան լոյսը եւ ամէնից առաջ քանդեն բագինները, որ գտնւում էին իրենց բնակութեան մօտ: Իսկ սուրբ Սուքիասը, ով նրանց աւագն էր, ասաց. «Խնդրէ՛ք Տիրոջը, որ տայ մեզնից առաւել զօրաւոր մի մշակ, ով կը կործանի կուռքերի մեհեանները եւ այս ողջ

երկիրը կը դարձնի մոլորութիւնից դէպի Ճշմարտութիւն»: Եւ քանի որ նրանց խորհուրդներն ու խօսքերն առաջ էին գալիս ճշմարտութիւնը վկայելու փափագից, Աստուած կատարեց նրանց սրտի բարի տենչանքը: Քանզի այդ գիշեր սուրբերից Պօղիքտոս անունով մէկին տեսիլք երեւաց, որը պատմեց իր ընկերներին. «Այս գիշեր, ասաց նա, տեսայ, որ ալանների մեր արքունի դռնից մի առիւծ եկաւ դէպի մեզ եւ սկսեց սաստկապէս մարտնչել մեր դէմ»: Այս լսելով՝ երանելիները ծունկի եկան եւ աղօթեցին. «Տէ՛ր Աստուած, թող չզարհուրեցնի մեզ չար գազանը, որը գալիս է յարձակուելու Քո ծառաների վրայ: Տէ՛ր, մի՛ հեռացրու Քո օգնականութիւնը մեզնից եւ մի՛ տուր Քո սրբութիւնը շներին: Աստուա՛ծ, Դու ամենազօր ես, ճանաչում ես մարդկանց որդիների սրտերը եւ գիտես, որ Քեզ ենք յանձնել մեր անձերը ծառայութեան, որպէսզի արժանի լինենք Քո անսուտ խոստումներին, որոնք յաւիտենական են»:

Եւ ահա քիչ օրեր անց կատարուեց տեսիլքը. մեռաւ Ալանաց Շապուհ արքան, ով ճանաչում էր Սուքիասին ու նրա ընկերներին, եւ նրան յաջորդեց Գիդիանոս կամ Դատիանոս թագաւորը: Սա զօրքի մէջ նոր կարգ հաստատեց. մարդահամար անցկացրեց զօրավարների մէջ ու տեղեկացաւ, որ այդ երանելիները՝ արքունի գնդից այդ քաջերն ու անուանիները, տարիներ առաջ Սաթէնիկ դշխուհու հետ մեկնել են Հայոց աշխարհ, որտեղ Քրիստոսի համար մեծ տառապանքներով ու նեղութիւններով բնակւում են Զրաբաշխ լերան վրայ: Այս մասին արքային յայտնեցին Հայոց երկիր երթեւեկող ալաններից ոմանք (առանձնապէս դէպքերին քաջատեղեակ Սկուհեր նախարարը), ովքեր Սաթենիկի մահից յետոյ բարեկամացել էին նրա որդիների հետ ու հարցուփորձով տեղեկացել սուրբերի մասին: Այնժամ թագաւորն իր զօրքից ընտրեց սպառազինուած, կորովի այրեր եւ լրտեսներով հանդերձ ուղարկեց Հայաստան: Իր Բառլահա կամ Բառլախայէ անունով զօրավարին մի գրութիւն ուղարկեց հետեւեալ բովանդակութեամբ. «Փնտռեցէ՛ք ալաններից այստեղ եկածներին: Երբ գտնէք նրանց, բազում պարգեւներով համոզէք գալ արքունիք, իսկ եթէ հրաժարուեն, բոլորին սրի քաշէք»:

Այրերը եկան Հայաստան, ուր նրանց ցոյց տուեցին Զրաբաշխ (Սուկաւէտ) լեռը, որտեղ բնակութիւն էին հաստատել սուրբերը: Նրանք հեռուից տեսան երանելիներին եւ զարմացան, քանզի ոչխարների պէս կերակրւում էին խոտով, մարմինները քօշերի նման ծածկուած էին մազով՝ նման այն քարերին, որոնց վրայ մամուռ է բուսնում: Ապա մօտենալով նրանց՝ զօրավարն սկսեց խօսել զարմանքով եւ ասել. «Ովքե՞ր էք դուք եւ ի՞նչ էք անում այստեղ: Դուք մարդու կերպարանք ունէք, սակայն ձեզ խոտաճարակ ոչխարների պէս եմ տեսնում»: Առաջ եկաւ սուրբ Սուքիասը, պատասխանեց եւ ասաց. «Բնութեամբ մարդիկ ենք, իսկ ազգութեամբ՝ ալաններ՝ արքունի դռնից: Մենք փախել ենք ամբարիշտներից ու անաստուածներից եւ մեկուսացել ենք այս լեռներում: Ի վերուստ զօրացած՝ ապրում ենք այսպէս՝ յաւիտենական յոյսի համար, որ Տէր Աստուած խոստացել է մեզ»: Բառլահան ասաց. «Այս վայրերը ծմակային են, եւ շատ ձիւն է գալիս այս լեռներում, ինչպէ՞ս էք կարողանում բնակուել այստեղ»: Սուրբն ասաց. «Լսի՛ր ինձ, որդեա՛կ, հաւատա՛ Աստծուն՝ երկնքի եւ երկրի Արարչին: Ամէն բան Իր ծառաների եւ Իրեն փառաբանողների համար Իր կամքով է լինում: Արդ, մենք ողորմութիւն գտանք Աստծուց, սիրեցինք Նրան մեր ամբողջ սրտով, եւ մեր յոյսը մեր Տէր Աստուած է»: Բառլահան ասաց. «Ո՞ր տոհմից ես, եւ ի՞նչ է քո անունը»: Սուրբն ասաց. «Արքունիքում ես երկրորդն էի

արքայից յետոյ եւ թագակից էի նրան: Իմ նախկին անունը Բահաքադրա էր, սակայն երբ դարձայ Տիրոջը, Սուքիաս կոչուեցի, որովհետեւ մկրտութիւնից յետոյ խաղաղական կեանք ստացայ»: Զօրավարն ասաց. «Արդ, եթէ կամենաս եւ լսես ինձ, կը դառնաս քո նախկին պատուին, դարձեալ կը նստես երկրորդ գահին եւ փառքով ու հանգստեամբ կ՚անցկացնես ծերութեանդ օրերը»: Իսկ երանելին ասաց. «Ես իմ Տիրոջ ծառան եմ, եւ այժմ վարձք ստանալու ժամանակն է, ինչո՞ւ թողնեմ վերջին ժամերս եւ ձեռնունայն մնամ»: Զօրավարն ասաց. «Գիտե՛մ, թէ ով է քո Տէրը, ում ծառայում ես: Դու Խաչեալին ես քեզ Տէր կոչում»: Սուրբն ասաց. «Այո՛, իմ Տէրը Քրիստոսն է»: Զօրավարն ասաց. «Թողեցիր քո ազատութիւնը եւ ընդունել ես ծառայութի՞ւնը»: Երանելին պատասխանեց. «Եթէ ճանաչէիր իմ Տիրոջը, դու եւս կ՚ընդունէիր այս ծառայութիւնը, որպէսզի ժառանգէիր անապական կեանքը»:

Սակայն Բառլահան արհամարհեց սուրբի խօսքերը եւ սպառնալիքներով սաստեց նրան: Այնժամ երանելի Սուքիասը հասկացաւ բռնաւորի միտքը, հաւաքեց եղբայրներին ու ասաց. «Եկէ՛ք, եղբայրնե՛ր, հասել է մեր նահատակութեան եւ վարձք ստանալու ժամանակը»: Նրանք բոլորը լցուեցին մեծ խնդութեամբ եւ փառաւորեցին Աստծուն, իսկ զօրավարը համոզիչ խօսքերով խոստանում էր պարգեւներ տալ նրանց, եթէ դառնային իրենց երկիրը, ընդունէին հայրենի կրօնը եւ նախկին պատիւը: Սակայն սուրբերը միաբան պատասխանեցին. «Մեր պարգեւատուն Աստուած է, Ով անմահութեան պարգեւներ է տալիս, Ով ազատում է մեզ սատանայից ու նրա հնարքներից: Թող քե՛զ լինեն այդ պարգեւները, որ խոստանում ես տալ թագաւորի կողմից: Մենք ակնկալում ենք ստանալ Աստուծոյ պարգեւները, որովհետեւ Նա՛ է մեր յոյսը»: Բռնաւորը հարցրեց. «Ո՞վ է ձեր պարգեւատուն»: Երանելիները պատասխանեցին. «Մեր պարգեւատուն Աստուած է՝ Նա, Ով արարեց երկինքն ու երկիրը, իսկ նրանցում եղածներն արարածներ են: Նա՛ է մեր Տէրը եւ Թագաւորը, Ով ունի իշխանութիւն կեանքի ու մահուան վրայ: Նրանից դողում է երկինքը, եւ երկիրը սարսում է Նրա խօսքից: Հրաման է տալիս ծովին ու ցամաքեցնում, սաստում է գետերին, եւ նրանք հետ են դառնում: Թող նոյն Ինքը սաստի նաեւ քեզ ու քո խորհրդակից սատանային, եւ թող չլինի քո կամքը Աստուծոյ ծառաների վրայ»:

Այս լսելով՝ բռնաւորը զայրացաւ, կրճտացրեց ատամները եւ խորհրդակցեց իւրայինների հետ, թէ ինչպիսի մահուամբ կորստեան մատնի նրանց: Իսկ երբ երանելիներն իմացան, որ մօտեցել է իրենց նահատակութեան ժամը, ծունր դնելով՝ աղօթեցին. «Տէ՛ր Աստուած, Արարի՛չ երկնքի եւ երկրի, որ ոչնչից ստեղծեցիր բոլոր արարածներին: Դո՛ւ ես ճշմարիտ Աստուած՝ Հա՛յրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Ով եկաւ եւ մարմնացաւ ու Իր խաչելութեամբ, թաղմամբ եւ յարութեամբ փրկեց տիեզերքը»: Եւ մէկ առ մէկ յիշատակելով Աստուծոյ երախտիքները մարդկային ազգի հանդէպ՝ ասացին. «Եւ արդ, բարերար Տէ՛ր, նայի՛ր Քո ծառաներին, ովքեր սիրեցին Քեզ ողջ զօրութեամբ եւ հաւատացին Քո անսուտ խոստումներին, որոնք խոստացար Քո սիրելիներին: Զօրութի՛ւն տուր Քեզ յուսացողներիս եւ զօրացրո՛ւ մեզ այս պատերազմում, որ պիտի գայ մեզ վրայ Քո սուրբ անուան համար: Թող ամօթահար լինի սատանան բռնաւորների հետ, եւ թող Քո ծառաների մէջ փառաւորուի Քո սուրբ անունը: Աստուա՛ծ գթութեան եւ Տէ՛ր ողորմութեան, նայի՛ր Քեզ յուսացողներիս եւ Քեզ ապաւինածներիս: Թող թշնամին Քո գաւթից չհեռացնի Քո բանաւոր հօտին:

Հանդարտեցրո՛ւ այս փոթորկուած ալիքը, որ գալիս է մեզ վրայ, որպէսզի կարողանանք ժամանել խաղաղութեան նաւահանգիստը: Զօրացրո՛ւ Քեզ յուսացած ծառաներիս, որպէսզի Քո յաղթական զօրութեամբ յաղթենք մեր թշնամուն: Թող մենք չլինենք աւազի վրայ կառուցուած տան պէս, որին կործանում են փորձութիւնների հողմերն ու անձրեւները, այլ ամուր պահիր մեզ մեր Յոյսի՝ Քրիստոս Աստուծոյ հաստատուն վէմի վրայ: Բարերարութեամբ նայիր Քեզ յուսացած ծառաներիս եւ յաղթութեան նշան տուր Քեզ ապաւինածներիս, որպէսզի զտուենք ոսկու պէս բռնաւորի յարուցած պատերազմում: Թող բանսարկուն չկարողանայ իր խօսքերով դառը որոմներ ցանել մեր մէջ եւ ապականել այն ցորենը, որը պիտի ժողովես Քո շտեմարաններում: Թող Քո անուան մեր այգիներում չբուսնեն վնասակար բոյսերը եւ չապականեն օրհնութեան ողկոյզները, որոնցով պիտի լցնես յաւիտենական հնձանները: Թող չսասանուեն մեր ոտքերը, ամրացրո՛ւ մեզ Քո Աջով եւ աներկիւղ պահիր երեւելի ու աներեւոյթ թշնամիներից, որպէսզի փառաւորուի Քո սուրբ անունը»:

Բոլորը զօրացան, եւ նրանց հոգիները լցուեցին անպատում խնդութեամբ: Ապա դարձեալ գոհութեամբ աղօթեցին՝ ասելով. «Գոհանո՛ւմ ենք Քեզանից, Տէ՛ր, որ մեզ անաստուածութիւնից դարձրիր աստուածգիտութեան, քանզի մինչ խաւարի մէջ էինք, լուսաւորեցիր Քո գիտութեան լոյսով եւ կապուածներիս արձակեցիր բանսարկուի կապանքներից: Խաւարի եւ մահուան ստուերների մէջ էինք, եւ մեզ վրայ ծագեց Քո երեսի լոյսը, որը մեզ լուսաւորեց եւ առաջնորդեց գնալ Քո արդարութեան ու իրաւունքի ճանապարհներով: Եւ արդ, ո՛ւշ դարձրու Քո ծառաների աղօթքներին եւ մեզնից հեռացրո՛ւ սատանային: Սուրբ Հոգուդ զօրութեամբ զօրացրո՛ւ մեզ այս ժամին, որպէսզի Քո մարդասիրութեամբ եւ շնորհներով արդարութեամբ աւարտենք մեր ընթացքը, եւ փառաւորուի Քո սուրբ անունը: Լսի՛ր մեր աղօթքը, ինչպէս լսեցիր Հեղիասին, ով Յեզաբելի երեսից փախել էր դէպի լեռները: Մենք էլ փախել ենք ամբարիշտ թագաւորներից, հրաժարուել աշխարհի ցանկութիւններից եւ Քո անպատում շնորհների համար այս լերան վրայ անդադար օրհնութեամբ փառաւորում ենք Քեզ: Տէ՛ր Աստուած մեր, լսի՛ր Քեզ յուսացած ծառաներիս, ինչպէս երբեմն լսեցիր Դանիէլին եւ Շուշանին՝ մէկին փրկելով առիւծների գուբից, իսկ միւսին՝ ծերերից: Այժմ էլ մեր թշնամուն յաղթելու համար փրկի՛ր եւ զօրացրու մեզ՝ ի սէր Քո աստուածութեան: Լսի՛ր մեզ, ինչպէս լսեցիր Եսայուն եւ Եզեկիային, ովքեր յուսացան Քեզ եւ արտասուքներով Քո օգնութիւնը խնդրեցին իրենց թշնամու դէմ: Այժմ էլ զօրացրո՛ւ մեզ, որպէսզի դուրս գանք յաղթանակած, եւ պարսպի՛ր մեզ Քո Աջով, որպէսզի մեզնից ոչ ոք չպակասի եւ չզրկուի Քո խոստացած բարիքներից: Լսի՛ր մեզ, ինչպէս հնոցում լսեցիր երեք մանուկներին, ովքեր արհամարհեցին թագաւորի հրամանները եւ պահեցին Քո խօսքերը՝ օրհնելով Քեզ: Մենք ապաւինում ենք Քո զօրութեանը. փրկի՛ր մեզ պաշարած փորձութիւնից, որպէսզի արժանաւոր լինենք փառաւորել Ամենասուրբ Երրորդութեանդ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Լսելով նրանց աղօթքները՝ բռնաւորը զարմանում էր եւ ապա զայրանում նրանց անդադար օրհնաբանութիւններից: Սաստեց նրանց եւ պահանջեց լռել, սակայն նրանք աղաչելով ասացին. «Թո՛յլ տուր, որ երրորդ անգամ աղօթենք մեր Տէր Աստծուն, եւ յետոյ կը կատարես, ինչ որ կամենաս»: Եւ ապա սկսեցին միաբան աղօթել ու ասել. «Քոնն ենք, Տէ՛ր եւ Քեզ ենք յուսացել: Օգնի՛ր մեզ

յաղթութեամբ աւարտել մեր ընթացքը, ինչպէս որ կամենում ես: Արժանաւորի՛ր մեռնել Քո սուրբ անուան համար եւ վարձք ընդունել նրանց հետ, ովքեր հաճոյ եղան Քեզ, ում մէջ փառաւորուեց Քո սուրբ անունը, ովքեր իրենց կամաւոր մահուամբ եղան Քո աստուածութեան վկաները, ովքեր Քո փառքի մէջ թագաւորելով ու պսակուելով՝ պիտի վայելեն անպատում եւ անանց կեանքը, որը ոչ աչքը տեսաւ, եւ ոչ էլ ականջը լսեց: Տէ՛ր, շտապում ենք ելնել մեր մարմիններից եւ խառնուել Քո վկաների՝ սուրբ Ոսկեանների գնդին, ովքեր մեզ լուսաւորեցին Քո աստուածութեան լոյսով եւ առաջնորդեցին դէպի քո վերին Երուսաղէմ, ուր պիտի ժողովես Քո բոլոր սուրբերին եւ սիրելիներին»:

Աւարտելով իրենց աղօթքը՝ կանգնեցին բռնաւորին յանդիման եւ ասացին. «Արդ, կատարի՛ր քո թագաւորի եւ ձեր խորհրդակից սատանայի հրամանը. մենք բոլորս պատրաստ ենք քաջութեամբ մեռնել մեր Տէր Յիսուս Քրիստոսի սուրբ անուան համար»: Իսկ բռնաւորը, յոյժ բարկանալով երանելիների համարձակութեան վրայ, զինուորներին հրամայեց նրանց կապել եւ բրիչներով տանջել: Ապա հրամայեց նրանցից իւրաքանչիւրին պրկել չորս ցցերի վրայ եւ ներքեւից լապտերներով ու ջահերով այրել մարմինները: Ասաց. «Ձեզ կ՚այրեմ հրով եւ կը կատարեմ թագաւորի հրամանը, եթէ չկամենաք կատարել թագաւորի կամքը»: Բառլահան կարծեց, թէ այդ կերպով կը կարողանայ զարհուրեցնել երանելիներին, սակայն տեսաւ, որ նրանք դարձան առաւել քաջ, ոչինչ համարեցին իրենց մարմինների հրկիզումը եւ ոսկորների կսկիծը: Նրանք սկսեցին ուրախութեամբ օրհնել Աստծուն եւ սաղմոսել. «Աստուա՛ծ, մեզ օգնութեան հասի՛ր եւ, Տէ՛ր, փութա՛ մեզ ընկերակցել» [4], Տէ՛ր, մեր նեղութեան մէջ յիշեցինք Քեզ, թող Քո առատ ողորմութիւնը մխիթարի մեզ»: Այսպէս աղօթում էր երանելի Սուքիասը, իսկ նրա եղբայրները, արիաբար կրելով իրենց տանջանքները, ձայնակից էին լինում նրան: Բռնաւորը դարձեալ բարկացաւ սուրբերի եւ քաջ նահատակների վրայ՝ Աստծուն փառաբանելու եւ զարմանալի համբերութեան համար: Ապա հրամայեց բերանակապ դնել նրանց բերաններին, որպէսզի չկարողանան աղօթել կամ օրհնել Աստծուն:

Իսկ սուրբ Կողրատոսը, արհամարհելով այդ ամէնը, բոլորին խրախուսում էր՝ որքան հնարաւոր է սաղմոսել այս տողերը. «Ինչպէս եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպէս էլ մեր անձերն են փափագում Քեզ, ով Տէ՛ր Աստուած մեր» [5], քանզի փափագում էին կենդանի Ջրին եւ յաւիտենական կեանքին, հանապազ տենչում էին հզօր եւ կենդանի Աստծուն, որի համար շտապում էին ելնել մարմիններից եւ հասնել բաղձալի Քրիստոսին:

Այնժամ Բառլահան հրամայեց սպանել նրանց դաժան տանջանքներով եւ ասաց. «Սրախողխող անելով բոլորիդ՝ շտապ կը կատարեմ ձեր ցանկութիւնը եւ կը զրկեմ այս կեանքից, որին արժանի չէք»:

Երբ սուրբերն իմացան, որ հասել է իրենց նահատակութեան ժամը, մեծ ուրախութեամբ ծունկի եկան եւ միաբան աղօթեցին՝ ասելով. «Զօրութիւնների Տէ՛ր Աստուած, որ արժանացրիր մեզ աւարտել մեր կեանքի ընթացքը ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, լսի՛ր մեր աղօթքները եւ այս ժամին զօրացրո՛ւ մեզ Քո Սուրբ Հոգով: Աներկիւղ պահիր մեզ սատանայի պատրանքներից եւ բռնաւորի ահից: Շնորհի՛ր բոլորիս վկայել ճշմարիտ խոստովանութեամբ, ընդունել պսակները եւ վայելել անճառելի բարիքները յաւիտենական կեանքում: Գթա՛ Հայոց աշխարհին, որպեսզի նրանք երկրպագեն եւ փառաւորեն Ամենասուրբ Երրորդութեանդ, քանզի նրանք Քո արարածներն են, եւ Քեզ

վայելում է երկրպագութիւն եւ փառք բոլոր արարածներից: Լսի՛ր, Տէ՛ր, Քեզ յուսացած ծառաներիս այս խնդրանքը. ուր որ կը հեղուի վկաներիս արիւնը, թող այնտեղ բժշկութեան աղբիւրներ բխեն հիւանդների համար, եւ ով հաւատով դիմի մեր բարեխօսութեանը, լինի ահից տագնապած, այսահար թէ վշտահար, կամ եթէ այս տեղում աղաչեն Քեզ, լսի՛ր եւ ողորմի՛ր նրանց: Փրկի՛ր նրանց բոլոր նեղութիւններից եւ հոգու ու մարմնի բոլոր վտանգներից, քանզի Դու զօրաւոր ես ամէն բանում: Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Այնժամ երկնքից ձայն լսուեց, որն ասաց. «Ինչ որ խնդրեցիք, կը տրուի ձեզ: Ձեր վկայութեան տեղում թող բժշկութեան աղբիւրներ հոսեն, իսկ հողը բազում ցաւերի բժշկութիւն տայ: Եկէ՛ք ձեզ համար պատրաստուած օթեւանները եւ անվախճան յաւիտեաններում ձեր մեծ չարչարանքների դիմաց ընդունէ՛ք հանգիստը, հարազուարճ ուրախութիւնը եւ փառքերի պսակները, որոնք հիւսեցիք ձեր բազում ճգնութիւններով»:

Այս լսելով՝ սուրբերը զօրացան, կնքեցին իրենց սուրբ Խաչի նշանով եւ յօժարութեամբ, ինչպէս սպանդի տարուող ոչխարներ, գնացին դէպի մահը՝ դէպի բռնաւորի դահիճները: Անօրէնները գառներին յօշոտող գայլերի նման, սրի քաշելով, անխնայ կոտորեցին նրանց: Գնալով հրեշտակների ողջոյնին ընդառաջ՝ երանելիները Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու բարի խոստովանութեամբ աւանդեցին իրենց հոգիները Նաւասարդ ամսի տասնեօթին՝ Տիրոջ 130 կամ 140 թուականին: Անտանելի ճգնութիւններով քառասունչորս տարի ապրեցին Սուկաւէտ լերան վրայ, ապրեցին ոչ թէ հացով, այլ Տիրոջ զօրութեամբ ու շնորհներով: Եւ այսպէս, քաջ նահատակները՝ թուով տասնվեց կամ տասնեօթ հոգի, վկայական մահով Քրիստոսից առան յաղթութեան պսակները:

Ալանների զօրավարը սուրբերին սպանելուց յետոյ հրամայեց իր զինուորներին նրանց մարմինները գցել անդունդների խորխորատները եւ ծածկել քարակոյտով, իսկ յաջորդ օրն ինքը գնաց իր երկիրը եւ ամէն ինչ պատմեց թագաւորին:

Բայց Սուքիասեաններից երկու հոգի՝ ամէնից տկարներն ու կրտսերները, որոնց անունները հաւանաբար Յակոբ եւ Թէոդոսիոս էին, սարսափելով սրից, վերջին պահին փախան եւ ծածկուեցին լերան խորշերում: Մի քանի օր անց սրտի ցաւով եկան այդ տեղը, որպէսզի ամփոփեն իրենց սուրբ ընկերների նշխարները, սակայն չգտան ոչ մէկի մարմինները: Միայն արեան հետքերը տեսան, որոնք ծածկեցին հողով եւ իւրաքանչիւր տեղի վրայ քարէ նշաներ կանգնեցրին: Իսկ իրենք, այլեւս չհամարձակուելով մնալ այդտեղ, իջան լերան արեւմտեան կողմը եւ, դաշտի բերանին գտնելով մի յարմարաւէտ տեղ, ուր բաւական աղբիւրներ կային, կանգ առան: Այդտեղ պատրաստեցին գետնափոր արգելարաններ, ուր մինչեւ իրենց՝ այս աշխարհից փոխուելը ապրեցին մեծ ճգնութիւններով: Տարիներ անց մի քանի հովիւներ, նրանց վախճանուած գտնելով, թաղեցին հէնց իրենց արգելարաններում: Դա այն տեղն է, ուր ոչ շատ ժամանակ անց հայոց Վաղարշ թագաւորը մեծ աւան շինեց, որն իր անունով Վաղարշակերտ կոչեց, եւ տեղի բարեխառն օդի համար այնտեղ բնակեցրեց իր Խոսրով որդուն: Իսկ նրանց ընկերների՝ սուրբ Սուքիասեանների մարմինները մնացին Սուկաւէտ լերան անդունդների մէջ՝ մինչեւ Հայաստան աշխարհի լուսաւորուելը սուրբ Գրիգոր Լուսաւորչի կողմից: Սուրբ Հոգու դրդմամբ նա գնաց այդտեղ, ուր նրանց անուամբ վկայարան կառուցեց:

Իսկ մեր «Յայսմաւուրք»ը գրում է, որ երկու հարիւր երեսուն տարիներ նրանց մարմիններն անապական մնացին: Եւ ապա Աստուծոյ հրեշտակը, երեւալով ինքնակալ Կոստանդիանոս կայսրին, ասաց. «Արի՛, գնա՛ Հայոց աշխարհ եւ ամփոփի՛ր քոշերի մարմինները, որոնք երկար տարիներ անթաղ են մնացել»: Արքան ասաց. «Ինչպէ՞ս կարող եմ այնտեղ գնալ, քանզի ես թագաւոր եմ, եւ իմ մուտքն այդ երկիր կը խռովեցնի նրանց»: Հրեշտակն ասաց. «Ես կ՚առաջնորդեմ քեզ, եւ այդ մասին ոչ ոք չի իմանայ»: Եւ այդպէս, Մեծն Կոստանդիանոսը երեք հարիւր ձիաւորներով եկաւ Սուկաւէտ լեռը, ուր գտնւում էին այդքան տարիներ Աստուծոյ ձեռքով անապական պահուած սուրբերի մարմինները: Տեսաւ քարի վրայ գրուած իւրաքանչիւրի անունները: Օրհնութեան համար վերցրեց այն հողից, ուր հեղուել էր սուրբերի արիւնը, եւ որպէս բոլոր ցաւերի բժշկութիւն՝ իր հետ տարաւ Արեւմուտք: Այն տեղերը, ուր թափուել էր նրանց արիւնը, ներկուած էին տարբեր գոյներով՝ սեւ, դեղին, սպիտակ, կարմիր, կանաչ եւ կապոյտ:

Եւ մարգարէացաւ սուրբ Կոստանդիանոս թագաւորը՝ ասելով, որ աշխարհի վերջում, երբ զօրանայ հայոց ազգը, պիտի յայտնուեն սուրբ Սուքիասեանների նշխարները: Այնժամ սուրբ Գրիգորի արժանաւոր սերնդի կողմից պիտի նորոգուի հայոց քահանայապետութիւնը, իսկ Արշակունիների սերնդից՝ թագաւորութիւնը: Եւ սուրբերի բարեխօսութեամբ դարձեալ խաղաղութիւն պիտի հաստատուի երկրում: Այս ասելով մարգարէական հոգով՝ Կոստանդիանոս թագաւորը գնաց իր երկիրը: Այդ տեղում բոլոր ցաւերի համար բխեց բժշկութեան աղբիւր, որը կայ մինչ օրս. ամէն տարի՝ սուրբերի տօնի օրը, բխում է այդ աղբիւրը եւ Սելովամի աւազանի պէս բժշկում բոլոր ցաւերը՝ առաւելապէս բորոտութիւնը, օձահարութիւնը: Ապա ջուրը նուազում եւ ցամաքում է մինչեւ յաջորդ տարուայ նոյն օրը եւ ժամը: Եւ երկու լեռները կոչուեցին Ոսկեանների եւ Սուքիասեանների՝ երկու գլխաւոր սուրբերի անուններով:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Սուքիասեանների յիշատակը տօնում է Առաջաւորաց պահքին յաջորդող երեքշաբթի օրը, իսկ երբ յիշեալ օրը տօնւում է Տեառնընդառաջը՝ ապա նրանք յիշատակւում են սուրբ Ատոմեանների յիշատակի օրուայ հետ:

ՍՈՒՐԲԵՐ

Սուրբերի եօթ դասերը՝ նախահայրերը, մարգարէները, առաքեալները, մարտիրոսները, վարդապետները, խոստովանողները եւ կոյսերը, հիմնեցին մարտնչող Եկեղեցին եւ այժմ իրենց երանութեան փառքով զարդարում են յաղթանակած Եկեղեցին:

Սուրբերին հաղորդ ենք լինում չորս կերպով.

Նախ՝ երբ հիացմունքով զարմանում ենք նրանց տաժանակիր չարչարանքների վրայ, թէ ինչպէս նրանք հողեղէն մարմնով նմանուեցին անմարմիններին, ուրացան մարմնի կարիքները եւ ոչինչ համարեցին առօրեայ կեանքը:

Երկրորդ՝ երբ մենք եւս ցանկանում ենք նրանց պէս նահատակուել, եւ այս ցանկութիւնն ամենաբարին է, որքան էլ գործից հեռու գտնուենք:

Երրորդ՝ երբ նրանց վկայութեան կամ այլ տեղերում տաճարներ ենք կառուցում նրանց անուան համար:

Չորրորդ՝ երբ պատւում ենք նրանց նահատակութեան օրը եւ ուրախանում տօնախմբութեամբ՝ ջահեր վառելով, խունկերի բուրմամբ, պատարագներով եւ նրանց անուններով աղքատներին ողորմութիւններ անելով:

Քանզի ինչպէս պատերազմներում ոմանք առաջամարտիկներ են, ոմանք՝ թիկնապահներ, ոմանք խրախուսում են, ոմանք էլ կարասիներն ու հանդերձներն են պահում, սակայն բոլորն աւարին բաժանորդներ են լինում: Այսպէս էլ ովքեր կցորդ են սուրբերի չարչարանքներին, Վերջին օրը պիտի հաղորդ լինեն նրանց փառքին:

Սուրբ Գրիգոր Տաթեւացի

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ՏԻՐՈՋ ԳԱԼՈՒՍՏԸ ՏԱՃԱՐ

Մարմնացեալդ ի Կուսէն նախայաւիտեան Բանդ՝
այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս. վասն փրկութեան հեթանոսաց:
Որ յանարուեստ աթոռ նստիս, բարեբանեալդ ի հրեշտակաց.
այսօր ի Սիմէօնի բառնալով ի գիրկս՝ որ ընծայեացես զմեզ ի կեանսդ յաւիտենից:
Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն.
այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա եւ զիս՝
զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:
Այսօր անսկզբնական ծնունդ Հայրական ծոցոյ Բանն եկաւորեալ ի տաճարն.
ընծայէ զարարածս Հօր ի յերկինս:
Այսօր բարձեալ եղեւ ի գիրկս ծերունւոյն.
որ բանիւ զարարածս բարձեալ ունի օրհնաբանեացուք:
Այսօր եւ մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն Սիմէօնի՝
զԲանն համագոյ Հօր եւ Սուրբ Հոգւոյն օրհնաբանեացուք:
Այսօր ի տաճարն եկեալ Կենարարն եւ ի գիրկսն Սիմէօնի զգուեա
ցաւ. զոր խնդութեամբ ընկալաւ Երուսաղէմ: Այսօր երկիրս երկինք անուանեցաւ.
զի Տէրն տէրանց իջեալ յերկնից ի յերկիր.

եւ ընծայիլ յանձն առնու ի գործոց ձեռաց իւրոց:
(Շարակնոց)

Ըստ Մովսէսի օրինադրած աստուածային հրամանի՝ ամէն առաջնածին արու զաւակ, ով արգանդ է բացում, պէտք է սուրբ կոչուի, այսինքն՝ Աստուծոյ բաժինը լինի, եւ նորածին մանկան մայրը պէտք է քառասուն օր արեւ չտեսնի այն տան դռնից դուրս, ուր ծնուել է մանուկը: Եւ սա է պատճառը: Երբ կինն ընդունում է որդեծնութեան սերմը, քառասուն օր յետոյ նրա արգանդում այն շնչաւորուում եւ հոգեւորում է: Այդ պատճառով օրէնք դրուեց, որ փոխարէն այն քառասուն օրերի, որ կինն իր մէջ սերմ ունէր առանց հոգու, պէտք է ծննդաբերելուց յետոյ քառասուն օր տանը փակուած մնայ եւ ապա դուրս ելնի: Այսպէս արեց նաեւ Աստուածածին Կոյս Մարիամը, թէպէտ նա սուրբ էր եւ անարատ, ու նրանից ծնուածը Սուրբ Հոգով էր:

Երբ, ըստ Մովսէսի օրէնքի, լրացան նրա սրբութեան օրերը, այսինքն՝ Բեթղեհէմում Քրիստոսի յետծննդեան քառասուն օրերը, բնութեան պարտքերը վճարելու համար Մարիամն ու Յովսէփը երեսունինը օր յետոյ առան մանուկ Յիսուսին եւ եկան Երուսաղէմի տաճար՝ Աստուծոյ երեսին յանդիման: Եւ ընծայ բերեցին աղաւնու երկու ձագ: Երեկոյեան հասան տաճար: Մութը պատել էր երկիրը: Տաճարի դուռը, որ վաղուց ի վեր փակ էր, ինքնին բացուեց նրանց առջեւ, ինչպէս որ Եզեկիէլ մարգարէն էր ասել. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացուելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպէսզի Իսրայէլի Տէր Աստուածը մտնի այդտեղով» [1]: Այդպէս դուռը փակուել էր ըստ մարգարէի այն խօսքի, որ ասաց Բաբելոնում, եւ այնտեղ՝ Երուսաղէմում. դուռը փակուել էր առանց փականի եւ սողնակի: Փակուել էր այնպէս ամուր, որ եթէ հազար երկաթ եւ ճոպան բերէին՝ դուռը բանալու համար, չէին կարողանայ:

Իսկ այսօր Քրիստոսի գալստեամբ յանկարծ դուռն ինքնիրեն բացուեց: Դռան բացուելու ուժգին ձայնից դղրդաց ողջ քաղաքը, եւ բոլորը դուրս վազեցին: Եւ քանի որ մութը պատել էր քաղաքը, բոլորը եկան վառուող ջահերով ու լապտերներով՝ տեսնելու տաճար եկած Մանկանը: Ձայն էին տալիս միմեանց եւ ասում՝ «Տէր ընդ առա՛ջ», իսկ ոմանք պատասխանում էին՝ «Տէր ընդ այս»: Եւ փութապէս տաճար գալով՝ տեսան Յովսէփին ու Մարիամին՝ գրկում մանուկ Յիսուսին: Տաճարում տեսան հինաւուրց եւ զառամեալ Սիմէօն ծերունուն:

Այս Սիմէօնը մէկն էր եօթանասուներկու թարգմանիչներից, ովքեր Եգիպտոսի Պտղոմէոս թագաւորի հրամանով եբրայերէն լեզուից յունարէնի էին թարգմանում մարգարէների բոլոր գրքերը: Մինչ նա թարգմանում էր Եսայու մարգարէութիւնը, հասաւ այն տողերին, որ ասում է. «Ահա Կոյսը պիտի յղիանայ եւ Որդի ծնի» [2]: Նա գրեց այս խօսքերը, ապա տարակուսեց իր մտքում եւ ասաց. «Հեթանոսներն այս բանին չեն հաւատայ», եւ ջնջեց գրածը: Բայց յետոյ փոշմանեց եւ տրտմեց՝ մտածելով. «Գուցէ իմ ընկերներն էլ այդպէս գրեն եւ միայն ես նախատինք դառնամ: Եւ բացի այդ՝ թարգմանիչների միջեւ մարգարէական խօսքերի վերաբերեալ հակառակութիւն եւ տարաձայնութիւն կը ծագի»: Ճանաչեց իր ընկերոջը, ով պէտք է իր հետ լինէր, քանզի Փառան կղզում եօթանասուներկու թարգմանիչներին երկուերկու բաժանել էին միմեանց միջեւ, ամէն երկու հոգին նստում էր մի տաղաւարում, եւ սահմանել էին այնպէս, որ անհնար լինէր հաղորդակցուելը: Նրանց սենեակների բոլոր դռները ծովահայեաց էին, որպէսզի չկարողանային միմեանց մօտ գնալ եւ միաբանուած

խօսքեր գրել, այլ որպէսզի իրարից հեռու եւ առանց միմեանց տեսնելու, գրէին ստոյգը եւ ճշմարիտը: Պտղոմէոս թագաւորի հրամանով, ով նստում էր Ալեքսանդրիայում, ամէն առաւօտ թարգմանիչներին տանում էին կղզի եւ դարձեալ ամէն երեկոյ նրանց բերում թագաւորի մօտ, որպէսզի ի լուր արքայի ընթերցէին օրուայ թարգմանած նիւթը: Երեկոյեան օրուայ գրածը կարդում էին թագաւորի առջեւ, որպէսզի երեւար թարգմանած խօսքերի ճշմարտութիւնը եւ մարգարէների միասնականութիւնը: Եւ բոլորը միեւնոյնն էին կարդում:

Մարգարէները, հեռու լինելով միմեանցից, մարգարէանում էին Աստուծոյ Բանի գալստեան մասին: Այն, ինչ գրեց Սիմէօնը ու յետոյ ջնջեց, բայց վարանեց, նրա հետ տարակուսեց ու վարանեց նաեւ իր ընկերը: Եւ տրտմած երկուսն էլ քուն մտան: Արթնանալով՝ զարմանահրաշ սքանչելիք տեսան. տառերը գրուած էին ոսկեայ գրով: Սիմէօնը օր ու գիշեր արտասուեց եւ երանի տուեց նրան, ով կը տեսնի կուսածին Մանկանը: Այնժամ Սուրբ Հոգին ասաց նրան. «Դու մահ չես տեսնի, մինչեւ չտեսնես այն Մանկանը, ով Օծեալ Տէրն է, եւ կը հասնես երանութեան»:

Այդպէս ճշմարիտ Հոգու հրամանով նա ողջ մնաց եւ 344 տարի անց հասաւ իր բաղձանքին. երբ քառասնօրեայ Օծեալ Յիսուս եկաւ տաճար, Սուրբ Հոգին կանչեց Սիմէօնին եւ ասաց. «Արի՛, ծե՛ր, ե՛կ տաճար եւ ընդունի՛ր Նրան, Ում խնդրում էիր տեսնել: Ահա՛ Կոյսը եւ նրա Որդին»: Եւ նա ցնծութեամբ տաճար մտաւ, իր գիրկն առաւ Մանկանը եւ ասաց. «Այժմ, Տէ՛ր, ըստ Քո խօսքի, խաղաղութեամբ արձակիր Քո ծառային, քանզի իմ աչքերը տեսան Քո փրկութիւնը, որ պատրաստեցիր Քո ժողովրդի առջեւ: Լոյս, որ կը լինի յայտնութիւն հեթանոսների համար եւ փառք՝ Իսրայէլի Քո ժողովրդի համար»:

Սիմէօնն օրհնեց Յովսէփին ու Մարիամին եւ ապա դառնալով Մարիամին՝ օծեալ Մանկան համար ասաց. «Ահա Նա, Ով պատճառ է դառնալու Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրացման եւ նշան՝ հակառակութեան: Իսկ քո հոգու միջով սուր պիտի անցնի, որպէսզի բազում սրտերի խորհուրդներ յայտնի դառնան»: Այս ասելով՝ ծերը Մանկանը տուեց մօրը եւ հանգստացաւ ծերութեան տառապանքներից. տաճարում Աստուծոյ ձեռքն աւանդեց իր հոգին եւ արձակուեց մարմնի կապանքներից: Այդտեղ էր նաեւ Աննա մարգարէուհին՝ Ասերի ցեղից Փանուէլի դուստրը, ով այդ պահին գոհանում էր Տիրոջից եւ խօսում Նրա մասին բոլոր նրանց հետ, ովքեր ակնկալում էին Երուսաղէմի մխիթարութեանը:

Կատարելով իրենց ուխտը՝ Յովսէփն ու Մարիամը գնացին Նազարէթ: Տասներկու օր յետոյ նրանք մանուկ Յիսուսի հետ Աստուծոյ հրամանով փախուստ տուին Եգիպտոս՝ Յերմուպոլիս քաղաք, որպէսզի Հերովդէսը չսպանի Մանկանը, եւ որպէսզի կատարուի Եսայու մարգարէութիւնը, թէ՝ «Ահաւասիկ Տէրը, բազմած թեթեւասահ ամպերի վրայ, գալու է Եգիպտոս. եգիպտացիների կուռքերը Նրա ահից պիտի դողան, նրանց սրտերը պիտի յուսալքուեն» [1], ինչպէս որ եղաւ:

Արդ, Աստուած Սիմէօն ծերունուն արգելեց մահ տեսնել, որ յայտնի լինի Աստուծոյ Որդու իշխանութիւնը: Սուրբ Հոգին Հօր կամքով նրան կապեց երկար տարիներ, որ երբ գայ Աստուծոյ Որդին եւ արձակի ծերին, աշխարհը ճանաչի Նրան: Անցան դարեր, եւ ծերը պահւում էր, որպէսզի վկայի, թէ ով է ժամանակների Տէրը: Ննջում էին ազգերն ու սերունդները, եւ Սիմէօնը կենդանի էր մնում, որովհետեւ ակնկալում էր մշտնջենաւորը: Մահն անցնում էր այս ու

այն կողմերով եւ նրան չէր մօտենում, բոլոր նահապետներին անց էր կացնում նրա առջեւով, բայց նրան մօտենալ չէր համարձակւում: Ինչպէս ճանապարհի վրայ դրուած մի արձան էր Սիմէօնը. ով վերցնէր նրան կեանքից, Նա էր կենդանարարը: Աստուած նրան կապել էր անքակտելի կապանքներով, որ երեւար, թէ Ով կը գայ եւ կ՚արձակի նրան, Նա էր ճշմարիտն Աստուած, Ով հանգիստ կը տար նրան իր ծերութիւնից, Նա էր Տէրը: Սա նշան էր ծերացած, բազում օրեր ապրած ծերի վրայ: Յոգնել էր՝ նայելով անցնող բոլոր սերունդներին եւ սպասելով, թե նրանցից ով պիտի արձակի իրեն: Եւ մինչ նա համբերում էր, լրացաւ ժամանակը. եկաւ արարածներին Նախախնամողը՝ արձակելու կենդանակապ նաւին եւ նրան կապելու մահուան նաւահանգստին, մինչեւ Իր միւս անգամ Գալուստը:

Սուրբ Կոյսը, մանկանը գրկած, մտաւ տաճար, իսկ Սուրբ Հոգին կանչեց Սիմէօնին՝ ասելով. «Ե՛կ, ընդունի՛ր կապանքներն Արձակողին եւ խնդրի՛ր Նրան, որ արձակի քեզ: Արի՛, ծե՛ր, եւ այս Մանուկից ընդունիր մահդ»: Իսկ Սիմէօնը զօրացաւ հոգով, իր գիրկն առաւ մանկանը եւ ասաց. «Արդ, Տէ՛ր, ըստ Քո խօսքի՝ խաղաղութեամբ արձակի՛ր ինձ, ինչպէս խոստացար, քանդի՛ր իմ կապանքները, քանզի սպասել եմ, որ արձակուեմ Քո Ծննդեամբ: Հրամայի՛ր մահուանը, որ այսուհետ ննջեմ, ինչպէս որ խոստացար: Պահում էիր ինձ մինչ այժմ, որ տեսնեմ Քո Գալուստը՝ աշխարհ: Արդ, Տէ՛ր, բա՛ց դուռը՝ ելնեմ, քանզի տեսայ Փրկիչ Աստծուդ, եւ արձակի՛ր կապուածիս, քանզի ժամն է, որ ննջեմ հողում: Հրամայի՛ր մահուան հողմին փչել ինձ վրայ, որպէսզի գամ օթեւաններդ եւ սպասեմ, մինչեւ գաս՝ տանելու ինձ: Հրամայի՛ր մարմնիս հող դառնալ, որպէսզի երբ գաս բազում հրեշտակներով, յարութիւն տաս եւ ինձ: Շատ տքնեցի ես՝ սպասելով Քեզ աշխարհի ճանապարհներին: Այսուհետ տո՛ւր ինձ ննջել, մինչեւ Յարութեան օրը, երբ Քո ձայնը կ՚արթնացնի ինձ: Սերմանի՛ր ինձ գերեզմանում, որ երբ անցնի աշխարհի ձմեռը, բուսնեմ Քո հրամանով: Տէ՛ր, թաղի՛ր ինձ գերեզմանի ակոսում որպէս ցորեն, որ երբ տեղայ կեանքի անձրեւը, պտուղներ տամ բազում արդիւնքներով»:

Իսկ Յովսէփը, մօտենալով ծերին, ասաց. «Արդ, ասա՛ ինձ, ո՛վ Սիմէօն, այդպիսի խօսքեր թերեւս ասեն կատարեալ մէկին: Մանուկը քառասնօրեայ է, Նա ինչպէ՞ս կարող է հասկանալ քո այս խօսքերը: Ե՞րբ Նա կապեց քեզ, կամ որտե՞ղ ես դու տեսել Նրան: Մանուկն ընդամենը քառասնօրեայ է, իսկ դու՝ հին օրերից եկած: Մի՞թէ քո հնամաշ ծերութիւնն աւելի կրտսեր է, քան Նրա մանկութիւնը: Եւ եթէ այդպէս է, ուրեմն ստուգապէս Նա է աշխարհի ճշմարիտ Տէրը»:

Սիմէօնի խնդրանքները ճշմարտապէս վկայում էին Մարիամի Որդու մասին, որ Նա է յաւիտենական ճշմարիտն Աստուած:

«Սիմէօն» թարգմանւում է «ունկնդրութիւն»: Սա նշանակում է, որ ով կամենում է ընդունել մանուկ Յիսուսին, պէտք է լեցուն լինի Սուրբ Հոգու շնորհներով, պէտք է ունկնդրի ու հնազանդ լինի Աստուծոյ օրէնքներին, ապա իր մէջ ընդունի Քրիստոսին, քանզի ով չունի հոգու մաքրութիւն եւ չի հնազանդւում Աստուծոյ օրէնքներին, չի կարող լինել ընդունարան Քրիստոսի համար: Ինչպէս որ Քրիստոս բնակւում է երկնայինների դասում, որոնք սուրբ են եւ հնազանդ Աստծուն, կամ Աստուածածին Կոյսը, ով լի էր Սուրբ Հոգով եւ խոնարհութամբ իրեն Աստուծոյ աղախին էր կոչում, իր մէջ ընդունեց Քրիստոսին եւ ունէր իր

գրկում, նոյնպէս էլ Քրիստոս հանգստանում է սուրբ եւ Աստծուն հնազանդ հոգիների մէջ:

Աստուածածին Կոյսը, որ այսօր եկաւ տաճար եւ ընծայեց քառասնօրեայ մանուկ Յիսուսին, եղաւ հաշտութեան միջնորդ եւ բարեխօս մեզ համար: Նրա անդառնալի բարեխօսութեամբ թող Քրիստոս Աստուած հաշտուի եւ Սիմէօն ծերունու հետ ընդունի մեր աղաչանքները: Եւ ինչպէս որ այսօր արձակեց նրան մարմնի կապանքներից, թող մեզ էլ արձակի մեղքի կապանքներից, նորոգի մեղքերի հնութիւնից եւ արժանացնի Իր միւս անգամ Գալստեանը մտնել Վերին Երուսաղէմի տաճար՝ մասնակից լինելու անդրանիկների ժողովին՝ Իր սուրբերի եւ սիրելիների հետ, որպէսզի նրանց հետ մշտնջենաւոր սրբաբանութեամբ օրհնութիւն եւ փառք վեր առաքենք Նրան՝ Իր ամենակալ Հօր եւ ազատիչ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս. ամէն:

Արդ, Յակոբոս Աստուածեղբայրը եւ Մեծն Կիւրեղը կարգեցին, որ Տիրոջ քառասնօրեայ գալստեան տօնակատարութիւնը լինի փետրուար ամսուայ տասնչորսերորդ օրը՝ յունուարի վեցից յետոյ քառասուն օր անց:

ՍՈՒՐԲ ՈՍԿԵԱՆՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Որք արժանաւորեցայք կոչիլ յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի
եւ աստուածային հրով մաքրութեան ոսկի փորձեալ
գտայք ի բնակարանս հրեշտակաց.
ո՛վ երանելի սուրբ Ոսկեանք, բարեխօսեցէ՛ք առ Տէր՝ մաքրել զմեզ ի մեղաց մերոց:
Որք անհրաժեշտ դաւանութեամբ քարոզեցիք զՔրիստոս ի դրունս թագուհւոյն՝
մկրտելով զքաջ նահատակսն յակունս Եփրատայ՝ ի ծաղկազարդ վայելչութիւնսն, ո՛վ երանելի սուրբ Ոսկեանք, բարեխօսեցէ՛ք առ Տէր՝ մաքրել զմեզ ի մեղաց մերոց:
Որք անպարտելի մնացիք ի հրապուրանաց որդւոյ թագաւորին.
չարչարեալք վասն Քրիստոսի արագապէս խողխողեցայք պատարագ ընդունելի,
ո՛վ երանելի սուրբ Ոսկեանք, բարեխօսեցէ՛ք առ Տէր՝ մաքրել զմեզ ի մեղաց մերոց:
(Շարակնոց)

Սուրբ Ոսկեանք՝ թուով 5 հոգի, նահատակութիւնը՝ 100 կամ 107 թուականին, Եփրատի վտակ Արածանու ակունքների մօտ:

Այս երանելիներն ազնուականներ էին եւ կայսերական պալատում արքունի պաշտօնեաներ: Նրանք հռոմէացիներ էին՝ թուով հինգ հոգի, եւ Հռոմի ինքնակալի կողմից առաքուել էին Հայաստան՝ Սանատրուկ արքայի մօտ: Նրանցից գլխաւորի անունը Խռուսի էր կամ Քռիւսի, որ հայերէն թարգմանւում է «ոսկի», որի համար էլ Ոսկեաններ էին կոչւում:

Երբ եկան հասան Հայոց երկրի սահմաններին, լեռնադաշտային մի վայրում նրանց հանդիպեց սուրբ Թադէոս առաքեալը, ով եօթանասուն աշակերտներից մէկն էր եւ քարոզելու համար շրջում էր Հայաստանում: Տեսնելով նրան նուաստ կերպարանքով՝ Ոսկեանները հարցրին. «Ո՞վ ես դու, որտեղի՞ց ես գալիս եւ ո՞ւր ես գնում»: Առաքեալն ասաց. «Ես բարձրեալ Աստուծոյ ծառան եմ եւ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի աւետարանիչը, Ով մեր փրկութեան համար մարդու Որդի եղաւ»: Եւ առաքեալը երկար քարոզեց Աստուծոյ Բանի մարդեղութեան մասին: Հիացան այրերը նրա սքանչելի վարդապետութեան վրայ, եւ առաքեալի հոգեբուխ քարոզութիւնը նրանց հոգու քիմքին մեղրից առաւել քաղցր թուաց:

Եւ մինչ սուրբն աւետարանում էր կեանքի Խօսքը, մի խումբ եղջերուներ սլացան դէպի մերձակայ լեռը: Այնժամ ասացին սուրբ առաքեալին. «Եթէ դու բարձրեալ Աստուծոյ ծառան ես եւ կամենում ես, որ հաւատանք քո խօսքին, հրամայի՛ր, որ կանգնեն եղջերուները, որպէսզի բռնենք նրանցից մէկին, որովհետեւ ոչինչ չունենք ուտելու, իսկ այս անմարդաբնակ վայրերը դեռեւս հեռու են աւաններից»: Թադէոս առաքեալը ձայն տուեց եւ Յիսուս Քրիստոսի անուամբ հրամայեց եղջերուներին, որ գան իր մօտ, իսկ եղջերուները՝ ինչպէս բանական արարածներ, լսեցին սուրբի հրամանն ու եկան կանգնեցին նրա առջեւ: Ապա այդ մարդկանց հրամայեց բռնել անասուններից մէկին, մորթել, խորովել ու ուտել, բայց նրանց առաւել մեծ հրաշք ցոյց տալու եւ նրանց հեշտօրէն իր խօսքերի ուռկանի մէջ ձգելու համար, պատուիրեց, որ նրանք ոսկորները պահեն մի առանձին տեղում:

Նրանք վարուեցին սուրբի խօսքի համաձայն. այդ գիշեր խորովեցին եւ կերան եղջերուին, իսկ ոսկորները հաւաքեցին, սակայն զինուորներից մէկը առաքեալին փորձելու համար ոսկորներից մէկը գաղտնաբար վերցրեց: Յաջորդ օրն առաքեալը բերել տուեց բոլոր ոսկորները եւ մորթի քաշեց դրանց վրայ: Աղօթեց Յիսուս Քրիստոսի անուամբ, եւ ահա անմիջապէս ոսկորներն իրար միացան: Անասունը կենդանացաւ եւ առաքեալի հրամանով բարձրացաւ լերան վրայ, սակայն գնալիս երեւում էր, որ եղջերուն կաղում է եւ չի կարողանում վազել:

Սուրբ Թադէոսն ասաց. «Տեսէ՛ք, թէ որտեղ էք գցել եղջերուի ոսկորներից»: Այնժամ այն զօրականը, ով պահել էր ոսկորը, առաջ եկաւ եւ ասաց. «Ես եմ պահել այդ ոսկորը, որպէսզի փորձեմ քո խօսքերը՝ սուտը եւ ճշմարիտը: Այսուհետեւ հաւատում եմ քո Աստծուն, ում քարոզում ես, քանզի դու արդար ես, իսկ քո խօսքերը՝ ճշմարիտ: Ոչ ոք չի կարող այդպիսի հրաշք գործել, եթէ ի վերուստ իշխանութիւն չունենայ»: Ապա բոլորն ընկան առաքեալի ոտքերը, հաւատացին Քրիստոս Աստծուն եւ աշակերտեցին սուրբ Թադէոսին: Իսկ նա մկրտեց նրանց, դարձրեց քրիստոնեաներ եւ նրանցից գլխաւորին՝ երանելի Ոսկիին քահանայ ձեռնադրեց:

Այնուհետեւ թողնելով իրենց դեսպանութեան գործերը՝ յանձն առան խոնարհութեան ճանապարհով գնալ առաքեալի հետեւից: Այդ նպատակով գնացին աւանները, վաճառեցին իրենց զէնքերն ու երիվարները, ստացածը բաշխեցին աղքատներին եւ այլեւս չվերադարձան իրենց տները եւ ոչ էլ նրա

մօտ, ով ուղարկել էր իրենց, այլ սկսեցին շրջել առաքեալի հետ եւ օրըստօրէ հաստատուել ճշմարիտ հաւատի ու աստուածպաշտութեան մէջ:

Սուրբ Թադէոսի նահատակութիւնից յետոյ, որը եղաւ Սանատրուկի կողմից, Ոսկեաններն սկսեցին առանձնական կեանք վարել Եփրատի ակունքների մօտ. իւրաքանչիւրը, շինելով իր առանձին խուցը, կրօնաւորեց ծմակային լեռներում: Այդ տարածքը կոչում էին Ծաղկոտ՝ տեղի հիասքանչ վայելչութեամբ զարդարուած ծաղկաւէտ լեռների եւ դաշտերի պատճառով: Իրենց մատնելով բազմապատիկ ճգնութիւնների եւ մշտամռունչ աղօթքների՝ նրանք փայլեցին հրեշտակային վարքով, փորձուեցին աստուածային հրով, զտուեցին ընտիր ոսկու պէս եւ եղան Աստուծոյ Հոգու սուրբ տաճարներ:

Քառասուներեք տարի ապրելով այս կենցաղավարութեամբ՝ Աստուծոյ առաջնորդութեամբ իջան լեռներից եւ գնացին Հայոց արքունիք: Մտան Սանատրուկի որդի Արտաշէս արքայի եւ Սաթէնիկ թագուհու մօտ եւ նրանց քարոզեցին կեանքի Խօսքը՝ ցոյց տալով կուռքերի տկարութիւնը: Թագաւորը լսեց նրանց եւ թէպէտ անտեղի չհամարեց նրանց խօսքերը, սակայն անփոյթ գտնուելով՝ ասաց. «Այդ մասին ես լսել եմ նաեւ շատ ուրիշներից: Այժմ ես զբաղուած եմ պատերազմական գործերով եւ չեմ կարող ձեզ լսել»: Ապա նրանց հրաւիրեց գալ եւ խօսել մէկ այլ ժամանակ, իսկ ինքը պատրաստուեց պատերազմի եւ արշաւեց դէպի Արեւելք: Իսկ սուրբ այրերը, մերձ լինելով նրա աւագ որդուն՝ Արտաւազդին, սկսեցին խօսել նրա եւ թագուհու հետ, սակայն նրանց լսում էին նաեւ թագուհու հետ Ալանաց երկրից եկած նրա մերձաւորները [1]: Աստուած նրանց իմաստութիւն տուեց, որպէսզի ընդունեն կեանքի Խօսքը, եւ նրանք ողջ սրտով հաւատացին Քրիստոսին:

Եւ երբ սուրբ Ոսկին տեսաւ նրանց կատարեալ հաւատը, գիշերն իր հետեւից տարաւ եւ բոլորին՝ թուով տասնութ կամ տասնինը հոգու, մկրտեց Եփրատ գետի ակունքներում՝ արժանացնելով Սուրբ Հոգու ընդունելութեանը: Քրիստոսի լոյսով կեանքի նորոգութեան եւ Կեանքի գրքում անուանագրութեան խորհրդով փոխեց նրանց անունները: Նրանցից նշանաւորին կոչեց Սուքիաս, իսկ նրա ընկերները կոչուեցին Սուքիասեաններ:

Եւ երբ սուրբ Ոսկեանները՝ իրենց աշակերտներով հանդերձ, քարոզելու համար դարձեալ արքունիք եկան, Սաթէնիկի որդիներն իմացան իրենց ազգականների դարձի մասին, որի համար խիստ չարացան եւ մեծ թշնամանքով սուրբ Ոսկեաններին հալածեցին արքունի դռնից: Իսկ նրանք մեծ ուրախութեամբ գնացին դէպի լեռները եւ առանձնացան իրենց մենարաններում: Այս տեսնելով՝ Սուքիասեաններն իրենք եւս խոյս տուեցին արքունիքից: Նրանք սկսեցին փնտռել սուրբերին, գտան նրանց իրենց ճգնարաններում եւ ջերմագին հաւատով ընդունելով նրանց աստուածային խօսքերը՝ օրըստօրէ առաւել հաստատուեցին սուրբ հաւատի մէջ: Իսկ երբ արքունիքում սկսեցին փնտռել Սուքիասեաններին եւ չգտան, տեղեկացան, որ գնացել են Ոսկեանների հետեւից: Այնժամ նրանց դէմ չարացան թագուհու կրտսեր որդիները՝ Վնոն ու Վրոն, եւ իրենց հետ վերցնելով իրենց աւագ եղբօրը՝ Արտաւազդին, թիկնապահների հետ գնացին սուրբերին փնտռելու: Գտնելով երանելի Սուքիասին եւ նրա ընկերներին՝ խնդրեցին, որ հեռանան Քրիստոսից ու արքունիքում վերստին ընդունեն իրենց նախկին պատիւը, սակայն նրանք չկամեցան եւ յանձն չառան թողնել լոյսը եւ դառնալ դէպի հեթանոսական մոլորութեան խաւարը:

Տեսնելով նրանց անյողդողդ հաւատն ու հաստատակամութիւնը՝ իրենց մենարաններից կանչեցին նրանց վարդապետներին՝ սուրբ Ոսկեաններին, եւ համոզիչ խօսքերով ու ապա սպառնալիքներով ստիպեցին խօսել այդ նորահաւատների հետ, որպէսզի նրանք վերադառնան իրենց նախկին պաշտամունքին եւ գործին: Իսկ սուրբերը, անտեսելով նրանց սպառնալիքները, իրենց աշակերտներին առաւել հաստատեցին հաւատի մէջ եւ ասացին. «Թող իրենք ընտրեն իրենց օգտակարը»: Այս ասելով՝ շրջուեցին, որ գնան իրենց մենարանները: Սրանից յոյժ դառնացան Արտաւազդն ու նրա եղբայրները. նրանք վարանած մտածում էին, թէ ինչպէս վարուեն, քանզի տեսնում էին նրանց բոլորի հաստատակամութիւնը: Եւ չհամարձակուեցին ձեռք տալ Սուքիասեաններին ու նրանց ընկերներին, որովհետեւ վախեցան իրենց մօրից, խնայեցին նրանց՝ որպէս իրենց ազգականների, եւ ողջ ցասումը թափեցին Ոսկեանների վրայ: Իրենց արբանեակներին հրամայեցին յարձակուել նրանց վրայ եւ անմիջապէս խողխողել՝ որպէս իրենց ազգականներին մոլորեցնողների: Այդպէս էլ արեցին. մինչ սուրբ Ոսկին ու իր ընկերները գնում էին իրենց մենարանները, վրայ հասան, կոտորեցին նրանց ու կտրեցին նրանց գլուխները: Եւ սա եղաւ Տիրոջ 107 թուականին:

Արքայորդիների հեռանալուց յետոյ եկան Սուքիասեանները, մեծապէս սգացին սուրբերի համար, որովհետեւ միշտ զգուշանում էին, որ իրենց պատճառով վտանգ չհասնի իրենց վարդապետներին: Արտասուքներով ու սաղմոսներով ամփոփեցին նրանց պատուական նշխարները, իսկ իրենք, միառժամանակ կրօնաւորելով նրանց բնակութեան վայրում, տեղափոխուեցին Ջրաբաշխ, այսինքն՝ Սուկաւէտ լեռը: Ժամանակ անց նահատակուեցին նաեւ իրենք, ինչպէս որ գիտենք նրանց վկայաբանութիւնից:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նրանց յիշատակը նշում է Առաջաւորաց պահքին յաջորդող հինգշաբթի կամ Տեառնընդառաջի նախընթաց երեքշաբթի օրը՝ սուրբ Սուքիասեանների յիշատակի հետ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻԻ ՎԱՐՔԸ

Որ յարմատոց հարցն սրբոց մեզ գաւազան բղխեցեր՝
զԻսահակ սուրբ հայրապետ, հովուել զհօտ քո Քրիստոս:
Որ զիաւարն անգիտութեան Հայաստանեայցս լուծեր՝
զիմաստութիւն ծագեալ զլոյս սովաւ որդւոց Թորգոմայ:
Որ զհանդերձեալ խորհուրդ Քո, Տէ՛ր, տեսլեամբ սրբոյն ծանուցեր.
յիշատակի սորա ընկալ զտօնողացս աղաչանս:
(Շարակնոց)

Ծնուել է 348 թ. Կեսարիայում,
Կաթողիկոս՝ 387 թուականից:
Ննջել է 439 թ. Բագրեւանդ գաւառի Բլուր կոչուող գիւղում:

Համօրէն Հայաստանեայց երկրորդ լուսաւորիչը եւ սուրբ Գրիգորի լուսազարդ շառաւիղը՝ երիցս երանելի մեր հայր Սահակը, որդին էր Ներսէս Մեծի, սա՝ Աթանագինէի, սա՝ Յուսիկի, սա՝ Վրթանէսի, եւ սա էլ՝ Լուսաւորչի, վեցերորդը՝ սուրբ Գրիգորից, նրա սերնդից մնացած մարգարիտը եւ իր ազգի շողացող միակ լուսափայլ քարը: Նա եղաւ սուրբ Գրիգորի պարթեւեան զարմի վերջին հայրապետը, որի համար կոչուեց Սահակ կամ Իսահակ Պարթեւ: Նաեւ Սահակ Մեծ է կոչւում իր մեծամեծ գործերի համար եւ Սահակ Առաջին՝ մեր ազգի համանուն կաթողիկոսների մէջ:

Ըստ հաւաստի տեղեկութիւնների՝ նրա ժամանակակից պատմիչները միաձայն նշում են նրա ծննդեան ճիշտ թուականը՝ 348 թուականի սեպտեմբերի 29-ը Կեսարիայում: Սակայն շուտով մանկիկը մնում է անմայր եւ որբ: Նրա վաղամեռիկ մօր՝ Սանդուխտի մարմինը պապն ամփոփում է Թիլ աւանում, իսկ փոքրիկ Սահակին յանձնում Տարօնում գտնուող մօրապապերի՝ Մամիկոնեանների տուն, որովհետեւ նրա հայրը՝ Ներսէս Մեծը, ուսումնառութեան համար գտնւում էր Բիւզանդիայում, եւ հայրական կողմից չկար մէկը, որ ստանձնէր նրա խնամատարութիւնը: Երբ Սահակը չափահաս դարձաւ, սուրբ Ներսէսն արեց ամէն բան, որ իր միակ զաւակը՝ լուսաւորչեան ազգատոհմի միակ շառաւիղը, արժանի կրթութիւն ստանայ: Եւ այս նպատակով նրան երկար տարիներ ուսման տուեց Կեսարիայի եւ Բիւզանդիայի հռչակաւոր կրթարաններում:

Արդ, այս երանելին դեռեւս մանկուց ունէր Աստուծոյ բարեհաճութիւնը: Հասակ առնելուն զուգընթաց աճում էր նաեւ առաքինութիւնների մէջ, քաջ տիրապետում էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուներին, էլ չեմ ասում մեր հայկաբան բնիկ լեզուին, թէպէտ մինչեւ նրա օրերը չունէինք մեր հայրենագիր տառերը եւ գործածում էինք օտարինը: Սակայն երանելին, ամէնից շատ իրազեկ լինելով Սուրբ Գրքի Հին եւ Նոր Կտակարաններին, խորասուզուած էր հոգեւորի մէջ, առանձնասէր էր եւ յոյժ աղօթասէր, քաղցրաբարոյ ու հեզահամբոյր վարքով եւ լի՝ Աստուծոյ Հոգով:

Երբ արբունքի հասաւ, շատերը ստիպեցին նրան մտնել աշխարհի կարգի մէջ, որպէսզի չմարի Լուսաւորչի տան ճրագը, քանզի միայն նա էր մնացել սուրբ Գրիգորի զարմից: Յատկապէս ողջ ազգն էր փափագում, որ միշտ իրենց առաջին հայրապետի՝ առաքելաշնորհ սուրբ Լուսաւորչի տնից մէկը պահպանուի որպէս Աթոռակալ ժառանգ, որի համար երանելի Սահակը խնդրում էր Աստծուն՝ իրեն արու զաւակ պարգեւել:

Երբ ծնուեց նրա Սահականոյշ դուստրը, եւ կինն այլեւս չկարողացաւ զաւակներ ունենալ, երանելին սաստիկ տխրեց: Նրան պաշարեցին ծանր խորհուրդները. նա անդադար աղաչում էր Բարձրեալին՝ իրեն արու զաւակ շնորհել, ինչպէս իր նախնիներին: Եւ նա այս անմխիթար մտորումների մէջ էր ու սպասում էր Տիրոջ այցելութեանը:

Ապա իր անձն առաւել մատնեց անդադար աղօթքների եւ աստուածային պատգամների ընթերցանութեան, գիշեր թէ ցերեկ խոկում էր Տիրոջ օրէնքի շուրջ, իր աստուածահաճոյ վարքով սփռում էր Քրիստոսի անուշահոտութիւնը,

բարի օրինակ լինում բոլորին՝ ջերմեռանդ լինելով աստուածպաշտութեան մէջ եւ ծաղկելով բարի գործերով: Այնուհետեւ մտաւ քահանայական կարգի մէջ եւ օրէցօր աւելացնելով իր ճգնութիւնները՝ ապրեց աշխարհում, ինչպէս անապատում: Նա իր բոլոր առաքինութիւններով նմանուեց իր հայրերին: Նախանձախնդիր լինելով երանելուն՝ շատերը, ովքեր ունէին Աստուծոյ սէրը, աշակերտեցին նրան եւ օրինակեցին նրա ճգնութիւնները: Անապատական հայրերի եւ երեւելի վանականների պէս ունեցաւ մօտ վաթսուն աշակերտ, ովքեր կրօնաւոր այրեր էին՝ խարազնազգեստ, մեռած աշխարհի համար: Նրանց հետ յարատեւելով մշտամռունչ աղօթքներով ու պաշտամունքների մէջ՝ անապատականների պէս ապրում էր մենակեացների կարգով եւ միաժամանակ ամբողջովին բաւարարում Եկեղեցու կարիքներն ու հոգում աշխարհի կարեւոր խնդիրների համար:

Կողակցի մահից յետոյ իր Սահականոյշ դստերն ամուսնացրեց Համազասպ Մամիկոնեանի հետ, ով հայոց նախարարների մէջ յոյժ բարեպաշտ եւ երեւելի այր էր: Նրանցից ծնուեցին սուրբ Վարդանը, Հմայակը եւ Համազասպը՝ առաքինի պապի առաքինի թոռները եւ սքանչելի այրերը, որոնց մէջ իրենց մօր շառաւղով մնացել էին լուսաւորչեան հետքերը:

Այս ժամանակներում, թունաւորուելով Պապ թագաւորի կողմից, վախճանուեց սուրբ Ներսէս հայրապետը՝ երանելի Սահակի հայրը: Հայոց աշխարհը Տիրոջ բարկութիւնից գտնւում էր հոգեւոր եւ մարմնաւոր ալեկոծումների մէջ, եւ երկրին ոչ մի կերպ չէին կարողանում օգնել ժամանակի թագաւորները՝ Վարազդատը, իսկ նրանից յետոյ՝ Արշակը եւ Վաղարշակը, ինչպէս նաեւ Շահակ, Զաւէն եւ Ասպուրակէս կաթողիկոսները, ովքեր կարճ ապրեցին:

Եւ երբ թագաւորեց հայոց Խոսրով Երկրորդ արքան, նա միաբանեց նախարարներին, խաղաղութիւն հաստատեց յունաց Արկադէոս կայսեր՝ Թէոդոս Մեծի որդու հետ, ապա Տիրոջ 387 թուականին, երբ մեռաւ Ասպուրակէս կաթողիկոսը, միաձայն հաւանութեամբ որպէս հայոց հայրապետ ձեռնադրուեց երանելի Սահակ Պարթեւը, ով այդ ժամանակ 39 տարեկան էր: Այս փոփոխութեամբ մեծ հանգիստ ու անդորր տիրեց Հայոց աշխարհին, եւ երկիրն սկսեց փայլել իր բարեկարգութեամբ, որովհետեւ սուրբ Սահակն իսկոյն ձեռնամուխ եղաւ նորոգելու երկրի բոլոր կարգերն ու հոգեւոր հարցերը: Նա իր սրբակրօն աշակերտների հետ խրատում էր բոլորին եւ ցոյց տալիս փրկութեան ճանապարհը՝ ողջ ժողովրդի համար լինելով ճշմարիտ օրինակ եւ առաքինութեան սքանչելի հայելի: Այդ շրջանում հայոց հայրապետանոցը նմանուել էր Մովսէսի խորանին, որովհետեւ այնտեղ էին դիմում թէ՛ մեծամեծերը եւ թէ՛ փոքրերը, պատգամ էին վերցնում սուրբ հայրապետից՝ ինչպէս Տիրոջ բերանից, եւ նրանով ուղղում իրենց բոլոր ճանապարհները: Ինքը՝ Խոսրով թագաւորը եւս, աւագանիով հանդերձ, խոնարհւում էր Սահակ Մեծի առջեւ եւ յոյժ ակնածում նրանից:

Սակայն տիրանենգ նախարարներից ոմանք, ոխ ունենալով իրենց թագաւորի դէմ, բանսարկութիւն արեցին պարսից Շապուհ արքայի մօտ եւ գրգռեցին նրան ընդդէմ Խոսրովի՝ պատճառ բռնելով յունաց կայսեր հետ նրա միաբանութիւնը եւ առանց իր՝ Շապուհի հաւանութեան Սահակին հայոց կաթողիկոսական Աթոռին նշանակելը: Շապուհը Խոսրովին կանչեց իր մօտ, եւ երբ սա ընդդիմացաւ, իր գահակից որդուն՝ Արտաշիրին մեծ զօրքով ուղարկեց

Հայաստան: Արտաշիրը հեշտութեամբ բռնեց Խոսրով թագաւորին, կապուած տարաւ Պարսկաստան եւ նրա փոխարէն Հայաստանում թագաւորեցրեց նրա եղբօրը՝ Վռամշապուհին: Զրկեց նախարարներին իրենց պատիւներից, բայց Սահակին թոյլ տուեց վարել իր պաշտօնը, որովհետեւ հասկացաւ, որ այդ կերպ խաղաղութեան մէջ կը պահի երկիրը:

Այդ նոյն օրերին մեռաւ Շապուհը, եւ Պարսկաստանում թագաւորեց նոյն ինքը՝ Արտաշիրը: Այդ ժամանակներում մեռաւ նաեւ հայոց սպարապետ Սահակ Ասպետը, եւ սուրբ Սահակն իր դստեր թախանձանքով դիմեց Վռամշապուհ արքային, որպէսզի նրա փոխարէն սպարապետ նշանակուի իր փեսան՝ Համազասպ Մամիկոնեանը: Վռամշապուհն ընդունեց այդ առաջարկը, սակայն ակնածելով Արտաշիրից, նամակ գրեց սուրբ Սահակին՝ գնալ Պարսկաստան եւ անձամբ խնդրել Արտաշիրի հաւանութիւնը այդ խնդրում եւ միաժամանակ ներկայացնել Հայաստանին վերաբերող այլ հարցեր:

Սուրբը գնաց Պարսկաստան, ուր Աստուած Իր ծառային մեծապատիւ եւ պատուական ցոյց տուեց անհաւատների առջեւ. նա յոյժ մեծարուեց Արտաշիրի կողմից, յատկապէս երբ վերջինս իմացաւ, որ Սահակը Պահլաւունի ազգից է՝ Մեծ Գրիգորի պարթեւեան ցեղից, որովհետեւ սասանեանները երախտիք ունէին նրա հօր՝ Անակի ու նրա ողջ ազգատոհմի առջեւ եւ նրան համարում էին պարսից թագաւորութեան հաստատման պատճառը՝ իրենց հակառակորդ հայոց Խոսրով թագաւորին սպանելու համար: Ուստի լիապէս կատարեց սուրբի բոլոր խնդրանքները եւ նրան պատուով ուղարկեց Հայաստան՝ նամակ ուղարկելով Վռամշապուհին, որում յիշատակում էր Սահակի նախնիների կարծեցեալ երախտիքները պարսից ազգի հանդէպ, ինչպէս նաեւ նրա նախնու՝ սուրբ Լուսաւորչի երախտիքը հայերի հանդէպ Տրդատ արքայի բժշկութեան համար:

Այդ ժամանակներում Սուրբ Հոգու յորդորով սուրբ Սահակ հայրապետի մօտ եկաւ նրա սիրելի եւ մտերիմ բարեկամը՝ երանելի Մաշտոցը, եւ նրան յայտնեց իր երկար տարիների մտահոգութիւնը: Ինչպէս Ղազար Փարպեցին է գրում, նա անվերջ խորապէս տրտմում էր՝ տեսնելով հայերի ջանքերը, երբ նրանք ահռելի ծախսերով, հեռագնաց ճանապարհներով եւ երկարաժամ դեգերումներով իրենց օրերն էին մաշում ասորական դպրոցներում: Հայոց վանքերում եւ եկեղեցիներում եկեղեցական արարողութիւնները եւ Սուրբ Գրքի ընթերցանութիւնները կատարւում էին ասորերէն, որից երկրի բնակիչները ոչինչ չէին հասկանում: Օտար լեզուի պատճառով Եկեղեցու սպասաւորների չարչարանքներն ու ժողովրդի ջանքերն ապարդիւն էին անցնում: Երանելի Մաշտոցն այս մասին խորհում էր արդէն երկար ժամանակ ու լալիս իր հոգում. չէ՞ որ կային հայերէն լեզուի նշանագրերը, որոնցով հնարաւոր էր սեփական եւ ոչ թէ մուրացածոյ լեզուով եկեղեցիներում շահել մարդկանց սրտերը:

Լսելով նրան՝ Սուրբ Սահակը քաջալերութեան աւետիս տուեց եւ ասաց. «Զօրացի՛ր եւ պի՛նդ կաց: Ա՛ռ քեզ հետ օգնականներ քահանաներից, որոնց ես կը պատուիրեմ, եւ որտեղ կը դժուարանաք վանկերը կարգաւորելիս, բերէք, որպէսզի ես , քանզի շատ դիւրին է փնտռածդ խնդրի լուծումը: Սակայն նախ պէտք է թագաւորին յայտնել այդ կարեւոր խնդրի մասին, քանի որ օրեր առաջ, երբ եկեղեցում խօսք եղաւ այդպիսի նշանագրերի անհրաժեշտութեան մասին, թագաւորին տեղեկացրին, թէ հայերէն նշանագրեր են տեսել մի գիւղում՝ ոմն եպիսկոպոսի մօտ»:

Երբ սուրբ հայրապետը երանելի Մաշտոցի հետ գնաց Վռամշապուհ թագաւորի մօտ, նրան յայտնեցին գործի կարեւորութեան մասին եւ ասացին. «Շտապի՛ր, որ քո օրօք լինի Հայոց աշխարհի համար մեծ եւ օգտաբեր այս գիւտը, քանզի այն ապագայում մեծ շահ, անմոռաց յիշատակ եւ երկնային վայելքների օգուտ պիտի բերի առաւել քեզ, քան թէ քո կամ քեզնից առաջ եղած Արշակունիների թագաւորական իշխանութեանը»:

Եւ այսպէս, գտնելով հայոց նշանագրերը՝ երանելի Մաշտոցն սկսեց ձեռնարկել գործը: Սուրբ Սահակ հայրապետն էլ տառերի դասաւորութեան եւ հնչիւնային ուղղաձայնութեան դիւրին ճանապարհ ցոյց տուեց, ինչպէս նաեւ հայոց քահանաներից ճարտաբան ու խելամիտ մարդկանց որպէս օգնականներ ընտրեց, ովքեր երանելի Մաշտոցի պէս փոքր-ինչ գիտէին յունարէն վանկ-վանկ ընթերցելը: Նրանց օգնութեամբ երանելի Մաշտոցը կարողացաւ հայերէն այբուբէնը կարգաւորել ըստ յունարէն լեզուի հնչիւնավանկային անսայթաք դասաւորութեան՝ յաճախ հարցնելով ու սուրբ Սահակից իմանալով յունարէն տառերի օրինակները: Պարզ է, որ նրանք առանց սուրբ հայրապետի առաջնորդութեան չէին կարող անթերի կատարել գործը, որովհետեւ նա իր առլեցուն գիտութեամբ բարձր էր շատ յոյն գիտնականներից, քաջատեղեակ էր յունարէն տառերի հնչիւնաբանութեանը, հռետորական յորդասաց մեկնաբանութիւններին ու փիլիսոփայական գիտութիւններին:

Այնուհետեւ Փրկչի առաջնորդութեամբ դասաւորելով հայերէն նշանագիր տառերը եւ յարմարեցնելով ըստ հելլէնական կարգի՝ ձեռնամուխ եղան դպրոցներ բացելուն: Ամէն մարդ սրտագին փափագում էր հայեցի կրթութիւն ստանալ, որովհետեւ այդ ճանապարհով կարող էին ասորերէն լեզուի պատճառած վնասները հաղթահարելով դուրս գալ խաւարից դէպի լոյս: Սակայն նրանք տարակուսանքի մէջ էին՝ Սուրբ Գիրք չունենալու պատճառով, այսինքն՝ հայերէն լեզուով դեռեւս չկային Եկեղեցու սուրբ Կտակարանները: Եւ երանելի Մաշտոցն ու նրան գործակից պատուական քահանաները չէին կարող համարձակ ձեռնարկել մի այնպիսի յոյժ կարեւոր գործ, ինչպիսին յունարէնից հայոց լեզուի թարգմանութիւնն էր, որովհետեւ բաւականաչափ տեղեակ չէին յունարէն լեզուի գիտական հրահանգներին:

Ապա Հայոց աշխարհի բոլոր աւագ քահանաները երանելի Մաշտոցի եւ բոլոր հայ նախարարների ու աւագանու հետ հաւաքուեցին հայոց Վռամշապուհ թագաւորի մօտ եւ թագաւորի հետ միասին դիմեցին սուրբ Սահակ կաթողիկոսին, որպէսզի նա լծուի հոգեւոր գործին եւ Աստուածաշունչ մատեանը յունարէն լեզուից հայերէն թարգմանի: Քահանայից աւագ դասը սուրբ քահանայապետին ասաց. «Մենք քո առաջ կանգնած ենք երանելի Մաշտոցի հետ, ում աստուածային շնորհը մղում է կարգաւորել վաղնջուց գրուած եւ դեռեւս չկիրառուած նշանագրերը: Մենք ապարդիւն, մեծ եւ անօգուտ ջանքերով ուսանում ենք ասորերէն լեզուն, ժողովուրդն ունայն եւ անմխիթար հեռանում է եկեղեցուց, իսկ ուսուցիչները հառաչելով ցաւում են իրենց զուր ջանքերի համար: Մարդիկ օգուտ չեն ստանում հոգեւոր խրատներից, որը կերակուր եւ սնունդ է իմաստութեան հետամուտ անձանց համար: Այս բոլոր խնդիրները պէտք է լուծուեն քո գիտութեամբ: Արդ, ինչպէս որ Հայոց աշխարհի լուսաւորութեան համար Քրիստոսի սուրբ նահատակ Գրիգորը մահաբեր խոշտանգումների մէջ անվնաս պահուեց Հզօրի Աջով, այնպէս էլ շնորհուեց պահուել քեզ՝ նրա շառաւղին, այս սուրբ գործի ժառանգաւոր պայծառ

վիճակակցին, որպէսզի սկսես այս գործը եւ նմանուես քո սուրբ նախնուն, ով Հայոց աշխարհին անգիտութիւնից առաջնորդեց դէպի ճշմարիտ աստուածգիտութեան: Այժմ մեր ժողովրդին անօգուտ մուրողաբանութիւնից առաջնորդի՛ր դէպի ճշմարիտ, հոգեշահ եւ եկեղեցազարդ գիտութիւնը, որպէսզի լրացնես քո սուրբ նախնիներից մնացած այն պակասը, որի համար Աստուած պահեց քեզ, քանզի Հայաստան աշխարհում չկայ մէկը, ով կարողանայ ձեռնարկել այդ մեծ գործը: Մենք չկարողացանք հմտանալ ու հասու լինել այն գիտութեանը, որն ի վերուստ շնորհուել է քեզ՝ քո առաքինասէր եւ պարկեշտ հոգու համար»:

Այս լսելով՝ սուրբ հայրապետը ցնծաց հոգով եւ փառաւորեց ամէնքի Փրկիչ մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Կամաւոր յօժարութեամբ գործի լծուեց՝ փառավորելով Աստուծոյ գործակցութիւնը, Ով իրեն առատօրէն գիտութեան այնպիսի շնորհներ էր տուել: Եւ տքնելով գիշեր թէ ցերեկ՝ թարգմանեց բոլոր կտակարանները, Սուրբ Հոգով գրուած ճշմարիտ մարգարէութիւնները եւ կնքելով նոյն Սուրբ Հոգով՝ աւարտեց Նոր Կտակարանը երջանիկ առաքեալների լուսաւոր եւ կենսատու խօսքերով:

Երբ սուրբ հայրապետն աւարտեց իր բազմավաստակ գործը, անմիջապէս բացուեցին հայոց լեզուի ուսուցման դպրոցներ, բազմացան մէկը միւսից երեւելի գրիչների դասերը, ճոխացան սուրբ եկեղեցու պաշտամունքները եւ ստուարացաւ մարդանց հոսքը դէպի եկեղեցիներ: Նրանք գոհանում էին՝ ստանալով հոգեւոր մեծ մխիթարութիւն, հաղորդւում էին մեծ Խորհրդին եւ ուրախութեամբ գնում իրենց տները:

Պայծառացան եկեղեցիները, շուք ստացան սուրբերի վկայարանները՝ նրանցում կատարուող մշտանորոգ աղօթքներով եւ մատուցուող ընծաներով: Անվերջ բխում-հոսում էին Սուրբ Գրքի մեկնութիւնները, որոնք լուսաբանում էին մարգարէների ծածուկ խորհուրդները, եւ ողջ ժողովրդի առջեւ դրւում էին հոգեւոր սնունդով լի սեղաններ: Իմաստութեան հետեւողները ճաշակում էին այդ սեղանից եւ քաղցրացնում իրենց քիմքերը: Եւ մի խօսքով, ողջ երկիրը սուրբ հայրապետի հոգեւոր վտակներից լցուեց Տիրոջ գիտութեամբ, նման այն առատ ջրերին, որոնք լցւում են ծովերը:

Իսկ Վռամշապուհ արքան ապրեց շատ տարիներ եւ խաղաղութեամբ հասնելով խոր ծերութեան՝ վախճանուեց Հայոց աշխարհում:

Նրանից յետոյ մեռաւ նաեւ Պարսից Շապուհ արքան, եւ թագաւորեց նրա որդի Վռամը՝ Կրման արքան: Հայերը նրան խնդրեցին իրենց թագաւոր նշանակել Խոսրովին՝ Վռամշապուհի եղբօրը, ում նախկինում հայոց գահից զրկել էին տուել՝ Պարսից Շապուհ արքայի առաջ բանսարկութիւն անելով: Վռամը կատարեց նրանց խնդրանքը. դարձեալ թագաւորեցրեց Խոսրովին, ով արդեն ծեր էր, եւ վախճանուեց ութ ամիս անց:

Պարսից Վռամ արքայից յետոյ Պարսկաստանում թագաւորեց Վռամի եղբայր եւ Շապուհի որդի Յազկերտը, ով, չկամենալով Հայոց աշխարհի վրայ թագաւորեցնել Արշակունեաց տոհմից որեւէ մէկին, թագաւոր նշանակեց իր որդուն, որի անունը եւս Շապուհ էր՝ իր հօր նոյն անուամբ:

Այս Յազկերտը չարաչար խորհուրդներ ունէր. նա կամենում էր հայոց ազգին քիչ-քիչ ընտելացնել եւ դարձնել իրենց կրօնին՝ շնորհիւ միմեանց հետ յաճախակի բարեկամութեան եւ ամուսնական փոխադարձ տուրեւառութեան: Այսպէս մտածելով՝ նա չէր հասկանում Սուրբ Հոգու այն խօսքը, որ ասում է.

«Տէրը ճանաչում է մարդկանց խորհուրդները, որ ընդունայն են» [3]: Սակայն երկար չթագաւորելով՝ Յազկերտը մեռաւ: Նոյն օրն էլ նրա որդի Շապուհին, ով Արշակունու փոխարէն թագաւոր էր կարգուել մեր աշխարհի վրայ, պալատականները դաւադրութեամբ հէնց արքունիքում սպանեցին: Յազկերտից յետոյ Արեաց աշխարհի [4] վրայ թագաւորեց նրա որդի Վռամը: Հայոց իշխաններն էլ, գալով Պարսից արքայ Վռամի մօտ, իրենց համար թագաւոր խնդրեցին Արշակունիների տոհմից, եւ նա թագաւորեցրեց Վռամշապուհի որդի Արտաշէսին:

Այս Արտաշէսը երիտասարդ էր եւ զեխ ու մոլեկան վարք ունէր, որի համար հայոց նախարարները միաբան հաւաքուեցին հայոց մեծ քահանայապետ սուրբ Սահակի մօտ եւ նրան ասացին. «Այլեւս չենք կարող յանդուրժել թագաւորի պիղծ գործերը: Լաւ ենք համարում մեռնել, քան ամէն օր աղտեղութիւններ տեսնել: Չենք կարող նաեւ խղճի յանդիմանութեամբ հաղորդուել այն մեծ, պատուական ու երկնային Խորհրդին՝ ամէն օր պղծութիւն տեսնելով, որովհետեւ ինչպէս գիտենք, մեղաւոր են ոչ միայն գործողները, այլեւ նրանք, ովքեր յանդուրժում են: Արդ, դու պարտաւոր ես այս անտանելի աղէտը վերացնելու հնար գտնել ու հեռացնել ամբարիշտ թագաւորին, ով անհաւատի պէս բացայայտ արհամարհանքով ոտնատակ է տալիս բոլոր սրբութիւնները»:

Նրանց լսելով՝ հայոց սուրբ քահանայապետը պատասխանեց. «Նոր բան չէ, որ լսում եմ ձեզնից, գիտեմ ես այդ ամէնը: Գիտեմ նաեւ, որ սրտի կսկիծով էք ասում այդ բաները, եւ ինձ անհնար է ասել, թէ յօրինուածքներ են կամ թէ՝ ստոյգ չեն ձեր պատմածները: Բայց թէ հոգեւոր մարդուն վայել ի՞նչ հնարքներով պէտք է դուրս գալ այդ դրութիւնից, դա պէտք է քննեն ու գործեն բոլորը»:

Նրանք պատասխանեցին. «Մենք այդ վիճակից ոչ մի ելք կամ հնար չենք գտնում, բացի Պարսից թագաւորին բողոքելուց, որպէսզի նրան հեռացնի թագաւորութիւնից, որը ժառանգելու արժանի չէ: Դրանից բացի ուրիշ ոչինչ չենք կարող անել: Բայց խնդրում ենք քեզ՝ միաբանուի՛ր մեզ այս հարցում, քանզի պէտք չէ կցորդ լինել թագաւորի անսրբութեանը եւ նրա պիղծ գործերին»:

Երբ սուրբ հայրապետը հայոց նախարարներից լսեց այս ամէնը եւ ստոյգ իմացաւ, որ ողջ երկրի աւագանին հաստատուած է նոյն մտքի ու խորհրդի շուրջ, պատուեց մեծ տրտմութեամբ ու անմխիթար սգով: Նա շատ արտասուքներ թափեց, շատ օրեր հրաժարուեց խօսել նրանց հետ եւ փակուեց մի սենեակի մէջ: Սենեակին մօտեցողները միայն ողբի ու հեկեկոցի ձայներ էին լսում, որովհետեւ Աստուծոյ սուրբ այրը Սուրբ Հոգու զօրութեամբ իր իսկ աչքերով տեսնում էր Հայոց աշխարհի վերջնական կործանումն ու կորուստը: Նա միառժամանակ լռեց եւ առանձնացաւ մի վայրում:

Շատ օրեր անց Հայոց աշխարհի բոլոր իշխանները դարձեալ հաւաքուեցին եւ նոյն պահանջը դնելով սուրբ հայրապետի առաջ, հարկադրեցին, որ միաբանուի իրենց: Իսկ սուրբը, տեսնելով, որ նրանք ոչ մի կերպ չեն հրաժարւում իրենց նախորդ առաջարկից ու վճռից (ըստ որում՝ թագաւորի անօրէն գործերն առաւել ու առաւել էին շատանում՝ մեծացնելով իշխանների միաբանութիւնը՝ ի կորուստ իր անձի), դիմեց բոլորին՝ ասելով. «Թէ՛ ես, թէ՛ դուք, իբրեւ Աստծուց ուսեալներ, ճշմարտութիւնն էնք ասում: Մենք պէտք է այդ մարդու թերութիւնը յանդուրժելով՝ արտասուքով ու թախանձանքներով դիմենք մեր ամենողորմ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին, եւ մի հնար գտնենք մոլորուածի համար, քանզի, թէպէտ նա մեղաւոր է, սակայն ըստ աւազանի ծննդեան՝ մեր եղբայրն է ու մեր

մարմինը: Յիշէ՛ք, թէ ինչ ասաց սուրբ Պօղոս առաքեալը, որն աւանդելով ուսուցանեց նաեւ ձեր հոգեւոր հայրն ու քահանայապետը՝ սուրբ Գրիգորը. «Եթէ մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները, եւ եթէ մի անդամը փառաւորւում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» [illegible]: Պէտք է յիշել ու մտաբերել սուրբ Գրիգորի չարչարանքներն ու նեղութիւնները, բանտերն ու կապանքները, այն պաղատանքներն ու աղօթքները, որ համայն աշխարհի համար ուղղեց Աստծուն եւ ձեռք բերեց ամենաթանկը՝ Սուրբ Հոգու շնորհիւ ճշմարիտ հաւատին դարձրեց հեթանոսներին, հեռացրեց ու հալածեց ձեզնից դիւային մոլութիւնները, սերմանեց ու ծաղկեցրեց աստուածպաշտութեան ճշմարիտ հաւատը ձեր մէջ: Եւ դուք նոյն օրինակով պարտաւոր էք ողորմութիւն խնդրել մեղաւոր անդամի համար եւ ոչ թէ նրան անօրէնների ձեռքը մատնելով՝ թոյլ տաք, որ ծաղրուի մեր սուրբ հաւատը: Յիշէ՛ք իմ եւ ձեր սուրբ հօրը եւ վարդապետին, ով գիշեր-ցերեկ հառաչելով եւ անդադար հայցելով ամէնքի արարիչ Քրիստոսին՝ վերստին մարդկային բնութեան վերադարձրեց նրան [illegible], ով անասնական բնութիւն եւ կերպարանք էր առել: Եւ դուք՝ նրան աշակերտած հոգեւոր վարդապետների միաբանութեամբ, արտասուալից աղաչանքներով հաշտեցրէ՛ք ամենակարող Աստծուն, Ում համար հնարաւոր է ամէն բան, եւ ոչինչ չի տկարանում Նրա զօրութեան ահեղ հրամանների առաջ: Նա մարդասիրաբար կը տայ մեզ դժուարին թուացողը: Նա կատարում է միամիտ սրտով եւ ոչ թերահաւատութեամբ աղօթողների խնդրանքները, քանզի ասել է. «Եթէ ձեզնից երկուսը միաբանուեն երկրի վրայ որեւէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կը կատարուի նրա համար Իմ Հօր կողմից, որ երկնքում է» [illegible]: Իսկ արդ, եթէ երկու-երեք աներկմիտ խնդրողների հայցուածներն է կատարում, ապա որքան աւելի արագ կը շնորհուի այսքան բազմութեան խնդրանքը, մանաւանդ, եթէ այն մատուցուի անձանձրոյթ, ջերմ հառաչանքներով եւ անթերահաւատ յոյսով: Եւ ինչպէ՞ս չի պարգեւի առաւելը, քան հայցուածներն են: Իսկ որ ասում էք՝ միաբանուեմ ձեզ, քա՛ւ լիցի, որ ես մեր ճշմարիտ հաւատի մատնիչը լինեմ եւ իմ հօտի մոլորեալ ոչխարին յանձնեմ անհաւատներին՝ ծանակուելու: Որովհետեւ, թէպէտ նա մեղաւոր է, սակայն ունի սուրբ Աւազանից ծննդեան դրոշմը, գիտէ փրկութեան մասին եւ իրազեկ է կեանքի Աւետարանին: Արդ, եթէ իմ Եկեղեցու վիրաւոր ոչխարին տանէիք առողջ բժշկի մօտ, կը շտապէի եւ չէի յապաղի, սակայն իմ հիւանդ հոգեորդուն մատուցել ամենաախտալից ատեանին, երբէք յանձն չեմ առնի: Եթէ պէտք լինէր յանդիմանութիւն տանել հաւատացեալ թագաւորի առջեւ, թերեւս համարձակուէի՝ մոլորուածին գտնելու յոյսով, սակայն հաւատացեալին մեղքերի համար կշտամբել անհաւատների առջեւ՝ չեմ համաձայնի, քանզի ինքս միշտ ուսուցանել եմ Պօղոսի այն խօսքը, որ ասում է. «Ձեզնից մէկը, եթէ խնդիր ունենայ իր ընկերոջ հետ, կը համարձակուի՞ դատուել անիրաւների առաջ, թէ՞ սուրբերի առաջ: Չգիտէ՞ք, թէ սուրբերն են դատում աշխարհը: Եւ եթէ ձեզնով է դատւում աշխարհը, ապա արժանի չէ՞ք չնչին բաներ դատելու: Չգիտէ՞ք, թէ մենք հրեշտակներին էլ ենք դատելու, ուր մնաց թէ՝ երկրաւորներին: Իսկ դուք, եթէ այս հարցերի մասին վէճեր ունէք, որպէս եկեղեցու դատաւորներ նստեցնում էք մարդկանց, ովքեր անարժէք են: Յամօթ ձեզ եմ ասում: Ձեր մէջ չկա՞յ այնչափ իմաստուն մէկը, ով կարողանայ դատ անել իր եւ եղբօր միջեւ: Սակայն եղբայրը եղբօր դէմ է դատւում, այն էլ՝ անհաւատների առջեւ» [illegible]: Եւ արդ, եթէ ես ուսուցանում եմ շատերին, ինչո՞ւ նախ

չուսուցանեմ ինձ: Լաւ կը լինի, որ ես մեռնեմ, քան թէ հաւատացեալին անարժան գործերի համար մատնեմ անօրէնների ձեռքը: Թէպէտ նա պոռնիկ է, սակայն իր անձի վրայ Քրիստոսի հօտի կնիքն է կրում, թէպէտ մարմնով անառակութիւն է գործում, սակայն անհաւատ ու հեթանոս չէ, շուայտ կեանք է վարում, բայց կրակապաշտ չէ, տկար է կանանց հանդէպ, բայց չի ծառայում տարերքներին, հիւանդ է մէկ ցաւով, սակայն ամբարիշտների պէս չի վարակուած ամէն ախտերով: Եւ ինչպէ՞ս սակաւամեղ մարդուն մատնենք ամենաամբարիշտներին, որ կորստեան մատնեն նրան: Քա՛ւ լիցի, հեռացրէ՛ք այդ խորհուրդները ձեզնից եւ ձեր նախնիների պէս մի՛ փորձէք կորստեան մատնել ձեր տան տէրերին»:

Սուրբ կաթողիկոսն այսպիսի եւ առաւել քան այսպիսի խրատներ տուեց աւագանուն, սակայն չկարողացաւ նրանց հեռացնել իրենց միաբանութիւնից ու խորհուրդներից, որովհետեւ եկել, նրանց վրայ էր հասել Աստուծոյ սուրբ այր Ներսէսի անէծքը՝ ընկնել հեթանոսների ծառայութեան չար լծի տակ: Եւ նրանք միաբերան պատասխանեցին սուրբ քահանայապետին ու ասացին. «Քանի որ դու չանսացիր մեզ եւ հեռացրիր քեզ մեր միաբանութիւնից, իմացած եղիր, որ ինչպէս մտադրուել ենք, նա այլեւս չի թագաւորի մեզ, եւ խոստանում ենք, որ դու եւս որպէս քահանայապետ երկար չես մնայ մեր երկրում»:

Վրդովուած սուրբի խրատներից՝ այսպէս խօսեցին Հայոց երկրի աւագներն ու տանուտէրերը: Խիստ զայրացած՝ այլեւս չկամեցան մնալ քահանայապետի մօտ ու հեռացան:

Այնուհետեւ միաբանուած գնացին Պարսից արքունիք ու ներկայացան Վռամ արքային: Նրանց հետ էր նաեւ Սուրմակ անունով մի երէց՝ Բզնունեաց գաւառի Արծկէ գիւղից: Սա էլ, միաբանուելով հայոց նախարարներին եւ, խոցուած սուրբ հայրապետի խրատից, Պարսից աւագանու առջեւ հայոց թագաւոր Արտաշէսի մասին աւելի անմիտ ու աղտեղի խօսքեր ասաց, քան հայոց բոլոր նախարարները: Սա այդ ծառայութիւնը մատուցեց նախարարներին, որովհետեւ աւագներից ոմանք նրան խոստացել էին Հայոց աշխարհի կաթողիկոսական Աթոռը:

Լսելով այդ բողոքները՝ Պարսից արքան, նրանց այլեւս թոյլ չտուեց շարունակել, մինչեւ որ ամբաստանուողները չգային արքունիք: Անմիջապէս դեսպան ուղարկեց հայոց Արտաշէս թագաւորի մօտ եւ նրան հրամայեց մեծ քահանայապետ սուրբ Սահակի հետ շտապ ներկայանալ իրեն: Երբ նրանք եկան արքունիք, Պարսից թագաւորը նախ առանձին խօսեց հայոց Արտաշէս թագաւորի հետ՝ հարցնելով. «Ինչո՞ւ են հայոց նախարարներն ամբաստանում քեզ»: Եւ նա պատասխանեց. «Ամենեւին չգիտեմ, թէ ինչ են չարախօսում իմ մասին, սակայն գիտեմ, որ ինչպէս ի բնէ սովոր են, թշնամանում են իրենց տէրերի հետ: Նրանք միշտ փոխել են իրենց իշխաններին եւ եղել տիրատեացներ, նոյն օրինակով են վարւում նաեւ այժմ եւ կամենում են կատարել իրենց չար նպատակները»:

Ապա Արեաց Վռամ թագաւորը հրամայեց առանձին իր մօտ կանչել հայոց սուրբ կաթողիկոսին, որովհետեւ մեծարում էր նրան նախ՝ որպէս Սուրէնի տոհմակից, եւ նաեւ՝ Աստուած Իր ծառաներին պատուական է ցոյց տալիս անհաւատների առջեւ: Հարցուփորձ անելով երանելի կաթողիկոսին՝ արքան ցանկանում էր նրանից իմանալ հայոց թագաւորից չարախօսողների նպատակները, իսկ նա պատասխանեց. «Չգիտեմ, թէ նրանք ինչ են խօսում

արքայի դէմ: Թող իրենք ասեն, եւ դուք իրենցից լսէք: Ինչ որ ասեն ձեր առջեւ, թող հատուցումը իրենց անձանց վրայ լինի: Ինձ ոչինչ մի՛ հարցրէք, որովհետեւ ինձնից ոչ մի չար կամ բարի բան չէ՛ք լսի»:

Այնժամ Վռամ թագաւորը կանչեց իր հազարապետ պահլաւ Սուրէնին, ով մեծ քահանայապետ Սահակի ազգակիցն էր, յանձնարարեց յորդորել Սահակին՝ միաբանուել հայոց նախարարներին, վկայել նրանց չարախօսութիւնների մասին եւ մեծամեծ պարգեւներով ու պատուով վերադառնալ իր երկիրը եւ կաթողիկոսական իշխանութեանը: Սուրէնն արքայի պատգամը յայտնեց երանելի Սահակին՝ խոստանալով մեծ պատիւ եւ օգուտ ունենալ թագաւորի կողմից: «Թէ ընդունես նրա կամքը, ասաց, եւ հաստատես հայոց նախարարների վկայութիւնները, ապա մեծ պատիւներով կը վերադառնաս քո իշխանութեանը, իսկ եթէ յամառես, ապա կը կորցնես կաթողիկոսական աթոռը եւ կը զրկուես քո ունեցած իշխանութիւնից: Ես, որ քո ազգակիցն եմ, բարին եմ կամենում եւ հեշտութեամբ չէ, որ քեզ բարեկամական խրատ եմ տալիս»: Այսպէս ջանում էր համոզել սուրբ Սահակին, որովհետեւ պարսից արքան կամենում էր վերացնել հայոց թագաւորութիւնը:

Սակայն սուրբը բնաւ յանձն չառաւ վկայութիւն տալ, այլ անսասան մնալով՝ ասաց. «Ես չգիտեմ, թէ ինչ վատթար գործեր է արել Արտաշէսը, որոնցով արժանի լինէր ձեր կողմից դատուելու կամ անարգուելու: Թէպէտ ըստ մեր սրբասէր օրէնքների՝ նա արժանի է անարգանքների ու նախատինքների, սակայն ըստ ձեր աղտեղասէր օրէնքների՝ նա արժանի է գովասանքի ու մեծարանքների»:

Սուրէնն իր տոհմակից հայրապետի այս խօսքերն անմիջապէս հաղորդեց Արեաց թագաւորին, իսկ սա անասելի ցասման ներքոյ կարգադրեց բազմամբոխ ատեանի առջեւ հարցաքննել հայոց նախարարներին ու Արտաշէսին: Հայոց իշխաններն սկսեցին իրենց թագաւորի վրայ բարդել տեսակ-տեսակ աղտեղի ու անարժան խօսքեր: Խօսում էին ոչ միայն նրա արածների մասին, այլեւ թշնամաբար բարդում էին մեծամեծ վնասակար մեղադրանքներ, որոնք թէպէտ Արտաշէսն ուրանում էր, սակայն լսողները չէին հաւատում, որովհետեւ կամենում էին մէջտեղից վերացնել Արշակունիների թագաւորութիւնը: Արտաշէսին մեղադրողները Արեաց թագաւորի եւ արքունի ամբողջ աւագանու առջեւ ասացին. «Ի՞նչ պէտք է թագաւորը, թող ժամանակ առ ժամանակ մի վերակացու պարսիկ իշխան գայ, որպէսզի նա, տեսնելով իւրաքանչիւրիս հպատակութիւնն ու ոչ հպատակութիւնը, յայտնի ձեզ»:

Այս լսելով՝ Վռամը եւ արքունի աւագանին շատ ուրախացան: Անմիջապէս կարգադրեց Արտաշէսից վերցնել թագաւորութիւնը, սուրբ Սահակից էլ՝ կաթողիկոսական աթոռը, որովհետեւ նա չէր միաբանուել հայոց նախարարներին եւ չէր տուել իր վկայութիւնը: Այսպէս Արտաշեսի վեցերորդ տարում վերացաւ Արշակունիների թագաւորութիւնը՝ համաձայն երանելի եւ մեծ քահանայապետ Ներսէսի խօսքի:

Հայոց աշխարհն ընկաւ Պարսից անօրէն իշխանութեան լծի տակ: Հայոց նախարարներն իրենց համար կաթողիկոս խնդրեցին Պարսից արքունիքից, եւ Վռամ թագաւորը նրանց տուեց Բրքիշոյ անուամբ ազգութեամբ ասորի մի մարդու:

Եւ յետոյ աւագ սեպուհները, Եկեղեցու միաբանութիւնը եւ ողջ ժողովուրդը ողբում էին կորցրած սուրբ վարդապետութեան համար, որը սերմանեցին ու

աճեցրին սուրբ Գրիգորն ու նրա ժառանգները եւ որը երանելի առաքեալների պէս ընդունել էին ո՛չ թէ մարդուց, այլ Սուրբ Հոգուց: Եւ դարձեալ միահամուռ հաւաքուեցին, գնացին Աստուծոյ սուրբ այր Սահակի մօտ, բազմազեղ արտասուքներ թափելով եւ աղերսագին թախանձանքներով ընկան նրա ոտքերը՝ ասելով. «Մեղանչել ենք երկնքի դէմ եւ քո առջեւ: Ների՛ր մեր յանցանքները եւ վարուի՛ր քո նախնի բարեպաշտ սուրբ Գրիգորի օրինակով, ով չյիշեց իր այնքան տանջանքներն ու չարչարանքները, որ նրան հասցրին մեր նախնիները: Նմանուի՛ր ամէնքի Արարչին, Ով չարը բարութեամբ փոխհատուցելով՝ Իր հետեւորդների առջեւ բացեց առ Աստուած տանող ճանապարհը եւ ուսուցանեց երկնաթռիչ վարքը: Նա բոլորին սովորեցրեց հանապազ ասել. «Ների՛ր մեր մեղքերը, ինչպէս որ մենք ենք ներում մեր դէմ մեղանչողներին»: Արդ, Դու, որ անդադար վարդապետում էիր, ցո՛յց տուր Նրա փառաւորութիւնը քո անձի մէջ եւ Նրա երկայնամտութեան օրինակով ների՛ր մեզ: Մենք կը ջանանք եւ արքունիքում կը խնդրենք, որ քեզ հաստատեն սուրբ Եկեղեցու քո հայրենի կաթողիկոսական Աթոռին, որից լուսաւորուելով՝ տեսանք անմատչելի արդարութեան Արեգակին: Թող պղտոր ուսմունքը չխառնուի մեր սուրբ եւ առաքելանման Գրիգոր հայրապետի յստակ ու ականակիր վարդապետութեանը, քանզի թոյլ առաջնորդների պատճառով տկարանում է սուրբ, անարատ քարոզութիւնը: Եւ ահա յաւիտենական կորստի ենք մատնւում մենք եւ մեզնից ծնուածները»:

Շատ օրեր, գիշեր թէ ցերեկ այսպիսի պաղատանքներ էին մատուցում սուրբին, սակայն ամենեւին չկարողացան փոխել այդ արդար մարդու միտքը: Նա խաղաղութեամբ ասում էր բոլորին. «Երկնաւոր Արարիչը եւ Քրիստոս ինձ որեւէ մէկի վրայ բարկանալ չի սովորեցրել: Նա, Ով խաչի վրայ Իրեն խաչը հանողների համար աղաչում էր Իր Հօրը՝ դա մեղք չհամարել նրանց, մեզ պատուիրում է՝ օրհնել մեր հալածիչներին եւ բարիք անել մեզ ատողներին: Սակայն ես չեմ կարող քահանայ լինել տիրաննեզ, տիրասպան եւ մատնիչ ժողովրդի համար, քանզի Սուրբ Հոգին, Ով մեզ վերստին ծնեց սուրբ աւազանով, որպէսզի ժառանգակիցներ լինենք Քրիստոսին, ասել է. «Մի՛ դատէք, որպէսզի չդատապարտուէք» [10], նոյնն ասաց նաեւ երկնաքաղաքացի Պօղոսի բերանով, թէ՝ «Մենք, որ ուժեղ ենք հաւատի մէջ, պարտաւոր ենք թոյլերի տկարութիւնը տանել եւ միայն մե՛զ համար հաճելի չլինել» [11]: Եւ դարձեալ ասում է. «Իմն է վրէժխնդրութիւնը, եւ Ես կը հատուցեմ» [12]: Ուրեմն, դուք ձեր մասին մտածէք: Դուք վրէժխնդիր եղաք ձեր թագաւորի գործերի համար եւ նրա վրայ զայրացած՝ մեր Եկեղեցու սուրբ հաւատը անօրէնների առաջ ծաղրի մատնեցիք: Ինչպէ՞ս կարող էք ինձ մխիթարել, ես ո՞ւմ քահանայ լինեմ, երբ Քրիստոսի հօտի վիրաւոր ոչխարին տեսնում եմ ո՛չ թէ վէրքերը պատուած, ո՛չ թէ ձէթով ու գինով օծուած, գրաստի վրայ դրուած ու պանդոկ տարուած, այլ անխնայ յօշոտուած եւ պատառոտելու համար գիշատիչ գազանների առջեւ գցուած: Հեռացէ՛ք ինձնից եւ թո՛յլ տուէք ողբալ Հայոց աշխարհի ընդհանուր կորուստը, որը տեսնում եմ հոգուս աչքերով: Մի՛ բռնադատէք ինձ որ մխիթարուեմ կաթողիկոսական գահով երբ ժողովուրդը կորստեան է մատնված: Այս աղէտալի դէպքերը նախքան իմ եպիսկոպոս ձեռնադրուելը ինձ յայտնեց վերին կանխասացութիւնը մարգարէական այն տեսիլքի օրինակով, որը յայտնուեց սուրբ նահատակ Գրիգորին եւ ինձ ցոյց

տուեց այն իրողութիւնները, որ պիտի լինեն ապագայում: Եւ ես այժմ ստիպուած եմ սրտի ցաւով այն պատմել ձեզ. ունկնդրէ՛ք ինձ, ո՛ղջ ժողովուրդ.

«Շատ տարիներ առաջ անմխիթարական խորհուրդներս նեղում էին ինձ, անդադար յիշեցնում եւ Բարձրեալին աղաչել տալիս՝ ինձ արու զաւակ շնորհել, ինչպէս իմ նախնիներին, ովքեր ամուսնանում էին՝ որդի ունենալու համար: Սակայն արդար է Հզօրի բաշխումը իւրաքանչիւրին, եւ Նա գիտէ առաւել, քան մենք ենք խորհում ու իմանում: Աղուհացի շրջանի [13] Աւագ Հինգշաբթի օրը՝ երեկոյեան հսկման Պատարագին [14], հաղորդուեցի Քրիստոսի սուրբ եւ մեղսաքաւիչ Խորհրդին: Ոչինչ չէի ճաշակել, բացի աղից, հացից ու ջրից՝ պահելով Նիկիական ժողովի աւանդած կանոնը, որը Սուրբ Հոգին հաստատել էր կնիքով: Երկար սաղմոսերգութեան կանոնն աւարտելուց յետոյ, սպասաւորների դասը նստած եւ բազմօրեայ տքնութիւններից հոգնած, կիսամեռ եղածների պէս խոր քուն մտաւ: Նրանք քառասնորդական օրերն անց էին կացրել խիստ պահեցողութեամբ եւ գիշեր ու ցերեկ անդադար աղօթելով, իսկ Աւագ շաբաթը կամեցան առաւել խստացնել իրենց չարչարանքները՝ յուսալով ուրախալից քրտինքով արժանանալ վարձքի հատուցմանը: Վառուած էին բոլոր ճրագներն ու կանթեղները: Ընթերցողը կամաւոր երկարացնում էր ընթերցուածքները, որպէսզի սպասաւորները փոքր-ինչ շունչ առնէին եւ հասնէին նրանց համար սահմանուած կանոնին: Գիշերային արարողակարգն սկսելու համար սպասում էին ժողովրդի հաւաքուելուն, քանզի իւրաքանչիւր ոք՝ տղամարդ թէ կին, փափագում էր արթնութեամբ արժանանալ իր անձի փրկութեանը: Եւ ես նստած էի Աստուծոյ Սեղանի մօտ՝ Վաղարշապատ քաղաքի սուրբ եկեղեցում:

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻԻ ՏԵՍԻԼՔԸ [15]: , ՈՐ ՏԵՍԱՒ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ, ԵՐԲ ԲԵՄԻՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՂԱՆԻ ՄՕՏ, ՆՍՏԱԾ ԷՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷԻ ՄԷՋ: ԱՐԴ, ԴՐՈՇՄԷ՛Ք ԱՅՍ ՏԵՍԻԼՔԸ, ՈՐՈՒՄ ՀՕՐ, ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԽՕՍՔԵՐՆ ԵՆ:

«Եւ ահա յանկարծ բացուեց երկնքի հաստատութիւնը, որից առատ լոյս ծագեց ու լցրեց ողջ երկիրը: Երկրի վրայ կանգնելով՝ ինձ երեւաց ամպեղէն քառակողմ բեմ, որի բարձրութիւնը հասնում էր մինչեւ երկինք, իսկ լայնութիւնը տարածուելով ծածկում էր ամբողջ երկիրը: Բեմի վրայ երեւում էր Տիրոջ սպասաւորութեանն արժանի, ազնիւ ոսկուց խորանարդաձեւ տետրասկեղ [16]: Այն ծածկուած էր շատ նուրբ, սպիտակափայլ կտաւով: Այդ խորանաձեւ ծածկոյթի վրայ յայտնապէս երեւում էր տէրունական Խաչի նշանը, որի երեւմունքը նիւթեղէն չէր, այլ լուսեղէն: Եւ յանկարծ խաղաղասիւք օդի շնչիւն եղաւ, եւ բացուեց կտաւի խորանաձեւ ծածկոյթի մի փեղկը: Ես նայեցի նրա միջով եւ տեսայ, որ ահա բեմի վրայ կար քառակողմ, ակնակուռ սեղան՝ ընդելուզուած բազմագոյն ու պատուական քարերով: Սեղանի վրայ կար մի սուրբ հաց եւ խաղողի մի ողկոյզ՝ ըստ փրկութեան երկնային խորհրդի պատուականութեան: Եւ սուրբ խորհրդին մօտիկ երեւում էր սաղարթաշատ եւ յոյժ պտղալից մի ձիթենի, որի բարձրութիւնն ու լայնութիւնը չէի կարողանում ընդգրկել իմ հայեացքով: Այն ունէր շատ պտուղներ, իսկ տեսքն ու գեղեցկութիւնն անպատում էր եւ սքանչելի: Ձիթենու չորս ոստերն

առանձնացած էին եւ խոնարհուած՝ դէպի երկիր: Երեք ոստերը միաչափ էին, իսկ պտուղները՝ հաւասար եւ համանման, սակայն չորրորդը թերի էր եւ սակաւապտուղ: Եւ այս չորրորդ ոստի պտուղները բնաւ նման չէին ձիթենու երեք ոստերի պտուղներին ո՛չ իրենց փարթամութեամբ, ո՛չ էլ իրենց լիութեամբ, այլ թուով առաւել նուազ ու վտիտ էին ու ասես թորշոմած լինէին:

Եւ բեմի ձախ կողմում տեսայ մի քառակողմ ու բարձր Աթոռ: Այն ծովագոյն էր, սառնակերպ եւ ծածկուած թխագոյն թանձր կտաւով: Փչող քաղցրաշունչ օդից կտաւը բարձրացաւ եւ ահա Աթոռի վրայ տեսայ մեծ արծաթէ սկուտեղ: Սկուտեղի վրայ դրուած էր ծալուած մի բեհեզեայ նափորտ [17], նրա մօտ՝ ոսկէ մի գունդ, քառակուսի մի մագաղաթ: Մագաղաթի վրայ՝ վերին մասում, կային ինչպէս ճարտար գրչի ձեռքով գրուած տողեր՝ սքանչելի, ոսկէտեսիլ գրով, իսկ մագաղաթի միջին մասում՝ ոսկէգիր շարուածքից հեռու, երեւում էին եղծուած տողեր՝ ջնջուածի պէս: Բնաւ չէր երեւում ո՛չ նրանց ձեւը, ո՛չ էլ գրատեսակը: Եւ միայն մագաղաթի վերջում՝ ջնջուած տողերից հեռու, դարձեալ տեսնում էի մէկ ու կես տող ոսկէնախշ գրուածք՝ յոյժ սքանչելի, ինչպէս մագաղաթի սկզբում գրուած տողերը: Մագաղաթը մինչեւ եղծուած տողերը ոսկէգոյն էր, իսկ նրանից այն կողմ՝ կարմրադեղին: Սկուտեղի եզրամասի մօտ կային արու մանկանց բազմութիւն եւ քիչ թուով աղջնակներ: Նրանք բոլորը լուսազգեստ էին եւ պայծառ: Նրանց պատմուճանների փայլատակումից արձակւում էին ճառագայթներ՝ կարմրագոյն նշոյլներով: Նրանք գոյնգոյն եւ տարբեր-տարբեր երանգներով էին երեւում: Նրանք բոլորը նայում էին սուրբ Սեղանին, եւ բնաւ իրենց հայեացքները չէին հեռացնում փրկչական Խորհրդից:

Յանկարծ Աթոռն սկսեց շարժուել սաստիկ դղրդիւնով: Այնժամ մանուկներն անմիջապէս երիտասարդ դարձան, կատարեալ հասակ առան եւ թեւեր առնելով՝ բարձրացան վեր՝ դէպի սուրբ Սեղանը, որն ընդելուզուած էր բազմագոյն քարերով, ու սկսեցին երգել «Սուրբ Աստուած»ը: Ապա սուրբ Սեղանը, նրանց իր հետ առած, համբարձուեց երկնքի հաստատութիւնից վեր ու ծածկուեց: Եւ այսպէս աներեւոյթ լինելով՝ տեսիլքն աւարտուեց, իսկ ես մնացի մեծապէս ապշած եւ զարհուրած:

Եւ ահա յանկարծ երկնքից ինձ երեւաց մարդու կերպարանքով մի լուսեղէն այր, որի երեսից ճառագող սաստիկ լոյսը խաւարեցրեց եւ ծածկեց արեգակի լոյսը: Եւ պանալով՝ այրը եկաւ այնտեղ, ուր ես էի, իսկ ես առաւել հիացած ու ապշած նրա փայլակնացայտ երեւմունքից՝ դողալով ընկայ երեսիս վրայ: Նա ինձ վեր կացրեց եւ ամուր ոտքի կանգնեցնելով՝ ասաց. «Քաջալերուի՛ր, զօրացի՛ր եւ մի՛ երկնչիր, այլ ամրացրո՛ւ սիրտդ Հզօրի անուամբ, Ով արարեց ամէն ինչ եւ քեզ ցոյց տուեց Իր արարչութեան կանխատես մեծ խորհուրդը»: Ուշքի գալով՝ ես զօրացայ նրա խօսքերից եւ ոտքի կանգնեցի: Նա ասաց ինձ. «Ինչո՞ւ ես տրտմած եւ կամ ինչո՞ւ են զուր հոգսերը պղտորել քո յստակ միտքը: Անգէտ խորհուրդներ ընդունելով՝ խռովւում էիր արու զաւակ չունենալու համար, երբ քաջածանօթ ես Հզօրի կամքին, Ով Իր գիտութեամբ իւրաքանչիւրին բաշխում է իր օգուտը եւ չի արգելում որեւէ մէկին ստանալ իր արժանին: Եւ արդ, գթալով ու սիրելով քեզ՝ Բարձրեալը կամեցաւ հեռացնել քեզնից այդօրինակ ընդունայն մտածումներդ եւ մխիթարել այս տեսիլքով: Քեզ ցոյց տուեց մեծ յայտնութիւն ոչ միայն առաջիկայի, այլեւ ապագայի բոլոր դէպքերի, որ պիտի լինեն մինչեւ աշխարհի վերջը, եւ յայտնեց Քեզ ու բոլոր Իր խօսքին հաւատացողներին, ինչպէս որ քո արդար նախնուն՝ սուրբ Գրիգորին: Քեզ ցոյց տրուեց այն ամէնը, ինչ պիտի լինի

մինչեւ աշխարհի վախճանը: Եւ արդ, լսի՛ր ինձ, եւ ես քեզ կը պատմեմ մեծ յայտնութեան մեկնութիւնը, ինչպէս ինձ հրամայուեց վերին Զօրութեան կողմից: Ունկնդրի՛ր ինձ մեծ զգուշաւորութեամբ եւ իմ խօսքերն անմոռաց գրի՛ր քո սրտի տախտակին: Դրոշմելով այն մագաղաթի վրայ՝ կը թողնես հաւատացեալ ժողովրդին՝ զգաստութեան համար մինչեւ աշխարհի վերջը»:

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԻ ՏԵՍԻԼՔԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԵՇՏԱԿԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԸ ՅԱՅՏՆԱՊԷՍ ՅՈՅՑ ՏՐՈՒԵՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻ ԵՒ ԱՌԱՆՁԻՆ ՏՆԵՐԻ, ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Երկնքի հաստատութեան բացուելը եւ երկրի ողջ երեսով մէկ սաստիկ լոյս սփռուելը, որ տեսար, նշանակում է, որ Աստուծոյ կենարար Որդու առաջին Գալուստից յետոյ բացուել է Նրա ողորմութեան շնորհի դուռը բոլոր նրանց առջեւ, ովքեր սիրում են Նրան եւ պահում Նրա պատուիրանի խօսքերը, եւ որոնց մէջ ծագելով այդ լոյսը՝ լուսաւորւում են Նրա գիտութեան փառքի լոյսով: Երկրից մինչեւ երկինք բարձրացած քառակողմ կանգնած բեմը, որ երեւաց քեզ, ճշմարիտ հաւատն է, որով արդարները վերանում են աշխարհի կեանքի ծանրութիւնից դէպի երկնային թեթեւ բնակութիւն: Եւ բեմն ամպեղէն գոյնով երեւաց, որովհետեւ Նա վերացաւ ամպով եւ նորից պիտի գայ՝ արդարներին բարձրացնելու ու հասցնելու Իր Հօր արքայութեան տան բազում օթեւանները, որի մասին գիտես Սուրբ Հոգուց, որ ընտիր այր Պօղոսի բերանով ասել է. «Ամպով պիտի յափշտակուենք, Տիրոջն ընդառաջ՝ օդի միջով» [18]: Բեմի վրայ գտնուող ոսկէ տետրասկեղը, որի վրայ գցուած մաքուր, նուրբ կտաւը ծածկել էր սուրբ Սեղանը եւ խորհուրդը, իմացի՛ր ու ճանաչի՛ր, քանզի ծածուկ եւ անյայտ է աստուածային գիտութեան խորհուրդը, պատուական է եւ սուրբ՝ ընտիր մաքուր ոսկու եւ կտաւի լուսափայլ մաքրութեան պէս: Նրա վրայ կանգնեցուած կենդանացուցիչ Խաչի նշանը, որ երեւում էր, նշանակում է նախ՝ մեղքով գլորուած բոլոր մարդկանց կենդանացած վեր ելնելը, եւ դարձեալ՝ Քրիստոսի Գալստեան ժամանակ նախ Խաչը պիտի երեւայ, եւ ապա պիտի լինի Դատաստանը եւ իւրաքանչիւրին ըստ գործերի հատուցումը:

Իսկ քաղցրաշունչ օդը, որը բարձրացրեց կտաւի մի մասը, մի՛տդ բեր Սուրբ Հոգուց դէպի քեզ բխած քաղցր զեղումը, որով Իր սուրբերին յայտնում է Իր աստուածութեան ծածուկ խորհուրդը: Ներսում տեսար պատուական քարերով ընդելուզուած ոսկէ սեղանը, որը ցոյց է տալիս Սուրբ Երրորդութեան միութիւնը, Ում ուրախացնում է արդարների վարքն ու ճգնութիւնները՝ որպէս զանազան պատուական քարեր նրանց Իր վրայ առնելով: Նրանք, Նրա հետ սուրբ Սեղանին բազմած, արժանաւորապէս ճշմարտութեամբ ճաշակում են Փրկչի Մարմինն ու Արիւնը, որը ցոյց էր տալիս Սեղանին դրուած հացն ու ողկոյզը,որոնք էլ Տիրոջ կենարար չարչարանքների Մարմնի եւ Արեան օրինակն են: Իսկ քեզ ցոյց տրուած բարձր ու սաղարթախիտ, բազմապտուղ ու սքանչելատեսիլ ձիթենին, որը շատ մօտ էր Տէրունական Խորհրդին, նշանակում է մարդկանց ընծայաբերութիւնները, ողորմութիւնները եւ միմեանց հանդէպ սէրը: Քանզի բոլոր բարեգործութիւնների մէջ Աստուածութեանը ամենամօտը եւ նրա առջեւ առաւել պատուականը աղքատասիրութիւնն է, որով ընտիր երեւացին նախկին արդարները՝ Աբրահամը, Իսահակը եւ Յակոբը: Առանց նրա արհամարհուեց կոյսերի կուսութեան վաստակը, եւ նրանք հարսանիքից

հեռացուեցին: Նրանով է երեւում Քրիստոսի քարոզութեան կնիքը մարդկանց վրայ, քանզի ասաց. «Եթէ դուք սիրէք միմեանց, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն էք» [19]: Առաւել եւս նա, ով առատապէս, զուարթութեամբ եւ յօժարութեամբ է կատարում սիրոյ պատուիրանը ոչ միայն աղքատների, այլեւ ընկերների, եղբայրների եւ բոլորի հանդէպ, խաղաղութիւն է հաստատում աշխարհում, եւ փառաց Տէրն է բնակւում նրա մէջ՝ շնորհելով հանգիստ ու առատ պտղաբերութիւն, ինչպէս այն բարձր, լիապտուղ եւ սաղարթախիտ ձիթենին, որ տեսար: Տեսար ձիթենու չորս ոստերը, որոնք խոնարհուել էին ցած՝ դէպի երկիր. երեք ոստերը հաւասարաչափ էին իրենց տեսքով ու պտուղներով, իսկ չորրորդը, ինչպէս քեզ ցոյց տրուեց, նրանց կէսի չափ էր ու նուազ՝ իր պտղաբերութեամբ: Նրաց պտուղները վտիտ էին ու թորշոմած, բերքը՝ քիչ եւ ոչ նման ձիթենու այլ լիատեսիլ պտուղներին: Արդ, սեւեռի՛ր միտքդ, լսի՛ր եւ ես քեզ կ'ասեմ, թէ ինչ սահմանեց Բարձրեալը: Այսուհետեւ, մինչեւ աշխարհի վախճանը երեք տասնեակ եւ կէս տասնեակ տարիները պիտի համառօտուեն (կարճուեն) ամբողջ աշխարհի վրայ, մինչեւ որ երեւայ անապատի պիղծը, որի մասին Սուրբ Հոգին յայտնել է Դանիէլ մարգարէին եւ յայտնապէս պիտի լինեն երեք հարիւր յիսուն տարի՝ ըստ երեք եւ կէս ոստերի միանման պտուղների: Տեսար, որ ոստի պտուղները թոռոմած են, թորշոմած եւ նման չեն ձիթենու այլ պտուղներին: Ստուգապէս իմացի՛ր, որ վերացել է սէրն ու արդարութիւնը մարդկանց միջից, ովքեր ստութեամբ եւ ոչ ճշմարտութեամբ իրենց ցոյց են տալիս որպէս պատուիրանապահ եւ բարէսէր: Եւ դա յայտնապես գրուած եւ կնքուած է ամենագէտ Աստուծոյ Գրքում, Ով ներում է երկայնամտութեամբ եւ հատուցում անաչառութեամբ:

Բեմի ձախ կողմում քեզ ցոյց տրուած ծովագոյն ու սառնակերպ քառակողմ Աթոռը նշանակում է քահանայութեան եւ թագաւորութեան անկումը, որն արդարեւ Բանն Աստուած Ինքն է հաստատում: Նրա վրայ կար արծաթէ սկուտեղ, որովհետեւ Աստուծոյ խօսքը, ինչպէս փորձուած, ընտիր եւ լուսափայլ արծաթ, սփռուելով տարածուեց բոլոր ազգերի մէջ, որի մասին մարգարէն Սուրբ Հոգով ասում է. «Տիրոջ խօսքերը սուրբ խօսքեր են, ինչպէս ընտիր ու փորձուած արծաթ՝ եօթնապատիկ մաքրուած ու զտուած երկրից» [20]: Մարգարէն ասում է «զտուած երկրից»՝ նկատի ունենալով Աստուծոյ Որդու՝ սուրբ Կոյսից մարմնով երեւալը: Աթոռի ծովագոյն սառնանման տեսքը նշանակում է Հայոց աշխարհի ծփացող ալեկոծութիւնները, իսկ թխագոյն թանձր կտաւով պատուելը նշանակում է այն թանձրամած սուգը, որ պիտի ունենայ ամբողջ աշխարհը:

Եւ տեսար, որ սկուտեղի վրայ ծալուած դրուած էր բեհեզեայ նափորտ եւ նրա մօտ՝ ոսկէ գունդ: Առաջինը նշանակում է քահանայութիւնը, երկրորդը՝ թագաւորութիւնը: Եւ քանի որ ոչ ոք իր վրայ չէր առել նափորտը եւ ոչ ոք իր ձեռքը չէր առել ոսկէ գունդը, ապա ստուգապէս իմացի՛ր, որ շատ շուտով պիտի դադարեն Արշակունիների տոհմի թագաւորութիւնը եւ արժանաւոր քահանայապետ Գրիգորի տոհմից քահանայութիւնը:

Հատուածաձեւ մագաղաթի սկզբում մի քանի տող գրուած էր ոսկեղէն գրով: Սուրբ Հոգու շնորհով սրանով քեզ ցոյց է տրուել սուրբ այրերի ձեռնադրութիւնը, ովքեր սերուած լինելով երանելի Գրիգորի զարմից՝ պիտի արժանապէս յաջորդեն քահանայապետութեան Աթոռին: Նրանք ընտիր այրեր են, քանզի նրանց անունները գրուած են կեանքի գրքում ոսկէտեսիլ տառերով: Մագաղաթի մէջտեղում՝ ոսկեգիր տառերից հեռու, դու տեսար աղաւաղուած եւ

ջնջուած մի քանի տողեր: Իմացի՛ր, որ սուրբ Գրիգորի Աթոռին նստելու են քահանայապետեր, ովքեր ձեռնադրւում են ո՛չ սուրբ առաքեալների եւ ո՛չ էլ սուրբ ժողովին մասնակցած երեք հարիւր տասնութ սուրբ այրերի կանոնի համաձայն, այլ յանդգնութեամբ այդ պատուին են ձգտում՝ ըստ աշխարհի փառքի: Նրանք առաւել արծաթասէր են, քան թէ աստուածասէր: Եւ քանի որ անպիտան է այդպիսի քահանայութիւնը եւ ոչ հաճոյ Բարձրեալին, նրանք ջնջուած են երկնքի բարութեան մատեանից, մատնուած դատաստանի եւ այրուելու գեհենում՝ ի կորուստ իրենց անձանց ու ժողովրդի: Իսկ մագաղաթի ստորին եզրում գրուած սքանչելի ոսկէգիր եւ կէս տողը, որ երեւացին քեզ, հաստատապէս իմացի՛ր, որ անապատի պիղծի երեւալուն մօտ ժամանակներում դարձեալ թագաւոր պիտի ելնի Արշակունեաց տոհմից, եւ պիտի նորոգուի հայրապետական Աթոռը սուրբ Գրիգորի շառաւղից:

Եւ քանի որ նրանք արհամարհուած եւ գետնին ընկած չէին կոխկրտուելու համար, այլ գունդը երեւաց յստակ, եւ ծալուած նափորտը քեզ ցոյց տրուեց առաւել պատուականութեամբ ու հաստատապէս: Այդ սքանչելատեսիլ ոսկէգիր տողը եւ կէս տողը քեզ յայտնեց այն մասին, որ ամբարտաւան թշնամու ժամանակներում արդար քահանայապետ է նստելու սուրբ Գրիգորի զարմից, եւ առաջին քահանայացածը պիտի աւարտի իր կեանքը՝ կրելով բազում նեղութիւններ կորստեան իշխանի սուտ առաքեալների կողմից: Վախճանուելու է խաղաղութեամբ եւ ոչ թէ սրով: Իսկ քահանայապետական Աթոռին յաջորդած նրա միւս զաւակը, երկար համբերելով տանջանքներին ու հարուածներին, սովին, հալածանքներին եւ դառը նեղութիւններին, անօրէն իշխանի դահիճների սրով ընդունելու է մարտիրոսութիւնը: Այն, որ գրածի մի մասը ցոյց տրուեց կարմիր գոյնով, ստուգութեամբ հաստատում է մարտիրոսութիւնը, որ պատահելու է սուրբերին:

Իսկ այն, որ արծաթէ սկուտեղի շուրջ երեւաց մանուկների բազմութիւն, զուարճացի՛ր ցնծալից ուրախութեամբ, որովհետեւ Արարչից քեզ տրուած զաւակի արգանդից պիտի ելնեն բազում շառաւիղներ, զօրութեամբ ընտիր այրեր: Նրանց հետ միաբանուելով հայոց նախարարական տոհմերի քաջ մարդկանց այլ բազմութիւններ, ովքեր զօրացած Աստուծոյ սուրբ խօսքով եւ արհամարհելով թագաւորների զայրոյթներն ու իշխանների սպառնալիքները, իրենց անձերը պիտի լցնեն երկնաւոր հրաւէրի բաղձալի յոյսով՝ անտեսելով սնոտի հարստութիւնները եւ ժամանակաւոր փառքը: Ընդ որում՝ ոմանք, փոխանակելով անեղծ Աստուծոյ փառքը աշխարհի սնոտի ու ապականացու կեանքի հետ, ուրացողներ են լինում, սակայն դռների մօտ է փոխհատուցումը թուլակամներին, որն է՝ նրանց կորուստը, եւ մօտ է օգնականութիւնը զօրացեալներին՝ նրանց փրկութիւնը: Դու տեսար աստուածային սեղանի շուրջ բոլորուած արու մանուկներին, որ բնաւ չէին նայում սնոտի հեթանոսական պաշտամունքների խոտորումներին. նրանցից ոմանք, կատարելութեան հասնելով, արժանանալու են մարտիրոսութեան պսակին: Եւ այրերից գտնուեցին շատերը, եւ ոչ միայն այրերից, այլեւ կանանցից, ովքեր թէպէտ ո՛չ սրով, այլ զօրացած Սուրբ Հոգու շնորհներով, աւարտեցին իրենց կեանքը՝ բազում բարի գործեր անելով: Դու տեսար, որ մանուկներից լուսափայլ նշոյլներ էին արձակւում. ոմանցից՝ կարմրագոյն փայլատակմամբ երփնավառ գոյնով շողեր էին ճառագում, որը խորհրդանշում է կատարեալների արեամբ նահատակութիւնը, եւ ոմանք էլ շողշողում էին բազմերանգ ճառագայթներով,

որն էլ ցոյց է տալիս առաքինի մարդկանց լուսաւորութեան բազմափայլ գոյները, որովհետեւ անթիւ եւ անհամար են արդարների ճգնութիւններն ու չարչարանքները:

Դու տեսար այն Աթոռը, որը շարժուեց սաստիկ դղրդիւնով, եւ մանուկները, կատարեալ հասակ առնելով, համբարձուեցին՝ երկրից երկինք թռչելով: Սրանով Պարգեւատուն քեզ ցոյց տուեց արդարների՝ երկրաւոր կեանքից հրեշտականման վերափոխումը երկինք: Քանզի արդարները՝ իբրեւ մանուկներ, անմեղութեամբ ապրեցին աշխարհում՝ իրենց մտքի աչքը երբէք չդարձնելով ունայն զբաղմունքների վրայ եւ արթնութեամբ սպասեցին երկնային կանչի ուրախալից հրաւէրին: Քանզի այսուհետ բազում եւ սաստիկ դղրդիւններ պիտի լինեն աշխարհում. թագաւորները միմեանց դէմ պիտի ելնեն, պիտի լինեն սով, երկրաշարժեր եւ բազում նեղութիւններ: Եւ սրանք կորստեան որդու գալստեան նշաններն են: Ինչպէս գրուած է՝ նա պիտի գայ եւ նստի սուրբ տեղում եւ իրեն, որ հալ ու մաշ է լինում վերին զօրութիւնից, պիտի ցոյց տայ որպէս աստուած: Եւ Տէր Յիսուս պիտի ոչնչացնի նրան Իր բերանի շնչով: Այնժամ կատարեալ առաքինութեան վարքով արդարները պիտի թռչեն դէպի յաւիտենական յարկերը եւ այնպէս ամէն ժամ Տիրոջ հետ պիտի լինեն: Եւ ապա նրանց համար յայտնապէս պիտի կատարուի Տիրոջ խօսքը, որն ասում է. «Ուր որ Ես եմ, այնտեղ եւ Իմ պաշտօնեան կը լինի» [21]: Եւ դու կնքի՛ր այս տեսիլքը, որ բարձունքներից յայտնուեց քեզ, քանզի նրանից չի վրիպելու ոչ մի խօսք, մինչեւ որ ամէնը կատարուի»:

Ես, ինչպէս քնից, արթնացայ տեսիլքից, որը յայտնապէս եւ արթնութեան մէջ ցոյց տուեց ինձ Բարձրեալը: Եւ սաստիկ զարմանքի մէջ լինելով՝ փառաւորեցի մարդասէր Աստծուն, որ անարժանիս արժանացրեց տեսնելու այս ահաւոր տեսիլքը: Ես լռեցի ու ոչ ոքի չպատմեցի մինչեւ այսօր: Իսկ ձեզ պատմեցի ոչ միայն սրտիս նեղութեան պատճառով, այլեւ վախեցայ թաքցնել, որպէսզի որպէս ապերախտ՝ պատուհասուելով չդատուեմ այս յայտնութիւնը ցոյց Տուողի կողմից, Ով հրամայեց ինձ գրութեամբ այն աշխարհին աւանդ թողնել»:

Հայոց աւագանու, տանուտէրերի, սեպուհների եւ ողջ հաւաքուած ժողովրդի բազմութիւնը, սուրբ Սահակ հայրապետից լսելով այս խօսքերը, զարհուրեցին: Եւ այնուհետեւ ոչ ոք չհամարձակուեց այդ բաների մասին որեւէ հարց տալ սուրբին կամ խօսել:

Այնուհետեւ առաքինի այրը, հեռացնելով իրեն աշխարհածուփ զբաղմունքներից, տրուեց միայն աղօթքների եւ քարոզութեան: Ապրելով երկար տարիներ եւ հասնելով խոր ծերութեան՝ խաղաղութեամբ ննջեց Բագրեւանդ գաւառում՝ Բլուր կոչուած գիւղում, Պարսից Վռամ թագաւորի որդի Յազկերտի երկրորդ տարուայ սկզբին՝ Նաւասարդ ամսի 30ին, ցերեկուայ ժամը երկուսին, որն ըստ ստոյգ իմացողների եւ ըստ երանելի այր Կորիւնի՝ այդ օրը նաեւ սուրբի ծննդեան օրն էր:

Ինչպէս ասացինք, սուրբ Սահակը չունէր արու զաւակ, այլ միայն մէկ դուստր, ում կնութեան էր տուել Մամիկոնեանների տէր եւ հայոց սպարապետ Համազասպին, որից ծնուեցին երեք արու զաւակներ՝ սուրբ Վարդանը, սուրբ Հմայեակը եւ երանելի Համազասպը: Իր կտակը թողեց նրանց եւ ձեռքը բարձրացնելով բազմութեան առջեւ՝ օրհնեց ու պատուիրեց անխախտ պահել սուրբ Գրիգորի վարդապետութեան պատուիրանները, ինչպէս ուսուցանել եւ արդարութեամբ աւանդել էր ամբողջ Հայոց աշխարհին՝ ծառայել եւ երկրպագել

միմիայն ճշմարիտ Աստծուն եւ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին: Սուրբի մարմինը քահանաների, իշխանների ու ժողովրդի բազմութեամբ տարան Տարօն գաւառ՝ իր սեփական հայրենի ու բնիկ գիւղը, որը կոչւում էր Աշտիշատ, եւ այնտեղ սուրբի համար հանգստարան կառուցելով՝ նրա սուրբ մարմինն ամփոփեցին ըստ արժանւոյն: Այդ տեղում կառուցեցին մեծապայծառ եկեղեցի եւ սուրբերի վկայարան: Սուրբի նշխարներին այցելուները բժշկութիւն էին ստանում ամէն տեսակ ախտերի դէմ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նրա յիշատակը տօնում է տարին երկու անգամ: Յիշատակի տօներից առաջինը նշւում է Բուն Բարեկենդանին նախորդող կիրակիի նախընթաց շաբաթ օրը, երկրորդը՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի հետ՝ Հոգեգալստեան չորրորդ կիրակիին յաջորդող հինգշաբթի օրը:

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԿԻՒՐԵՂ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԵՂՈՂ ՍՈՒՐԲ ՎԿԱՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Որ օրհնիս յանմարմնական զինուորութեանց. վերագոչեմք առ Քեզ՝ Տէր,
աղօթիւք սրբոց մարտիրոսաց՝ խնայեա՛ ի ժողովուրդս Քո՝ միայն մարդասէր:
Զորս ընտրեցեր յամենայն ազգաց երկրէ՝ լուսաւորել զոգիս մարդկան.
աղօթիւք սրբոց մարտիրոսաց՝ խնայեա՛ ի ժողովուրդս Քո՝ միայն մարդասէր:
Որ գաս հայրական իշխանութեամբ պսակեալ զսուրբս Քո.
աղօթիւք սրբոց մարտիրոսաց՝ խնայեա՛ ի ժողովուրդս Քո՝ միայն մարդասէր:
(Շարակնոց)

Քրիստոսի բազմաչարչար նահատակ սուրբ Մարկոսն ապրել է Կոստանդիանոս կայսեր օրօք եւ եղել է Ասորիքի մերձակայքում գտնուող Արեթուսա քաղաքի եպիսկոպոսը: Քրիստոնէական ճշմարիտ հաւատի նախանձախնդիր լինելով՝ նա յանդիմանում էր կռապաշտներին, իր զօրաւոր խօսքերով նուաճում իր հովութեան ներքոյ գտնուող մոլորուածներին՝ նրանց դարձնելով դէպի սուրբ հաւատը, իսկ հաւատացեալներին անարատ պահում բոլոր կուռքերի սնոտի խաբէութիւններից: Նա աւերեց կուռքերի մեծակառոյց տաճարը, որ կար Արեթուսա քաղաքում, կործանեց բոլոր բագինները եւ կառուցեց եկեղեցիներ, ամենուր կանգնեցրեց խաչեր՝ իր դէմ սաստիկ

չարացնելով հեթանոս առաջնորդներին, ովքեր Կոստանդիանոս ինքնակալի ահից չէին վնասում նրան:

Արիոսականների խռովութեան օրերին, երբ ողջ Արեւելքում եւ Արեւմուտքում խռովուած էր Եկեղեցու միաբանութիւնը, ալեկոծուեց նաեւ Մարկոսը, որովհետեւ նա յարում էր կիսաարիոսական եպիսկոպոսներին: Նրանք Եկեղեցու խաղաղութեան համար լռեցրին «համագոյակից» սահմանումը, որի դէմ պայքարում էր արիոսականների գլխաւոր ընդդիմութիւնը: Եւ քանի որ Մարկոսը հմուտ էր խօսքի եւ գրագրութեան մէջ, համարձակուեց խորամուխ լինել նման ձեռնարկի մէջ, կարծելով՝ շինութիւն կը բերի Եկեղեցուն: Բայց երբ նա տեսաւ, որ արիոսականներն օրէցօր նկրտում են դէպի վատթարը, զգաստացաւ, զգուշացաւ եւ բռնեց նրանց ճանապարհը, ովքեր անխռով մտքով պահում էին Նիկիական դաւանութեան ողջամիտ վարդապետութիւնը: Հեռացաւ չարամիտներից եւ անցաւ հսկելու իր հօտին՝ կրթելով նրանց անբիծ հաւատով եւ բարի վարքով:

Երանելի Մարկոսն իր եպիսկոպոսութիւնը վարեց նաեւ Կոստանդիանոսի որդիների կայսրութեան օրօք: Այդ ժամանակներում որոնում էին Յուլիանոսին, ով ինքնակալների ազգականներից էր, որպէսզի վերացնէին նրա ողջ զարմը: Յուլիանոսը վտանգից փրկուելու համար ապաւինում էր Ասորիքի քահանաներին ու եպիսկոպոսներին, ովքեր ընդունեցին նրան առանց ճանաչելու եւ սուրբ Մարկոս եպիսկոպոսի մօտ նշանակեցին իբրեւ Եկեղեցու սուրբ Սեղանի պաշտօնեայ: Իսկ երբ թագաւորեց այդ նոյն Յուլիանոսը, նա ապստամբեց քրիստոնեաների դէմ, ուրացաւ իր Փրկչին եւ եղաւ չարի արբանեակ. սկսեց մաքառել ընդդէմ քրիստոնէութեան եւ շատ արագ դարձաւ կռապաշտութեան ու հեթանոսութեան: Այնժամ համարձակութիւն ստացան հեթանոսները, ու առաջ եկան ծպտեալ կռապաշտները: Նրանք յարձակուեցին եւ յայտնապէս թափեցին իրենց թոյները Քրիստոսի հօտի վրայ, Յուլիանոս Ուրացողի հրամանով աներկիւղ բացեցին իրենց փակուած մեհեանները, վերականգնեցին քանդուած տաճարները, կանգնեցրին բագինները եւ երկիրը շաղախեցին կուռքերին մատուցուած զոհերի ճարպով ու արեամբ:

Անհաւատները, իրենց թիկունք ունենալով քրիստոսատեաց արքային, սփռում էին ամէնուր եւ չարչարում քրիստոնեաներին: Նրանք որոնում էին Արեթուսայի սուրբ Մարկոս եպիսկոպոսին՝ որպէս կուռքերի նշանաւոր թշնամու, քանզի նա ինքը Մեծն Կոստանդիանոսի օրօք կործանել էր կուռքերի բազում տաճարներ եւ բագիններ, կանգնեցրել եկեղեցիներ ու խաչեր: Փնտռում էին նրան, որպէսզի ստիպէին կառուցել իր իսկ կործանած Արեթուսայի մեծ մեհեանը, կամ էլ վճարէր նրա գինը: Իսկ երանելին, ծանօթ լինելով նրանց չար խորհուրդներին, ըստ տէրունական հրամանի՝ լաւ համարեց միառժամանակ խոյս տալ նրանցից եւ հեռացաւ մի անապատ վայր: Բայց երբ լսեց, որ անհաւատներն իր փոխարէն բռնում էին ուրիշներին ու չարչարում, ինքնակամ վերադարձաւ նրանց մօտ եւ ասաց. «Եթէ ինձ էք փնտռում, ապա ազատէ՛ք միւսներին»: Երբ նրանք տեսան երանելի եպիսկոպոսին, խիստ զարմացան նրա անակնկալ գալստեան համար եւ մեղմանալու փոխարէն առաւել մոլեգնեցին, որպէս կատաղի շներ՝ չպատկառեցին նրա ալեհեր մազերից եւ ոչ էլ նրա ծերութեանը խնայեցին: Հրապարակ քարշ տալով՝ մերկացրին նրան եւ սկսեցին նորանոր տանջանքներով չարչարել երանելուն, դաժանութեամբ խոցոտել ու վիրաւորել ողջ մարմինը: Դպրոցներից հաւաքեցին երեխաների եւ սովորեցրին

նրանց երկաթէ գրիչներով ծակոտել սուրբի գլուխը: Ապա նրան դրեցին մի կողովի մէջ, ականջներից կապած բարակ չուաններով կախեցին բարձր տեղից եւ սկսեցին այս ու այն կողմ պտտեցնելով՝ ճոճել: Մերթ ընդ մերթ դադար էին տալիս եւ շրջապատում նրան: Եւ այդպէս սուր գրիչներով այնքան չարչարեցին ու խոցոտեցին, որ վիրալից ու կիսամեռ դարձնելով՝ թողեցին նրան ու հեռացան: Այդ վիճակում երանելուն բանտ գցեցին, ուր նա ուրախութեամբ գոհանում էր Տիրոջից:

Ժամանակ անց՝ մի կիրակի օր, դուրս բերեցին նրան եւ Քրիստոսի անուան համար միւս բանտարկուածներին: Նրանցից ոմանց երկաթէ բեւեռներով գամեցին խաչափայտին, ոմանց (այդ թւում՝ նաեւ սուրբ Մարկոս եպիսկոպոսի) մարմիններն էլ պատեցին մեղրով ու իւղով, դրեցին խոշոր ցանցերով հիւսուած զամբիւղի մէջ եւ կախեցին:

Միջօրէի տապը սաստկանում էր: Արեգակնակէզ բարձրավանդակում կախուած նահատակների սուրբ մարմինների վրայ սկսեցին ժողովուել խայթող պիծակներն ու մեղուները, բոռերն ու շնաճանճերը, որոնք այնպէս կեղեքեցին ու զզզեցին նրանց, որ խայթուածքներն ու ցաւալից վէրքերը հասան մինչեւ ոսկորները եւ մորմոքեցրին այնչափ, որ նրանց նայելով խղճահարւում էին անգամ կարծրասիրտ մարդիկ:

Իսկ երանելի Մարկոս հայրապետն ուրախ էր այդ տանջանքների մէջ եւ քաջալերում էր իր նահատակակիցներին: Նա ոչինչ էր համարում բոլոր չարչարանքները եւ ողբում էր իրեն չարչարողների համար: Ապա սուրբ եպիսկոպոսն իր երջանիկ վկայակիցների հետ սկսեց աղօթել եւ ասել. «Տէ՛ր Աստուած, Յիսուս Քրիստոս, Արարիչ բոլոր արարածների եւ պսակիչ Քո սուրբ վկաների, ովքեր Քո մեծ եւ ահաւոր անուան համար իրենց անձերը դաժան տանջանքներով մատնեցին մահուան, համբերութեամբ աւարտեցին իրենց ընթացքը ու արժանացան երկնային պսակների: Դու նոյն Ինքդ՝ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, արժանացրո՛ւ մեզ եւս նրանց բարեխօսութեամբ հաղորդ լինել Քո անմահական բաժակին, նրանց համբերութեանը, երկնային ուրախութիւններիդ ժառանգութեանը եւ նրանց հետ փառաւորել Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ յաւիտեանս. ամէն»:

Տեսնելով նրանց անյողդողդ միտքը՝ դատաւորը հրամայեց նրանց իջեցնել կախաղանից, իր մօտ բերել եպիսկոպոսին եւ տանջել նրան մահակներով՝ պահանջելով ոսկի ու արծաթ, որպէսզի շինեն նրա ձեռքով աւերուած կուռքերի մեհեաններն ու բագինները: Հայրապետը պատասխանեց ու ասաց. «Ոսկու եւ արծաթի փոխարէն ձեր ձեռքն եմ մատնել իմ անձը, որովհետեւ ոչինչ չունեմ եւ պարտք չեմ որեւէ բան հատուցելու»: Դատաւորը բարկացաւ եւ ասաց. «Դո՞ւ չէիր, որ Կոստանդիանոսի օրօք կործանեցիր աստուածների արձանները, աւերեցիր, այրեցիր նրանց բագինները եւ եկեղեցիներ ու մատուռներ կանգնեցրիր: Եւ արդ, չե՞ս կամենում հատուցել պարտքերդ, ինչպէս հրամայում է քաջարի Յուլիանոսը»: Երանելին պատասխանեց. «Խոստովանում եմ, որ աւերել եմ բագինները եւ փշրել չաստուածների արձանները: Արել եմ եւ չե՛մ ուրանում: Աստուածասէր ինքնակալի հրամանով դա ոչ միայն ես էի անում, այլեւ՝ շատերը: Եւ նա, ով իշխանութիւն ունէր, չէր բարկանում, այլ ուրախանում էր, քանի որ երկրից վերանում էին սնոտի պաշտամունքները: Ձեր չաստուածները չկարողացան հատուցել իրենց հանդէպ գործած չարին: Եւ արդ, յոյժ զարմացած եմ ձեր անմտութեան վրայ, որ վրէժխնդիր էք լինում ձեր

կուռքերի կործանման համար, որովհետեւ աստուածները, որոնք չեն արարել երկինքն ու երկիրը, պիտի կորչեն»:

Բռնաւորն ասաց. «Եթէ չերկրպագէք մեծ աստուած Հերակլէսին, նրան զոհ չմատուցէք, ինչպէս ինքնակալն ու նրա իշխանութեան տակ գտնուողները, եւ չճաշակէք ողջակէզներից, առաւել չարաչար եւ դաժան տանջանքների կը մատնեմ ձեզ»: Սուրբն ասաց. «Ինչպէս որ քեզ հրամայուել է եւ ինչպէս որ կամենում ես, տանջի՛ր ինձ եւ շուտափոյթ ուղարկի՛ր Նրա մօտ, Ում տենչում եմ: Թերեւս իմ պատճառով վարձք առնես իմ Տիրոջից եւ մոլար խաւարից զաս դէպի ճշմարիտ լոյսը: Իմացի՛ր, որ չե՛մ կատարելու քո կամքը»:

Տեսնելով, որ նրա համար արհամարհելի է մահը՝ դատաւորը չկամեցաւ նրան մատնել մահուչափ տանջանքների, այլ հրամայեց իր ընկերների հետ տանել եւ պահել ներքին բանտում, նրանց ոտքերն ամրացնել կոճղի մէջ, խցել բանտի լուսանցոյցները, որպէսզի լոյս չտեսնեն ու փակեն դռները: Բազում օրեր բանտում անսուաղ պահելուց յետոյ հրամայեց նրանց իր առջեւ բերել: Դարձեալ ստիպեց զոհ մատուցել եւ երբ տեսաւ, որ նրանք յանձն չեն առնում, հրամայեց երանելի եպիսկոպոսի ընկերներին խեղդել ծովում: Եւ այդպէս նրանք յունուար ամսի քսանին նահատակուեցին ի Քրիստոս: Իսկ ծերունի եպիսկոպոսին կապանքներով ուղարկեց Յուլիանոսի մօտ, ով այդ ժամանակ գտնւում էր Արեւելքի մօտակայ գաւառներում՝ հաւանաբար Անտիոքում: Սա նոյնպէս հարցաքննեց նրան, բազում չարչարանքների ենթարկեց եւ զարմացաւ սուրբի համբերութեան ու քրիստոնեաների մեծ յոյսի վրայ: Եւ վերջում տեսնելով սուրբի անդրդուելի կամքը՝ որոշեց սպանել նրան, սակայն որպէսզի նրան չտար մարտիրոսութեան պատիւը, արտաքսեց ծովի հեռաւոր կղզիներից մէկը, որպէսզի այնտեղ մեռնի բոլորից անյայտ, ոչ ոք չտեսնի նրա համբերութիւնը, նախանձախնդիր չլինի նրա գործերին, եւ գալիլեացիները չվերցնեն նրա նշխարները: Եւ այդպէս, օրեր անց երանելի եպիսկոպոսը բարի խոստովանութեամբ Աստուծոյ ձեռքն աւանդեց իր հոգին:

Այդ նոյն օրերին աքսորուելով եւ պէսպէս տանջանքների ենթարկուելով՝ նահատակուեցին բազմաթիւ քրիստոնեաներ: Նրանց մէջ երեւելի էր Քրիստոսի պանծալի վկայ սուրբ Կիւրեղ սարկաւագը, ով Լիբանանի Հեղիուպոլիս քաղաքից էր: Նա փայլում էր իր բարեպաշտ, առաքինի վարքով եւ Մարկոս եպիսկոպոսի նման վառուելով աստուածային նախանձախնդրութեամբ՝ աւերում էր կուռքերի բազում տաճարներ ու փշրում չաստուածների արձաններ: Անաստուած հելլէններն այս մասին յայտնեցին աստուածամարտ Յուլիանոսին, եւ նա անասելի չարութեամբ լցուեց ընդդէմ սուրբ սարկաւագի, որի համար հրամայեց բռնել Կիւրեղին եւ մատնել քուրմերի ձեռքը, որպէսզի ինչպէս կամենում են, նրանից վրէժ լուծեն: Իսկ սրանք, բռնելով երանելուն, սկսեցին տեսակտեսակ խոշտանգումներով տանջել նրան՝ յիշեցնել, թէ քրիստոնեաների ազատութեան օրերին ինչպէս էր վարւում իրենց եւ իրենց պաշտամունքների հետ: Ապա ստիպեցին ուրանալ Քրիստոսին եւ զոհ մատուցել, որպէսզի ազատութիւն գտնի, «քանզի, ասացին, մեզ այսպէս հրամայեց մեր ինքնակալ Յուլիանոսը»: Սուրբ Կիւրեղ սարկաւագը քաջութեամբ պատասխանեց. «Ո՛վ անաստուած հելլէններ, իմացէ՛ք, որ մենք ապականացու, անաստուած եւ յատկապէս ուրացող թագաւորի հրամանը չե՛նք կատարելու, ով թողած ճշմարիտ Աստծուն՝ տարերքներին աստուած է խոստովանում: Մենք շտապում ենք կատարել անմահ Թագաւորի հրամաններն ու պատուիրանները՝ Նրա, Ով

ասում է. «Եթէ մէկն Ինձ ուրանայ մարդկանց առջեւ, Ես էլ նրան կ’ուրանամ Իմ Հօր առջեւ, որ երկնքում է»[2]: Անօրէնները նրան ասացին. «Արդ, չե՞ս կամենում կատարել մեր արքայի կամքը»: Սուրբը պատասխանեց. «Ո՛չ»: Քուրմերն ասացին. «Իմացի՛ր, որ քո յամառութեան պատճառով դառնագոյն տանջանքներ կը պատրաստենք քեզ եւ նրանց համար, ովքեր յամառում են քո օրինակով»: Կիւրեղն ասաց. «Թէպէտ ժամանակաւորապէս կը մեռնենք ձեր տանջանքներից, սակայն կը հասնենք անստուեր Լոյսին եւ կը լինենք յաւիտենական ու անվախճան կեանքի ժառանգորդներ, որն Աստուած խոստացել է Իր սիրելիներին»: Այս խօսքերից անօրէն քուրմերն ու հելլէնները յոյժ բարկացան եւ նրանց բոլորին բանտ նետեցին, մինչեւ որոշէին, թէ ինչպէս վարուեն: Քիչ օրեր անց երանելուն դուրս բերեցին եւ սկսեցին դարձեալ հարցաքննել: Երբ տեսան, որ նա հաստատուն է իր հաւատի մէջ, ասացին. «Քո հանդէպ մեր թագաւորի մեծ բարութիւնն ու մարդասիրութիւնը քեզ ուղղութեան չբերեցին, եւ դու հետ չդարձար քո նանիր խորհուրդներից: Այսուհետեւ քեզ վրայ կ’աւելացնենք նեղութիւնները եւ քեզ չարաչար տանջանքների կը մատնենք, ինչին որ արժանի ես»: Իսկ սուրբն արհամարհեց նրանց բոլոր սպառնալիքները եւ ասաց. «Սուրբ Աւետարանում գրուած է. «Մի՛ վախեցէք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող, այլ դուք առաւել վախեցէ՛ք Նրանից, Ով կարող է գեհենի մէջ կորստեան մատնել հոգին եւ մարմինը»[3]: Արդ, մերձ է մեր փրկութիւնը, մենք չե՛նք հնազանդուի ձեր խաւարասէր կրօնին, որն անշէջ հրին է մատնում եւ անքուն որդերին կերակուր դարձնում: Այլ պէտք է եւ արժան է, որ չարչարուենք յանուն Նրա, Ով մեզ համար համբերեց մահուչափ չարչարանքների եւ խաչով մահուան, որպէսզի հաղորդ լինենք Նրա փառքին»:

Այնժամ անօրէնները միմեանց ասացին. «Էլ ինչո՞ւ ենք ուշացնում սպանել դրան: Չէ՞ որ աստուածամարտ է՝ անմահ աստուածների կործանիչ, ու դեռ աներկիւղ էլ խօսում է»: Ապա ցասման ներքոյ գազանաբար, անագորոյն կերպով չարչարեցին սուրբին, եւ այդպէս արի նահատակ երանելի Կիւրեղը փառաւոր վկայութեամբ նահատակուեց ի Քրիստոս:

ՍՈՒՐԲ ՊԻՈՆ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ՆՐԱ ՀԵՏ ԵՂՈՂ ՉՄԻՒՌՆԻԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Օրհնեմ զՔեզ, Աստուած, զօրք ամենայն հրեշտակաց.
արդարոց անձինք եւ հոգիք ամենայն սրբոց:
Գովեմ զՔեզ, Քրիստոս, մարտիրոսացն ժողովք.
դասք մարգարէից եւ զունդք ամենայն սրբոց:
Բարեբանեմ զՔեզ, Սուրբ Հոգի, որ միայնդ ես հզօր
եւ պահես զօրացեալ զյուսացեալս ի Քեզ:
(Շարակնոց)

Առաքելանման այրը եւ Քրիստոսի վկայ Պիոն քահանան ապրել է Գ դարում: Նա Զմիւռնիայի եկեղեցու գլխաւոր երէցներից մէկն էր, լի Հոգով ու վարդապետութեան զօրաւոր խօսքով, որով շատ հրէաների եւ հեթանոսների դարձնում էր ճշմարիտ հաւատի ճանապարհին: Իր բարեպաշտութեամբ ու վարքով հաւատի սիւն եւ առաջնորդ էր Զմիւռնիայի բոլոր հաւատաւորների համար, քանի որ քրիստոնեաների դէմ Դեկոս կայսեր յարուցած հալածանքների ժամանակ նա քաջալերում էր նրանց՝ համբերել բոլոր նեղութիւններին: Զմիւռնիայում կռապաշտները բռնեցին նրան եւ տարան Կունդիանոս դատաւորի մօտ: Վեց այրեր տանում էին սուրբին՝ իրենց ուսերին դրած, իսկ նա աղաղակում էր. «Ես քրիստոնեայ եմ՝ Քրիստոսի ծառան եւ ձեր կուռքերին զոհ չե՛մ մատուցի»: Եւ երբ նրան կանգնեցրին դատաւորի առջեւ, նա համարձակ խոստովանեց Քրիստոս Աստծուն:

Քրիստոսի Յարութեան Զատկի օրն էր: Հրապարակում մեծաթիւ ամբոխ էր հաւաքուել Պիոն քահանայի համար: Այնտեղ նա սկսեց համարձակ յանդիմանել հրէաներին եւ հեթանոսներին՝ իրենց չար եւ մոլար ընթացքի համար: Վերջում նրա համար մահավճիռ արձակեցին՝ յայտարարելով, թէ Պիոնը, ով իրեն քրիստոնեայ կոչեց, պէտք է մահապատժի ենթարկուի: Եւ հրամայեցին ողջողջ այրել նրան:

Երբ տանում էին նահատակութեան վայրը, Պիոնն ինքը հանեց իր զօտին, մերկացաւ հանդերձներից, աչքերը երկինք բարձրացրեց եւ մեծ զոհութեամբ աղօթեց Աստծուն: Ապա դահիճները նրա ձեռքերն ու ոտքերը գամեցին փայտին եւ նրա շուրջը հուր բորբոքեցին: Սուրբը փակ աչքերով մտքում աղօթում էր Աստծուն, իսկ հաւաքուած բազմութեանը թւում էր, թէ նա աւանդել է իր հոգին: Եւ երբ աւարտեց աղօթքը, բարձրաձայն աղաղակեց ՝ ասելով. «Տէ՛ր, ընդունի՛ր իմ հոգին», եւ այդպէս ընդունեց իր նահատակութիւնը:

Երբ մարեց հուրը, եկան քրիստոնեաները եւ տեսան նրան՝ անվնաս մարմնով: Չէին այրուել անգամ գլխի մազերը: Մեծ հիացմունքով փառաւորեցին Աստծուն եւ առաւել հաստատուեցին հաւատի մէջ, իսկ կռապաշտները երկմտեցին իրենց մոլար պաշտամունքի համար:

Սուրբ Պիոն քահանան նահատակուեց սուրբ Զատկի ճրագալոյցի օրը՝ ի փառս մեր Քրիստոս Աստուծոյ Յարութեան:

ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Երգեմք ձեզ երգս զիրեշտակական զձայնս.
յաւէժս եւ վայելուչս՝ մտերիմս եւ ներբողեանս. ո՛վ սուրբ Ղեւոնդեանք:
Առաւել պարծիմք ձեօք. սուրբ հօտապետք Քրիստոսի.
յօրինեալք եւ յարդարեալք. տաճարք սուրբ մաքրեալք.
օթեւանք տէրութեան երկնաւոր Թագաւորին. ո՛վ սուրբ Ղեւոնդեանք:
Ի հեղմանէ արեան ձերոյ հոտ անոյշ բուրեաց ի յերկինս.
եւ հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից. ընդ կամաւոր պատարագս ձեր. ո՛վ սուրբ Ղեւոնդեանք:
Որք համբարձայք ի կաճառս Մերովբէից եւ ի դասս Քերովբէից.

բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն անձանց մերոց. ո՛վ սուրբ Ղեւոնդեանք: (Շարակնոց)

Սուրբ Ղեւոնդեանք՝ թուով ինը հոգի, Ե դարի (454 թ. յուլիս ամիս) սուրբ նահատակներ, որոնց անուններն են՝
Ղեւոնդ երէց Վանանդեցի (Իջաւան գիւղից),
Յովսէփ կաթողիկոս (Յովսէփ Ա. Հողոցմեցի,
Վայոց ձորի Հողոցիմք գիւղից, 437-452 թթ.),
Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս, Մուշեղ Արծրունի (Աղբակից),
Արշէն կամ Արսէն երէց (Բագրեւանդի Եղեգէկ գիւղից),
Քաջաջ սարկաւագ (որտեղից Ռշտունեաց
եպիսկոպոսն էր), Թաթիկ եպիսկոպոս,
Սամուէլ քահանայ (Այրարատ նահանգի Արած գիւղից),
Աբրահամ սարկաւագ (Այրարատ նահանգի Արած գիւղից):

Այս սուրբ այրերն ունէին քահանայական բոլոր կարգի աստիճանները, քանզի նրանց մէջ կային ե՛ւ կաթողիկոս, ե՛ւ եպիսկոպոս, ե՛ւ քահանաներ ե՛ւ սարկաւագներ: Նրանք «Ղեւոնդեանց» անունն ընդունեցին իրենց հոգեւոր զօրավարից եւ նահատակութեան պանծալի պարագլխից՝ երիցս երանելի Ղեւոնդ երէցից՝ սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի աւագագոյն ու գլխաւոր աշակերտներից մէկից:

Հայոց Սահակ Մեծ հայրապետից յետոյ սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աթոռի տեղապահութիւնն ընդունեց Մեսրոպ վարդապետը, սակայն նրանից յետոյ հէնց նոյն տարում կաթողիկոսական իշխանութիւնն ստանձնեց Յովսէփ Մեծը՝ մի սուրբ այր՝ լի գիտութեամբ եւ առլեցուն աստուածային հանճարով ու իմաստութեամբ: Եւ մինչ կամենում էին ձեռնադրել նրան, պարսից Յազկերտ արքան բռնադատեց հայոց իշխաններին ուրանալ քրիստոնէութիւնը եւ նրանց անասելի ծանր կացութեան մէջ դրեց: Նա մեծ զօրք հաւաքեց, որպէսզի աւերի ու գերի Հայոց, Վրաց երկրները եւ Աղուանքը:

Այնժամ սուրբ Յովսէփը Աստուծոյ երանելի այր Ղեւոնդին յանձնարարեց հաստատել ու քաջալերել ժողովրդին, եւ սուրբ Ղեւոնդ երէցն էլ սկսեց զօրացնել եւ խրատել բոլորին յորդաբուխ իմաստութեամբ, առակների մեկնութիւններով ու հոգեշնորհ վարդապետութեամբ: Նրա խօսքերը բխում էին քաղցր մեղրի պէս եւ ուրախութեամբ լցնում լսողների սրտերը, ցանկալի դարձնում նրա հրեշտակային դէմքը եւ իր ներքին լուսաճաճանչ պայծառութիւնը: Իր խօսքով նա երկրի նախարարներին եւ ժողովրդին բոցավառում ու սպառազինում էր՝ քաջութեամբ մարտնչելու հաւատի թշնամիների դէմ եւ իրենց անձերն աներկիւղ մահուան մատնելու սուրբ Եկեղեցու եւ Քրիստոսի սիրոյ համար:

Եւ որ սքանչելի է, սուրբերի նահատակութիւնից տարիներ առաջ, երբ Հայոց երկիրը խաղաղութեան մէջ էր, մի օր, երբ միասին էին մեծ վարդապետ սուրբ Մեսրոպն ու նրա աշակերտները՝ Կորիւնը եւ Արձանը, տեսան Ղեւոնդին՝ քուն մտած, իսկ նրա շուրջը՝ սաստիկ ճառագայթող լոյս: Երանելի այրերը Սուրբ Հոգով իմացան, որ նա պէտք է նահատակուի: Եւ թէպէտ նրանք չպատմեցին սքանչելի տեսիլքի մասին, սակայն այն տարածուեց՝ մէկը միւսին շշնջիւնով փոխանցելով, որը եւ վայելչապէս ճշմարտացի ցոյց տուեց դէպքերի աւարտը:

Երանելի Ղեւոնդը ժողովրդին ուսուցանում էր հոգեւորը եւ յիշեցնում նախնիների վարքը, նրանց ժուժկալութիւնը եւ անպատում համբերութիւնը: «Նրանք, ասում էր, նայելով այս վաղանցիկ կեանքին, նախընտրեցին յաւիտենականը. ոմանք՝ տանջանքներով եւ մահուամբ, ոմանք՝ պահեցողութեամբ եւ գետնատարած անկողիններով: Ոմանք աղքատասիրութեամբ եւ օտարասիրութեամբ առանց իմանալու արժանի եղան հրեշտակներ ընդունելու, ոմանք էլ աշխարհաշինութեամբ եւ արդար դատողութեամբ ընտիր գտնուեցին Աստուծոյ առջեւ: Ոչ բոլորին է վիճակւում մարտիրոսանալ, այլ ինչպէս որ բաշխում է վերին տեսչութիւնը, իսկ ստացողներն էլ պէտք է իմաստուն վաճառականի պէս անցաւորի փոխարէն գնեն անանցը: Եւ դուք, որ պահուած էք մեծ եւ պատուական բաժակի համար, շտապէ՛ք արժանի լինել՝ հասնելու սուրբերի ժառանգութեանը լոյսի մէջ: Նրանց պատուականութեան մասին սաղմոսերգուն ասում է. «Պատուական է Աստուծոյ առջեւ Իր սուրբերի մահը» [illegible]: Այսպէս իւրաքանչիւրին բոցավառում էր հոգեւոր խօսքերով եւ խրատներով, ամուր եւ աներկիւղ զինում Սուրբ Հոգով, որից ամրանում էին նրանց սրտերը եւ պատրաստւում ուրախութեամբ մտնել նահատակութեան հանդէսը:

Այսպէս, օրհնութիւն ստացած սուրբ քահանաներից՝ սուրբ Վարդանի հայոց զօրքը շարժուեց ընդդէմ պարսից զօրքի: Նրանց հետ էին Յովսէփ Մեծը, Ղեւոնդ երէցը եւ այլ շատ եպիսկոպոսներ ու երէցներ: Մարտնչեցին արիաբար, կոտորեցին շատ պարսիկների, բայց շատերն էլ նահատակուեցին Արտազի դաշտում: Ողջ մնացածները ցրուեցին լեռներով, դաշտերով ու մացառներով մէկ, իսկ զօրքից մի գունդ սուրբ քահանաների հետ ապաստան գտաւ մի ամուր բերդում: Պարսից զօրքն էլ ուրացող Վասակի հետ պաշարեց բերդը, խաբէութեամբ եւ սուտ երդումներ տալով դուրս բերեց ամրոցում մնացողներին ու կոտորեց նրանցից երկու հարիւր տասներեք հոգու: Այս բանի համար քահանաները բողոքեցին պարսից արքունիքին: Այնժամ Յազկերտն իր խորամանկ հազարապետ Միհրներսէհի խորհրդով նենգօրէն խաղաղութեան պատգամ յղեց Հայոց աշխարհին եւ հրամայեց, որ Վասակի հետ միասին արքունիք գան քահանաների եւ աւագ նախարարների դասից Հայոց աշխարհի մեծամեծները՝ իբր հաշտութիւն հաստատելու եւ խռովութեան պատճառները քննելու համար: Այնժամ պարսիկ Ատրորմիզդ մարզպանը, տեղեկանալով, թէ քահանաներից ովքեր են առաւել դիմադարձ գտնուել պարսիկներին եւ ովքեր յարել Վարդանանց, հրամայեց իր մօտ բերել սուրբ Յովսէփին, Ղեւոնդ երէցին եւ նրանց մի քանի աշակերտներին, որոնց մէջ երեւելի էին Խորէն երէցը, Աբրահամ երէցը, Բագրեւանդի Արշէն երէցը եւ Ռշտունեաց Քաջաջ սարկաւագը: Նրանք բոլորը Աւեն բերդում էին: Նոյնպէս եւ այլ բերդերից բերել տուեց Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսին, Արծրունեաց Մուշէ Մեծ երէցին, Արարատեան գաւառի Արածոյ գիւղի Սամուէլ եւ Աբրահամ երեւելի քահանաներին:

Ատրորմիզդը, իմանալով, որ առաւել շատ սրանք են թշնամի եղել պարսկական կրօնին, աւերել կրակատներ եւ հալածել մոգերին, հրամայեց նրանց շղթայակապ տանել Պարսկաստան: Ճանապարհին նրանց հանդիպեց ուրացող Վասակը, ով գալիս էր Սիւնեաց աշխարհից եւ մեծ շուքով գնում Պարսկաստան: Հեռուից նրան տեսնելով՝ սուրբ Յովսէփն ասաց Ղեւոնդ երէցին. «Ուրացողը դէպի մեզ է գալիս՝ անամօթ լրբութեամբ մեզ ողջոյն տալու: Արդ, մտածի՛ր, թէ ինչ ասենք, երբ նա ողջունի մեզ»: Սուրբ Ղեւոնդն ասաց. «Մի՛ փնտռիր Փրկչի

ուսմունքը մարդուց սովորել: Մեր Տէրն ասում է. «Որ քաղաքը կամ գիւղը մտնէք, ողջո՛յն տուէք: Եւ ուր ողջոյնի որդի լինի, թող ձեր ողջոյնը նրա վրայ իջնի, իսկ եթէ արժանի չլինի, թող ձեր ողջոյնը ձեզ դառնայ» [illegible]:

Քիչ անց Սիւնեաց տէր նենգամիտ Վասակը հասաւ նրանց եւ շտապ իջնելով երիվարից՝ կեղծաւորաբար ողջոյն տուեց սուրբերին, ովքեր, ոչ մի թշնամութիւն բնաւ ցոյց չտալով, նրան ընդունեցին խնդալից սիրով: Այնժամ սուրբ Ղեւոնդը լրջմտութեամբ երկար խօսեց Վասակ իշխանի հետ: Վասակը լսեց երանելու շնորհալից խօսքերը եւ կարծեց, թէ նրանք տեղեակ չեն իր գործած չարիքներից, որի համար աւելի ու աւելի սրտապնդուած՝ երկար քայլեց նրանց հետ: Բայց յետոյ, երբ փոքր-ինչ առաջ անցաւ, սուրբ Ղեւոնդը բարձրաձայն կանչեց նրա հետեւից. «Սիւնեա՛ց տէր, Սիւնեա՛ց տէր»: Վասակն արձագանգեց. «Ի՞նչ էք կամենում, տեա՛ր»: Եւ սուրբն ասաց. «Ամէն ինչ խօսեցինք քեզ հետ, սակայն մոռացանք հարցնել ամէնից կարեւորը՝ ո՞ւր ես գնում»: Այս հարցումից Վասակը խորը տրտմութեան մէջ ընկաւ, հասկացաւ, որ նրանք իրազեկ են իր գործերից եւ զայրագին պատասխանեց. «Գնում եմ իմ տիրոջ մօտ, որպէսզի նրանից մեծ վաստակներիս դիմաց հատուցում ստանամ»: Սուրբ Ղեւոնդն ասաց. «Այն դեւը, որը պատրեց քեզ եւ դրդեց նենգութեամբ վարուել սուրբ Աւետարանի դէմ, քեզ կարծել է տալիս, թէ այնքան մեծ գործեր ես արել, որ արիացիները միայն Հայոց երկրի թագաւորութիւնը տալով կարող են քեզ հատուցել քո վաստակների դիմաց: Սակայն իմացի՛ր, եթէ գլուխդ ուսերիդ վրայ Հայաստան գնաս, ապա ինձ հետ Տէր Աստուած չի խօսել»:

Այս լսելով՝ Վասակը կտրեց իր բոլոր յոյսերը, զգաց իր անձի կորուստը, որ մօտեցել, վրայ էր հասել, քանզի գիտէր, որ անվրէպ են սուրբի խօսքերը ու պիտի կատարուեն: Եւ այդպէս էլ եղաւ. երբ ուրացողը Պարսկաստան հասաւ, թէպէտ միառժամանակ պատուի արժանացաւ արքայի կողմից, սակայն յետոյ ատեանի անաչառ քննութեամբ ամէն կողմերից պարտական գտնուեց: Եկաւ Սիւնեաց ուխտանենգ Վասակ իշխանը՝ զարդարուած թագաւորից ստացած բոլոր պատուանշաններով, եւ մեծ շուքով մտաւ արքունի խորան: Չկար մի արքունի պատիւ, որ նա չունենար: Նա ակնկալում էր ստանալ նաեւ Հայոց մեծ աշխարհի թագաւորութիւնը, որովհետեւ միայն դա չունէր: Բայց թշուառականը չէր հասկանում, որ Տէրը հեռացել էր իրենից, որ պիղծ այսը խեղդում էր իրեն, եւ որ այդ ժամին իր վրայ պիտի կատարուէր Աստուծոյ սուրբ այր Ղեւոնդի խօսքը: Սուրբ Աւետարանի ուխտին դաւաճանելը եւ երանելի Ղեւոնդի խօսքը եկել-հասել էին նրան, պատել ու պաշարել ամբողջովին: Նրա վրայ կատարւում էր սաղմոսերգուի խօսքը, թէ՝ «Սեփական դատաստանից պիտի ելնի դատապարտուած, եւ իր աղօթքները մեղք պիտի համարուեն» [illegible]: Յազկերտը հրամայեց բազմութեան առաջ անարգելով խլել նրա բոլոր պարգեւները: Ապա ծաղրանքով մերկացրին նրան՝ զրկելով տէրութեան պատուոյ զարդարանքներից, խայտառակելով դուրս տարան եւ հեռացրին արքունի հրապարակի սահմաններից: Թշուառութեան մէջ Վասակն ապրեց մի քանի տարի՝ ծանր վշտերով ու մեծ նեղութիւններով, մաշեց իր օրերը՝ հառաչելով, ամէն ժամ հոգոց հանելով եւ ինքնաձաղկանքով իրեն ասելով. «Ահա ընդունի՛ր այս չարչարանքները, որոնց քեզ հասցրին սուրբ Աւետարանի հանդէպ ուխտազանցութիւնը եւ Մամիկոնեանների սուրբ Վարդանի ու նրան հաղորդակից ընկերների նահատակութեան արիւնը, ովքեր, ժառանգելով յաւիտենական կեանքը, սերնդէսերունդ անանց բարի անուն թողեցին: Իսկ դո՛ւ,

մեղաւոր ա՛նձ իմ, կեանքիդ սակաւաթիւ օրերն ապրելու ես խղճի յանդիմանութեամբ՝ պահուելով մշտնջենական գեհենի համար»: Նրա վախճանը եղաւ այնտեղ՝ Պարսից երկրում՝ ըստ սուրբ Ղեւոնդի կանխատես խօսքի: Սակայն, որ ամենավատն է՝ նա, թէպէտ ճանաչեց իր գործած չարիքները, բայց երբէք ճշմարիտ զղջման չեկաւ: Դժնդակ հիւանդութիւն տիրեց նրան, մահուան հոտ փչեց նրանից, եւ ողջ մարմինը տրորուեց ցաւից: Միայն լեզուն առողջ մնաց, սակայն նրա շուրթերին խոստովանութիւն չգտնուեց: Եւ այդպէս ճաշակեց հեղձամաղձուկ մահը եւ անհուն դառնութեամբ ավանդեց իր հոգին:

Իսկ երանելի քահանաները, կապուած ծանր շղթաներով, երկու ամիս եւ քսան օրուայ ընթացքում հասան արքունիք: Երբ կանգնեցին Միհրներսէհ հազարապետի առաջին ատեանի առջեւ, նա սկսեց իւրաքանչիւրին հարցաքննել, թէ ինչպէս համարձակուեցին վերացնել կրակը, հալածել քուրմերին եւ պատճառ դառնալ մեծ պատերազմի, որում ընկաւ քաջ Վարդանը: Արեաց հազարապետ Միհրներսէհի ու արքունիքի ողջ աւագանու մեղադրանքներն ու սպառնալիքները լսելուց յետոյ առաջ եկաւ Աստուծոյ սուրբ այր Ղեւոնդը, ով բոլորի առջեւ աստուածային իմաստութեամբ ցոյց տուեց նրանց բարբաջանքների սնոտիութիւնը, հեթանոսական պաշտամունքների ստութիւնը եւ քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնը, ինչի համար պատերազմում իրենց կեանքը զոհեցին հայոց նախարարները: «Մենք, ասաց, քաջալերել ենք նրանց եւ արդարեւ նրանց ճշմարիտ վարդապետներն ենք»: Անօրէն Միհրներսէհը եւ արեաց աւագանին լցուեցին սաստիկ բարկութեամբ եւ ասացին նրանց. «Մեր օրէնքը թոյլ չի տալիս բարկանալ մէկի վրայ, ում բերանից ոչինչ չի լսել: Ասացէ՛ք, դուք է՞լ կ՚ասէք այն, ինչ աներկիւղ համարձակութեամբ յանդգնեց ասել այդ մահապարտը»: Սուրբ Յովսէփն ու սուրբ Սահակն ասացին. «Մենք եւս կամենում էինք ասել այն ամէնը, ինչ որ իր աստուածաշնորհ գիտութեամբ յայտնեց Աստծուց քաջալերուած տէր Ղեւոնդը: Մենք բոլորս միակամ ու միասիրտ ենք»:

Գազազեց անօրէն իշխանը: Նրա հրամանով դահիճները շղթաներով հարուածեցին երանելիների բերաններին այնքան, որ նրանց ռունգերից եւ բերաններից առատ արիւն հոսեց: Միհրներսէհն արձակեց ատեանը, եւ սուրբերն առաքեալների օրինակով խնդութեամբ հեռացան, որովհետեւ Քրիստոսի անուան համար արժանի եղան անարգանքների, ծեծի ու դատապարտութեան: Հայոց նախարարներին եւս, ովքեր Պարսկաստան էին եկել, խստագոյն կապանքներով արգելափակեց նոյն բանտում, մինչեւ որ թագաւորը կը հարցաքննէր ու կը լսէր նաեւ նրանց:

Բանտում էին գտնւում հայոց երեսունմէկ քրիստոսասէր նախարարները եւ ութ երանելի սուրբ քահանաները, ովքեր էին՝ տէր Յովսէփ կաթողիկոսը, Ռշտունեաց եպիսկոպոս տէր Սահակը, երանելի երէց տէր Ղեւոնդը, Արծրունիների տէր Ներշապուհ Արծրունու դռան երէց տէր Մուշէն, Արածայ երէց տէր Սամուէլը, տէր Աբրահամ սարկաւագը, Եղեգէկի երէց տէր Արշէնը, Քաջաջ սարկաւագը: Թէպէտ նրանք գտնւում էին մեծ նեղութիւնների մէջ, սակայն ամէն ինչ կրում էին Քրիստոսի սիրով: Մխիթարում էին միմեանց ու ասում. «Քաջութեամբ պատերազմեցինք, էլ աւելի մեծ համբերութեամբ կը տանենք չարչարանքները: Մեր սուրբ հայրերից լսել ենք, որ ամենամեծ առաքինութիւնը համբերութիւնն է, իսկ կատարեալ աստուածպաշտութիւնը՝ երկնաւոր իմաստութիւնը, որը ոչ ոք չի կարող ձեռք բերել առանց

չարչարանքների: Երբ երկարում են չարչարանքները, այնժամ շատանում են պարգեւներն ու վարձքի հատուցումը: Ուրեմն, Աստծուց միայն խնդրենք դիմանալ բոլոր փորձութիւններին, եւ Տէրն Ինքը կը հոգայ մեր փրկութիւնը: Մենք լսել ենք Քրիստոսի քառասուն զինուորների մասին, ովքեր շատ հարուածներ եւ տանջանքներ կրեցին: Նրանցից մէկը շտապեց բաղնիք եւ զրկուեց պսակից, իսկ երեսունինը համբերութեամբ նահատակուեցին ու հասան այն աւետմանը, որին փափագում էին: Մեր այն ընկերակիցն էլ (Վասակը), ով բաժանուեց մեզնից, սատանային գործակից դարձաւ եւ դեռեւս հոգին մարմնի մէջ՝ ընդունեց գեհենի տանջանքների առհաւատչեան»: Խօսում էին այսպէս ու ցաւում կորուսեալի համար, սաղմոսերգում էին՝ ասելով. «Լաւ է Տիրոջ վրայ յոյս դնել, քան մարդկանց. լաւ է Տիրոջ վրայ յոյս դնել, քան իշխանների. բոլոր ազգերը շրջապատեցին ինձ, եւ Տիրոջ անունով յաղթեցի նրանց» [4]: Քաջալերում էին միմեանց եւ ասում. «Ուրեմն, այս իմանալով՝ եղբայրնե՛ր, չվախենա՛նք այս անաստուած հեթանոսներից, այլ Տիրոջ անունը կանչելով՝ յաղթե՛նք նրանց»:

Իսկ Յազկերտ արքան իր թագաւորութեան տասնվեցերորդ տարում մեծաթիւ զօրքով պատերազմի ելաւ քուշանների դէմ: Հրամայեց իր հետ Վրկան [5] տանել նաեւ հայոց քահանաներին ու նախարարներին: Հասնելով Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաք՝ հրամայեց նրանց պահել Նիւշապուհի բերդում, սակայն երկու երանելի հոգեւորականներին՝ Սամուէլին ու Աբրահամին, հրամայեց տանել իր հետ: Ամէն օր կտտանքներով, ծանր կապանքներով եւ գանահարութեամբ տանջում էր նրանց՝ ահ ու սարսափ սփռելով այն քրիստոնեաների վրայ, ովքեր գտնւում էին իր մօտ՝ կարաւանում: Իր թշնամիների դէմ պատերազմներում Յազկերտն իր որոշումների մի մասն անգամ չկարողացաւ իրագործել եւ վերադարձաւ ամբողջովին պարտուած ու ամօթահար՝ կորցնելով անթիւ զինուորներ: Յազկերտը, տեսնելով իր աննախադէպ պարտութիւնը, մաշւում էր՝ անասելի վշտի մէջ ընկած: Մտահոգուած փորձում էր իմանալ, թէ ինչու իրեն պատահեց այդ ծանր պարտութիւնը: Իսկ մոգերը, տեսնելով թագաւորին տրտմութեան մէջ, ասացին. «Քա՛ջ արքայ, մեր կրօնից գիտենք, որ ոչ մի մարդ չի կարող կանգնել Քո մեծ զօրութեան առջեւ: Սակայն աստուածները մեզ վրայ բարկացել են քրիստոնեաների պատճառով, ովքեր դէմ են մեր կրօնին, իսկ դու նրանց մինչ օրս ողջ ես պահել»: Թագաւորը հաւատաց մոգերի այս հերիւրանքին եւ մեծ չարութեամբ լցուելով բանտարկուած քահանաների դէմ՝ ընդունեց, որ, արդարեւ, նրանց պատճառով եղաւ իր զօրքերի այդչափ կորուստը: Ցասման ներքոյ անմիջապէս հրամայեց նախ իր մօտ եղող Սամուէլ երէցին եւ Աբրահամ սարկաւագին տանել կարաւանից շատ հեռու եւ բոլորից ծածուկ գլխատել մի տեղում, որպէսզի քրիստոնեաներից ոչ ոք չտեսնի եւ չպատուի նրանց նշխարները: Սակայն կարգադրեց, որ նախքան նրանց սպանելը կտրեն սուրբ Սամուէլի աջը եւ դնեն տէր Աբրահամի ձեռքում, նոյնպէս էլ սուրբ Աբրահամի աջը կտրեն եւ դնեն տէր Սամուէլի ձեռքում, որովհետեւ «համարձակուել են, ասաց, իրենց այդ ձեռքերը մօտեցնել սրբազան կրակին եւ վերացնել»: Ապա հրամայեց սրով կտրել նրանց գլուխները: Այսպէս այս սուրբերը նահատակուեցին Հրուրից [6] ամսի եօթին, Վատգէս [7] կոչուած գաւառում:

Իսկ հայոց նախարարներն ու քահանաները յանձնուած էին մոգպետին, ով պէտք է չարչարէր նրանց: Սա ամենից գիտակն էր զրադաշտական կրօնի ուսմունքին եւ շատ ջերմեռանդ էր մոգութեան մէջ: Կարծում էր, թէ

կատարելութեան է հասել ողջ գիտութեան մէջ, եւ երանելիների վրայ այնպէս էր նայում, ասես թէ նրանք մոլորուել են տգիտութեան պատճառով: Որոշեց անխնայ չարչարել նրանց, որպէսզի չդիմանալով մարմնաւոր նեղութիւններին՝ թերեւս նրանցից որեւէ աղաչական խօսք լսի: Այդ պատճառով առանձնացրեց քահանաներին, հեռացրեց նախարարներից, զցեց մի խաւարտչին ներքնատուն եւ վեց պահապան մարդկանց հրամայեց պահէպահ երկու զարեհաց, դորակ ու կէս ջուր տալ եւ արգելել որեւէ մէկին մօտենալ բանտի դռներին:

Քառասուն օր այսպէս նեղեց նրանց, սակայն երբ նրանցից ոչ մի տրտունջ չլսեց, մտածեց՝ թերեւս իր ծառաներից մէկը նրանց ծածուկ կերակուր է տալիս: Անձամբ կնքեց բանտի երդիկն ու դուռը եւ որոշեց սահմանուած սնունդն իր հաւատարիմ մարդկանց ձեռքով հասցնել նրանց: Եւ այսպէս արեց տասնհինգ օր: Սակայն երանելիներն ամենեւին տագնապի մէջ չընկան. նրանք անդադար սաղմոսելով կատարում էին ամէնօրեայ պաշտամունքը, որից յետոյ փոքր-ինչ հանգստանում չոր գետնի վրայ:

Նրանց հսկող պահապանները սաստիկ զարմանում էին նրանց տոկունութեան վրայ: Նրանք գնացին մոգպետի մօտ ու ասացին. «Այս մարդիկ մեծ զօրութիւն ունեն, որովհետեւ եթէ նրանք անգամ պղնձէ մարմիններ ունենային, չէին դիմանայ բանտի պայմաններին: Երկար տարիներ մեզ է յանձնուած այս բանտի պահպանութիւնը, սակայն մենք չենք յիշում, որ կապուածներից որեւէ մէկը մէկ ամսից աւել դիմանայ այդտեղ: Արդ, մենք ասում ենք, եթէ նրանց համար մահուան հրաման ես ստացել եւ պիտի սպանես, դու գիտես, իսկ եթէ քեզ յանձնարարուած է պահել նրանց, ապա բանտուածները սաստիկ վտանգի մէջ են»:

Այս լսելով՝ մոգպետը կէսգիշերին գնաց բանտի երդիկի մօտ: Գիշերուայ մթութեան մէջ երդիկից ներս նայեց ու տեսաւ, որ մինչ նրանք հանգստանում էին, իւրաքանչիւրի անձը բորբոքւում էր անշէջ վառուող կանթեղի պէս: Մեծ սարսափի մէջ ընկաւ եւ ասաց իր մտքում. «Ի՞նչ է այս մեծ հրաշքը, ուրեմն մեր աստուածները եկել իջել են այս բանտը, եւ նրանց փառաւորութիւնն է այսպէս երեւում: Եւ եթէ նրանք չմօտենան սրանց, անկարելի է, որ սոսկ մարդը պայծառ լոյսով լուսաւորուի: Ես նրանց կրօնի մասին լսել էի, թէ մոլորուած են յիմարութեան պատճառով եւ սուտ կերպարանքներ են ընդունում տգէտ մարդկանց աչքում. գուցէ այս տեսիլն էլ այդպիսի մի բան է, որ երեւում է ինձ»: Եւ առհասարակ չէր կարողանում հասկանալ, թէ ինչ էր, որ տեսնում էր: Մինչ այս մտքերի մէջ էր, սուրբերը դարձեալ վեր կացան եւ սկսեցին իրենց պաշտամունքը: Այնժամ մոգպետը ճշմարտապէս տեսաւ, որ լուսափայլութիւնը բխում էր հէնց նրանցից: Սաստիկ ազդուեց այդ մեծ հրաշքից եւ դողաց ամբողջ մարմնով: Մինչեւ առաւօտ թմրած ու կիսամեռ մնաց բանտի կտուրին, իսկ լոյսը բացուելուն պէս վեր կացաւ գնաց, բայց իր տեսածը ամենեւին չհամարձակուեց պատմել որեւէ մէկի:

Իր մօտ կանչեց պահապաններին եւ ասաց. «Գնացէ՛ք, բանտուածներին տեղափոխէ՛ք մի աւելի չոր վերնատուն եւ նրանց պահէք այնտեղ»: Դահիճներից մէկը, երբ լսեց մոգպետի հրամանը, շտապ գնաց՝ իբրեւ մի մեծ աւետիս տանելու նրանց եւ ասաց. «Ձեզ հրամայուեց, որ տեղափոխուէք մի աւելի չոր վերնատուն. դէ՛հ, շուտ եկէ՛ք եւ մի՛ ուշացէք»:

Իսկ սուրբ Յովսէփն սկսեց հեզութեամբ խօսել դահճի հետ եւ ասել. «Ձեր անգէտ առաջնորդը չի՞ լսել մեր Տիրոջ գալստեան մասին, որ լինելու է, եւ կամ

հրաշակերտ օթեւանների մասին, որ ի սկզբանէ պատրաստուած եւ պահուած են մեզ համար, որի համար էլ հեշտութեամբ դիմանում ենք այս չարչարանքներին: Մարմնաւոր նեղութիւնների համար ամենեւին չենք տրտնջում՝ իբրեւ անհաւատ մէկը, ով ապավինում է միայն երեւացողներին: Քրիստոսի սիրոյ համար ուրախ ենք մեր նեղութիւնների համար եւ դրանք կատարեալ պարգեւ ենք համարում, որպէսզի ժամանակաւոր վշտերի շնորհիւ ժառանգենք անժամանակ երանութիւնները: Երկնքում մենք անձեռագործ շինուածքներ ունենք, որոնց մօտ ձեր արքայական պալատները չեն էլ երեւայ: Դուք չէք կարող սա հասկանալ ձեր տկարամտութեան պատճառով, որովհետեւ ձեր վաղեմի կուրութիւնը թոյլ չի տալիս տեսնել, լսել ու հասկանալ: Այդ պատճառով է, որ զուր պատժում էք մեզ եւ անիրաւ ու անողորմ դատաստան անում: Բայց մեր Թագաւորը բարերար է, բաց է Նրա Արքայութեան դուռը, եւ ոչ մէկին երբէք չի անտեսում: Մենք կարող էինք չընկնել ձեր թագաւորի ձեռքը, ինչպէս ուրիշները, ովքեր ազատուեցին այսօրինակ փորձութիւններից, բայց մենք եկանք յօժարակամ՝ իմանալով այս վտանգների մասին եւ բոլորովին չվախեցանք: Այժմ կամենում ենք, որ դրանք ծանրացնես այնքան, մինչեւ որ յագենայ քո չար կամքը: Մեր Աստուածը, Ով երկնքի ու երկրի, բոլոր երեւացողների ու աներեւոյթների Արարիչն է, խոնարհուեց, իջաւ մարդկանց մօտ, հագաւ չարչարելի մարմին, անցաւ փորձութիւնների միջով, կատարեց տնօրինութեան բոլոր գործերը, մատնուեց խաչը հանողների ձեռքը, մեռաւ ու գերեզման դրուեց: Իր Աստուածութեան զօրութեամբ յարութիւն առնելով՝ երեւաց Իր աշակերտներին եւ շատերին, համբարձուեց երկինք՝ Իր Հօր մօտ, նստեց հայրենի աթոռի աջ կողմում եւ մեզ երկնաւոր զօրութիւն շնորհեց: Արդ, մենք ոչինչ ենք համարում այս չարչարանքները այն սիրոյ փոխարէն, որ Նա ցոյց տուեց մարդկային ազգին»:

Երբ մոգպետը դահճապետից լսեց այս բոլոր խօսքերը, յուզուեց, միտքը պղտորուեց, եւ շատ գիշերներ քունը փախաւ աչքերից: Իսկ մի երեկոյ միայնակ ու մնջիկ վեր կացաւ, գնաց նրանց մօտ: Երբ հասաւ դռանը, մի անցքով ներս նայեց ու դարձեալ տեսիլք տեսաւ՝ նման առաջին տեսիլքին, միայն թէ նրանք անխռով քնած էին: Մեղմօրէն կանչեց եպիսկոպոսին, ով քաջ պարսկերէն գիտէր: Նա վեր կացավ ու հարցրեց. «Ո՞վ ես դու»: Մոգպետը հայտնեց իր ով լինելը և ասաց, «ուզում եմ ներս գալ»:

Երբ եկաւ սուրբերի մօտ, տեսիլքն այլեւ չերեւաց նրան: Նա պատմեց, թէ ինչպէս իրեն երկու անգամ հրաշք երեւաց: Ղեւոնդ երէցն ասաց նրան. «Աստուած, որ ասաց, թէ խաւարի մէջ թող լոյս ծագի, ծագեց եւ իմաստութեամբ լուսաւորեց աներեւոյթ արարածներին: Նոյն զօրութիւնն այսօր լոյս ծագեցրեց քո խաւարած մտքի մէջ, քո կուրացած հոգու աչքերը բացուեցին, եւ դու տեսար Աստուծոյ շնորհների անշէջ լոյսը: Ուրեմն, շտապի՛ր, մի՛ ծուլացիր, գուցէ դարձեալ կուրանալով՝ խաւարի մէջ խարխափես»:

Եւ երբ այս ասաց, բոլորը ոտքի կանգնեցին՝ ասելով քառասուներկուերորդ սաղմոսի տողերը. «Ուղարկի՛ր, Տէ՛ր, Քո լոյսն ու Քո ճշմարտութիւնը, որ նրանք առաջնորդեն ու տանեն մեզ սուրբ լեռը եւ Քո յարկերը»: Իրապէս, Տէ՛ր, Դու Քո ճշմարտութեամբ առաջնորդեցիր այս մոլորուածին եւ բերեցիր դէպի Քո անանց ուրախութիւնը եւ անմերժելի հանգիստը: Ինչպէս որ Քո չարչարանքների եւ խաչելութեան օրը մահապարտ աւազակին փրկեցիր երկրորդ մահից եւ նրանով բացեցիր Ադենի կողպուած դուռը, այնպէս էլ այսօր

գտար նաեւ այս կորուսեալին, ով շատերի մահուան պատճառ էր, բայց այժմ դարձաւ կեանքի աղբիւր մեզ եւ իր անձի համար: Գոհանում ենք Քեզանից, Աստուա՛ծ, եւ փառաւորում Քեզ: Թող հեթանոսները երբէք չասեն, թէ ո՞ւր է նրանց Աստուածը, քանզի այսօր յայտնի եղաւ Քո մեծ զօրութիւնը այս անսանձ, խաւարասէր ազգի մէջ»:

Իսկ նա, ով ձրի գտաւ Աստուծոյ տուած շնորհը, ասաց. «Ճշմարտապէս գիտեմ, որ այսուհետ իմ թշնամիները բազմաթիւ են լինելու եւ պիտի մօտենան՝ ուտելու իմ մարմինը: Բայց Դու, բոլորի Տէ՛ր, որ եկար ամէնքին կեանք տալու համար, ինձ մի՛ առանձնացրու այս սուրբ գառներից, որոնց խառնուեցի, որպէսզի Քո փարախից դուրս գալիս չար գազանը նորից չպատառոտի ինձ: Տէ՛ր, մի՛ նայիր իմ բազմամեայ չար գործերին եւ մի՛ թող, որ ճշմարիտ ճանապարհից մոլորուեմ ու դարձեալ շատերին տանեմ կորստեան ճանապարհով, այլ որոնց մահուան պատճառ եղայ, նրանց համար թող այսուհետ կեանքի պատճառ դառնամ: Սատանան, որ ինձնով խրոխտացած պարծենում էր այս բազմաթիւ կորստեան մատնուածների մէջ, թող ինձնով էլ գլխիկոր ամաչի իր աշակերտների մէջ»: Ապա սուրբերն աղօթեցին նրա հետ եւ հանգստացան մինչեւ երրորդ պահը: Այդպէս խաղաղութեամբ ննջեցին մինչեւ առաւօտեան ժամը:

Իսկ նա չքնեց, այլ ոտքի վրայ կանգնած եւ ձեռքերը վեր պահած՝ աղօթքի կանգնեց: Եւ մինչ երդիկի միջով աչքերը սեւեռած երկինք էր նայում, յանկարծ բանտախուցը լցուեց լոյսով. նրան մի լուսեղէն սանդուղք երեւաց, որ դրուած էր երկրից մինչեւ երկինք: Խումբ-խումբ զօրքերը վեր էին բարձրանում: Բոլորը նորատեսիլ էին ու չքնաղ, ահաւոր ու սքանչելի, ինչպէս հրեշտակները: Տեսած բոլոր խմբերի թիւն ու համարն էլ մտքում ունէր. կար, որ հազար էր, կար, որ՝ երեսուներեք, կար, որ՝ երկու հարիւր տասներեք: Մինչեւ անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին ու Խորէնին: Նրանք իրենց ձեռքերում ինը պսակներ ունէին, խօսում էին միմեանց հետ ու ասում. «Ահա հասաւ ժամը, որ սրանք եւս խառնուեն մեր խմբին, որովհետեւ մենք հէնց իրենց էինք սպասում եւ իրենց համար էինք բերել առհաւատչեայ պատիւը: Իսկ ում չէինք սպասում, ահա եկաւ, խառնուեց եւ դարձաւ Քրիստոսի զինուորներից մէկը»:

Այս չքնաղ տեսիլքը երանելի մարդուն երեւաց երեք անգամ: Քնից արթնացրեց սուրբերին եւ ամբողջն ըստ կարգի պատմեց նրանց: Իսկ նրանք վեր կացան, սկսեցին աղօթել ու ասել. «Ահա Դո՛ւ, Տէ՛ր, Քո ողորմութեամբ պսակեցիր սիրելիներիդ, Քո գթասրտութեամբ ելար այս կորածին փնտռելու եւ խառնեցիր նրան Քո սուրբերի դասին: Սա ոչ միայն երկինքը տեսաւ, որ Քո ձեռքի գործն է, այլեւ տեսաւ երկինքն ու նրա բնակիչներին, եւ մինչ երկրի վրայ է, խառնուեց Քո բիւրաւոր հրեշտակների գնդին: Տեսաւ նահատակուած արդարների հոգիներին, տեսաւ աներեւոյթ պատրաստութիւնների փառքի նմանութիւնը, իսկ նրանց ձեռքին՝ անկասկածելի գրաւականը: Երանի՛ նրան այս սուրբ տեսիլքի համար, եւ երանի՛ է մեզ, որ նա մօտեցաւ մեզ, որովհետեւ նրա միջոցով հաստատապէս իմացանք, որ Քո անսպառ բարիքներից նա մեծ բաժին ընդունեց: Քո պարգեւներն անսպառ են, Տէ՛ր, եւ առանց խնդրելու՝ Քո յորդաբուխ եւ աննախանձ առատութեամբ բաշխում ես՝ ում կամենում ես: Բա՛ց մեզ, Տէ՛ր, Քո ողորմութեան դուռը: Քո այս նորագիւտ ձեռակերտին բարեխօս ենք դարձնում մեր անձանց համար, թող մեր հաւատի նաւը չընկղմուի մեղքերի ալեկոծուած ծովի մէջ»:

Այսպէս երկար աղօթելով՝ յորդ արտասուքներ էին թափում: Գիտէին, որ մօտեցել է իրենց հրաւէրքի ժամը, եւ գիտէին, որ պիտի հանգստանան այն նեղութիւններից, որոնց դիմանում էին մեծ տառապանքներով: Գթութիւն էին հայցում Բարերարից, որ լսելի լինեն իրենց պաղատանքները եւ հաստատուն մնան իրենց վշտի ու նեղութիւնների մէջ, որպէսզի չզրկուեն այն ցանկալի պսակներից, որ ունէին սուրբերն իրենց ձեռքերում, ինչպէս իրենց ցոյց տրուեց Սուրբ Հոգու կողմից:

Եւ քանի որ հէնց ինքը՝ մոգպետն էր այդ երկրի իշխանը, եւ նրան էին յանձնուած քաղաքի կալանաւորները, ուստի առաւօտեան նրանց համարձակ հանեց տարաւ իր ապարանք: Լուանում ու սրբում էր նրանց բանտի աղտեղութիւններից, վերցնում էր սուրբերի լուացաջուրը եւ լցնում իր մարմնի վրայ: Իր տան մէջ աւազան շինեց, նրանցից սուրբ մկրտութիւն ընդունեց եւ ապա հաղորդուեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի կենդանարար Մարմնին ու մեղսաքաւիչ Արեանը: Նա բարձրաձայն աղաղակում էր եւ ասում. «Այս մկրտութիւնը թող ինձ համար լինի իմ վէրքերի լուացում, եւ թող Սուրբ Հոգով իմ վերստին ծնունդը, նորոգութիւնը եւ անմահ Խորհրդի ճաշակումն ինձ դարձնեն երկնաւոր որդեգրութեան ժառանգորդ»: Նրանց առջեւ էլ մարմնաւոր կերակրի սեղան բացեց եւ միացաւ նրանց՝ ճաշակելու օրհնուած հացը:

Եւ թէպէտ հասաւ երկնաւոր բարիքներին եւ երկիւղ չունէր մարդկային հարուածներից, սակայն սաստիկ մտահոգ էր իր հարազատների համար, որ չլինի, թէ նրանց բռնեն՝ որպէս արքունի գործերի մէջ վնասակար մարդիկ: Այդ պատճառով գիշերը ծածուկ կանչեց նաեւ այն նախարարներին, ովքեր կալանուած պահւում էին նոյն քաղաքում, եւ մեծամեծ ծախսեր արեց: Բոլորը մեծ ուրախութեան մէջ էին այն նոր հրաշքների համար, որ եղան, եւ ամենեւին չէին յիշում, թէ անցել էին որեւէ նեղութեան միջով:

Սեղան նստելու ժամանակ սուրբերը պատուեցին մի երէցի [10], ով իրենց հետ կապանքների մէջ էր: Նա ապրել էր շինական մարդկանց մէջ եւ աւելի անտեղեակ էր Սուրբ Գրքի մխիթարութիւններին: Նրան պատուիրեցին նստել սեղանի գլխին, իսկ երանելին ասաց. «Այդ ի՞նչ էք անում: Ես ձեր կրտսերներից էլ աւելի նուաստ եմ եւ ձեր ամենափոքր աշակերտներից՝ էլ աւելի տգէտ: Միայն այն, որ հաղորդակից եմ ձեր սուրբ կապանքներին, մեծ բան է ինձ համար: Եթէ ինձ արժանի էք համարում ձեր սեղանին, ամէն մէկդ սեղանի շուրջը բռնէք ձեր տեղը եւ ինձ էլ հրամայէք իմ տեղը նստել»: Բայց սուրբ եպիսկոպոսը, միւս բոլոր սուրբերի հետ միաբան, հարկադրեց եւ նրան բոլորից վեր բազմեցրեց:

Երբ նստեցին սեղանի շուրջ եւ զուարթութեամբ կերակուր ճաշակեցին, ոտքի կանգնեց սուրբ Յովսէփն ու սկսեց խօսել. «Ուրա՛խ եղէք ի Տէր, քանզի վաղն այս ժամին արդէն մոռացած կը լինենք այն բոլոր նեղութիւններն ու չարչարանքները, որ կրեցինք: Մեր այս սակաւ չարչարանքների փոխարէն մտնելու ենք մեծ հանգստի մէջ եւ այս բանտի խաւար զնդանի փոխարէն մտնելու ենք երկնային լուսաւոր քաղաքը, որի Թագաւորը Ինքը Քրիստոս է, այն ասպարէզի հանդիսապետը, որի մէջ նախ Ինքը յաղթութիւն առաւ: Եւ այսօր նոյն Տէրն է, որ յաջողում է մեր գործը մեր անձերի փրկութեան եւ մեծափառ սուրբ Եկեղեցու պարծանքի համար: Այս եղբօրը, ում տեսնում էք մեր սեղանի գլխին, վաղը առաջինը նա է նահատակութեամբ ընդունելու իր պսակը, որովհետեւ ահա եկել-հասել եւ մօտեցել է մեր կեանքի թշնամին եւ Քրիստոսի ծառաներիս սուրբ չարչարանքներ պատրաստողը»:

Ապա խօսեց մոգպետը եւ ասաց. «Ձեր սուրբ աղօթքներով թող այդպէս լինի եւ քո ասածի նման ելնեմ այս աշխարհից: Քո խօսքերից ազդուեց հոգիս, եւ ես յիշեցի Քրիստոսի մարդասիրութիւնը, Ում այս աշխարհ գալը մեր մեղքերի համար եղաւ: Թող Տէ՛ր Յիսուս Քրիստոս ինձ այսօր ձեր մեծաշուք գնդին սպասաւոր դարձնի: Մէկ ապաշխարողի համար հրեշտակների անվախճան ուրախութիւն է լինում երկնքում, որովհետեւ նրանք քաջ գիտեն իրենց Տիրոջ կամքը, Ով եկաւ փնտռելու անգամ մէկ մոլորուած ոչխարին: Թերեւս հէնց ինձ համար էր եկել հայոց մեծ զօրավարն իր բազմաթիւ սուրբ ընկերներով. ձեզ համար պսակ էր բերել, իսկ ուրախութեան աւետիս բոլորին էր տալիս: Աղաչում եմ ձեզ, իմ տէրե՛ր ու հայրե՛ր, աղօթէ՛ք անարժանիս համար, որպէսզի արժանի լինեմ հասնելու այն մեծ աւետիսին, որն ասուեց ձեր անսուտ բերանով: Արդ, շտապում եմ հասնել այն օրուան, եւ այդ օրուայ այն ժամին, որ մօտեցել է մեզ: Ե՞րբ պիտի դուրս գամ իմ այս թանձրաշարժ մարմնից, ե՞րբ պիտի տեսնեմ Քեզ՝ Տէ՛ր Յիսուս Քրիստոս, ե՞րբ կը լինի, որ չվախենամ մահից, եւ իմ տգիտութիւնը կատարեալ գիտութեան հասնի: Օգնի՛ր ինձ, Տէ՛ր, օգնի՛ր ինձ, մեկնի՛ր ամենազօր Աջդ, եւ թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի ամենասուրբ անունը փառաւորուի ինձնով»:

Բոլորը ոտքի կանգնեցին, գոհութիւն յայտնեցին՝ ասելով. «Փա՛ռք Քեզ, Տէ՛ր, փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր փառաց, որ մեզ ուրախութեան կերակուր տուեցիր, լցրո՛ւ մեզ Քո Սուրբ Հոգով»: Ապա խորհուրդ արեցին, թէ ինչպէս փրկեն մոգպետին, որպէսզի արքունիքում չիմանան, եւ բարկութիւնը կրակի պէս չբորբոքուի միւսների վրայ: Միաբան աղօթեցին եւ նրան Աստուծոյ ձեռքը յանձնեցին:

Իսկ երբ նախարարները բաժանւում էին սուրբերից, ողբալից ուրախութեամբ նրանց ոտքերն ընկած՝ աղաչում-պաղատում էին, որ իրենց յանձնեն Սուրբ Հոգու պահպանութեանը, «որպէսզի, ասում էին, մեզանից ոչ ոք չտկարանայ եւ ընդհանուր միաբանութիւնից դուրս գալով՝ չար գազանին կերակուր չդառնայ»: Երանելիներն էլ քաջալերում էին նրանց եւ ասում. «Եղբայրնե՛ր, զօրացէ՛ք Տիրոջով եւ մխիթարուէ՛ք Աստուծոյ մարդասիրութեամբ: Նա մեզ որբ չի թողնի եւ չի հեռացնի Իր ողորմութիւնը մեզնից՝ ի Քրիստոս ունեցած հաւատով: Շնորհիւ այն բազմաթիւ բարեխօսների, որ ունենք Նրա մօտ, ձեր վառ կանթեղները չեն մարի, եւ չի ուրախանայ ձեր կեանքի խաւարասէր թշնամին: Նոյն Տէրն է, որ զօրացնում էր առաջին նահատակներին՝ խառնելով նրանց իր հրեշտակների գնդերի հետ. նրանց սուրբ հոգիները եւ արդարների բոլոր դասերը կը հասնեն ձեզ զորացնելու համբերութեան մէջ, որպէսզի նրանց հետ միասին արժանի լինէք նրանց պսակներին»:

Ողջ գիշերը լուսացրին սաղմոսելով, իսկ առաւօտեան դահիճները շտապ հասան բանտի դռանը, ներս մտան եւ տեսան, որ նա, ով առաջ մոգպետ էր եւ հէնց նրան էր յանձնուած հսկել երանելիներին, նստած էր նրանց մէջ, լսում էր նրանց եւ անգամ քաջալերում միւսներին, որ չվախենան մահից: Դահիճները սաստիկ զարմացան, չհամարձակուեցին որեւէ բան հարցնել նրան, սակայն գնացին եւ պատմեցին Դենշապուհին, ում յանձնարարուած էր չարչարել սուրբերին:

Իսկ սա, երբ արքունի դահիճներից լսեց այս մասին, մեծ երկիւղի մէջ ընկաւ, մտածելով՝ թէ գուցէ անձամբ իրեն էլ գործի մէջ խառնեն, մանաւանդ որ քաջ ծանօթ էր մոգպետին: Հրամայեց բանտից հանել բոլորին իրենց կապանքներով

եւ այդ քաղաքից տասներկու պարսկական հրասախ 11 հեռացնել, իսկ մոգպետի հետ խօսեց առանձին՝ հարցնելով, թէ որն է նրա կալանուած լինելու պատճառը: Մոգպետը պատասխանեց. «Ծածուկ մի՛ խօսիր ինձ հետ եւ լուսաւոր խօսքերը մի՛ լսիր խաւարի մէջ: Բացուել են իմ աչքերը, որովհետեւ ես տեսայ երկնաւոր լոյսը: Եթէ ուզում ես իմանալ Աստուծոյ մեծամեծ գործերի մասին, հրապարակաւ հարցրո՛ւ ինձ, եւ ես կը պատմեմ քեզ ինչ որ տեսայ»:

Երբ նրանից լսեց ամէն բան եւ ստուգեց նրա միաբանութիւնը սուրբերի հետ, չհամարձակուեց ձեռք բարձրացնել նրա վրայ, թէպէտ արքունիքից հրաման ունէր, այլ շտապ գնաց թագաւորի մօտ եւ թաքուն պատմեց այն ամէնը, ինչ լսեց նրանից:

Թագաւորն ասաց Դենշապուհին. «Թող ոչ ոք ամենեւին չիմանայ այդ մասին, մանաւանդ այն մեծ տեսիլքի մասին, որ երեւացել է նրան, որպէսզի տգէտ մարդիկ երկմտելով՝ չհեռանան մեր կրօնից: Մինչ մենք ուզում էինք ուրիշներին հնազանդեցնել, մեր կրօնի վարդապետները գնացին նրանց մոլորութեան հետեւից, որովհետեւ մենք չկարողացանք նրանց ոչինչ անել: Ամէնից վատն այն է, որ մի չնչին մարդ չէ, որ դարձաւ դէպի նրանց կրօնը, այլ մէկը, ով քաջ գիտէր մեր պաշտամունքի ամբողջ ուսմունքը եւ երեւելի էր ամբողջ Ապար աշխարհում: Եթէ պայքարի մտնենք նրա հետ, ապա նա աւելի քաջ գիտակ է, քան մեր երկրի բոլոր վարդապետները, եւ գուցէ հիմքից խարխլելով էլ քանդի մեր կրօնը: Իսկ այժմ քեզ երդուեցնում եմ անմահ աստուածներով, ամէնից առաջ քեզ մօտ կանչի՛ր այդ ժանտ ծերունուն. եթէ սիրով համաձայնի եւ զղջալով հրաժարուի նրանց կախարդութիւնից, մեծարի՛ր նրան պատուով, ինչպէս որ ունէր, եւ թող ոչ ոք ամենեւին չիմանայ այդ մասին: Իսկ եթէ չհամաձայնի եւ չկամենայ լսել քեզ, նրա վրայ բազմաթիւ մեղադրանքներ բարդիր, որպէսզի վնասակար համարուի արքունի գործերի մէջ: Հրապարակաւ դատաստան արա՛ եւ աքսորիր Կուրանից ու Մակուրանից էլ այն կողմ. թող նրան գցեն մի վիրապի մէջ, որ այնտեղ էլ մեռնի տառապանքներով: Իսկ այլակրօններին շտապ վերացրո՛ւ, որպէսզի չսասանեն մեր երկրի կրօնը, որովհետեւ եթէ ճարտար մոգպետին շատ արագ իրենց աշակերտ դարձրին, ապա ինչպէ՞ս կարող են տգէտ մարդիկ դէմ կանգնել նրանց ստապատիր խաբէութեանը»:

Արդ, Դենշապուհն ատեան նստեց բանակից դուրս, ինչպէս ասացինք՝ տասներկու հրասախ հեռու: Խօսեց մոգպետի հետ եւ ասաց. «Ես իրաւունք եմ ստացել ո՛չ միայն հարցաքննել քեզ, այլեւ տանջանքների մատնել: Քանի դեռ ուշ չէ, ընդունի՛ր մեծարանքները եւ խնայի՛ր քո պատուական ծերութիւնը: Հեռացի՛ր քրիստոնէութիւնից, որն ի սկզբանէ չունէիր, եւ նորից դարձի՛ր մոգութեան, ինչպէս որ էիր շատերի համար»: Պատասխանեց երանելին՝ ասելով. «Դու առաջ ինձ համար հարազատ եղբայր էիր, իսկ այսօր՝ կատարեալ թշնամի: Աղաչում եմ քեզ, մի՛ խնայիր ինձ նախկին սիրովդ, այլ կատարի՛ր քո չար թագաւորի կամքը եւ պատժի՛ր ինձ՝ ըստ քո իրաւունքի»:

Երբ Դենշապուհը տեսաւ, որ նա ոչ մի բանի տեղ չդրեց թագաւորի սպառնալիքները եւ ոչ էլ իր յորդորներին ուշ դարձրեց, եւ աւելի կամենում էր, որ յայտնապէս խօսի եւ ոչ թէ ծածուկ, վարուեց թագաւորի պատուէրի համաձայն՝ գաղտագողի նրան քշել տուեց հեռաւոր օտարութեան:

Եւ թագաւորը Դենշապուհին հրամայեց աւագ գործակալներից իրեն երկու ընկերակից օգնականներ վերցնել՝ Ջնիկանին, ով արքունի մարզպետ էր, եւ Մովան հանդերձապետին՝ Մովպետան Մովպետի 12 կողմից: Արդ, այս երեքը,

իրենց սպասաւորների հետ միասին, վերցրին սուրբերին այն անապատից եւ նոյն գիշերը նրանց տարան նոյնչափ հեռու մի աւելի դժնդակ վայր: Այդտեղ կալանաւորների վրայ նշանակուած սպասաւորներին հրամայեցին, որ նրանց զգուշութեամբ պահեն, որպէսզի ոչ ոք չիմանայ այն ճանապարհը, որով սուրբերին տանելու են նահատակութեան:

Բայց արքունի զօրքից խուժաստանցի մէկը, ով ծածուկ քրիստոնեայ էր եւ ով նշանակուած էր դահիճների խմբում լինելու եւ տանջող գործիքներով սպասաւորում էր օրապահներին, կէսգիշերին եկաւ ու խառնուեց նախարարների խմբերին: Առաջին խումբը կարծում էր, թէ նա միջին խմբից է, միջին խումբը կարծում էր, թէ նա երրորդ խմբից է, եւ այդպէս երեքն էլ նրան այլ խմբերից էին կարծում. եւ ոչ ոք նրան չհարցրեց, թէ՝ դու ո՞վ ես՝ ո՛չ տէրերից եւ ո՛չ էլ սպասաւորներից:

Հասան մի տեղ, որը բոլորովին զուրկ էր բուսականութիւնից, եւ այնպիսի դժնեայ ապառաժներ էին, որ նրանց համար անգամ նստելու տեղ չգտնուեց: Պարսից երեք իշխանները քիչ հեռացան եւ իրենց դահիճներին հրամայեցին կապել նրանց ձեռքերն ու ոտքերը: Երկար պարաններ զցեցին նրանց ոտքերին, երկու-երկու կապեցին ու սկսեցին քարշ տալ: Այնպէս ձգեցին ու բզկտեցին՝ քարշ տալով քարքարոտ տեղերով, որ ոչ մի ողջ տեղ չմնաց երանելիների մարմինների վրայ: Ապա կապերն արձակեցին ու մի տեղ բերեցին:

Դահիճներին թուաց, թէ նրանք արդէն կը հնազանդուեն իրենց: Նրանք կարծում էին, թէ ինչ էլ ասեն, կը լսեն, կը կատարեն թագաւորի կամքը եւ կ'ազատուեն անտանելի տանջանքներից: Բայց չկարողացան լաւ հասկանալ այն, որ դրանով առաւել ոգեւորեցին նրանց:

Ապա Դենշապուհն սկսեց խօսել նրանց հետ եւ ասել. «Ինձ ձեզ մօտ է ուղարկել թագաւորը: Հայոց երկրի աւերումը եւ զօրքերի կոտորածը ձեր պատճառով եղան, եւ շատ նախարարներ այժմ կապանքների մէջ են եւ չարչարւում են ձեր յամառութեան պատճառով: Բայց հիմա ասում եմ ձեզ. ինչպէս որ շատերի չարչարանքների եւ մահուան պատճառ եղաք, այսօր էլ պատճառ եղէք շատերի կեանքի, քանզի ձեր եւ բանտարկուած նախարարներին արձակելը ձեր ձեռքերում է: Ձեր աւերուած աշխարհը ձեզանով կը շինուի, եւ շատերը, որ գերուած են, ազատ կ'արձակուեն:

«Ահա, դուք ձեր աչքերով տեսաք, թէ ինչպէս թագաւորը չխնայեց մի այնպիսի տոհմիկ մարդու, ում անձամբ ճանաչում էր: Նա քաջատեղեակ էր մեր կրօնին, կատարեալ էր մեր հաւատի մէջ եւ սիրելի՝ բոլոր մեծամեծներին: Բայց քանի որ այդ մարդն անարգեց դենիմազդեզնը 13 եւ մոլորուելով հետեւեց ձեր տխմար գիտութեանը, թագաւորն ամենեւին չխնայեց նրա պատուական մեծութիւնը, այլ ինչպէս մի անտուն անտէր գերի՝ նրան աքսորեց հեռաւոր օտարութեան:

«Արդ, եթէ թագաւորը չխնայեց անգամ նրան՝ իր ազգակցին, որքա՜ն առաւել չի խնայի ձեզ՝ օտարներիդ: Ձեզ համար փրկութեան այլ հնար չկայ, բացի արեգակին երկրպագելուց եւ թագաւորի կամքը կատարելուց, ինչպէս որ սովորեցրել է մեծ Զրադաշտը: Եթէ վարուէք մեր կամքի համաձայն, ո՛չ միայն կը փրկուէք մահից, այլեւ մեծամեծ պարգեւներով ձեր երկիրը կը վերադառնաք»:

Թարգման ունենալով Սահակ եպիսկոպոսին՝ առաջ եկաւ Ղեւոնդ երէցը եւ ասաց. «Ինչպէ՞ս հնազանդուենք քո երկդիմի հրամաններին, քանի որ դու նախ թագաւորի կամքով ես արեգակին երկրպագում, մեծարում ես արեգակին՝ նախ տալով նրա անունը, իսկ թագաւորին արեգակից աւելի ես մեծարում եւ ցոյց

տալիս, որ արեգակն առանց իր կամքի է սպասաւորում արարածներին: Իսկ թագաւորը, դեռեւս վերահասու չլինելով ճշմարտութեանը, իր ազատ կամքով ում կամենում է, աստուածացնում է, եւ ում կամենում է, ծառայեցնում է: Մեզ հետ մի՛ խօսիր ինչպէս մանուկների հետ, որովհետեւ հասակով կատարեալ մարդիկ ենք եւ գիտութեանն էլ անտեղեակ չենք: Որտեղից դու սկսեցիր, հէնց այնտեղից էլ քեզ կը պատասխանեմ:Մեր կրօնը մեզ այդպէս չի սովորեցնում, այլ պատուիրում է մեծապէս պատուել երկրաւոր թագաւորներին եւ նրանց սիրել մեր ամբողջ ուժով, ոչ իբրեւ մի չնչին մարդու՝ մարդկանց միջից, այլ ծառայել նրան ինչպէս ճշմարիտ Աստծուն: Եւ եթէ զրկանքներ ենք կրում նրանց կողմից, փոխարէնը Աստուած մեզ խոստանում է երկնքի Արքայութիւնը: Մենք պարտաւոր ենք ո՛չ միայն իբրեւ հպատակ ծառայել նրանց, այլեւ մեր անձերը մահու չափ դնել թագաւորի համար: Եւ ինչպէս որ երկրի վրայ իրաւունք չունենք նրան փոխել այլ տիրոջ հետ, նոյնպէս էլ իրաւունք չունենք ուրիշի հետ փոխելու մեր ճշմարիտ Աստծուն, Ումից բացի չկայ այլ Աստուած: Այն ո՞ր քաջ զօրականը վերջում կը մտնի պատերազմի մէջ. եւ եթէ այդպիսի բան անի, նա ոչ թէ քաջ կը կոչուի, այլ յոյժ վախկոտ: Կամ ո՞ր իմաստուն վաճառականը պատուական մարգարիտը կը փոխանակի անպէտք քարի հետ, այլ միայն նա, ով յիմարացած է տգիտութեամբ, ինչպէս ձեր մոլար առաջնորդները: Կարծում ես մեզ մենա՞կ ես գտել եւ կամենում ես խարդախութեամբ քանդել մեր հաստատուն խորհուրդները, բայց մենք մենակ չենք, ինչպէս կարծում ես, որովհետեւ չկայ մի այնպիսի տեղ, ուր չլինի մեր Թագաւորը՝ Քրիստոս: Միայն ձեր նմաններն են, որ հեռու են Նրանից եւ մերժուած՝ Նրա կողմից: Մեր երկրի զինուորներն էլ, ովքեր մեր միջոցով աշակերտել են Քրիստոսին, ոտնահարեցին ձեր թագաւորի ահեղ հրամանները եւ ոչինչ համարեցին նրա մեծամեծ պարգեւները: Կողոպտուեց նրանց հայրենի տէրութիւնը, սակայն նրանք չխնայեցին իրենց կանանց ու որդիներին եւ այս աշխարհի մարմնաւոր գանձերը: Նրանք բոլորը մեզանից առաջ մտան Աստուծոյ Արքայութիւնը եւ խառնուած վերին հրեշտակների գնդերին՝ ցնծում են պատրաստուած օթեւանների մէջ, որին հասնելով՝ խառնուեց նաեւ այն մարդը, ում աքսորեցիր: Երանի՛ եմ տալիս նրան: Երանի՛ եմ տալիս նրան, եւ երանի՛ այն հողին՝ որի միջով նա պիտի անցնի, եւ այն տեղին, ուր նա պիտի նահատակուի, որովհետեւ նա իր պատուականութեամբ գերազանցում է ոչ միայն ձեր արքունիքին, այլեւ երկնքի լուսատուներին, որոնց դուք երկրպագում էք»:

Պատասխանեց Մովան հանդերձապետը եւ ասաց. «Աստուածները բարերար են եւ համբերում են, որպէսզի մարդիկ հասկանան իրենց տկարութիւնը եւ նրանց մեծութիւնը: Դուք իրաւունք չունէք ընդդիմանալ նրանց կամքին եւ յանձն չառնել երկրպագել արեգակին, որն իր ճառագայթներով լուսաւորում է ամբողջ տիեզերքը: Խնայէ՛ք ձեզ եւ մի կողմ թողէք ամէն բան, ուղղէ՛ք ձեր առաջիկայ գործերը, որպէսզի ձեզանով ուրիշներն էլ ողորմութիւն գտնեն մեծ թագաւորի կողմից»:

Սուրբ Սահակը պատասխանեց. «Իբրեւ մի ուսեալ եւ խիստ կրթուած մարդ՝ հոգ ես տանում աշխարհի շինութեան ու թագաւորի փառքի համար, բայց դա յոյժ տգիտութեամբ ես անում, որովհետեւ դաւանում ես բազում աստուածների, սակայն նրանց բոլորի համար չես ասում, թէ՝ մի կամք ունեն: Եթէ վեհագոյնները հակամարտ են միմեանց, մենք՝ նրանցից ստորիններս, ինչպէ՞ս կարող ենք հաւատալ քո խօսքերին...»: Սուրբ Սահակը ցոյց տուեց նրանց

խաւար պաշտամունքի մոլորութիւնը ու ճշմարիտ քրիստոնէական հաւատի լոյսը եւ վերջում աւելացրեց. «Ով չի խոստովանում խաչեալ Աստծուն, խաւարն է պատել նրա հոգուն ու մարմնին: Պատրաստ ենք մեռնել մեր Տիրոջ նման: Ինչպէս եւ ինչ կերպ կամենում ես, կատարի՛ր քո չար կամքը»:

Երբ անօրէն Դենշապուհը նայեց բոլորին, տեսաւ, որ նրանք զուարթ են, մեծապէս ուրախ, եւ հասկացաւ, որ ոչինչ են համարում իր խօսքերը: Հրամայեց առաջ բերել նրանցից ամենակրտսերին՝ Արշէն երէցին: Կապեցին նրա ձեռքերն ու ոտքերը եւ պրկեցին այնքան ուժեղ, որ ճարճատիւնով կտրուեցին բոլոր ջղերը, եւ այդպէս երկար ժամանակ մնաց անտանելի պրկումների մէջ: Սուրբն սկսեց աղօթել՝ ասելով. «Ահա իմ շուրջը պատեցին բազմաթիւ շներ եւ չարերի ժողովը պաշարեց ինձ: Ծակեցին իմ ոտքերն ու ձեռքերը, եւ իմ բերանի փոխարէն բոլոր ոսկորներս աղաղակեցին» [14]: Լսի՛ր ինձ, Տէ՛ր, ունկնդրի՛ր ինձ, ընդունի՛ր իմ հոգին Քո սուրբ զօրականների ժողովում, որ երեւաց քո նորակերտ ձեռակերտին: Ես, որ ամէնքից կրտսերն եմ...»: Եւ այլեւս չկարողացաւ խօսել գելարանի անտանելի պրկոցներից: Անմիջապէս հրաման տրուեց դահիճներին՝ սրով կտրել երանելու պարանոցը եւ մարմինը նետել մի ցամաք խորխորատի մէջ:

Ապա Դենշապուհն անմիջապէս դարձաւ եպիսկոպոսին եւ ասաց. «Խնայէ՛ք ձեզ եւ սրա պէս մի՛ մատնուէք չարչարանքներով մահուան, ինչպէս տեսաք ձեր աչքերով, իսկ եթէ յամառէք, դաժան տանջանքներով վերջ կը տամ ձեր կեանքին: Դուք չգիտէք, թէ որքան համբերատար եմ ձեր հանդէպ: Ես աղ ու հաց եմ կերել ձեր երկրում, ուստի գութ եւ սէր ունեմ ձեր աշխարհի հանդէպ»: Սուրբ Ղեւոնդն առանձին խօսեց սուրբ Սահակի հետ. «Մենք այժմ պէտք է պատասխանենք այնպէս, ինչպէս Փրկիչը պատասխանեց Պիղատոսին ատեանի առջեւ: Դրանց ասա՝ «Ձեր խոստացած պատիւն ու փառքը Աստուած չանի, որ մեզ հասնեն: Մեզանից ոչ ոք չի ուզում հողեղէն ու մահկանացու մարդու կողմից արժանանալ պատուի, որին ապականում է ուտիճն ու ցեցը, եւ գողն էլ տանում է մէկ վայրկեանում: Մենք Բարձրեալի երկնաւոր ու անմահ Աջից ենք ստացել փառք ու պատիւ: Մեր այս երանելի փառաւորութիւնից միայն մէկ բան է պակասում՝ մահուան բաժակը, որին ծարաւ ենք եւ շտապում ենք ըմպել: Արբեցրէ՛ք մեզ շուտով, որ ուրախութեամբ ազատուենք այս կեանքից»:

Երբ սուրբ Ղեւոնդն աւարտեց իր խօսքը, երանելի միւս ընկերները խնդրեցին սուրբ Սահակ եպիսկոպոսին, որ նա իրենց կողմից եւս անօրէն իշխաններին յայտնի, թէ՝ «Ինչ որ ասացին մեր սուրբ վարդապետներն ու հոգեւոր հայրերը՝ տէր Յովսէփն ու տէր Ղեւոնդը, նոյնը մենք ենք ասում, շտապէ՛ք կատարել այն, ինչի համար որ եկել էք, եւ մի՛ ուշացրէք»:

Զայրացած երեք անօրէն իշխաններն այլեւս չկարողացան երկար հանդուրժել սուրբերին: Վեր կացաւ ինքը՝ Դենշապուհը, մռնչաց առիւծի պէս, հանեց իր սուրը եւ այնպէս հարուածեց սուրբ Սահակ եպիսկոպոսին, որ կտրեց նրա աջ ուսը թիկունքի հետ միասին եւ նրա ձեռքը վայր գցեց: Իսկ նա, ձախ կողմի վրայ ընկնելով, աջ ձեռքը վեր բարձրացրեց, բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Տէ՛ր, ընդունի՛ր ինձ որպէս կամաւոր զոհ, որ մատուցեցի Քեզ, եւ խառնի՛ր ինձ Քո սուրբ զինուորների գնդին»: Միաժամանակ քաջալերում էր իր ընկերակիցներին ու ասում. «Ահա հասել է մեր նահատակութեան ժամը: Մի պահ փակէ՛ք ձեր մարմնաւոր աչքերը եւ կը տեսնէք մեր յոյս Քրիստոսին»: Եւ թաւալուելով իր արեան մէջ՝ ասում էր. «Ամէն ժամ կ’օրհնեմ Տիրոջը, Նրա

օրհնութիւնը միշտ իմ բերանում է: Թող իմ անձը պարծենայ Տիրոջով, հեզերը լսեն եւ ուրախ լինեն: Արդարները շատ նեղութիւններ ունեն, այդ բոլորից կը փրկի նրանց Տէրը եւ կը պահի նրանց բոլոր ոսկորները» 15:

Եւ մինչդեռ քիչ ուժ էր մնացել մարմնում, նայեց ու տեսաւ, որ երկնքից գալիս էին հրեշտակների շատ գնդեր, իսկ հրեշտակապետի ձեռքին վեց պսակ կար: Ի վերուստ ձայն լսեց, որն ասաց. «Քաջալերուէ՛ք, Իմ սիրելինե՛ր, որովհետեւ ահա պիտի մոռանաք ձեր վշտալի կեանքը եւ հասնէք երանելի պսակներին, որ հիւսեցիք ձեր իմաստութեամբ: Առէ՛ք եւ իւրաքանչիւրդ դրէ՛ք ձեր գլխին, որովհետեւ դրանց պատրաստման հարկաւոր նիւթը դուք հայթայթեցիք, իսկ հիւսուեցին Քրիստոսի ամենասուրբ ձեռքով: Ընդունէ՛ք դրանք հրեշտակների ձեռքից եւ պսակակից կը լինէք Ստեփանոսին»: Նա քաջ տեսնում էր նաեւ այն սուրը, որ դեռեւս շողում էր երանելի ընկերների պարանոցների վրայ:

Երբ սուրբ Ղեւոնդը տեսաւ, որ միանգամից մահուան հրաման է տրուած, ասաց երանելի Յովսէփին. «Մօտեցի՛ր, առաջացի՛ր դէպի սուրը, որովհետեւ դու աստիճանով բարձր ես բոլորիցս»: Եւ երբ այս ասաց, մէկը միւսի հետեւից շարքով կանգնեցին: Եւ քանի որ դահիճներին ստիպում էին արագացնել, միանգամից կտրեցին երանելիների պարանոցները եւ գցեցին սուրբ եպիսկոպոսի առաջ: Իսկ նա հոգին աւանդելիս աղաղակեց եւ ասաց. «Տէ՛ր Յիսուս, ընդունի՛ր մեր բոլորի հոգիները, եւ մեզ խառնի՛ր Քո սիրելիների գնդին»: Այսպէս նոյն տեղում նահատակուեցին բոլորը:

Արդ, եթէ կամենում ես նրանց շարքը դասել նաեւ մոգպետին, ով հաւատաց Քրիստոսին, թուով եօթն էին, բացի նաեւ այն երկուսից, ովքեր նահատակուեցին Վատգէսում եւ Թաթիկ անունով միւս եպիսկոպոսից, ով նահատակուեց Ասորեստանում: Իսկ այդ նոյն տեղում վեց հոգի էին, որոնց անուններն են՝

սուրբ Սահակ Ռշտունեաց եպիսկոպոս,
սուրբ Յովսէփ կաթողիկոս՝ Վայոց ձորի Հողոցիմք գիւղից,
Ղեւոնդ երէց Վանանդից՝ Իջաւան գիւղից,
Մուշէ երէց Աղբակից,
Արշէն երէց Բագրեւանդի Եղեգէկ գիւղից,
Քաջաջ սարկաւագ, որտեղից էր նաեւ Ռշտունեաց եպիսկոպոսը,
երանելի Մոգպետ Նիւշապուհ քաղաքից,
Սամուէլ երէց Այրարատից՝ Արած գիւղից,
Աբրահամ սարկաւագ՝ նոյն գիւղից:

Նրանք նահատակուեցին Յազկերտի թագաւորութեան տասնվեցերորդ տարում, Հրոտից 16 ամսուայ քսանեօթին: Նահատակուեցին Ապար աշխարհում, մոգերի այն գիւղի մօտ, որ կոչւում է Ռեւան:

Հեռանալով այդ տեղից՝ Դենշապուհն ու նրա հետ եղող միւս իշխաններն ընտրեցին ու տեղում թողեցին ինը զինուած մարդկանց, որոնց մէջ, իհարկէ, Աստուծոյ տնօրինութեամբ երանելի Խուժիկին, որին ընտրելով՝ Դենշապուհը խնդրեց մնալ՝ իբրեւ իւրային եւ իր հրամաններին միշտ պատրաստ մարդու: Այս պահապաններին հրամայեցին. «Մինչեւ տասն օր կամ աւելի զգուշութեամբ պահէ՛ք այդ մարմինները, որպէսզի գիշատիչ թռչունները ոսկորները ցրեն այս ու այն լեռնագագաթներով ու քարանձաւների խորաձոր տեղերում: Գուցէ քրիստոնեաները գան, գտնեն ու տանեն նրանց մարմինները եւ տարածեն բոլոր քրիստոնեաների մէջ: Այն ժամանակ մենք մահապարտ կը լինենք թագաւորի

առջեւ»: Եւ Դենշապուհի պահապանները հանդերձապետ Մովանի եւ Ջնիկանի հրամանով հսկեցին նշանակուած օրերը: Երանելի Խուժիկն այդ օրերին մտածում էր, թէ Աստուած իրեն ինչ հնարքով ցոյց կը տայ այն ճանապարհը, որով ինքը կ'արժանանայ միւս պահապաններից սուրբերի նշխարները գողանալուն:

Եւ մինչ երանելին այս մտքերի մէջ էր, յանկարծ նոյն օրուայ երեկոյեան այդ տեղում երկրաշարժ եղաւ: Անդունդներից դղրդիւն եւ ահաւոր ձայներ լսուեցին: Ամպերը կուտակուելով՝ ծածկեցին երկիրը: Որոտի ձայներն ու կայծակների փայլատակումները լեռներ էին դողացնում: Եւ ահա ծիածանի պէս լոյսի մի սիւն, երկնքից իջնելով, կամարաձեւ պարուրեց նահատակների մարմինները: Պահապանները կիսամեռ եղած գետնին ընկան. ոչ ոք չգիտէր, թէ ուր է իր ընկերը: Թաւալւում էին գետնի վրայ ու չէին կարողանում վեր կենալ, քանզի երկրաշարժը նրանց ցնցելով՝ պոկում էր գետնից: Եւ այսպէս, թուլացած ոտքերով ու համրացած բոլորը տապալուել էին, իսկ երանելի Խուժիկը պահւում էր Աստուծոյ Աջով: Նա ուրախացած փառք էր տալիս Աստծուն՝ յայտնապէս հասկանալով, որ այդ պահին կատարւում է իր խնդրանքը: Այս ահաւոր տագնապը տեւեց ամբողջ գիշերը, բովանդակ ցերեկը եւ յաջորդ գիշերը եւս՝ մինչեւ արեւագալի ժամը: Ապա լռեցին անդունդներից եկող ձայները, եւ ամպերի որոտները փարատուելով վերացան: Երկիրն այլեւս չէր շարժւում, իսկ փայլատակումների ցայտումները ամփոփուելով մարեցին: Այս ամէնը տեղի ունեցաւ երկու ասպարէզի 17 չափ տարածութեան վրայ:

Իսկ պահապանները, ահաւոր թմրութիւնից փոքր-ինչ ուշքի եկած, մտածում էին, թէ ուր փախչեն այդտեղից, սակայն այնքան սարսափած էին, որ չէին կարողանում ոտքի կանգնել. միայն իրար երես էին նայում եւ չէին կարողանում որեւէ բան ասել: Բայց երրորդ օրուայ ժամը իննին երանելի Խուժիկը, վեր կենալով, իբր թէ կաղեկաղ, հետ-հետ նայելով փախաւ այնտեղից: Նրանք տեսան երանելի Խուժիկին, ով գնում էր ծուռումուռ ընթացքով: Փոքր-ինչ ուշքի գալով՝ իրենք էլ փախան այդ տեղից: Երկիւղից չէին համարձակւում հետ նայել եւ մի գլուխ շտապում էին՝ հասնել Դենշապուհի եւ միւս իշխանների մօտ, իսկ երանելի Խուժիկը հեռացաւ նրանցից: Պահապանները, վեցերորդ օրը հասնելով իշխանների մօտ, պատմեցին մէկ օրուայ ու երկու գիշերուայ մէջ եղած բոլոր դէպքերը: Դենշապուհն ու իր ընկերները, տեսնելով նրանց երեսների գոյնը ու լսելով կատարուած սարսափելի դէպքերի մասին, զարհուրեցին: Նրանք երկար ժամանակ մնացին ապշահար: Անմիջապէս պահապաններին հրամայեցին լռել եւ ոչ ոքի չպատմել այդ մասին, բայց մտածմունքի մէջ ընկած՝ Դենշապուհն ու Ջնիկանը առանձնակի զարմանքով, ասես անզգայութեան մէջ թաղուած, ասացին միմեանց. «Քրիստոնեաների գործն այնքան էլ թեթեւ ու չնչին գործ չէ, այլ հաստատապէս մեծ է նրանց օրէնքների ու հաւատի զօրութիւնը, իսկ մենք անգիտութեամբ կորչում ենք ու չենք զգում»:

Երանելի Խուժիկը, տեսնելով, որ բոլոր կողմերից փարատուած է ամէն մի կասկած, մտածեց, որ այլեւս ոչ ոք չի մտածի սուրբերի նշխարների մասին: Իր հետ վերցնելով ուրիշ տասն ընկերների, որոնց քաջ գիտէր՝ որպէս ջերմեռանդ քրիստոնեաներ, ծածկապէս գնացին գիշերով՝ առնելով իրենց հետ գրաստներ ու սուրբերից իւրաքանչիւրի համար մի քառակողմ կողով: Նահատակութեան վայրին մօտենալով՝ վրիպեցին այն տեղից, ուր գտնւում էին սուրբերի մարմինները, որովհետեւ գիշերուայ աղջամղջի ժամն էր: Քիչ փնտռելով

տրտմեցին՝ մտածելով, որ իրենք անարժան են երկնաւոր գանձը գտնելուն: Եւ մինչ խռովուած էին այս մտքերի մէջ, յանկարծակի լուսաւոր արծուի նման մի բան, երկնքից սլանալով, իջաւ ու նստեց սուրբ Ղեւոնդի մարմնի վրայ՝ լուսաւորելով տեղանքն առաւել, քան ցերեկն է լուսաւորում: Այնժամ յստակ երեւացին նաեւ բոլոր սուրբերի մարմինները: Եւ նրանք սրտագին ուրախութեամբ երկրպագեցին Տէր Աստծուն եւ իւրաքանչիւրին դրեցին կողովի մէջ, ինչպէս որ Խուժիկին նշմարւում էր իբրեւ գրով: Սուրբերի մարմիններից անուշահոտութիւն էր բուրում՝ խելացնոր զմայլանք պատճառելով իւրաքանչիւրին: Նրանք, շտապ գրաստները բարձելով, տեղափոխուեցին անապատ մի վայր՝ այնտեղից պարսկական երեք հրասախ հեռու, եւ եօթ օր մնացին, որպէսզի անցներ վտանգը: Ապա սուրբերի ոսկորները մաքրեցին անուշահոտ մարմիններից, մարմինները ծածկեցին պատուական կտաւներով, զգուշութեամբ թաղեցին այնտեղ՝ անապատում, իսկ ոսկորները բերեցին Շահաստան եւ իրենց մօտ ծածուկ պահեցին շատ օրեր: Ապա սկսեցին թաքուն տալ առաքինի քրիստոնեաներից ոմանց, ովքեր վերցնելով՝ այն ընդունում էին որպէս հոգու եւ մարմնի փրկութեան գիւտ եւ արագ հասցնում իրենց երկրները՝ ի շահ իրենց ընտանիքների ու երկրի հոգեւոր կենդանութեան:

Բայց երանելի Խուժիկն այն աստուածապարգեւ գանձի առաջին պտուղը նախ բերեց ու տուեց հայոց բանտուած նախարարներին: Իսկ նրանք, արժանանալով այդ գանձերին, անմիջապէս հասկացան, որ Աստուած պիտի այցելի իրենց, ու սուրբերի նշխարների բարեխօսութեամբ երբեւէ պիտի ազատուեն իրենց կապանքներից՝ ըստ Աստուծոյ սուրբ այր Ղեւոնդի խօսքի, ով գիշերն իրենց խրատելիս աւետեց, թէ Աստուծոյ շնորհով իրենք կը տեսնեն իրենց երկիրը: Այս խօսքերը կատարուեցին իր ժամանակին. մահուան սպառնալիքը վերացաւ նրանց վրայից, ներման հրովարտակներ ուղարկուեցին Հայոց աշխարհ, եւ նախարարներն արձակուեցին իրենց կապանքներից:

Այս երանելի Խուժիկը, ով արժանի եղաւ ծածուկ սպասաւոր լինելու սուրբերին, այս ամէնը պատմեց մեզ ըստ կարգի՝ սուրբերին չարաչար քարշ տալը, դատաւորների հարցուփորձը, սուրբերից իւրաքանչիւրի պատասխանները, նրանց նահատակութիւնը, պահապան զինուորների կրած մեծ արհաւիրքները, երեք պարսից նախարարների տարակուսանքները, սուրբ ոսկորների ամփոփումը՝ ո՛չ թէ խառնիխուռն, այլ նրանցից իւրաքանչիւրն առանձին՝ վեց տապանների մէջ ժողովուած:

Ըստ Մաղաքիա արք. Օրմանեանի՝ Ղեւոնդեանց խումբը տօնացոյցի մէջ յիշատակւում է քահանայից անուամբ, թէպէտ ինը նահատակներից մէկը կաթողիկոս էր, երկուսը՝ եպիսկոպոսներ, երկուսը՝ սարկաւագներ, եւ չորսը միայն լոկ քահանաներ էին: Այդ պարագայում քահանայ անունը ամուսնացեալ եկեղեցականութեան հետ նոյնանշան է համարւում, եւ ինը մարտիրոսներն էլ այդ դասին պատկանելու համար ընդհանուր կերպով քահանաներ են կոչւում՝ առանց ուշ դարձնելու աստիճանի տարբերութեան վրայ: Այդ խորհրդով է, որ մինչ օրս Ղեւոնդեանց տօնը Հայ Եկեղեցու քահանայից դասի յատուկ տօնախմբութեան օր է ճանաչուած: Աստիճաններին ուշադրութիւն չդարձնելու հետեւանքն է, որ խմբի անունն էլ Ղեւոնդ քահանայի անուամբ է եւ ոչ թէ Յովսէփ կաթողիկոսի կամ Սահակ եպիսկոպոսի:

Սուրբ Ղեւոնդ Վանանդեցին սուրբ Սահակ Պարթեւի ամենառաջին աշակերտներից էր եւ նոյնիսկ աշակերտներից ամենագլխաւորը: Նա Յովսէփ

կաթողիկոսի անբաժան գործակիցն էր: Ծնորհիւ իր խորիմաստութեան եւ հռետորաբանութեան՝ թէ՛ Աւարայրի բանակում, թէ՛ Տիզբոնի ատեանի առջեւ եւ թէ՛ Ռեւանի դատական քննութեան ժամին միշտ եղել է գլխաւոր խօսնակը: Մի խօսքով, սուրբ Ղեւոնդն այս ողջ շարժման հոգին էր, եւ այդ պատճառով էլ գործակիցներն իր անուամբ կոչուեցին: Նա Վանանդ գաւառի Իջաւանք գիւղից էր, սակայն իր գործունէութեան ասպարէզն առաւել եղել է Բագրեւանդում: Տարիքը պէտք է համարել եօթանասունն անց, քանի որ հայոց գրերի գիւտի օրերին արդէն յիշատակւում է որպէս երէց, եւ նրա նահատակութիւնը դրանից յիսուն տարի անց է:

Յովսէփ կաթողիկոսի տարիքը պէտք է ենթադրել մօտ վաթսունը, քանի որ սուրբ Ղեւոնդը Միհրներսէհի առջեւ նրա համար ասում էր. «Ինձանից առաւել երիտասրդին էք տեսնում»:

Սահակ եպիսկոպոսը տարիքով աւելի շատ Ղեւոնդի, քան թէ Յովսէփի հասակակիցն է: Նրա արժանիքների մէջ յիշուած է պարսկագէտ լինելը, որով թէ՛ Միհրներսէհի, թէ՛ Դենշապուհի ատեանների առջեւ կատարում էր երբեմն թարգմանի եւ երբեմն էլ բոլորի կողմից խօսողի պաշտօնը: Նրան պարզապէս Ռշտունեաց են ասում՝ առանց նշելու նրա գաւառը, գիւղը, նախարարական կամ ազնուական տնից լինելը:

Մուշեղ քահանայի հայրենիքը Աղբակ գաւառն էր, իսկ պաշտօնը՝ Արծրունի նախարարութեան մօտ իբրեւ դռան երէց կամ որ նոյնն է՝ իբրեւ նախարարական ազգատոհմի տաներէց: Տարիքի համար տեղեկութիւններ չկան, սակայն երիտասարդ չի եղել: Անունը շատ անգամ նշուած է՝ Մուշէ:

Արշէն երէցի ծննդավայրն է Բագրեւանդի Եղեգէկ գիւղը, եւ այդ կողմերում էլ պէտք է եղած լինի նրա քահանայական պաշտօնավարութիւնը: Նա Սահակ Մեսրոպեան աշակերտութեան ուսեալ դասից չէր, այլ «շինական մարդկանց միջից էր գալիս, եւ աւելի անհաղորդ էր Գրքերի մխիթարութեանը»: Բայց իր ընկերները իրենց նրանից ոչ միայն բարձր չէին համարում, այլեւ առաւելագոյն պատիւներով քաջալերում ու զօրացնում էին նրան:

Քաջաջ սարկաւագը բնիկ Ռշտունի էր եւ Սահակ եպիսկոպոսի փոքրաւորը: Արշէնն ու Քաջաջը ամէնից կրտսերներն էին:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սուրբ Ղեւոնդեանց յիշատակը տօնում է Բուն Բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը:

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԻ ԵՒ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ԶՕՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Արիացեալք առ հակառակսն. քաջութեամբ առնուլ զվրէժ խաբէութեան.

հանճարեղք ի հատուցումն դաւանացն.զամբարշտացն արդարադատ չափմամբ.
զօրականք յաղթողք, պսակեալք ի Քրիստոսէ:
Փոխանակեալք զունայնութիւնս ընդ ճշմարիտ յուսոյ անմահութեանն. փափագանաց ձերոց առիք զկատարումն. մաքրիլ արեամբ յաղտոյ մեղաց տղմոյ.
զօրականք յաղթողք, պսակեալք ի Քրիստոսէ:
Հայցեցէք զիաղաղութիւն՝ ճշմարիտ վկայք Սրբոյ Երրորդութեանն. նեղելոցս յանօրինաց բռնութենէ. զի ցնծասցուք յաղթանակաւ մարտի ձերոյ. նահատակք յարգոյք պսակեալք. զօրականք յաղթողք, պսակեալք ի Քրիստոսէ:
(Շարակնոց)



Show More

Սուրբ Վարդանանք նահատակուեցին 451 թ. մայիսի 26-ին Աւարայրի ճակատամարտում, ովքեր էին՝
Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանը,
Երանելի Խորէնը՝ Խորխոռունեաց տոհմից,
Երանելի Արտակ սեպուհը՝ Պալունեաց տոհմից,
Երանելի Տաճատը՝ Գնդունեաց տոհմից,
Երանելի Հմայեակը՝ Դիմաքսենից տոհմից,
Երանելի Ներսեհը՝ Քաջբերունեաց տոհմից,
Երանելի Վահանը՝ Գնունեաց տոհմից,
Երանելի Արսէնը՝ Ընծայնոց տոհմից,
Երանելի Գարեգինը՝ Սրվանձտեան տոհմից եւ 1036
զօրականներ:

Քաջ Վարդանը, ով հայոց տան պարծանքն է եւ Հայաստանեայց Եկեղեցու պսակը՝ հիւսուած նրա սուրբ արեան կարմրափայլ վարդերից, թոռն էր մեր սուրբ Սահակ Պարթեւ հայրապետի, որդին՝ նրա Սահականոյշ դստեր եւ Համազասպ Մամիկոնեանի, ում երկու եղբայրներն էին Հմայեակը եւ Համազասպը:
Երբ Արշակունեաց տնից վերացաւ հայոց թագաւորութիւնը, Մեծն Վարդանը յունաց Թէոդոս Փոքր կայսեր կողմից ստացաւ ստրատելութեան, այսինքն՝ զօրավարութեան պատիւ եւ իր մեծամեծ քաջագործութիւնների համար մեծարուեց պարսիկների կողմից: Նա երեւելի եղաւ հայոց բոլոր նախարարների

մէջ երկրի նկատմամբ ունեցած վաստակի համար: Արիութեան մէջ չկար նրա պէս մէկը, աննման էր առաքինութեամբ եւ աստուածպաշտութեամբ:
Զգօն էր իր խորհուրդներում, զօրաւոր՝ խօսքի մէջ եւ յաջողակ՝ բոլոր գործերում: Նրա առաջնորդութեամբ առանց թագաւորի Հայոց աշխարհն իր բարեկարգութեամբ փայլեց առաւել, քան երբ թագաւորութիւն ունէր: Բայց քանի որ երկիրն ընկած էր հեթանոսների իշխանութեան ներքոյ, դաժան աղէտներ տեղացին Հայաստանի վրայ, քանզի պարսից կրակապաշտ Յազկերտ արքան՝ Վռամի որդին, մոլեռանդ լինելով իր անօրէն օրէնքների մէջ, որոշեց իր տէրութեան բոլոր քրիստոնեաներին մոգութեան կրօնին դարձնել: Այս մտքի խորհրդատուն եւ զօրացուցիչը եղաւ արքունի դռան մեծ հազարապետ Վեհմիհրներսէհը՝ մոգերի եւ մոգպետների գործակցութեամբ հանդերձ: Բայց քանի որ Յազկերտն ակնածում էր միայն յունաց թագաւորից, մտածեց նախ լռեցնել նրան, որի համար պատերազմ սկսեց կայսեր տէրութեան սահմանների վրայ: Աւերեց եւ կողոպտեց քաղաքներ ու աւաններ, այրեց եկեղեցիներ, որից Թէոդոս Կրտսերն անհանգստացած որոշեց հաշտութիւն կնքել Արեւելքի Անատոլիս զօրավարի ձեռքով՝ Յազկերտի ձեռքը յանձնելով Կոստանդնուպոլսում ապաստանած քրիստոնեայ պարսիկներին:
Իր յաղթանակներից փքացած՝ Յազկերտը հրաման արձակեց, որ Պարսից երկրում բնակուող բոլոր քրիստոնեաները դառնան կրակապաշտութեան: Ովքեր յանձն չառան, տանջանքներով նահատակուեցին, շատերն էլ շղթայակապ բանտեր նետուեցին: Իրեն գործիքներ դարձրեց հայոց երկու իշխաններին՝ Վարազվաղան Սիւնեցուն եւ Վասակ Սիւնեցուն, ովքեր թշնամի էին միմեանց: Վասակը նենգութեամբ սպանել էր տուել իր հօրեղբայր Վաղինակին եւ նրա փոխարէն դարձել Սիւնեաց իշխան: Նա իր դստերը կնութեան էր տուել Վարազվաղանին: Եւ քանի որ Վարազվաղանը ատելութիւն էր տածում իր կնոջ հանդէպ, նրանց միջեւ գժտութիւն ընկաւ, որի համար էլ Վարազվաղանը, փախչելով իր աներոջից, հեռացաւ եւ ապաստանեց Պարսից երկրում: Այնտեղ նա Միհրներսէհին եւ Յազկերտին գրգռեց ընդդէմ Վասակի ու բովանդակ Հայոց աշխարհի եւ իր չար կամքը կատարելու համար ընդունեց նաեւ մոգութիւնը:
Հայոց տնից այս մատնութիւնը տեսնելով՝ Յազկերտը խորհուրդ արեց իր իշխանների եւ մոգերի հետ, թէ ինչ միջոցներով կարող են ամբողջ Հայոց ազգին, նաեւ այլ քրիստոնեաներին դարձնել պարսից կրօնին:
Եւ քանի որ այնժամ պարսիկները պատերազմում էին հոների [1] դէմ, մոգերը խորհուրդ տուեցին. «Արքա՛, քեզ համար դիւրին կը լինի կատարել քո կամքը, եթէ ինչինչ հնարքներով քրիստոնեաների առաջնորդներին իրենց զօրքերով հանդերձ հեռացնես իրենց երկրներից: Արդ, հրաման ուղարկիր ամէնքին, որ բոլոր երկրների գլխաւոր իշխաններն իրենց այրուձիով գան եւ քեզ հետ պատերազմեն ընդդէմ հոների: Երբ նրանց անցկացնես Ճորայ պահակ [2] դռան միջով, հոներին յետ վանելուց յետոյ քրիստոնեաներին կ'արգելափակես այնտեղ եւ սպառնալով բնաջնջել իրենց ամբողջ ազգն ու երկիրը՝ կը ստիպես ընդունել արեգակի եւ կրակի պաշտամունքը: Այնժամ հարկադրուած՝ կը հնազանդուեն քեզ, եւ պարսիկ մոգերն ու վերակացուները, սփռուելով նրանց երկրները, բոլորին հեշտութեամբ մոգութեան կը դարձնեն»:
Յազկերտը հաւանեց այս խորհուրդը. հրովարտակ գրեց իր տէրութեան տակ գտնուող բոլոր երկրներին (իր թագաւորութեան չորրորդ տարում՝ 442 թուականին)՝ հայերին, վրացիներին, աղուաններին եւ այլ բոլոր քրիստոնեայ

ազգերին, բոլորին առերես քաղցրաբանութեամբ պատուէր տալով, որպէսզի նրանք զօրավարներով եւ զօրքերով շտապեն Վրկանների Ապար երկիր՝ այնտեղ ձմեռելու եւ ապա իր հետ միասին պատերազմելու ընդդէմ հոների: Եւ որպէսզի հայերը կասկածի տեղիք չունենային, պարսիկ մարզպանի փոխարէն մարզպանութեան պատիւը տուեց Վասակ Սիւնուն՝ ցոյց տալով, թէ անտեղեակ է Վարազվաղանի հետ կապուած խնդիրներին, իսկ Մամիկոնէից քաջ Վարդանին պատուի արժանացրեց՝ յանձնելով Հայոց երկրի ընդհանուր սպարապետութիւնը, եւ յորդորեց անյապաղ գործադրել արքունի հրամանը: Հայերին կասկածելի էր իրենց եւ միւսներին տրուած Յազկերտի պատուէրը, բայց քանի որ յայտնապէս տեղեակ չէին նրա չար մտադրութեան մասին, շտապեցին առաջինը կատարել նրա կամքը, յատկապէս երբ լսեցին, որ յոյները պարսից ուժերից պարտութիւն են կրել: Ուստի հայերն ու այլ քրիստոնեայ ազգերը զօրավարների, իշխանների եւ նախարարների առաջնորդութեամբ ուղարկեցին բազմաթիւ գնդեր՝ քահանաներով, սպասաւորներով եւ Սուրբ Գրքերով հանդերձ, ինչպէս որ քրիստոնեաների սովորութիւնն է:
Երբ Ապար աշխարհում հանդիպեցին Յազկերտին, նա շատ ուրախացաւ եւ առերես մեծ սիրով ընդունեց: Ապա նրանց հետ գնալով հոներին յանդիման՝ շատ պատերազմներ մղեց եւ վտանգի մատնեց հոներին, բայց չկարողանալով նրանց վերջնականապէս նուաճել՝ պատերազմը երկարեց, որի համար Ալանաց դռանը մի ամուր բերդ կառուցեց ու կոչեց «Հոնաց պահակ»: Այնտեղ հիմնեց իր արքունիքը եւ մարդկանց բնակութեան համար քաղաք: Ամէն տարի իւրաքանչիւր երկրից բերում էր նոր զօրքեր՝ հետ ուղարկելով հին զօրքերին, որպէսզի զինուորները չլքէին զօրքը եւ կասկած չունենային իր չար գործերի մասին, իսկ ինքն էլ երբեմն գնում էր Տիզբոն՝ իր թագաւորութեան աթոռանիստ քաղաքը, եւ ապա վերադառնում. այսպէս՝ եօթը տարի, մինչեւ իր թագաւորութեան տասնմէկերորդ տարին:
Այդ ամբողջ ընթացքում անդադար մտածում էր, թէ ինչ հնարքներով քրիստոնեաների զօրքը ենթարկէր իրեն, որի համար նրանց հետ խօսում էր երբեմն սիրով, երբեմն՝ սպառնալիքներով, երբեմն էլ ցոյց էր տալիս, թէ հետամուտ է ճշմարտութեանը: Ասում էր՝ քննենք ու տեսնենք, թէ որն է ճշմարիտ կրօնը, եւ այն էլ կ'ընդունենք, բայց շատ արագ բռնելով չարը՝ գովաբանում էր մոգութիւնը՝ իբրեւ աստուածներ մեծարելով հուրն ու արեգակը: Նա ասում էր՝ ինչպէ՞ս կարող է Քրիստոս Աստուած լինել, եթէ խաչուել է, մեռել եւ թաղուել:
Օրըստօրէ անօրէնն աւելի ու աւելի էր հայհոյում սուրբ հաւատը, որից քրիստոնեաները բորբոքւում էին, բայց ոչ ոք չէր համարձակւում որեւէ բան ասել: Սակայն հայոց կրտսեր նախարարներից մէկը՝ Սրուանձտեան տնից Գարեգին անուամբ, չհանդուրժելով Քրիստոսին ուղղուած անարգանքները, թագաւորին ասաց. «Արքա՛, դու որտեղի՞ց գիտես մեր Տիրոջ մասին, թէ Նա չարչարուել է, խաչուել, մեռել եւ թաղուել»: Յազկերտն ասաց. «Իմ իսկ առջեւ ընթերցել են ձեր մոլորութեան գրքերը»: Այնժամ պատանեակը, լցուելով Սուրբ Հոգով, ասաց. «Ինչո՞ւ միայն մինչեւ այդ տեղն ես ընթերցել տուել: Շարունակել տուր կարդալը եւ կ'իմանաս Նրա յարութեան, շատերին երեւալու, երկինք համբարձուելու, Հօր աջ կողմում նստելու եւ միւս անգամ հրաշալի փառքով գալստեան մասին, երբ պիտի արթնացնի տիեզերքը եւ արդար դատաստանով, ըստ իր գործերի, հատուցի իւրաքանչիւրին»: Թագաւորը ներքուստ խոցոտուեց,

բայց երեսանց ծիծաղելով՝ ասաց. «Այդ ամէնը խաբէութիւն է»: Քրիստոսի քաջ զինուորը պատասխանեց նրան՝ ասելով. «Եթէ արժանահաւատ ես համարում Փրկչի՝ մարմնով չարչարուելը, ապա իրաւացիօրէն առաւել պէտք է հաւատաս Նրա փառաւորութեանը եւ երկրորդ, ահաւոր գալստեանը»: Այնժամ թագաւորն անասելի ցասման ներքոյ հրամայեց կապուած ձեռքերով ու ոտքերով նրան բանտ նետել, ուր էլ նահատակուեց՝ երկու տարի չարչարուելով:
Իր թագաւորութեան տասնմէկերորդ տարում Յազկերտը լիովին յաղթեց հոներին եւ հրամայեց քրիստոնեաներին բռնութեամբ դարձնել պարսից կրօնին, իսկ չենթարկուողներին մատնել մահուան՝ զրկելով իրենց ունեցուածքից: Սակայն նա ոչինչ չշահեց, որովհետեւ հայերը եւ այլ քրիստոնեաները կամաւոր յանձն առան ամէն նեղութիւններ, մահաբեր տանջանքներ, բայց չուրացան Քրիստոսին: Ընկնելով անելանելի դրութեան մէջ՝ Յազկերտը Դենշապուհ անուամբ հարկահաւաք մէկին ուղարկեց Հայոց աշխարհ՝ այնտեղ ժողովրդին ծանր կացութեան մէջ դնելու համար, որպէսզի հարկերից ազատուելու համար ստիպուած հպատակուէին թագաւորի կամքին: Սակայն նրանք սիրով յանձն առան բոլոր հարկերը եւ տեղի չտուեցին կրակապաշտների խօսքերին, որի համար թագաւորը թուղթ գրեց հայերին, ինչպէս նաեւ այլոց, որում գովաբանւում էր պարսկական կրօնը, եւ պարսաււում քրիստոնէութիւնը: Միհրներսեհ հազարապետի կողմից նոյն բովանդակութեամբ նամակ գրեց նաեւ մոգպետը, սակայն բազմաթիւ աղճատումներով:
Հայոց նախարարները եւ եպիսկոպոսները ժողով գումարեցին, ուր քննարկեցին այդ երկու նամակները եւ ծաղրի ենթարկեցին՝ անարգելով նրանց բովանդակութիւնը: Ապա պատասխան նամակ գրեցին թագաւորին եւ հազարապետին՝ ցոյց տալով մոգութեան սնոտի օրէնքի ունայնութիւնը եւ քարոզելով քրիստոնէական հաւատի անսուտ ճշմարտութիւնը: Այնտեղ գրուած էր. «Մենք չե՛նք կարող թողնել մեր Արարչին՝ աստուածների Աստծուն, թագաւորների Թագաւորին եւ տէրերի Տիրոջը ու պաշտել արարածներին, անխօս տարերքներին: Ոչ ոք մեզ չի կարող հեռացնել մեր ճշմարիտ հաւատից, որ ունենք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հանդէպ՝ ո՛չ դեւերը եւ ո՛չ էլ մարդիկ, ո՛չ տանջանքները եւ ո՛չ էլ մահը: Մեր ողջ ունեցուածքը եւ մարմինները ձեր ձեռքի տակ են. ձեզնից՝ տանջանք, մեզնից՝ յանձնառութիւն, քո սուրը եւ մեր պարանոցը: Այսուհետ մի՛ հարցաքննէք մեզ, այլ արէք, ինչ որ կ’ուզէք, որովհետեւ մեր հաւատի ուխտը ոչ թէ մարդու հետ է, ումից կարող ենք խաբուել մանուկների պէս, այլ՝ կենդանի Աստուծոյ հետ, Ումից հնարաւոր չէ երբեւէ հեռանալ»:
Նախարարների եւ եպիսկոպոսների կնիքով գրուած այս պատասխանը հասաւ թագաւորին: Երբ այն ընթերցուեց ատեանի առջեւ, ամօթահար եղան մոգպետն ու հազարապետը եւ ինքը՝ թագաւորը եւս ափ ի բերան մնաց, քանզի լսողներից շատերն սկսեցին իրար մէջ շշնջալ եւ գովել հայերի հաստատակամութիւնը իրենց հաւատի մէջ: Եւ ընդհանրապէս բոլորը զարմացած էին նրանց համարձակ պատասխանի վրայ: Այնժամ անօրէն մոգպետը դրդեց թագաւորին, որպէսզի շտապ պարսից արքունիք կանչի հայոց, վրաց եւ աղուանից նախարարներին եւ բռնութեամբ նրանց երկրպագել տայ արեւին: Հէնց դա էլ ուզում էր լսել Յազկերտը. անմիջապէս հրովարտակ ուղարկեց հայոց գլխաւոր նախարարներին, որոնց ինքը քաջ ճանաչում էր անուն առ անուն՝ հրամայելով նրանց անյապաղ արքունիք գալ:

Ստանալով այս հրամանը՝ նախարարները յայտնապէս հասկացան Յազկերտի չար մտադրութիւնը, բայց քանի որ Յազկերտը նամակի մէջ չէր գրել, թէ ինչո՞ւ է կանչում իրենց, ապստամբութիւն համարեցին չընդունել հրաւէրը: Քաջ գիտէին նաեւ, որ եթէ չգնային, բռնաւորը սրի կը քաշէր պարսից երկրում եւ բանակում գտնուող բոլոր քրիստոնեաներին: Այդ պատճառով լաւ համարեցին գնալ եւ իրենց գործերի ընթացքը Աստծուն յանձնել: Ասացին՝ «Այո՛, գնում ենք, սակայն չենք համաձայնի ուրանալ երկնքի ու երկրի Արարչին: Եւ այս գործը Աստուծոյ ձեռքով է կատարւում, որպէսզի այնժամ մենք ցոյց տանք, թէ ինչպէս Քրիստոսի հետ մի մարմին ենք ու մի հոգի, յիշելով սուրբ առաքեալներին՝ սուրբ եկեղեցու քարոզիչներին, ովքեր մի սիրտ ու մի հոգի ունէին: Թող նրանց բարեխօսութեամբ ահեղ Թագաւորի առաջ մեր պատասխանն ուղղի մեր Փրկիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, եւ մեզ պահի չար գազանի յարձակումից: Աստուած երբէք Իր ձեռքից բաց չի թողնում բարի կամքով միաբանուածներին»: Այսպէս, սուրբ Յովսէփ կաթողիկոսի առաջարկութեամբ երեք՝ Հայոց, Աղուանքի եւ Վրաց երկրների նախարարները միաբան ուխտեցին անսասան մնալ հաւատի մէջ եւ ճանապարհուեցին դէպի Պարսից աշխարհ: Նրանք երեւելի աւագ նախարարներ էին՝ հայոց մարզպան Վասակ Սիւնին, Ներշապուհ Արծրունին, Արտակ Ռշտունին, Գաղիշոյ Խորխոռունին, սպարապետ Վարդան Մամիկոնեանը, Արտակ Մոկացին, Մանեճ Ապահունին, Վահան Ամատունին, Գիւտ Վահեւունին, Շմաւոն Անձեւացին, Վրաց աշխարհից Աշուշայ բդեշխը եւ այլ մեծամեծ այրեր:
Այն օրը, երբ նրանք ներկայացան Յազկերտին, 450 թուականի Սուրբ Զատկի նախընթաց Աւագ Շաբաթ օրն էր: Յազկերտն սկսեց անարգանքներով եւ մռնչալով խօսել. «Նախ եւ առաջ ցանկանում եմ ձեզնից լսել, թէ ինչպէս եմ ընդունել ես ձեզ, եւ ինչպէս էք համարում ձեզ ինձ պատկանելը»: Նրանք միաբան պատասխանեցին. «Առանց մեր պատասխանն իմանալու այդ հրամանիդ տեսութիւնը գիտեն բոլոր արիացիներն ու ոչ արիացիները»: Յազկերտը, կրկնելով իր խօսքը, ասաց. «Դրանք յայտնի են բոլորին, ովքեր իմ իշխանութեան տակ են եւ չեն համարձակւում ընդդիմանալ իմ հրամաններին, բայց ես ցանկանում եմ դա լսել ձեզնից եւ իմանալ ձեր ճանաչողութիւնը. որպէս ի՞նչ էք համարում ինձ, ա՛յդ ասացէք»: Նրան պատասխանեցին. «Մենք քեզ թագաւոր ենք ճանաչում ինչպէս ամէնքի, այնպէս էլ մեզ վրայ: Աստուծոյ նմանութեամբ իրաւունք ունես սպանելու եւ կեանք տալու ամէն մէկին, ով քո թագաւորութեան ներքոյ է»:
Յազկերտը, լսելով այս պատասխանը, ասաց. «Ձեր այս պատասխանը շատ հեռու է այն նամակի բովանդակութիւնից, որ ուղարկել էիք, քանի որ նրանում յայտնել էիք, թէ կան բաներ, ըստ որոնց՝ առանց ընդդիմանալու ծառայում ենք քեզ ու քո հրամաններին, բայց կայ այլ բան, որը չպէտք է դու հրամայես, եւ ոչ էլ մենք կարող ենք հնազանդուել ու յանձն առնել: Մեր թագաւորութեան առաջին հրամանն է՝ ընդունել մեր օրէնքները, որով կը ճանաչուի մեր իշխանութիւնը ձեզ վրայ, եւ ձեր ծառայութիւնը՝ մեզ: Եթէ յանձն առնէք մեր այդ կամքը, մեծամեծ պարգեւներով կ'արձակուէք ձեր երկիրը, իսկ եթէ յամառէք, դուք՝ Հայք, Վիրք եւ Աղուանք, ապա ոչինչ կը համարեմ ձեր վաստակները եւ ազգովին կ'ոչնչացնեմ ձեզ՝ ձեր կանանցով ու որդիներով հանդերձ՝ ջնջելով ձեր յիշատակը երկրի երեսից»:

Երեք երկրների մեծամեծ այրերը պարսից թագաւորից լսեցին պատուի, խոստումների եւ մահուան սպառնալիքներով լի այս խօսքերը եւ մի պահ լռեցին: Ապա աներկիւղ եւ քաջասիրտ առաջ եկաւ Մամիկոնէից տէր եւ հայոց սպարապետ Վարդանը եւ ողջ բազմութեան առջեւ պատասխանեց Յազկերտին. «Այստեղ են մեր երեք երկրների շատ իշխաններ, ովքեր աւագ են ինձնից թէ՛ իշխանութեամբ, թէ՛ տարիքով, եւ կան, որ կրտսեր են: Քա՛ջ գիտէք, որ այն վաստակն ու հպատակութիւնը, որ ծառաները պարտաւոր են ցոյց տալ իրենց տէրերին ու թագաւորին, ինչպէս արել է իւրաքանչիւրս, եւ կարիք չկայ, որ ես կամ մեզնից որեւէ մէկն ասի այդ մասին: Այժմ էլ պատրաստ ենք դարձեալ ծառայել ձեզ առաջուայ պէս, եւ եթէ կարելի է՝ առաւել եւս: Եթէ հնար լինէր, իմ անձը շատ անձեր կը դարձնէի՝ բոլոր ուժերով եւ հնազանդութեամբ, կեանքովս եւ իմ տան ամբողջ ունեցուածքով ծառայելու արեաց տիրոջը՝ որպէս ձեր հաւատարիմ ծառայ: Բայց երկիւղի պատճառով թողնել այն օրէնքները, որ մանկուց ուսանել եմ Աստծուց, հնարաւոր չէ: Ողորմելի կը լինէի, եթէ ուրանայի անգամ մարդուց ուսանած ճշմարիտ վարդապետութիւնը, էլ ուր մնաց, որ յանուն սնոտի փառքի եւ մարդկային երկիւղից ուրանամ այն օրէնքները, որ ընդունել եմ Աստուծոյ բերանից եւ սովորել: Քա՛ւ լիցի: Սա՛ է իմ պատասխանը. կ'ուզենամ մեռնել, քան թէ ուրանալ եւ ապրել առանց Աստուծոյ: Իսկ մեզնից նրանք, որ կանգնած են ձեր առջեւ եւ քրիստոնեաներ են, թող իրենք պատասխանեն իրենց անձանց համար»:
Այնժամ զօրացան միւս նախարարները եւ յայտնեցին թագաւորին, թէ իրենցից իւրաքանչիւրը առաւել ծառայել է իրեն, քան այլ թագաւորի: «Ապա ինչո՞ւ,- ասացին, - քո բարկութիւնը մեզ վրայ ես թափում: Ի՞նչ վնաս է տուել քեզ մեր քրիստոնէութիւնը: Չէ՞ որ մեր օրէնքի հրամանով հնազանդ ենք ձեզ՝ վտանգելով մեր անձերը պատերազմների մէջ»:
Թագաւորը պատասխանեց. «Վնաս եմ համարում քրիստոնեաներից հաւաքած տուրքերը, եւ անօգուտ են ինձ ձեր ծառայութիւնները, որոնք մատուցւում են առանց մեր աստուածների: Քանզի դուք, մոլորուած տգիտութեամբ, անարգում էք մեր պաշտամունքը, ոչնչացնում կրակը՝ անշէջ չպահելով, ապականում էք հողը՝ թաղելով մեռելներին: Ուրեմն, եթէ կամենում էք ապրել եւ մնալ ձեր իշխանութեան մէջ, եկէք վաղը՝ սքանչելի արեւի ծագման ժամին, եւ երկրպագէք նրան: Ապա թէ ոչ՝ ձեզ կ'ենթարկեմ ամէն տեսակ տանջանքների, մինչեւ որ առանց կամենալու կամ կամաւոր կատարէք իմ հրամանները»:
Այս լսելով՝ նախարարներն աղաղակեցին ատեանի առջեւ. «Արքա՛յ, մի՛ խօսիր այդ մասին, որովհետեւ Եկեղեցին մարդու շինածը չէ եւ ո՛չ էլ արեգակի տուածը: Այն անշարժ վէմի վրայ հաստատուն սիւն է՝ հիմնուած Աստուծոյ զօրութեամբ, որը չեն կարող շարժել ոչ երկիրը եւ ոչ էլ երկինքը, ուր մնաց թէ մահկանացու մարդը, որ յոխորտում է՝ նրան յաղթելու: Ուստի արա՛, ինչ կամենում ես, մենք պատրաստ ենք ամէն տեսակ նեղութիւնների եւ անգամ մահուան»:
Յազկերտը լցուեց դառնութեամբ, սաստիկ սպառնալիքով երեք-չորս անգամ երդուեց արեգակի անունով եւ ասաց. «Իմացա՛ծ եղէք, որ եթէ չենթարկուէք իմ կամքին, ապա ձեզ եւ բոլոր քրիստոնեաներին, որ կան բանակում, իբրեւ անարգ գերիներ, կ'ուղարկեմ դէպի Սագաստանի [redacted]: քարքարոտ վայրերը, որպէսզի ձեզանից շատերը ճանապարհին կոտորուեն, միւսներն էլ բանտարկուեն: Ձեր երկիր անհամար զօրք կ'ուղարկեմ փղերով հանդերձ՝ ոտնակոխ անելու եւ ոչնչացնելու բոլոր հակառակուողներին: Ձեր բոլոր ընտանիքներին եւ

որդիներին կ’աքսորեմ Խուժաստան, կը քանդեմ ձեր բոլոր եկեղեցիներն ու վկայարանները, կ’աւերեմ ձեր ամբողջ երկիրը, իսկ մնացածներին բռնութեամբ կը դարձնեմ մեր պաշտամունքին»: Այս ասելով՝ հրամայեց անարգանքներով հեռացնել նրանց ատեանից եւ դահճապետին հրահանգեց նրանց առանց կապանքների պահել իրենց իջեւաններում:
Նախարարներն ընկան վարանումների մէջ, որովհետեւ նրանց առջեւ դրուեց ողջ ազգի հոգու եւ մարմնի կորստեան վտանգը: Եւ խորհելու ժամանակ չկար, եւ ոչ էլ՝ փախչելու հնար, որովհետեւ արդէն երեկոյ էր, իսկ հրամանն առաւօտեան պիտի կատարուէր: Ջանացին միջնորդ բռնել պարսիկ իշխաններին՝ մեծ նուէրներ տալու խոստումով, բայց ապարդիւն, իսկ գիշերն անց կացրին ողբով, տրտմութեամբ եւ առ Աստուած ուղղուած արտասուախառն աղօթքներով:
Առաւօտ կանուխ թագաւորը կանչեց նրանց եւ դարձեալ ողոքելով ու սպառնալիքներով ստիպեց պատրաստ լինել երկրպագելու արեւին: Եւ երբ մերժեցին, դարձեալ հրամայեց, որ նրանց մի տեղում արգելափակեն եւ խիստ հսկեն, որ չփախչեն: Հրամայեց պատրաստել մի գունդ, որի հսկողութեամբ պէտք է վտարէին նրանց անդարձ օտարութեան՝ դէպի Սագաստան:
Նախարարների մի մասը յօժարամիտ էր այդ վճռին, սակայն մի մասն էլ վարանումների մէջ էր: Մէկտեղ հաւաքուած, խորհուրդ էին անում, թէ ինչպէս ելք գտնեն այդ իրավիճակից: Թագաւորի ներքին խորհրդակիցներից մէկը գաղտնի կապուած էր Քրիստոսի անքակտելի սիրով, անգամ մկրտուած էր կենդանի Աւազանի մէջ եւ մեծապէս հոգ էր տանում նրանց կեանքը փրկելու համար: Նա խորհուրդ տուեց եւ սովորեցրեց, թէ ինչ հնարք գործեն, որ առժամանակ իրենց փրկեն այդ դրութիւնից: Եւ մի քանի օր խորհրդի շուրջ շատ մտածելուց յետոյ կանգ առան այս մտքի վրայ. «Որեւէ հնար չկայ ազատուելու չար սատանայի լարած այս որոգայթից, քան թէ միառժամանակ յանձն առնենք նրանց հրամանը, գնանք մեր երկրները, բայց այնտեղ ապրենք՝ ծառայելով Քրիստոսի ճշմարիտ հաւատին, որ ստացել ենք սուրբ Գրիգորի եւ նրա որդիների վարդապետութեան շնորհիւ եւ ծնուել աւազանի նորոգութեամբ: Կա՛մ պէտք է սա ընտրենք, կա՛մ էլ թողնելով մեր երկրները՝ կանանցով եւ որդիներով գնանք օտարութեան՝ ապաւինելով կենարար Փրկչի այն խօսքին, թէ՝ «Երբ ձեզ հալածեն մի քաղաքից, փախէք միւսը»: Եւ նաեւ եթէ մտածենք միայն մեր անձանց փրկութեան մասին եւ ընդդիմանանք իշխանի անօրէն հրամաններին, ապա անթիւ տղամարդկանց եւ կանանց, ծերերի եւ մանուկների յաւիտենական կորստեան պատճառ կը դառնանք, քանի որ նրանց այստեղ տեղահանելով՝ բոլորին սերնդէսերունդ կը ծառայեցնեն իրենց անօրէն պաշտամունքներին»:
Այս աններելի խորհուրդը ոմանց հաճոյ թուաց, որի համար Վարդանից գաղտնի լուր ուղարկեցին թագաւորին՝ հաղորդելով. «Թող ների մեզ արքան եւ մի քանի օր ժամանակ տայ, որպէսզի խորհենք եւ միաբանութեամբ հաստատուն պատասխան տանք, քանի որ այդ պատասխանը մեզնից այնպիսի ընտրութիւն է պահանջում, որի առաջ կայ հոգիների փրկութիւն կամ յաւիտենական կորուստ»: Յազկերտն ու նրա աւագանին ընդունեցին այս խօսքերը եւ ժամանակ տուեցին մտածելու եւ ընտրութիւն անելու համար:
Եւ այնժամ պէտք էր տեսնել նախարարների միջեւ տեղի ունեցող վիճաբանութիւնները, որ գաղտնի էին Վարդանից: Վասակ Սիւնու եւ

Խոռխոռունի Գաղեշոյի պէս թուլամիտները խոնարհւում էին կատարելու անօրէն խորհուրդը, երկիւղածները վարանում էին, տգէտները օրինաւոր էին համարում՝ գործել չարը, որ բարին լինի, իսկ տկարացած գիտունները ստիպողաբար հետեւում էին նրանց՝ մտածելով, որ հակառակ դէպքում կը լինի վատթարը: «Եթէ հոգանք միայն մեր փրկութեան մասին,- ասում էին,- ապա կը վտանգենք երկրի փրկութիւնը: Մինչդեռ եթէ հիմա որոշ պատճառաբանութեամբ գայթակղուենք իսկ, երբ գնանք մեր երկիրը, ամուր կը պահենք քրիստոնէութիւնը եւ կը վանենք անօրէններին»:
Այս խորհուրդը յաղթեց բոլորի մտքին, բայց չէին համարձակւում իրենց վճիռը յայտնել հայոց զօրավար, Մամիկոնէից տէր Վարդանին՝ մտածելով, որ նա չի ընդունի այդ խորհուրդը, որովհետեւ տեսնում էին նրա հոգու անսասան հաւատը Քրիստոսի հաստատուն վէմի վրայ: Սակայն չէին կարող նաեւ չյայտնել այդ մասին, քանի որ գիտէին, որ իրենց բոլոր խորհուրդները, պատճառաբանութիւնները եւ քայլերը թերի են ու անկատար:
Եւ նրանք՝ բոլոր նախարարներն ու սեպուհները, միաբանուած եկան Մամիկոնէից տէր ու հայոց զօրավար Վարդանի մօտ: Յայտնելով նրան իրենց միաձայն ընդունած խորհուրդը՝ ասացին. «Լսի՛ր մեզ եւ մտածի՛ր այն բոլոր աղէտների մասին, որ կը պատահեն բիւրաւոր մարդկանց: Մի՛տդ բեր մայրերի հառաչանքները, մանուկների ողբն ու կոծը, ծերերին՝ բռնութեամբ օտարութեան քշելը եւ այլ այսպիսի անտանելի վշտերը, որ կը պատահեն բոլորին: Բայց միայն մարմնի տանջանքներով ու մահուամբ չէ, որ պէտք է կրել այդ ամէնը. չէ՞ որ մեր առջեւ կանգնած է հոգու եւ մարմնի կորուստը: Եւ ոչ թէ լոկ հարեւանցի է հասնելու այս վտանգը, այլ այդ չարիքները յաւիտեան թանձրամած քօղ են գցելու մեր սուրբ եկեղեցիների, ժողովուրդների, կանանց ու զաւակների վրայ: Եթէ միաբանուելով մեր խորհրդին՝ կարողանաս միառժամանակ համաձայնել մեզ հետ, ապա շատերս ողորմութեան կ'արժանանանք. երեք երկրներիս եկեղեցիները չեն աւերուի, եւ մեր բնակիչները չեն քշուի գերութեան, որովհետեւ սուրբ հաւատը չի շարժւում իր հիմքից, իսկ եթէ երերայ, դարձեալ ամուր կը կանգնի, եւ Ամենակալի Աջը նրան կը հաստատի: Եւ իրաւ այդպէս կը լինի, եթէ կարողանաս միառժամանակ «հիւանդանալ» մեզ համար, որպէսզի ամենագութ բժիշկ Բանն Աստուած քեզնով հանդերձ առողջացնի մեզ»:
Երբ հայոց զօրավար, Մամիկոնէից տէր Վարդանը Հայոց, Վրաց եւ Աղուանից նախարարներից լսեց այս ամէնը, ամենեւին յանձն չառաւ համաձայնել ասածներին կամ հաղորդ լինել այդ խորհուրդներին, այլ յոյժ խռովուած բարձրաձայն գոչեց ամէնքի առջեւ՝ ասելով. «Չի՛ լինի, որ ես ստեմ իմ Արարչին եւ չի՛ լինի, որ ես անօրէն ազգի առջեւ ուրանամ Նրան, Ով Իրեն ուրացողներին պիտի ուրանայ Հօր եւ սուրբ հրեշտակների առջեւ: Քա՛ւ լիցի, որ ես, մտածելով կնոջ, որդիների եւ ազգի մասին, անտեսեմ այն խօսքը, որ ասում է. «Ով իր հօրը եւ կամ մօրը Ինձնից աւելի է սիրում, ինձ արժանի չէ. ով իր որդուն կամ դստերն Ինձնից աւելի է սիրում, Ինձ արժանի չէ» 10: Դուք՝ երեք երկրներից եկած տանուտէրե՛ր եւ սեպուհնե՛ր, Քրիստոսի ողորմութեան շնորհիւ լի էք զօրութեամբ եւ ամեն բարիքներով, ճշմարիտ եւ արդար հաւատն էլ ուսանել էք Աստծուց՝ առաքելանման հովիւ, սուրբ նահատակ Գրիգորից եւ նրա զաւակներից: Իւրաքանչիւրդ կարող էք պատասխան տալ ձեր անձի համար, բայց մի՛ ասէք այն, ինչ չեմ կարող լսել, էլ ուր մնաց թէ՝ կատարել»:

Լսելով այս խօսքերը՝ երեք երկրների նախարարները, թէպէտ ընկան անասելի տրտմութեան մէջ, սակայն չհրաժարուեցին իրենց առաջարկից, որովհետեւ մեծ վտանգ էին տեսնում: Մի տեղ ժողովուելով՝ իրենց մօտ կանչեցին Մոկաց Արտակ իշխանին ու խնդրեցին, որ նա շտապ խօսի իրենց սպարապետ եւ Մամիկոնէից տէր Վարդանի հետ: Այս Արտակը համեստ, խելացի եւ քաջ այր էր, եւ Մամիկոնէից տէր Վարդանն առաւել պատուով էր սիրում նրան: Հաւանելով հայոց նախարարների խնդրանքը՝ Մոկաց Արտակ իշխանը յանձն առաւ խօսել նրա հետ: Այդպէս էլ արեց. ըստ իր յանձնառութեան՝ մե՛ղթ առանձին, մե՛ղթ աւագանիով հանդերձ չէր դադարում գիշեր թէ ցերեկ խօսել նրա հետ այդ խնդրի շուրջ եւ աղերսել: Բոլորին նոյնի համար ստիպում եւ յորդորում էր նաեւ վրաց Աշուշայ բդեշխը, ով խելացի եւ խորհրդատու մարդ էր, եւ ում կինն էլ Արծրունեաց տոհմից էր ու Մամիկոնէից մեծ սեպուհ Վարդանի եղբօր քենին: Ամէնից շատ այս Աշուշան էր յորդորում հայոց նախարարներին ու Մոկաց Արտակ իշխանին՝ համոզել Վարդան զօրավարին: Ինքը եւս առանձին խօսում էր նրա հետ՝ աղաչելով եւ խնդրելով, որ եթէ չհամաձայնի, ինչպիսի կորուստ կը պատճառի երեք երկրներին, իսկ եթէ համաձայնի ու յանձն առնի, փրկութիւն կը բերի մարդկանց եւ իր անձի ապաշխարութեան ակնկալութիւն:
Տեսնելով, որ հայոց Վարդան սպարապետի կամքն աներեր է, եւ նա չի ընդունում իրենց խօսքերն ու յորդորները՝ երեք երկրների նախարարներից ու սեպուհներից նրանք, ովքեր առաւել տեղեակ էին Եկեղեցու սուրբ գրքերին, հարկադրուած եղան առաջ բերել Սուրբ Գրքի այն առակները, որոնք պատեհ էին այդ ժամանակի համար: Այս ամէնը նրան յիշեցնում էին որպէս ուսեալ եւ գիտակ մարդու, որովհետեւ Վարդանը յոյժ հմուտ եւ տեղեակ էր վարդապետութեան գրքերին, ուսանած եւ դաստիարակուած էր իր պապի՝ սուրբ Սահակ հայրապետի կողմից:
Եւ երեք երկրների աւագ տանուտէրերն ու սեպուհները բազում աղաչանքներից յետոյ հայոց Վարդան զօրավարի առջեւ բերեցին սուրբ Աւետարանը եւ բոլորը ձեռքները վրան դնելով երդուեցին՝ ասելով. «Եթէ դու միառժամանակ կարողանաս յանձն առնել թագաւորի պայմանները եւ մեզ ազատես որոգայթաղիր թշնամու յարձակումներից, կը լսենք եւ կը կատարենք քո բոլոր ասածները՝ դնելով մեր անձերը սուրբ ուխտի վրայ եւ հեղելով մեր արիւնը ողջ աշխարհի փրկութեան համար: Իսկ եթէ պատահի, որ թողնենք մեր երկիրն ու ամբողջ ունեցուածքը՝ փախչելով օտարութեան, ապա դա կ’անենք կանանցով եւ որդիներով հանդերձ եւ սիրով յանձն կ’առնենք աղքատութիւնն ու մուրացկանութիւնը, միայն թէ ազատուենք այս բարկութիւնից: Ով այս խօսքերից թերանալով ստի այս ուխտին եւ նենգութեամբ հեռանայ սուրբ Աւետարանի վրայ երդումից ու մեր այս միաբանութիւնից, նրա բաժինը առանց ապաշխարութեան եւ թողութեան թող լինի Յուդայի հետ, ով զատուեց սուրբ առաքեալների գնդից: Իսկ այն պահպանութիւնը, որ մեզ հետ միառժամանակ քո համաձայնութեան համար պիտի պարգեւի Քրիստոս Աստուած երեք երկրների բազում հոգիներին, թող լինի մնացեալ ժառանգութիւն՝ ի թողութիւն եւ ի փրկութիւն քո հոգու յաւիտեանս յաւիտենից»:
Երեք երկրների իշխաններից լսելով այս խօսքերը ու տեսնելով բոլորի կողմից ահասարսուռ երդումով կնքուած սուրբ Աւետարանը, որի առաջ ուխտեցին, հայոց զօրավար ու Մամիկոնէից տէր Վարդանն արտասուքներով յանձն առաւ միառժամանակ վիրաւորուել յանուն երեք երկրների:

Այսպէս, բոլորը միաբանուած որոշեցին խաբէութեամբ ու կեղծ ուրացութեամբ կատարել թագաւորի հրամանը եւ գնացին կրակատուն: Պաշտամունքի ժամանակ նրանց մի մասը (ո՛չ բոլորը) առերես խոնարհեցին իրենց գլուխները, իսկ միւս մասն էլ, ցանկանալով աշխարհի փառքը, անեղծ Աստուծոյ փառքը փոխանակեցին աշխարհի եղծանելի ու անցաւոր կեանքի հետ: Այս տեսնելով՝ պարսից թագաւորը, արքունիքի բոլոր մեծամեծերը եւ մոգերը մեծ ուրախութեամբ տեսակտեսակ նուէրներ մատուցեցին իրենց աստուածներին: Մեծ խրախճանք արեցին՝ համարելով, որ այդ օրն առաւել ամուր հաստատուեց իրենց թագաւորութիւնը եւ այնուհետեւ կարող են ապրել խաղաղութեամբ՝ առանց երկիւղելու բոլոր թշնամիներից: Եւ Հայոց, Վրաց եւ Աղուանից տանուտէրերին ու սեպուհներին զարդարեցին՝ թագաւորական հանդերձներ հագցնելով, նաեւ՝ այլեւայլ բազմաթիւ պարգեւներով ու պատիւներով, գիւղերով, ագարակներով, եւ առհասարակ հարստացրին իւրաքանչիւրին, որքան կարողացան: Ապա շտապեցին նրանց ճանապարհել իրենց երկրները: Նրանց հետ ուղարկեցին եօթ հարիւր մոգերի, քրմերի եւ մոգպետերի մի բազմութիւն, ովքեր պէտք է երեք երկրներում բացէին դպրոցներ ու բոլորին սովորեցնէին իրենց մոլար ուսմունքը:
Նրանք յանձն առան իրենց հետ տանել մոգերի բազմութեանը: Այնուհետեւ գնացին հրաժեշտ տալու Յազկերտին եւ արքունիքի աւագանուն: Առաջ եկաւ հայոց զօրավար ու Մամիկոնէից տէր Վարդանը եւ արեաց աւագանու ամբողջ բազմութեան առջեւ խօսեց. «Իմ նախնիների հպատակութիւնն ու վաստակը, որ եղել են այս արքունիքի ու ձեր թագաւորութեան հանդէպ՝ սկսած այն ժամանակից, երբ կարգուած ենք եղել ձեր ծառայութեան ներքոյ, բոլորդ քաջ գիտէք, եւ պէտք չէ, որ ես մէկ առ մէկ տեղեկացնեմ ձեզ, քանի որ դուք աւելի ստոյգ գիտէք, քան ինքս: Ձեր հրամանով ինչ որ արել եմ, տեսել են ձեր զօրագլուխներն ու իմ ընկերները: Այսուհետ կամենում եմ եւ պէտք է ջանամ, որ, այժմուանից սկսած Աստուծոյ օգնականութեամբ իմ ողջ զօրութեամբ անել մի գործ, որ նրա համբաւը ոչ միայն ձեր՝ արեաց առջեւ, այլեւ կայսեր արքունիքում եւ այլ ազգերի մէջ յիշուի յաւիտեան»:
Այս խօսքերը, որ Աստուծոյ շնորհով ասաց Վարդան սպարապետը, հասկացրեց, որ պիտի արիաբար պայքարի պարսիկների դէմ, նոյնիսկ թափի իր արիւնը Աստուծոյ համար՝ դարէդար եւ յաւիտեան բարեհամբաւելով իր նահատակութիւնը վասն Աստուծոյ:
Իսկ շատ քրիստոնեաներ, որ ապրում էին Պարսկաստանում, երբ լսեցին նախարարների ուրացութեան մասին, անպատում սուգի մէջ մտան, քանի որ տեղեակ չէին նրանց գաղտնի որոշման մասին: Նրանցից մէկը արտասուալից աչքերով մօտեցաւ նախարարներին եւ ասաց. «Դուք էիք մեր յոյսը եւ ապաւէնը, դուք էիք մեր խրատատուն եւ ուսուցիչը, դուք էիք մեր պարծանքն ընդդէմ ճշմարտութեան թշնամիների: Արդ, մենք ի՞նչ պիտի լինենք, եթէ դուք ընկաք: Ինչպէ՞ս լքեցիք Աստծուն եւ հնազանդուեցիք դեւերին, եւ ինչպէ՞ս կոյրերի հետ դուք էլ կուրացաք: Գիտէ՞ք արդեօք, որ երկինքն ու երկիրը սուգ են մտել ձեր կորստեան համար: Եթէ վախեցաք մարդկանցից, ապա ի՞նչ պիտի անէք աստուածասաստ բարկութեան առջեւ: Դուք ոչ միայն ձեր անձանց համար պիտի պատասխան տաք Աստուծոյ դատաստանի առջեւ, այլեւ բազմաթիւ անձանց համար, ովքեր վտանգի ենթարկուեցին ձեր պատճառով»: Իսկ նախարարները արցունքներով թրջում էին իրենց երեսները եւ հեղձամղձուկ

լալիս իրենց հոգիներում, քանզի չէին կարող յայտնել իրենց որոշումը, որ ծածուկ էր պարսիկներից, սակայն դառն էր լսել խօսքեր՝ իբրեւ կատարեալ ուրացողների մասին:
Այնուհետեւ Հայոց, Վրաց եւ Աղուանքի նախարարները մոգերի բազմութեան հետ վերադարձան իրենց երկրները՝ ողջ ճանապարհին բազում անգամներ հաստատելով սուրբ Աւետարանի վրայ տուած նոյն ուխտը: Բաժանուելով նաեւ միմեանցից՝ իւրաքանչիւրը գնաց իր երկիրը, խոստանալով ժամանակին միմեանց յայտնել այն գործերի մասին, որ խոստացան կատարել Աստուծոյ հրամանի համաձայն: Սակայն Յազկերտը վրաց Աշուշայ բդեշխին, Սիւնեաց Վասակ իշխանի երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին, չարձակեց հայոց նախարարների հետ, որովհետեւ զգուշացաւ՝ նայելով առաջիկայ գործերի անորոշութեանը:
Արդ, հայոց տանուտէրերը՝ սեպուհներով հանդերձ, հասան Հայոց աշխարհը: Ողջ էին եւ մեռած, կիսամեռ ու կենդանի: Նրանց սաղմոսերգութեամբ ընդառաջ եկան Քրիստոսի սպասաւորների դասը՝ իրենց հետ բերելով կենսատու Խաչի նշանը, սուրբ եւ առաքելական նահատակ Գրիգորի նշխարները, բայց լսելի էին նաեւ լացի ու գոյժի ձայներ, ողբալից գոչիւններ: Մանուկները փախչում էին հայրերի գրկից՝ նրանց այլափոխուած տեսնելով, իսկ մայրերն արտասւում էին հեծեծանքով: Դրա համար իրենք՝ մանուկներն էլ էին արտասւում, եւ դայեակներից կամ դաստիարակներից ոչ ոք չէր կարողանում լռեցնել նրանց: Այս ամէնը տեսնելով՝ առերես եւ ոչ ճշմարտութեամբ ուրացողները կամենում էին իրենք իրենց սրի քաշել, քանի որ չէին ուզում անգամ մէկ վայրկեան ապրել, որպէսզի չտեսնէին ու չտանէին այս աղէտը: Նրանց չէին կամենում միանալ ո՛չ իրենց կանայք, ո՛չ որդիները, ո՛չ իշխանները, ո՛չ ծառաները եւ ո՛չ էլ սպասաւորները: Սուրբ եպիսկոպոսները՝ պատուական քահանաներով ու Եկեղեցու ուխտով, ծերերով ու մանուկներով եւ ամբողջ ժողովրդի բազմութեամբ, աղերսագին ու բարձրաձայն լալիս էին Աստուծոյ տան մէջ: Նրանց երեսներից արիւն էր հոսում:
Իսկ մոգերը հարկադրում էին կրակը տանել Տիրոջ սուրբ տաճարը, գեղեցկատես վայրերում կառուցել ատրուշաններ եւ փայտ փոխադրող բեռնակիրներ պահել՝ վառ պահելու համար իրենց չաստուծոյ կրակը: Մօտենալով եկեղեցու դռանը՝ մոգպետն անձամբ կամեցաւ բացել այն՝ ըստ արքունի հրամանի: Այնժամ սուրբ Ղեւոնդը եկեղեցու միաբանների հետ քաջաբար դէմ կանգնեց նրան եւ դուրս արեց: Իսկ երբ աղաղակ բարձրացաւ, հաւաքուեցին քրիստոնեաները՝ տղամարդիկ եւ կանայք, յարձակուեցին անհաւատների վրայ, քարերով ու փայտերով հարուածեցին մոգպետին ու մոգերին՝ փախուստի մատնելով նրանց: Երբ լուրը տարածուեց, վրայ հասան նաեւ այլ բնակիչներ՝ կաթողիկոսի, եպիսկոպոսների եւ քահանաների առաջնորդութեամբ: Նրանց միացան նաեւ այն քահանաներն ու ժողովուրդը, ովքեր բանակի մէջ էին: Նրանք տեղեակ էին նախարարների գաղտնի որոշման մասին, որը յայտնեցին կաթողիկոսին եւ նրա հետ եղողներին:
Նրանք կանչեցին Վարդանին: Սպարապետը եկաւ, արցունքով ընկաւ կաթողիկոսի եւ եպիսկոպոսների առջեւ, խոստովանեց իր եւ ընկերների արտաքուստ ուրացութիւնը, ամէն բան պատմեց ստուգապէս եւ վերադարձաւ բանակ:

Մոգպետը, տեսնելով Հայոց հաստատակամութիւնը, հասկացաւ, որ անհնար է նրանց ստիպելով մոգութեան դարձնել, սկսեց խորհրդակցել Հայոց մարզպանի՝ Վասակ Սիւնու հետ եւ ասել. «Պիտի գրեմ թագաւորին, որ ձեռք վերցնի այսպիսի առաջարկութիւնից, որովհետեւ եթէ աստուածներն իրենք էլ մեզ օգնութեան գան, հնարաւոր չէ, որ Հայաստանում հաստատութիւն գտնի մոգական կրօնը: Այստեղ մարդիկ ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից են երկիւղում եւ ո՛չ հարստութեանն են բանի տեղ դնում: Եւ վերջապէս, որն էլ չարիքներից ամենավատն է, մահը գերադասում են կեանքից: Ո՞վ կարող է նրանց դիմադրել»:
Եւ մոգպետը պատմեց, թէ ինչպէս արքայից արքայ Շապուհի օրօք պարսիկները ջանացին ջնջել քրիստոնէութիւնը Պարսկաստանից: Շատերին նահատակեցին, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետեւ, որքան շատանում էին հալածանքները, այնքան բազմանում էին հաւատացեալները: «Եւ դու, որ գիտէիր քո ազգի այս անդառնալի միտքը, ինչո՞ւ համարձակ չասացիր թագաւորի առջեւ, թէ անհնար է, որ կատարուի իր հրամանը: Դո՛ւ, որ այս աշխարհի մարզպանն ես, պարտաւոր ես հոգ տանել, գրել եւ ցոյց տալ արքունիքին սրանց միաբան ուժը, թէ ինչպէս աներկիւղ արհամարհեցին արքունի հրամանը: Եւ եթէ մենք չշտապէինք ու չփախչէինք, մեզնից ոչ մէկին ողջ չէին թողնի: Ինչո՞ւ այդ ամէնը չասացիր թագաւորին, քանի որ նախարարներից մեծը դու էիր, եւ այս ամբողջ երկիրը քեզ էր յանձնուած որպէս մարզպանի: Դու իմաստուն էիր եւ ես այդ գիտէի, բայց այս բանն իմաստութեամբ չարիր: Եթէ այդպէս չէ, ապա յայտնի է, որ դու էլ նրանց համամիտ ես, եւ նրանք քո խորհրդով բերին այս դէպքերը իմ ու զօրքի գլխին»:
Իսկ անօրէն Վասակը, որ արդէն արհամարհում էր սուրբ հաւատը եւ սրտանց ընդունել էր պարսկական կրօնը, յոյս ունէր ուրացութեամբ հասնելու մեծամեծ փառքի, անգամ թագաւորելու Հայաստանի վրայ: Նա մոգպետին խորհուրդ տուեց, որ բերել տայ ուրիշ գնդեր եւ հարկադրի քրիստոնեաներին կատարել արքունի հրամանը, սակայն մոգպետը չհամաձայնեց: Այնժամ Վասակը մոգպետին առաջարկեց առժամանակ դադար առնել, իսկ ինքը որոշեց տարբեր ձեւերով ի կատար ածել թագաւորական հրամանը:
Այնուհետեւ սկսեց այս ու այնտեղ բոլորին յորդորել, որ թոյլ տան մոգերը որոշ տեղերում ժամանակաւոր կատարեն իրենց պաշտամունքները եւ ապա «թագաւորի կամքը կատարելով,- ասաց,- կը հեռացնեմ նրանց, եւ մենք այնուհետեւ ազատօրէն կը պաշտենք քրիստոնէութիւնը»: Անօրէնի հրապոյրները լսելի եղան, որովհետեւ նա շատ խորամանկ էր եւ բարեպաշտի համբաւ ունէր: Նրան լսողները կարծում էին, թէ նա իր բլոր ասածները ողջամտութեամբ կ'անէր:
Նման հնարքներով սկսեց քիչ-քիչ պղտորել բոլորի միտքը. մոգերին մտցրեց նախարարների տները եւ մեծ-մեծ ռոճիկներ նշանակեց: Կենդանիներ զոհեց եւ ստիպեց մկրտուած մարդկանց, որ ուտեն դրանց մսից եւ երկրպագեն արեւին: Ոմանց կաշառելով ենթարկեց իր չար խորհուրդներին, ոմանց խաբեց գոյքով, ոմանց՝ յորդորական խօսքերով: Շատացրեց սեղանատան մթերքները եւ խրախճանքները ու ամէն ինչ կատարուեց հեթանոսական օրէնքներով: Այսպէս կրակապաշտութիւնն սկսեց տարածուել, իսկ քրիստոնէութիւնը՝ հալածուել, քանզի երբ մոգերը համարձակօրէն մտնում էին քաղաքներ եւ գիւղեր, ի յայտ էին գալիս ստուգապէս ուրացողները: Մինչեւ իսկ Հայոց աւագ իշխաններից

երկուսը՝ Շաւասպ Արծրունին եւ Վնդոյ Դունեցին, կրակատուն բացեցին Դուին քաղաքում, որի քրմապետը եղաւ Վնդոյի որդին՝ Շիրոն:
Տեսնելով որ իր անօրէնութիւնները յաջողութիւն են գտնում, գաղտնի լուր ուղարկեց եւ Պարսկաստանից նոր գունդ բերել տուեց, որպէսզի ապահով լինի ուխտապահ նախարարներից, որոնցից վախենում էր:
Մեծ Վարդան սպարապետը, տեսնելով, որ երկրի կորուստը ներքին թշնամու կողմից է, եւ չկայ մի նախարար, որ համարձակուի վանել պարսիկներին, յոյսը կտրեց իր որոշումն իրագործելուց եւ շտապեց կորստից փրկել իրեն եւ իւրայիններին: Նա իր մօտ կանչեց ամբողջ ընտանիքին, եղբայրներին, իշխաններին եւ առհասարակ ողջ պալատին: Սկսեց խօսել նրանց հետ եւ ասել. «Ես կամաւոր կամ էլ երկիւղից դրդուած չե՛մ ուրացել իմ Արարիչ ու Տէր Յիսուս Քրիստոսին: Քա՛ւ լիցի: Եւ ոչ էլ հեռացել եմ սուրբ Աւետարանից ու հաւատից, որը սովորեցրել, ու իմ մէջ հաստատել է իմ պապը՝ սուրբ Սահակը: Սակայն ձեր բոլորի փրկութեան համար մի փոքր ժամանակ տեղի եմ տուել այն պատճառով, որպէսզի ինձ ձեզ հետ միասին փրկելով՝ ապաշխարեմ ու ապրեմ, քանզի սովորել եմ եւ գիտեմ սուրբ մարգարէների գրուածքները, որոնք ասում են. «Չեմ կամենում մեղաւորի մահը, այլ նրա դարձն ու ապրելը» 12: Եւ՝ «Երբ որ դառնաս ու հեծեծաս, այնժամ կը փրկուես» 13: Արդ, պատճառ ունենալով՝ մի փոքր ժամանակով ուրացել եմ, սակայն այժմ դրա փոխարէն կամենում եմ իսպառ թողնել այն ամէնը, ինչ որ կայ այս կեանքում: Եւ եթէ ձեզնից մէկը կարող է կամակից լինել ինձ՝ արհամարհելով այս աշխարհի սնոտի կեանքը, ձեզ հետ միասին յանձն եմ առնում Քրիստոսի անուան համար ընտրել օտարութեան գնալը»:
Այսպես խօսեց իր տան ու ընտանիքի հետ: Իսկ նրա երանելի եղբայր Հմայեակն ասաց. «Շտապի՛ր կատարել, ինչ որ ուզում ես, եւ մի՛ յապաղիր, որովհետեւ ոչ ոք չի կարող մէկ ժամ անգամ երաշխաւոր լինել իր անձի համար: Իսկ ուրացութիւն անունը հեռո՛ւ վանենք մեզնից եւ, խառնուելով Քրիստոսի հօտին, կամաւոր յանձն առնենք ամէն վիշտ, որ կը հասնի մեզ. լինի սով թէ սուր, օտարութիւն թէ մուրողութիւն եւ կամ թէ՝ մահ: Միայն Նրանո՛վ ապրենք եւ Նրա անուա՛մբ պարծենանք ամէն օր»:
Եւ այսպէս, միաբան արհամարհելով՝ ոչինչ համարեցին այս կեանքի ամէն սնոտի հարստութիւն եւ իրենց հետ միաբանուած պալատով ու ընտանիքով շտապ ճանապարհ ընկան Յունաց իշխանութեան կողմերը: Եկան հասան մի գիւղ, որի անունն էր Արամանեայ, եւ գտնուում էր Բագրեւանդ գաւառում՝ սահմանակից Բասենին ու Տուարծատափին: Կամեցան մի փոքր դադար առնել այդտեղ եւ ապա շարունակել իրենց ճանապարհը:
Վարդան սպարապետի ու իր եղբայրների՝ պալատով ու ազգուտակով հանդերձ Հայոց աշխարհից հեռանալու մասին յայտնեցին Սիւնեաց իշխան Վասակին, ով այդ ժամանակ հայոց մարզպանն էր: Իմացան նաեւ հայոց բոլոր տանուտէրերն ու սեպուհները, ովքեր սրտաբէկ եղան ու սարսափեցին: Ամէնքը, որ նախանձախնդիր էին իրենց անձանց փրկութեան համար, մտածում էին, թէ արդէն կորստեան մատնուեցին, որովհետեւ բոլորը գիտէին, որ առանց այդ տոհմի առաջնորդութեան՝ Հայոց երկրում որեւէ գործ գլուխ չի գալիս: Սիւնեաց Վասակ իշխանը խորհուրդ արեց հայոց բոլոր տանուտէրերի ու աւագ սեպուհների հետ եւ բոլորին միաբանելով իր հետ՝ ասաց. «Պէտք է շտապ ընտիր քահանաներ ու մի քանի աւագ տանուտէրեր ուղարկել Վարդան զօրավարի

հետեւից եւ աղաչանքներով նրան այստեղ վերադարձնել, որովհետեւ առանց նրա մեր կամքն ու խորհուրդները չեն իրականանայ»:
Սիւնեաց Վասակ իշխանը նամակ պատրաստեց, այն կնքեց իր մատանիով, հրամայեց, որ նամակներ պատրաստեն նաեւ միւս աւագ տանուտէրերը՝ իրենց իսկ կնիքներով: Բերել տուեց նաեւ ուխտի կնքած Աւետարանը: Պատուական քահանաներից ընտրեցին երանելի Ղեւոնդ երէցին, Նոր քաղաքից երանելի Երեմիա երէցին, Մրենից երանելի Խորէն երէցին, իսկ աւագ տանուտէրերից Արշարունեաց Արշաւիր իշխանին, Դիմաքսենից Հմայեակ իշխանին ու Աբեղենից Գազրիկ իշխանին: Սիւնեաց Վասակ իշխանը, նրանց յանձնելով ամբողջ նամականին ու երդման Աւետարանը, որպէս դեսպաններ ուղարկեց Վարդան սպարապետի հետեւից, ովքեր հասնելով վերոգրեալ Արամանեայ գիւղը՝ գտան նրան ու իր հետ եղողներին: Նրանք մտան երանելի Վարդան սպարապետի, նրա եղբայրներ Հմայեակի ու Համազասպի մօտ եւ յայտնեցին իրենց գալստեան պատճառը: Առաջ բերեցին նաեւ երդման Աւետարանը ու պահեցին երանելի Վարդանի եւ նրա եղբայրների առջեւ: Նրան յանձնեցին Սիւնեաց տէր Վասակի, հայոց միւս իշխանների, եպիսկոպոսների ու սեպուհների նամակները, համառօտ յայտնեցին բոլորի պատգամը եւ ասացին. «Ահաւասիկ դու՝ քո եղբայրներով ու քեզ հետ միաբանուած ընտանիքով հանդերձ, հոգացել էք ձեր փրկութեան համար, իսկ մենք բոլորս մատնւում ենք յաւիտենական կորստեան, որովհետեւ առանց ձեզ չենք կարող փրկուել ու ապրել: Արդ, ինչպէս որ հոգ էք տանում ձեզ համար, այնպէս էլ մի՛ թողէք, որ կորստեան մատնուեն բազմաթիւ հոգիներ: Այստեղ ենք շատերս, որ ձեր նոյն ազգից եւ արիւնից ենք, մեզ էլ արժանացրէք պսակուել Քրիստոսից, ինչպէս որ ջանում էք ձեզ համար»:
Հայոց սուրբ սպարապետ Վարդանը պատասխանեց նրանց. «Ես, իմ եղբայրները եւ իմ ընտանիքը նախընտրել ենք ամենավսեմը՝ հոգիների փրկութիւնը, որովհետեւ սովորել ենք ու գիտենք հաստատուն ու անփոփոխելի խօսքը, որին հաւատում ենք անսասան, եւ որն էլ ասում է. «Ի՞նչ օգուտ կ’ունենայ մարդ, եթէ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի: Կամ՝ մարդ իր անձի փոխարէն ի՞նչ փրկանք պիտի տայ» 14: Մենք փնտռում ենք ոչ միայն մեր հոգիների օգուտը, այլեւ ուրախանում ենք ուրիշների փրկութեամբ: Թող ոչ ոք չկարծի, թէ մենք փախել ենք սրից, որից մեր տոհմի մէջ չի վախեցել ոչ ոք՝ ոչ մի ժամանակ: Իսկ թէ իր անձը դրած այս տոհմը ինչպէս է ընկերոջ շահը բարձր դասել սեփական շահից, գրուած պատմութիւններից ու աւազներից քաջ գիտեն բոլորը: Մենք եկել ենք այստեղ ձեր նենգ խաբէութեան պատճառով, որ միշտ գործել էք մեր նախնիների հանդէպ: Դուք միշտ մեզ նեղութեան էք մատնել, եւ միշտ ձեզ հեռու պահել, եւ միայն մեր տոհմին են վիճակուել մեծամեծ վշտերն ու մահերը: Սակայն մեզնից ոչ ոք դէմ չի կանգնած Աւետարանի սուրբ եւ երկնաւոր հրաւէրին: Քա՛ւ լիցի: Միամտութեամբ էք վարւում, թէ երկմտութեամբ՝ դուք գիտէք, բայց սուրբ Աւետարանը ճանաչում է բոլորին եւ իւրաքանչիւրին դատում է ըստ իր գործերի»:
Ապա սուրբ սպարապետը, չկարողանալով ընդդիմանալ նրանց խնդրանքին. յօգուտ համօրէն երկրի իր երանելի եղբայրների ու սիրելիների կամակցութեամբ այնտեղից դարձաւ իր ընկերների մօտ՝ հայոց բանակ՝ որոշելով իր կեանքը դնել իր անձի եւ համայն ազգի փրկութեան համար: Գալով՝ նա բոլոր քահանաներին ու սպասաւորներին պատուիրեց իր պալատում առտնին կատարել բոլոր

ժամակարգութիւնները: Նա չէր մտածում յաղթական անուն թողնել, այլ տենչում էր բաղձալի նահատակութեամբ հեղել իր արիւնը Եկեղեցու սուրբ ուխտի համար:
Մի օր, երբ նախարարները Վարդանի մօտ ժողով էին գումարել, Ճահապաւանից եւ Վաղարշապատից եկան եպիսկոպոսներ կաթողիկոսի հետ եւ բողոքեցին՝ ասելով. «Մինչեւ ե՞րբ պիտի լռէք: Ահա մեր երկիրը կործանւում է հեթանոսութեամբ: Ահա նոր անօրէնութիւններ տեսանք. մոգերի եւ պարսիկ իշխանների կանայք Վասակի հրամանով պատռեցին հաւատացեալ կանանց հագուստները եւ մարեցին եկեղեցիների կանթեղները: Արդ, եթէ դուք կամակից էք այս ամէնին, նախ մեզ այստեղ սպանէք, եւ ապա արէք, ինչ որ կ'ուզէք»:
Երբ լսողները վախեցան, ոտքի կանգնեց քաջ Վարդանը եւ բոլորին խրախուսելով՝ ասաց. «Էլ ո՞ւմ էք սպասում, քաջե՛ր: Ժամն է, որ արթնանանք քնից եւ վրէժ լուծենք ճշմարտութեան թշնամիներից»: Եւ տեղում ուխտեցին ցմահ պատերազմել սուրբ հաւատի համար եւ կրակապաշտներին երկրից վտարել: Իրենց ուխտը հաստատեցին Աւետարանով եւ Վարդանին դարձեալ իրենց գլուխ եւ առաջնորդ ընտրեցին: Որոշեցին Վասակից գաղտնի զօրք հաւաքել եւ յունիս ամսին պատերազմել:
Սակայն Ոստան գիւղից Զանդազան անունով մէկը, ով մի ժանտ սերմ էր՝ անօրէնութեան որդի, եւ իր կեանքում բազում չար գործեր էր արել, լսեց նախարարների որոշման մասին եւ շտապ յայտնեց իր նմանակից Վասակին: Հայոց աւագ նախարարները, իմանալով այս մասին, բռնեցին նրան Արծակ կոչուած գիւղում, կապուած տարան Բագրեւանդ գաւառի Բերդկունք գիւղ եւ ոչ շատ օրեր անց, ինչպէս որ արժանի էր, հրապարակաւ քարկոծելով սպանեցին:
Սակայն պատրաստուող ապստամբութեան մասին լուրը գաղտնի հասաւ արքունիք: Ուրացող Վասակի գործակցութեամբ մոգպետը եւ պարսից զօրավարները իրենց ստուար զօրքերը շտապ հաւաքեցին Բագրեւանդում: Հայոց նախարարները որոշուած օրը հասան Ծաղկոտն [15] կոչուած գաւառը, այն ամուր բերդի մօտ, որին Անգղ էին կոչում եւ մեծ բանակ կազմեցին: Նրանց հետ էր Յովսէփ կաթողիկոսը՝ եպիսկոպոսներով եւ քահանաներով հանդերձ: Եւ զօրքը երեք մասի բաժանուելով՝ յարձակուեցին պարսիկների վրայ, նրանց պարտութեան մատնեցին եւ նրանց նշանաւոր զինուորականներին ձերբակալելով՝ բանտարկեցին ամուր բերդերում:
Բռնեցին նաեւ անօրէն Վասակին: Եւ մինչ մտածում էին նրան սպանել կամ կալանաւորել, նա իր կեղծապատիր սովորութեամբ աղաչեց նրանց, որ խնայեն իրեն իբրեւ մեղաւոր եւ երդուեց Աւետարանով, որ հաստատուն կը մնայ սուրբ հաւատի մէջ, կը կրի բոլոր ապաշխարութիւնները, «միայն թէ,- ասաց,- ինձ մի՛ հեռացրէք ձեր միաբանութիւնից»: Եւ վստահելով նրա երդմանը՝ Աստծուն յանձնեցին նրա դատաստանը եւ նրան իրենց մէջ առան՝ թէեւ միշտ կասկածանքով:
Սրանից յետոյ եպիսկոպոսները եւ նախարարները մեծ ժողով գումարեցին Սպարապետի մօտ եւ ասացին. «Մենք պիտի հոգանք միայն սուրբ հաւատի պաշտպանութեան համար՝ ջնջելով մոգութեան հետքերը եւ ազատօրեն Քրիստոս պաշտելով: Եթէ այս բանի համար պէտք լինի մեռնել սրով կամ պատերազմելով, պատրաստ ենք զոհել մեր անձերը մեր Փրկչի սիրոյ եւ Նրա Եկեղեցու համար»: Լսելով այս ամէնը՝ Վասակը հանդէս էր գալիս բոլորից աւելի նախանձախնդիր: Նա հրապարակաւ դարձեալ երդուեց սուրբ Աւետարանով:

Երդուեցին ու իրենց երդումը հաստատեցին բոլոր նախարարները, տանուտէրերը եւ սեպուհները:
Ապա եպիսկոպոսները միաձայնութեամբ գրեցին ուղղափառ հաւատի խոստովանութիւնը՝ դաւանելով մի Աստուածութեանը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, սուրբ Կոյսից Միածնի մարդեղութեանը մեր փրկութեան համար: Վերջում աւելացրին նաեւ իրենց ուրացութեան յանցանքի խոստովանութիւնը՝ աղաչելով, որ Տէրն ընդունի իրենց ապաշխարութիւնը՝ որպէս անառակ որդիներ:
Վերջում շատ նզովքներ կարդացին նրանց վրայ, ովքեր ուխտազանց կը լինեն եւ կը հեռանան ուխտի միաբանութիւնից: Այս նամակը կնքեցին բոլորը՝ սկսած Վասակից մինչեւ վերջին իշխանը, դրեցին սուրբ Աւետարանի մէջ եւ յանձնեցին սուրբ Յովսէփ կաթողիկոսին:
Այնժամ բոլորը միաձայն ասացին. «Պատրաստ ենք սուրբ Եկեղեցու համար հալածանքների, նեղութիւնների եւ մահուան ու նորոգուել մեր արեամբ, որովհետեւ մեր հայրը սուրբ Աւետարանն է, եւ մայրը՝ սուր Եկեղեցին»: Եւ այսպէս նոյն հոգով վառուած՝ իրենց կեանքը մահուան մէջ էին գտնում, իսկ Աստուծոյ համար մահը՝ կեանք համարում: Ամենուր ամէնքն ասում էին. «Միայն քաջութեամբ մեռնենք, միայն մեր հոգիները ժառանգենք, որ մեր մէջ կենդանի լինի Քրիստոս»: Այնուհետեւ ձեռնամուխ եղան երկիրը պարսից հեթանոսական կրօնի գարշութիւններից մաքրելու գործին:
Վարդանը հզօր գնդով նախ յարձակուեց Դուին քաղաքի վրայ, կործանեց Շաւասպ Արծրունու եւ պարսիկ Մուշկանի կողմից շինուած մեհեանը: Շաւասպին սպանեց, իսկ Մուշկանին փախուստի մատնեց: Վնդոյ Դունեցուն այրեց իր կրակարանի մէջ եւ նրա որդուն՝ Շիրոյին, որ քրմապետ էր, փայտից կախեց: Կրակատունը քանդեց եւ մեհեանի տեղում փայտէ եկեղեցի կանգնեցրեց: Նոյնն արեցին բոլոր քաղաքներում եւ գիւղերում, որտեղ կային կրակատներ: Մոգերից կամ նրանց պաշտօնեաներից ոմանց կոտորեցին, ոմանց բանտ նետեցին եւ պարսիկների կողմից պղծուած բոլոր վայրերը մաքրեցին: Այդպէս երկրից մաքրեցին հեթանոսական բոլոր հետքերը: Եւ որպէսզի յայտնի լինէր, որ Աստուած էր առաջնորդում նրանց, սուրբ Խաչի զօրութեամբ բազմաթիւ հրաշքներ կատարուեցին, որը տեսնելով՝ շատ անհաւատներ հաւատացին Քրիստոսին:
Եւ մինչ Հայոց երկրում կատարւում էին այս քաջագործութիւնները, ահա եկան-հասան Աղուանքի հազարապետը եւ նրանց կաթողիկոսը, ովքեր օգնութիւն էին հայցում հայերից՝ ասելով. «Յազկերտը երեք հարիւր մոգեր եւ բազմաթիւ զօրք է ուղարկել մեր երկիր՝ մեզ պարսից կրօնին դարձնելու համար»:
Այս գոյժը լսելով՝ հայերն ընկան վարանումների մէջ, որովհետեւ կարեւոր էին համարում օգնել աղուաններին՝ քրիստոնեայ լինելու համար: Սակայն նայելով իրենց երկրի վիճակին, որոշեցին միառժամանակ սուտ խաբէութեամբ յետ պահել նրանց իրենց չար կամքը կատարելուց, թույլ չտան դիպչել իրենց Եկեղեցու սուրբ ուխտին, եւ մի ելք էին փնտռում: Մի կողմից քաջալերեցին աղուաններին՝ խոստանալով մօտ ժամանակներում օգնութեան հասնել, միւս կողմից դիմեցին յոյներին՝ իրենց նիզակակից լինելու համար: Դրա համար մեծ նախարարներից մէկին՝ Ատոմ Գնունուն, եւ երանելի Վարդանի եղբօրը՝ Հմայեակ Մամիկոնեանին, շտապ ուղարկեցին Արեւմտեան երկիրը, որ յայտնեն Արեւելքի չարամիտ թագաւորի այս բոլոր մտադրութիւնները: Իրենց հետ

տարան Թէոդոս ինքնակալին ուղղուած մի աղերսագիր՝ գրուած Յովսէփ կաթողիկոսի, բոլոր եպիսկոպոսների եւ նախարարների կողմից, որով յանուն քրիստոնէական սիրոյ՝ օգնութիւն էին խնդրում:
Եւ մինչ երանելի Թէոդոսը հարցուփորձ էր անում ամբողջ Սինկղիտոսին 16 եւ կամենում էր գործի համար խաղաղութեամբ մի հնար գտնել ու մեծ յօժարութեամբ հոգ էր տանում, որ Արեւելքի եկեղեցիները չյափշտակուեն անօրէն հեթանոսների կողմից, այդ նոյն ժամանակ շուտով հասաւ նրա կեանքի վախճանը եւ օգնութեան գործը չարաչար խափանուեց:
Եւ նրա փոխարէն թագաւորեց Մարկիանոս կայսրը: Սա լաւ էր համարում դաշինք պահել հեթանոսների հետ մարմնաւոր խաղաղութեան համար, քան թէ քրիստոնէութեան ուխտին պատերազմակից լինել: Այդ պատճառով շտապ դեսպաններ ուղարկեց Պարսից թագաւորի մօտ եւ ամուր դաշն կնքեց նրա հետ՝ օգնութիւն ցոյց չտալ Հայոց զօրքին ո՛չ զօրքով, ո՛չ զէնքով ու ամէն տեսակ օժանդակութեամբ:
Այնժամ կտրուեց հայերի յոյսը մարդկային օգութիւնից, եւ սուրբ եպիսկոպոսները դարձեալ սկսեցին քաջալերել իրենց եւ Հայոց զօրքին: Թէպէտ տեսնում էին իրենց սակաւութիւնը եւ երկու թագաւորների միաբանութիւնը, բայց եւ այնպէս չէին վհատւում, այլ խիզախում էին եւ ասում. «Պատրաստ ենք սպանելու եւ մեռնելու: Աստուծոյ համար դիւրին է քիչ մարդկանցով շատերի գործ կատարել, եւ նուաստների միջոցով՝ մեծամեծ բաներ անել»:
Թէպէտ թագաւոր չունէին իրենց առաջնորդ, եւ ոչ էլ դրսից որեւէ օգնական օտարներից, բայց բոլոր նախարարներն իրենց առաքինութեամբ եւ սուրբ վարդապետների մխիթարութեամբ իրենց զօրքի հետ միասին ամէն մէկն իր տնից շտապ եկան, մի տեղ հաւաքուեցին, եւ ամբողջ զօրքը երեք գնդի բաժանեցին:
Առաջին գունդը տուեցին Ներշապուհ Արծրունուն եւ ուղարկեցին պահպանելու երկիրը Ատրպատական աշխարհի 17 սահմաններին մօտիկ:
Երկրորդ գունդը տուեցին Հայոց Վարդան զօրավարի ձեռքը, որ անցնի վրաց սահմանից Ճորայ մարզպանի վրայ, որ եկել էր աւերելու Աղուանքի եկեղեցիները: Երանելի Վարդանն իր հետ վերցրել էր հայոց տանուտէրերից նրանց, ովքեր շտապում էին մարտիրոսութեան: Նրանք էին՝ Խորէն Խորխոռունին, Արշաւիր Կամսարականը, Թաթուլ Դիմաքսեանը, Արտակ Պալունին, Վահեւունեաց Գիւտը, Հմայեակ Դիմաքսեանը եւ այլ տանուտէրեր, սեպուհներ եւ շատերը հայոց զօրքից, ովքեր ինքնայօժար փափագում էին վրէժխնդիր լինել յանուն սուրբ Եկեղեցու ուխտի եւ իրենց անձերը մատնել մահուան Քրիստոսի սուրբ եւ ճշմարիտ հաւատի համար: Մտաւ Աստուծոյ տուն՝ երկրպագելու ամենակալ Տէր Աստծուն, առաւ սուրբ Աւետարանը եւ կենսատու խաչի նշանը, համբուրեց եւ անձկութեամբ դրեց աչքերին ու ճակատին: Ջերմեռանդ սիրով նոյնն արեցին նրա հետ եղողները, եւ ապա ճանապարհուեցին:
Իսկ երրորդ գունդը յանձնեցին Սիւնեաց Վասակ իշխանին, ով ներքուստ հեռացած չէր հեթանոսների ուխտից: Նա իր հետ ընտրեց այնպիսի մարդկանց, որոնց հաւատի տկարութիւնը ծանօթ էր իրեն: Դարան մտաւ երկրի բերդերում՝ պատճառ բռնելով, թէ ճեպընթաց պիտի յարձակուի պարսից զօրքի վրայ՝ Աղուանքից նրանց հալածելու համար: Ապա շտապ դեսպաններ ուղարկեց Պարսից Սեբուխտ մարզպանի մօտ, թէ «Ահա քանդեցի Հայոց ուխտի

միաբանութիւնը եւ զօրքը երեք մասի բաժանեցի: Առաջին գունդը հեռացրի Հերի եւ Զարեւանդի կողմերը, երկրորդ գունդը իմ ձեռքի տակ է, որոնց թոյլ չեմ տայ վնաս հասցնել արքունական զօրքին, իսկ երրորդ փոքրաթիւ գունդը Վարդանի հետ Աղուանք ուղարկեցի: Աւելի շատերին ինձ մօտ եմ պահել եւ շատշատերին էլ այս ու այն կողմ ցրել: Համարձակ դո՛ւրս եկ նրա առաջ եւ ամենեւին մի՛ վախենայ նրա դեմ ելնելուց. գիտեմ, որ պարտութիւն պիտի կրեն քո մեծ զօրութեան առաջ»:
Վասակից լսելով այս խրախուսանքները՝ Սեբուխտը ստուգելով համոզուեց, որ Հայոց սպարապետը սակաւաթիւ գնդով գալիս է իր վրայ, այլեւս չմնաց Ճորայ կողմերում, այլ շտապեցին անցնել Կուր կոչուող մեծ գետը եւ հանդիպեց նրանց մինչեւ Աղուանքի Խաղխաղ կոչուած մեծ գիւղը: Իսկ սուրբ Վարդանը, տեսնելով պարսից գնդի անթիւ բազմութիւնը եւ նայելով իրենց, որ խիստ սակաւաթիւ էին, սկսեց խօսել հայոց զօրքի հետ եւ Սուրբ Գրքից յիշեցնել Սամուէլ մարգարէի մօրը, ով ցնծութեամբ երգում էր ու ասում. «Թող հզօրն իր զօրութեամբ չպարծենայ, թող մեծը իր մեծութեամբ չպարծենայ, այլ թէ պարծենալու է, թող Աստուծով պարծենայ» 18, քանի որ ոչինչ է քչով կամ շատով յաղթանակը կամ պարտութիւնը, այլ կարեւոր է Աստուծոյ հրամանը: Այս ասելով՝ երանելի զօրապետ Վարդանը նայեց իր ընկերակիցներին ու ամբողջ գնդին, տեսաւ, թէ նրանք ինչպէս էին զօրացած ու քաջալերուած, եւ փառք տուեց ամէնքի Փրկիչ Տէր Յիսուս Քրիստոսին:
Երբ եկաւ մարտի ժամը, տեսան ըստ կարգի դասաւորուած պարսից գնդին: Վարդան զօրավարն էլ իր գունդը դասաւորեց նրանց դէմ: Այրուձին բաժանեց երեք մասի եւ հրաքանչիւրը յանձնեց զօրագլուխներին. աջ թեւում զօրագլուխ կարգեց Արշարունեաց իշխան Արշաւիր Կամսարականին, ով փեսան էր սուրբ Վարդանի՝ ամուսնացած լինելով նրա դստեր հետ: Նրան նիզակակից տուեց աւագ սեպուհ Մուշին՝ Դիմաքսեան տոհմից: Ձախ թեւը յանձնեց Խորէն Խորխոռունուն՝ նրան զօրավիգ դարձնելով Հմայեակ Դիմաքսեանին, ինքն էլ պատրաստուեց յարձակուելու կենտրոնից: Եւ այսպէս, ճակատ կազմած ու ապաւինած Աստծուն՝ անցան յարձակման:
Բոլորից առաջ մարտի նետուեցին Արշաւիր Կամսարականը եւ Դիմաքսեան Մուշ սեպուհը, ովքեր, տեղանքին անծանօթ լինելուց, պատահեցին սաստիկ թանձրախոր ճահճուտի: Արշաւիր Կամսարականն ու Մուշը երիվարների ուժեղ ընթացքի պատճառով տիղմի մէջ ընկան երիվարներով ու խրուեցին: Այդտեղ նահատակութեամբ պսակուեց երանելի սեպուհ Մուշ Դիմաքսեանը Նիխորականից: Իսկ Արշավիր Կամսարականը, իջնելով երիվարից, սպանեց Լփնաց թագաւորի եղբայր Վուրկին: Ապա իր ձին դուրս քաշեց խոր տիղմից, բայց մէկ ոտնամանը թաղուեցմնաց ճահճուտում: Կամսարականը մէկ ոտնամանով, տղմաթաթախ, իր բոլոր զէնքերով թռչնի պէս հեծաւ երիվարը եւ սարսափեցնելով իր թեւի թշնամիներին՝ փախուստի մատնեց: Վարդան սպարապետն իր ընկերակիցների հետ եւ ողջ հայոց գունդը տեսան, թէ ինչպէս նրանց փախուստի մատնելով՝ իրենց առջեւից քշեցին պարսից զօրքի բազմութեանը, որոնց կէսին կոտորեցին իրենց սրերով՝ գետնի վրայ դիաթաւալ անելով, կէսին գետը գցելով՝ խեղդեցին, մնացածներին էլ ոչնչացրին դաշտերում ու թանձրախիտ անտառներում:
Իսկ պարսից աւագանուց ոմանք նաւերով շտապում էին փախչել մեծ գետի այն կողմը: Հայոց Վարդան զօրավարը Արշարունեաց իշխան Արշաւիր

Կամսարականին հրամայեց շտապ նետահարել փախչողներին, իսկ Արշաւիր Կամսարականը, ով միշտ հնազանդութեամբ կատարում էր սուրբ զօրավարի խօսքն ու կամքը, շտապ իրագործեց նրա հրամանը. նետեր արձակեց փախչողների հետեւից, խոցոտեց նաւավարներին ու շատ ուրիշների, ովքեր նաւերի մէջ էին, ու խոր վէրքեր հասցրեց նրանց: Վիրաւորների ընկնելուց կործանւում էին նաւերը: Նաւավարներից ու պարսից գլխաւորներից շատերը, գետնասոյզ լինելով, կորան: Եւ այսպէս, վերին օգնականութիւնից յաղթանակ շահելով՝ նրանք դարձան իրենց բանակը՝ գոհանալով եւ օրհնելով Աստծուն: Զօրքն այդ օրը մնաց տեղում, իսկ յաջորդ օրը շարժուեց, անցաւ Կուր կոչուած մեծ գետով եւ մտաւ աղուանների երկիրը, ուր կոտորեցին պարսից մոգերին եւ մաքրեցին նրանց զոհերից աղտոտուած վայրերը:
Այնտեղ գտնելով պարսպի պահապանին եւ այլ շատ պարսիկ զօրականների՝ բոլորին սրի քաշեցին ու պահակութիւնը յանձնեցին Վահան անունով մի աղուան թագաւորազնի: Հէնց նրան էլ որպէս դեսպան ուղարկեցին հոների մօտ, որպէսզի նրանց համոզի՝ զօրքով միաբանուել իրենց, նրանք էլ յօժարակամ եւ երդումով համաձայնեցին՝ խոստանալով օգնել: Եւ այս բոլոր մարտերում նրանցից ամենեւին ոչ ոք չվիրաւորուեց, բացի մէկ երանելուց, ով նահատակուեց մեծ պատերազմում:
Եւ մինչ կատարւում էր այս ամէնը, դեսպան եկաւ երանելի Վարդան զօրավարի մօտ եւ տրտմութեան գոյժ տուեց՝ ասելով. «Անօրէն Վասակը ստեց Աստուծոյ ուխտին, նենգելով դրժեց Աւետարանի երդումը եւ ապստամբեց ճշմարիտ միաբանութեան դէմ: Նրա մօտ մնացած հայոց աւագանին եւս միացաւ նրան եւ շրջուեց արդարութեան ճանապարհից: Նրանք դեսպան են ուղարկել Պարսկաստան եւ նամակներով դաշինք կապել նրանց հետ: Արձակել են հայոց ամրոցների բերդապահներին եւ նշանակել իրենց մարդկանց: Հաւաքել են դայեակներին, Մամիկոնեան, Կամսարական եւ միւս տանուտէրերի որդիներին եւ պահել Սիւնեաց իշխանութեան ամուր բերդերում՝ հրամայելով խստութեամբ պահպանել ամրոցները: Ապա Վասակը երեխաներին ուղարկել է պարսից թագաւորի մօտ»:
Լսելով աղէտալի այս գործերի մասին, որ արել էին նենգամիտ Սիւնեաց Վասակ իշխանը եւ նրա հետ եղող այլ նախարարները, Վարդան սպարապետը, նրա նախարարները եւ զօրքը չէին կարող մեծապէս չտրտմել: Նրանք, իրենց ու գերութեան մէջ եղող որդիներին յանձնելով ի պահպանութիւն ամենակարող Աստծուն, ասացին. «Ահա ամէնքի Փրկիչ Քրիստոս հեծանոցը 19 ձեռքին սրբում է Իր կալը եւ ընտրում ցորենահատիկները՝ ժողովելու երկնքի շտեմարաններում, իսկ յարդը՝ անխնայ մատնելու անշէջ կրակի բոցերին: Լինե՛նք սրբուած ցորենահատիկներ եւ տենչանքով սպասե՛նք մեր նահատակութեան օրուան: Եթէ արժանանանք սուրբերի դասին, մեր բարի վախճանը մեզ կը պսակի, կը պահպանի մեր որդիներին եւ իւրաքանչիւրին կ’արժանացնի իր տեղին ու իշխանութեանը: Իսկ սատանայի արբանեակները մեծ զղջումով ամօթահար կը լինեն, որովհետեւ Աստուած նրանց կը խայտառակի ե՛ւ այստեղ, ե՛ւ հանդերձեալում»:
Լսելով Վարդանի զօրախմբի արիութեան ու քաջութեան մասին՝ ուրացեալ Վասակը իր հետ եղած իշխանների հետ փախաւ եւ պատսպարուեց Սիւնեաց երկրի ամրոցներում: Իսկ Վարդանի գնդերը, հետապնդելով ուրացողներին, բազմաթիւ գերիներ բերեցին Այրարատեան երկիր եւ սարսափ տարածեցին

բոլոր ուխտանենգների վրայ: Տիրեցին բոլոր ամրոցներին, որոնք բռնագրաւել էր Վասակը, եւ ամբողջ երկիրն առան իրենց տիրապետութեան տակ:
Ապա բոլորը միաբան Աղուանքից գնացին Այրարատեան աշխարհը: Իրենց սովորութեան համաձայն՝ այնտեղ դադար առան ձմռան դառնաշունչ եղանակին եւ կարօտով սպասում էին գարնանը, որպէսզի արժանանային նահատակութեան պսակի օրուան: Քանզի ոչ ոք չէր մտածում յաղթութեան կամ պարտութեան մասին, այլ ծարաւած տենչում էին փրկութեան բաժակին՝ ընդունելու իրենց վախճանը: Բոլոր եպիսկոպոսներն ու երէցները հրաման արձակեցին ժողովրդին՝ ամբողջ Քաղոց ամիսն անցկացնել պահեցողութեամբ եւ աղօթքներով, եւ պատերազմների յաղթութեան տօնը խառնել Քրիստոսի Յայտնութեան սուրբ տօնին:
Եւ Աստուծոյ այս բոլոր այցելութիւնների մասին, որոնք մեծապէս երեւացին Հայոց աշխարհի վրայ, սուրբ եկեղեցիները գրեցին եւ ուղարկեցին Յունաց երկիր, որպէսզի նրանք էլ աղօթեն եւ Աստծուց խնդրեն, որ ինչպէս սկսել են, այնպէս էլ աւարտեն: Իսկ Յազկերտը իմանալով, որ հոռոմները հրաժարուել են քրիստոնեաներին օժանդակել զօրքով եւ որեւէ այլ բանով, գարնան սկզբին պատերազմ յայտարարեց ու իր զօրավարներին անհամար զօրքերով Հայաստան ուղարկեց՝ պատուիրելով կոտորել Հայոց բոլոր քրիստոնեաներին, քանի որ յանձն չառան մոգակրօնութիւնը եւ կոտորեցին մոգերին ու պարսիկներին: Սակայն տեսնելով, որ չի կարող քանդել միաբանուածների հաստատակամութիւնը, այնժամ արձակեց դառնութեամբ լցուած Միհրներսեհ արքունի հազարապետին, որի մէջ սատանան իր զօրութեամբ բոյն էր դրել: Նա շատ արիւնահեղութիւններ էր գործել. նրա ցանկալի կերակուրը սուրբերի անարատ մարմինն էր, իսկ նրա ագահութեան ըմպելիքը՝ անմեղների արիւնը: Չկար մէկը, որ համարձակուէր դուրս գալ նրա խօսքից:
Սա եկաւ Հայաստանի սահմանների մօտ, մտաւ Փայտակարան [20], ուր սփռեց իր ամբողջ զօրքը՝ իր չարահնար մտադրութիւնների համար պատրաստութիւն տեսնելու համար: Իր մօտ կանչեց ուրացող Վասակին եւ նրանից տեղեկութիւններ առաւ Վարդանի եւ նրա զօրքի մասին: Եւ զգուշացաւ միանգամից պատերազմի մէջ մտնել, այլ Վասակին խոստացաւ մեծ պարգեւներ, անգամ Հայաստանի թագաւորութիւնը, եթէ կարողանար պառակտել Հայոց ազգի միասնութիւնը:
Այնժամ Վասակը՝ չարութեան անօթը, գործադրեց իր չարահնար խաբէութիւնները: Նա մոռացաւ սուրբ Աւետարանի քարոզութիւնը, ուրացաւ այն Աւազանը, որից ծնուեց: Անարգեց այն պատուական Մարմինը, որով սրբուեց եւ ոտնահարեց այն կենարար Արիւնը, որով մեղքերի քաւութիւն ստացաւ: Դուրս եկաւ երանելիների դասից եւ շատերին ապստամբեցրեց իր հետ: Չարի անօթ դարձաւ, եւ սատանան նրան լցրեց խորամանկութեամբ: Իր ձեռքն առաւ ինչպէս վահան, եւ հագաւ նրան ինչպէս զրահ՝ դառնալով նրա կամքի կատարեալ զինուորը: Լիովին ապստամբեցրեց իր ամբողջ երկիրը եւ ուրանալ տուեց ոչ միայն աշխարհականների, այլեւ եկեղեցու սուրբ ուխտից շատերին: Նրանք մարդկանց մօտ երդւում էին սուրբ Աւետարանով եւ ասում, թէ թագաւորի կողմից ամէնքին պէտք է շնորհուի քրիստոնէութիւնը: Այսպէս խաբէութիւններով բոլորին համոզեց, թէ Յազկերտը խաղաղութիւն է ցանկանում, իսկ Վարդանը թշնամութիւն է սերմանում: Եւ այնքան բաներ արեց, որ Հայոց տանուտէրերից շատերը խորշեցին Վարդանից: Բացի նրանցից՝

աղուաններն ու վրացիներն էլ հեռացան նրանից, իսկ հոները չուզեցան նիզակակից լինել: Յոյները եւս ձեռնթափ եղան, որովհետեւ գտել էր Վասակ անունով մի մարդու, ով յոյների մօտ ծառայութեան մէջ էր եւ նրա միջոցով չարախօսեց Վարդանի մասին:
Եւ այսպես անօրէն Վասակը շարժեց ու շփոթեց ողջ Հայոց աշխարհը, մինչեւ իսկ բազմաթիւ հարազատ եղբայրների բաժանեց միմեանցից, հօրն ու որդուն միաբան չթողեց եւ խաղաղութեան մէջ խռովութիւն գցեց:
Երբ Միհրներսեհը տեսաւ այս բոլոր չարագործութիւնները, որ արեց Վասակը, շատ ուրախացաւ եւ իր անձից աւելի իր յոյսը նրա վրայ դրեց: Սկսեց պարտաստուել պատերազմի՝ ըստ Վարդանի զօրքի մասին Վասակի հաղորդած տեղեկութիւնների: Պատերազմը վստահուեց Մուշկան Նիսալաւուրտ զօրավարին՝ պատուիրելով նրան հետեւել Վասակի խորհուրդներին:
Ապա Միհրներսեհը գնաց Պարսկաստան՝ Յազկերտի մօտ եւ ուրացող Վասակի բոլոր հնարամտութիւնները թագաւորին ներկայացրեց որպէս իր հնարքները, իսկ Վասակին ամբաստանեց եւ ատելի ցոյց տուեց Յազկերտի աչքին:
Իսկ քաջ Վարդանը, տեսնելով իր աշխարհի երկպառակութիւնը, ամենեւին չվախեցաւ: Ապա ազդարարեց այն ուխտապահներին, ովքեր տօնական օրերին իրենց տներն էին գնացել՝ ասելով. «Մեծ գունդ է գալիս՝ աստուածասէր անձանց բերելով երկնաւոր պսակներ: Արդ, ով ցանկանում է առնել, թող աճապարի, որպէսզի չզրկուի ու չզղջայ: Եւ եթէ մէկն այլ կերպ է խորհում, ինչպէս նրանք, ովքեր խոտորուեցին սատանայի ետեւից, թող լինի, ուր կամենում է, քանզի ոչ ոք պսակ չի ստանայ իր ընկերների հետ, եթէ չտանջուի: Իւրաքանչիւր ոք իր անձով է գանձում թէ՛ երկրաւորը, թէ՛ յաւիտենականը»: Այս լսելով՝ ճշմարտասէրներն ու անմահութիւն սիրողները ցնցուեցին, իրար անցան՝ միմեանց առաջ կտրելով՝ ինչպէս ոչխարի մի հօտ, որը գնում է իր հովուի ետեւից: Սուրբ առաքեալների նմանութեամբ բոլորը մի սիրտ եւ մի հոգի դարձան:
Հրաման տուեց ամբողջ զօրքին հաւաքուել Արտաշատ քաղաքում: Եւ նրանք շտապ եկան-հասան պատերազմի վայրը, իւրաքանչիւրն իր զօրքով ու ամբողջ պատրաստութեամբ, նրանք, ովքեր ի սկզբանէ հաստատուն էին մնացել:
Եւ նրանք էին՝ Ներշապուհ Արծրունին, Խորէն Խորխոռունին, Մոկաց տէր Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Վահեւունեաց Գիւտը, Թաթուլ Դիմաքսեանը, Արշաւիր Արշարունին, Շմաւոն Անձաւացին, Տաճատ Գնթունին, Ատոմ Գնունին, Խոսրով Գաբեղեանը, Կարէն Սահառունին, Հմայեակ Դիմաքսեանը, Գազրիկ Դիմաքսեանը, Ներսեհ Քաջբերունին, Փարսման Մանդակունին, Արսէն Ընձայեցին, Այրուկ Սղկունին, Վրէն Տաշրացին, Ապրսամ Արծրունին, արքունի Շահխոռապետը, Խորայ Սրվանձտեանը՝ հանդերձ այլ իշխաններով, սեպուհներով եւ նիզակակիցներով:
Եւ Քրիստոսի բոլոր զօրականների թիւ՝ հեծեալներով եւ հետեւակներով հանդերձ՝ վաթսունվեց հազար հոգի էին, ովքեր պատրաստ էին մեռնելու Քրիստոսի անուան համար: Ճակատում էր եկեղեցականների բազմութիւնը, որոնց մէջ երեւելի էին Յովսէփ կաթողիկոսը, Ռշտունեաց սուրբ Սահակ եպիսկոպոսը եւ սուրբ Ղեւոնդ Վանանդացի երէցը: Նրանք ոչ թէ մարմնաւոր, այլ հոգեւոր զերագոյն ճակատամարտ էին համարում այս սրբազան պատերազմը՝ յանուն սուրբ հաւատի:

Մուշկան Նիսալաւուրտն իր բազմագունդ զօրքերով եկաւ-հասաւ Զարեւանդ գաւառը: Նրան ընկերացել էր Վասակը՝ իր գործակիցը:
Երանելի Վարդանն Ամատունեաց տոհմից Առանձար անունով սեպուհին երեք հարիւր հեծեալներով ուղարկեց հետախուզելու պարսից զօրքերին եւ եթէ հնար լինէր, դրդէր նրանց փութապէս իրենց արքայութեան պսակներ բերելու, որոնք նրանց ձեռքով պիտի պարգեւի յաւիտենական բարիքներ տուող Քրիստոս Փրկիչը: Աստուծոյ կողմից շնորհուեց այնպէս, որ Առանձարը եւ նրա հետ եղող գունդը տեսնեն պարսից բանակը: Յարձակուելով վերջապահ հզօր մի թեւի վրայ՝ շատերին սրի քաշեցին, իսկ միւսներին փախուստի մատնեցին: Իրենք էլ ողջանդամ վերադառնալով՝ ուրախութեամբ հասան հայոց զօրքին եւ պատմեցին Աստուծոյ զօրութեան մասին, որ իրենց տուեց Փրկիչը:
Երանելի Վարդանը զօրքի հետ միասին գոհացաւ եւ օրհնեց ամենազօր Աստծուն: Յայտնեցին, որ պարսից զօրագլուխներն են Մուշկան Նիւսալաւուրտը ու Դողվճը: Հասկացրին նաեւ, որ կարող են զգուշութեամբ հասնել երկրի միջնամասը: Այս իմանալով՝ երանելի հայոց սպարապետն իր զօրքով շտապեց ընդդէմ նրանց, որպէսզի նախ՝ շուտ հասնէին մարտիրոսութեան ժամին, քանի որ գիշեր թէ ցերեկ անձանձրոյթ աղօթում էին Երկնաւորին արժանի լինելու համար, եւ երկրորդ՝ մտածում էին՝ թերեւս այնտեղ՝ Հեր եւ Զարեւանդ գաւառներում, վերջացնեն պատերազմը, քանի որ պարսից զօրքին ոչ ոք չէր արգելում հասնել Հայոց աշխարհ՝ սպանութեամբ, գերեվարութեամբ եւ աւերելով: Բայց նրանցից աւելի արագ առաջ էր շարժւում պարսից գունդը, որը եկելհասել էր Արտազ գաւառը [21]՝ Աւարայր կոչուած գիւղի մօտ, Տղմուտ դաշտի շրջափակ տեղում, որն ընտրել էին՝ երկիւղելով հայոց զօրքից: Նրանք այդ վայրն իրենց համար ամուր ապաստանի վայր համարեցին եւ այդտեղ վրան զարկելով՝ բանակեցին:
Պենտեկոստէի մեծ տօնի ուրբաթ օրը հայոց զօրքերը եկան հասան այդ նոյն տեղը եւ անպատրաստ գտան պարսից զօրքին. եթէ կամենային, կարող էին մասնաւորապէս վնասել այդ երամակարձակ ծոյլ զինուորներին, բայց սպասեցին, որովհետեւ նահատակութիւն փափագողները չէին մտածում յաղթել, որպէսզի դրանից յետոյ չտեսնէին հոգիները կորստեան մատնողների ապականութիւնները, այլ միշտ եւ անդադար շտապում էին հասնել կոչմանը եւ տենչալի մարտիրոսութեանը:
Այնուհետեւ հաւաքուելով բանակ դրեցին պարսից զօրքերի մօտ եւ սպասեցին մինչեւ օրն աւարտուէր:
Երեկոյեան ժամին, ըստ սովորութեան, աղօթեցին: Սուրբ քահանաներից հրաման ստացան ողջ գիշեր հսկել աղօթքներով եւ խնդրանքներով: Եւ մինչեւ լուսաբաց քահանայից դասը մե՛ղթ սաղմոսերգութեամբ, մե՛ղթ Սուրբ Գրքի խօսքերով քաջալերում էր զօրքին՝ առաւել քաջ եւ անսպառ բարիքների ժառանգորդներ լինելու համար: Իսկ սուրբ Յովսէփն Աստուծոյ երանելի այր Ղեւոնդին պատուիրեց, որ խրատի ու խրախուսի ժողովրդին: Եւ սուրբ Ղեւոնդ երէցը, ամբողջ գիշեր առաքելական վարդապետութեամբ անձանձրոյթ ուսուցանելով, բոլորին զօրացնում էր յորդաբուխ իմաստութեամբ, առակների մեկնութիւններով, հոգեշնորհ վարդապետութեամբ: Նրանք Սուրբ Հոգու շնորհով անդադար քաջալերում էին հայոց աւագանու իւրաքանչիւր անդամին: Ողջ գիշեր խրատուելով եւ զօրանալով հոգեւոր խօսքերով՝ կամաւոր լսողներից իւրաքանչիւրն աներկիւղ զինուեց Սուրբ Հոգու սուսերով: Այդ գիշերը նրանց

թուաց ամենաերկարը: Նրանք տենչում էին տեսնել փրկութեան առաւօտը, որպէսզի հասնելով արբեն Երկնքի Արքայութեան բաժակից:
Հրեշտականման տէր Յովսէփի եւ Ղեւոնդի աստուածաշնորհ խօսքերն ու քարոզները մտահաւանութեամբ լսելով՝ Մամիկոնէից տէր Վարդանն ասաց. «Եկեղեցու սուրբ քահանաների ձեռնադրութեան պատիւը տրուած է ոչ թէ մարդկանց կողմից, այլ Սուրբ Հոգուց բխած շնորհից: Նմանապէս նրանց այս խօսքերը լսողների խորհուրդները դէպի երկինք են դարձնում: Յիշեցնելով մեզ սուրբ Գրիգորի չարչարանքները՝ ողջ գիշեր նրանք յորդորում էին մեզ մասնակցել երկնաւոր սեղանի ընթրիքին: Այստեղ եղողներից շատերս ոչ միայն նրա աշակերտներն ենք, այլեւ հաղորդ ենք նրան ազգակցութեամբ: Հաստատուն մնացէք մեր անսասան Զօրագլխի վրայ, Ով երբէք չի մոռանայ ձեր քաջագործութիւնները: Ո՛վ քաջեր, շտապէ՛ք ժամանել Քրիստոսի հրաւիրեալ հարսանիքին, սուրբ առաքեալների գնդին եւ Քրիստոսի ընթրատուն, Ով, բացելով Արքայութեան դուռը, սպասում է ընդունելու եւ ուրախացնելու ամէնքին: Այդ ուրախութիւնը մշտնջենաւոր է, անանց, անվախճան: Շտապէ՛ք առանց յապաղելու, եւ թող չլինի մէկը, ով Յուդայի նմանութեամբ զատուի առաքելական դասից, եւ ինչպէս այս գիշեր տեսաք նրանց, ովքեր թուլակամ գնացին սատանայի հետեւից: Ես փափագանօք կ'ընդունեմ այն բաժակը, որին տենչում էի վաղուց եւ կը գոչեմ, ինչպէս գրուած է. «Պիտի ըմպեմ փրկութեան բաժակը եւ օրհներգեմ Տիրոջ անունը» 22:
Այս յորդառատ խօսքերն ասաց երանելի Վարդանն իր զօրքի առջեւ: Ապա ձեռքն առնելով Մակաբայեցիների թուղթը՝ բազմութեան առջեւ կարդաց Մակաբայեցիների քաջագործութիւնները ընդդէմ հեթանոսների:
Լուսադէմին սուրբ Յովսէփն ու Ղեւոնդը հրաման տուին կատարել պաշտօնակարգը, որպէսզի դրանով պարենաւորուած ու Հոգու զէնքով բոցավառուած՝ գնային դէպի աստուածաշէն վայելչութեան Դրախտը: Ողջ հայոց զօրքը, հաղորդուելով Քրիստոսի Մարմնի ու Արեան պատուական խորհրդին, շտապում էին առաջիկայ հոգեւոր խնդրի կատարմանը: Նրանք մեծ խնդութեամբ աղաղակեցին. «Թող մեր մահը հաւասարուի արդարների մահուանը, եւ մեր արեան հեղումը՝ մարտիրոսների արեանը: Թող Աստծուն ընդունելի լինի մեր կամաւոր զոհաբերութիւնը եւ Իր եկեղեցին չմատնի հեթանոսների ձեռքը»:
Քանի որ մօտեցել էր արեւագալի ժամը, եւ պարսից գունդն էլ պատրաստւում էր ճակատ կազմել, սուրբ Վարդանը, իր զօրքը բաժանելով չորս թեւի, մէջտեղի գնդին գլխաւոր կարգեց Արծրունեաց իշխանին եւ մարզպետ Միհրշապուհին՝ Արշարունեաց Արշաւիր իշխանի, երանելի Մոկաց Արտակ իշխանի եւ այլ աւագ նախարարների հետ միասին: Աջակողմեան թեւին աւագ կարգեց երանելի Խորէն Մախազին՝ Վանանդի տէր երանելի Թաթուլի, սուրբ այր Ներսեհ Քաջբերունու եւ այլ աւագ նախարարների հետ: Իսկ ձախ թեւը գլխաւորում էր ինքը՝ իր գնդով՝ Առաւեղեան Փափագ իշխանի եւ հայոց այլ իշխան-նախարարների հետ միասին, որովհետեւ այդ կողմից աւելի լաւ էին երեւում Սիւնեաց զօրքի գնդի եւ այլ զօրաւոր այրերի դրօշների նշանները: Իր եղբայր Համազասպին թողեց վերջապահ զինուորների հետ եւ պատուիրեց ոչ ոքի չստիպել, այլ միայն յորդորել խօսքով՝ յանուն իրենց փրկութեան:
Այսպէս կարգաւորեց եւ ճակատ կազմեց՝ սփռուելով դաշտի ամբողջ երեսին, Արեաց դէմուդէմը, Տղմուտ գետի ափին: Հայոց եւ պարսից կողմերը

յարձակուեցին միմեանց վրայ: Բազմաթիւ սուսերների շողալուց եւ բազմախուռն նիզակների ճոճուելուց ասես հուր էր թափւում երկնքից: Ո՞վ կարող է պատմել ահաւոր ձայների իրարանցումը, եւ թէ ինչպէս էին վահանաւորների թնդիւնն ու աղեղների լարերի ճայթիւնը խլացնում բոլորի ականջները: Երկու կողմերն էլ յանդուգն յարձակումով բախւում էին իրար: Թանձրամիտները յիմարանում էին, վախկոտները՝ վիատւում, քաջերը՝ խիզախում եւ անվեհեր կտրիճներն՝ աղաղակում: Ամբողջ բազմութիւնն իրար գլխի խմբուելով՝ բոլոր կողմերից փակեցին գետը, եւ գետի դժուարութիւնից վախեցած պարսից զօրքն սկսեց տեղում վխտալ: Իսկ Հայոց զօրքն անցաւ գետը եւ յարձակուեց մեծ զօրութեամբ: Ուժգին թափով իրար զարկուելով՝ երկու կողմից էլ բազմաթիւ վիրաւորներ դիաթաւալ էին լինում: Անհաւատները դառնօրէն մռնչում էին, իսկ քրիստոնեաներն ուրախութեամբ իրենց հոգիները Փրկչին յանձնում:
Այս մեծ տագնապի ժամին քաջ Վարդանը վեր նայելով՝ տեսաւ, որ Հայոց գնդի ձախակողմը վտանգուած է: Այնժամ ամբողջ ուժով յարձակուեց եւ պարսից գնդի աջ թեւը ոչնչացնելով՝ քշեց փղերի կողմը եւ շուրջը պտտելով կոտորեց մինչեւ նոյն տեղը: Եւ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մէջ, որ իր առջեւի բազմութիւնն սկսեց խուճապահար փախչել: Նրանց դէմ ելաւ Վարդանի արի նիզակակիցը՝ Վահան Արծրունին, ով եւս փախուստի մատնեց նրանց: Եւ այսպէս երկու քաջերը, իրենց թիկնապահներով պաշարելով նրանց, շատերին կոտորեցին, իսկ միւս գնդերին փախուստի մատնեցին: Անգամ Մատեան գունդը, որ ամենահզօրն էր եւ պարսիկների կողմից «անմահ» էր կոչւում, բաժան-բաժան ու ցիրուցան եղաւ:
Այնտեղ վտանգի ենթարկուեց նաեւ ուրացող Վասակը, սակայն իր զինակիցների հետ աճապարեց թաքնուել փղերի մէջ, եւ այդպէս պաշտպանուած բանակ հասնելով՝ փրկուեց:
Այս տեսնելով ՝ չարագործի համախոհները, ովքեր ծածկաբար Վարդանի ճակատի կողմն էին գտնւում, շփոթեցրին Քրիստոսի զօրականներին: Եւ նիզակակիցների մեջ ահ գցելով՝ իբր թէ անհնար է դիմադրել թշնամու այդքան մեծ ուժին, փախուստ տուեցին: Իրենց հետեւելով՝ հզօրներից ոմանք էլ սրտաբեկ եղած՝ տկարացան եւ ընկրկեցին ճակատի հետեւի կողմը՝ լեռների հովիտների մէջ: Սակայն միւսները պատերազմում էին քաջաբար, զարկում էին, վանում էին իրենց առջեւի թշնամիներին, եւ իրենք իրենց էլ մահուան վտանգի ենթարկելով՝ արիաբար նահատակւում:
Երբ Մուշկան Նիսալաւուրտը տեսաւ պատերազմի ընթացքը եւ իւրայինների կրած չարաչար պարտութիւնն ու վնասները յատկապէս Վարդանի կողմից, կոչ արեց, որ ուշադիր լինեն Վարդանի գնդին: Շտապեցրեց իր Արտաշիր զօրապետին, որ առաջ բերի գազաններին: Գալարափողերի բարձր ձայնով ստիպեց, որ առաջ գան նաեւ գնդերն եւ առաջամարտիկ զօրքերով շրջապատեն Վարդանին:
Եւ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, արհամարհելով իր անձը՝ հնոցի բոցի նման այրելով ոչնչացրեց պարսիկներից շատերին եւ Քրիստոսի հօտի թշնամիներին: Սակայն իր համար ոչինչ էր իր կեանքը եւ Քրիստոսի սիրով տարուած՝ սպասում էր փոխուել մահից դէպի կեանք: Եւ այդտեղ էլ արժանացաւ հասնելու իր փափագին եւ ստանալու կատարեալ նահատակութեան պսակը, քանզի բոլոր կողմերից պաշարուած

լինելով պարսիկների կողմից եւ վիրաւորուելով նիզակներից ու սրերից՝ քաջ նահատակն ընկաւ եւ ուրախութեամբ աւանդեց իր սուրբ հոգին իր Զօրագլխի՝ Քրիստոսի ձեռքը: Նրա հետ ընկան նաեւ ուրիշ քաջ նահատակներ եւ Տիրոջ ընտրեալներ եղան:
Երբ Վարդանն ընկաւ, արեւը մայր մտնելու մօտ էր: Հայոց զօրքերը մնացին առանց զօրավարի, եւ չկար գլխաւոր մէկը, որին հենուած կարողանային ժողովել մնացած զօրքերը:
Մարտիրոսութեան պսակ տենչացողները, մէկը միւսից առաջ անցնելով, սկզբում փախուստի մատնեցին պարսից զօրքերին, իսկ հայոց զօրքից նրանք, ովքեր եկել էին ոչ կամաւոր, այլ հարկադրաբար եւ ակամայ, փախուստ տուին եւ կորստեան մատնուեցին յաւիտենապէս:
Այնուհետեւ պարսիցզօրքերն ընկան հայոց փախստականների յետեւից: Հասնելով նրանց՝ ոմանց կոտորեցին, ուրիշներին էլ գերեվարեցին եւ մի տեղ հաւաքած՝ փակեցին ամրոցում, սակայն նրանցից ոմանք, գիշերը կտրելով նիզակափակ պաշտպանութիւնը եւ կոտորելով պահակներից շատերին, ողջանդամ հեռացան: Առաւօտեան հայ ձերբակալուած փախստականներին բերեցին բանակ, կոտորեցին սրով, շատերին փղերի ոտքերի տակ գցեցին, մնացածներն էլ փախչելով ցրուեցին Հայաստան աշխարհով մէկ:
Երկար փնտռելով, շատ քննելով ու հարցնելով՝ իմացանք այն նահատակների թիւը, որոնք աւագ նախարարների հետ պսակուեցին պատերազմի վայրում՝ երկու հարիւր եօթանասուն եւ վեց այրեր, իսկ նրանց, որոնց հանեցին ամրոցներից եւ սպանեցին կամ գցեցին փղերի ոտքերի տակ, եօթ հարիւր եւ վաթսուն այրեր էին: Բոլորը միասին լինում են հազար եւ երեսուն վեց այրեր, որոնցից իւրաքանչիւրի անունը վարձահատոյց մեր Տէր Յիսուս Քրիստոս պահում է Կեանքի գրքում:
Սուրբ Մեծ վարդանի եւ նրա ընկերների նահատակութիւնը եղաւ Քրիստոսի 451 թուականին՝ Պենտեկոստէի եօթերորդ օրը՝ Յազկերտի թագաւորութեան տասներեքերորդ տարում եւ սուրբ Յովսէփի կաթողիկոսութեան տասնմէկերորդ տարում ի փառս եւ ի պատիւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան, ի պարծանս եւ ի նորոգութիւն սուրբ եկեղեցու:
Հայ Եկեղեցին սուրբ Վարդանի եւ 1036 վկաների յիշատակը տօնում է Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը:

ՏՕՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ 150 ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ

Այսօր սրբոց հայրապետացն ժողովեալք ի միասին.
եղին հաստատութեամբ զհիմունս հաւատոյ.
ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից:
Այսօր զԲանն ի սկզբանէ քարոզեցին սուրբ հայրապետքն.
յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնունդ անճառ.
Այսօր զՀոգին ճշմարտութեան դաւանեցին սուրբ հայրապետքն.

ծագումն առ ի Հօրէ յառաջ բղխեալ անհատաբար.
ընդ նմին յաւէտ մշտնջենաւոր փառակից Որդւոյ
(Շարակնոց)

Գումարուել 381 թուականին հռոմէական Թէոդոս Ա. Մեծ կայսեր հրամանով: Առիթը Ընդհանրական Եկեղեցուն ալեկոծած Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Մակեդոնի վարդապետութիւնն էր, որը ժխտում էր Սուրբ Հոգու Աստուածութիւնը (այստեղից էլ առաջացել է նրանց «հոգեմարտներ» անուանումը):
Ժողովին մասնակցել են 150 եպիսկոպոսներ:

Մեծն Կոստանդիանոսի ինքնակալութեան տարիներին Նիկիայի սուրբ ժողովի կողմից արիոսական չար աղանդը ջախջախելուց եւ ապա Կոստանդիանոսի որդի Կոստասի օրօք նրանց սանձահարելուց յետոյ երբ թագաւորեց նրա միւս որդին՝ Կոստանդը, ով կուսակից էր արիոսականներին, դարձեալ զօրացան չարափառները
Այդ աղանդի դառն արմատներից ընձիւղուեց Մակեդոնի անիծեալ արմատը՝ հայհոյիչ հոգեմարտը, Սուրբ Հոգու Աստուածութիւնն ուրացողը եւ Նրան որպէս կատարեալ Անձ մերժողը: Այդ շրջանում արիոսականների հետ միաժամանակ առաջ եկան նաեւ եւնոմեանների, ապողինարիների, փոտինեանների եւ այլ հերեսիովտապետերի անիծեալ շառաւիղները:
Արդ, Կոստանդ կայսրը արիոսական եպիսկոպոսների սադրանքով երանելի Պօղոս Խոստովանողին ուղղափառութեան համար երկու անգամ հեռացրեց Աթոռից եւ նրա փոխարէն ընտրեց Մակեդոնին, քանի որ նա համախոհ էր Արիոսին: Եւ Տիրոջ 342 եւ 351 թուականներին հերեսիովտապետ Մակեդոնը Կոստանդնուպոլսում մէկերկու անգամ յաջորդաբար նստեց Յունաց պատրիարքութեան Աթոռին, սակայն նա ատելի եղաւ ոչ միայն ուղղափառների դասին, այլեւ արիոսականներին՝ նրանց կեղեքելու եւ հարստահարելու պատճառով: Հակառակ ժողովրդի կամքի եւ առանց կայսեր գիտութեան՝ նա Մեծն Կոստանդիանոսի մարմինը փոխադրել տուեց Ակակիոս վկայի եկեղեցի, որի համար մեծ աղմուկ բարձրացաւ եւ մինչեւ անգամ արիւնահեղութիւն եղաւ: Սրանով նա ընկաւ Կոստանդի աչքից. Տիրոջ 361 թուականին կայսրը նրան վերջնականապէս հեռացրեց Աթոռից եւ նրա փոխարէն նշանակեց արիոսական Եւդոքսիոսին: Այս բանից չարացաւ Մակեդոնը, հեռացաւ արիոսականներից եւ յարեց այլ աղանդի՝ կիսաարիոսականներին: Նրանց առջեւ շնորհ գտնելու համար սկսեց քարոզել նրանց հաճոյ թուացող վարդապետութիւն, որի մէջ ներքաշեց շատերին: Օրէցօր բազմանում էին Մակեդոնի համախոհները: Անօրէնը յաւելեց այլ մոլորութիւն եւս. նա ցանկացաւ լինել առանձին աղանդի գլուխ եւ ունենալ իր առանձին ժողովուրդը: Նա բացում էր իր պիղծ բերանը ընդդէմ Ամենասուրբ Հոգու եւ հայհոյում, թէ՝ չկայ Սուրբ Հոգու հաղորդութիւն Հօր կամ Որդու Աստուածութեան հետ, այլ Նա օտար է Նրանց Էութիւնից եւ Տէրութիւնից եւ լոկ Նրանց սպասաւորն է: Եւ թէպէտ հոգեմարտ հայոյիչը քիչ օրեր անց մեռաւ չարաչար մահով, սակայն նրա նողկալի աղանդը մնաց իր հետեւորդների մէջ, ովքեր կոչուեցին մակեդոնեաններ: Նրանք միաբան մերժում էին Սուրբ Հոգու Աստուածութիւնը, որի համար էլ կոչուեցին հոգեմարտներ:

Այդ օրերին արիոսականների արմատից ելաւ մէկ այլ չար շառաւիղ՝ եւնոմեականների աղանդը: Նրանց առաջնորդը Գէորգ եպիսկոպոսի սարկաւագն էր՝ արիոսականների եւ մելիտիանոսների աղանդից: Նրա անունն էր Այետիոս, որը թարգմանւում է «անամօթ», սակայն իր հայհոյախօսութեան պատճառով կոչուեց Աթէոս, որը նշանակում է «անաստուած»: Դեռեւս մանկուց նա անմասն էր Սուրբ Գրքի գիտութեանը, իսկ երբ չափահաս դարձաւ, գնաց Ալեքսանդրիա, ուր խորամուխ եղաւ սոփեստական ուսմունքի մէջ եւ յանդգնեց հաւատի վարդապետութիւնը յեղյեղել մարդկային տկար խօսքի ճարտարութեամբ: Այսպէս, նա սերմանեց Արիոսի եւ Մակեդոնի համախառն վարդապետութիւնը. մերժեց Որդու եւ Հոգու համագոյակից ու նմանագոյակից լինելը եւ յօրինեց այլագոյակից կամ օտար բնութիւններ լինելը: Այս Այետիոսի գլխաւոր աշակերտը եղաւ Եւնոմիոսը՝ աւելի չար մէկը, քան իր վարդապետը, քանի որ յայտնապէս յամարձակուեց Արիոսի հետ ուսուցանել, թէ՝ Որդին արարած է, ստեղծուածների մէջ գերագոյնը եւ առաջինը, օտար՝ Հօր բնութիւնից: Նոյնպէս էլ, Մակեդոնի հետ հայհոյելով Հոգուն, ասում էր, թէ Նա արարած է, եւ ոչ թէ Հօրից բխած, իսկ Որդին նախքան այլ արարածներն է: Ուղղափառների մկրտութիւնը, որ Ամենասուրբ Երրորդութեան անուամբ էր, կամեցաւ թիւրել. նրանց համարում էր չմկրտուած, իսկ իր մոլորութեամբ խոտորուածներին նորաձեւ մկրտութեամբ կրկին եւէթ մկրտել էր տալիս:

Կոստանդ կայսրը չկարողացաւ հանդուրժել այսօրինակ անզգամութիւնը եւ աքսորել տուեց նրանց առաջնորդներին՝ Այետիոսին՝ Փռիւգիա, Եւնոմիոսին՝ Պամփիլիա, սակայն մնացին նրանց աշակերտները: Չասենք նաեւ այլեւայլ հերձուածների մասին, որոնք մոլորութեան տեսակտեսակ որոմներ ցանեցին Քրիստոսի Եկեղեցու բարի ագարակում եւ ծաւալուելով տարածուեցին Կոստանդի կայսրութեան շատ տեղերում՝ շարունակելով գործել նրա յաջորդների օրօք՝ մինչեւ արիոսամոլ Վաղես կայսեր վախճանը: Սա յայտնապէս հալածում էր ուղղափառներին, աքսորում էր սուրբ եպիսկոպոսներից շատերին, որոնց թւում նաեւ Հայոց Ներսէս Մեծ հայրապետին:

Եւ երբ Տիրոջ 379 թուականին թագաւորեց աստուածասէր եւ բարեպաշտ Թէոդոս Մեծ կայսրը, ով գահակից էր Գրատիանոս ուղղափառ ինքնակալին, անյապաղ ձեռնամուխ եղաւ Եկեղեցու ուղղափառ հաւատի հաստատութեանը եւ խաղաղութեանը:

Տիրապէս հրաման տուեց, որ իր թագաւորութեան բոլոր քրիստոնեաները միաբանուեն Նիկիական դաւանութեան եւ մի կաթողիկէ Եկեղեցու ճշմարիտ հաւատի ներքոյ: Հետ բերեց բոլոր նրանց, ովքեր աքսորուած էին չարափառ Վաղեսի կողմից եւ հաստատեց իրենց տեղերում: Նրանց հետ նաեւ բերեց սուրբ Ներսէսին եւ մեծ պատուով պահեց իր մօտ՝ Կոստանդնուպոլսում, որպէսզի նա մասնակցի առաջիկայ մեծ ժողովին, որ պատրաստւում էր գումարել ընդդէմ հոգեմարտների մոլորութեան եւ ժամանակի այլ աղանդների: Միաժամանակ որոշեց Գրիգոր Աստուածաբանին նշանակել Կոստանդնուպոլսի պատրիարքութեան Աթոռին եւ նրա փոխարէն կարգել անարժան Մաքսիմոսին: Մեծ խռովութիւն էր տիրում թագաւորական քաղաքում:

Այսպէս, Տիրոջ 381 թուականի մայիս ամսին քրիստոսասէր Թէոդոս ինքնակալի հրամանով եւ Հռոմի հայրապետ սուրբ Դամասոսի հաւանութեամբ Կոստանդնուպոլսում հաւաքուեցին հարիւր եւ յիսուն

եպիսկոպոսներ, որոնց մէջ կային իրենց սրբութեամբ եւ իմաստութեամբ բազում նշանաւոր հայրեր՝

Սուրբ Գրիգոր Նազիազանցին, Աստուածաբանը եւ Եկեղեցու ջահը,
Սուրբ Գրիգոր Նիւսացին՝ Մեծն Բարսեղ Կեսարացու եղբայրը,
Անտիոքի սուրբ Մելիտոս հայրապետը,
Երուսաղէմի սուրբ Կիւրեղ հայրապետը,
Իկոնիայի սուրբ Ամփիլոքիոս եպիսկոպոսը՝ սուրբ Բարսեղի եւ սուրբ Գրիգորի գործակցը,
Կապադովկիացիների Կեսարիայի Եղադիոս եպիսկոպոսը՝ սուրբ Բարսեղի յաջորդը,
Ալեքսանդրիայի Տիմոթէոս հայրապետը,
Պաղեստինեան Կեսարիայի Գեղասիոս եպիսկոպոսը եւ այլ երեւելի առաջնորդներ:

Արդ, նախ եւ առաջ խօսք գնաց Կոստանդնուպոլսի մասին՝ այն Նոր Հռոմ կոչելու համար, ապա միաձայնութեամբ հեռացրին Մաքսիմոս աղանդաւորին եւ դարձեալ իբրեւ արժանաւոր հովուի՝ ընտրեցրին Գրիգոր Աստուածաբանին: Սակայն մինչ ընթանում էր ժողովը, վախճանուեց Անտիոքի սուրբ Մելիտոս հայրապետը: Եւ քանի որ բոլորից առաւել սուրբ Մելիտոսը նախընտրում էր Աստուածաբանին, չարակնոտները որոշեցին նրան հեռացնել պատրիարքութեան Աթոռից: Տեսնելով, որ խռովութիւն է ծագում եւ գնալով սաստկանում՝ սուրբ Գրիգորը մօտեցաւ սուրբ ժողովի ատեանին եւ հրաշալի ատենախօսութեամբ ու ինքնակամ հրաժարուեց իրեն Կոստանդնուպոլսի Աթոռի պատուին արժանացնելուց: Այնժամ լսելով նրան՝ սուրբ հայրերն ակամայ զիջեցին եւ ընտրեցին Նեքտարիոս Տարսոնացուն, ով մի այր էր ընտիր վարքով եւ երեւելի:
Այնուհետեւ սուրբ հայրերը, պարսպուած հաւատի հանգանակի խօսքերով, դիմեցին մակեդոնեանների դասից երեսուն եպիսկոպոսների եւ պահանջեցին կաթողիկէ Եկեղեցու հետ ընդունել Նիկիական հաւատի դաւանութիւնը, դաւանել եւ քարոզել Որդուն՝ որպէս բնութենակից եւ համագոյակից Հօրը եւ Սուրբ Հոգուն: Նոյնպէս էլ Ամենասուրբ Հոգուն՝ էակից եւ համագոյակից Հօրը եւ Որդուն: Եւ երբ նրանք յանձն չառան, հեռացրին նրանց ուղղափառների ժողովից եւ Եկեղեցու հետ հաղորդութիւնից, ու նզովեցին հոգեմարտ Մակեդոնին եւ նրա հետեւորդներին, եւնոմեականներին, ապողինարեաններին եւ ժամանակի բոլոր աղանդաւորներին: Հաստատեցին Նիկիական հաւատը՝ համագոյ եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութեան՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու մի Աստուածութիւնը:
Հերոսիովտականների մոլորութիւնից առաւել զգուշանալու համար որոշեցին Նիկիական հաւատին կցել ինչինչ բացատրութիւն՝ շարադրելով մէկ այլ հանգանակ՝ իբրեւ նախորդի բացայայտութիւն, որը ժողովի բոլոր հայրերի հաւանութեամբ գրեց սուրբ Գրիգոր Նիւսացին: Այդ հաւելուածին միաբան իրենց ձեռքը դրին բոլորը՝ ըստ իրենց կարգի եւ պատուի աստիճանի: Ժողովը յստակեցրեց Բանի Մարդեղութեան եւ Սուրբ Հոգու վերաբերեալ դրոյթները:
Այդ ժողովում սահմանուեցին պէսպէս կանոններ Եկեղեցու բարեկարգութեան եւ բարեզարդութեան համար, որով Եկեղեցում խաղաղութիւն հաստատուեց:

Կոստանդնուպոլսի տիեզերական սուրբ ժողովն ընդունել է Է (7) կանոն:
Ա. կանոնը հաւաստում է, որ ժողովը հաւատարիմ է մնացել Նիկիոյ հանգանակին, նզովում է Մակեդոնին, Փոտինոսին, Ապողինարիոսին եւ միւս աղանդապետներին:
Բ. կանոնը սահմանում է, որ իւրաքանչիւր եկեղեցի՝ անկախ աւագութեան աստիճանից, միայն իր եկեղեցու եւ վարչական տարածքում է իրաւասու գործել ու տնօրինել, իրաւունք չունի միջամտել միւսների գործերին կամ կարգադրութիւններ անել:
Գ. կանոնը վերաբերում է աթոռների աւագութեանը: Կոստանդնուպոլսի աթոռը յայտարարուեց երկրորդը Հռոմից յետոյ: Սա ուղղուած էր Ալեքսանդրիայի աթոռի դէմ, որի աճող հեղինակութիւնը հարուածում էր թէ՛ Հռոմի, թէ՛ Կոստանդնուպոլսի շահերին: Ըստ աւագութեան՝ Ալեքսանդրիայի աթոռը երրորդն էր, Անտիոքի աթոռը՝ չորրորդը, Երուսաղէմի աթոռը՝ հինգերորդը:
Մնացած չորս կանոնները վերաբերում էին Եկեղեցու կարգ ու կանոնին:
Ինքն իսկ՝ ինքնակալ Թէոդոսը, խիստ հրաման արձակեց, ըստ որի եթէ եպիսկոպոսներից մէկը համարձակուի հեռանալ Նիկիոյ եւ Կոստանդնուպոլսի սուրբ ժողովների վարդապետութիւնից, կը հեռացուի իր Աթոռից, կ’արտաքսուի Եկեղեցուց եւ նրան թոյլ չի տրուի յարել որեւէ ուղղափառ եկեղեցու եւ նրանց քաղաք մտնել: Ովքեր դէմ եղան այս հրամանին, արքունի իշխանութեամբ սանձեց նրանց եւ այդպէս անդորր հաստատեց Եկեղեցում:
Մեծ պատուով ազատեց նաեւ սուրբ Ներսէսին եւ ուղարկեց իր Աթոռ, ով Հայաստան գալով՝ սահմանեց ժողովի կանոնները՝ ըստ իր հօտի կարիքների եւ համաձայն սուրբ Լուսաւորչի կողմից լրացուած Նիկիական հանգանակի, որն անվրէպ պահում է Հայաստանեայց Եկեղեցին: Հարկ չհամարեց Որդու համար առանձին սահմանել «յառաջ քան զամենայն յաւիտեանս», որովհետեւ սուրբ Լուսաւորչի կողմից Ամենասուրբ Երրորդութեան համար նախապէս գրուած էր. «Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկիր պագանելով Սուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան...»: Այս հաստատելով՝ հարկ չկար յաւելել Սուրբ Հոգու համար՝ «երկրպագակից եւ փառաւորակից», քանի որ սուրբ Լուսաւորիչն արդէն սահմանել էր այս կարեւոր եզրը՝ «Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս»: Նոյնպէս եւ ընդդէմ բոլոր հերետիկոսների՝ Բանի մարդեղութեան մասին Լուսաւորչեան հանգանակում յաւելուեց. «մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով, որով էառ մարմին, հոգի եւ միտք, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:
Հայ Եկեղեցին Նիկիայի Ա (325 թ.) եւ Եփեսոսի Գ (431 թ.) տիեզերական ժողովների հետ միասին ընդունում է նաեւ Կոստանդնուպոլսի ժողովի տիեզերական հեղինակութիւնը: Կոստանդնուպոլսի տիեզերաժողովի վճիռներն ու կանոնները Հայաստան մտնելով՝ ընդունուեցին Ասպուրակէս հայրապետի եւ Հայ Եկեղեցու եպիսկոպոսների կողմից:
Այդ ժողովի եւ Մակեդոնի հոգեմարտ վարդապետութեան մասին հայ իրականութեան մէջ առաջին անգամ յիշատակւում է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ, Բաբկէն Ա Ոթմսեցի կաթողիկոսի (490516թթ.)

նամակներում, որտեղ Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովը համարում է իբրեւ Նիկիայի ժողովի որոշումները վաւերացնող:

Հայ Եկեղեցին Կոստանդնուպոլսի Բ տիեզերական ժողովի եւ 150 հայրապետների յիշատակը տօնում է Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Այսօր յօրինակ նախաստեղծին Ադամայ.
որ ի Դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս.
ցնծացուք եւ մեք ի յօրհնութիւնս հոգեւորս:
Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահօրն.
որ ի պտղոյն Աղինայ ճաշակելով զուարճանայր.
ճաշակեսցուք եւ մեք զպատուիրանս Աստուծոյ:
Այսօր ի տիպ պատմուճանին առաջնոյ.
որով պճնեալ զարդարիւր ի փառս մարդն առաջին.
զարդարեսցուք եւ մեք աստուածային օրինօք:
(Շարակնոց)

Ս.Գրիգոր Տաթեւացի
ՔԱՐՈԶ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԷԻ ԱՅՆ ԽՕՍՔԻ, ՈՐՆ ԱՍՈՒՄ Է. «ՄԱՐԴԸ ՊԱՏՈՒԻ ՄԷՋ ԷՐ ԵՒ ՉԻՄԱՑԱՒ, ՀԱՒԱՍԱՐՈՒԵՑ ԱՆԲԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՆՄԱՆՈՒԵՑ ՆՐԱՆՑ» [ՍԱՂՄ. ԽԸ. 11]

Նախ տեսնենք, թէ որն էր մարդու պատիւը, եւ ինչ է նշանակում անասուններին նմանուելը:

Մարդն իր արարումից սկսած բազում եւ զանազան պատիւներ ունի:

Առաջին. նա թագաւոր եւ իշխան եղաւ բոլոր տեսանելի արարածների վրայ, եւ նրա համար եղան երկինքն ու երկիրը, բոյսերն ու կենդանիները, ինչպէս Սուրբ Գիրքն է ասում. «Ամէն ինչ դրիր նրա ոտքերի ներքոյ՝ ոչխար, արջառ եւ ամէն ինչ, նաեւ վայրի երէ, երկնքի թռչուններ, ծովի ձկներ, որ շրջում են ծովերի հոսանքներում» [1]: Քանզի բոլոր արարածները մարդու սպասաւորներն ու ծառաներն են. ոմանք որպէս լծկան, ոմանք որպէս բեռնակիր, ոմանք էլ՝ այլեւայլ կարիքների համար, իսկ մարդը որեւէ մէկի ծառայ չէ, այլ ազատ է եւ ինքնիշխան:

Սա ցոյց է տալիս՝

Նախ. մարդու կազմուածքը, որն ուղղուած է դէպի վեր եւ ոչ թէ ինչոր մէկին հնազանդ՝ կորագլուխ անասունների նման:

Երկրորդ. մարդն իր մէջ կրում է բոլոր արարածների հետ նմանութիւնը. նա գոյութիւն է ինչպէս անշունչ արարածները, աճում է ինչպէս տնկիները, զգում է

ինչպէս կենդանիները, իմանում է ինչպէս հրեշտակները: Այդ պատճառով մարդը երկրի վրայ փոքր եւ կենդանի աշխարհ է կոչւում:

Երրորդ. մարդու համար պատիւ է այն, որ Աստուած նախ խորհեց, թէ նա ինչ եւ ինչպիսին լինի, ում վրայ իշխի, ում պատկերն ունենայ եւ ապա ստեղծեց մարդուն: ինչպէս որ ասում է. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ» [illegible]: Ո՛հ, մեծասքանչ հիացմունք. երկինքը, երկիրը եւ ծովերը, արեգակը, լուսինը եւ աստղերը արարուեցին առանց խորհուրդ անելու, մինչդեռ մարդու մասին նախապէս խորհում է Աստուած եւ Նրա խորհելով մարդը կար իր լինելիութիւնից առաջ:

Չորրորդ. բոլոր արարածների համար ասաց, եւ եղան, հրամայեց, եւ հաստատուեցին, իսկ մարդուն Իր ձեռքով արարեց, ինչպէս որ ասում է. «Տէր Աստուած մարդուն ստեղծեց երկրի հողից» [illegible], որը խորհրդանշում է մարդու հանդէպ առաւել հոգածութիւնը:

Հինգերորդ. ինչպէս որ երբ մի մեծահարուստ կամենում է պատուել մէկին, նախ պատրաստում է կերակուրներ եւ ըմպելիքներ, տեղ ու զարդարանքներ, ապա պատուով հրաւիրում է նրան, նոյնպէս էլ մեծահարուստ Աստուած նախ պատրաստեց ամէնը, ինչ անհրաժեշտ է մարդուն՝ զանազան կերակուրներ եւ ըմպելիքներ, երկինքը՝ որպէս առաստաղ, երկիրը՝ որպէս յատակ, լուսատուները՝ որպէս ճրագ, գեղաձայն թռչունները՝ որպէս երգեցողութիւն, բազմապատիկ տնկիներով Դրախտը՝ որպէս գահ: Եւ ապա պատուով մեծարեց մարդուն, որպէսզի մարդն ի բնէ ոչ թէ ունայն եւ աղքատիկ, այլ առատ եւ լի բարիքներով լինի:

Վեցերորդ. մարդը ամբողջ աշխարհի կապն ու լրումը եղաւ, քանզի նրանից առաջ եղած իմանալի եւ զգալի գոյութիւնները, որոնք հեռու էին միմեանցից եւ բաժանուած ընդարձակ անջրպետով, ժողովուեցին մի էութեան՝ մարդու հոգու եւ մարմնի կազմուածքի մէջ, որով ցոյց տրուեց, թէ մի է ամբողջ աշխարհը՝ ստեղծուած մի Արարչի կողմից:

Եօթերորդ. անմարմինները զուրկ են մարմնաւոր, իսկ մարմնաւորները անմարմին բարիքներից: Սակայն Աստուած մարդուն պատուեց եւ նրան հաղորդ դարձրեց երկու բարիքներին, քանզի ինչ որ ունէր, տուեց ու չնախանձեց՝ չխնայելով նաեւ մարմնաւոր բարիքները: Սա է մարդուն կրկնակի պատուելը:

Ութերորդ. մարդուն զարդարեց առաքինութեամբ, որպէսզի նրան պսակներ տայ ոչ միայն Իր տուած առաքինութիւնների համար, այլեւ՝ ըստ վարձքի: Քանզի հրեշտակները չեն կարող աւելացնել եւ ոչ էլ նուազեցնել իրենց գոյացական վարձքը, իսկ մարդը կարող է աճել՝ աւելացնելով առաքինութիւնները:

Իններորդ. մարդը երկու պատիւ առաւել ունի, քան այլ արարածները, որոնք են մեղքերի թողութիւնը եւ կեանքի յարութիւնը: Եւ այստեղ հոգին մարմնի, իսկ մարմինը հոգու շնորհիւ է վարձք ունենում, քանզի մարմնի պատճառով ենք մեղքերի թողութիւն ստանում, իսկ հրեշտակներն այդ չեն կարող ունենալ, որովհետեւ մեղքի ենթակայ մարմին չունեն: Եւ քանի որ մենք անմահ հոգի ունենք, նաեւ մարմնով յարութեանն ենք արժանանում, որն այլ կենդանիները չունեն:

Տասներորդ. մարդն Արարչի պատկերով ստեղծուեց, որը գերագոյնն է բոլոր պատիւներից, ինչպէս որ գրուած է. «Աստուած մարդուն ստեղծեց Իր պատկերով» [illegible], այսինքն՝ մտքով, խօսքով, անձնիշխանութեամբ, սրբութեամբ, բարութեամբ եւ այլնով ու նրան դրեց անապական վայրում՝ Աղենի (Եդեմի) Դրախտում: Պատուելով Իր պատկերին՝ նրան զարդարեց լուսեղէն զգեստով եւ անմահ կեանքով, ինչպէս որ գրուած է. «Մարդը պատիւ ունէր եւ չհասկացաւ, հաւասարուեց անբան անասուններին ու նմանուեց նրանց» [illegible]: Սակայն մարդը, որ Արարչի պատկերին խառնուած ունէր հողեղէնի պատկերը, քանզի ինչպէս գրուած է. «Արու եւ էգ ստեղծեց նրանց», զրկուեց իր պատուից եւ նմանուեց անասուններին: Մինչդեռ Քրիստոսի համար չկայ արու եւ էգ, ասում է առաքեալը, որից հետեւում է, որ մարդը նման չէ Աստծուն: Իսկ թէ ինչու Աստուած արու եւ էգ ստեղծեց նրանց, այս մասին վարդապետները հինգ պատճառ են նշում:

Նախ. որպէսզի պատկերը տարբերուի իր նախատիպից, քանզի ամբողջովին նմանը դա նոյնն է:

Երկրորդ. որովհետեւ կամեցաւ, որ մարդը հոգեւոր բարիքի հետ նաեւ մարմնաւորը վայելի:

Երրորդ. որպէսզի որ միայն ձրիաբար, այլեւ մարմնի առաքինութեամբ արժանանայ պարգեւների, ինչպէս որ արդէն ասացինք:

Չորրորդ. որովհետեւ կամեցաւ, որ մարդիկ այսպէս բազմանան, քանզի երբ նրանք ընկան հրեշտակային կեանքից, բազմացան կենդանիների նման:

Հինգերորդ. մարդկանց փրկութեան համար, որը եղաւ Փրկչի մարդեղութեամբ: Այդ պատճառով մարմինը միաւորեց հոգու հետ եւ դրեց միջասահման վայրում՝ Դրախտում, որպէսզի ապրի միջասահման կեանքով, այսինքն՝ դրեց մահուան եւ անմահութեան միջեւ, որպէսզի մարդն իր անձնիշխան կամքով ինչ որ ընտրի, այն էլ ստանայ՝ մահ կամ անմահութիւն:

Եւ նրա առջեւ դրեց բոլոր ծառերը, որոնք պարունակում էին բոլոր բարիքների եւ երանութիւնների ամբողջութիւնը, որպէսզի մարդը նրանցով միշտ մնար անմահութեան մէջ: Այս է մեր առաջին եւ սկզբնական կեանքը, որը կորցրինք, սակայն պիտի ստանանք յարութեան ժամանակ: Նաեւ Աստուած արգելեց մօտենալ բարու եւ չարի գիտութեան ծառից, որպէսզի չմեռնէին, բայց մարդը թողեց անմահ կեանքը, ընդունեց օձի պատրանքները եւ հեշտանալով զգայարաններով՝ կորցրեց աստուածային պատկերը, որ ունէր: Այսպէս, պատուելով անասնականը, հաւասարուեց անբան անասուններին ու նմանուեց նրանց ուտելով, բարկութեամբ, ցանկութեամբ եւ այլնով:

Այստեղ երեք հարց է ծագում: Նախ՝ ինչու բարկանալն ու ցանկանալը մեզ համար մեղք է, իսկ կենդանիների համար՝ ոչ: Երկրորդ՝ ինչո՞ւ ենք առաւել հեշտութեամբ մեղք գործում, քան բարին: Երրորդ՝ ի՞նչ պատճառով ենք մեղք գործում:

Տեսնենք առաջինը, թէ ինչո՞ւ անբան կենդանիների համար բարկութիւնը, ցանկութիւնը եւ այլնը բնական են համարւում, իսկ մեզ համար՝ ախտ եւ մեղք:

Ասենք, որ սրանք անբան կենդանիների համար ոչ միայն բնական են, այլեւ նրանց պահպանիչ են: Քանզի գիշատիչ գազանները գոյատեւում սրտմտութեամբ են, բազմածին կենդանիները բազմանում են ցանկութեամբ, նապաստակներն ու բոլոր տկար կենդանիները հզօրներից փրկւում են երկչոտութեամբ, խոշոր կենդանիները գոյատեւում են որկրամոլութեամբ եւ

ոչխարը գայլից փրկւում է ատելութեամբ, խրոխտութիւնը պատուական է դարձնում ձիուն եւ այլն: Եւ սակայն այս ամէնը, որ նրանց համար պահպանիչ գործօն են, մեզ համար կորստալի են եւ մեղք, որովհետեւ այս ախտերը նրանց մօտ չափաւոր են, իսկ մարդու մօտ՝ առաւել եւ անչափ: Սրա պատճառը մեր միտքն է, քանզի ինչպէս որ մշակը բազմաբեղուն սերմ է աճեցնում, այսպէս էլ միտքը, չարը խորհելով, մեր մէջ աւելացնում է այս ախտերը: Դա երեւում է ինչպէս բարկանալիս, երբ միտքը մշակ լինելով՝ բարկութեանը ոխ, քէն եւ նախանձ է աւելացնում: Նոյն կերպ ցանկութեանը միշտ շնութիւն եւ պոռնկութիւն է աւելացնում, մինչդեռ անասուններն իրենց ժամանակին են խառնակւում, ինչպէս որ որկրամոլութիւնն է զանազան կերակուրներ եւ ըմպելիներ յօրինում: Այդ պատճառով սրանք մեզ համար ախտ եւ մեղք են կոչւում:

Երկրորդ. քանզի այս բաները կենդանիները գործում են ըստ բնական կարգի, իսկ մենք անբնական ենք դարձնում: Ինչպէս որ անպտուղ հողը ոչնչացնում է բարի սերմերը եւ փուշ աճեցնում, այնպէս էլ մենք Աստուծոյ տուած բարի սերմերը դէպի չարն ենք փոխարկում: Այսպէս բարկութիւնը, որ բարի է ընդդէմ չարի, փոխարկում ենք ընդդէմ բարու եւ կամ ցանկութիւնը, որ ունենք դէպի բարին, փոխում ենք եւ ցանկանում չարը, այդպէս էլ խոհեմութիւնը վերածում ենք չար խորհուրդների եւ խորամանկութեան: Սէրը, որ պէտք է տածենք առ Աստուած, դարձնում ենք դէպի երկրաւորը եւ մեղքը: Պէտք էր ատել մեղքը, բայց ատում ենք արդարութիւնը: Պէտք էր խրոխտ լինել ընդդէմ չարի եւ չինազանդուել, բայց անհնազանդ ենք Աստուծոյ օրէնքներին եւ հպարտանում ենք ընկերոջ հանդէպ: Անարգում ենք հոգուն, որն Աստուծոյ պատկերն է, եւ պատւում ենք մարմինը, որն անասունի պատկերն է, ինչպէս որ ասում է. «Մարդը պատիւ ունէր եւ չհասկացաւ, հաւասարուեց անբան անասուններին ու նմանուեց նրանց» [6]: Մարդն իր մէջ ունի այս երկու պատկերները՝ աստուածային պատկերը եւ անասնական պատկերը, եւ նրանց կառավարը միտքն է, որը գեղեցկացնում է այն պատկերը, որը կամենում է: Սրբութեամբ եւ առաքինութեամբ մեր մէջ գեղեցկանում է աստուածային պատկերը, իսկ մեղքեր գործելով՝ այն աղաւաղւում է եւ անհետանում: Ինչպէս որ կեղտոտ հայելին չի արտացոլում մարդու պատկերը, բայց երբ սրբւում ենք մեղքերից, նոյն պահին պայծառանում է մեր մէջ աստուածային պատկերը, ինչպէս մաքուր հայելու մէջ՝ մարդու պատկերը:

Հարցում: Ինչո՞ւ է մարդու համար առաւել դիւրին հակուել դէպի մեղքը, քան՝ դէպի առաքինութիւնները:

Ասում ենք՝ չորս պատճառով:

Նախ. մեղքը ծանր է, եւ մարմինը եւս ծանր է ու վայրաքարշ, որի համար նրանք միաբանուելով՝ հոգուն իրենց հետ դէպի վայր են ձգում, ինչպէս որ լերան բարձունքից քարն է հեշտութեամբ ցած ընկնում: Իսկ առաքինութիւնն ու միտքը թէպէտ թեթեւ են, սակայն նիգի պէս կապուած են մարդու հետ եւ մարդուն դժուարութեամբ են տանում իրենց հետեւից, ինչպէս երկանաքարը լերան գլուխ բարձրացնելիս:

Երկրորդ. մեր զգայարաններն ունեն անասնական պատկերը, որի պատճառով հեշտութեամբ են բռնւում մեղքերի փափկութեան մէջ՝ իրենց հետեւից տանելով մտքին եւ խորհուրդներին:

Երրորդ. մարդու մարմնաւոր փափկութիւններն իր առջեւ են, եւ առձեռն պատրաստ ունի, իսկ հոգեւորը հեռուում է տեսնում, որի համար էլ դանդաղում է այդ գործերում:
Չորրորդ. ծննդեան օրից մարդը սովոր եւ ընտելացած է աշխարհի փափկութիւնների մէջ, իսկ հոգեւորի մէջ՝ անընտել:

Հարցում: Ո՞րն է մեղք գործելու պատճառը:
Եկեղեցու սուրբ վարդապետներն ասում են, թէ մարդը մեղք է գործում երեք պատճառով.
Նախ՝ չար ունակութեան, երկրորդ՝ չար սովորութեան, երրորդ՝ տգիտութեան պատճառով:
Չար ունակութիւնը լինում է ըստ մեր մարմնի խառնուածքի, քանզի տարրերի աւելցուկը կամ պակասութիւնը մեղք է առաջացնում մեր մէջ: Այսպէս. դառնամաղձոտները բարկացկոտ են, քանզի դառը մաղձը հրեղէն տարրն է, իսկ արեան խոնաւ եւ ջերմ աւշային խառնուածք ունեցողները՝ երկրաքարշ են ու ցանկասէր: Սեւ մաղձ ունեցողները ծոյլ են եւ տրտմակեաց, իսկ ում մօտ առաւել է օդի տարրը, նա թեթւամիտ է, անհամբեր եւ հպարտ:
Երկրորդ. չար սովորութիւնն այն է, երբ մէկը մանկուց ապրում է վատ միջավայրում, չար ընկերներից չար գործեր է սովորում եւ դա սովորոյթ դարձրած՝ անխտիր մեղքեր է գործում: Եւ ինչպէս իմաստուններն են ասում՝ երկար ժամանակների սովորոյթը յաւելեալ բնութիւն է լինում:
Երկրորդ՝ տգիտութիւնն այն է, երբ չեն կարդում Սուրբ Գիրքը եւ Սուրբ Հայրերի խրատները, չգիտեն օրէնքները, եւ այդպէս չարը իբրեւ բարի են գործում: Բարու մէջ կան զանազանութիւններ, որովհետեւ կայ բարի, որն իսկապէս եւ զուտ բարի է՝ ինչպէս Աստուած, Արքայութիւնը եւ առաքինութեան գործերը, որոնցով նմանւում ենք զուտ Բարի Աստծուն: Եւ կայ, որ արտաքուստ բարի է թւում, սակայն ներքուստ չար է, ինչպէս մարմնաւոր փափկութիւնները, արծաթասիրութիւնը, պոռնկութիւնը եւ այլն: Սրանք բարիով կերպարանուած չար գործեր են: Եթէ չարը երեւայ ինչպէս որ կայ, ոչ ոք չի գործի, որովհետեւ չարը փախչելի է բոլորի համար, այլ այն պճնուած է բարիով, որը ցանկալի է ամէնքին: Այդ պատճառով առերեւոյթ բարին ցանկացողները բռնւում են ծածկուած չարից, ինչպէս թռչունն է բռնւում որոգայթով, կամ ձուկը՝ կարթով: Քանզի արծաթասէրին արծաթի գոյնն է պատրում, պոռնկին՝ հեշտութիւնը, գողին՝ ունեցուածքի շահը: Եւ սրանցով մեղանչելուց յետոյ, բոլորը մեղքով մահուան են մատնւում, ինչպէս որ Աստուած ասաց նախաստեղծներին. «այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք» [illegible]: Քանզի սա է մեր հոգիների դրախտում բարու եւ չարի գիտութեան ծառը, այսինքն մեր միտքը, որի մէջ խառնուած են բարին եւ չարը, չի կարողանում զանազանել, թէ որն է իսկապէս բարին, եւ որը՝ կերպարանուածը:
Պտուղը չար գործն է՝ ծնուած չար խորհուրդներից: Խրատարու օձը բանսարկուն է, որը խաբում է մեզ: Իսկ պտղի գեղեցկութիւնն այն է, որ մեղքը հաճոյք է պատճառում մեր զգայարաններին, բայց երբ գործում ենք, դատապարտւում ենք մահուան: Քանզի ինչպէս որ մեղրն են խառնում մահաբեր թոյնին, այդպէս էլ սատանան մեղքերի մահաբեր թոյնին քաղցրութիւն է խառնում՝ ինչպէս այն ժամանակ Ադամին, այժմ էլ՝ մեզ: Ինչպէս որ Ադամը զրկուեց Դրախտի անմահական կեանքից եւ Աստուծոյ տեսութիւնից, այդպէս էլ

ամէն ոք մեղքի պատճառով զրկւում է Արքայութիւնից եւ Աստուծոյ տեսութիւնից: Ինչպէս որ Ադամը անիծուած երկիր ընկաւ եւ դատապարտուեց մահուան, այնպէս էլ մեղաւորն է ընկնում անիծուած երկիր, որը դժոխքն է, ինչպէս որ ասում է. «Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը» [illegible]: Ինչպէս որ երբ Ադամը կերաւ պտղից, նոյն ժամին ընկաւ մահուան իշխանութեան տակ, թէպէտ ապրեց ինը հարիւր երեսուն տարի եւ ապա մեռաւ, այդպէս էլ մեղաւորները մեղք գործելուն պէս ընկնում են մահուան եւ դժոխքի իշխանութեան ներքոյ, թէպէտ բազում ժամանակներ անց Վախճանի օրն է դժոխք մտնելու:

Երբ Դատաստանի օրը քննութիւն լինի, ինչպէս Ադամին եղաւ, մեղաւորները կ'անիծուեն, ինչպէս Ադամը, դժոխքի երկունքն ու ցաւը կը պատեն նրանց, ինչպէս Եւային: Եւ այնժամ կը դատապարտուի բանսարկու օձը՝ նետուելով յաւիտենական հուրը, որովհետեւ մեղքերին հետեւում է դատաստանը, իսկ դատաստանին՝ պատիժը: Դատաստանը լինելու է Վերջին օրը, քանզի Տէրը հաստատեց մի օր, որում դատելու է բոլորին, որտեղ դատաւորն է Քրիստոս: Երբ Նա գայ սուրբ հրեշտակների հետ, այնժամ կը բաժանի գառներին այծերից, այսինքն արդարներին մեղաւորներից: Այնժամ չարերին կը հատուցի տանջանքներ, իսկ արդարներին՝ փառք, ըստ այն խօսքի, թէ՝ ովքեր բարիք են գործել, յարութիւն կ'առնեն յաւիտենական կեանքի համար, իսկ ովքեր չարիք՝ դատապարտութիւն: Եւ դարձեալ՝ «Մենք բոլորս Քրիստոսի ատեանի առաջ պիտի ներկայանանք, որպէսզի իւրաքանչիւրն ստանայ, ինչ որ արել է աւելի առաջ իր մարմնով՝ թէ՛ բարի և թէ՛ չար» [illegible]: Եւ այս ամէնը պիտի լինի Վերջին օրը:

Բայց դառնանք մեր առաջին խօսքին, թէ չար գործերը տգիտութեան պատճառով ենք գործում, իսկ անկիրթ ու տգէտ մտքով չենք կարող տարբերել միմեանց խառնուած չարն ու բարին: Նաեւ՝ զանազանել չի կարող այն միտքը, որը խառնուած է զգայարաններին, որովհետեւ անվարժ եւ բնական լոյս ունեցող միտքը չունի շնորհների լոյսը եւ ոչ էլ՝ Սուրբ Գրքով կրթութեան լոյսը: Եւ այն միտքը, որը խառնուած է զգայարանների հետ, խաբւում է նրանց կողմից: Ահա այս պատճառներով միտքը չի կարող ընտրել լաւը վատթարից: Իսկ այն միտքը, որն ունի շնորհների լոյսը եւ Սուրբ Գրքով կրթութեամբ լոյսը, եւ նաեւ՝ երբ տեսական միտքը անխառն է լինում զգայարաններին, նա կարող է ընտրել եւ տարբերել կերպարանուած բարին եւ ճշմարիտ բարին, որոնք զանազանւում են միմեանցից տասը կերպով:

Նախ. կերպարանուած բարին ունի բարի անուն, սակայն ոչ ճշմարտապէս: Իսկ ինչպէս իմաստասէրներն են ասում, ճշմարիտ բարին այն է, երբ խօսքն ու գործը միակցորդ են իրար:

Երկրորդ. կերպարանուած բարու սկիզբը բարի է, իսկ վերջը՝ չար: Իսկ ճշմարիտ բարին այն է, երբ սկիզբն ու վերջը բարի են լինում:

Երրորդ. ճշմարիտ բարին լինում է մի տեսակ, իսկ բարու պիտակ ունեցողը լինում է բազմազան եւ խառնակ:

Չորրորդ. կերպարանուած բարին արտաքուստ բարի է եւ ներքուստ՝ չար, իսկ ճշմարիտ բարին բարի է թէ՛ ներքուստ, թէ՛ արտաքուստ:

Հինգերորդ. կերպարանուած բարին բարի է մարմնի համար եւ հոգու համար՝ չար, իսկ ճշմարիտ բարին բարի է թէ՛ հոգու, թէ՛ մարմնի համար:

Վեցերորդ. կերպարանուած բարին բարի է այս կեանքի համար և այն կեանքի համար՝ չար, իսկ ճշմարիտ բարին բարի է երկու կեանքերի համար:

Եօթերորդ. կերպարանուած բարին բարի է այս կեանքի համար և չար մահուան ժամին, իսկ զուտ բարին բարի է թէ՛ կեանքի, թէ՛ մահուան ժամանակ:

Ութերորդ. կերպարանուած բարին բարի է միառժամանակ եւ չար է յաւիտեան, իսկ ճշմարիտ բարին բարի է յաւիտեան:

Իններորդ. կերպարանուած բարին փոփոխական բարի է, իսկ ճշմարիտ բարին՝ անփոփոխ:

Տասներորդ. կերպարանուած, մարմնաւոր բարիով հաղորդ ենք լինում սատանային եւ դժոխքին, իսկ ճշմարիտ, հոգեւոր բարիով հաղորդ ենք լինում Աստծուն՝ Անստեղծին եւ զուտ բարուն եւ լինում Արքայութեան ժառանգորդներ: Այս տարբերութիւնները շատերը չգիտեն, որի համար էլ կերպարանուած բարին գործում են իբրեւ իսկապէս բարի, որը մեղք է եւ չարիք:

Մարդը մեղք է գործում երեք՝ չար սովորութեան, չար ունակութեան եւ տգիտութեան պատճառով, եւ այս երեքի համար կայ բժշկութիւն:

Չար սովորութիւնը բժշկւում է բարի սովորութեամբ, բարենպաստ տեղում բարի մարդկանց հետ բնակուելով, որովհետեւ մարգարէն ասում է. «Սուրբի հետ սուրբ կը լինես, Տէ՛ր, անարատ մարդու հետ՝ անարատ» [10]: Այսինքն՝ ինչպէս որ անձնիշխան կամքով սովորեցինք չարը, սովորենք նաեւ բարին:

Տգիտութիւնը բժշկւում է գիտութեամբ, Սուրբ Գիրք ուսանելով եւ Սուրբ Հայրերի խրատներ կարդալով: Այդպէս Աստուծոյ պատուիրաններն ու կանոններն իմանալով՝ կարող ենք տարբերել չարն ու բարին:

Իսկ չար ունակութիւնը բժշկւում է մարմնի տքնութեամբ եւ չարչարանքներով: Այդ պատճառով, երբ պահեցողութեամբ հրաժարւում ենք կերակուրներից եւ ըմպելիքներից, իսկ տքնութեամբ ու աղօթքներով չարչարում ենք մարմինը, ազատւում ենք չար ունակութեան խառնուածքից, որը մեզ դէպի մեղքն է տանում: Սրբուելով մեղքերից՝ մեր մէջ վերստին պայծառանում է Աստուծոյ պատկերը, որ ունէինք ի սկզբանէ՝ նախքան Դրախտում մեղանչելը: Ապա ուրեմն, ճնշե՛նք մարմինները, ամրանա՛նք պահքով, աղօթե՛նք ստէպստէպ, հեռացնե՛նք սրտերից չարութիւնը, սիրե՛նք միմեանց սուրբ սրտով: Դառնա՛նք առ Աստուած, եւ Նա կը դառնայ դէպի մեզ: Ներե՛նք միմեանց, եւ Նա կը ների մեզ:

Գթա՛նք աղքատներին, որ Նա էլ մեզ գթայ: Հա՛ց լինենք քաղցածներին եւ զգեստ՝ մերկերին: Լինե՛նք օտարներին ժողովող եւ հիւանդներին բժշկող, որպէսզի Նա էլ բժշկի մեր հոգու եւ մարմնի վէրքերը, ծածկի մեր ամօթալի գործերը, ժողովի մեզ Իր Հայրական օթեւաններում եւ բոլորիս արժանացնի մշտաւէտ ցնծութեանն ու անտրտում ուրախութեանը մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ով օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

ԹԷՈԴՈՐՈՍ ՁՕՐԱՎԱՐ

Որ ընտրեցեր ի սկզբանէ զհաճոյ եղեալսն ի մարդկանէ.

որ եւ զինուորեալ քեզ Թէոդորոս. զոր խառնեցեր ի դասս երկնաւոր զօրացդ.
աղաչանօք սորա կեցո զմեզ Քրիստոս Թագաւոր:
Որ յօրինակ աներեւոյթ վիշապ օձին՝ զոր եւ կոխել հրամայեցեր՝ արիաբար Թէոդորոս՝
զերեւելի զգլուխ վիշապին խորտակեաց քոյով զօրութեամբդ.
աղաչանօք սորա կեցո զմեզ Քրիստոս Թագաւոր:
Որ զհուրն արկեալ յերկիր՝ բորբոքեցեր յոգիս սրբոյն Թէոդորոսի.
որ եւ զտաճարն լուցեալ զկռոցն. եւ մատոյց զանձն ողջակէզ քեզ պատարագ ընդունելի.
աղաչանօք սորա կեցո զմեզ Քրիստոս Թագաւոր:
(Շարակնոց)

Նահատակութիւնը Տիրոջ 305 թուականի փետրուարի տասնհինգին:

Քրիստոսի քաջամարտիկ զօրական եւ յաղթող վկայ սուրբ Թէոդորոսն ապրել է Դիոկղետիանոսի եւ Մաքսիմիանոսի ժամանակներում: Նա Պոնտոսի Ամասիա քաղաքից էր, հաւատով քրիստոնեայ եւ բարեպաշտ ծնողների զաւակ: Երբ դեռեւս կաթնակեր մանուկ էր, մահացաւ նրա մայրը, եւ հայրը նրան սնեց խաշած ցորենահատիկով ու նրա եփած ջրով:

Թէոդորոսը հասակ էր առնում գովելի վարքով, առաքինութեամբ, սրբութեամբ, զգաստութեամբ եւ պարկեշտութեամբ: Նա մեծանում էր, սակայն սիրում էր նոյն ցորենահատիկը եւ, յագենալով դրանով, այլ ոչինչ չէր ախորժում: Հասաւ արբունքի եւ դարձաւ կատարելապէս արի, առոյգ, բարեկազմ երիտասարդ՝ կարճ ու գանգուր մազերով, բարեվայելուչ տեսքով: Տեսնելով նրան՝ զօրապետը, ով նստում էր Ամասիայում եւ նշանակուած էր այդ կողմերի պահպանութեան համար, նրան զինուորագրեց մարմարացիների գնդում եւ կարգեց նորեկ զօրականների դասում:

Թէոդորոսը փայլում էր արիութեամբ, որի համար որոշեցին տալ աւագութեան պաշտօն արքունի բանակում: Սակայն նա յանձն չառաւ՝ ասելով. «Ես երկնաւոր Թագաւորի՝ իմ Տէր Յիսուս Քրիստոսի զինուորն եմ, Ով խաչուեց ինձ համար»:

Սուրբ Թէոդորոսն ընթանում էր անբիծ եւ անարատ վարքով, զերծ էր հոգու եւ մարմնի բոլոր ախտերից եւ հեռու ամէն չար բանից: Նա իր զինուորակիցներին անդադար ուսուցանում էր Աստուծոյ պատուիրանները, ապրում էր աստուա-ծահաճոյ վարքով եւ պաշտում Քրիստոս Աստծուն: Սակայն հեթանոս զօրքը, տեսնելով Թէոդորոսի ամուր հաւատը, թշնամութեամբ չարիքներ էր նիւթում ընդդէմ նրա եւ անարգում, թէպէտ կային նաեւ ծածուկ քրիստոնեաներ, ովքեր յոյժ սիրում էին Թէոդորոսին, օգնում էին նրան եւ ձեռք մեկնում ամէն բանում:

Այդ օրերին եղաւ, որ քաջ Թէոդորոսը երիվարով պէտք է անցներ Եւքայիտա աւանի արուարձանով, ուր գտնւում էին Եւսեբեայ անունով մի հաւատացեալ եւ մեծահարուստ այրի կնոջ կալուածքները: Օրը տօթ էր եւ սաստիկ շոգ: Ճանապարհից յոգնած՝ Թէոդորոսը կամեցաւ հանգստանալ արուարձանի մի զով տեղում, որի համար ձին կապեց մի ծառից եւ պառկեց նրա շուքի տակ:

Իր տան սրահից տեսնելով նրան՝ Եւսեբեան ձայնեց եւ ասաց. «Ա՛յ հեծեալ, ա՛յ հեծեալ, մի՛ պառկիր այդտեղ, թունաւոր վիշապի որջ կայ այդ տեղում: Այս ժամին նա դուրս է գալիս եւ շրջում մարգագետնում: Գուցէ վնասուես դու եւ

երիվարդ: Արի՛ իմ տուն, ճաշակի՛ր եւ հանգստացիր, իսկ հովն ընկնելուն պէս կը շարունակես քո ճանապարհը»:

Երանելի Թէոդորոսը պատասխանեց. «Յուսալով Աստուծոյ օգնականութեանը՝ ես չեմ վախենում ո՛չ աներեւոյթ, ո՛չ էլ տեսանելի վիշապից: Թող լինի, ինչպէս ասացիր, եւ ես կը սատկացնեմ նրան իմ Տէր Յիսուս Քրիստոսի անուամբ»: Այս լսելով՝ բարեպաշտ Եւսեբեան իմացաւ, որ նա իրեն հաւատակից է, մեծ խնդութեամբ նրան ընդառաջ ելաւ եւ սկսեց թախանձել, որ նա հեռանայ այդտեղից ու պատսպարուի իր տանը: Բայց մինչ կինը խօսում էր, լսուեց մօտեցող վիշապի ուժգին շաչիւնը: Եւսեբեան աղաղակելով փախաւ, իսկ լայնալանջ ու հաստապարանոց վիշապը սոսկալի շաչիւնով յարձակուեց երիվարի վրայ: Այնժամ Քրիստոսի քաջ զօրական Թէոդորոսը կնքեց իրեն ամենայաղթ սուրբ Խաչի նշանով եւ շեշտակի նիզակահարելով՝ ճեղքեց վիշապի գլուխն ու սատկացրեց նրան: Այդ օրուանից որպէս մայր ու որդի ծանօթութիւն եւ սէր հաստատուեց բարեպաշտ Եւսեբեայի ու երանելի Թէոդորոսի միջեւ:

Իսկ սուրբ Թէոդորոսն իր զինուորակիցներին եւ հաւատակիցներին պատմեց, թէ Տէրն ինչ արեց իր ձեռքով, որով աւելի զօրացրեց ու հաստատեց նրանց: Սկսեց առաւել համաձակ խօսել մեր Տէր Քրիստոս Փրկչի անուան զօրութեան մասին եւ յորդորել չծածկել քրիստոնէական հաւատն ու պահել Աստուծոյ պատուիրանները: Նա ինչ ասում էր խօսքով, առաւել ցոյց էր տալիս իր գործով, վարքով եւ ջերմ աստուածպաշտութեամբ:

Այդ ժամանակներում՝ Տիրոջ 304 թուականին, հրաման ելաւ Մաքսիմիանոս Գաղերիոսի կողմից, ըստ որի՝ հռովմէական իշխանութեան տակ գտնուող այն բոլոր քրիստոնեաները, ովքեր կը ճաշակէին կուռքերին զոհաբերուած կենդանիների մսից, ողջ կը մնային, իսկ ովքեր չէին կամենայ ո՛չ զոհ մատուցել եւ ո՛չ էլ զոհաբերուածից ճաշակել, կը պատժուէին սոսկալի դատաստանով:

Կայսերական գնդի վերակացութիւնը յանձնուած էր Բրինկաս անունով մի արքունի իշխանի, ով իմանալով, որ նորընտիր զինուորների մէջ կան քրիստոնեաներ, հրամայեց նրանց եւս կարգել արքունի գնդում, որպէսզի այլոց հետ հաւասարապէս զոհեն կուռքերին: Այնժամ շատերի հետ բռնեցին նաեւ երանելի Թէոդորոսին, ով այլ զինուորակիցների հետ ձմեռում էր Ամասիայում: Նրան տարան դատաւորի մօտ, ուր ստիպեցին ուրանալ Քրիստոսին եւ զոհել կուռքերին: Սակայն նա, լցուած Սուրբ Հոգով, կանգնեց ատեանի առջեւ եւ ասաց. «Ես քրիստոնեայ եմ եւ զոհել գարշելիներին ու ուրուական պատկերներին, չեմ կարող»:

Այդ օրը արձակեցին նրան ու ժամանակ տուեցին մտածելու համար: Դուրս գալով այնտեղից՝ սուրբ Թէոդորոսը շրջում էր ամենուր եւ ամէնքին ուսուցանում փրկութեան ճանապարհը: Գիշերը նա հրդեհեց կուռքերի տաճարը, որի համար կռապաշտները բռնեցին նրան եւ տարան դատաւորի մօտ: Եւ սա անասելի ցասումով սկսեց հարցաքննել սուրբին. «Աստուածուհուն զոհաբերելու ու խնկարկելու փոխարէն ինչո՞ւ հրկիզեցիր նրա տաճարը»: Թէոդորոսը պատասխանեց. «Ինչ որ արեցի, չեմ ուրանում, ես վառեցի փայտը, եւ քարեղէն աստուածներն այրուեցին, քանի որ շինուած էին կրից: Ինչո՞ւ ձեր աստուածուհին այնչափ անպիտան գտնուեց, որ կրակը նրան հեշտութեամբ լափեց: Ուրեմն պարզ է, որ հրոյ ճարակ են ձեր բոլոր աստուածները: Զգո՛յշ եղէք, որ դուք էլ նրանց պէս հոգով եւ մարմնով չկորչէք յաւիտենական անշէջ կրակով»:

Այնժամ սկսեցին ուժգին գանահարել նրան: Սուրբն իր տանջանքների մէջ ասաց. «Որքան էլ աւելացնէք ձեր տանջանքները, դրանք չեն կարող հեռացնել ինձ Քրիստոսի սիրուց: Եւ ինչ վճիռ էլ կայացնէք ինձ համար, ես չեմ երկնչի, քանի որ ապաստանի յոյս ունեմ առ Աստուած, Ով ինձ համբերութիւն է տալիս, փրկում է ձեր խաբէութիւններից եւ պսակում անանց փառքով»: Դատաւորն ասաց. «Զոհի՛ր եւ փրկի՛ր անձդ տանջանքներից: Ես կը խնայեմ քո երիտասարդութեանը, եւ աստուածներն էլ կը ներեն քեզ»: Սուրբ վկան պատասխանեց. «Այս տանջանքները յաւիտենական չեն, եւ ես չեմ վախենում դրանցից, որովհետեւ ինձ փրկում է եւ միշտ ինձ հետ է իմ Տէրը՝ Յիսուս Քրիստոս, Ում դու չես տեսնում, որովհետեւ կոյր է քո հոգու աչքը»: Դատաւորը մռնչաց առիւծի պէս եւ, այլեւս չկարողանալով տանել նրան, հրամայեց անմիջապէս խաւարտչին բանտ նետել:

Նրան տարան բանտ, պահեցին առանց հացի ու ջրի եւ երկար ժամանակ կնքած պահեցին բանտի դուռը, որպէսզի քաղցից սովամահ լինի: Սակայն բանտում նրան կերակրում էր Տիրոջ հրեշտակը: Մի գիշեր Տէրը երեւաց նրան եւ ասաց. «Քաջալերուի՛ր, Թէոդորէ՛, որովհետեւ Ես քեզ հետ եմ: Մարդկանցից կերակուր մի՛ ընդունիր, քանզի քեզ համար անապական հաց եմ պատրաստել երկնքում»: Այս ասելով՝ Փրկիչը հեռացաւ, իսկ նա զօրացաւ ու սկսեց սաղմոսել եւ փառաբանել Աստծուն: Բանտախցի պահապանները լսեցին բազմութեան ձայներ, որից սարսափած եւ վախեցած եկան ստուգելու բանտի դուռը, սակայն այն տեսան փակուած եւ ամբողջական կնիքով, ինչպէս առաջ էր: Պատուհանից ներս նայեցին եւ տեսան, որ սպիտակազգեստ մարդիկ սաղմոսում էին Թէոդորոսի հետ, իսկ բանտախուցը ողողուած էր պայծառ լոյսով, ասես լուսաւորուած մեծապայծառ ջահից: Ահաբեկուեցին հրաշափառ տեսիլքից ու գնացին պատմեցին դատաւորին: Դատաւորն անձամբ եկաւ բանտախցի մօտ եւ փակուած ու կնքուած դռան հետեւից լսեց բազմութեան սաղմոսերգութիւնները: Հարցրեց. «Արդեօք քրիստոնեաներն են գաղտնի եկել եւ մտել Թէոդորոսի մօտ»: Ապա զօրականներին հրամայեց զինուել, շրջապատել բանտը եւ ապա բացել բանտի դուռը, որպէսզի բռնեն ներսում գտնուողներին, սակայն այնտեղ ոչ ոքի չգտան, բացի կապանքների մեջ եղող Աստուծոյ ծառայ Թէոդորոսից: Մեծ ահ պատեց դատաւորին ու նրա մարդկանց: Իբրեւ թէ գթասիրտ դարձաւ եւ հրամայեց Թէոդորոսին տալ նկանակի մէկ ութերորդ մասը եւ նոյնքան էլ ջուր: Բայց երանելի նահատակը, ինչպէս իրեն պատուիրել էր Փրկիչը, չկամեցաւ նրանց ձեռքից կերակուր վերցնել եւ ասաց. «Ինձ կերակրում է իմ Տէրը եւ Թագաւորը, Բարերարը եւ Ողորմածը»:

Սուրբին դարձեալ ատեան բերեցին, ստիպեցին ուրանալ Քրիստոսին ու զոհել իրենց կուռքերին: Դատաւորը խոստանում էր նրան դարձնել իրեն աթոռակից եւ կուռքերի քահանայապետ՝ տալով մեծամեծ պարգեւներ, բայց սուրբը պատասխանեց նրան. «Դու իշխանութիւն ունես միայն իմ մարմնի վրայ, բայց ոչ հոգուս, մտքիս եւ կամքիս վրայ: Որքան էլ հրամայես տանջել իմ մարմինը, մատնես հրի, գազանների եւ այլ չարչարանքների, ես չեմ ուրանայ իմ Քրիստոս Աստծուն, քանի դեռ շունչս իմ բերանում է»: Այնժամ գլխիվայր կախեցին նրան եւ սկսեցին փշոտ գաւազանով հարուածել ու քերել մարմինը: Այսպէս տանջեցին այնքան, որ երեւացին ոսկորները, բայց նա զուարթագին օրհնաբանում էր Աստծուն եւ սաղմոսում: Դատաւորը զարմացած էր նրա համբերութեան վրայ, բայց եւ միաժամանակ չարացած՝ նրա հոգու անպարտելի ուժի վրայ: Դարձեալ

նրան բանտ նետեցին՝ թողնելով առանց խնամքի, սակայն Տիրոջ հրեշտակը, գալով նրա մօտ, ապաքինեց նրա բոլոր վէրքերը:

Օրեր անց նրան դուրս բերեցին բանտից եւ տեսան, որ բժշկուել են նրա բոլոր վէրքերը: Դատաւորը հարցրեց նրան. «Ո՞ւմ հետ ես կամենում լինել՝ մե՞զ հետ, թէ՞ քո Քրիստոսի»: Եւ նա խնդութեամբ պատասխանեց. «Ես իմ Քրիստոս Աստուծոյ հետ եմ եւ կը լինեմ յաւիտեան»: Այնժամ դատաւորը հրամայեց այրել սուրբին: Մինչ բորբոքում էին հուրը, սուրբը երկար աղօթում էր՝ ասելով. «Աստուած Փրկի՛չ իմ, տո՛ւր ինձ զօրութիւն եւ շնորհի՛ր ինձ առնել քո յաղթութեան նշանը»: Ապա տեառնագրեց իրեն սուրբ Խաչի նշանով եւ որպէս պատարագուող ընծայ՝ ինքնակամ նետուեց դէպի հուրը ու առժամայն առ Աստուած աւանդեց իր հոգին Տիրոջ 305 թուականի փետրուարի տասնհինգին: Հաւատացեալները տեսան սուրբի հոգին, որն ինչպէս սպիտակափայլ աղաւնի՝ լոյսի պէս երկինք վերացաւ: Մարեց կրակը, եւ անուշահոտութիւն բուրեց՝ տարածուելով ամենուր: Մի բարի կին կրակի միջից դուրս բերեց սուրբի ամբողջական մարմինը. չէին այրուած անգամ նրա մազերը: Նրա մարմինը պատեց մաքուր կտաւներով, պատուով դրեց տապանի մէջ եւ տարաւ Եւքայիտա աւան՝ մերձ Ամասիա քաղաքին:

Սուրբ Թէոդորոսի նահատակութիւնից անցաւ մօտ վաթսուն տարի: Եկան անօրէն Յուլիանոս Ուրացողի թագաւորութեան ժամանակները, եւ դարձեալ սաստիկ հալածանքներ սկսուեցին ընդդէմ քրիստոնեաների: Տեսնելով, որ անհնար է բռնութեամբ նուաճել նրանց, անօրէն թագաւորը սատանայական հնարքներով որոշեց շաղախել նրանց հեթանոսական պղծութեան մէջ: Իր մօտ կանչեց քաղաքի իր նման անաստուած եպարքոսին եւ ասաց. «Որքան ջանացի քրիստոնեաներին դարձնել մեր պաշտամունքին, չկարողացայ անել ո՛չ սպառնալիքներով, ո՛չ մեծարանքներով եւ ո՛չ էլ խոստումներ տալով: Այս գիշեր մեր աստուածները բարի խորհուրդ դրեցին իմ սրտում. պէտք է նրանց հրամայեմ, որ կա՛մ ուրանան եւ զոհեն կուռքերին, կա՛մ էլ մեռնեն սովից: Ահա մօտեցել են նրանց պահոց օրերը, որոնք քրիստոնեաները պահում են սրբութեամբ: Արդ, պատուիրի՛ր, որ քաղաքում չվաճառուի ո՛չ հաց, ո՛չ այլ կերակուր կամ ըմպելիք: Թող վաճառանոցներում դրուի միայն այն, ինչ կը հրամայեմ»: Ապա հրաման տուեց վաճառուող սնունդը շաղախել զոհերի արեամբ եւ ճարպով, որպէսզի, ովքեր գնեն, ակամայ ուտեն, լուծուի նրանց պահքը, եւ հաղորդ լինեն աստուածների զոհերին:

Եպարքոսն ասաց. «Ճշմարիտ է, որ թագաւորների սրտերը Աստուծոյ ձեռքում են: Բարի եւ հաճոյական խորհուրդ ես խորհել»: Ապա շտապեց կատարել հրամանը. աղուհացի առաջին իսկ օրերից քաղաքում արգելեց վաճառել հաց կամ այլ ինչ կերակուր եւ թոյլատրեց վաճառել միայն այն, ինչ պիղծ արքան հրամայում էր: Բայց Աստուած Իր ամենակարող զօրութեամբ ունայնացրեց նրա չար խորհուրդները եւ Իր հաւատացեալներին փրկեց պիղծ ու զզրելի կերակուրներից. պահք մտնելու առաջին իսկ գիշերը Քրիստոսի վկայ սուրբ Թէոդորոսը երեւաց Կոստանդնուպոլսի պատրիարքին եւ ասաց. «Առաւօտեան քեզ մօտ ժողովիր բոլոր քրիստոնեաներին եւ պատուիրի՛ր նրանց, որ վաճառանոցներից ոչ մի կերակուր չգնեն, որովհետեւ ամեն ինչ պղծուած եւ շաղախուած է զոհերի ճարպով ու արեամբ»: Հայրապետն ասաց. «Ովքեր մեծահարուստ են, ամբարուած ուտելիք ունեն իրենց տներում, իսկ աղքատներն ու օտարականները, ովքեր իրենց օրուայ պարէնը գնում են վաճառանոցներից,

ի՞նչ կարող են անել»: Սուրբն ասաց. «Թող կուլիփայ ուտեն: Իսկ ովքեր չունեն, դու տուր եւ այդպէս զերծ պահիր նրանց հեթանոսական պղծութիւններից»: Հայրապետը՝ չհասկանալով, թէ դա ինչ է, հարցրեց. «Իսկ ի՞նչ է կուլիփան»: Սուրբ Թէոդորոսն ասաց. «Այն եփած ցորենահատիկն է: Մենք Եւքայիտայում եփած ցորենին կուլիփայ էինք կոչում»: Հայրապետը հարցրեց. «Դու ո՞վ ես, տէ՛ր, որ այդպէս խնամարկութեամբ եւ գթութեամբ հոգում ես Քրիստոսի հօտի համար»: Սուրբն ասաց. «Ես Քրիստոսի վկան եմ Եւքայիտայից՝ Թէոդորոս զինաւորը: Ես առաքուեցի Տիրոջ կողմից՝ քեզ այս խօսքերն ասելու եւ զգուշացնելու համար»: Եւ այս ասելով՝ անմիջապէս աներեւոյթ եղաւ:

Առաւօտեան պատրիարքը բոլոր եկեղեցիներից կանչեց աւագ երէցներին եւ պատմեց տեսիլքի մասին: Պատուիրեց, որ իւրաքանչիւր աւագերէց իր ժողովրդին պատուիրի անել՝ ըստ սուրբի հրամանի: Իսկ Յուլիանոս Ուրացօղն ամօթահար եղաւ իր գործակիցներով հանդերձ, հրամայեց դադարեցնել պղծախառն կերակուրների վաճառքը եւ նաւով հեռացաւ քաղաքից:

Երբ եկաւ շաբաթ օրը, հաւատաւորները ի պատիւ սուրբ Թէոդորոսի, ուրախութեամբ մեծապայծառ տօնախմբութիւն արեցին եւ աւանդեցին, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիները նոյն շաբաթ օրը հանդիսաւոր տօնակատարութիւն անեն ի յիշատակութիւն եւ ի երախտիք սուրբ Թէոդորոսի:

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

«ՄԱՐԴԸ ՊԱՏԻՒ ՈՒՆԷՐ ԵՒ ՉՀԱՍԿԱՑԱՒ, ՀԱՒԱՍԱՐՈՒԵՑ ԱՆԲԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՆՄԱՆՈՒԵՑ ՆՐԱՆՑ» [ՍԱՂՄ. ԽԸ 13]

Մարդն ստեղծուեց Արարչի պատկերով, որը գերագոյն պատիւ է նրան, այսինքն Աստուած մարդուն տուեց միտք, խօսք, ազատ կամք, սրբութիւն, բարութիւն, լուսեղէն զգեստ, անմահ կեանք, զարդարեց առաքինութիւններով եւ դրեց Անապական Դրախտում: Մարդն այսպիսի պատիւ ունէր, սակայն նա զրկուեց այդ ամէնից եւ նմանուեց անբան անասուններին, որովհետեւ Արարչի պատկերին խառնեց հողեղէնի պատկերը:

«Տեր Աստուած Իր ստեղծած մարդուն տեղաւորեց բերկրութեան Դրախտում, որպէսզի նա մշակի եւ պահպանի այն» [1]: Հարց է առաջանում. ինչպէ՞ս պէտք է նա պահպանէր Դրախտը, կամ ումի՞ց: Չէ՞ որ Դրախտում չկային ավազակներ կամ ապականիչ գազաններ: Ասենք, որ նրանք բոլորն առաջացան Ադամի պատուիրանազանցութիւնից յետոյ, իսկ պահպանել Դրախտը նշանակում էր պահել պատուիրանը:

Ադամին տրուեց այս հրամանը. *«Բարու եւ չարի գիտութեան ծառից մի՛ կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կը դառնաք»* [2]: Պատուիրանը շատ թեթեւ էր, որովհետեւ Աստուած Ադամին տուել էր ողջ Դրախտը եւ արգելել ուտել միայն մէկ ծառի պտղից: Աստուած արգելել էր ուտել՝ սպառնալով պատժել մահուամբ, որպէսզի եթէ մարդը չպահէր պատուիրանը յանուն հնազանդութեան եւ սիրոյ, ապա գոնե պահեր՝ երկիւղելով մահուամբ պատժուելուց:

«Տէր Աստուած ստեղծեց նաեւ դաշտային բոլոր կենդանիներին, երկնքի բոլոր թռչուններին եւ բերեց Ադամի մօտ, որ տեսնի, թէ Ադամը ինչ անուններ կը տայ դրանց: Եւ Ադամն ինչ անուն որ տար ամեն կենդանուն, այն էլ կլինէր դրա անունը» 4: Ինչպէս իր հովուին սիրող հոտ, ողջ կենդանական աշխարհը գլխիկոր եկաւ կանգնեց Ադամի առջեւ: Եկան խոնարհաբար՝ երկիւղելով Ադամի սքանչելի փառքի լոյսից: Եկան համերաշխութեամբ՝ առանց միմեանցից վախենալու. զառը չէր վախենում գայլից, եղնիկը՝ առիւծից: Եկան, խոնարհած աչքերով կանգնեցին Ադամի առաջ, որպէսզի նա իրենց անուններ դնի: Այդպէս այդ օրը Ադամը տէր եւ իշխան դարձաւ ողջ երկրի վրայ: Ահա Աստուած մարդուն տուեց իշխանութիւն, նրան զգեստաւորեց փառքով, տուեց Եդեմի Դրախտը, եւ ի՞նչ աւելին պէտք է անէր Աստուած Ադամի համար, որպէսզի նա չմեղանչէր:

«Տէր Աստուած թմրութիւն բերեց Ադամի վրայ, եւ սա քնեց: Աստուած հանեց նրա կողոսկրերից մէկը եւ այդ տեղը մաշկով ծածկեց: Տէր Աստուած Ադամից վերցրած կողից կին արարեց եւ նրան բերեց Ադամի մօտ» 5: Հաւանական է, որ Ադամը քնի մէջ տեսաւ այն ամէնը, ինչ կատարուեց իր հետ: Մէկ ակնթարթում վերցուեց նրա ձախ կողից, եւ մէկ ակնթարթում էլ նրանից մարմին ձեւաւորուեց. մերկ կողից կերպաւորուեց կնոջ մարմին: Այնժամ Աստուած բերեց նրան եւ ցոյց տուեց Ադամին: Տեսնելով նրան՝ Ադամն ասաց. *«Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից»* 6: «Սա նման չէ բոլոր այն արարածներին, որոնց ես անուններ տուի: Նրանք արարուեցին հողից, իսկ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից»: Ադամը սա ասաց կամ մարգարէաբար, կամ էլ, ինչպէս վերն ասացինք, նա ամէն ինչ տեսաւ քնած ժամանակ: Նախքան Եւայի ստեղծուելը նա արդէն կար Ադամի մէջ՝ այն կողի մէջ, որը վերցուեց Ադամից: Կար ոչ միայն մարմնով, այլեւ հոգով, որովհետեւ Աստուած Ադամից վերցրած կողին ոչինչ չաւելացրեց, բացի արտաքին տեսքից ու գեղեցկութիւնից: Ապա ուրեմն այդ կողի մէջ կար ամէն ինչ կնոջ կատարեալ ձեւաւորման համար: Կինը ստեղծուեց կողից եւ ոչ հողից, որպէսզի նա իրեն հաւասար չհամարէր տղամարդուն եւ հնազանդ լինէր նրան: Ստեղծուեց մարդուց՝ նրա կողից, որպէսզի որպէս մարմնի անդամ, հնազանդ լինէր գլխին: Ինչպէս որ խօսելը պատշաճում է գլխին, իսկ լռութիւնը՝ կողին, այնպէս էլ կինը պէտք է լուռ մնար տղամարդու իշխանութեան տակ: Կինը ստեղծուեց կողից, որպէսզի նրան ոչ պատուեն գլխին հաւասար, ոչ էլ նուաստացնեն ոտքին հաւասար, այլ պատուեն միջին չափով:

«Օձը երկրի վրայ ստեղծած բոլոր գազաններից աւելի խորամանկ էր» 7: Լսելով, որ նրանք կարող են ուտել Դրախտի բոլոր պտուղներից, եւ արգելուած է միայն մէկից, օձը [եւ նրանում բնակուողը՝ սատանան], մտածեց ամօթահար հեռանալ, որովհետեւ տեսաւ, որ նրանց չի կարող ոչինչ խոստանալ եւ մոլորեցնել: Ապա ուշադրութիւն դարձնելով, որ Աստուած պատուիրել էր ոչ միայն չուտել Ծառի պտղից, այլեւ չմօտենալ, հասկացաւ, որ Աստուած զգուշացրել էր նրանց Ծառին մօտենալուց, որպէսզի չգերվէին նրա գեղեցկութիւնից: Ահա օգտագործելով այս միտքը՝ մօտեցաւ Եւային եւ ասաց. *«Չէ՞ք մահանայ, որովհետեւ Աստուած գիտէր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք աստուածների նման՝ կ՚իմանաք չարն ու բարին»* 8: Կինը խորամուխ չեղաւ այս խօսքերի մէջ, չքննեց ու չհասկացաւ, որ նա որպէս փորձիչ եւ բարիատեաց, խօսում է ընդդէմ Աստուծոյ: Նա չհակաճառեց օձին եւ չասաց. «Ինչպէ՞ս կը բացուեն իմ աչքերը, երբ նրանք փակ չեն, եւ ինչպէ՞ս ճաշակելով կ՚իմանամ չարն ու

բարին, երբ գիտեմ նաեւ առանց ճաշակելու: Ես ունե՛մ այն, ինչ խոստանում ես: Հեռացի՛ր եւ մի՛ խաբիր քո նենգութեամբ ու խորամանկութեամբ»: Ցավոք, Եւան այս խօսքերը չասաց օձին, որովհետեւ եթէ ասէր, կը յաղթէր նրան: Եւ, աւա՜ղ, լսելով օձին, հայեացքը դարձրեց Ծառին, որին արգելուած էր մօտենալ, տրուեց իր աչքերի ցանկութեանը, գերուեց Ծառի գեղեցկութիւնից եւ ցանկացաւ աստուածանալ, ինչպէս խոստացել էր օձը: Պոկեց արգելուած պտուղը, նախ Ադամից ծածուկ ինքը կերաւ, ապա տուեց նաեւ նրան, ով եւս ճաշակեց: Եւ տես, որ Եւան նախ ինքը ճաշակեց, որովհետեւ հաւատալով օձին՝ կարծեց, թէ ինքն աստուածութեամբ զգեստաւորուած կը մօտենայ Ադամին, ումից ինքը ստեղծուեց որպէս մարդ: Նա շտապեց ուտել նախքան Ադամը, որպէսզի դառնար գլուխը նրա, ով իր գլուխն էր, դառնար իշխողը նրա, ումից ինքը պէտք է հրամաններ ընդունէր, աստուածութեամբ մեծ լինէր նրանից, ումից փոքր էր որպէս մարդ: Ահա ճաշակեց, սակայն տեսաւ, որ չդարձաւ աւելի հիասքանչ, քան առաջ էր, չբացուեցին աչքերը, եւ աստուած չդարձաւ, ինչպէս որ սպասում էր: Այնժամ պտղից տուեց նաեւ Ադամին եւ մեծ խնդրանքներով համոզեց նրան եւս ճաշակել: Ասենք նաեւ, որ եթէ անմիջապէս բացուէր Եւայի մերկութիւնը, ապա Ադամը կը վախենար, կը զգուշանար եւ չէր ճաշակի: ***Այլ պէտք էր, որ Ադամը եւս փորձուէր:*** Եթէ Ադամը պահէր պատուիրանը եւ չճաշակէր պտղից, թէպէտ մեղաւոր չէր համարուի, բայց եւ յաղթող էլ չէր ճանաչուի, մինչեւ որ ինքը եւս չփորձուէր: Եթէ Ադամը տեսնէր կնոջ մերկութիւնը, բնաւ չէր ճաշակի ոչ թէ յանուն պատուիրանապահութեան, այլ Աստուծոյ երկիւղից: ***Ապա ուրեմն պէտք էր, որ Ադամը եւս փորձուէր, ինչպէս որ Եւան***: Եւայի ճաշակելուց յետոյ անմիջապէս չերեւաց նրա մերկութիւնը, այլ երբ նա գայթակղեցրեց Ադամին, եւ սա եւս ճաշակեց, այնժամ ինչպէս Սուրբ Գիրքն է ասում. *«Երկուսի աչքերն էլ բացուեցին, եւ նրանք հասկացան, որ մերկ են»* 9: Ահա այսպէս բացուեցին նրանց աչքերը. բացուեցին ոչ թէ նրա համար, որ աստուածներ դառնային, ինչպէս խոստացել էր օձը, այլ բացուեցին, որ տեսնէին իրենց մերկութիւնը, որին ձգտում էր հասնել թշնամին: Նախահայրերի աչքերը բաց էին նախքան պտղի ճաշակումը, բայց փակ էին, որպէսզի չտեսնէին Կենաց Ծառը եւ իրենց մերկութիւնը: Թշնամին նախանձում էր նրանց, որովհետեւ նրանք փառքով եւ շնորհներով վեր էին բոլոր ստեղծուածներից, եւ միայն նրանց խոստացուեց յաւիտենական Կեանքը, որը կարող էր տալ Կենաց Ծառը: Նախանձելով նրան, ինչ ունէր Ադամը եւ նրան, ինչ պիտի ունենար՝ նենգութեամբ դաւեր նիւթեց եւ շատ արագ նրանց զրկեց այն բանից, ինչը պէտք է պահէին առանց նահանջելու: Եւ նաեւ եթէ նախահայրերը զոջային պատուիրանը խախտելու համար, ապա թէպէտ նրանց չէին վերադարձուի այն խոստումները, որոնք տրուեցին նախքան մեղանչելը, սակայն չէին կրի այն բոլոր անէծքները, որոնք տրուեցին իրենց եւ ողջ երկրին: Աստուած համբերատար եղաւ եւ յապաղեց նրանց մօտենալ այն պատճառով, որպէսզի նրանք գիտակցէին իրենց մեղքը եւ աղաչելով Իրենից թողութիւն խնդրէին: Սակայն, ցաւօք, նրանք չօգտագործեցին իրենց ընձեռուած այդ հնարաւորութիւնը:

«Երեկոյեան նրանք լսեցին Տէր Աստուծոյ Դրախտում շրջագայելու ոտնաձայնը, եւ Ադամն ու իր կինը Տէր Աստծուց թաքնուեցին Դրախտի ծառերի մէջ» 10: Տես, թէ որքան մերձաւոր եւ մտերիմ էին Աստծուն, որ անգամ ճանաչում էին Նրա ոտնաձայները: Աստուծոյ դանդաղ մօտեցող մեղմ ոտնաձայները նպատակ ունէին նրանց նախապատրաստել զոջման, սակայն անօգուտ անցան մարդասէր

Աստուծոյ շնորհած առիթները: Այնժամ Աստուած Իր ոտնաձայներին միացրեց Իր ձայնը եւ ասաց. «Ադա՛մ, ո՞ւր ես»: Մի՞թէ չգիտէր, թէ ուր էր, մի՞թէ չէր տեսնում ամենատես աչքը, մի՞թէ անտեղեակ էր Արարիչը, քաւ լիցի, սակայն հարցրեց՝ ***ո՞ւր ես:*** Տրտմած էր Նրա ձայնը ու տարակուսած՝ Նրա խօսքը: Ինչպէս մի հովիւ, ով մի ոչխար է կորցնում իր հօտից, տրտմալից ձայնով է լցնում ողջ անտառը, նոյնն էր Արարիչը Դրախտում: «Ադա՛մ, ո՞ւր ես, ինչո՞ւ ես թաքնուում Արարչիս երեսից: Ինչո՞ւ ես ամաչում եւ ինչո՞ւ ես լցուել երկիւղով: Ես չստեղծեցի քեզ, որ ամաչէիր Ինձանից, այլ որպէսզի Ինձ զիրկդ եւ հոգուդ մէջ առնէիր: Ասա՛, ո՞ւր ես, անարգուած զազրելի վիճակո՞ւմ: Ամօ՞թն է պատել քեզ, խի՞ղճդ է տանջում»:

Բայց Ադամն իր յանցանքը խոստովանելու փոխարէն ասաց. *«Լսեցի Քո ձայնն այստեղ՝ Դրախտում, ամաչեցի եւ որովհետեւ մերկ էի, թաքնուեցի»* [11]: «Լսեցի Քո ձայնը եւ վախեցայ». մի՛ վախեցիր, Ադա՛մ, Աստուծոյ ոտնաձայները նրա համար են, որ սիրտդ պատրաստես զղջման եւ շուրթերով մեղայ ասես: Խոստովանի՛ր, նախքան Ինքը Աստուած քեզ կը հարցնի: Ասա՛ օձի մասին, որ խաբեց քեզ, ասա՛, որ խախտեցիր Իր պատուիրանը եւ շտապի՛ր խոստովանել շուրթերով, որպէսզի մարդասէր Աստծուց ներում ստանաս: Ի՞նչ արեցիր, Ադա՛մ, արդեօք աստուած դարձար: Դու մահ կրեցիր քո եւ քո յաւիտենական սերունդների վրայ: Դու լսեցիր ու հաւատացիր նրան, ով քեզ ոչ մի բարիք չէր արել եւ փոխարէնը թիկունք դարձրիր Նրան, Ով քեզ տուել էր ամէն բան: Ընդունեցիր օձին որպէս բարեկամ, բայց նա քեզ հետ վարուեց նենգութեամբ, որպէսզի քեզ զրկի փառքից: «Ինչո՞ւ վախեցար, Ադա՛մ, մի՞թէ ահաւոր երեւացի քեզ, մի՞թէ սաստիկ եւ ահարկու ձայնով խօսեցի քեզ հետ, մի՞թէ սաստեցի կամ յանդիմանեցի, մի՞թէ երեկուայ պէս իմ ընտանի փառքով չերեւացի Իմ քաղցրահայեաց աչքով»:

«Այո՛,- ասաց,- սակայն մերկ էի եւ թաքնուեցի»: Արդարեւ, մերկացել էր Ադամը ոչ միայն հանդերձներից, այլեւ արդարութիւնից ու բոլոր առաքինութիւններից: Նա ասաց. «Լսեցի Քո ձայնը, վախեցայ եւ թաքնուեցի»: Ադամը լռեց այն մասին, ինչը պէտք է յայտնէր խոստովանութեամբ եւ փոխարէնն ասաց այն, ինչ պէտք չէր ասել, եւ որն իրեն ոչ մի օգուտ չբերեց: Եւ ի՞նչ, Արարիչը դարձեալ տարակուսած ձայն արձակեց. «Ո՞վ ասաց, թէ մերկ ես, մի՞թէ կերար այն Ծառի պտղից, որ պատուիրել էի չուտել: Թէպէտ արել ես, ասա՛, չեմ մեղադրի քեզ եւ չեմ բարկանայ, քանզի Իմ արարածն ես, Իմ պատկերը, Իմ նմանութիւնը, Իմ անարատ ձեռքի գործը, որի համար էլ կը խնայեմ եւ չեմ եղծանի պատկերդ, չեմ ապականի նմանութիւնդ, քանզի ողորմած եմ եւ անոխակալ: Միայն դարձի՛ր Ինձ, եւ Ես կը դառնամ դէպի քեզ, միայն շտապի՛ր ապաշխարել, միայն խոստովանի՛ր մեղքերդ, միայն մեղայ ասա: Չեմ նախատի մեղաւորիդ, չեմ յանդիմանի ընկածիդ, այլ կ’ողորմեմ յանցաւորիդ, կը հագցնեմ մերկացածիդ եւ կը կենդանացնեմ մեռեալիդ: Մի՛ տրտմեցրու Արարչիս քո անդարձութեամբ, տո՛ւր Ինձ այն, ինչ կամենում եմ՝ ապաշխարութիւն, տո՛ւր Ինձ այն, ինչ սիրում եմ՝ զղջում»: Եւ այս ամէնից յետոյ Աստուած, չտեսնելով մարդուն զղջման եւ խոստովանութեան մէջ, դարձեալ տրտմալից ձայն արձակեց՝ ասելով. «Զղջացի, որ մարդուն արարեցի երկրի վրայ»:

Իսկ Եւան ողջ մեղքն իր վրայ վերցնելու եւ ներում խնդրելու փոխարէն ասաց. *«Օձը խաբեց ինձ, եւ ես կերայ»* [12]: Երբ երկուսն էլ հարցման ենթարկուեցին, եւ ի յայտ եկաւ, որ նրանք չունեն մեղքի գիտակցութիւն, չունեն զղջում եւ ինքնայանդիմանութիւն, այնժամ Աստուած դիմեց օձին ոչ թէ

հարցումով, այլ պատժիչ վճռով, քանի որ ով զղջում է իր յանցանքի համար, նրան է տրւում հարցաքննութիւն, իսկ ում խորթ է զղջումը, նրա համար միանգամից արձակւում է պատժիչ վճիռը: Օձը չասաց, թէ ես չարեցի, որովհետեւ վախեցաւ սուտ խօսել, բայց նաեւ չասաց, թէ արեցի, որովհետեւ նրան խիստ օտար է զղջումը, որի համար նրան ասուեց. *«Քանի որ այդ բանն արեցիր, անիծեա՛լ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մէջ: Քո լանջի ու որովայնի վրայ սողաս, ողջ կեանքումդ հող ուտես: Փորիդ վրայ սողաս, որովհետեւ քո պատճառով կինը ենթարկուեց ցաւերով որդիներ ծնելու: Հո՛ղ ուտես քո կեանքի բոլոր օրերում, որովհետեւ Ադամին եւ Եւային զրկեցիր Կենաց Ծառի պտուղներից: Թշնամութիւն պիտի դնեմ քո եւ կնոջ միջեւ, քո սերնդի եւ կնոջ սերնդի միջեւ, որովհետեւ խաբեցիր կնոջը եւ նրանից ծնուածներին ու քո նենգութեամբ նրանց մահ պատճառեցիր»* 13:

Արդարապէս դատավճիռ արձակուելն սկսուեց օձից, որովհետեւ որտեղից ծագում է յանցանքը, այնտեղից սկսած տրւում է պատիժը: Աստուած նախ օձին բարկութեամբ դատավճիռ արձակեց, որպէսզի Ադամն ու Եւան երկնչէին ու զղջային եւ գուցէ այդպէս ազատուէին Աստուծոյ արդար պատժից: Երբ օձն անիծուեց, իսկ Ադամն ու Եւան մինչեւ իրենց դատավճիռը ներում չխնդրեցին, այնժամ Աստուած արձակեց նաեւ նրանց արդար վճիռը: Նախ սկսեց Եւայից, որովհետեւ Ադամը նրա ձեռքով ընկաւ մեղքի մէջ եւ ասաց. *«Պիտի անչափ բազմացնեմ քո ցաւերն ու քո հառաչանքները: Ցաւերով պիտի զաւակներ ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ»* 14: Իսկ դու, Եւա՛, ազատ պիտի լինէիր երկունքի ցաւերից, բոլոր հոգսերից, վշտերից, մահից: Այժմ դու պէտք է հնազանդ լինես քո ամուսնուն եւ ոչ թէ տիրես նրան: Նա պիտի քեզ տիրի, որովհետեւ պտուղը ճաշակելիս կամենում էիր իշխել նրա վրայ:

Ցաւօք, Եւայի դատավճիռն արձակելու ընթացքում Ադամի մօտ էլ ի յայտ չեկաւ զղջում, որի համար նա եւս արժանացաւ պատժի հետեւեալ վճռով. *«Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին եւ կերար այն Ծառի պտղից, որից միայն քեզ պատուիրեցի չուտել, բայց կերար դրանից, թող անիծեա՛լ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքներով հայթայթես քո սնունդը քո կեանքի բոլոր օրերին»* 15: Այսպէս մեղանչած Ադամի պատճառով անէծք իջաւ չմեղանչած երկրի վրայ:

«Տանջանքներով հայթայթես քո հացը կեանքիդ բոլոր օրերին, որովհետեւ խախտեցիր Իմ պատուիրանը: Քանի դեռ պահում էիր այն, անհոգաբար էիր ուտում քո հացը, բայց քանի որ մեղանչեցիր, թող երկիրը փուշ ու տատասկ բուսեցնի քեզ, որովհետեւ ընդունելով կնոջդ չար խորհուրդը՝ արհամարհեցիր Դրախտի տենչալի պտուղները: Երեսիդ քրտինքով ուտես քո հացը, որովհետեւ չկամեցար առանց քրտնքի ճաշակել փափկութեան Դրախտի բարիքներից: Եւ թող այդպէս լինի, մինչեւ հող դառնալդ, որից ստեղծուեցիր, որովհետեւ արհամարհեցիր Իմ պատուիրանը, որը քեզ յաւիտենական կեանք պիտի շնորհէր: Քանի որ ստեղծուած ես հողից, որը մոռացար եւ կամեցար աստուածանալ, ապա հող կը դառնաս, որպէսզի քո այս նուաստացումով հասկանաս, թէ ինչ արեցիր...»:

Հանելով մարդուն փափկութեան Դրախտից՝ Աստուած փակեց նրա առջեւ Կենաց ծառի ճանապարհը, որպէսզի չտեսնի նաեւ Դրախտի վայելչութիւնները: Անէծք իջաւ երկրի վրայ՝ փուշ եւ տատասկ, տանջանքներով հաց եւ մահ: Բայց սա Աստուծոյ մարդասիրութեան նշան է, ինչպէս որ ասել է մարգարէի

բերանով. *«Քո ապստամբութիւնը քեզ խրատ է լինելու, եւ քո չարութիւնները կշտամբելու են քեզ: Խելքի կը գաս ու կը տեսնես, որ քեզ համար դառնաղէտ է Ինձ լքելը»* [16]:

Այդուհանդերձ Բարերարը չէր հեռանում նրանցից ոչ միայն Դրախտում, այլեւ Դրախտից դուրս, երբ բնակեցնում էր Դրախտին յանդիման...
վԱդամի կողից արարուած կինը շատ շուտով դարձաւ մարդկային ողբերգութեան պատճառ: Այդ կողը քանդեց փառաւոր պատը՝ Ադամին, վերացրեց նրա հիասքանչ փառքը: Նա Ադամին տրուեց որպէս օգնական, սակայն շատ շուտով դարձաւ կորստեան պատճառ:

Մարդու մահուան պատճառը եղաւ օձը:

Արդ, այն անիծեալ օձ եւ կամակոր վիշապ սատանան երբ գալիս է մարտնչելու եւ խռովութիւն զցելու, մօտենում է ծածկապէս եւ թաքուն, քանզի ինչպէս հրեշտակների պահպանութիւնն է ծածկապէս մեզ վրայ, այդպէս էլ չարից եկած խռովութիւնները: Մենք մարմնաւոր աչքերով չենք տեսնում սատանային: Ուրեմն պէտք է աւելի զգոյշ եւ արթուն լինել, քանի որ տեսանելի թշնամուց զգուշանալն աւելի հեշտ է, քան անտեսանելի թշնամուց, որից չենք կարող փախչել, եթէ բարւօք զինուած չլինենք: Սատանան բացայայտ չի մարտնչում, որպէսզի նոյն պահին չբռնուի, այլ շատ յաճախ իր դաժան թոյներն արձակում է բարեկամութեան քօղի տակ: Այդպէս վարուեց Ադամի հետ՝ ցոյց տալով, թէ հոգում է նրա մասին՝ ասելով. «Կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք աստուածների նման»: Ուրեմն պէտք է զգոյշ եւ սթափ լինել, որպէսզի կարողանանք ճանաչել սատանայի դաւերը, փախչել նրանցից եւ յաղթել:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ինչո՞ւ Աստուած մեզ այնպէս չստեղծեց, որ չկարողանայինք մեղանչել: Սրա համար Սուրբ Գիրքն ասում է. *«Մի՞թէ ստեղծուածն իր ստեղծողին կ'ասի, թէ՝ դո՛ւ չես ինձ ստեղծել, կամ արարածն՝ Արարչին, թէ՝ իմաստութեամբ չես արարել ինձ»* [17]: Իւրաքանչիւր բանական էակ անձնիշխան է: Մեր մէջ միասին են բանականութիւնը եւ անձնիշխանութիւնը, նախ խորհում ենք բանականութեամբ եւ ապա անձնիշխանութեամբ ընտրում բարին կամ չարը: Քանի որ բանական ենք, ուրեմն նաեւ անձնիշխան ենք: Անձնիշխան է Աստուած, անձնիշխան են հրեշտակները եւ ընտրեալների հոգիները, որոնք չեն կարող չարն ընտրել, այլ իրենց ազատ կամքով ընտրում են բարին եւ խոտորուում չարից: Դեւերը նոյնպէս ունեն անձնիշխանութիւն, սակայն միշտ մերժում են բարին եւ ընտրում չարը ոչ թէ բռնադատութեամբ, այլ իրենց իսկ խստասրտութեամբ: Այսպէս Աստուած մարդուն անձնիշխանութիւն տուեց, որպէսզի նա ազատօրէն ընտրի բարին, ինչպէս հրեշտակները եւ բոլոր սուրբերը, սակայն շատերն ընտրում են չարը եւ մերժում բարին: Ապա ուրեմն անմեղադրելի է Աստուած, որ անձնիշխանութիւն տուեց բարին ընտրելու համար, իսկ իրենք՝ մարդիկ, դարձան դէպի չարը: Նաեւ՝ անձնիշխանութեամբ մարդը նման է Աստծուն, որի համար ասում է. «Աստուած մարդուն արարեց Իր պատկերով», եւ եթէ մարդն անձնիշխան չլինէր, Աստուծոյ պատկեր չէր լինի:

Ուրեմն անմիտ չլինենք, ինչպէս մեր նախնի Ադամը, նրա պէս չարդարանանք մեր մեղքերի մէջ, այլ խոնարհուենք եւ հետեւենք Աստուծոյ ձայնին ու Նրա մարդասիրութեան փշրանքները խնդրենք: Որքան Նա մեզ խոնարհուած է տեսնում, այնքան առաւել է ողորմում եւ կրկնապատիկ էլ մխիթարութիւն տալիս: Արդ, այս ամէնն իմանալով՝ գնանք Կանչողի հետեւից: Նա կանչում է մեզ, քանզի տեսնում է, որ ընկած ենք զանազան մեղքերի անբժշկելի ցաւերի մէջ,

կանչում է խնդրելով եւ խոստանում ձրի բժշկել, իսկ մենք հրաժարւում ենք գնալ Նրա հետեւից, որովհետեւ մեզ առաւել սիրելի է մեղքերի դառնութիւնը, քան սրբարար արտասուքների քաղցրութիւնը: Սակայն ով սիրում է մեղքը, ատում է իր անձը:

ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Մանկունք նոր Սիովնի. փառաբանիչք Սուրբ Երրորդութեանն.
զյիշատակ սրբոյն Կիւրղի հայրապետին.
տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն. օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր:
Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջ փառաբանութեան.
զյիշատակ սրբոյն Կիւրղի օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր:
Քահանայք եւ պաշտօնեայք՝ միաբան հաւատացեալք.
զյիշատակ սրբոյն Կիւրղի օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր:
(Շարակնոց)

315-386թթ.
Երուսաղէմի պատրիարք 348 թուականից
Եպիսկոպոսութիւնը վարեց 35 տարի
Սուրբ Խաչի երեւումը Երուսաղէմում 351 թուականի մայիսի 7-ին

Սուրբ Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետը, որ Եկեղեցու տասներկու վարդապետներից մէկն է, տիրապէս եղաւ Երուսաղէմի Աթոռի պարծանքը, որովհետեւ Տեառնեղբայր Յակոբոս Արդարից յետոյ աստուածակոխ քաղաքի բոլոր եպիսկոպոսների մէջ նա հանդէս եկաւ որպէս մեծանուն եւ բազում արդիւնքներ տուած հովիւ՝ թողնելով լուսափայլ վարդապետութեամբ հարուստ ժառանգութիւն:

Բարեպաշտ ծնողների զաւակ էր: Հաւանական է, որ ծնուել է Երուսաղէմում, ուր մեծացել եւ կրթուել է աստուածպաշտութեամբ ու աստուածային գիտութեամբ: Յոյժ գիտակ էր Հին եւ Նոր Կտակարաններին, ինչպէս նաեւ քաջատեղեակ արտաքին գիտութիւններին եւ փիլիսոփայութեանը: Նա աչքի էր ընկնում էր իր անարատ վարքով, սիրելի էր Աստծուն եւ մարդկանց: Դեռեւս մանկուց առաքինութիւնը ցանկալի էր նրան, որի համար ընտրեց սրբակրօն եւ ճգնաւորական կեանքը: Առանձնացաւ եւ իր անձը մատնեց պահեցողութեան, ճգնութիւնների, աղօթքների ու հոգեւոր կրթութեան, քաջածանօթ եղաւ Սուրբ Գրքի խորախորհուրդ իմաստներին եւ հոգելից հայրերի աւանդութիւններին՝ սկսած առաքեալներից մինչեւ իր օրերը: Նա լի էր իմաստութեամբ, առատապէս հարուստ վարդապետութեամբ, որով էլ զինուած մարտնչում էր ընդդէմ ժամանակի բիւրատեսակ աղանդաւորների, հեթանոսների եւ հրէաների:

Այդ պատճառով արժանապէս եկեղեցու սարկաւագ ընտրուեց Երուսաղէմի սուրբ Մակար հայրապետի կողմից, եւ ապա մօտ 335 թուականին նրա յաջորդ՝ Մաքսիմոս Խոստովանող հայրապետի ձեռամբ քահանայական կարգ ստացաւ: Սա այն Մաքսիմոսն է, ում կռապաշտների հալածանքների ժամանակ Քրիստոսի անուան եւ հաւատի համար նրան զրկել էին աջ աչքից եւ ջախջախել աջ սրունքը:

Աթոռանիստ Եկեղեցում սովորոյթ կար, որ ժողովրդի առջեւ խօսէին ընտրուած մէկ, երկու կամ աւելի քահանաներ, որից յետոյ գալիս էր եպիսկոպոսը՝ հովուական իշխանութեամբ բեմից քարոզելու համար: Սա ինքը՝ երանելի Կիւրեղը, իր սքանչելի վարդապետութեան համար Մաքսիմոսի կողմից կարգուեց որպէս քարոզչութեան առաջնորդ եւ վարդապետների վարդապետ, եւ գրեթէ բոլոր կիրակի օրերին ինքն էր, որ իբրեւ հայրապետի փոխանորդ՝ սփռում էր իր քարոզները ժողովրդին: Սակայն նա առաւել ծանր գործ ունէր. պէտք էր ի շինութիւն Եկեղեցու կարողանար մեծ իմաստութեամբ եւ զգօնութեամբ ընդունէր ամէն տարի հեռուներից Երուսաղէմ եկող ժողովրդին, որոնց մէջ կային իմաստասէրներ, գիտակներ, եկեղեցական եւ աշխարհական կարգի երեւելի անձինք: Նրանք մշտապէս գալիս էին Երուսաղէմ՝ մկրտուելու Յորդանան գետում, եւ սուրբ Կիւրեղն էր, որ պատրաստում էր նրանց՝ արժանապէս ընդունելու սուրբ մկրտութիւն հայրապետի ձեռամբ եւ նրա քահանաների ու սարկաւագների գործակցութեամբ:

Նա մաքրում էր նաեւ ժամանակի ամենուր տարածուած հերետիկոսների եւ աղանդների սփռած չար մոլախոտերը, որի համար մեծ ջանքերով կրթում ու ամրացնում էր ժողովրդին, յատկապէս ուղղափառ վարդապետութեամբ նորատունկ հաւատ ունեցողներին: Մաքսիմոս հայրապետի օժանդակութեամբ անխոնջ աշխատանք էր տանում այդ առաքելական գործի համար՝ կրելով մեծ տառապանքներ ու հալածանքներ ոչ միայն հերեսիովտացիներից [redacted]: եւ սուտանուն եղբայրներից, այլեւ ուղղափառներից: Քանզի այդ օրերին Նիկիոյ սուրբ ժողովում պիղծ Արիոսին դատապարտելուց յետոյ ողջ Եկեղեցին ալեկոծւում եւ չարչարւում էր արիոսականների երեսից. նրանք Եւսեբիոս Նիկոմիդացու գլխաւորութեամբ ձեռնամուխ էին եղել Աթոռից հեռացնել երեւելի ուղղափառ եպիսկոպոսներին, ինչպէս սուրբ Աթանաս Ալեքսանդրացուն եւ նրա համակիրներին: Նրանց ենթարկում էին աքսորների, հալածանքների, վտարում էին եւ նրանց փոխարէն կարգում չարափառների կամ էլ այն ուղղափառներին, որոնց ակնկալում էին երկդիմի խօսքերով դարձնել իրենց կողմը: Այդ օրերին գրեթէ բոլոր քաղաքներում հակառակութիւններ եւ գժտութիւններ կային եպիսկոպոսների ու եկեղեցու ժառանգաւորների միջեւ:

Սարդիկիայի ժողովում եւս, որը տեղի ունեցաւ 347 թուականին, սաստիկ խռովութիւն եւ պառակտում ընկաւ եպիսկոպոսների մէջ: Ուղղափառների մեծամասնութիւնը մնաց Սարդիկէում՝ Արիոսի եւ նրա հետեւորդների աղանդն իսպառ ոչնչացնելու համար, իսկ արիոսամիտ եւսեբեանները հաւաքուեցին Փիլիպուպօլիսում՝ ընդդէմ ուղղափառների առանձին ժողով գումարելու համար: Եւ այդպէս այստեղից ու այնտեղից միմեանց դէմ վեր ելան նզովքներ եւ շրջաբերական թղթեր: Սարդիկեաններն ու փիլիպուպոլսեաններն իրենց հռչակեցին Արիոսի հետեւորդներ եւ Նիկիոյ սուրբ ժողովի թշնամիներ: Այս ամէնից վարանումների մէջ ընկան շատ եպիսկոպոսներ, ովքեր հակամիտում էին՝ կէսն այս կողմ, կէսն՝ այն կողմ: Մի մասն էլ, կամենալով գնալ միջին

ճանապարհով, մի նոր՝ կիսաարիոսական հերձուած ստեղծեցին: Մեծ վտանգ էր ինչպէս նրանց հաղորդ, այնպէս էլ անհաղորդ լինելը, որը լաւ առիթ էր նոր հերձուածի առաջացման համար:

Այս իրավիճակում Երուսաղէմի Մաքսիմոս հայրապետը, ում որպէս իր առաջնորդի լսում եւ հնազանդւում էր Կիւրեղը, լաւ համարեց սիրով ընդառաջ գնալ ամէնքին, որպէսզի այդ կերպով թէրեւս շահի երկու կողմերին: Եւ երբ առաւել զիջեց, եւսեբէականների պատրանքով Մաքսիմոս հայրապետը ներքաշուեց մասնակցելու Տիւրոսի ժողովին, որն ընդդէմ Աթանասի գումարուել էր արիոսականների կողմից, եւ դրանով իսկ հարկադրուեց մասնակցել նաեւ Երուսաղէմի միւս ժողովին, որը դարձեալ գումարուել էր ընդդէմ Աթանասի: Այդ պատճառով Մաքսիմոս հայրապետը միաժամանակ համարուեց կիսաարիոսական, յատկապէս երբ չանսաց սուրբ Պափնոտիոս խոստովանողի խրատներին, որը եւս հաւատի համար զրկուել էր մի աչքից: Նա Մաքսիմոսի հետ եղել էր Տիւրոսի ժողովին եւ տեսնելով, որ ժողովը գլխաւորողներն ընդդէմ Աթանասի անցել էին չարափառների կողմը, բռնել էր Մաքսիմոսի ձեռքը եւ ասել. «Օ՛ն, գնանք այստեղից», հասկացնելով, թէ ովքեր մատնում են իրենց անձերը Քրիստոսի սուրբ անուան խոստովանութեան համար, արժան չէ, որ մասնակցեն քրիստոսամարտների ժողովին: Իսկ Մաքսիմոսն այդժամ խելամուտ եւ խորամուխ չեղաւ չարափառների խորհուրդների մէջ եւ թէպէտ միաժամանակ այդպէս վտանգի մատնուեց, սակայն, յետոյ հասկանալով արիոսականների խարդաւանքները, հեռացաւ նրանցից եւ միաբանուեց սուրբ Աթանասին: Այնժամ Մաքսիմոսի հրամանով Երուսաղէմում տասնհինգ եպիսկոպոսների մասնակցութեամբ ժողով գումարուեց, ուր խոստովանեցին, որ իրենք Աթանասին Աթոռից հեռացրել են չարի պատրանքներով: Եւ ապա ստորագրութեամբ նամակ պատրաստեցին ու այն ուղարկեցին Ալեքսանդրիա՝ Եգիպտոսի եպիսկոպոսներին:

350 թուականին վախճանուեց Մաքսիմոսը, եւ միաժամանակ Երուսաղէմի Աթոռն անժառանգ մնաց: Արիոսականները ջանում էին տիրել այդ Աթոռին, բայց ժողովուրդը՝ իբրեւ արժանաւոր առաջնորդի, կամենում էր այդ Աթոռին տեսնել հայրապետանոցի երէց Կիւրեղին: Շատ վէճերից յետոյ գումարուեց եպիսկոպոսաց ժողով, ուր տեղի տալով ժողովրդի ցանկութեանը՝ վճռուեց առաջնորդ ընտրել երանելի Կիւրեղին: Այս ընտրութեանը հաւանութիւն տուեցին ոչ միայն ուղղափառները, այլեւ կիսաարիոսականները եւ ծպտեալ արիոսականներից շատերը, քանզի թէպէտ գիտէին Կիւրեղին որպէս իրենց աղանդի ջախջախիչ, սակայն, ճանաչելով նրա հեզահամբոյր վարքը եւ խաղաղասիրութիւնը, յօժարեցին միաբանուել նրա ընտրութեան հարցում:

Նրա հայրապետութեան առաջին տարում, կամ երկրորդ տարուայ սկզբում՝ 351 կամ 352 թուականին, մայիս ամսուայ եօթերորդ օրը, առաւօտից մինչեւ օրուայ երրորդ ժամը [2]: երկնքում երեւաց հրաշափառ լուսեղէն մեծ Խաչ, որն իր պայծառութեամբ յաղթում էր արեգակի ճառագայթներին: Այն երեւաց Գողգոթայի սուրբ լերան վրայ եւ ցոլաց մինչեւ սուրբ Ձիթենեաց լեռը: Յոյժ գեղեցիկ եւ սքանչելի էր՝ շուրջանակի ծիածանաձեւ եւ պատուած պսակաձեւ նշոյլներով: Այն բազմութեանը երեւաց ոչ թէ հարեւանցի, այլ յայտնապէս եւ երկար ժամեր ակներեւ ամէնքին: Դղրդաց ողջ քաղաքը. մարդկանց ապշած բազմութիւնը հիացաւ ցոլացող սուրբ Խաչի արփիագեղ տեսիլքով: Բոլոր տեսնողները՝ թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք, թէ՛ ծերերը, թէ՛ մանուկները, թէ՛

բնակիչները, թէ՛ օտարականները, թէ՛ քրիստոնեաները, թէ՛ հեթանոսները, իբրեւ մէկ հոգի դարձած, հոծ բազմութեամբ ընթացան դէպի Սիօնի մայր եկեղեցին: Բոլորը միաբերան օրհնում էին Քրիստոս Աստծուն եւ պանծացնում սուրբ հաւատը: Մեծ ուրախութեամբ լցուեցին քրիստոնեաները, իսկ շատ անհաւատներ ընդունեցին Քրիստոսի սուրբ հաւատը եւ մկրտուեցին:

Նա ինքը՝ սուրբ Կիւրեղ հայրապետը, ով եղաւ այդ մեծ սքանչելիքի ականատես վկան, մեծապէս գոհութիւն մատուցեց Փրկչին եւ շտապեց թուղթ գրել Կոստանդ կայսրին՝ քարոզելով ահագդու հրաշքի փառաւորութեան մասին: Արդ, թէպէտ նա լաւ գիտէր Կոստանդի արիոսականների հանդէպ համակրանքի մասին, սակայն նրա սիրտը շահելու նպատակով ըստ կարգի նախ նրան մեծարեց աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորների պատուանուններով եւ ապա ազդու խօսքերով յորդորեց զինուել սուրբ Խաչի զօրութեամբ, ինչպէս իր բարեպաշտ հայր Կոստանդիանոս թագաւորը եւ փայլեցնել իր թագաւորութիւնը աստուածպաշտութեամբ: Չարողացաւ առաւել բացայայտ խրատել, որպէսզի նրան չգրգռի ընդդէմ ուղղափառների: Այս մասին է գրում նաեւ ճառընտիրը՝ ասելով. «Երանելի Կիւրեղը աղաչական թուղթ գրեց Մեծն Կոստանդիանոս թագաւորի Կոստանդ որդուն՝ կոչելով նրան բարեպաշտ եւ աստուածային, կամենալով այդպէս շահել նրան, որովհետեւ նա մոլորուած էր արիոսականների հերձուածով: Այնտեղ գրեց նաեւ աստուածային նշանի երեւման եւ նրանով բազմութեան առ Աստուած դարձի մասին»: Սուրբ Կիւրեղի այս թուղթը Խաչի երեւման տօնի օրը Եկեղեցում կարդացւում է ընթերցուածքների սկզբում:

Օրըստօրէ տարածւում էր երանելի Կիւրեղի սրբութեան եւ իմաստութեան համբաւը որպէս ուղղափառ վարդապետութեան ճշմարիտ քարոզչի, որից չարացաւ Պաղեստինեան Կեսարիայի չարանենգ Ակակիոս եպիսկոպոսը եւ հակառակութիւն առաջացրեց ընդդէմ սուրբ հայրապետի. հաւաքեց իր արիոսական համախոհներին եւ կիսաարիոսականներին, վէճ բորբոքեց Աթոռի պատուականութեան համար. իբր Կիւրեղն արժանի չէ ինքնիշխան վարել հովուապետութիւնը, «... որովհետեւ Պաղեստինում, - ասաց, - իմ մետրոպոլիտութիւնն առաւել բարձրապատիւ է, քան նրանը»: Եւ այլ բազում ամբաստանութիւններ բարդեց նրա վրայ, որպէսզի, յուսալով կայսեր օգնականութեանը, արիոսականների եւ այլ աղանդների հետ յաղթի նրան, դատի կանչի եւ հեռացնի Աթոռից:

Կիւրեղը ուշ չդարձրեց նրա ամբաստանութիւններին, որի համար Ակակիոսը որոշեց ամբաստանել նրան ինքնակալի մօտ: Այդ ժամանակներում, երբ Պաղեստինում տիրում էր քաղցը, աղքատների բազմութիւնը դիմեց սուրբ Կիւրեղ հայրապետին: Նրանց կարիքները մեղմելու նպատակով երանելին իր ամբողջ ունեցուածքը բաշխելուց յետոյ, վաճառել տուեց նաեւ որոշ բաներ Եկեղեցու սպասքից: Քաջ հովուի այս հայրագութ հոգածութիւնը եւ կատարեալ ողորմածութիւնը Ակակիոսին առիթ տուեց, որ երանելուն համբաւէր որպէս վնասատու եւ եկեղեցու գանձերի վատնիչ: Իրեն համախոհ եպիսկոպոսների հետ վերստին սպառնալիքներ տալով՝ նրան հրաւիրեց ժողովի, եւ երբ Կիւրեղը մերժեց նրա անիրաւ, կասկածելի հրաւէրն ու նրան մերձաւոր մոլորամիտ անձանց, Ակակիոսը զայրացաւ եւ առանց նրա մասնակցութեան հեռացրեց նրան Աթոռից իբրեւ անարժան Երուսաղէմի Աթոռին: Եւ այնչափ բռնացաւ, որ

անգամ սկսեց հալածել Կիւրեղին քաղաքից քաղաք, իսկ ինքը տիրեց նրա Աթոռին, մինչեւ կը նշանակուէր այլ մէկն արքունի իշխանութեամբ:

Սուրբ Կիւրեղը հարկադրուած հեռացաւ Երուսաղէմից եւ գնաց Անտիոք՝ բողոքելու ողջամիտ եպիսկոպոսների մեծագոյն ժողովին: Բայց այնտեղ ոչինչ չկարողացաւ անել, քանի որ վախճանուել էր տեղի Ղեւոնդիոս եպիսկոպոսը, իսկ Աթոռը մնացել էր առանց հովուի: Եւ քանի որ չէր կարող դիմել այլ երեւելի Աթոռներին, որովհետեւ նրանց մեծամասնութիւնը գտնւում էր արիոսականների բռնութեան ներքոյ, ելաւ-գնաց Տարսոն քաղաք՝ Սիղուանոս եպիսկոպոսի մօտ, ով թէպէտ կուսակից էր կիսաարիոսականներին, սակայն չէր էլ մերժում ուղղափառներին, որի համար նա սիրով ընդունեց Կիւրեղին եւ նրան թոյլ տուեց Տարսոնի ժողովրդին քարոզել Աստուծոյ խօսքը: Այնժամ Ակակիոսը սպառնալից նամակ յղեց Սիղուանոսին՝ Կիւրեղին ընդունելու համար, ուր գրում էր, թէ Կիւրեղը մերժուած է Աթոռից, եւ պէտք չէ հաղորդ լինել նրան: Սակայն Սիղուանոսը յօրինուածք համարեց նրա խօսքերը, քանի որ խոր յարգանք էր տածում Կիւրեղի հանդէպ եւ նաեւ ակնածում էր ժողովրդից, որ մեծ սիրով ընդունեց Կիւրեղի վարդապետութիւնը: Իսկ Կիւրեղն իր իմաստութեամբ շահեց Սիղուանոսին՝ հեռու պահելով նրան ծպտեալ արիոսականներից եւ կիսաարիոսականներից:

Այդ օրերին՝ 359 թուականին, Սելեւկիայում գումարուեց 150 հայրապետների ժողովը, որին Սիղուանոսի հետ մասնակցեց նաեւ Կիւրեղը, ուր նա մեծ ընդունելութեան արժանացաւ բոլորի կողմից: Այնտեղ գնաց նաեւ Ակակիոսն իր գործակիցներով եւ առանց պատկառելու ասաց ժողովուած եպիսկոպոսներին. «Մենք չենք կարող հաղորդ լինել եւ մասնակցել ձեր ժողովին, մինչեւ որ այստեղից չգնայ Կիւրեղը, ով հեռացուած է եպիսկոպոսական կարգից»: Հակառակութիւն ծագեց. եպիսկոպոսներից ոմանք իբրեւ թէ խաղաղութեան հնար գտնելու համար յորդորեցին Կիւրեղին հեռանալ ժողովից՝ խոստանալով, որ հաւատի վերաբերեալ խնդիրների քննարկումից յետոյ կը լուծեն նաեւ իր իրաւունքների խնդիրը, սակայն Կիւրեղը յանձն չառաւ, որովհետեւ դա անարգանք էր ոչ միայն Երուսաղէմի սուրբ Աթոռին, այլեւ արիոսականների գաղտնածածուկ հնարքների զօրացման բացայայտ նշան էր ընդդէմ իր եւ ընդդէմ ուղղափառութեան: Նա ասաց. «Ուղղափառ հաւատի խնդիրը կա՛մ կ'որոշուի իմ ներկայութեամբ, կա՛մ ես նախ ցոյց կը տամ իմ իրաւունքը եւ ակակիոսականների բռնութիւնները»:

Երբ հայրերը հաւանութեան արժանացրին Կիւրեղի այս խօսքերը, ըմբոստացած Ակակիոսը իւրայիններով հանդերձ բարկութեամբ դուրս եկաւ ժողովից: Այնժամ ժողովի հայրերը վճռեցին արդարացնել Կիւրեղին եւ ընդունել նրան որպէս Երուսաղէմի սուրբ Աթոռի արժանաւոր ժառանգ: Ապա կանչեցին Ակակիոսին եւ նրա համակիրներին՝ կանգնելու ատեանի առջեւ եւ պատասխան տալու ծագած հակառակութիւնների ու արիոսականների հետ իրենց համախոհութեան համար, սակայն սրանք արհամարհեցին հայրերին: Այնժամ հայրերը մերժեցին նրանց իբրեւ խռովարարների եւ Արիոսի համախոհների:

Նրանց մէջ նշանաւոր էր Եւդոքսիոսը, ով բռնութեամբ եւ առանց արքունիքի հաւանութիւն տիրել էր Անտիոքի Աթոռին: Իմանալով այս մասին՝ Ակակիոսը թոյլ չտուեց Եւդոքսիոսին մասնակցել Սելեւկիայի ժողովին եւ սրտապնդեց նրան չերկնչել այլ եպիսկոպոսներից, «... քանզի,- ասաց, - ես կը լինեմ քո

երաշխաւորը կայսեր առջեւ եւ քեզ կը տամ Անտիոքի կամ Կոստանդնուպոլսի Աթոռը»:

Ինչպէս Մեծն Եւսեբիոս Կեսարացին յոյժ սիրելի էր Մեծն Կոստանդիանոսին, այնպէս էլ Եւսեբիոսի յաջորդը՝ անարժան Ակակիոսը, պատուելի էր Կոստանդիանոսի որդու՝ Կոստանդի առջեւ: Այս իմանալով՝ Ակակիոսը Եւդոքսիոսի հետ գնաց թագաւորանիստ Կոստանդնուպոլիս քաղաք եւ մտնելով Կոստանդ կայսեր մօտ՝ չարախօսեց Սելեւկիայի ժողովի հայրերից եւ յատկապէս Կիւրեղից: Նա ասաց. «Իմացիր, ո՛վ արքայ, որ Կիւրեղը վաճառել է այն սուրբ պատմուճանը եւ ոսկէթել նափորտը, որը քո օգոստափառ հայր Կոստանդիանոսն ի պատիւ Երուսաղէմի եկեղեցու նուիրել էր Մակար հայրապետին, որպէսզի դրանցով զգեստաւորուած կատարի մկրտութեան խորհուրդը: Թատրոնի միմոսներից մէկն այն գնել է վաճառականների ձեռքից, հագել եւ մտել խաղի, սակայն կաքաւելու պահին պատուհասուել է, ընկել ու մեռել: Եւ ահա մոլորամիտ եպիսկոպոսները, որ հաւաքուել են քննելու հաւատի խնդիրները, իրենց մէջ ընդունեցին այդպիսի մէկին ու մերժեցին մեզ եւ քեզ հետ միաբանուողներին»:

Այնժամ Կոստանդը հրաման տուեց, որ ժողովը գլխաւորող տասը անդամներ գան իր մօտ՝ Կոստանդնուպոլիս: Նրանք եկան, կայսեր առջեւ հաստատապէս հանդէս եկան որպէս ճշմարտութեան ջատագովներ եւ ընդդէմ Ակակիոսի համարձակ քարոզեցին ուղղափառ հաւատը: Քարոզիչներից մէկն էր Սիղուանոս Տարսոնացին: Սակայն կայսրն առաւել յարում էր ակակիոսականներին, որոնց դրդմամբ հրաման տուեց թագաւորական քաղաքում գումարել այլ ժողով: Եւ այդպէս 360 թուականին տեղի ունեցաւ այդ ժողովը, ուր յանդգնեցին դատապարտել Կիւրեղին եւ նրա համախոհներին որպէս խռովարարների եւ մոլորեցնողների: Հաւատ ընծայելով նրանց՝ Կոստանդ թագաւորը հրաման տուեց արտաքսել Կիւրեղին եւ նրա գլխաւոր գործակիցներին, իսկ արիոսամիտ Եւդոքսիոսին Ակակիոսի խնդրանքով նստեցրեց Կոստանդնուպոլսի Աթոռին: Այնուհետեւ Ակակիոսն ամենուր չարիքներ սփռեց. գնալով Տարսոն՝ հեռաւոր մի տեղ աքսորել տուեց Սիղուանոսին եւ այլ ուղղափառ եպիսկոպոսներին: Տարսոնի հովուապետութիւնը յանձնեց յափշտակիչ գայլ Եւնոմիոս եպիսկոպոսին, իսկ Երուսաղէմում սուրբ Կիւրեղի փոխարէն միաժամանակ կարգեց ոմն Եւտիքիոս եպիսկոպոսին, ով թշնամի էր Կիւրեղին, իսկ ժամանակ անց յանձնեց այլ մէկին:

Այդպիսի չարափառ եւ չարաբարոյ աւազակների երեսից չէր հանդարտւում քաջ հովուի հօտը: Երկար ժամանակ Եկեղեցին այսպէս ալեկոծւում էր զօրացած արիոսականների պատճառով, ինչպէս որ ժամանակ անց նաեւ Ուրացող Յուլիանոսի հալածանքների պատճառով, բայց Աստուած ամէն բան տնօրինեց յօգուտ Եկեղեցու: Այդ օրերին՝ 361 թուականին, մեռաւ Կոստանդ կայսրը եւ թագաւորեց Յուլիանոսը: Սա, որպէսզի հանդէս գար որպէս խաղաղասէր եւ մարդասէր, միաժամանակ մի կողմ դրեց իր իշխանասիրութիւնն ու փառասիրութիւնը եւ հրաման տուեց աքսորավայրերից հետ բերել բոլոր եպիսկոպոսներին, ովքեր տարագրուել էին Կոստանդի հրամանով: Եւ այդպէս սուրբ Կիւրեղը վերադարձաւ աքսորից:

Այս ամէնից յետոյ՝ 363 թուականին, Յուլիանոսը շարժուեց դէպի Արեւելք՝ պատերազմելու Պարսից երկրի դէմ եւ կարճատեւ դադար տուեց

Պաղեստինում: Այնտեղ նրան դիմեցին Երուսաղէմի հրէաներից նշանաւոր անձինք եւ խնդրեցին, որ իրենց ազատի քրիստոնեաներից եւ հրամայի, որ ժողովարան եւ աղօթավայր կառուցեն իրենց համար: Սակայն նրանց այս խորամանկութիւնը նպատակ ունէր հնարաւորութեան դէպքում գլխովին վերականգնել իրենց տաճարը: Այնժամ անօրէն Յուլիանոսը, ով յօրինում էր ամէն հնարք՝ եղծելու քրիստոնէութիւնը, սկսեց գովաբանել հրէական օրէնքները եւ գրուածքները: Նրանց մեծ ազատութիւն տուեց, հրամայեց յայտնապէս զոհեր մատուցել՝ ըստ Մովսէսի օրէնքի, իսկ հրէաներն ասացին. «Օրէնքը մեզ հրամայում է զոհեր մատուցել միայն տաճարում: Արդ, պէտք է տաճար կառուցուի, քանի որ մենք չենք կարող զոհեր մատուցել այլեւայլ տեղերում»: Յուլիանոսն անմիջապէս նրանց ընդառաջ գնաց եւ արեց աւելին, քան խնդրեցին: «Այն տաճարը, որը կործանեց Տիտոսը, - ասաց նա, - ես կը կանգնեցնեմ իր նոյն տեղում: Դուք սկսէք կառուցել, իսկ ես արքունի գանձերից կը հոգամ ծախսերը»: Սակայն նա հոգում էր ոչ թէ տաճարի համար, այլ կամենում էր այդ կերպով մարտնչել քրիստոնեաների դէմ:

Հրէաները լցուեցին անասելի խնդութեամբ. մեղուների պէս հաւաքուեցին Երուսաղէմի բոլոր կողմերից, եւ այր թէ կին ուրախութեամբ գործի անցան: Բերում էին իրենց զարդերն ու գանձերը՝ ի պէտս տաճարի: Անձամբ գործակից էին լինում կառուցողներին, փորում էին գետինը եւ գրկով հող կրում: Եւ ով կարող էր տանել հրէայ ազգի յոխորտանքները. նրանք պարծենում էին ընդդէմ քրիստոնեաների եւ նախատում նրանց՝ հայհոյելով Քրիստոսին: Ասես թէ եկեղեցասել էր իրենց թագաւորութեան նորոգումը եւ բոլոր քրիստոնեաների ոտնահարումը:

Այնքան մեծ էր հրէաների ոգեւորութիւնը, որ հոյեակապ տաճար շինելու համար քանդեցին հին տաճարի հիմքերը: Այնժամ կատարուեց սուրբ Կիւրեղի մարգարէութիւնը, որ մի ժամանակ ասել էր նրանց իր քարոզներում, թէ՝ կը գայ ժամանակ, որ այդ մնացած քարերն էլ պիտի քանդուեն՝ ըստ Տիրոջ խօսքի, լինի պատահմամբ, լինի շինութեան պատճառով: Եւ այդպէս եղաւ. հրէաներն իրենց ձեռքերով հանեցին հին քարերը, որպէսզի դնեն նորի հիմքերը, հողը կիտեցին բլուր առ բլուր, որպէսզի այլ տեղում պատրաստեն շինանիւթը:

Երբ արդէն գրեթէ ոչինչ չէր մնացել, եւ յաջորդ օրը պիտի սկսէին դնել հիմքերը, այնժամ հաւատացեալները, ովքեր համակուած էին սգով, եկան հաւաքուեցին իրենց սուրբ Կիւրեղ հայրապետի մօտ՝ յայտնելու իրենց տագնապը չարագուշակ դէպքերի առթիւ: Քաջ հովիւն անվրդով էր ու խաղաղ: Նա քաջալերեց եւ յորդորեց ժողովրդին եւեթ դիմել Աստծուն աղօթքներով: Մխիթարեց նրանց տէրունական խօսքով եւ ասաց. «Դուք ինքներդ տեսաք, թէ ինչպէս կատարուեց Տիրոջ խօսքը, թէ քարը քարի վրայ չպիտի մնայ: Եւ չկարծէք, թէ հրէաները կը կարողանան դնել քարը քարի վրայ»: Ինքն իսկ վստահ էր ի Տէր, վստահ էր, որ Տէրը պիտի այցելի Իր անուան փառաւորման համար, որն էլ եղաւ, քանզի ահա այդ գիշեր, երբ հրէաները որոշել էին առաւօտեան սկսել տաճարի հիմնարկէքը, յանկարծ ահագնապէս սասանուեց տեղանքը, սաստիկ հողմ բարձրացաւ, եւ յաջորդեց ուժգին փոթորիկը: Կրկին դղրդիւն եղաւ, որից փլուզուեցին շրջակայքի տները, ուր ժողովուած էին հրէայ շինարարները: Նրանք մնացին փլատակների տակ եւ կործանուեցին: Սաստիկ մրրկահողմից հիմքերից մաքրած հողակոյտերը դարձեալ լցուեցին փորուած փոսերը, իսկ հիմքերի համար պատրաստուած հսկայ քարերը քշուեցին հեռաւոր տեղեր: Տաճարի

շինութեան համար բերուած բազմակոյտ ատաղձը ցիրուցան եղաւ ողջ Երուսաղէմ քաղաքով մէկ: Սակայն այս աստուածասաստ յանդիմանութիւնից հրէաները չզգաստացան, համարեցին, թէ պատահարը եղաւ ըստ դիպուածի, որի համար առաւօտեան յանդգնեցին վերսկսել իրենց գործը: Բայց երբ սկսեցին մաքրել փորուած հիմքերը, անսպասելի գետնից հուր ելաւ եւ այրեց հրէաներից շատերին: Բոլորը խուճապի մատնուեցին եւ խառնիխուռն փախան՝ շարժուելով դէպի քրիստոնեաների Եկեղեցին, որի դռները տեսան, որ բաց էին, սակայն աներեւոյթ զօրութեամբ դրանք փակուեցին նրանց առջեւ: Հրէաներին թուաց, թէ Եկեղեցու պաշտօնեաներն իրենց առջեւ փակեցին դռները, որի համար կամեցան բռնութեամբ մուտք գործել: Եւ ահա նրանց վրայ Եկեղեցու ճակատից հուր ելաւ. ոմանք բոցակիզուեցին, ոմանք կիսաայրուած փախուստ տուեցին: Երկնքից իջած կամ երկրից ելած հրարձակումներ եղան նաեւ տարբեր տեղերում. մարդիկ գալիս էին փլատակների տակ մնացած իրենց ազգականների դիերը տանելու, եւ յանկարծակի լափող հուր էր ժայթքում: Նրանք փախուստ էին տալիս կրակից, սակայն բոցը մեծ արագութեամբ հետապնդում էր նրանց փողոցներով եւ հրապարակներով՝ ճարակելու որեւէ հրէայի, ուր էլ որ գտնէր: Այս աղէտը տեւեց ողջ օրը՝ երբեմն մեղմանալով, երբեմն մոլեգնելով: Կորստեան մատնուեցին շատ հրէաներ, ոչնչացան տաճարի կառուցման ամբողջ շինանիւթը եւ կահկարասիները:

Այս ամէնից անհաւատ հրէաները խելքի չեկան, չհասկացան, որ Աստուծոյ ձեռքն էր, որ իջաւ իրենց վրայ, որ Խաչեալի զօրութեան ահն էր պատել իրենց: Յաջորդ գիշերը երկնքի մէջ երեւաց խաչանման մեծ լոյս, ասես աստղազարդ եւ ճաճանչագեղ մի նշան, որն իր պայծառութեամբ չէր զիջում այն խաչին, որ երեւացել էր տարիներ առաջ՝ Կոստանդ կայսեր օրօք: Այն եւս տարածուած էր Գողգոթայից մինչեւ Ձիթենեաց լեռը: Այս տեսնելով՝ մեծ խնդութեամբ լցուեցին հաւատացեալները, քանի որ յայտնի եղաւ Փրկչի յաղթութեան նշանը՝ ընդդէմ սուրբ Եկեղեցու թշնամիների:

Ի հաստատումն այս դէպքերի՝ դրանց յաջորդեց մէկ այլ, նոր սքանչելի նշան. երբ հրէաները եկան տեսնելու ահազդու խաչը, շատերի զգեստների վրայ աստուածային հրաշքով թխագոյն, ասես հրից խանձուած խաչեր դրոշմուեցին: Հրէաները չարչարուելով ջանում էին իրենց զգեստներից թօթափել խաչի նշանները, բայց դրանք դրոշմուած եւ անջնջելի էին, որովհետեւ այդ կնիքը աստուածադրոշմ էր՝ ի յանդիմանութիւն նրանց եւ ի փառաւորութիւն խաչապաշտների: Մինչ քրիստոնեաները զարմացած նայում էին խաչանիշ հրէաներին, նոյնօրինակ խաչի նշաններ յայտնուեցին նաեւ բազմաթիւ քրիստոնեաների վրայ, նաեւ սուրբ Եկեղեցու սպասքի, սուրբ Սեղանի ծածկոցի, գրքերի եւ տաճարի այլ զարդերի վրայ: Եւ դա ոչ միայն Երուսաղէմ քաղաքում, այլեւ մերձակայ տարածքներում՝ մինչեւ Անտիոքի սահմանները:

Յաղթուած այս ակներեւ եւ ահաւոր հրաշքներից՝ բոլոր հրէաները եւ նաեւ Յուլիանոսը ահաբեկուեցին ու իսպառ հրաժարուեցին տաճարի շինութեան ձեռնարկումից: Եւ աւելին՝ հրէաների ու հեթանոսների մեծ բազմութիւն ընդունեց քրիստոնէութիւնը: Նրանցից շատերը դիմում էին քահանաներին, աղաչում, որ իրենց ընդունեն Եկեղեցու մէջ, մկրտուեն Տիրոջ սուրբ անուամբ եւ միանան Քրիստոսի հօտին:

Այդ օրերին Մեծն Կիւրեղը փայլեց իր հովուապետական առաքելութեամբ: Բոլոր իրեն դիմողներին նա սիրով առաջնորդում էր դէպի Քրիստոսի փարախը,

քաջալերում էր նրանց մխիթարական խօսքերով, հաստատում նրանց սուրբ հաւատի մէջ եւ մկրտելով Քրիստոսի կնիքով՝ մեծացնում Քրիստոսի հօտը: Մեծ հրաշքներ էին կատարւում, որոնց մասին լուրը տարածուեց ամենուր: Ժամանակի հայրապետներն ու վարդապետները, ինչպէս Գրիգոր Աստուածաբանը, Ոսկեբերանը, Ամբրոսիոսը եւ միւսները, իրենց քարոզներում եւ ճառերում յաճախ էին հաւատացեալ հօտի առջեւ յիշատակում սուրբ Խաչի զօրութեան մասին՝ մէջ բերելով այն կատարուած հրաշքները, որ եղան Երուսաղէմում: Էլ չենք ասում այդ ժամանակների պատմիչների մասին. թէ՛ ուղղափառ, թէ՛ այլադաւան, մինչեւ իսկ հեթանոս պատմիչները արձանագրեցին այդ հրաշքներն ընդդէմ հրէաների: Երբ անցան հրաշքների օրերը, շատ անհաւատ հրէաներ, ովքեր իրենց նեղութեան մէջ օգնութեան էին կանչում Քրիստոսին, դարձեալ մնացին իրենց խստասրտութեան մէջ: Եւ Յուլիանոս Ուրացողը եւս, ով թէպէտ կատարուած հրաշքների ականատեսն էր, սակայն անգոսնել էր դրանք իբրեւ մոգութիւններ եւ արհամարհել ինչպէս փարաւոնը, երբ պէտք է Անտիոքի եւ Պաղեստինի կողմերից մեկնէր Պարսկաստան, ընդդէմ Քրիստոսի անուան փառքի՝ Երուսաղէմում պատուիրեց կառուցել մեծ ամֆիթատրոն, «... որպէսզի,- ասաց,- խաղաղութեամբ պատերազմից վերադառնալու դէպքում այնտեղ գազանամարտ մատուցեմ եպիսկոպոսներին, քահանաներին եւ կրօնաւորներին: Իմ կուռքերին բերել կը տամ նորատեսիլ ահարկու գազաններ եւ նրանց կը գցեմ դրանց առջեւ»: Սակայն հէնց նոյն տարում նա ինքը՝ չար գազանը, Աստուծոյ դէմ ապստամբողը եւ ընդդէմ Բարձրեալի ամենազօր Աջին ելնողը, աներեւոյթ ձեռքով մեռաւ Պարսից երկրում, եւ ի դերեւ ելան չարի բոլոր խորհուրդները:

Իսկ սուրբ Կիւրեղը, որ ակնկալում էր նահատակուել Յուլիանոսի ձեռքով, չհասաւ իր ցանկութեանը, թէպէտ ոչ քիչ նահատակութիւններ էր կրում ժամանակի արիոսականների եւ այլ հերեսիովտացիների դէմ ունեցած ամենօրեայ պայքարներում: Յուլիանոսից յետոյ թագաւորեց Յովիանոսը, որի օրօք միառժամանակ խաղաղութիւն տիրեց Եկեղեցուն, եւ լռեցին արիոսականները: Սակայն մէկ տարի անց, երբ թագաւորեց արիոսական Վաղէս թագաւորը, դարձեալ զօրացան չարափառները: Այդ շրջանում մեռաւ արիոսականների ծպտեալ դրօշակակիր Ակակիոսը, եւ սուրբ Կիւրեղը նրա փոխարէն կամեցաւ Պաղեստինեան Կեսարիայի Աթոռին անմիջապէս կարգել Փիլումենոսին: Բայց Կիւրեղի թշնամի Եւտիքիոսը բռնութեամբ այդ Աթոռին կարգեց ոմն Կիւրեղի, ով չունէր ողջամիտ վարդապետութիւն, իսկ սուրբ Կիւրեղը, չհանդուրժելով այս Կիւրեղին, նրան պաշտօնանկ արեց եւ փոխարէնը կարգեց իր քեռորդի Գելասիոսին, ով վկայուած էր բոլորի կողմից իր ուղղափառ վարդապետութեամբ եւ բարի վարքով: Սակայն շուտով Գելասիոսն ու սուրբ Կիւրեղը աքսորուեցին, քանզի 367 թուականին արիոսական Եւդոքսիոսը, ով տիրում էր Կոստանդնուպոլսի Աթոռին, այլ արիոսական եպիսկոպոսների հետ միասին չար խորհրդատուութեամբ գրգռեց Վաղէս կայսրին: Նա դրդեց հրաման արձակել, որ ովքեր նախկինում աքսորուած են եղել Կոստանդ կայսեր հրամանով եւ Յուլիանոսի օրօք նորից դարձել իրենց Աթոռներին, դարձեալ հեռացուեն, քանի որ չեն միաբանւում արիոսականներին: Եւ այս հրամանը արձակուեց, որով դարձեալ արտաքսուեցին սուրբ Աթանաս Ալեքսանդրացին, սուրբ Կիւրեղ Երուսաղէմացին եւ ոչ քիչ ուղղափառ եպիսկոպոսներ:

Արդ, սուրբ Կիւրեղի վտարանդուելուց եւ նրա փոխարէն Երուսաղէմում արիոսական մէկի նշանակուելուց յետոյ ողջ Պաղեստինում անկարգութիւն տիրեց: Համարձակ առաջ եկան արիոսականները, ապողինարները, հոգեմարտ մակեդոնականները եւ այլ աղանդաւորները, որոնց բազմութեան դէմ սուրբ Կիւրեղը մարտնչում էր խօսքով եւ գրով: Աւելի քան տասը տարիներ տեւեց նրա աքսորը, ուր թէպէտ բազում նեղութիւններ ու տառապանքներ կրեց, սակայն երբէք չյուսահատուեց, որովհետեւ մշտապէս ամուր պարսպուած էր մարգարէական սաղմոսներով եւ աղօթքներով: Եւ Աստուած այց արեց Իր ժողովրդին, քանզի երբ 378 թուականին դաժան մահով մեռաւ Վաղէս կայսրը, եւ նրան յաջորդեցին բարեսէր Գրատիանոսը եւ բարեպաշտ Մեծն Թէոդոսը, շատ աքսորուած հայրեր վերադարձան իրենց Աթոռներին, այդ թւում սուրբ Կիւրեղը, հայոց Ներսէս Մեծ հայրապետը:

Սուրբ Կիւրեղը տեսաւ իր հօտին՝ ցրուած ապականիչ գայլերի կողմից: Մեծ ջանքեր թափեց՝ մաքրելու իր թեմը բոլոր վնասակար վարդապետութիւններից եւ անկարգութիւններից: Կրեց նորանոր նեղութիւններ ոչ այնքան չարափառներից, ովքեր զգուշանում էին Թէոդոս կայսրից, որքան ուղղափառներից, որոնց թեւակից էին արեւմտամէտները եւ ընդդէմ էին Կիւրեղին:

Սուրբ Կիւրեղին ձեռք մեկնեց սուրբ Գրիգոր Նիւսացին. երբ 380 թուականին նա գնում էր մասնակցելու Անտիոքի ժողովին, Երուսաղէմով անցնելիս կանգ առաւ եւ ցանկացաւ միջնորդ լինել Կիւրեղի ու այն եպիսկոպոսների միջեւ, ովքեր չէին կամենում հաղորդուել Կիւրեղի հետ իբրեւ թէ կիսաարիոսականներին ձեռնադրելու պատճառով: Սակայն երբ Նիւսացին տեսաւ, որ Կիւրեղի հակառակորդները խորշում են նաեւ իրենից, յուսահատուեց, որ կարող է խաղաղութիւն հաստատել եւ վերացնել պառակտութիւնը: Այնժամ հրաժեշտ տուեց սուրբ Կիւրեղին, այց արեց տնօրինական վայրերին եւ տրտմութեամբ հեռացաւ: Իսկ սուրբ Կիւրեղն ամէն բան յանձնեց Աստուծոյ ձեռքը՝ սէր ցուցաբերելով իրեն ատողների հանդէպ, շահեց նրանց սրտերը, եւ այդպէս կամաց-կամաց խաղաղութիւն տիրեց:

381 թուականին 150 հայրապետների մասնակցութեամբ գումարուեց Կոստանդնուպոլսի սուրբ Ժողովը, որը նպատակ ունէր պայքարել ընդդէմ հոգեմարտների եւ ժամանակի այլ հերեսիովտների եւ նաեւ խաղաղութիւն հաստատել Եկեղեցում: Ժողովին մասնակից հայրերից մէկն էր նաեւ սուրբ Կիւրեղ Երուսաղէմացին: Այդ օրերին վախճանուեց սուրբ Մելիտոսը, եւ նրա փոխարէն ընտրուեց երանելի Փլաբիանոսը, իսկ Կոստանդնուպոլսի Աթոռի համար, որից հրաժարուեց Գրիգոր Աստուածաբանը, ընտրուեց Նեքթարիոսը: Սուրբ Կիւրեղը հերքեց իր բոլոր չարախօսների զրպարտութիւնները, որոնք հեռու էին ճշմարտութիւնից, որի համար բոլոր հայրերը միաբան հաւանութեամբ հաստատեցին նրան՝ որպէս իր Աթոռի իրաւացի ժառանգորդի:

Այնուհետեւ սուրբ Կիւրեղը մի քանի տարի խաղաղութեամբ առաջնորդեց իր հօտին, ապա 386 կամ 389 թուականին խաղաղութեամբ ննջեց ի Քրիստոս՝ Եկեղեցուն թողնելով ուղղափառ վարդապետութեան հարուստ ժառանգութիւն: Ըստ հաւանական կարծիքների՝ եպիսկոպոսութիւնը վարեց 35 տարի, որից միայն 19 տարիներին նստեց իր Աթոռին, իսկ 16 տարիներն անցկացրեց աքսորներում եւ հալածանքների մէջ: Կեանքի տեւողութիւնը եղաւ մօտ 70 եւ աւելի տարիներ:

Նրա թողած ժառանգութեան մէջ կարեւորագոյնը «Կոչումն ընծայութեան» կամ «Յաղագս երախայից» աշխատութիւնն է: Հայերէն թարգմանուել է հինգերորդ դարում եւ առաջին անգամ տպագրուել է 1727 թուականին, Կոստանդնուպոլսում:

Հայ Եկեղեցին սուրբ Կիւրեղ Երուսաղէմացու յիշատակը տօնում է տարին երկու անգամ՝ Մեծ պահքի երրորդ կիրակիի նախորդ եւ հոկտեմբերի վերջին շաբաթ օրերը տասներկու վարդապետների շարքում:

ԿԻՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՆՐԱ ՄԱՅՐ ԱՆՆԱ

Զարիական մահ սրբոց Քոց Քրիստոս՝
ընդ երկնային զօրսն այսօր երգակցեալ տօնեմք.
որք հանդիսացան ընդդէմ բռնութեան թշնամւոյն:
Անմարմինք ի մարմնի ցուցան՝ զեր ի վերոյ սրոյ եւ հրոյ տանջանաց.
զպատուական մահս իւրեանց ընծայեցին Քեզ Քրիստոս բանաւոր զենմունք:
Նահատակեալք ճգնութեամբ ի փորձ զանազան տանջանաց՝
համբերութեամբ վանեալ զթշնամւոյն պատերազմ.
փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն:
(Շարակնոց)

Սուրբ Կիւրեղ հայրապետն ազգութեամբ հրէայ էր եւ ապրել է Մեծն Կոստանդիանոսի ինքնակալութեան տարիներին: Իր ազգատոհմի թողած աւանդութեան համաձայն՝ նա սուրբ Ստեփանոս Նախավկայի տան ազգակիցը եւ շառաւիղն էր, որն իրաւ է՝ ըստ Յիսուս Քրիստոսի եւ Նրա աշակերտների հետ կապուած դէպքերի յիշատակութեան: Աւազանի անունը Յուդա էր, բնակւում էր Պաղեստինում իր մօր՝ Աննայի հետ:

Բոլոր ազգերի մէջ սքանչելապէս պատմւում է Սուրբ Խաչի գիւտի աւանդութիւնը. Կոստանդիանոսի մայրը՝ աստուածասէր դշխուհի Հեղինէն, ելաւ Երուսաղէմ՝ փնտրելու Քրիստոսի խաչափայտը: Նա սկսեց հարցուփորձ անել հրէաներին, ովքեր որպէս անցած դէպքերի ամենահիրազէկ մէկի՝ մատնացոյց արեցին Յուդային: Յուդան մեծ չարչարանքներով եւ Աստուծոյ առաջնորդութեամբ գտաւ պատուական խաչափայտը, որով հաւատալով խաչեալ Փրկչին՝ մկրտուեց իր մօր հետ, ապա Հեղինէի յորդորով ձեռնադրուեց եպիսկոպոս եւ անուանակոչուեց Կիւրեղ: Նա ծառայութեան անցաւ Պաղեստինի քաղաքներից մէկում, եւ ինչպէս ենթադրւում է, Մակարից յետոյ միաժամանակ նստել է Երուսաղէմի Աթոռին:

Եւ քանի որ յոյժ քաջատեղեակ էր Հին եւ Նոր Կտակարաններին, հրէաներին եւ հեթանոսներին համարձակ քարոզում էր Քրիստոս Աստծուն եւ շատերին

լուսաւորում սուրբ հաւատով, սակայն Կոստանդ կայսեր օրօք՝ արիոսականների բռնութիւնների օրերին, այլ ուղղափառ եպիսկոպոսների հետ նա մեծ նեղութիւններ եւ չարչարանքներ կրեց:

Եկան Յուլիանոս Ուրացողի ժամանակները: Երբ սրան տեղեկութիւններ հասաւ սուրբ Կիւրեղի մասին, թէ ինչպէս է նա հրէութիւնից եպիսկոպոս դարձել եւ նաեւ, որ Գողգոթայում նա է գտել Սուրբ Խաչը, չարացաւ նրա դէմ այն նոյն ատելութեամբ, որ ունէր կենսատու Խաչեալի հանդէպ եւ հրամայեց իր առջեւ բերել սուրբ եպիսկոպոսին: Եւ երբ եկաւ, թագաւորը հարցրեց նրան. «Ի՞նչ է քո անունը: Եպիսկոպոսը պատասխանեց. «Ծնողներս ինձ Յուդա են կոչել, այսինքն խոստովանութիւն, որ իմաստութիւն է տալիս գալ սուրբ հաւատի խոստովանութեանը, իսկ այժմ Քրիստոսի սուրբ հաւատի եւ լուսաւոր մկրտութեան միջոցով կոչւում եմ Կիւրղոս՝ ըստ մեծ դշխուհի Հեղինէի հրամանի: Թագաւորը հարցրեց. «Ո՞ղջ են քո ծնողները: Եպիսկոպոսը պատասխանեց. «Միայն մայրսե: Թագաւորն ասաց. «Նրան այստեղ կանչի՛ր: Երբ մայրը եկաւ, Յուլիանոսը նրան հարցրեց. «Ո՛վ կին, ո՞րն է քո պաշտամունքը: Աննան պատասխանեց. «Պաշտում եմ Քրիստոս Աստծուն, Ումից ողորմութիւն գտայ: Յուլիանոսն ասաց. «Ձեզ կեանք եւ մեծ պատիւ է սպասւում, եթէ ուրանաք Քրիստոսին: Եպիսկոպոսը պատասխանեց. «Ով ուրանայ Քրիստոսին, քեզ նման կը խաւարի ճշմարիտ լոյսից: Ուրացողն ասաց. «Ես եւս հաւատացել եմ Խաչեալին, բայց ոչինչ չեմ շահել, որովհետեւ Նա նեղութիւն է քարոզում այս աշխարհում եւ յոյսով կեանք մահից յետոյ: Հոգոց հանեց սուրբ եպիսկոպոսը եւ ասաց. «Լաւ ասացիր՝ յոյսով կեանք նեղութիւնից յետոյ: Եթէ մշակը չաշխատի իր ժամանակին, չի հաւաքի շահեկան արդիւնք: Եւ եթէ զինուորը չմարտնչի թագաւորի թշնամու դէմ և չյաղթի, չի առնի պսակ եւ պարգեւներ թագաւորից: Ուսանել ես, բայց չես օգտուել, որովհետեւ չես կամեցել, որ քեզ վրայ ծագի Աստուծոյ Որդու փառքի լուսաւորութիւնը, քանի որ միտքդ խաւարի մէջ է բանսարկուի պատրանքներից: Յուլիանոսը ցասումով լի ասաց. «Շատերը յուսացին խաչեալ Քրիստոսին եւ դաժան մահուամբ ելան այս աշխարհից: Ընդունէ՛ք իմ խօսքերը եւ զոհէ՛ք աստուածներին, ապա թէ ոչ՝ անտանելի չարչարանքներով կտտամահ կ’անեմ ձեզզ: Եպիսկոպոսն ասաց. «Ինչ էլ անես, չես կարող պատրաստել այնպիսի տանջանքներ, ինչպէս որ Քրիստոս է պատրաստել դեւերի եւ նրան պաշտողների եւ նաեւ քեզ համարե: Յուլիանոսն ասաց. «Եւ դուք այդ սին յոյսով զուր մեռնո՞ւմ էք Խաչեալի համարե: Եպիսկոպոսն ասաց. «Ունայն չէ մեր յոյսը, որ ունենք առ խաչեալն Աստուած, Ով մեռաւ մեզ համար եւ յարութիւն առաւ, որպէսզի վերջին օրը մեզ կենդանութիւն տայ: Իսկ դու զուր մի՛ քամահրիր Քրիստոսի ծառաներին: Դու, որ Աստուծոյ ներողամտութեամբ ունես պերճացած թագաւորութիւն, շուտով այն կ’եղծանուի, եւ դու կ’ապականուես նրա հետ, քանի որ չհասկացար քեզ այցելութեան ժամանակը, այլ երես դարձրիր եւ եղար չարի անօթ ու բանսարկուի բնակարանե:

Բարկացաւ Յուլիանոսը եւ հրամայեց նախ կտրել նրա աջ ձեռքը, քանի որ ինչպէս ասաց՝ շատերին է կռապաշտութիւնից քրիստոնէութեան դարձրել եւ այդ ձեռքով մկրտել: Այնժամ եպիսկոպոսը զոհացաւ Աստծուց եւ ասաց. «Թող սա քաւութիւն լինի իմ նախկին յանցանքների համար, քանզի մինչ հրէութեան մէջ էի, այդ ձեռքով հրաման էի գրում՝ ուրանալ Քրիստոսին: Ինձ համար լաւ է մէկ ձեռքով մտնել յաւիտենական կեանք, քան ողջանդամ այրուել անշէջ գեհենումե:

Յուլիանոսն ասաց. «Կը բզկտեմ ողջ մարմինդ եւ կը տեսնեմ, թէ ո՞վ է այն աստուածը, որ քեզ կը փրկի իմ ձեռքիցե: Սուրբն ասաց. «Քրիստոս Փրկիչը, Ում դու հայհոյում ես, զօրութիւն է տալիս Իրեն յուսացողներինե:

Այնժամ բռնաւորը հրամայեց հալեցնել կապար, այն լցնել սուրբի բերանի մէջ եւ ապա նրան գցել եռացող կապարի մէջ: Երկու-երեք ժամ անշնչացաւ սուրբի մարմինը: Շուրջը գտնուողները կարծեցին, թէ նա մեռաւ, սակայն նա երկինք բարձրացրեց իր աչքերը եւ ասաց. «Քրիստոս, Լո՛յս աշխարհի, տո՛ւր ինձ համբերութիւն իմ դաժան ցաւերի մէջ: Զօրացրո՛ւ Քո ծառային եւ Քո աղախնու որդուն: Ցո՛յց տուր Քո սուրբ նշանը, որ տեսնեն ինձ ատողները եւ ամաչեն: Տէ՛ր, Դու ես իմ օգնականը եւ մխիթարիչը: Իսկ խստասիրտ անօրէնն ասաց. «Քեզ չեն օգնի քո աղօթքները, եթէ չկատարես իմ կամքը եւ չպաշտես կուռքերինե: Եպիսկոպոսը պատասխանեց. «Ես պաշտում եմ կենդանի Քրիստոս Աստծուն, իսկ դու ինչ կամենում ես, արա՛ անմիջապէսե:

Բռնաւորը հրամայեց բերել երկաթէ պատգարակ եւ շիկացնել այնքան, մինչեւ պատգարակը փայլի եւ կարմրի հրի պէս: Երեսն ի վայր սուրբին պրկեցին նրա վրայ եւ գանահարեցին ողջ թիկնամասը: Ապա վրան տաք ձիւթ եւ աղաջուր լցրին, որպէսզի սաստկանայ այրոցքի եւ հարուածների կսկիծը: Մինչ երանելին այդ տանջանքների մէջ էր, իր ձայնը երկինք բարձրացրեց եւ աղաղակելով աղօթեց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ, որ չարչարուելով մեզ համար, կեանք ես պարգեւում նրանց, ովքեր հաւատում են Քեզ: Դու, Տէ՛ր, որ Յովնան մարգարէի միջոցով ցոյց տուեցիր Քո երեքօրեայ յարութեան օրինակը, որ Քո ընտրեալ Եղիա մարգարէին հրեղէն կառքով երկինք յափշտակեցիր, արի՛ եւ թեթեւացրո՛ւ իմ այս անտանելի ցաւերը, որոնք կրում եմ Քո սուրբ անուան համարե:

Զանձրացաւ Յուլիանոսը սուրբի համբերութիւնից եւ այլեւս ոչինչ չասաց: Հրամայեց երանելուն բանտ տանել: Իսկ սուրբի մայրը՝ Աննան, եկաւ բանտ՝ որդու մօտ, եւ ասաց նրան. «Որդեա՛կ, դու, որ նահատակւում ես Քրիստոսի անուան համար, պիտի ստանաս արդարութեան պսակը եւ պսակակից լինես սուրբ Ստեփանոս Նախավկային՝ քո նախնիների հօրը: Բայց յիշի՛ր, որդեա՛կ, որ քո հայրը մեռաւ հրէաների մէջ եւ արժանի չեղաւ սուրբերի հետ բաժին ունենալու: Արդ, աղօթի՛ր ինձ համար, որպէսզի Քրիստոս ընդունի ինձ եւս, ու արժանի լինեմ տեսնելու Տիրոջ անսպառ բարիքները եւ ստանամ անթառամ պսակըե:

Յուլիանոսի սպասաւորները նրան տեղեկացրին, թէ ինչպէս է Աննան քաջալերում որդուն եւ ցանկանում բաժնեկից լինել նրան: Այնժամ Յուլիանոսի հրամանով Աննային բերեցին նրա մօտ, եւ սա սկսեց խօսել կնոջ հետ. «Ո՛վ կին, քո որդին նախընտրեց մահը, բայց դու ընտրի՛ր կեանքը ու պաշտի՛ր կուռքերինե: Աննան պատասխանեց. «Նա արհամարհեց երկրաւորը, որովհետեւ ցանկացաւ յաւիտենականը: Իմացի՛ր, որ ես եւս որքան ողջ մնամ, պիտի պաշտեմ ու երկրպագեմ Քրիստոսին եւ ոչ թէ հեթանոսների հետ պիղծ դեւերինե:

Բռնաւորը նրան կախել տուեց մազերից եւ հրամայեց երկաթէ քերիչներով քերել մերկ մարմինը այնքան, որ բացուեն ոսկորները: Յուլիանոսն ասաց նրան. «Այժմ ասա՛, լա՞ւ է, որ քերւում է մարմինդ, իսկ արիւնդ թրջում գետինըե: Աննան պատասխանեց. «Չտեսա՞ր, որ ես, այրուած Քրիստոսի սիրով, ոչինչ չեմ զգում: Պատրաստ եմ սիրով ընդունել մահուչափ չարչարանքներ իմ Փրկչի օգնականութեամբ, Ով զօրացնում է ինձ եւ ամաչեցնում քո հօրը՝ սատանայինե:

Բարկացած անօրէնը հրամայեց վառուող ջահեր պահել նրա մարմնի վրայ, որպէսզի այրուեն նրա վէրքերը: Եւ սուրբ կինը մօտ երեք ժամ կախուած վիճակում կրում էր այդ անտանելի չարչարանքները: Նա լսելի ձայնով աղօթում էր եւ ասում. «Զօրութիւնների Տէր Աստուա՛ծ, իմ յո՛յս եւ Արարի՛չ, որ թէ՛ Հնում եւ թէ՛ Նորում փրկեցիր Քո սիրելիներին հոգու եւ մարմնի բոլոր փորձութիւններից, լսի՛ր ինձ՝ Քո աղախնուն, որպէսզի աւարտեմ իմ ընթացքը եւ իմ որդու հետ ցնծալով՝ մտնեմ Քո սուրբ Հարսնարանը: Այսպէս աղօթելով՝ Աննան իր հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը:

Երբ որդին բանտում իմացաւ այս մասին, յոյժ ուրախ եղաւ, գոհանալով խնդրեց Աստծուն իր մօր օրինակով շուտ աւարտին հասցնել նաեւ իր ընթացքը:

Յուլիանոսը նրան ատեան կանչեց եւ, տեսնելով նրան զուարթերես, զարմացաւ ու ասաց. «Ի՞նչ կախարդութեամբ ազատուեցիր սաստիկ տանջանքներից: Եւ սուրբ եպիսկոպոսը պատասխանեց. «Ո՛վ ուրացո՛ղդ Քրիստոսի, դու Աստուծոյ զօրութիւնը դեւերին ես վերագրում: Կախարդութիւնը դեւերի եւ նրանց սպասաւորների գործն է եւ ոչ թէ Աստուծոյ ծառաների: Դու օտար ես ճշմարտութեանը եւ կամենում ես դէպի խաւարը ձգել լուսոյ որդիներին, սակայն Տէրը չի թողնում Իրեն յուսացողներին: Իսկ դու, ինչպէս որ արժանի ես, պիտի ընդունես քո դատապարտութիւնը արդարադատ Դատաւորից:

Յուլիանոսը թովիչներին հրամայեց մի գրի մէջ քարբեր [1], թունաւոր օձեր ու սողուններ լցնել, եւ սուրբին իջեցնել այնտեղ: Իսկ երանելին դժնեայ թունաւոր սողունների մէջ սկսեց աղօթել եւ ասել. «Տէ՛ր Աստուած, լսի՛ր Քո ծառայի աղաչանքները: Դու, որ փրկեցիր Յովսէփին տառապանքների գրից, Դանիէլին՝ առիւծների բերանից եւ Քո ծառաներին իշխանութիւն տուեցիր գնալ իժերի եւ քարբերի վրայով՝ ոտքի տակ տալով թշնամու զօրութիւնը, այժմ գթա՛ ինձ եւ շնորհ արա՛ փրկուել թունաւոր գազաններից, որպէսզի բոլորը տեսնեն, որ Դու ես միայն զօրաւոր եւ ճշմարիտ Աստուածն: Եւ թունաւոր սողուններն ամենեւին չմօտեցան նրան: Իսկ Յուլիանոսը՝ լցուած դառնութամբ, հրամայեց սուրբին դուրս բերել գրից, սողուններին էլ այրել հրով:

Այս տեսնելով՝ թովիչներից աւագը, որի անունն Ադոն էր, լուսաւորուեց ճշմարտութեան լոյսով եւ ասաց. «Ո՛վ թագաւոր, յիմարութիւնն է պատել քեզ եւ կուրացրել: Չե՞ս տեսնում արդեօք, որ այս մեծամեծ հրաշքները Քրիստոսի զօրութեամբ են լինում: Այսուհետ ես եւս ճշմարտապէս հաւատում եմ, որ մեծ է քրիստոնեաների Աստուածը, Նա է միայն ճշմարիտ Աստուած, եւ չկայ այլ աստուած Նրանից բացի, եւ գիտեմ, որ Նա Իր անբաւելի ողորմութեամբ կ՚ընդունի ինձ եւսե: Անմիջապէս բռնաւորից հրաման ելաւ սրով խոցոտել նրան, ով այդպէս բարի հաւատով, խոստովանութեամբ եւ իր արեան մկրտութեամբ ելաւ աշխարհից:

Ապա Յուլիանոսը դարձաւ եպիսկոպոսին եւ ասաց. «Ապշեցրի՛ր բոլորին եւ քո մոգութեամբ կորստեան մատնեցիր թովիչներից մեծագոյնին: Մի՛ ակնկալիր, որ կ՚ազատուես իմ ձեռքից, եթէ չուրանաս Խաչեալինե: Սուրբ Կիւրեղը պատասխանեց. «Դու թշնամի ես ճշմարտութեանը եւ ատելի Աստծուն: Դու տեսար Քրիստոս Աստուծոյ այսքան զարմանահրաշ գործերը, բայց յամառութեամբ մնացիր մոլորութեանդ մէջ՝ կամենալով ինձ քեզ նման ուրացող դարձնելե: Այնժամ բռնաւորը հրամայեց մի մեծ կաթսայի մէջ ձէթ լցնել, այն եռացնել ու սուրբին գցել դրա մէջ, որպէսզի ամբողջովին այրուի: Սուրբը,

կնքելով իրեն սուրբ Խաչի նշանով, ինքնակամ մտաւ կաթսայի մէջ, եւ ահա անմիջապէս հուրը մարեց, եւ եռացող ձէթը զովացաւ: Նա սկսեց օրհնաբանել Աստծուն անպատում հրաշքների համար, իսկ մոլեգնած բռնաւորը հրամայեց գեղարդով խոցոտել սուրբին:

Այսպէս երանելի Կիւրեղ եպիսկոպոսն իր մօր՝ Աննայի եւ Ադոնի հետեւից կատարեալ յաղթութեամբ իր հոգին աւանդեց Աստուծոյ ձեռքը: Իսկ ժամանակ անց քրիստոսամարտ Յուլիանոսը, ինչպէս որ ասել էր սուրբ Կիւրեղը, չվերադարձաւ պատերազմից եւ մեռաւ մեր Փրկչի եւ Աստուծոյ աներեւոյթ զօրութեամբ, Ում փա՛ռք յաւիտեանս. ամէն: